

ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՆԱԿԻԵՍ  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

3

2021

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա Բ Մ Լ Ա Ս Ի Ր Ա Կ Մ Լ  
Տ Ա Ն Դ Ե Ս  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2021, 3 (218)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

ԵՐԵՎԱՆ

2021

ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից  
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года  
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Խ մ ք ա գ ր ա կ ա ն ի ն ր հ ն ի ր ղ

Ն ա խ ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գ լ խ ա վ ո թ ի խ մ ք ա գ ի ղ՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Գ լ խ ա վ ո թ ի խ մ ք ա գ ի ղ տ Ե ղ ա կ ա լ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ա ն ղ ա մ ն Ե ղ՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,

ԲԱՐԴԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա),

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ,

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ԴԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ,

ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ), ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН

Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН

Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВETИՏՅԱՆ ՊԱՎԵԼ, ԱՏՐԱՏՅԱՆ ՄԱՐԱԴ,

ԲԱՐԴԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ՄԱՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա),

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ,

ՏԵՐ-ԴԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՄ (ՄԱՆ),

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Պատմաբանասիրական հանդես, 2021

© Историко-филологический журнал, 2021

Հապավումը՝ ՊԲՀ

Аббревиатура – ИФЖ

## I

ՀՏԴ 929:891.981 Ալիշան

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՍՅԱԿԻ ԱՌԹԻՎՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ  
ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ\*

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-3>

Բանալի բառեր՝ Հայր Ղևոնդ Ալիշան, Մխիթարյան միաբանություն, «Նահապետի երգեր», Հայաստանի աշխարհագրություն, Անի, Շիրակ, Զեյթուն, Սյունիք, Վարդան Մամիկոնյան, վարդ և բլբուլ, Օսեան, լուսին:

## Նախաբան

Մխիթարյան միաբանությունը Մխիթար Սեբաստացու մահից հետո էլ շարունակեց հավատարիմ մնալ հիմնադրի սկզբնավորած գործին՝ անցյալի մոռացությունից վեր հանել մեր հին մատենագրությունն ու ազգային մյուս արժեքները, նաև միաբանությունը դարձնել մի ոսպնյակ, որում բեկվեր եվրոպական գիտության ու կենցաղավարության լույսը և իր անդրադարձը գտներ հայկական կյանքում:

Մխիթարյանները դարձան XVIII դ. եվրոպական հանրագիտակ մտածողության ազգային կրողները: Սակայն մխիթարյան առաքելության խորհրդանիշը, մխիթարյան հայագիտությունը ժամանակի եվրոպական գիտության ընձեռած հնարավորություններով ավարտուն մի համակարգի վերածողը և նրան ազգային առավել շեշտված դրոշմ ու գեղարվեստականություն հաղորդողը դարձավ բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, բանաստեղծ և թարգմանիչ Հայր Ղևոնդ Ալիշանը (Բերովբե Ալիշանյան Պետրոս-Մարգարի):

Ծնվել է Կ. Պոլսում 1820 թ. դրամագետ-հնագետի ընտանիքում: Ուսանել է ծննդավայրի Զայրխյան վարժարանում (1830–1832 թթ.), Վենետիկի Մխիթարյանների վարժարանում (1832–1841 թթ.), Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ է 1838-ից, 1841–1850-ին, ապա 1866–1872-ին ուսուցիչ (1848-ից տեսուչ) Վենետիկի Ռափայելյան, 1859–1861-ին՝ Փարիզի Մուրատյան վարժարաններում, 1849–1851-ին՝ «Բազմավեպի» խմբագիր, 1870-ից վարել է միաբանության ակադեմիայի պարտականությունը, 1872-ից ամբողջովին նվիրվել է գիտական գործունեության:

\* Ներկայացվել է 13. VII. 2020 թ., գրախոսվել է 06. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 29. XI. 2021 թ.:

Հայր Ղ. Ալիշանը Ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր էր (1886 թ.), Իտալիայի Ասիական ընկերության (1887 թ.), Մոսկվայի Հնագիտական ընկերության (1894 թ.), Վենետիկի ակադեմիայի (1896 թ.), Սանկտ Պետերբուրգի կայսերական Հնագիտական ընկերության (1896 թ.), Ենայի փիլիսոփայական ակադեմիայի (1897 թ.) պատվավոր անդամ և ղոկտոր: Մահացել է 1901 թ. և թաղվել Վենետիկի Սբ. Ղազար կղզում:

Ալիշանի գրական գործունեությունն սկսվել է 1843-ից՝ «Բազմավեպում» տպագրված արձակ ու չափածո և գիտաճանաչողական գործերով, որոնց թվում է նրա՝ բանաստեղծական ժառանգության բարձրակետը՝ «Նահապետի երգերը»<sup>1</sup>:

Հայ Հին գրականությունն Ալիշանի հրատարակմամբ

1848 թ. ապրիլից «Բազմավեպի» էջերում Ալիշանը սկսում է վարել «Քնար Հայկական» խորագիրը կրող շարքը՝ Նահապետ ստորագրությամբ, որի մասին գրում է, թե տեսնելով ազգային և ռամկական երգերի հրատարակության գտած լավ ընդունելությունը ցանկանում է նաև «մեր վսեմ Հայկական գրաբառ լեզուով գրուած նախնեաց ընտիր բանաստեղծութեան կամ երգոց ճաշակն ալ ընծայել»<sup>2</sup>:

«Քնար Հայկականին» զուգահեռ՝ Ալիշանը «Բազմավեպում» 1849 թ. սկսում է վարել «Ծաղկաքաղ Հայկական» շարքը: Վերջինս Հայոց պատմության հերոսական դրվագները մեր պատմիչներից քաղված հատվածներով ներկայացնելու Ալիշանի առաջին փորձն էր, որի ամբողջական ամփոփումը տասնամյակներ անց դառնալու էր «Հայապատումը»: «Բազմավեպում» ռամկական երգերի և «Քնար Հայկականի» ի մի գումարումը դարձավ Ալիշանի հրատարակած առաջին գիրքը՝ «Հայոց երգք ռամկականքը», որը լույս տեսավ 1852 թ.՝ անգլերեն զուգահեռ թարգմանությամբ: Այն որքան կարևոր էր օտարին հայ երգը ներկայացնելու առումով, այնքան էլ անգնահատելի նշանակություն ունեցավ և մեր գրականության համար՝ դառնալով հիմք, այնուհետև հաջորդաբար հրատարակվող երգարանների համար: 1868 թ. լույս տեսավ Մ. Միանասրյանի նշանավոր «Քնար Հայկական» երգարանը, որի ոչ միայն անունն էր վերցված «Բազմավեպի» շարքից, այլև այստեղ հրատարակված ենք գտնում «Հայոց երգք ռամկականքի» գրեթե բոլոր գործերը: Հայ երգի ալիշանյան հրատարակությունը, երկրորդ կյանք պարգևելով ժողովրդական շատ ստեղծագործությունների, նաև գրական ներշնչանքի աղբյուր դարձավ, երբ, շնորհիվ այս և հաջորդող մյուս երգարանների, մեր նոր շրջանի բանաստեղծության մեջ ևս տարածվեց կուռնիկի, արագիլի, կաքավի մոտիվը: Հիշենք, որ Հովհ. Թումանյանի նշանավոր «Մանուկն ու ջուրը» բանաստեղծության բանահյուսական ակունքը հանդիսացող համանուն գործն առաջինը տպագրվել է այս հրատարակությունում:

Դասական մատենագրությունը և Հայոց պատմության հերոսական ու նվիրական էջերը ևս ժողովրդին առավել մատչելի ներկայացնելու համար Ալիշանը ձեռնամուխ է լինում պատմագրական անհամեմատ պարզ շարադրանք ունեցող մատենագրական մանր երկերի հրատարակությանը՝ գետնից դրանք «Սոփերք Հայկականք» մատենաշարում, որի 22 հատորները լույս տեսան 1853–1861 թթ.: Ծնորհիվ «Սոփերք Հայկականքի»՝ ընդհանրվեց Հայ Հին գրականության հրատարակման շրջանակը մատենագրական համե-

<sup>1</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, 2002, էջ 26–27:

<sup>2</sup> «Բազմավեպ» (Վենետիկ), 1848, թիւ 6, էջ 87:

մատաբար մանր երկերով, որոնք նպատակը էին հայ եկեղեցու առաջին դարերի և մեր մատենագրության սկզբնավորման մի շարք հարցերի լուսաբանմանը:

Ալիշանն առանձին գրքերով հրատարակել է նաև Վարդան Արևելցու «Տիեզերական պատմութիւն» (Վենետիկ, 1862 թ.), Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութիւն» (Վենետիկ, 1864 թ.), Խոսրով Անձևացու «Մեկնութիւն ժամանակագրութեան» (Վենետիկ, 1869 թ.) գործերի բնագրերը:

Նրա համար վավերական իրողություն էր հայ եկեղեցու առաքելական լինելը, ի հավաստումն որի երկար որոնումներից հետո հայտնաբերում ու հրատարակում է Խորենացու պատմության մեջ առկա «Աբգարի Թղթից» բացի առանձին խմբագրությամբ պահպանված «Թուղթ Աբգարու» գործը: Վերջինիս հրատարակության առաջաբանը ևս շարադրված է ոգեշունչ գեղարվեստականությամբ, Աբգար թագավորին գրեթե համապատիվ ներկայացնելով առաքյալներին<sup>3</sup>:

#### Անցած ճանապարհի հանրագումարը

Հայր Ղ. Ալիշանի՝ ավելի քան կեսդարյա գիտագեղարվեստական գործունեության ամփոփումը դարձավ «Հայապատումը» (1901 թ.): Կյանքի մայրամուտին հասած գիտնականի պատմաբանասիրական և տեղագրական ուսումնասիրություններն իրար միաձուլող մեծածավալ այս հատորն ունի ուրույն կառուցվածք: Առաջին՝ «Պատմիչք Հայոց» մասը նվիրված է հայ պատմագրությանը, իսկ երկրորդը՝ «Պատմութիւնք Հայոցը», հայոց պատմությունն է՝ ներկայացված հայ հին գրականությամբ: Մինչև XVII դ. հասնող հայոց պատմության ընթացքը ներկայացվում է 400 հատվածներով, որոնց մի մասը, վերնագրված չլինելով բնագրերում, խորագրվել են Ալիշանի կողմից՝ դառնալով ներկայացվող նյութի սեղմ և ամփոփ բնորոշումները: «Հայապատումի» առաջին մասը վերածվում է հայ միջնադարյան գրականության յուրօրինակ մատենագիտության, ուր յուրաքանչյուր հեղինակի նվիրված հոդվածն ունի հետևյալ կառուցվածքը. հեղինակի անձի ու գործի արժևորում, բուն պատմական երկի քննություն և բանասիրական վերլուծությամբ մատենագիտական թվարկում մնացյալ գործերի:

Գրքին առանձին հմայք են հաղորդում ներկայացվող պատմություններին վերաբերող փորագրանկարներն ու լուսանկարները:

#### Պատմության և աշխարհագրության միահյուսումը

Աշխարհագրության բնագավառում ևս Ալիշանը դարձավ մխիթարյան ավանդույթի հետևողն ու շարունակողը: Այն միայն գիտահանրամատչելի նպատակներով չէ, որ պայմանավորված էր, այլև ուներ շեշտված ազգային-քաղաքական ենթատեքստ: Մինչ այս հրատարակություններն աշխարհի քարտեզների վրա բացակայում էր Հայաստանը, և այն որպես առանձին աշխարհագրական-քաղաքական միավոր աշխարհին ներկայացվեց մխիթարյանների շնորհիվ: «Գեղունիի» բնորոշմամբ՝ «Երկու անբաժանելի գիտություններ կան. Հայաստանի Աշխարհագրութիւնն ու Պատմութիւնը, որոնք ամէնէն

<sup>3</sup> Տե՛ս Լաբուրենայ գիւանագիր դպրի Եղեսիոյ Թուղթ Աբգարու, 1868, էջ է:

աւելի կը պանծացնեն երանաշնորհ Մխիթարի և իր յետնորդներուն իմաստութիւնն ու առաքինութիւնը»<sup>4</sup>:

«Նահապետի երգերից» հետո այս հատորներն էին, որոնք համահայկական սեր և ճանաչում բերեցին Ալիշանին:

1869 թ. «Բազմավեպում» հրատարակում է «Նշմարք և նշխարք ի Հայաստան աշխարհ» գործը: Այն, Հայաստանը ներկայացնելուց բացի, նաև գեղարվեստական արտացոլումն է Ալիշանի փայփայած ու ազգակիցներին ուղղված ծրագրի՝ զնալ և ուսումնասիրել երկրի բնական հարստություններն ու պատմական հիշատակները:

1853 թ. լույս է տեսնում «Բաղաքական աշխարհագրութիւն»-ը: Ժամանակի եվրոպական աշխարհագետների գործերի հետևողությամբ ստեղծված բանաբաղական բնութի այս աշխարհագրութեան նպատակն էր ընդհանուր գիտելիքներ հաղորդել հայ ընթերցողին: Չցանկանալով Հայաստանը ներկայացնել որպէս Օսմանյան կայսրութեան մեկ մասը, վերջինիս տեղագրութիւնում, երբ հասնում է Հայաստանին, դիվանագիտորեն ասում է, թե նրա մասին «փոքր մի ճոխագոյն կամիւք ճառել ի վերջոյ»<sup>5</sup>, որն է հատորին կցված «Տեղագիր Հայոց Մեծացը» (1855 թ.): Վերջինիս համար Ալիշանը բնաբան է ընտրել Սամվել Սիււաքու հետևյալ տողերը. «Հայրենի եւ պարծելի բնիկ հայկազանց աշխարհն, տունն Արևելից, որ առաջին է մասն եւ գլուխ օրինակ իմն բոլոր աշխարհի ... յորում դադարեալ տապանն Նոյի եւ բացեալ՝ անտի դարձեալ սերեցաւ մարդկային զարմ»<sup>6</sup>: Միայն որպէս Հայաստանը պանծացնող վկայութիւն չեն ընտրվել այս տողերը, այլ այն Ալիշանի գիտական մեթոդաբանութիւնը և պատմահայեցողութիւնը պայմանավորող աշխարհայացքն էր՝ ձևավորված Մխիթարյան միջավայրում, ուր որոշակի համակարգման ենթարկվեց դարերի ընթացքում հայ պատմագրութեան կողմից նվիրագործված ու սրբագործված այն ըմբռնումը, թե դրախտը Հայաստանում է գտնվել, և այնտեղից է կյանքը սկզբնավորվել ու երկրորդ անգամ նորոգվել Ջրհեղեղից հետո:

Մխիթար Աբբահոր մասնակցությամբ կազմված «Բառգիրք Հայկազան լեզուի» երկրորդ հատորում դրախտի մասին ասվում է. «Նդեմն ասի այն գաւառն Հայոց, որ այժմ Կորդուսաց աշխարհ կոչի»: Այս միտքը գրքից գիրք էր փոխանցվում մխիթարյան աշխարհագրութիւններում և պատմութիւններում հայ ժողովրդի պատմութեան սկիզբը նույնացնելով մարդու ստեղծմամբ սկզբնավորված համաշխարհային պատմութեան հետ: Ինչպէս Հայր Ղուկաս Ինճիճյանն է գրում՝ «Պատմութիւն առաջին բնակութեան Հայաստանեայց սկսանի յառաջին բնակութենէ համօրէն մարդկային ազգի»<sup>7</sup>:

Միջնադարյան մատենագրական վկայութիւնների վրա խարսխված այս տեսութիւնը, համապատասխան թվային հաշվարկներով, որոշակի տարածական-ժամանակագրական համակարգի մեջ դրեց Միքայել Չամչյանը՝ առաջնորդվելով «Ծննդոց գրքի» և ազգային մատենագրութեան տվյալների համադրմամբ: «Դրախտ Հայաստանի» անվանված և ազգային յուրօրինակ գաղափարաբանութեան վերածված այս տեսութիւնն աշխարհասփյուռ

<sup>4</sup> «Գեղունի» (Վենետիկ), 1949, էջ 60:

<sup>5</sup> Հ. Ղ. Ա. 1 ի շ ա ն. 1853, էջ 515:

<sup>6</sup> Ղ. Ա. 1 ի շ ա ն. 1855, էջ 6:

<sup>7</sup> Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն. 1835, հ. Ա, էջ 244:

Հայուլթյան մի քանի սերունդների ներարկեց այն գաղափարը, որ Հայ ժողովուրդը մի առաքելութուն ունի՝ վերաշինելու, վերատիրելու իր հայրենիքին՝ նորոգյալ աստվածատունկ դրախտին:

Այս ոգով է գրված նաև Ալիշանի ամենավաղ գործերից մեկը՝ «Հայաստան յառաջ քան գլխինն Հայաստան»: Նա այս գործը սկսել է գրել պատանեկան տարիներից, և այն ավելի շատ արտահայտությունն է նրա՝ 1840–1860-ական թվականների պատմագիտական ըմբռնումների ու ժամանակի Հայ ավանդական պատմահայեցողության: Հետագայում Ալիշանն այլևս չի անդադարձել այս գործին՝ վերախմբագրելու և ամբողջացնելու համար:

Աշխատություն մեջ արտահայտված է Հայ միջնադարյան մատենագրությունից եկող մխիթարյան այն պատմահայեցողությունը, որ դրախտը եղել է Հայաստանի տարածքում, ապա Ջրհեղեղից հետո կյանքը նորոգվել է Արարատի փեշերից: Պատահական չէ, որ գրքի առաջին բաժինն անվանվում է «Հայրենիք մեր սկզբնավայր մարդկութեան»<sup>8</sup>:

Հայ ժողովրդի ծագումնաբանությունը բխեցվում է Նոյի որդի Հաբեթից, ապա շարունակվում է Հայկ Նահապետով և նրա ժառանգներով: Ալիշանն այս գործը գրել է որպես հերոսական վիպասք, որի վրա նկատելի է Մովսես Խորենացու ազդեցությունը:

Ալիշանը տեղագրական հատորներում ավերակ առ ավերակ վերակենդանացնում է անցյալի երբեմնի փառքը: Ինչպես գրում է Սերգեյ Սարխյանը, «Երբ Բեռլինի կոնգրեսից հետո եվրոպական դիպլոմատիան հերթական խաղն էր սարքում Հայ ժողովրդի ճակատագրի հետ և խորամանկ թուրքիայի թելադրումներով կասկածահարույց դարձնում Հայաստանի գաղափարն իբրև պատմական ու աշխարհագրական գոյություն, Ալիշանը տեղագրական հսկա մատյաններում վավերացնում էր Հայաստանի «քառասուն դարերը», որպեսզի քաղաքակիրթ աշխարհին համոզի Հայ ժողովրդի ազատագրական ձգտումների պատմական իրավացիությունը: Եվ նա այդ անում էր ոչ թե սոսկ գիտական հետաքրքրության համար, այլ ժամանակի թելադրանքով, հայրենասիրական ներքին մղումով»<sup>9</sup>:

Ալիշանը սկզբնապես որոշել էր գրել Պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգներին նվիրված առանձին հատորներ, սակայն, գիտակցելով, որ այդքանը չի հասցնի ամբողջացնել՝ հրատարակում է դրանցից չորսը: Տեղագրական այս շարքը սկսվեց 1881 թ. հրատարակված «Շիրակով»: Այս և մյուս տեղագրական հատորներն ունեն հետևյալ կառուցվածքը. նախ ներկայացվում է տվյալ նահանգի ֆիզիկական աշխարհագրությունը, բուսական ու կենդանական աշխարհը: Աղբյուրագիտական առումով թվարկվում է, թե հայկական ու եվրոպական ինչ աղբյուրներում հիշատակություններ կան այդ նահանգի և նրա մեջ մտնող գավառների առանձին բնակավայրերի մասին: Յուրաքանչյուր վայրի պատմությունը սկսում է վերջինիս մասին հայտնի ամենահին հիշատակությամբ, որը վկայակոչելիս էլ Ալիշանն աշխատում է ներկայացնել համապատասխան գեղարվեստական շարադրանքով: «Շիրակում» էլ առաջաբանից հետո բուն գավառին անցումը սկսում է հետևյալ տողերով. «Բա-

<sup>8</sup> Ղ. Ալիշան. 1904, էջ 6:

<sup>9</sup> Ս. Սարխյան. 1966, էջ 242:



Ջայարմար առասպել Շարայի առաջնորդէ մեզ ի պատմական ծանօթութիւն գաւառիս»<sup>10</sup>:

«Շիրակն» ամփոփում և հանրագումարն է Ալիշանի անիականի, որը սկսվել էր դեռևս 1840-ական թվականներին, երբ Անիից Ներսես Սարգիսյանի ուղարկած նամակներից պեկոծված երիտասարդ բանաստեղծ-գիտնականն ի պատասխան գրում էր. «Համբուրեցե՞ր զնշխարս մեծութեան հայկեան ոգւոյ ... Երանի արտասոււախառն աչացոյ, ով եղբայր»<sup>11</sup>:

Ժամանակի հրատարակություններում ու պարբերական մամուլում Ալիշանը միայն պատմական հիշատակներ և տեղագրական վկայություններ չէր որոնում, այլև այդ հրատարակությունների միջոցով հետևում էր հայության կյանքին: Խորին բերկրանքով նա տեսնում է, որ Արևելյան Հայաստանում արդեն դադարել են ավերածություններն ու բռնությունները, և երկիրն ավելի ու ավելի է լցվում հայկական շնչով:

«Շիրակի» անիական շունչը փոխանցվել է նաև 1885 թ. տպագրված «Միսուանին», որը տեղագրական չորս հատորներից առավել զեղարվեստականն ու պատմականն է: Երկրի տեղագրությունն այստեղ այն հարթությունն է, որի վրա բարձրանում են կիլիկյան բերդերն ու ամրոցները: «Միսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ» երկար վերնագրում իսկ ներկայացված են գիրքը կերպավորող երեք շերտերը՝ մատենագրություն, տեղագրություն ու պատմագրություն: Բացատրելով, թե հատորը ինչու է «Միսուան» անվանել՝ վկայակոչում է Գրիգոր Տղայի հետևյալ տողերը.

Ապա ընդ լեառն Տաւրոսին՝  
Մըտին յաշխարհըն Միսուանին<sup>12</sup>:

«Միսուանը» Կիլիկիայի բերդերի ու վանքերի պատմությանն ու տեղագրությանը նվիրված մի յուրօրինակ տեղագրական ժամանակագրություն է, ընդ որում՝ ոչ թե Հայկական Կիլիկիայի, այլ Կիլիկիայի հայկական պետությունների, որն առավել պատմական շունչ է հաղորդում այս աշխատանքին: Ալիշանը հոգու և մարմնի փոխհարաբերության միջնադարյան պատկերով է ներկայացնում անգամ վանքերն ու բերդերը, որոնցից «զբերդորէիցն» որպես «զմարմին պետութեան Միսուանայ» և «զվանորէիցն», որոնք «անշիջատուր վառարան եղեն աղօթանուէր հոգւոց»<sup>13</sup>:

Ավերակների վերածված վանքերի ու եկեղեցիների նկարագրությունում գերիշխող մռայլ շեշտը և օսմանյան գրաքննությամբ պայմանավորված զգուշավորությունը լիովին ցրվում են, երբ հեղինակը հասնում է Ջեյթունին, որի տեղագրական նկարագրությունն իսկ համահունչ է հայոց արծվաբույնի բնակիչների ազատաբաղձությանը: Մխիթարյանները թեև Վենետիկում էին, ուր և տպագրվում էին նրանց գրքերը, սակայն նրանք որոշակի զգուշություն էին պահում, որպեսզի հրատարակությունների մուտքը Թուրքիա չխոչընդոտվեր և արժեքներ չհարուցվեին արևմտահայ միջավայրում միաբանության

<sup>10</sup> Ղ. Ալիշան. 1881, էջ 2:

<sup>11</sup> Ս. Ծեմճեմեան. 1974, էջ 79:

<sup>12</sup> Ղ. Ալիշան. 1885, էջ 59:

<sup>13</sup> Նույն տեղում:

գործունեության նկատմամբ: Երկրի բնական դիրքի և հարստության ու, մասնավորապես, երկաթահանքերի մասին խոսելիս էլ գեյթունցիների զինվածությունն է ակնարկում թե այս պատճառով է, որ ընդհանուր ավերների և այլայլումների մեջ Ձեյթունը շարունակեց ապրել «հայրենական օրինօք ներքին վարչութեան»<sup>14</sup>:

Մի շարք հատվածներում, ինչպես, օրինակ, «Դուռն Հայոց արքունեաց» դրվագում, ասես իրար հետ են մրցում գիտնական Ալիշանն ու բանաստեղծ Նահապետը: Այս ու «Գահնամակին» նվիրված դրվագները մեկ անգամ ևս վկայում են, որ Ալիշանը, որպես գիտնական քննելով պատմությունը, իր ուսումնասիրությունները գիտական աշխարհին հասցեագրելուց առաջ ուղղում էր հայ ընթերցողին:

«Այրարատում» (1890 թ.) միաժամանակ Ալիշանը գրում է և ներկայի մասին ու ապագայի ծրագրեր կազմում վերակենդանացող և արդեն իսկ ընդարձակվող բնակավայրերի համար, ոգևորվում նորօրյա մայրաքաղաք դարձող Երևանով ու հզոր բերդաքաղաքի վերածված Կարսով: Ինչպես որ Արարատյան դաշտը և Արարատյան աշխարհը համարվում են հայ ժողովրդի բնօրրանն ու Պատմական Հայաստանի ամենամեծ նահանգը, այնպես և այս հատորն է Ալիշանի, ընդհանրապես, բոլոր գործերից ամենածավալունը և պատմական հիշատակներով ամենահարուստը, որովհետև այստեղ են գտնվել Պատմական Հայաստանի հին մայրաքաղաքներ Արտաշատը, Դվինը, Վաղարշապատը, հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Երևանն ու Կարսը: Ներկայացվում է Արարատի և Արագածի որպես հայ ժողովրդի համար նվիրական լեռների պատմությունն ու Ֆիզիկաաշխարհագրական տվյալները՝ բնականաբար, գրելով Ջրհեղեղի մասին:

Ազգային հոգեբանությունը, արվեստը և բնակիչների բարքը միջավայրով պայմանավորող կուլտուր-պատմական դպրոցի ազդեցությունը «Հուշիկներից» հետո բոլորից ցայտուն դրսևորվել է «Սիսականում»: Գրքի առաջին իսկ էջում Ալիշանը շեշտում է. «Սեփական տիպք հայկականք ոչ ուրէք՝ բայց Այրարատեան բնաշխարհէն՝ այնպէս ճշգրիտ երևին յերկրի հայոց, որպէս յաշխարհիս Սիսական»<sup>15</sup>: Սյունեցիների օրինակով Ալիշանը մի վերջին անգամ ընդգծում է տարբեր առիթներով հայտնած այն միտքը, թե ազատությունն է անխաթար պահում մարդկային հոգին, որի կորուստն աղճատում է նաև հոգեբանությունը, որ սյունեցիների բնավորության ձևավորմանը մեծապես նպաստել է բնությունը՝ «ազատաբարոյութեան տածիչս»<sup>16</sup>:

Արցախի տեղագրությունը, որն Ալիշանը կատարել էր Մեծ Հայքի մյուս նահանգների շրջանակում, չհասցրեց մի վերջին անգամ սրբագրել, խմբագրել ու ամբողջացնել և գլխավորը՝ հոգևոր գեղարվեստական այն շունչը հաղորդել, որը երկրի մի հատվածի տեղագրությունը վերածում էր «Սիսուանի» ու «Այրարատի»: «Արցախ» անտիպ մնացած աշխատությունը մխիթարյանները շարունակաբար հրատարակեցին «Բազմավեպի» 1988 թ. և հաջորդող համարներում խմբագրության կողմից զրված ծանուցման մեջ ասելով, թե վերջնա-

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 183:

<sup>15</sup> Ղ. Ալիշան. 1893, էջ 1:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 7:

կանտրեն խմբագրած հատորներից հետո «անտիպ թողած է յաջորդ նահանգներու տեղագրութիւնը, որոնք հաւանաբար պիտի ընդլայնէր ու նկարագարէր՝ տպագրութեան յանձնելէ առաջ»<sup>17</sup>:

Կյանքի վերջին շրջանի պատմաբանասիրական ուսումնասիրութիւնները

1895 թ. Ալիշանը հրատարակում է XII դ. արաբագիր հեղինակ Աբուսահլ Հայի «Պատմութիւն եկեղեցեաց և վանորէից Եգիպտոսի» գործի այն հատվածները, որոնք վերաբերում էին հայերին<sup>18</sup>:

Հաջորդ տարի՝ 1896 թ., հրատարակում է VII դ. վերջին և VIII դ. սկզբին ապրած Անաստաս վարդապետի «Վասն վանորէից որ ի քաղաքն յԵրուսաղէմ» երկի հայերեն բնագիրը՝ զուգահեռ Ֆրանսերեն թարգմանութեամբ՝ նվիրված Երուսաղեմի վանքերին:

Լեհահայ գաղութի պատմութեանն է վերաբերվում հաջորդ տարի՝ 1896 թ., հրատարակված «Կամենից» աղբյուրագիտական ուսումնասիրութիւնը<sup>19</sup>: Ալիշանն այս ժողովածուի մեջ հրատարակել է Կամենեց-Պոդոլսկի հայ համայնքին վերաբերող տարբեր փաստաթղթեր և ժամանակագրութիւններ, որոնք հետաքրքրութիւն են ներկայացնում Ուկրաինայի ու Լեհաստանի պատմութեան համար: Գլխավոր բնագիրը Կամենեց-Պոդոլսկում գրված «Ժամանակագրութիւններ» է, որն ընդգրկում է 1410–1652 թթ. իրադարձութիւնները: 1611–1623 թթ. իրադարձութիւնները գրված են նաև հայատառ ղփչաղերենով: «Ժամանակագրութեան» բնագիրը պահվում է Ս. Ղազարի ձեռագրատանը:

1896 թ. լույս է տեսնում Ալիշանի «Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վենետիկաց ի ԺԳ–ԺԴ եւ ի ԺԵ–ԺԶ դարս» գործը: Ինչպես վերնագիրն է հուշում, գրքում ներկայացվում են Հայաստանի և հայ ժողովրդի Վենետիկի հետ ունեցած հարաբերութիւններն ու գիտամշակութային կապերը, որոնք Ալիշանը ժամանակային առումով բաժանում է երեք փուլի. առաջին՝ XIII–XIV դդ. Կիլիկիայի հայկական պետութեան Վենետիկի հետ հարաբերութիւնները, երկրորդ՝ XV–XVI դդ., երբ գլխավոր տեղը գրավում են Ղրիմի հայ վաճառականների առևտրային հարաբերութիւնները Վենետիկի հետ ծովային ճանապարհով: Եթե առաջին շրջանում հարաբերութիւններն ավելի քաղաքական բնույթի էին, ապա երկրորդ շրջանում առևտրատնտեսական: Գրում է նաև Վենետիկի Հայոց տան (հյուրատան), ինչպես նաև XVI դարում տեղի հայկական տպագրութեան մասին: «Յանցաւոր հայք» բաժինը նվիրված է այն հայերին, ովքեր, ըստ Վենետիկի արխիվներում պահպանված տեղեկութիւնների, հանցանքներ են գործել ու դատապարտվել:

Երրորդ շրջանը վերաբերում է XVIII–XIX դդ. Վենետիկում հայկական ներկայութեանը, հայերի և հայկական կազմակերպութիւնների Վենետիկում ունեցած տներին ու տեղի հայկական գերդաստաններին:

<sup>17</sup> Տե՛ս «Բազմավէպ», 1988, էջ 228:

<sup>18</sup> Ղ. Ալիշան. 1895:

<sup>19</sup> Ղ. Ալիշան. 1896, էջ 2:

Իր ողջ կյանքը Հայ ձեռագրային աշխարհում անցկացրած Ղ. Ալիշանը 1890-ական թվականների կեսերին ամբողջացրեց նաև ձեռագրագիտությունն ու գրչության արվեստին նվիրված աշխատանքները: Հայ զարդանկարչությանը տեղագրական հատորներում և, մասնավորապես, «Միսուանում» հանգամանալից անդրադառնալուց հետո, «Բագմավեպում» 1896 թ. շարունակաբար տպագրում է «Պատկերաստյց գիրք» ուսումնասիրությունը: Նա պայմանականորեն այդպես է անվանում մխիթարյանների ձեռագրերից մեկը, որը նվիրված էր պատկերագրությունը և զարդանկարչության արվեստին:

Ձեռագրային արվեստին է վերաբերում նաև Ալիշանի անկատար մնացած գիտական երազանք-ծրագրերից մեկը՝ հրատարակված տեսնել Մլքե թագուհու Ավետարանը: Այն իրագործելու համար 1901 թ. սեպտեմբերին մահից քիչ առաջ, հրատարակության ակնկալիքով դիմում է ազգակիցներին: Ալիշանի այս երազանքն իրականացրին մխիթարյանները՝ նրա մահից կարճ ժամանակ անց՝ ձեռագրի 1000-ամյակի առթիվ հրատարակելով Ավետարանի նկարագրությունը և մանրանկարների մի մասը:

1895 թ. լույս է տեսնում Ալիշանի «Հին հաւատք հայոց»-ը: Իրարից տարածական մեծ հեռավորության վրա գտնվող տարբեր ժողովուրդների միջև եղած պաշտամունքային ընդհանրությունները, ըստ Ալիշանի, բացատրվում են այն հանգամանքով, որ սկզբնապես բոլոր մարդիկ պաշտել են ճշմարիտ Աստծուն, այնուհետև խոտորվել, և այս խոտորումներում իսկ պահպանվել է հեռավոր հիշողությունը սկզբնական հավատի: Նա կրոնի երկու գլխավոր շարժառիթներն է համարում սերը և վախը: Ծջմարիտ կրոնը հիմնվում է սիրո վրա, իսկ «մոլորությունն» նախադաս երևի վախն»<sup>20</sup>:

Ալիշանը, հանրազումարի բերելով բուսաբանությունը վերաբերող նյութերը, 1895 թ. հրատարակեց «Հայբուսակ կամ Հայկական բուսաբանություն» բառարանական բնույթի ուսումնասիրությունը: Գրքի վերնագրի «բուսաբանություն» բառն իսկ հուշում է, որ այս բառարանն առաջին հերթին մատենագիտական ամբողջությունն է հայկական լեռնաշխարհի բույսերի մասին Հայ մատենագրության մեջ առկա վկայությունների: Ինչպես նրա տեղագրական գործերը միջին տեղ էին գրավում հայագիտության և աշխարհագրության միջև, այնպես էլ «Հայբուսակը» միջին տեղ է գրավում բուսաբանության ու բանասիրության միջև: Գեղարվեստականության այս նույն սկզբունքով Ալիշանն ուշադրություն է դարձնում ու կարևորում բույսերի անվանումները, թե որքանով են դրանք գեղեցիկ կամ ինչ իմաստներ են պարունակում:

### Բանաստեղծ և հոգևորական թարգմանիչը

Ինչպես Ալիշանի գիտական և գեղարվեստական գործերում սերտ փոխկապակցվածությունը են հանդես գալիս գիտնականն ու բանաստեղծը, այնպես և թարգմանական գործերում նույն կերպ են հանդես գալիս եկեղեցականը և բանաստեղծը:

Ալիշանը հեղինակ է թարգմանական 12 գրքերի, որոնցից երեքը թարգմանել է բանաստեղծ Նահապետը, իսկ ինը՝ Մխիթարյան կրոնավորը:

<sup>20</sup> Ղ. Ալիշան. 1895, էջ 30:

Մինչև առանձին թարգմանական գրքերի հրատարակությունները, Ալիշանի Բայրոնից, Պոպպից, Գրեյից, Միլտոնից և այլ անգլիացի հեղինակներից կատարած թարգմանությունները տեղ են գտնում Ս. Ղազարում 1852 թ. տպագրված «Ծաղկաքաղ քերթողաց անգղիացուց» ժողովածուի մեջ:

Մխիթարյանների բայրոնապատումի կարևոր էջերից է անգլիացի բանաստեղծի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» ստեղծագործության վերջին՝ չորրորդ՝ «Իտալիա» մասի թարգմանությունը, որը լույս տեսավ 1860 թ.: Գրքի առաջաբանում Ալիշանը Բայրոնին համարում է XIX դ. ամենամեծ բանաստեղծը, այս գործը՝ նրա լավագույն ստեղծագործությունը, իսկ հիշյալ չորրորդ մասը՝ «Իտալիան», այդ երկի ամենաուժեղ բաժինը:

Անգլերենից բանաստեղծությունների հաջորդ թարգմանությունը վերաբերում է ամերիկյան գրականության հատրնտիր էջերին՝ «Քնար ամերիկեան, հատրնտիր տաղք» (Վենետիկ, 1874) ժողովածուին:

Ալիշանի թարգմանությամբ 1871 թ. տպագրվում է Շիլլերի «Երգ ի զանգակն» ստեղծագործությունը: «Ծանօթութիւն» խորագրված առաջաբանում ասում է, որ Շիլլերն է «գերմանացուց գերագոյն քերթողն»: Այս ստեղծագործության համար գրում է «Թերեւս գերագանցն իր քնարերգութեանցը մէջ»:

Կրոնադաստիարակչական ու հոգևոր-խորհրդածական բնույթի գործերի Ալիշանի հրատարակություններն սկսվում են 1852 թվականից և շարունակվում մինչև իր վախճանման օրերը: Առաջին՝ Ս. Ալֆոնսիոս Լիզուորացու «Պատրաստութիւն մահու» գործը, մահվանը նախապատրաստվելուն նվիրված հոգևոր խորհրդածությունների շարք է: Երկրային կյանքն անվանում է ճանապարհորդություն դեպի հավիտենականը:

Սկսած այս գործից՝ Ալիշանի կրոնական բնույթի թարգմանություններին բնորոշ են հետևյալ երեք հատկանիշները. առաջին՝ հոգևոր զգացումների ու մտածումների արտահայտումը գրաբարով, երկրորդ՝ ընտրել այնպիսի ստեղծագործություններ, որոնք ընդհանուր քրիստոնեական բնույթի են համամարդկային հարցադրումներով և իրենց մեջ դավանական վեճերի տարրեր չեն պարունակում, երրորդ՝ յուրաքանչյուր գործի վերջում գետեղել տվյալ գործին համահունչ չափածո կամ հատվածաբար արձակ ստեղծագործություններ, շնորհիվ որի եվրոպացի հեղինակների խորհրդածությունները և հայտնած մտքերը տեղայնանում են հայկական միջավայրում:

Ալիշանի թարգմանությունների մի մասն անմիջականորեն վերաբերում է նրա Մխիթարյան կրոնավոր ուսուցիչ լինելուն և կապվում է միաբանության սաներին քահանայական ձեռնադրության նախապատրաստելու հետ: Ալիշանը նրանց հանձնարարում է, որ մինչև ձեռնադրվելը թարգմանեն իտալացի հոգևորական Մկրտիչ Բականիի Ս. Հաղորդություն ընդունելուն և ընդհանրապես Աստծո հետ հաղորդակցությանը նվիրված «Հաղորդասէր» գիրքը: Յուրաքանչյուր աշակերտ թարգմանում է գրքի որևէ բաժինը, և ինքը խմբագրելով ամբողջացնում է այն:

1878 թ. լույս է տեսնում Բենեդիկտյան միաբանության կրոնավորներից Սանսի «Ոսկեգիրք» կամ «Հրահանգ խոնարհութեան, ի գնացս կատարելութեան» գիրքը Փրանսերենով: Գրքում այն միտքն է ընդգծվում, որ Աստված դեմ է ամբարտապաններին: Իր կատարած թարգմանությունները՝ հայկական

նյութերով տեղայնացնելու մոտեցմանը հավատարիմ, Լամբրոնացուց երկու հատված է գետեղել խոնարհության մասին:

Գայետանոս Պերգամացու «Իմացք ի չարչարանս Քրիստոսի» գործի Ալիշանի թարգմանությունը լույս է տեսնում 1879 թ.: Գրքում տեղ գտած ճառերը վերաբերում են Հուդայի մատնությունից մինչև Խաչից իջեցմանը վերաբերող շրջանին և ներկայացնում են Հիսուսի Չարչարանաց ճանապարհը:

«Մնունդք սրտի և հոգւոյ» (Վենետիկ, 1888 թ.) գրքում բերված են հատվածներ Աստվածաշնչից, հին և նոր շրջանի եվրոպական հեղինակների գործերից, տարբեր խրատներ:

Հատկանշական է, որ իր ծննդյան 70-ամյակի առիթով Ալիշանը թարգմանում և հրատարակում է Պոսյուիե Մելադացի եպիսկոպոսի «Ընթրիք Յիսուսի» գործը (Վենետիկ, 1890 թ.), որը նվիրված է Խորհրդավոր կամ Վերջին անվանվող ընթրիքին:

Ալիշանի ուսուցիչ Անդրեաս Ծովիզյանը թարգմանել էր քրիստոնեությունից առաջին դարերի մեծագույն հայերից Ս. Օգոստինոսի «Խորհրդածությունք»-ը: Որոշակի խմբագրմամբ 1893 թ. հրատարակում է ծավալուն այս գործը, թարգմանություն վերջում կցելով իր ուսուցչի կենսագրությունը դրվատական ջերմ խոսքերով:

Նրա վախճանվելուց քիչ առաջ տպագրության է հանձնում Լատին եկեղեցու միջնադարյան ամենանշանավոր սրբերից Փրանցիսկոս Ասիզացու «Զառանցանք [Մտածություններ] Աստուածային սիրոյ» (Վենետիկ, 1901 թ.) թարգմանությունը, որը լույս է տեսնում նրա մահից մի քանի շաբաթ անց:

Ալիշանի հոգևոր խորունկ ապրումներն արտահայտվել են նաև նրա ինքնուրույն կրոնական գործերում, որոնք որևէ դավանական ուղղվածություն չունեն: Դրանցում տեսնում ենք Մխիթարյան կրոնավոր դաստիարակին, ով գրում է քահանայական ձեռնադրության պատրաստվող իր սաների համար:

Նման գործերից առաջինը «Հրեշտակք Ս. Արղիոս Գոնծակա» (Վենետիկ, 1852 թ.) Լատին եկեղեցում մանուկների պահպան սուրբը համարվող Ս. Արղիոսի հրեշտակներին նվիրված ճառի թարգմանությունն է, իսկ երկրորդը՝ «Նմանութիւն Սրբոյն Արղիոսի Գանդակայ պաշտպանի մանկանց» (Վենետիկ, 1853 թ.), նույն սրբի վարքն է ներկայացնում: Վարքին հաջորդում են Ս. Արղիոսին նվիրված Ալիշանի մինչ այդ գրված բանաստեղծությունները:

Մխիթարյան վաղամեռիկ միաբաններից Ալիշանի աշակերտը եղած Սահակ Հեքիմյանին է նվիրված «Աղօթք արեղայի» (Վենետիկ, 1876 թ.) գրքույկը: Ներսես Ծնորհալու «Հաւատով խոստովանիմ» ստեղծագործության նման այն ևս կազմված է Հայոց Այբուբենի տառերով սկսվող սկզբնատողերով աղոթքներից:

Ալիշանի հոգևոր կրոնական ապրումների հանրագումարը դարձավ «Ճառք հոգևորք վասն միանձանց» (Վենետիկ, 1904 թ.) կուսակրոն հոգևորականներին ուղղված գործը, որը լույս տեսավ նրա մահից հետո: Գրքի առաջին բաժինը նվիրված է Ս. Պատարագի խորհրդին և պատարագի քահանային: Երկրորդ բաժինը նվիրված է Լերան քարոզի Ինը Երանիններին: Երրորդ՝ «Խորհրդածությունք ի վերայ Տէրունական աղօթից» բաժնում բառակապակցություն ևս բառակապակցություն վերլուծվում և մեկնաբանվում է «Հայր Մեր» աղոթքը:

Ալիշանի գեղարվեստական արձակի և կրոնական խորհրդածությունները միջև միջանկյալ տեղ է գրավում «Ընդ եղեւնեաւ. Յամայութեան բացավայրի խորհրդածութիւն» (Վենետիկ, 1874 թ.) ստեղծագործությունը: Այն կազմված է տաս մասից, որոնք հոգևոր խորհրդածություններ են ու հանգում են Հիսուսի միջոցով փրկագործության գաղափարին: Առաջին խորհրդածության մեջ անդրադառնում է այն հարցին, թե ինչու է ինքը միշտ մենությունը նախընտրում: Ի պատասխան որի՝ ասում է, թե ցանկացել է հեռու մնալ քաղաքային միջավայրի հուզող ալիքներից, որոնք շարունակ բախում են մարդու կյանքը: Հիանալով բնության գեղեցկությամբ ասում է, որ իրենից առաջ եղել են ուրիշներ, ովքեր նույնպես տեսել են այս ամենը: Նաև եղել են տարբեր քաղաքակրթություններ ստեղծող սերունդներ, որոնք չկան: Որպես եզրահանգում այն միտքն է հայտնում, որ հարափոփոխ կյանքում հաստատուն է միայն քրիստոնեությունը:

Պատմագիտական ուսումնասիրության և գեղարվեստական արձակի միջև միջանկյալ տեղ է գրավում «Արշալոյս քրիստոնէութեան հայոց» (Վենետիկ, 1901 թ.) գործը: Գիրքը նվիրված է Հայաստանում քրիստոնեության հաստատման պատմությանն՝ առաքելական քարոզության շրջանից մինչև Տրդատ Մեծի վախճանվելը:

«Յուշիկք հայրենեաց հայոցի» երկու հատորները (հ. 1–2, Վենետիկ, 1869–1870 թթ.) միջանկյալ տեղ են գրավում հայագիտության և գեղարվեստական արձակ դիմանկարների միջև: Ըստ Հայոց եկեղեցու Տոնացույցի՝ Ալիշանը ներկայացրել է հայոց պատմության ու մշակույթի նշանակալից 33 դրվագներ, որոնցում դիմել է Հայկ Նահապետի նորոյա շառավղին՝ պատանի Հայկակին՝ պատգամելով հավատարիմ մնալ աստվածագիր օրենքներին և հայրենատուր ավանդներին:

#### Նվագները և նահապետի երգերը

Ալիշանի գիտական նախասիրությունների և գործունեության լայն շրջանակն իր արտահայտությունն է գտել նաև նրա բանաստեղծական ծավալուն ժառանգության մեջ, որի մեծ մասը՝ շուրջ 350 չափածո ստեղծագործություն, ամփոփվել է «Նուագք» շարքի հինգ հատորներում, որոնք Վենետիկում լույս են տեսել 1857–1858 թթ. և վերահրատարակվել 1866–1867 թթ.: Հատորներում գտնում ենք մանկավարժ, պատմաբան, հայ հին գրականության խորունկ գիտակ, բնագետ ու հոգևորական Ալիշանին:

Առաջին «Մանկունի» հատորը նվիրված է մանուկներին և ի մասնավորի՝ աշակերտներին: Հատորը սկսվում է «Նուէր տղայոց» բանաստեղծությամբ: «Մանկունի» բառն իսկ թելադրում է, որ այդտեղ մեծ տեղ պետք է գրավեն բարոյախրտական բանաստեղծությունները: Բնագետ և դաստիարակ Ալիշանը հատորում գետեղել է նաև տարվա ամիսներին և եղանակներին նվիրված բանաստեղծական երկու շարքեր:

Երկրորդ «Մաղթունի» հատորը կազմված է երեք՝ «Մաղթունի», «Նոհունի» և «Բնունի» բաժիններից: «Մաղթունի» բառը ենթադրում է դիմացինին ուղղված մաղթանք, որի համար այս բաժնի բանաստեղծությունների մեծ մասն սկսվում է «առ» նախդիրով «Առ նորընծայս», «Առ ուխտանուէր եղբարս» և այլն: Երկու բանաստեղծություն՝ «Առ հարազատ ծովաչու յԱմե-

րիկա» և «Առ նոյն», ուղղված են Ամերիկա մեկնող եղբորը, ուր արտահայտվել են Ալիշանի հոգեկան ապրումները եղբոր նավարկության հետ կապված: Երկու բանաստեղծությունները, կարելի է ասել, ավելի շատ ուղղված են նավին և օվկիանոսին, որ անվտանգ տեղ հասցնեն եղբորը<sup>21</sup>: Առանձին մաղթանք-բանաստեղծություններ են ուղղված Մխիթարյանների բարեկամ հովանավորներին և նրանց գերդաստաններին:

«Խոհունի» բաժնում տեղ են գտել խորագրին համահունչ բանաստեղծություններ՝ «Բաղդ եւ ժամանակ», «Առ ժամանակ», «Աշխարհ անկայուն» և համանման մի շարք այլ գործեր: Լինելով ընդհանուր մտածական ու հոգևոր բնույթի դրանցում ևս արտահայտվել են Հայ հոգևոր բանաստեղծության ավանդները: Հայ միջնադարյան շարականների հետ սերտ աղերսներ ունի հատկապես «Ծով կենցաղոյս» բանաստեղծությունը: Այն կառուցված է կյանքի՝ որպես փոթորկուն ծովի, մարդկային կյանքի՝ որպես այդ ծովում լողացող մակույկի և Քրիստոսի՝ խաղաղ նավահանգստի, պատկերների վրա:

Նույն ձևով «Բնունի» բաժնում տեղ են գտել բնության հետ կապված ստեղծագործությունները և պատկերները: 14 բանաստեղծություններից կազմված շարքով ներկայացվում է գյուղական բնանկարը և կյանքը: Շարքի գյուղատնտեսական աշխատանքների ընթացքին վերաբերող «Մշակ», «Եզող», «Արտունձք», «Այգեկութք» բանաստեղծությունները սերտ առնչություն ունեն Դանիել Վարուժանի «Հացին երգը» շարքի հետ: Վարուժանն Ալիշանի աշակերտն էր ու թերևս ազդվել է «Բնունի» շարքի ստեղծագործական ընդհանուր հղացքից:

Հատորը եզրափակվում է Ալիշանի ճանապարհորդական տպավորություններով, որոնք կարծես չափածոյի վերածված բնանկարներ լինեն:

Չորրորդ «Տէրունի» հատորում տեղ են գտել Ալիշանի հոգևոր, կրոնական ու աստվածաշնչային թեմաներով բանաստեղծությունները, որոնք, ըստ էության, հոգևոր մաղթանքներ են և սկսվում են «առ» նախդիրով, ինչպես օրինակ՝ «Առ Յիսուս», «Առ Խաչեալն Յիսուս»:

Նարեկացիական շունչն է զգացվում շարքի առաջին՝ «Խօսք ընդ Աստուծոյ» գործում:

Հատորում տեղ են գտել բանաստեղծական երեք շարքեր, որոնցից առաջինը՝ «Տնօրինականք», ներկայացնում է Քրիստոսի կյանքի դրվագները Ս. Ծննդից մինչև Խորհրդավոր ընթրիք: Երկրորդը՝ «Կուսական»՝ Տիրամոր կյանքի դրվագներն անարատ հղություններ են ծննդից մինչև Վերափոխում և երրորդը՝ «Տոնականք» նվիրված է Սրբոց սոններին:

Ծնունդից մինչև մահ ձգվող տրամաբանությամբ ինչպես որ շարքի առաջին հատորն էր՝ «Մանկունին», այնպես և վերջին՝ Հինգերորդ հատորն է «Տխրունին», ուր տեղ են գտել հանգուցյալներին և նախորդող դարերի նշանավոր դեմքերին նվիրված հիշատակի բանաստեղծություններ: Ալիշանը հատորը ձոնել է իր արյունակից ու հոգևոր հարազատների հիշատակին:

«Մաղթունիում» եթե մեծ տեղ էր գրավում «առ» նախդիրի կիրառումը, ապա այս հատորում «վա՛չ» ձայնարկությունը: Առաջին շարքը կոչվում է «Յո՛ւչք և վա՛չք», որին հաջորդում է «Մահու մրմունջը» շարքը:

<sup>21</sup> Հ. Ղ. Ալիշան. 1857, հ. Բ, էջ 39–46:



«Մաղթունիում» եթե ներբողներ էին Մխիթարյանների բարերարներին, ապա այստեղ՝ նրանց հիշատակին նվիրված բանաստեղծություններ:

«Հայրունիում» եթե ներկայացվում էին գյուղական կյանքի հովվերգական պատկերները, ապա այստեղ՝ «Գերեզմանատուն շինական» շարքում գյուղական խաղաղության մեջ հանգչողները:

«Բանք պանդխտի» վերնագրված շարքը երկու իմաստ ունի, որպես ուղղակի պանդխտության թեմայով ստեղծագործություններ և երկրորդ՝ միջնադարյան ըմբռնմամբ, մարդը երկրային կյանքում պանդուխտ էր՝ մինչև հանդերձյալ կյանքի հասնելը: Պանդխտությանը նվիրված միջնադարյան մի շարք ստեղծագործություններ նաև այս իմաստն ունեն:

Հատորում գեղարվեստական հուշականություններ և Ալիշանի լավագույն ստեղծագործություններին բնորոշ շունդալից ոգով է գրված «Հառաչս ի ծովադիտակ տապան Շաղիոպրիանայ» բանաստեղծությունը, ուր Հայոց Նահապետն է վերստին հանդես գալիս՝ իր խոսքն ուղղելով Փրանսիացի մեծ գրողին, հոգեկան ապրումներն արատահայտելով ծովային տարերքի միջոցով:

Բրետոնեան քարակոշկոճ ծուկիք յորձանաց ծովածածուկ,  
Ո՛վ մրբրայօս եւ ձիւնավարս պիք յաւերժ շառաչուկք:

«Տխրունին» եզրափակող «Հուսկ առ Ոգին նուագաց» բանաստեղծությամբ թեև հրաժեշտ է տալիս մուսային՝ ասելով, որ լուելու են իր քնարի ձայները, Ալիշանը, սակայն չնայած որոշակի ընդմիջումներով, շարունակեց ստեղծագործել մինչև իր կյանքի վերջը:

Ալիշանի գրական ողջ ժառանգության բարձրակետը, սակայն, «Հայրունի» հատորն է՝ այնտեղ գետեղված «Երգք Նահապետի» շարքով: Գիրքն սկսվում է Հայոց մուսային ուղղված «Ի բամբիռն հայկազնի» ստեղծագործությամբ:

«Հայրունի»-ի բանաստեղծությունները և պոեմները հաջորդաբար ներկայացնում են Հայոց պատմության ընթացքը՝ սկսվելով դրախտի օրրան Հայաստանով, գալիս հասնում են մինչև ջրհեղեղ և շարունակվում Հայկ Նահապետի սերունդով մինչև Հայաստանում քրիստոնեության հաստատվելը՝ իրենց լրումին հասնելով V դ. նշանավոր իրադարձություններով: Այդ դարից հետո Ալիշանը հիշում է Մխիթար Սեբաստացուն՝ որպես անցյալի դպրութայան ավանդների նորոգողի: Հայ հերոսական անցյալի կողքին Հայ շինականի կյանքն է ներկայացնում «Հովիւք Շիրակայ» եռամաս կառուցվածք ունեցող արձակ հովվերգությամբ, որն ինչպես նշում է Սուրեն Շտիկյանը, միակ արձակ ստեղծագործությունն է «Նուագների» հինգ հատորներում և աշխատանքի փառաբանմանն է նվիրված, որ աշխատանքով է իմաստավորվում մարդկային կյանքը<sup>22</sup>:

Ինչպես Ալիշանի հայագիտական ուսումնասիրություններում, անգամ բնագրագիտական ամենանրբին քննություններում իսկ նկատելի է բանաստեղծության շունչը և դրոշմը, այնպես էլ նրա գեղարվեստական գործերում միշտ ներկա է բանասերը, գիտնականը: Այս ներկայությունն առավել ցայտուն զգացվում է հենց «Նահապետի երգերում», որոնց գրությունը նախորդող

<sup>22</sup> Ս. Շ տ ի կ յ ա ն. 1967, էջ 166–168:

և զուգահեռ ընթացող շրջանում նա «Բազմավեպի» էջերում հրատարակեց, արժևորեց ու վերլուծեց հայ միջնադարյան և ժողովրդական մի շարք ստեղծագործություններ:

Նոր շրջանի ձևավորվող հայ գրականության համար բախտորոշ նշանակություն էին ունենալու «Վերք Հայաստանին» ու «Նահապետի երգերը»: Հրանտ Թամրազյանի բնորոշմամբ՝ Ալիշանը, «թեև դեռ ծանոթ չէր Աբովյանի «Վերքին», բայց ներքնապես հարազատ էր: Նա դառնում է բարձրացող հայության հոգևոր վերելքի երգիչը»<sup>23</sup>:

Ժողովրդական երգերի տպագրությանը զուգահեռ՝ «Բազմավեպի» ու շրջանադարյան տաղերի և «Ուսմական» ստեղծագործությունների հետևողությամբ «Նահապետի երգերը» գրելով Ալիշանն արձագանքում է մինչ այդ ողջ եվրոպայով անցած օսեսանականության ալիքին: Ինչպես հայկական կրասիցիզմն անտիկ թեմաները փոխարինեց հայկական հերոսական անցյալով, այնպես էլ Ալիշանի ստեղծագործական քուրայում հյուսիսային Շոտլանդիայի ծեր բարդը դարձավ Հայոց Նահապետ համապատասխան ազգային դրոշմ հաղորդելով նաև օսեսանականությունը բնորոշող առանձնահատկություններին:

Ինչպես գարունը միջնադարյան գրականության մեջ հարության խորհրդանիշն էր, այնպես էլ շարքի առաջին «Հայոց աշխարհիկ» բանաստեղծության մեջ գարնան գալստյամբ բնության կենդանացման միջոցով է պատկերվում Հայոց աշխարհի վերագարթոնքը, որը, սկսվելով Արարատի գագաթից, տարածվում է հայրենիքով ձմռան սառնությունը: Գարնան հանդիսավոր այս երթում բնությունը նաև Հայոց աշխարհի թագադրումն է կատարում: Թագավորագրված ժողովրդական երգերի հետևողությամբ Ալիշանն ասում է, թե լեռներն ու հովիտները նոր հարսի նման «նախշուն գարդարին», իսկ կապուտակ սարերը գլուխներին «գոյնզգոյն պսակ» են կապում, ինչպես «նոր թագաւորակ»:

«Հայոց աշխարհիկում» Հայոց աշխարհը ներկայացվում է որպես մի մեծ այգի: Այգին կենդանանում է, ծաղկում է գարնան գալով, որի ավետիսը տալիս է բլբուլը: Վերագարթոնք ապրող բնությունն ավետում է Հայոց աշխարհի վերածնությունը, և որ անցյալի փառքի վերականգնմամբ վերստին իրողություն է դառնալու դրախտի վայելչությունը: Մեր շարականներից մինչև Նարեկացի ու հետագա շրջանի հեղինակները ձգվող ավետիսների հետևողությամբ Ալիշանը բանաստեղծության վերջում ասում է.

Երթամ մեր հին հարցըն տամ աւետիս,  
Ասեմ, թէ գարուն երեկ տանս Հայոց<sup>24</sup>:

Շարքի հաջորդ՝ «Հայ հայրենիք» բանաստեղծության մեջ ևս հարության ու վերագարթնումի գաղափարն արտահայտված է գիշերվան հաջորդող առավոտի պատկերով: Շարականագիրների նման, սակայն, արդեն ազգային շեշտադրմամբ Ալիշանը դիմում է ծագող արեգակին.

<sup>23</sup> Հր. Թամրազյան. 1992, էջ 89:

<sup>24</sup> Ղ. Ալիշան. 1858, էջ 224 («Նահապետի երգերից» մեջբերումների էջերն այսուհետև կնշվեն տեքստում՝ դրանց կից):

Առաւօտուն դըռնակն է բաց,  
Ել, ել, արեւդ Հայաստանեայց (էջ 225):

Այս բանաստեղծութիւնն իր ծավալով գրեթէ երկու անգամ փոքր է «Հայոց աշխարհիկից»: Ի տարբերութիւն վերջինիս, որն ուներ տարածա-ժամանակային մեծ ընդգրկում, ներառելով ողջ Հայոց աշխարհը ու նրա անցյալը, իսկ խորհրդանիշներն էլ առավել ընդհանրացված էին՝ գարուն, Հայոց աշխարհի մայր լեռ Արարատ, դրախտ-Հայաստան, ապա «Հայ հայրենիքում» դրանք ավելի մասնավորեցված, տեղայնացված են: Նաև եթէ առաջինն ընդգրկում էր ողջ Հայոց աշխարհը՝ դրախտի սահմաններով, ապա երկրորդն առավել մոտ է գրութիւն ժամանակին և պատկերում է երկրի ներսը՝ բնութիւն կենդանի տարերքով և ոչ թէ աստվածաշնչային ու պատմականացված նկարագրութեամբ:

Ինչպէս ժողովրդական ստեղծագործութիւններում փոխնիփոխ իրար են հաջորդում լացն ու ծիծաղը, ուրախ և մռայլ տրամադրութիւնները, այնպէս էլ «Նահապետի երգերում» պայծառութիւնն է ընդմիջարկվում հայտնի վիճակով պայմանավորված մռայլ շեշտերով, որոնց այնուհետև դարձյալ հաջորդում է հույսի և հարուստի գաղափարը: Հայոց աշխարհի սպասվող գարունն ու բացվելիք առավոտը ներկայացնելուց հետո Ալիշանը ողբում է դեռևս չանցած ձմռան համար «Ողբամ գքեզ, Հայոց աշխարհ» բանաստեղծութիւն մեջ: Հայ ողբագրութիւնն ավանդների հետևողութեամբ նա ևս իրեն ողբակից է ընտրում Խորենացուն, սակայն հավատարիմ շարքի ընդհանուր ուղղվածութեամբ, ի տարբերութիւն Պատմահոր բարձր և վսեմ ոճի, պահելով հանդերձ այս նույն ոգին՝ իր ցափն արտահայտում է առավել պարզ, ժամանակի համար հարազատ և ընկալելի:

Զաշխարհն Հայոց ես լամ՝ զիմ քաղցրըն հայրենիք (էջ 230):

Ողբալու ձևն իսկ ժողովրդական տարածված «արյուն-արցունք թափել» արտահայտութեամբ է ներկայացնում:

Այս բանաստեղծութիւն մեջ Ալիշանը զուգահեռ է ընթանում Պատմահոր «Ողբին»: Խորենացու «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» արտահայտութիւն հետևողութեամբ, նա գրում է.

Արեւելից եւ հիւսիսոյ ազգացն հազար  
Ճոկան՝ ի ձեռդ առած՝ կայիր հրամանատար (նույն տեղում):

Ալիշանի ողբի լավատեսական ավարտն ազգային թերութիւնները թոթափելու և համերաշխութիւնն ու սիրո հասնելու «Երթայ նախանձ, թող գայ սէր, թող միանան սիրտք» (էջ 237) պատգամն է, որով հուսավառ՝ նա այս գործն ավարտում է հետևյալ տողերով.

Ո՛հ, թող մեռնի ծեր Նահապետ մտնու տապան,  
Այլ թող ելնէ՛ ի տապանէն նոր Հայաստան (նույն տեղում):

Այս ողբին հաջորդում է Ավագ և Փոքր Մասիաների երկխոսության ձևով կառուցված «Մասիուս սարերն», որում արդեն քննարկվում է ժամանակի անմխիթար կացությունից դուրս գալու ելքը: Նման երկխոսությունը հնարավորություն է ընձեռում Ավագ Մասիսի միջոցով մեկ անգամ ևս ներկայացնելու հայ ժողովրդի հերոսական անցյալը, իսկ Փոքր Մասիսի միջոցով էլ շեշտելու, որ միայն անցյալը հիշելով՝ չենք կարող դուրս գալ ներկա կացությունից:

Փոքր Մասիսը գտնում է, որ Ավագ Մասիսի ձյունեղեն գագաթը ոչ մի ուժ ի գորու չէ՝ հալեցնել, և, սակայն, ասում է, թե այսպես սառել ու քարացել են նաև հայերի սրտերը: Ավագ Մասիսն այդ սառնությունը համարում է «լոկ կեղևը», որի ներքո:

Հանց տեսնուս ահեղ կրակներ ու հնոցներ (էջ 241):

Այսինքն՝ եթե սառնություն այս պատկերով Փոքր Մասիսը ցանկանում է ասել, որ հայ ժողովուրդն ընդվզումի ընդունակ չէ, ապա Ավագը շեշտում է, որ կենսական մեծ ուժեր ունի ամբարած իր մեջ:

Բերանըն ձիւնով սառով կու ծածկի,  
Ներսըն դըծոխոց քութուկ բորբոքի (նույն տեղում):

Թեև իտալական հեղափոխության կնիքը նկատելի է «Նահապետի երգերի» բոլոր այն գործերի վրա, որոնք գրվել են վենետիկյան 1848 թ. հեղափոխությունից հետո, սակայն դրա շունչն ու ոգին առավել զգալի է «Մասիուս սարերն» բանաստեղծության մեջ: Սիմեոն Երեմյանի վկայությամբ՝ «Վենետիկյան ամբոխին ապստամբողական օրերուն մէջ միևնոյն յեղափոխութեան ատեն, 1849 թ. մարտի 2-ին կը գրէ Աւագ ու Փոքր Մասիսի խօսակցութիւնը»<sup>25</sup>:

«Նահապետի երգերի» շարքում ծավալով ամենափոքրը, սակայն և ամենահուզականներից մեկն է «Հրազդանը»: Այն իր շնչով ու լեզվառճական առումով բոլորից մոտն է «Հայոց աշխարհիկին» և «Հայ հայրենիքին» ու դրանց հետ մի երրորդություն է կազմում, ուր հայրենի աշխարհի և ժողովրդի հանդեպ քնարական իր վերաբերմունքն է արտահայտում Շահ-Աբբասի ժամանակներում ապրող Նահապետը:

«Հրազդանը», սակայն, սկզբից մինչև վերջ գրված է իբրև ականատեսի անմիջական արձագանք: Այն շարքի միակ գործն է, ուր բացակայում է Նահապետը: Ալիշանի հերոսը Բաբկենի միջոցով է արտահայտում ժամանակակցի իր ցավը: Ձեռագիր տաղարանից հանված ու չմիջնադարյան բանաստեղծության պատրանքն Ալիշանը վարպետորեն ստեղծել է թե՛ իր կողմից հաճախադեպ կիրառվող «իկ» մասնիկով՝ անուշիկ, պանդխտիկ, լուիկ, անտառիկ և այլն, ու թե՛ «Հայկազյան բառարանում» վերստին չներառված միջին հայերենն ու ժողովրդական դրացնակ, կարկըջիկ և համանման այլ բառերով:

<sup>25</sup> Ս. Երեմյան. 1902, էջ 112:

«Հրագղանը» գրելով հայրեններին մոտ չափով Ալիշանը միջնադարյան ու ժողովրդական ստեղծագործությունների պատրանքն է ստեղծում նաև դրանցում տարածված «Այ» դիմելաձևի վարպետ կիրառությունը՝ երեք անգամ կրկնելով հետևյալ երկտողը.

Այ Հրագղան, ա՛յ ջուրք հայրենիք,  
Այ ափունք, յէ՛ր լայք լըռիկ (էջ 246):

«Հրագղանին» հաջորդում են պատմական թեմաներով գրված երեք գործեր, որոնցից առաջինն է «Շուշանն Շաւարշանայ» փոքրիկ վիպերգը: Մինչ այն գրելն Ալիշանը, մինչ այդ, «Սոփերքում» արդեն հրատարակել էր Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը երեք տարբերակով: Ամենաընդհանուր գծերով պահպանելով վկայաբանության սյուժետային ընթացքը, դրան մի նոր խորհուրդ, շունչ և պատկերավորություն է հաղորդում բանաստեղծական երևակայությամբ ու վկայաբանության առանձին տողերի ստեղծագործական զարգացմամբ՝ օգտագործելով միջնադարյան տաղարանների և ժողովրդական երգերի արտահայտչամիջոցները: Վկայաբանությունում Սանդուխտի արտաքինի նկարագրության փոխարեն միայն ասվում է. «Գեղեցիկ տեսեամբ և վայելուչ երեսօք, որ ոչ գտանէր համեմատ նմա ի վերայ երկրի»<sup>26</sup>: Բնորոշող այս տողերի հիման վրա Ալիշանն արդեն պատկերում է նրա անհամեմատելի գեղեցկությունը.

Ճակատն ի քօղ խորոտիկ,  
Ցանած ի հով խոպուպիք,  
Տատրակ տոտամբ մանտրուքայլ  
Ման գայ ի դաշտ ցօղափայլ (էջ 248):

Բնության միջոցով հերոսների հոգեվիճակի փոփոխությունները ու ասեկիքը ներկայացնելը լավագույնս դրսևորվել է նաև «Աշոտ Երկաթի ի ծովուն Սևանայ» ստեղծագործության մեջ: Եթե «Նահապետի երգերի» առաջին երկու բանաստեղծություններում լավատեսական տրամադրությունն արտահայտվում էր գարնան և առավոտի բանաստեղծական մուտքով, ապա այստեղ հայ նախարարների սրտերի խստանայր ու Աշոտ Երկաթի միայնակ մնալը ներկայացվում է թե՛ այդ խստությունը ու թե՛ մենությունը բնորոշ ձևում պատկերով:

Բնության տարբեր վիճակների ու կրած փոփոխությունների միջոցով է ներկայացվում նաև Սևանա կղզին պաշարելը, բուն ճակատամարտն ու Աշոտ Երկաթի տարած հաղթանակը: Եթե հայ նահատակների արյունը գրական տարածված ավանդույթի հետևողությամբ Ալիշանի ստեղծագործություններում կարմիր կակաչով ու վարդով էր պատում հայրենի հողը, ապա թշնամիների սպանվելուց

<sup>26</sup> «Սոփերք Հայկականք», 1853, հ. Ը, էջ 14:

Կապոյտ կանաչ պիք ծովուն գունատին  
Յարիւն և մաղձ՝ գոր փսխէ ժանտ այլազգին (Էջ 286):

Արսեն Տերտերյանի նրբին բնորոշմամբ՝ «Հետագա բոլոր Հայ ուսման-տիկները գնացել են Ալիշանի բաց արած ճանապարհով՝ Հայ բնությունը թշնամիների համար գերեզման, իսկ որդիների համար բուրաստան պատկերացնելով»<sup>27</sup>:

«Հայրունիի» երկրորդ հրատարակության ժամանակ Ալիշանն ավելացրել է ևս երկու բանաստեղծություն, որոնք թեև իրենց շնչով և ուղղվածությամբ մերվում են դրանց, սակայն գրված լինելով նախորդների մի մասից մեկ տասնամյակ, իսկ մյուսներից էլ երկու տասնամյակ հետո՝ լեզվական առումով որոշ չափով տարբերվում են ստեղծված լինելով արդեն ձևավորված կանոնավոր գրական արևմտահայերենով, որի ընդհանուր հյուսվածքում թե՛ գրաբարյան ու թե՛ ժողովրդական արտահայտություններն արդեն հանդես են գալիս որպես գեղարվեստական ոճավորում, և ոչ թե նպատակ ունեն ստեղծելու Նահապետի պատրանքը, քանի որ շարքի 1857 թ. առաջին հրատարակությամբ Նահապետն արդեն իրական անձնավորությունից գրական կերպար էր դարձել:

Իրանցից առաջինը՝ «Վերջին երգ վիրաւոր բամբուկահարին», չկապվելով պատմական որոշակի որևէ իրադարձության հետ, հավաքական կերպով «Նահապետի երգերը» շարքում ներկայացնում է Հայոց հեթանոսական մշակույթն ու անցյալը: Զետեղելով «Պլպուլն Աւարայրից» հետո, վիրավոր և իր վերջին երգը երգել ցանկացող բամբուկահարին Ալիշանն ասես դարձրել է վերջին ակորդը նախորդ գործի ընդհանուր հերոսական ոգու:

Երկրորդը՝ «Հայ հանճար» բանաստեղծությունը, զետեղել է շարքի վերջին «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» գործից առաջ և, մինչ վերջին անգամ լուսնին դիմելը, «Հայ հանճարի» միջոցով առավել է ամբողջացնում պատմական անցյալը՝ լավատեսության ավելի մեծ շեշտ հաղորդելով գալիքին: Անցյալի ու ներկայի հակադրությունը ստեղծելու համար Ալիշանը դիմառնական եղանակով դիմում է Հայ հանճարին, թե ուր մնացին անցյալի մեծագործությունները: Այս հակադրությունը, բնականաբար, ողբագին տրամադրություններ էր ծնելու, և Ալիշանն ասելիքն արտահայտելիս դարձյալ մեծապես հետևում է ողբի ժանրին: «Հայ հանճարը» եռամաս կառուցվածք ունի: Մուտքում հանձին Հայ հանճարի նա դիմում է մուսային: Այնուհետև գալիս է պատմական մասը, որտեղ Հայ պատմագրությամբ նվիրագործված ըմբռնումների համաձայն բանաստեղծը ներկայացնում է անցյալի պատմությունը՝ սկսած Արարչագործությունից:

Միջնադարյան և նոր շրջանի ողբերում անցյալի ու ներկայի հակադրությունը շեշտելու տարածված ձևերից մեկն էր «ո՛ւր» սկսվածքով դիմումը, որը գալիս է Խորենացու «Ողբից»՝ «Ո՛ւր է քաղցր աչացն հանդարտութիւն ... ո՛ւր գուարթ չրթանցն ժպտումն ... ո՛ւր խնդամիտ սիրտն ընդունող արբա-

<sup>27</sup> Ա. Տ եր տ եր յ ա ն. 1944, էջ 68:

նեկաց. ...»<sup>28</sup>: Այն իր զարգացումը գտավ միջնադարյան ողբերում, այդ թվում՝ Ծնորհալու և Ստեփանոս Օրբելյանի գործերում:

Նման դիմումաձևը շեշտված ազգային դրոշմ և ուղղվածությունն ստացավ հատկապես ուշ միջնադարի և XVIII դ. հայ բանաստեղծության մեջ<sup>29</sup>: «Հայ հանճարի» առաջին իսկ տողը ևս սկսվում է այս հարցմամբ, և նույն տողում իսկ հաջորդում է պատասխանը.

Ո՛ւր ես հայ հանճար. — Անցեր ես, անցեր ...<sup>30</sup>

Մի քանի տուն անց դարձյալ նույն հարցն է տրվում.

Ո՛ւր քո ճարտարաց աշխատանքն անհուն,  
Ո՛ւր քաջ և գիտուն որդւոցդ արդիւնքներ<sup>31</sup>:

Ընդունված կառուցվածքով այս ողբ-բանաստեղծությունն ավարտվում է լավատեսական տրամադրությամբ ու հավատով: Ինչպես «Հայոց աշխարհիկում» շեշտվում էր ձմռանը հաջորդած գարնան, իսկ «Հայ հայրենիքում»՝ գիշերվանից հետո բացվող առավոտը, երբ ուրախ, զվարթուն մի տրամադրությամբ արթնանում էր Հայոց աշխարհը, այնպես էլ այստեղ բանաստեղծը հրավեր է կարդում.

Հերիք քընացեր,  
Գիշերտ է անցեր<sup>32</sup>:

Ժողովրդական նույն տարազավորմամբ է ներկայացված Ավարայրի ճակատամարտը «Պլպուլն Աւարայրի» պոեմում, ուր ստեղծագործական ուրույն զարգացում է ապրել վարդի և բլբուլի ավանդական մոտիվը: Քրիստոնեական այլաբանությամբ այն խորհրդանշում էր մի քանի իմաստներ, որոնցից գլխավորն էր բլբուլի՝ Գաբրիել հրեշտակապետը և Տիրամոր՝ վարդը լինելը: Մանուկ Աբեղյանի բնորոշմամբ՝ նաև XIV դարից ելթե «Վարդ ու սոխակի պատկերով կամ այլաբանությամբ ևս գրում են, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել սեր, այլ որ այլաբանական ձևը դուր էր գալիս»<sup>33</sup> մեր միջնադարյան տաղերգուներին:

Ընդհանուր քրիստոնեական այլաբանություններին զուգահեռ՝ վարդը հայ բանաստեղծությունում խորհրդանշում էր նաև նահատակության գա-

<sup>28</sup> Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի. 1981, էջ 448:

<sup>29</sup> Հմմտ. Կարապետ Վարդապետ (1540 թ.). «Ո՛ւր են առաջին իշխանքն / Քաջ Մուշեղ և Գայլն Վահան» (Հ. Մ ա հ ա կ յ ա ն. 1986, հ. I, էջ 217), Գրիգոր Կեսարացի (ԺԶ–ԺԷ դդ.). «Ով Հայաստան, հարս մեծարգո / Ո՛ւր է շքեղ փեսայն քո» (Հ. Մ ա հ ա կ յ ա ն. 1987, հ. II, էջ 13), Ղազար Զահկեցի (ԺԸ դ.). «Ո՛ւր են նախկին հարքն ամենայն / Գեղաշուք և ջոկափառ» (Շ. Ն ա գ ա Ր յ ա ն. 1992, էջ 279):

<sup>30</sup> Ղ. Ա լ ի շ ա ն. 1867, հ. Գ, էջ 342:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 343:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 344:

<sup>33</sup> Մ. Ա բ ե դ յ ա ն. 1970, հ. Դ, էջ 399:

ղափարը: Այս առումով ստեղծագործական իսկական մի գյուտ կարելի է համարել Ալիշանի մտահղացումը Եղիշեի հոգին՝ որպես բլբուլ և Վարդանին՝ վարդն «կարմրիկ» ներկայացնելը՝ այս կերպ անգամ կառուցվածքային առումով հավատարիմ մնալով ավանդական մոտիվին:

Վարդի և սոխակի սիրո ավանդական երգերում ասվում է, թե բլբուլը, մտնելով այգի, երգում էր վարդին, ապա, այնտեղ չգտնելով նրան, շարունակ «վարդ, վարդ կանչելով» դալկանում էր և ամեն տարի գարնան բացվելու հետ գալիս ու պարտեզում մյուս ծաղիկների մեջ իր վարդին էր որոնում ու սկսում նույն երգը: Դա Ալիշանը մի քանի տողերի մեջ խտացրել է թե՛ «Պղպուլն Ավարայրի» նախերգում և թե՛ վերջում: Պոեմի սկզբում ասվում է, որ բլբուլը.

Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ  
Որ զՎարդանն ի վարդըն տեսնու կարմրիկ (էջ 259):

Ամեն գարնան գալը և վարդին որոնելն էլ ականարկված են հաջորդող տողերում.

Ձրմեռն յանապատ կու գնայ, կայ ի լաց,  
ՅԱրտազ գայ գարունն ի թուփ վարդենեաց,  
Երգել ու կանչել յԵղիշէին ճայն,  
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան (նույն տեղում):

«Պղպուլն Աւարայրի» և «Լուսնկայն գերեզմանաց հայոց» գործերում գլխավոր գործող անձը, որին դիմառնական եղանակով դիմում է հեղինակը, լուսինն է: Կարող ենք ասել, որ թե՛ ժամանակագրական և թե՛ կառուցվածքային առումով լուսնի գեղարվեստական պատկերով է շրջանակվում ողջ շարքը:

Ի տարբերություն «Նահապետի երգերի» մյուս պատկերների, որոնք կապվում են հայ միջնադարյան բանաստեղծության ավանդներին, լուսինը մեր հին գրականությունում, բացառությամբ հայրենների, ծառայում է որպես գեղարվեստական համեմատության միջոց և Ալիշանի դիմառնական եղանակով նրան դիմելը չի կարող ստուգաբանվել միայն հայ գրականության ավանդներով:

Լուսինն է այն առավել հստակ ու տեսանելի գրական պատկերը, որն այս շարքը կապում է օստեանական երգերի հետ: Շոտլանդացի Ջեյմս Մակֆերսոնի կողմից III դ. իր հայրենակցին վերագրված օստեանական երգերը քաջածանոթ էին նաև Մխիթարյաններին: Դրանց անդրադարձել է Լուկաս Ինճիճյանը «Դարապատումի» վերջին հատորում գրելով, որ իտալերեն թարգմանություն մեջ նա Հոմերոսից վեր է դասվում<sup>34</sup>: Թեև XIX դ. առաջին քառորդում ընդունվում էր Օստեանին վերագրվող ստեղծագործությունների գրական միատիֆիկացիա լինելը, սակայն հավատարիմ ավանդականության

<sup>34</sup> Ղ. Ի ն ճ ի ճ յ ա ն. 1827, հ. 7, գ. I, էջ 109:



և վավերականություն մխիթարյան ըմբռնմանը, անգամ 1874 թ. Գարեգին Զարպհանայանը գրում էր. «1760-ին Սկովտիոյ հիւսիսային կողմերը պահուած այդ դպրութիւնը, դեռ անծանօթ էր Եւրոպիոյ ուրիշ մասերուն, երբ գրաւորական աշխարհին զարմանք և հիացմունք պատճառեց Սկովտիոյ լեռներուն վրայէն ժողովուած ... բանաստեղծութեանց հատուածները»<sup>35</sup>:

Օսսեանի ստեղծագործություններին քաջածանոթ էր նաև Ալիշանը: «Քաղաքական աշխարհագրութեան» իտալական դպրությունը նվիրված բաժնում Ալիշանը գրում է. «Նախկին բարբառ բնակչաց Բրիտանիոյ էր լեզու կելտաց, յոր ոչինչ աւանդեցաւ ի գիրս, բայց միայն երգը Բարդ անուանեալ երգչացն կամ քրմաց յորս մեծահոգակ են քերդուածք Ոսիանայ՝ զոր ասեն կացեալ մերձ ի վախճան Գ դարու»<sup>36</sup>: 1847 թ. «Բազմավեպում» «Հայոց աշխարհիկին» կցված բացատրական ներածական խոսքում Նահապետը անվանվում է «Հայոց դաշտերուն Վերգիլիոսը կամ Հոմերոսն»<sup>37</sup>: Նման բնորոշումը եթե չդիտարկվի ընդհանուր եվրոպական գրական շարժման շրջանակներում, ապա կարող է թվալ, թե Ալիշանն իր ստեղծագործություններն ուրիշի անունով հրատարակելով հանդերձ անհամեստություն է ունեցել դրանք համեմատելու Հոմերոսի գործերի հետ: Այնինչ այս համեմատությունը ևս օսսեանականության գրական տեսական մի արձագանքն է: Մակֆերսոնի հրատարակության թողած տպավորությունն այնքան մեծ էր, որ եթե նա «գտնված» պոեմները համեմատում էր Հոմերոսի գործերի հետ, ապա ժամանակակիցները նույնիսկ վեր դասեցին: Անգլերեն առաջին հրատարակությունից հետո ժամանակի նշանավոր քննադատներից պրոֆեսոր Բլերը Օսսեանին անվանում է հյուսիսային ժողովուրդների Հոմերոս, էպիկական պոեմների ստեղծող<sup>38</sup>: Գերմանիայում էլ նույն կերպ ասվում է, թե Օսսեանն ավելի մեծ է, քան հոնիական Հոմերոսը<sup>39</sup>: Իտալացի քննադատ, բանաստեղծ Ջեզարոտին ևս 1963 թ. իտալերեն հրատարակությունում նրան Հոմերոսից վեր է դասում<sup>40</sup>: Իսկ Գյոթեն երիտասարդ Վերթերի միջոցով գրում է, թե «Օսսեանը դուրս է մղել սրտիցս Հոմերոսին»<sup>41</sup>: Եվրոպական հեղինակների հետևողությամբ էլ Զարպհանայանն է հռետորական ոճով հարցնում. «Ով էր այս սկովտիացի Հոմերոսը՝ որուն գոյությունը Մակֆերսոնի ձեռքով յայտնուեցաւ»<sup>42</sup>: Մուտք-նախաբանում Նահապետի մասին հայտնված կենսագրական տեղեկությունները, և, մասնավորապես, թե նա իր երգերը հյուսել է «խաղաղ ծերութեամբը աչուրներուն լոյսը պակասած» տարիքում, Ալիշանը գծագրում է Մակֆերսոնի հերոսին՝ արդեն կուրացած ու ծերացած երբեմնի մարտիկին, որն իր «անձնական ապրումներն միա-

<sup>35</sup> Գ. Զարպհանայան. 1874, հ. Ա, էջ 13:

<sup>36</sup> Ղ. Ալիշան. 1853, էջ 426:

<sup>37</sup> «Բազմավեպ», 1847, թիւ 12, էջ 183:

<sup>38</sup> История английской литературы. 1945, т. 1. с. 577.

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 580:

<sup>40</sup> Дж. Макферсон. 1983, с. 493.

<sup>41</sup> Գյոթե. 1981, էջ 156:

<sup>42</sup> Գ. Զարպհանայան. 1874, հ. Ա, էջ 14:

խառնելով նկարագրվող դեպքերին, պատմում է անցած ժամանակների մասին: Գյոթեի բնորոշմամբ՝ նա է «թափառական ալեհեր հերոսը»<sup>43</sup>:

Ինչպես Օսսեանի կերպարը օսսեանականացնում է պոեմների ողջ շարքը, որոնցում նա կամ իրադարձությունների մասնակիցն է, կամ էլ իր պատմողական ոճով որոշակի մեղանխողի տրամադրություն է հաղորդում պատումին, նույն կերպ էլ «Նահապետի երգերի» գրեթե բոլոր գործերում հանդես է գալիս Նահապետը՝ ստեղծագործությունը հուզական մի շունչ հաղորդելով: Նաև այն հանգամանքը, որ երիտասարդ Ալիշանն իրեն ներկայացրել է ծեր Նահապետի կերպարով, որն այնուհետև փոխանցվել է և «Հուշիկներին», ապա առավել հասուն տարիքում մարել, կարծում ենք, բացատրվում է դարձյալ նույն շարժառիթներով: Մակֆերսոնը ևս երիտասարդ տարիքում է իրեն նույնացրել շոտլանդացի ծեր բարդի հետ: Ըստ գրականագետ Յուրի Լեխինի ուսուցողները ևս Օսսեանին դիմել են երիտասարդ տարիքում, և հիմնականում վաղ շրջանի գործերում<sup>44</sup>:

Մակֆերսոնը մի ողջ ներածություն է գրում ապացուցելու, որ կելտական գրականությունը III դարում կարող էր նման հեղինակ ունենալ: Ալիշանը գրական-տեսական ավելի շատ կովաններ ուներ իր հերոսին ներկայացնելու որպես առավել վաղ շրջանում ստեղծագործած, սակայն օսսեանականությունը մեխանիկորեն հետևելու փոխարեն, նա ողջ եվրոպայով անցած գրական միստիֆիկացիայի շարժումն իսկ ծառայեցնում է հայ գրականության՝ ժամանակի առաջադրած խնդիրներին:

Օսսեանի պոեմներում մեծ տեղ է տրվում Հյուսիսային Շոտլանդիայի վայրի ու ասեղ բնությունը, ուր շարունակ մրրիկն է ունում, իսկ մշուշի միջից հայտնվում և ապա դարձյալ այդ մշուշում անհետանում են մեռած հերոսների հոգիները, իսկ ողջ բնանկարը լուսավորվում է ամպերի միջից հայտնվող լուսնի գունատ շողերով<sup>45</sup>: Շարունակ ներքին մի ընդհանրություն է ստեղծվում բնության նկարագրությունների և շոտլանդացի ծեր բարդի հոգեվիճակի միջև: Ալիշանը Հյուսիսի խստություններն իսկ պատշաճեցրել է Հայոց աշխարհի բնությունը՝ այն ներկայացնելով մեր գրականության արտահայտչամիջոցներով:

Օսսեանի երգերում բնությանը և ուրվականներին միահյուսված երրորդ գործող պատկերը լուսինն է: Քանի որ Ալիշանն իր գրական հերոսին համարում է XVII դ. հեղինակ, բնականաբար, ուրվականների և դրանց համարժեք բնության նկարագրությունների ողջ շերտը պետք է դուրս մնար: Այս պատճառով էլ գլխավոր գործող կերպար է դառնում լուսինը: Մեր միջնադարյան բանաստեղծությունում այն գլխավորապես գեղարվեստական արտահայտչամիջոց ու համեմատություն էր<sup>46</sup>, ուստի Ալիշա-

<sup>43</sup> Գյոթե. 1981, էջ 156:

<sup>44</sup> Дж. Макферсон. 1983, с. 516.

<sup>45</sup> Այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 470, նաև՝ История всемирной литературы. 1988, с. 80.

<sup>46</sup> Հմմտ. Ա. Ա. Մնացականյան. 1995, էջ 120, 140, 229, 377, 646, 665, 694, 702:

նը լուսնին դիմում է հայրենների դիմառնական ոճով՝ դրանց կառուցվածքային առանձնահատկություններն իսկ կարողանալով պահպանել անգամ «Պլպուլն Ավարայրի» և «Լուսնկայն գերեզմանացն հայոց» պոեմներում: «Իմ բարձրագնաց լուսին» սկսվածքով հայրենների նման<sup>47</sup> Ալիշանն այս երկու գործերը սկսում է հետևյալ տողերով.

Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ  
(«Պլպուլն Ավարայրի», էջ 258):

... Այ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր  
(«Լուսնկայն», «Հայրունի», էջ 288):

Օսսեանի գործերում լուսնի շողերով հայտնվում էին ուրվականները: Ալիշանը զարմանալի գեղարվեստական մի հայտնագործմամբ օգտագործելով վարդի և բլբուլի պատկերը, որն ուներ նաև հոգու ու մարմնի փոխհարաբերության այլաբանական խորհուրդը, լուսնի շողերի ներքո ուրվականի փոխարեն ներկայացնում է բլբուլին՝ Եղիշեի հոգուն.

Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին  
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին,  
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,  
Որ զՎարդան ի վարդն տեսնու կարմրիկ (էջ 258):

Օսսեանի ստեղծագործություններում լուսինը նաև երբեմնի փառքի հիշողության կրողն է և նրա շողերը ծեր բարդի հոգում արթնացնում են անցյալի հուշերը: Նույն կերպ էլ Ալիշանը, լուսնին դիմելով և, ինչպես հայրեններում, քնարական հերոսն էր բողոքում իր սիրելիի համար, այնպես էլ ինքն է բողոքում հայրենիքի ճակատագրի համար ու լուսնի շողերն արթնացնում են անցած ժամանակների վերհուշը՝ առիթ դառնալով ևս մեկ ոգեկոչման:

Ամայի դաշտերում լուսնի շողերով լուսավորվող հերոսների շիրմի օսսեանական տարածված պատկերով է ավարտվում նաև «Լուսնկայն գերեզմանացն հայոց» ստեղծագործությունը: Նահապետը, դիմելով լուսնին, որպես վերջին խնդրանք ասում է.

Մէկ քար մ'այլ կայ յԱնձանօթ հովտին,  
Գընա հոն կաթէ զվերջին քո լոյս,  
Այն գերեզմանն է Նահապետին (էջ 298):

Հատկանշական է, որ «Մահվան տեսիլում» հայ գրականության մեծերին իրենց ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկություններով

<sup>47</sup> Տե՛ս Վ. Ն եր ս ի ս յ ա ն. 1976, էջ 33:

*ներկայացնող Չարենցը «լուսին» բառն առաջին անգամ օգտագործում է Ալիշանի կապակցությամբ՝ գրելով.*

Լուսնի սառ լույսերով ողողված՝ մոտենում է նա երբեքուն<sup>48</sup>:

**Եզրակացություն**

*Այսպիսով, հատկապես «Նահապետի երգերով» ստեղծագործական առումով արձագանքելով ժամանակի համասկզբայական գրական շարժմանը, Ալիշանը դրանք ծառայեցնում է ժամանակի հայ գրականության առաջադրած խնդիրներին, օստեանականությունը բնորոշ գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները ներկայացնում է հայ միջնադարյան գրականության պատկերային համակարգի միջոցով՝ որպես գիտնական նրբորեն քննելով ու միջնադարի հայ բանաստեղծության լեզվական յուրահատկությունները և վերջինիս լեզվական շղարշով պատելով իր գործերը:*

Վարդան Դևրիկյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունը՝ հայ միջնադարյան գրականություն: Հեղինակ է 36 մենագրության և շուրջ 120 հոդվածի: devrikyan@yahoo.com

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Աբեղյան Մ. 1970, հ. Դ, Երկեր, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 636 էջ:

Ալիշան Հ. Ղ. 1854, Քաղաքական աշխարհագրություն, Վենետիկ:

Ալիշան Ղ. 1855, Տեղագիր Հայոց Մեծաց, Ս. Ղազար, 1855, 105 էջ:

Ալիշան Հ. Ղ. 1857, Նուագք, հ. Բ, Մաղթունի, Վենետիկ, 264 էջ:

Ալիշան Ղ. 1858, Նուագք, հտ. Գ, Հայրունի, Վենետիկ:

Ալիշան Ղ. 1867, Նուագք, հ. Գ (2-րդ հրատ.), Հայրունի, Վենետիկ, էջ:

Ալիշան Ղ. 1881, Շիրակ, Վենետիկ, 192 էջ:

Ալիշան Ղ. 1885, Սիսուան, Վենետիկ:

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ, 592 էջ:

Ալիշան Ղ. 1895, Աբուսահլ Հայ, Վենետիկ, 82 էջ:

Ալիշան Ղ. 1895, Հին հաւատք հայոց, Վենետիկ, 523 էջ:

Ալիշան Ղ. 1896, Կամենից, Վենետիկ, 276 էջ:

Ալիշան Ղ. 1904, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 291 էջ:

«Բազմավէպ» (Վենետիկ), 1847, թիւ 12, 1848, թիւ 6; 1988:

«Գեղունի» (Վենետիկ), 1949:

Գյոթե. 1981, Երիտասարդ Վերթերի տառապանքները, Երևան, 240 էջ:

Երեմեան Ս. 1902, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, 208 էջ:

Ջարպիանալեան Գ. 1874, հ. Ա, Պատմություն մատենագրութեան միջին և նոր դարուց յԱրևմուտս, Վենետիկ, 435 էջ:

<sup>48</sup> Ե. Չարենց. 1984, էջ 486:

Պատմամանկավարժական հանդես 2021 № 3 Историко-филологический журнал

- Թամրազյան Հր. 1992, հ. Գ, Հայ քննադատություն, Երևան:  
 Ինձիճեան Ղ. 1835, հ. Ա, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց  
 աշխարհի, Վենետիկ, 476 էջ:  
 Ինձիճյան Ղ. 1827, հ. 7, գ. I, Ղարապատում, Ս. Ղազար:  
 Լաբուբնեայ դիւանագիր դպրի Եղեսիոյ Թուղթ Աբգարու, 1868, Վենետիկ, 71 էջ:  
 Ճեմճեմեան Ս. 1974, Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ  
 Հայք (1843–1853), Վենետիկ, 94 էջ:  
 Մնացականյան Աս. 1995, Հայրեններ, Երևան, 1096 էջ:  
 Մովսես Խորենացի. 1981, Պատմութիւն հայոց, աշխատ.՝ Ստ. Մալխասյանի,  
 Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 592 էջ:  
 Նազարյան Շ. 1992, Ողբի և սթափման բանաստեղծությունը, Երևան:  
 Ներսիսյան Վ. 1976, Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական  
 միջոցները, Երևան:  
 Շտիկյան Ս. 1967, Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան:  
 Չարենց Ե. 1984, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան:  
 Սահակյան Հ. 1986, հ. 1, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, Երևան,  
 Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 756 էջ:  
 Սարինյան Ս. 1966, Հայկական բռնանտիգմ, Երևան:  
 Տերտերյան Ա. 1944, Հայ կլասիկներ, Երևան:  
 Սահակյան Հ., Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, 1987, հ. Բ, Երևան,  
 Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 832 էջ:  
 «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, 2002, Երևան:  
 Макферсон Дж. 1983, Поэмы Оссиана, издание подготовил Ю. Д. Левин. Л.  
 История английской литературы. 1945, т. 1. М.  
 История всемирной литературы. 1988, М.

## НАУЧНОЕ И ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДИЕ ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА

ВАРДАН ДЕВРИКЯН

### Резюме

*Ключевые слова:* Г. Алишан, Конгрегация Мхитаристов, «Песни Патриарха», «География Армении», Ани, Ширак, Зейтун, Сюник, Вардан Мамиконян, роза и соловей, луна.

Научно-литературное наследие Гевонда Алишана включает составленные им научные публикации армянских средневековых рукописей, историко-географические и исторические исследования, литературные и религиозные переводы, художественную прозу, стихотворения и поэмы. Изначально Алишан планировал отдельными томами представить все регионы Исторической Армении, но успел издать лишь четыре из них: «Ширак» (1881 г.), посвященный Киликии «Сисван» (1885 г.), «Айрарат» (1890 г.) и посвященный Сюнику «Сисакан» (1893 г.). Хотя это и историко-географи-

ческие произведения, но написаны они в свойственном Алишану художественном стиле. Особое внимание он уделил описанию исторических героических событий, связанных с местами, которые охватывают эти географические районы.

Алишан является автором нескольких исследований, имеющих отношение к армянским колониям, из которых, в первую очередь, выделяется исследование «Армяне и Венеция» (1896 г.), в котором представлены отношения армян с Венецией в XIV–XIX веках.

Различным видам растений Армянского нагорья посвящен опубликованный в 1895 г. большой труд «Растения Армении». Это не ботаническое исследование, а перечень растений Армянского нагорья, представленных отдельными статьями.

Двухтомник «Воспоминания об армянской родине» (Венеция, 1869–1870 гг.) занимает промежуточное место между художественной и научно-исторической прозой. В книге представлены 33 знаменательных события из истории армянского народа, в патриотическом духе которых Алишан хочет воспитать своих современников. То же относится к книге «На заре распространения христианства в Армении» (1901 г.), которая посвящена проповедованию христианства в Армении и его государственному принятию со времен апостольских до 301 года.

Алишан перевел 12 книг, три из которых художественные и девять религиозных, носящих общехристианский характер.

Большая часть поэтического наследия Алишана, около 350 стихотворений, вошла в 5 книг из цикла «Стихи», изданных в Венеции в 1857–1858 гг. и переизданных в 1866–1867 гг. Третий том этого цикла, в который вошли стихи, написанные на исторические и патриотические темы, особенно серия «Песни Патриарха», которая вслед за распространенным в Европе оссиановским движением приписывается предположительно жившему в начале 17 века поэту по имени Нахапет, принесла Алишану всеармянское признание. «Песни Патриарха» ознаменовали начало поэзии на западноармянском литературном языке и переход от классицизма к романтизму. В этих стихотворениях присутствует Алишан-ученый, исследующий языковые особенности армянской поэзии позднего средневековья и покрывающий свои произведения лингвистической пеленой последнего.

*Вардан Деврикан – д. филол. н., директор Института литературы им. М. Абегиана НАН РА. Научные интересы: классическая армянская средневековая и новая литература, история армянского книгопечатания. Автор 36 монографий и около 120 статей. devrikan@yahoo.com*

THE SCIENTIFIC AND LITERARY HERITAGE OF SAINT  
FATHER GHEVOND ALISHAN

VARDAN DEVRIKYAN

## Summary

*Key words: Gh. Alishan, Mekhitarist Congregation, "Nahapet's songs", "Geography of Armenia", Ani, Shirak, Zeitun, Syunik, Vardan Mamikonyan, rose and nightingale, Moon.*

Ghevond Alishan's scientific-literary heritage includes his scientific publications of Armenian medieval manuscripts, historical-geographical and historical studies, literary-religious translations, fiction and poems.

Alishan originally planned to present all the regions of Historical Armenia in separate volumes, but managed to publish just four of them: "Shirak" (1881), "Sisvan" (1885) dedicated to Cilicia, "Ayrarat" (1890) and dedicated to Syunik "Sisakan" (1893). Although these are historical-geographical works, they are however written in the artistic style peculiar to Alishan. He paid special importance to writing about the historical and heroic events related to the places of those geographical areas.

Alishan is the author of several researches about the Armenian colonies, among which the most notable is the study "The Armenians and Venice" (1896), where the relations of the Armenians with Venice in the 14th-19th centuries are presented.

The extensive work entitled "Plants of Armenia" published in 1895 is dedicated to various plant species of the Armenian Highland. It is not a botanical study, but a list of the plants of the Armenian Highland in separate articles.

The two-volume "Memoirs of the Armenian Homeland" (Venice, 1869-1870) occupies an intermediate place among the fiction and scientific-historical prose. The book presents 33 remarkable events in the history of the Armenian people, in the patriotic spirit of which Alishan wants to bring up his contemporaries. The same refers to the book named "The Dawn of the Spread of Christianity in Armenia" (1901), which is dedicated to the preaching and state adoption of Christianity in Armenia from the apostolic period to 301 AD.

Alishan translated 12 books, three of which are fiction and nine religious, which are of a general Christian nature.

Most of Alishan's poetic heritage, about 350 poems, is included in 5 books of his "Poems", which were published in Venice in 1857-1858 and republished in 1866-1867. The third volume of this cycle, which included poems written on historical and patriotic themes, especially the series "Songs of the Ancestor", which, following the Ossian movement widespread in Europe, is ascribed to a

poet named Nahapet who lived in the early 17th century, brought Alishan Pan-Armenian recognition. The “Songs of the Ancestor” marked the beginning of poetry in Western Armenian literary language and the transition from classicism to romanticism. There Alishan the scientist exists in these poems, who studies the linguistic peculiarities of the Armenian poetry of the late Middle Ages and covers his works with the linguistic veil of the latter.

*Vardan Devrikyan – Doctor of Sciences in Philology, Head of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan. Scientific interests: Classical medieval and new Armenian literature, the history of Armenian typography. Author of 36 monographs and about 120 articles. devrikyan@yahoo.com*



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ\*

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Պետրոս Դուրյան, արևմտահայերեն, նե, թատրոն, սիրել, դրժել, լճակ, տրտունջք, մահ, գերեզման, հիշատակ, Հայաստան, Կոստանդնուպոլիս, Սկյուտար:

Նախաբան

Պետրոս Դուրյանը երկրային կյանքում միայն «իր մեռնիլն»<sup>1</sup> չգրաց, այլև տեսավ իր Հանճարի լույսը, որ պիտի շողարձակեր Հայ գրականության ճանապարհին: Նա կարծես ծնվել էր մահվան ապրումների մասին գրելու, մահը բանաստեղծականացնելու համար, որով լեցուն են և՛ քերթվածները, և՛ նամակները: Մահից անմիջապես հետո՝ 1872-ին, լույս տեսած «Տաղք և թատերգությունք»<sup>2</sup> ժողովածուն դրա անմիջական վկայությունն է, որ միանգամից աննախադեպ սեր ու ճանաչում բերեց բանաստեղծին. այդպես տարիներ անց մեկ էլ եղել է Վահան Տերյանի «Միջնադրի անուրջներ»-ի (1908) հետ: Ընթերցողը զգայուն է հոգեշահ պոեզիայի հանդեպ, պարտադրվածից խորշում է:

Դուրյանագիտությունը հունի մեջ ընկավ Ա. Չոպանյանի<sup>3</sup> և Ս. Հակոբյանի<sup>4</sup> ուսումնասիրություններով: Նրա մասին գրել են նաև Ս. Երեմյանը (Ատրուշան)<sup>5</sup>, Հ. Աճառյանը<sup>6</sup>, Մ. Ծանաչյանը<sup>7</sup>: Բարձր գնահատությամբ հնչեց Հ. Օշականի վերլուծականը՝ Դուրյանին դիտելով ոչ միայն Հայ, այլև համաշխարհային գրականության ուսմանտիկների շարքում<sup>8</sup>:

\* Ներկայացվել է 22. VII. 2021 թ., գրախոսվել է 17. VIII. 2021 թ., ընդունվել է տպագրության 11. X. 2021 թ.:

<sup>1</sup> Պ. Դուրյան. 1971, հ. I, 1972, հ. II, էջ 186: Այսուհետ հիշյալ հատորներից բերված օրինակների էջերը կնշվեն շարադրանքի մեջ:

<sup>2</sup> Բ. էքսերճյան. 1892, թիվ 2667: էքսերճյանը 1893 թ. Կ. Պոլսում հրատարակեց «Տաղք և թատերգությունք, նամականի, դամբանական, տապանագիրք» և «Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի» գրքերը՝ ըստ ամենայնի ղեկավարելով դուրյանագիտության հիմքերը:

<sup>3</sup> Ա. Չոպանյան. 1894, Ա. Չոպանյան. 1967:

<sup>4</sup> Ս. Հակոբյան. 1922:

<sup>5</sup> Ս. Երեմյան. 1913:

<sup>6</sup> Հր. Աճառյան. 1911, թիվ 15–16, 19–20, Հր. Աճառյան. 1912:

<sup>7</sup> Մ. Ծանաչյան. 1953:

<sup>8</sup> Հ. Օշական. 1953:

Դուրյանի ստեղծագործությունն ընդգրկվել է Վ. Բրյուսովի կազմած «Հաստատանի պոեզիան» (Մոսկվա, 1916) անթոլոգիայում, Հ. Սուրխաթյանի կազմած «Գրական գոհարներ» (Թիֆլիս, 1922) և Չարենցի խմբագրությամբ լույս տեսած «Արևմտահայ բանաստեղծներ» (Երևան, 1930, կազմ.՝ Ալազան, Նորենց, առաջ.՝ Վանանդեցու) ժողովածուներում: Չարենցի ղեկավարությամբ առանձին գրքով նաև լույս է տեսնում «Տաղեր» (Երևան, 1932, կազմ.՝ Ալազան, Նորենց) ժողովածուն: Այդուհետև Դուրյանի ստեղծագործությունը պարբերաբար հրատարակվում է առանձին գրքերով և դառնում թե՛ ընթերցողի սեփականություն, թե՛ գրականագիտության մշտական ուսումնասիրության առարկա<sup>9</sup>:

Դուրյանագիտության ասպարեզում լուրջ ներդրում ունի Ա. Շարուրյանը: Նրա գրչին է պատկանում «Պետրոս Դուրյան: Կյանքը և գործը» (Երևան, 1972, խմբ.՝ Է. Զրբաշյան) հանգամանալի և համապարփակ ուսումնասիրությունը: Նրա աշխատասիրությամբ 1971–1972 թթ. տպագրվեց նաև Դուրյանի երկերի ժողովածուի գիտական երկհատորյակը:

### Կյանքը

Պ. Դուրյանը ծնվել է 1851 թ. մայիսի 20-ին Կ. Պոլսի Ակյուտար արվարձանի Նոր թաղում: Ընտանիքի երկրորդ երեխան էր: Ծնողները՝ Աբրահամ և Արուսյակ Զմպայանները, մի կերպ ծայրը ծայրին էին հասցնում ընտանիքը պահելու համար: Ապագա բանաստեղծը մեծացել է կարիքի, հոգսի ու թշվառության մեջ: Ազգանունը գալիս է պապից՝ երկաթագործ Զմպա Սարգիսից, որը 1867-ին ինքը՝ Պետրոսը, հայացրեց և դարձավ Դուրյան<sup>10</sup>: Եղբայրներից ավագը՝ Հարությունը, «Մանգուների էֆքյար», ապա «Մեծմուսյը ախալար» հայատառ թուրքերեն թերթերի խմբագիրներից էր, իսկ կրտսերը՝ Կոստանդնուպոլսի պատրիարքական ապագա տեղապահ, այնուհետև Երուսաղեմի պատրիարք Եղիշե Դուրյանը (1860–1930), մինչ վարդապետ օժվելը, կրում էր Միհրան անունը, հեղինակ է «Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժանմանակաց մինչև մեր օրերն: Ի պետս ազգային վարժարանաց» (Կ. Պոլիս, 1885) հրատարակության: 1911-ին մասնակցել է կաթողիկոսական ընտրություններին և մեկ ձայն պակաս ստացել ընտրյալ Գևորգ Ե. Սուրենյանց վեհափառից: Պետրոսն ուներ նաև Ազրիպպաս անունով մեկ այլ կրտսեր եղբայր: Պետրոսի ծնունդից առաջ մահացել էր երկամյա քույրը:

1855-ից սկսվում է Դուրյանի ուսումնառությունը, 1857-ին դառնում է թաղի դպրոցի՝ Ակյուտարի վարժարանի ձրիավարժ աշակերտ: Որպես օտար

<sup>9</sup> Հ. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1957, Վ. Թ եր գ ի բ ա շ յ ա ն. 1959, Ս. Ս ա ր գ ա յ ա ն. 1959, Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. 1962, Հայ նոր գրականության պատմություն, 1962 («Պետրոս Դուրյան» գլուխը գրել է Վ. Թերգիբաշյանը), Ս. Ս ա - ր ի ն յ ա ն. 1966, Հր. Թ ա մ ր ա գ յ ա ն. 1986:

<sup>10</sup> «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, №1, էջ 171: Օտար ազգանունը հայացնելու այս ուսանելի արարքն առ այսօր չի կորցրել իր նշանակությունը և կարող է օրինակելի լինել հատկապես թուրքերենի, պարսկերենի ու արաբերենի հիմքերի վրա ձևավորված շատ ազգանունների թարգմանության համար: Այդպես վարվեց նաև Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Իգիթիանյանը՝ դառնալով Հովհաննես Քաջագնունի:

լեզու անցնում էին ֆրանսերեն, ուսման մեջ առաջադիմության համար 1865-ին նվեր է ստանում Լամարթինի հատորը (միջանկյալ նշենք, որ դեռևս 1859-ին Խորեն Գալֆայանի թարգմանությունը Փարիզում լույս էր տեսել «Դաշնակք Լամարթինայ» գիրքը), ընթերցասեր էր, գրական ձիրքի հետ մեկտեղ դրսևորել է նկարչական, երաժշտական հակումներ: Թադի Ս. Կարապետ վանքի դպիրն էր, երգում էր երգչախմբում: Դպրոցական տարիներից գրում էր և արդեն ճանաչված էր որպես բանաստեղծ ու թատերագու: Հոր պահանջով 1866-ին մի քանի օրով ճեմարանից հեռանում և դառնում է դեղագործի աշակերտ, բայց նորից վերադառնում է: Հոգևորական դառնալու ցանկություն է ունեցել. «Պետրոս 13 տարեկան հասակին մեջ վարդապետ ըլլալու փափաքն ալ ունեք ...»<sup>11</sup>: Այցելում է «Արևելյան թատրոն»-ի ներկայացումներին, կարդում Շեքսպիր, Հյուգո, թարգմանում նրանց առանձին երկեր: Այս գործում նրան ոգևորում էր դերասան և բեմադրիչ, «Թատրոն Օսմանիե»-ի ղեկավար Հակոբ Վարդուկյանը: Արել է նաև գեղարվեստական արձակի փորձեր. կորած է համարվում «Վոսփորյան գիշերներ» ինքնակենսագրական վեպը, որի մասին հիշատակում է Ե. Դուրյանը:

1867-ին ավարտում է ճեմարանը և ամիսը երկու ոսկու դիմաց աշխատանքի անցնում որպես սեղանավորի գրագիր՝ գրանցում առևտրի հաշիվները: Ինն ամիս հետո թողնում է աշխատանքը: Օրերն անցկացնում է ընթերցանությունում և գրելով: Անվճար հայոց լեզու է դասավանդում նորաբաց ճեմարաններից մեկում: Արդյունավետ է դառնում նրա համագործակցությունը Վարդուկյանի հետ, որի հորդորով թարգմանում (Շեքսպիր՝ «Մակբեթ», Հյուգո՝ «Թագավորը գվարձանում է») և գրում է ինքնուրույն թատերգություններ, նաև հանդես է գալիս թատրոնին նվիրված տեսական հոդվածներով: 1869-ի փետրվարի 22-ին «Մամուլ» հանդեսն ազդարարում է նույն օրը նրա «Վարդ և Շուշան կամ Հովիվք Մասյաց» «վառվառուն գրչով» ստեղծված «սիրահարական գողտրիկ թատերգության» բեմականացման մասին: Չնչին վարձատրությունը ստիպում է մտածել եկամտաբեր աշխատանքի մասին: Բանաստեղծ, թարգմանիչ և հոգևոր գործիչ Նար-Պեյի (Խորեն Գալֆայան) միջնորդությամբ, որպես հայերենի ուսուցիչ, տեղավորվում է ունևորներից մեկի տանը, խմբագրական աշխատանք է կատարում «Օրագիր» թերթում, դառնում է Վարդուկյանի թատրոնի դերասան, մասնակցում նաև իր թատերգությունների բեմականացմանը: Ի վերջո, գժտվում է Վարդուկյանի հետ և թողնում դերասանությունը:

Դուրյանի թատերգությունները բեմադրվում էին, բանաստեղծությունները տպագրվում «Օրագիր» և «Մեղու» պարբերականներում: Առաջին տպագիր քերթվածը «Ձոն»-ը, լույս է տեսել 1869 թ. հոկտեմբերի 2-ին «Օրագիր» թերթի էջերում: Դժվարությամբ, բայց բնականոն հունով առաջ էր գնում գրական ճանապարհը, որը միանգամից փոխվեց հեղինակի թոքախտ հիվանդությամբ:

Մահվան ուրվականը սկզբից ևեթ ուղեկցել է նրան. «Վարդ և Շուշան» թատերախաղում անհույս սիրահար Գեղամի շուրթերով հնչում են այս ճա-

<sup>11</sup> Բ. է. ք ս եր ճ յ ա ն. 1893, էջ 49:

կատազրական խոսքերը. «Աներևույթ ձեռք մը գերեզման մը կը ցուցնե ինձ անդադար ...» (Տ. II, էջ 50): Իսկ խոսքն աներևույթ ուժ հիշողություն ունի. ասվածը կատարվում է ...

Իր կյանքի այս օրերի մասին աշակերտական ընկերոջը՝ Հետագայում թերթերի խմբագիր Տիգրան Ադամյանին Հասցեագրած 1870 թ. դեկտեմբերի 10-ի նամակում տեղեկացնում է. «... հիրավի բռնի թատերագիր կամ բանաստեղծ մը ըլլալ կ'ուզեմ, տենչ մը, որ աղքատիկ հյուղի մը անկյունը՝ քաղցի և ցուրտի սև վերմակներուն տակ վերջապես ակամա կը մարի ... Ինչ որ է, պիտի հանդուրժեմ որչափ որ կարենամ, ստակը չեմ ատեր, բայց գրիչը կը սիրեմ, սփռի մ'է նա ինձ այս անձուկ կացությունս մեջ : <...>: ... քանի մը թատերախաղեր ունիմ, կրնամ ստակով կամ ծափով փոխանակել... աս ալ ըսեմ, ամիսի մը չափ մինչև անգամ խոնարհեցա դերասանություն ընելու ընտանիքիս կարոտը լեցնելու համար, բայց Վարդուկյանի <...> նախատինքներուն չկրնալով հանդուրժել՝ աղտոտ անկողինս թատրոնեն տուն փոխադրեցի, աս ալ ըրի ապրելու համար, անգործությունը թոթափելու համար ...» (Տ. I, էջ 158): Նույն բարեկամին 1871 թ. փետրվարի 1-ին հղած նամակում իր ծանր վիճակը ներկայացնելուց հետո ավելացնում է. «... ալ ոչինչ փուլթա է, միմիայն ընտանյացս բեռ չըլլալ, այս է որ կը կորացնե քամակս ...» (նույն տեղում, էջ 163): 1871-ի սեպտեմբերի 3-ին իր ազգական ու մտերիմ Հովհաննես Ծանֆեաճյանին Հասցեագրած նամակում, իր մահը բանաստեղծելով, գերեզմանի կողքի նոճիի ձայնին ունկնդիր, իրեն «նոճյաց դալկահար որդեգիր» (նույն տեղում, էջ 173) հռչակելով ավելացնում է. «Երբեք մի՛ մտաբերեր որ ես հուսահատ եմ. բնավ, բանաստեղծ մը մահվանե չը սոսկար. այն ատեն իրավունք ունեի ցավելու, երբ ամենքը անմահ ըլլային, և ես միայն մահկանացու» (նույն տեղում, էջ 171): Հուլիսը՝ «... անդունդի մեջ շյուղի մը պլլված եմ, իմ փրկությունս է աստղի մը պլլվիլ» (նույն տեղում, էջ 172): Նոյեմբերի 23-ին Ադամյանին հղած նամակում «... մինչև անգամ բան մը չունեցած ատենս անդրդվելի պահեցի այն գաղափարը, թե ես «երկնքի հիվանդությունն» ունիմ» (նույն տեղում, էջ 182):

1871-ի սկզբից սկսված հիվանդությունն աստիճանաբար սաստկանում է այն աստիճան, որ անգամ չի կարողանում ներկա գտնվել իր ներկայացումներին: Նույն ցավով տառապում էր նաև տարեկից մոտիկ ընկերը՝ դարձյալ բանաստեղծ ու թատերգակ Վարդան Լուծֆյանը, որի հետ անցկացնում է օրերը: 1871 թ. մայիսի 21-ին քսան տարեկանում Լուծֆյանը մահանում է դառը կսկիծ պատճառելով Դուրյանին: Այդ կապակցությամբ հանդես է գալիս դամբանականով: Ըստ Ե. Դուրյանի մտաբերումների՝ դրանից հետո նա ալլևս մտախոհ էր, մելամաղձոտ, դալկահար ու լուռ<sup>12</sup> և մտերմություն էր անում բանաստեղծ, թարգմանիչ Արմեն (Առաքել) Լուսինյանի հետ, ում դիմում է որպես «ազնիվ եղբայր» (Տ. I, էջ 172): Իր բառերով «դողդոջում էր ու հյուծվում» (նույն տեղում, էջ 166–167), բայց ստեղծագործական տարերքը եռքի մեջ էր. 1871 թվականն այս տեսակետից գերազանց է:

1871-ի գարնանը կազմում է 29 տաղերի ժողովածու, աշնանը վերանայում է և ավելացնում ևս 9 գործ: Դրանք իր երկերի ետմահու հրատարակության

<sup>12</sup> «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 169:

պատրաստի նյութեր էին, ետմահու կյանքի գրավականը, և ինքն ամբողջ էությամբ էր գիտակցում: Նար-Պեյր խոստումներ էր տվել, թե կտպագրի, բայց ընկրկեց՝ պատճառաբանելով իբր սիրահարական են և իրեն կքարկոծեն<sup>13</sup>:

1871-ի հոկտեմբերին անկողին ընկավ: Դեկտեմբերի 10-ին արդեն իր վերջին նամակում գրում է Լուսինյանին. «Այո՛, ալ հիմա հավատացի թե կըծյուրին՝ եղեր. գիտեմ թե ալ շատ չ'ապրիմ պիտի, Ահ, եղբայր իմ, ահա երիտասարդ մը՝ որ եկած է աշխարհ միայն իր մահն ու իր թշվառությունը տեսնելու և զգալու համար. չ'գիտեմ ինչ գրեմ, կ'զգամ շատ բայց գրելու դժվարություն մը կա, կարծես թե գերեզմանին մեջն կը խոսիմ: Ալ մարը մտնելու վրա եղող ճառագայթ մ'եմ. մարո՛ւմ եմ, քայքայում մ'եմ. գիտեմ այս տողերը վերջինն են ... <...>:

Մեկ քանի պատառ թուխթերու վրա արցունքոտ տողեր գրեր եմ. անշուշտ բարեկամքս զանոնք պիտի պատվեն և անոնց Արև տեսցնեն պիտի... <...>:

Կը հավատամ Աստծո, կը հավատամ այն հանդերձյալ ապառնիին: <...>: Արդեն ես ալ այլաբանություն մ'եմ, խորհուրդ մ'եմ: <...>:

Գիտեմ քիչ ատեն պիտի մեռնիմ. արցունքի տեղ դազադիս վրա երկու խոսք. հառաչանքի տեղ երկու շունչ աղոթք հոգվույս համար. և վշտի տեղ երկու փունջ ծաղիկ գերեզմանիս վրա. ես ալ մեռած չըլլամ պիտի, միշտ դալար ու կենդանի մնամ պիտի <...>:

Ափսո՛ս. Այո՛, Ահ մ'էր սկիզբս, վա՛խ մ'եղավ վախճանս. <...>:

Մնա՛ք բարյա՛վ» (հ. I, էջ 183–187):

1871 թ. դեկտեմբերի 12-ին ընդունում է առաջին հաղորդությունը, 1872-ի հունվարի 15-ին՝ երկրորդը: Ըստ Ե. Դուբյանի՝ դիմել է ընկերներից Պ. Դելվյանին՝ գրելու իր դամբանականը, ինքն էլ կարդացել ու խմբագրել է: Անմահության զգացողությունն է: Թաղմանը դամբանական ճառ է ասել նաև Դելվյանը: «Մնա՛ք բարյա՛վ»-ի վերջին օրը վրա է հասնում հունվարի 21-ի լուսադեմին, հուղարկավորում են հունվարի 23-ին: Բնության օրենքով բոլորը դարձան մահկանացու, իսկ Դուբյանի հանձարի լույսը շողաց ու անմահացրեց նրան, որովհետև շողքը, ճառագայթը, որն ինքն էր, հնարավոր է է թաղել:

Ինքնագիտակցումը, գրական արժեքի նշանակությունը գիտեր այն ճշգրտությամբ, ասես ինքն իրեն նայում էր ապագայից՝ որպես գրականության պատմության մեջ իր հաստատուն տեղն ունեցող դասական: Հենց այդ գիտակցությամբ էլ ասաց. «Հարգս չգիտցան, բայց պիտի փնտռեն գիս: <...>: Ախ գոնե գրածներս տպեցեք, չմոռցվիմ»<sup>14</sup>: 1872-ին Սկյուտարի Ընթերցասիրաց ընկերությունը Կ. Պոլսում լույս ընծայեց Դուբյանի «Տաղք և թատերգությունք» ժողովածուն: Անժամանակ մահվան այդ օրն էլ դարձավ նրա անմահության առաջին օրը. հուղարկավորության թափորի շուրջ չորս հազար մարդու մեջ նաև նրա հանձարի լույսը տեսնողներն էին, որն արձանագրեց նաև մամուլը<sup>15</sup>:

<sup>13</sup> «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 166:

<sup>14</sup> Ա. Չոպանյան. 1967, էջ 76:

<sup>15</sup> Դուբյանի մահվանը հունվարի 24-ին անդրադառնում են «Մանզումեի էֆքյար» և «Օրագիր» թերթերը: «Մանզումեի էֆքյար»՝ «հանձարեղ տաղանդ»,

Դուրյանի փառքն այնուհետև գրական նոր հորիզոններ գրավեց: Մեծարենցը «Պետրոս Դուրյան» (1903) բանաստեղծության մեջ ձևակերպեց Դուրյանի հիմնական ցանկությունը. «Հույզով մեռավ ան, հուշքով կ'ապրի դեռ»<sup>16</sup>: Դուրյանին գնահատող անդրադարձ կա Վարուժանի էջերում<sup>17</sup>, ով հիացական խոսքեր նաև ունի Ե. Դուրյանի հասցեին<sup>18</sup>: Բրյուսովը բարձր գնահատություն է կերտում է վաղամեռ հանճարի արժանի դիմանկարը<sup>19</sup>: «Մահվան տեսիլ» (1933) պոեմում Դուրյանի կերպարն ուրվագծեց Չարենցը. ... Մուսաներին նվիրվածներից մեկն էր միայն, որ ուներ իսկական սրինգ.

Եվ սրինգը ձայներ էր հանում չափազանց տխուր ու աղի: —

Պատանի՛ էր դա մի դպկահար, արցունքով լեցուն աչքերով,  
Եվ ձայնը նրա սրինգի նման էր ողբի ու լացի.  
Նվազում էր իր խեղճ սրինգով նա տաղեր վշտի ու սիրո,  
Խառնելով այլոց աղմուկին իր ձայնը՝ մի քիչ կանացի<sup>20</sup>:

Դուրյանի ծննդյան 110-ամյակի կապակցությամբ Պ. Սևակը գրեց «Մեր քնարերգության Վահագնը» վերնագրից իսկ շատ բան ասող հոդվածը. «Դուրյանի կարճատև կյանքը մի անդադրում մահ էր: Եվ աշխարհում շատ քչերին է բախտ վիճակվել իրենց մահը դարձնել անմահություն: <...>: Եկավ ոգեվարող պատանին, և մեր բանաստեղծական միտքը մեկ դարով կտրեց իր նախորդներից ...»<sup>21</sup>:

«վսեմ հանճար», «3000-ի մոտ բազմություն», «Կը փափագինք <...> տպագրել այն ամեն հեղինակությունները, որոնք իրավամբ կրնան հայ գրականության վրա նշանավոր փայլ մ'ավելցնել», «անմահ Դուրյան», «հանճարեղ բանաստեղծ», «Օրագիր»՝ «հուղարկավորության շքեղ հանդես», «4000-ի մոտ հախուռն բազմություն», «Մեռյալը <...> գրական տաղանդով նշանավոր էր», «գեղեցիկ հանճարովն <...> ինքն նոր աստղ մը փայլեցավ», «Հոս թող պայծառ տեսնեն գրչի նահատակի մը տրված պատիվն ու շքեղ ցույցերն ամեն անոնք, որք իրենց բոլոր պատիվն ու անմահությունը իրենց անձին և ընչից մեջ կը փնտռին», «վսեմ հանճար», «Դուրյան արքունական պաշտոնի, ամիրայի և տիտղոսավոր մարդու գավակ չէր, բայց անոնցմե ավելի շքեղ հուղարկավորության հանդես մ'ունեցավ»: «Փունջ» լրագիրը հունվարի 29-ի համարում գրում է. «Գրական ասպարեզին մեջ կը փայլեր և հաղթական ճակատամարտեր կուտար ...»: «Մասիս»-ը փետրվարի 3-ի համարում. «Եթե աշխարհիս մեջ անմահ բան մը կա, այն էլ հանճարն է», «հանճարեղ գրագետ», փետրվարի 12-ի համարում «դեռափողփող աստղ», «երկնաձիգ հանճար»: Փետրվարի 5-ի, 12-ի համարներում նյութեր է հրատարակում նաև «Եփրատ» լրագիրը: Բոլոր պարբերականները գրում են ոչ միայն երկերի առաջիկա ժողովածուի հրատարակության, այլև հանգանակությամբ շիրմաքար կանգնեցնելու մասին:

<sup>16</sup> Մ. Մեծարենց. 1981, էջ 225–228:

<sup>17</sup> Գ. Ազնաւուրյան. 1969, № 3, էջ 148:

<sup>18</sup> Դ. Վարուժան. 1987, էջ 61:

<sup>19</sup> Վ. Բրյուսով. 1967, էջ 108–109:

<sup>20</sup> Ե. Չարենց. 1968, էջ 244:

<sup>21</sup> Պ. Սևակ. 1974, էջ 160–161:

### Ստեղծագործությունը

Դուրյանը թատերագիր էր և բանաստեղծ: Պահպանվել են նաև տարաբնույթ հոդվածներ, նամակներ, այլևայլ գրություններ: Նրա թատերգությունները հետաքրքրական են իր գեղարվեստական համակարգը լրացնելու ու ամբողջացնելու համար և վաղուց արդեն ունեն սոսկ գրապատմական նշանակություն: Նրա քերթվածները հանճարի փայլով շողացել և շողողալու են գեղարվեստի տաճարում: Մնացյալ էջերը հնարավորություն են է՛լ ավելի մերձենալու նրա գեղարվեստական աշխարհին, թափանցելու մանրամասների խորքը:

### Քերթվածները

Սկսեց գրաբար 1864-ին և շատ արագ անցավ աշխարհաբարի: Գրաբար են «Ահա սրանայ օրն երջանիկ» բանաստեղծությունը և Մ. Իգմիրլյանին հասցեագրած «17. IX. 1869» թվակիր նամակը: Լեզվական ճգնաժամ չունեցավ: Լեզվական շրջադարձը հօգուտ աշխարհաբարի արդեն կատարվել էր, բայց գրաբարի հիշողությունը բառապաշարի առանձին նմուշներով ու քերականական ձևերով շարունակում էր հետևողականորեն ուղեկցել: Եվ պատահական չէ, որ իր երգերը ժողովեց միջնադարի քնարերգուից վայել «Տաղեր» վերնագրի ներքո:

Պահպանված տաղերի թիվը 41 է, որից 26-ը գրել է 1871-ին:

Դեռևս առաջին իսկ բանաստեղծության մեջ, երբ վարնանային տարիքի մեջ էր («Պարնանային կենացս մեջ»), գրում է խորշակահար ծաղկունքի մասին և իր առջև բացում մահվան ճանապարհը. «Ահա կ'իջնեմ, ո՛հ, ես այժմեն // Առջև բացված գերեզման խոր» (հ. I, էջ 12): Այս մահվան ճանապարհի հիշողությունը պիտի դառնար ուղեկից գաղափար և ամեն անգամ արթնանար որևէ ձևով: «Իցի՛վ թե»-ն (1867) սիրային շունչ ունի, բայց նույն եղերական պատկերներն են. «Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղոթեմ», «Թոռմեի գիրգ ձեռքդ տայի կյանքիս վերջ», վերջում՝

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթե տրվեր մեկուն սեր,  
Իցի՛վ թանոր գերեզմանին քարն լինիմ,  
Եվ դու թոչնած գաս շնչե՛լ շուրջս ... արտասվե՛լ ...

Քեզ հրավելու համար հարկ լոկ գոլ շիրիմ (նույն տեղում, էջ 14):

Այս շնչով ստեղծված տաղերը եղերերգեր են (էլեգիա), որոնք մինչև վերջ ուղեկցեցին հեղինակին: Եղերերգն ավելի տանում է դեպի անձնական քնարերգություն, իսկ Դուրյանի դեպքում քնարական հերոս արտահայտությունը կորցնում է նշանակությունը, որովհետև ամեն ինչ կենսագրական նրբերանգներով շատ անձնավորված է, տարածություն հեղինակի ու քնարական հերոսի միջև գրեթե չկա: Դա ակնհայտ է ոչ միայն անձնական ու սիրային քնարերգության մեջ, այլև քաղաքացիական ու հայրենասիրական: Բացառություն են իրիմյանին և ազգային Սահմանադրությունը նվիրված ձոները: Այդ բացառություններով հանդերձ միասնական մի շունչ տողորում է նրա քնարերգությունը: Հենց թեկուզ «Վիշտք հայուն» (1868) երկարաշունչ քերթվածը, որը հայրենասիրական ողբ է ընտանեկան հարազատության

աստիճանի: Այստեղ մայրն է, հայրենի օրրանը, թշվառության մատնված հայրենիքը՝ նույն թշվառության մատնված ընտանիքում: Հայրենական «տխուր հիշատակք» են, որի հետևանքով «Սև շղթաներ եղան ինձի խանձարուր»: Այսպես՝ «Հե՛զ հայրենիք Հայաստան, // <...> // Բյուր բյուր՝ սև սև գերեզման», որի պատճառով «Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրեն խուսափեց» (նույն տեղում, էջ 15–17): Ամեն ինչ շատ անձնավորված է, և Դուրյանի ակնարկը նաև հուշում է, թե ինչու այդքան հայություն, այդ թվում նաև իր ընտանիքը, պատմական հայրենիքում պիտի չապրեին, այլ Կոստանդնուպոլսում:

Նույն ոգով հաջորդում է «Իղձք առ Հայաստան» (1869) քերթվածը, որի նախնական վերնագիրը եղել է «Իղձք հայրենասիրի»: Չմոռանանք՝ 1858-ին լույս էր տեսել Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը՝ «Ողբ հայրենասիրի» ենթավերնագրով: «Իղձք»-ն ու «Ողբ»-ը տարբեր բառեր են տարբեր նշանակությամբ, բայց այստեղ խորքում նույն իմաստն ունեն՝ հայի ողբը՝ չկատարված հայրենասիրական իղձն է: Անձնական դժբախտությունը որքան էլ ծանր, բայց չէր հասնում ողբի այն ծանր թառանչին, որ հայրենիքի համար էր: Եվ ահա պառակտված ազգային միաբանության պահանջն ազգային միասնությունն էր, որի մասին գրում ու խոսում էին բոլորը՝ դրոշակ դարձնելով «Սեր և միություն» կարգախոսը: Այս պահանջից ծնվեց Պեշիկթաշյանի «Եղբայր եմք մեք» երգի վերածված հայտնի քերթվածը: «Սիրեցեք զ՝միմյանս» (1869) վերնագրով գրեց նաև Դուրյանը: Ահա Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք ընտրվելու կապակցությամբ նույն այս ոգով, նույն՝ 1869 թ. Դուրյանը երեք գործ նվիրեց Մկրտիչ Նրիմյանին՝ «Ի պատրիարքական ընտրություն. Ամեն. Հայրիկին», «Ի դիմավորություն. Ամեն. Հայրիկին», «Հայրիկն Հայոց», որոնք հայրենասիրական ոգու արտահայտություններ են: Նրիմյան Հայրիկի առիթով հիշում է Ավարայրը, Եղիշերն, Վարդանին և առանցքային գաղափարը. «Հայաստանի եղբայրության սիրահար», «Եվ սորվեցուր Հայուն դու // Սիրել՛, օգնել՛ իրարու», «Թող փլատակաց մոխրեն հառնեն հիշատակք», «Իրավունքի, սիրո, լուսո ենք կարոտ» (նույն տեղում, էջ 25, 27):

Ըղձական եղանակն անգամ երբեմն դառնում է մարտական հրահանգ: «Երգ մարտին Վարդանանց» (1869) քերթվածն սկսվում է «Արի՛ք, որդի՛ք Արարատյան» հորդորով, հասնում «Օ՛ն, ազա՛տ ըլլանք» կոչին և ավարտվում «ծագող հաղթանակի» բերկրանքով (նույն տեղում, էջ 32): Չմոռանանք թուրքական աչալուրջ գրաքննությունը, որը «Վիշտք հայուն» (1868) բանաստեղծությունից հանել է «հայրենիք» բառը, իսկ մի քանի տողեր փոխարինել բազմակետերով:

Դուրյանի հայրենասիրական բանաստեղծությունները յուրովի լրացումն են պատմական թատերգությունների՝ նույն հայրենասիրական շունչն է՝ այս դեպքում արդեն չափածո խոսքի ոգեշունչ տարերքով: Նույն տարերքով պատմական ճանապարհի փիլիսոփայությունն ի մի է բերում «Նվազ է. տարեդարձի ազգային սահմանադրության» (1870) երգմամբ. «Թե չերդնումք, եղբայրք, հիշել զՀայաստան, // Արյամբ ևս պահել պատիվն Հայոց տան, // Կը տառապի Հայրենիք, // Կամ Հայ՛ ապրինք, կամ մեռնինք» (նույն տեղում, էջ 39): Խոսքի առիթը թեև ազգային Սահմանադրությունն է, բայց



ամեն ինչ անցնում է իր անձի միջով: Իսկ ազգային Սահմանադրությունն ասածն արևմտահայությունն ենք քննադատում: Իսկ ազգային Սահմանադրությունն էր, որը մշակել էին Ն. Ռուսինյանը, Ն. Պալյանը, Գ. Օտյանը և ուրիշներ, Պատրիարքարանն ընդունել էր 1860 թ. մայիսի 24-ին, Բ. Դուռը՝ հաստատել 1863-ի մարտի 17-ին:

Անձնական քնարերգության խորացած ներշնչանքը շատ ավելի ցայտուն է սիրային բանաստեղծություններում: Սկիզբը պարզ խոստովանություն է՝ «Սիրեցի քեզ», այսպիսի բնաշխարհիկ տոնական մուտքով.

Շաղի, շողի ժամք էին.  
Վարդից հրդեհ կար յ'երկին՝  
Փոխան ամպոց հուր հյուսքի,  
Տեղար մարգրիտ ու ոսկի (նույն տեղում, էջ 33):

Շարունակությունը գեղեցկությունն է՝ «Աչքերդ սիրո Ատրուշանն», և անպատասխան սիրո անկարեկից ապրումը: Եվ նորից որպես ուղեկից հանգրվան՝ «ցուրտ հող», կույսի պես կույս գերեզման. «Կույս մ'է նաև գերեզման» (նույն տեղում, էջ 35): Հաջորդում է «Կույսն լքյալ» (1870)՝ աղջկա միջին նայվածքով, որին մաղթում է «Անկողին ծաղկունք» (նույն տեղում, էջ 37), իսկ իրեն, որպես մխիթարանք, մնում են խաբուսիկ հրապույրները:

Անձնական դերանվան նա ձևին զուգահեռ նէ-նե ձևը՝ որպես իգական սեռ օգտագործելու առաջարկը, դեռևս V դարում արել են հունաբան դպրոցի ներկայացուցիչները<sup>22</sup>, որը նոր կյանք ստացավ Պեշիկթաշյանի («Աշուն. Երգ. Առ նէ»)՝<sup>23</sup> Դուրյանի և այլոց պոեզիայում: Դուրյանի համար կնոջը դիմելու այդ ձևը դառնում է սովորական, օգտագործվում և՛ խոսքի շարույթի մեջ, և՛ վերնագրում: 1871-ին գրում է «Նե» բանաստեղծությունը, այնուհետև ըստ հարկի օգտագործում նե, ներա, ներանե ձևերը:

Նե և կույս բառաձևերը Դուրյանի քերթվածներում դառնում են համարժեքներ, որոնց առջև բացում է սիրտը, պատմում իր կյանքը և աղջկա ցնորական կերպարը տեսնում որպես ծովի ջրերում խեղդվողին երկնքից նետված փրկողակ: Կույսից ի՞նչ է խնդրում՝ լույս մեկ «համբուրիկ», երկնազվարթ աչքերի ճառագայթ (հ. 1, էջ 41): Բայց անգուցից գլանում է (հիշենք Սայաթ Նովայի գալումին): Մնաք բարովի խոսքերով բանաստեղծն ասում է. «Տրտմալար քնարս գարկեմ ջախջախ» և գնում հանգչելու մաշող հողում: Մի նուրբ անցումով կույսն ու քնարը ձուլվում դառնում են մեկ-միասնական ոգի, որ բանաստեղծի էությունն է: Քերթվածը գրված է մահվան դատապարտվածի աստիճանաբար նվազող, մարող, ավարտվող շնչառությամբ, որ փոխանցվել է խոսքի կառուցվածքային ձևին՝ սկսվում է բազմաբառ 16 վանկանի լայն տողերով և պակասելով՝ հասնում երկու և մեկ բառի: Իրիկվա մարող ճառագայթ ասես լինի՝ արեգակի սկավառակի մոտ լայն,

<sup>22</sup> «Նէ, ներա – անսովոր դերանուն՝ հունաբանություն, իգական սեռի համար գործածված». – Թ. Ղ ա գ ա ր ե ա ն. 2000, էջ 283:

<sup>23</sup> Մ. Պ Ե շ Ի կ թ ա շ Լ Ե ա ն. 1987, էջ 91:

ներքևում՝ հորիզոնի եզրին՝ նեղ ու բարակ: Սա ձևի ու բովանդակության միասնական ներդաշնակության գյուտ է: Այն նմանեցվել է տավրիղի. «Բանաստեղծությունն արտաքուստ նմանվել է տավրիղի»<sup>24</sup>: Սա տավրիղ չէ, այլ այն հիշեցնող սեպ՝ երկնքից իջած ու խրված գերեզմանի փոսի մեջ, որովհետև խոսքի ամբողջ իմաստը միայն հասնում է հուշում:

Դուրյանը նրբացնում է աղջկա կերպարը՝ ոչ թե ոտքից գլուխ թանձր լուսանկար, ոչ թե ամբողջական դիմանկար, այլ սոսկ մի հայացք («Նայվածք մը»), սյուքի ալիք՝ հովին տված մազերով, շրջագգեստի շրջունով՝ «Շրջագգեստիդ շրջունին գեթ // Ինձ արձագանք մահահրավեր» [«Հծծյունք» (նույն տեղում, էջ 45)]: Նվ ահա այս նրբացած լարի վրա իրար են հաջորդում մեկ ամբողջությունից կիսված, լույսի և ստվերի՝ իրար լրացնող միասնություն երկու կիսագունդ՝ «Սիրել», «Դրժել», որոնք հեղինակի կենդանության օրոք տպագրվել են միասին<sup>25</sup>:

Հիշյալ գործերն ասես գրված են ընդդեմ մահվան սարսափի. 1871 թ. հուլիսի 6-ին Տիգրան Աղամյանին հասցեագրած նամակի այս տողերը հոգեկան այդ անելանելի ճգնաժամի գույժն են. «Ազնիվ բարեկամ, ձեռք քեզ կը գրեի թե կը մսիմ՝ արդ կը դողդոջեմ, բերնես միշտ արյուն կը հասի, կը հյուծիմ, ճակտիս վրա կենաց շիկնոտ ժպիտ կը տոգունի: Անդուկ կերպով քնարս կը թոթվեմ անհուն «մնաք բարով»ի մը համար անոնց, որոնք իրենց ծալքերը ինձ չը բացին, այլ միայն դուրսեն ճաճանչեցին, նախ կնոջ ... երևակայությանս տիրուհվունյ ... երազի այն երփներանգ աստղին կամ ճաճանչոտ ծաղկին ... ո՛չ, ավելին, չողերու և բույրերու թագուհվունյ ...

Ահ, ներս մեկ շողը երազ մը կը վառե, ներս մեկ բույրը սրտի մը մթին խորանը կը խնկարկե ... Մեռնիլ թարմ և երազկոտ ... մեռնիլ առանց մարմարյա ճակատի վրա խորշում մը գծելու, առանց շուրթեր համբույրով մը բորբոքելու, առանց հոգին ժպտով մը հրդեհելու, մեռնիլ, տխուր է այդ սակայն» (նույն տեղում, էջ 167): Դուրյանն ինքն է հուշում, որ իր կյանքում կին չի եղել, եղել է կնոջ պահանջ-պատրանք, հանդիպման բուռն ցանկություն, ցնորական տեսիլք, ինչից էլ ծնվել են նրա այս և նման բովանդակության մյուս բանաստեղծությունները: Իրական մի աղջիկ լինելու դեպքում նամակ կգրեր, ընկերներին հղած նամակներում կհիշեր, անունը կտար: Հիշյալ նամակի չափազանց անկեղծ տողերը միմիայն դա են հոգում:

«Սիրել» և «Դրժել» քերթվածները պոեզիայի բացարձակ արժեքներ են, որոնցում գրական արևմտահայերենը հասնում է գեղարվեստական լեզվի անթերի պատկերավորության՝ մտածողության հենակետ ունենալով բանաստեղծությունը ոչ միայն գրասենյակային, իրավաբանական, լրագրային խոսքից, այլև արձակի նկարագրականությունից տարբերող հիմնական հատկանիշը, ինչը փոխաբերությունն է: Փոխաբերության մեջ համեմատությունը սեղմվում և դառնում է պատկեր-աղամանդ: Դուրյանը պատկերավոր խոսքի աղամանդներ է շաղ տալիս և հետն էլ լայիս իր դժխեմ բախտը: Երբեմն հնարավոր է մի ամբողջ վեպ «քամել», բայց խոսքի այդպիսի աղամանդ չգտնել. հիշողության մաղի տակ կմնան սոսկ դիպաշար, նկարագրություն-

<sup>24</sup> Ա. Շ ա ր ու ը յ ա ն. 1972, էջ 206:

<sup>25</sup> Տե՛ս «Մեղու» (Կ. Պոլիս), 1871, 19 հուլիս, թիվ 50:

ներ ու հերոսների անուններ: Մինչդեռ բանաստեղծի մի փոխաբերությունը, մակդիրը մի ամբողջ չգրված վեպ կարող է բովանդակել՝ «մահախուճապ սերունդներ» (Իսահակյան), «չամբշոտաշուրթ Շամիրամ» (Ջարենց):

Մինչ Դուրյանը ո՞վ կասեր «Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ, // Քուրա մը խոսք դյուլթեց իմ սիրտ», ո՞վ կասեր «եղեմ մը շունչ», «եթեր մը տրոփ» ... Սա բանաստեղծին գերած բնության ամենակատարյալ գեղեցկության՝ կանացի հմայքի դյուլթանքն է՝ տեսնելու համար այնքան մոտ, բայց հասնելու համար այնքան հեռու: Գեղեցիկ է բնությունը՝ երկիր, երկինք, անտառ, ծով, սարեր ու ձորեր, ջրվեժներ ու արևադարձային բուսականություն, գեղեցիկ է կենդանական աշխարհը՝ առյուծներ, վագրեր, եղնիկներ, նժույգներ, թռչուններ, բայց բնության զարդը, գեղեցկագույնը կինն է: Դուրյանի ամբողջ ինքնաարտահայտումն այս գեղեցկությունը չհասնելու ողբն է, որը խորքում հիշեցնում է Նարեկացուն՝ մաքրագործման խոստովանությամբ Աստծուն մոտենալու, կարծես թե մերձենալու, բայց այդպես էլ երբեք չհասնելու ողբերգությամբ: Դուրյանի գեղարվեստական համակարգում կինը դառնում է պաշտամունքի համարող գլխավոր խորհրդանշան՝ նույնքան տենչալի, բայց անհասանելի, որքան Աստված Նարեկացու «Մատյան...»-ում: Կնոջ հանդեպ այս վերաբերմունքը գաղափարապաշտների մենաշնորհն էր, որ հետո անցավ խորհրդապաշտներին: Դրա հետ մեկտեղ՝ Դուրյանի պոեզիայում այն ուներ անձնական-կենսագրական նախադրյալ:

Դուրյանն իր սերն է վերապրում առ գեղուհին, կարդում իր ճակատագրի «սև գիծը», կանացի հմայիչ դյուլթանքի խորքում բնության գեղեցկություններն են՝ «Առտրվան շաղն, իրիկվան բայ», ուզում է «Սրտակցիլ ջինջ վրտակին հետ», «սիրել գեփյուռ», բայց «... փունջ մը բոց փրսփրսաց ինձ. // Կ' ուզե՞ս պաշտել հոգի մ' անբիծ»: Ահա այս անբիծ հոգին է այդ գեղեցկության տիպարը՝ «ես ուզեցի քընարով մի <...> // Սիրող էակ ճանչել զանի»: Եվ հենց այդ պահին էլ տեղի է ունենում անդառնալի ու ողբերգական խզումը. «Նե մոտեցավ հուշիկ, ըսավ. // «Քնարդ է ցուրտ սիրտ և սերըդ ցավ»»: «Ցուրտ» մակդիրը նախկինում օգտագործել էր գերեզմանոցի ծառերի համար՝ «ցուրտ ծառեր» («Հծծյունք»), հիմա քնարն է ցուրտ, որն ինքն է: Եվ այսքանից հետո պաշտամունքի չոքած քերթողի առաջ գեղեցկությունը վերաստին մնում է իր պատվանդանին: Դարձյալ նույնն է, ինչպես Նարեկացու «Մատյան ...»-ում: Վերջին տունն այսպես խտացնում է այս եղերերգի ամբողջ բովանդակությունը.

Թոթվեց թևերն հոգիս մուլար,  
Ճանչեց ըզնե գեղ ու կըրակ,  
Սիրտն անապակ՝ ինչպես վրտակ,  
Անմեղ՝ ինչպես սյուք դավկահար,  
Հավատարիմ՝ ինչպես քընար,  
Հրաժեշտ տրվավ կյանքի մենակ (հ. I, էջ 49):

Նույն կառուցվածքն ունի «Դրժել»-ը՝ երկյակներ և վեցնյակներ, միայն այստեղ բառերը մուգ են, սիրտ արևի ճառագայթները բեկող թափանցիկ ապակին արդեն մթնեցված է. «Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ, // Դժոխք մ'անեծք խոցեց հոգյակս»: Սիրտ ոգևորությունն արդեն անցյալ է, կրակը մոխիր է դարձել և արևելյան գոլորշիացած տեղատարափ անձրևի պես

վերածվել հիշողության. «Ես ուզեցի պաշտել ըզնե, // Սիրել ժպիտքն՝ փրթիթք անհուն»։ Պաշտամունքն արդեն կորցրել է իր կին-աստծուն, որն այլևս պատվանդանի վրա չէ։ Խոսքի պատկերային համակարգը շարունակում է դանթեական երանգներ ստանալ. «Գիշեր մը սուգ, անդունդ մ՝ հառաչ // Հուզեց ներա հոգին ու լանջ»։ Մերժվում է պարզ մտերմության պահանջն անգամ.

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,  
Մըտիկ ընել թնդյուն սրտին,  
Շնչել, խըմել ներա հոգին,  
Եվ շոշափել լուկ ձյունափայլ  
Ծոծորակին վրրա ծալ ծալ  
Թափվող վարսից այլակք ծըփին (նույն տեղում, էջ 50):

Փոշմանում է, որ սիրտն ատրուշանի պես մխացել է նրա առաջ, որ խնկարկել է նրա «սիրտն անապատ», որովհետև «Օվկեան մը տրտունջով» ասել է՝ «Զիս կը նեղես», այնուհետև՝ «Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս, // Գոչեց – սիրել չես կրնար գիս»։ Ողբերգության պատճառը և մերժման առիթը իր հիվանդ վիճակն է, ինչից էլ՝ աղջկա օտարացող անտարբերությունը։ Հոգին կայծակնահար եղածի պես է, երազների պատրանքի վրա մոխիր է, մահացու ինքնագիտակցությամբ իր տեղն է ճշտում այս մեծ աշխարհում, որ մեկին կյանք է տալիս, մյուսին՝ մահ։ «Խորը մը կար որ գիս չը ծաղրեր, // Այն լուռ փո՛սն էր գերեզմանիս ...»։ Դուրյանն ինքն իր աչքին ծաղրված-նսեմացած է գրում, որովհետև պարզվում է՝ նպատակը իր համար շատ մեծ էր, և անունն էր կին, ով մերժել էր իրեն։

Ահա այս հոգեխոտով վիճակում Դուրյանը հայտնվում է հայելու առաջ, ինքն իր դիմաց կանգնած՝ նայում իր ներսը և գրում անձնական ողբերգության հերթական արարն ու վերնագրում «Լճակ»։ Այսպես, Դուրյանի քերթվածներն ասես թատերականացված մենախոսության՝ իրար շարունակող գործողություններ լինեն։ Այնպես, ինչպես գեղուհին իր հոգու խորքը նայեց և մոխիր ցանց, այդպես ապշահար է լճակը։ Լճակը ինքն է իր հոգու արտացոլանքով՝ մերամաղձոտ, բայց «Նըմանիլ չես կրնար դուն // Հոգվույս՝ որ է բոց անհո՛ւն»։ Կա նաև շարժառիթը՝ Դուրյանը լսել է իր մասին նետած խոսքերը. «Աս ալ երթալոց է», – ասել է հարբածի մեկը։ «Քա՛ թերեզա, քուկինդ եկավ»։ Թերեզան՝ իր մտերիմ դերասանուհին, արձագանքել է. «Այնքան գունատ է, որ ինձի պեսք չէ, շուտով կը մեռնի» (նույն տեղում, էջ 254–255)։ Անձնական ողբերգությունը համեմատության մեջ է, որ վերջին տներում փոխում է իր դիրքը. ասես ոչ թե բանաստեղծն է նայում լճակին, այլ՝ լճակը՝ բանաստեղծին, որ նույնն է, թե՛ ինքն իրեն.

Շատերը գիս մերժեցին,  
«Քնար մ՝ ունի սոսկ – ըսին,  
Մին՝ «դողդոջ է, գույն չունի»  
Մյուսն ալ ըսավ – կը մեռնի՛»:

Ոչ ոք ըսավ – հեգ տղա,  
Արդյոք ինչո՞ւ կը մըլխա,  
Թերևս ըլլա գեղանի,  
Թե որ սիրեմ, չը մեռնի»:

Ոչ ոք ըսավ – սա տղին  
Պատուէ՞ք սիրտը տըրտմազին,  
Նայինք ինչե՞ր գրված կան ...»  
– Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:

Հոն կա մոխիր ... հիշատակ ...  
Այլակըդ հուզի՞ն թող, լըճակ,  
Զի քու խորքիդ մեջ անձկավ  
Հուսահատ մը նայեցավ ... (նույն տեղում, էջ 53–54):

Այս հուսահատության մեջ անգամ գեղեցկության տեսիլքը չի խամրում և չի լքում Դուրյանին: Մահվան անդունդի առջև կանգնած բանաստեղծը, որպես փրկության միակ հնարավորություն, այս անգամ իրական ազդակի գրավիչ տպավորությամբ, երբ լճի ափին տեսնում է կառքում նստած գեղեցկուհու դեմքը, գրիչն անմիջապես ձեռքն է առնում և գրում «Թրքուհին» քերթվածքը: Զբաղաբախանացված բարձր արվեստի համար գեղեցկությունը վեր է ինչպես ազգային, այնպես էլ կրոնական շատ դեպքերում նեղմիտ պատկերացումներից, որովհետև գեղեցկությունն արվեստի մարդկային, հո՛ւյժ մարդկային չափանիշն է: Ասում ենք, որովհետև Դուրյանի երկերի՝ Կ. Պոլսի 1893 թ. հրատարակության մեջ գրաքննիչը «Թրքուհին» վերնագիրը փոխել է աստղանիշով, քանզի քրիստոնյան իրավունք չունեն գովերգելու մոլորամտություն: Իսկ Բեյրութի 1940 թ. հրատարակությունում տպագրվել է «Գեղուհին» վերնագրով (տե՛ս նույն տեղում, էջ 257): Ահա այս նեղմտության մասին է խոսքը: Գրել է նաև տեսիլքի գրավիչություն ունեցող «Հայուհին» քերթվածը՝ այսպիսի ոգեշունչ բացականչությամբ. «Քե՛, քե՛ շնչեմ ես յայս աշխարհ»: Ե՛վ «Թրքուհին», և՛ «Հայուհին», որպես զմայլանք-դիմաքանդակներ, արվեստի ոլորտում ոչ թե հակադրվում են իրար, այլ միայն լրացնում: Ե՛վ պատահական չէ, որ Չոպանյանի, Օշականի և այլոց<sup>26</sup> բարձր գնահատանքին արժանացած «Թրքուհին» գլուգործոցից ծնվեցին համանման այնպիսի ստեղծագործություններ, որպիսին են Թեքեյանի «Հանրմը» և Փայլակի (Ժագ Սայապալյան) «Թովանք»-ը<sup>27</sup>:

Արևելյան պոեզիան ունի շատ նուրբ անցումներ. ահա դրանցից մեկը. դրսում քամին հանկարծ բացում է գեղեցկուհու դիմաքողը, ներս մտնելիս նրան սպասող տղամարդը նայում է դեմքին, նկատում է և ասում՝ երեսիդ հայացքի հետք կա, օտար մարդ է քեզ նայել: Հիմա այստեղ օտար հայացքը բանաստեղծինն է, որ մի ակնթարթում մտովի լուսանկարում է թրքուհու

<sup>26</sup> Ա. Չոպանյան. 1967, էջ 201, Հ. Օշական. 1945, էջ 97–98, 1953, էջ 363–364, 409:

<sup>27</sup> Դ. Գասպարյան. 2002, էջ 16–23:

դեմքը, և գեղարվեստական դիմանկարը պատրաստ է արդեն: Երեկո, բոցավառ հորիզոն, վերջալույսի շողերի մեջ լուսարձակող գեղեցկուհի, որի անակնկալ հայտնությունը ցնցում է բանաստեղծին, գոնե մեկ ակնթարթ կտրում մահվան ու գերեզմանի կառչուն մտքերից և նրան պարզևում կյանքի տոնը՝ գեղեցկության շքահանդեսը: Սա Դուրյանի հոգում ննջող «անհուն սերն» է, որ դեռ չունի հորիզոն ...

Կան քերթվածներ, որոնցում սիրո պահ է նկարագրում բնություն, համբույրներ. «Թոթովեցի ... դողացի ... // Առի համբույր անհամար. // «Խոսի՛նք» ըսավ – ո՛հ, խոսի՛լ, // Հատնել է լոկ ինձ համար» (Հ. I, էջ 57): Ավարտը նույնքան ուռմանտիկ է. «Բնությունն եղավ պրսակիչ, // Մեզ պրսակեց աստղերով» (նույն տեղում, էջ 59): Բնությամբ սկզբնավորվելու և բնությամբ կենսավորվելու տարերքն է, որ հետագայում նույն զգացողությամբ, բայց յուրովի մարմնավորվեց Հ. Թումանյանի քառյակներից մեկում.

Իմ կրնունքին երկինքը ժամ, արևը՝ ջահ սրբազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան,  
Սարը եղավ կրնքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,  
Ու կրնքողըս՝ նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ<sup>28</sup>:

Դուրյանի անձնական ողբերգության վերջին ասեղագոչ արարն իր տարեկից Վարդան Լուսինյանի մահվան անմիջական ազդեցությամբ և իր մոտալուտ մահվան թափանցիկ զգացողությամբ գրված «Տրտունջ»-ն է: Միջնադարից հայտնի էին ողբն ու գանգատը և հիմա տրտունջը՝ մահամերձի խոսքն Աստծուն: Մնաք բարևի խոսք նա մինչ այդ էլ էր ասել, սա արդեն ոչ թե հերթական, այլ վերջին մնաք բարևն է, որն ուղղում է Աստծուն<sup>29</sup> և արևին: Մարդու ճակատագիրը Դուրյանը քննում է տիեզերական չափանիշով՝ տիեզերքի հավերժության և մարդու անցողիկության հակադրությունն է: Ստեղծվում է համարժեք համեմատություն. «Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուկ երկնից», որով համակշռվում են մարդն ու տիեզերքը. տիեզերքի համակարգում մարդը դառնում է աստղ, մարդկային ճակատագրի մեջ աստղը դառնում է մարդ. «Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ // Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին, // Որք թըռին այրել ճակատն երկնքին ...» (Հ. I, էջ 60): Աստծու դեմ է ելնում ասելով «չանթերո՛ւ արմատ», և տեղնուտեղը զղջում ասածի համար. «Այլ, ո՛հ, ի՞նչ ... շանթահարե գ'իս...», «փչրե հյուլեիս», և ճշտվում են հարաբերությունները՝ վերևում՝ Աստված, նրա առջև՝ «դողդոջ հակ», և խոստովանության պես, բայց ոչ մեղմ, այլ համատիեզերական ճայնով հնչում է տրտունջը. դու, Աստված, խլեցիր « ... ճակտիս

<sup>28</sup> Հ. Թումանյան. 2018, էջ 60:

<sup>29</sup> Հ. Օշականը նուրբ դիտարկումով տեսակետ է հայտնել՝ պատկերի զարգացման տրամաբանությանը հետևելով «Աստված» բառը կարդալ «աստղեր» (Հ. Օշական. 1942, էջ 179–180): Բայց «Աստվածը» բնագրային է: Բանասիրական այս հարցը դարձել է քննարկման նյութ, որին մասնակցել են Վ. Նորենցը, ով մերժել է առաջարկը (Պ. Դուրյան. 1963, էջ 80, 1967, էջ 132) և Վ. Պարտիզունին, ով հաստատել է առաջարկը («Գրական թերթ», 05. III. 1966), ինչպես նաև Արամ Արմանը, ով հերքել է Պարտիզունուն («Գրական թերթ», 03. VI. 1966):

վարդն և բոցն աչերուս, // Խլեցիր թրթուռն չրթանց, թուխքն հոգվույս»:  
Դրա փոխարեն աչքերիս ամպ տվեցիր, սրտիս՝ հեք և նետեցիր «Հոս մառա-  
խուղի մեջ համր անշշունջ»:  
Տրտունջը լարումից պրկվում է, դողդոջ, դալ-  
կահար էակը մոնչյուն դարձած վերածվում է անեծքի. «Թող անեծք մ'ըլլամ  
քու կողող խրրիմ, // Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»»:

Վեճի նյութ է եղել նաև բանաստեղծության 12-րդ՝ «Ելնել աստղերու  
սանդուղքն անալի» տողի անալի բառը՝ նշանակում է՝ անալիք, սանդուղք, որ  
աստիճաններ չունի: Բառի իմաստը չհասկանալով ոմանք այն դարձրել են  
ահալի և այդ սխալը վավերացրել<sup>30</sup>:

Սա հոգեկան ընդվզման գազաթնակետն է, որից հետո ամեն ինչ գնում է  
դեպի փրկության հույսի անհույս որոնում և ճակատագրի մարում: Իր ներ-  
քին տվալստանքն է. «Փրփրըրին ներսըս դրժոխքի մ'հանգույն»: Համեմա-  
տությունների շարքը շարունակվում է՝ «Հառաչ մ'եմ հեծող», «չոր աշնան  
մեկ տերև ...», հաջորդում է դամբանի մրուրով գրված սև ճակատագրից հո-  
գեդարձության աղերս-պահանջը. «Ո՛հ, կայծ տրվեք ինձ, կայծ տրվեք, ապ-  
րիմ»: Երկնքի աստղերից հոգու կայծ է խնդրում, մինչդեռ ուղեկից հիմ-  
նական գաղափարը դեպի անդունդ տանող միտքն է՝ մահը, որից տագնա-  
պահար փախչում է: Եթե սգո թափոր չէ, հապա ինչ է այս պատկերը. «Գի-  
շերն միշտ դազաղս, աստղերը՝ ջահեր, // Լուսինն հար կուլա, խուզարկե  
վրհեր»: Ի՞նչ է, եթե ոչ տիեզերական չափ ու չափանիշ, պատկերային մտա-  
ծողության մի համակարգ, որ հետո Դուրյանից ժառանգեց Հ. Շիրազը:

Վերջին հատվածը համակերպվածությունն է ճակատագրին. «Ի գո՛ւր գը-  
րեցին աստղերն ինձի «սեր»», հաջորդում են այլ «ի գուր»-ներ և ի չիք  
դարձնում «երազքըս վրսեմ»: Հոգու պատմությունը՝ որպես բաց ճակատա-  
գիր, ամփոփվում է տրտունջի ավարտն ազդարարող և ճակատագրի առջև  
ամեն ինչի անհուսությունը իմաստավորող այս տողերով.

Ո՛հ, նոքա ամենքը գ'իս ծաղրեր են ...

Աստուծո ծաղրն է Աշխարհն ալ արդեն (Տ. I, էջ 62) ...

«Տրտունջը»-ը գրված է որպես մահերգ-սգերգ, այլ կերպ՝ ուճովիեմ, որ  
համանվագային արագ զարգացումով ունի նախաբան-սկիզբ, զարգացում-  
գազաթնակետ և լուծում-ավարտ: Հերոսները երկուսն են՝ Ինքը և Աստված,  
ենթադրվում է նաև հանդիսականի ներկայություն, որ այս դեպքում կարող  
էին լինել ընտանիքի անդամները, և առաջին հերթին մայրը: Սա մահամերձի  
ողբն ու ցասումն է, որը հարածուն արագությունը ժայթքում է, ինչպես հրա-  
բուխ և դառնում կրակ ու մոխիր: Որպես մահերգ՝ սա նաև կյանքի օրհնանքն  
է ընդդեմ մահվան անեծքի: Մահամերձի հրեղեն խոսքով սա մահվան  
ժխտումն է՝ անգամ սեփական մահն աչքի առաջ ունենալով:

Իսկ այն, որ «Լճակը» հնարավոր ազդակներ ունի Լամարթինի «Լիճ», իսկ  
«Տրտունջը»-ը «Վերջին բան կամ տրտում է անձն իմ մինչև ի մահ» բա-  
նաստեղծություններից, ոչնչով չի գցում դրանց ինքնուրույնության գեղար-

<sup>30</sup> Վ. Թե ր գ ի բ ա շ յ ա ն. 1959, էջ 152: Հիշյալ հոգվածում Դուրյանին խմբա-  
գրելու այս սխալի դեմ գրել է նաև Պ. Սևակը (տե՛ս Պ. Սևակ. 1974, էջ 157–158):

վեստական արժեքը, այլ սոսկ բանասիրական հետաքրքրությունների նյութ է, որովհետև մեր առջև իր՝ Պետրոս Դուրյան անհատի և ոչ թե ֆրանսիացի բանաստեղծի այրվող հոգին է: Անկախ վերջին տողի լամարթինյան ակնարկից, դուրյանական տող է՝ հասունացած ամբողջ բանաստեղծության ներքին զարգացման տրամաբանությամբ:

Ավելացնենք՝ «Տրտունջ»-ի բառապաշարով և բովանդակությամբ 1871-ի հուլիսի 5-ին Դուրյանը նամակ է հասցեագրում Տիգրան Ադամյանին. «... ես դժոխք մ'անեծք Աստծո անվանը վրբա թափեցի, ավելի աղեկ չբրի՞, ծաղիկը կը թոռոմի, սակայն անեծքս Աստծու կողը խրեցա՛վ: <...> Ահ, թողեք որ հոգեբուխ հառաչով մը զԱստված դղրդեմ ... անհունության մեջ եմ ինկած. հարկ է որ լռեմ» (նույն տեղում, էջ 165):

Մահվան դեմ հանդիման խոսող Դուրյանի խոսքի հաջորդական շարժումը նման է տեղատվության ու մակընթացության: Սա թե՛ առանձին քերթվածների մեջ է, թե՛ հաջորդական շարքի: Եվ այս մտավոր-հոգեկան կառույցի մեջ շատ տրամաբանական է «Տրտունջ»-ին հաջորդող «Զղջում»-ը, որն իր հուշումով գրել է «Օր մը վերջը»: Նախորդ օրվա հոգեվիճակը բնորոշում է որպես «սև մրափ» «պաղ քրտանց մեջ», այտերը՝ ջերմությունից թոշնած վարդեր: Մոր արցունքները ստիպում են իր անկեղծ տրտունջը համարել սև հեղեղ և ներում հայցել Աստծուց:

Եղեմ բուրող աղջիկների հիշողությունը նրանց դարձնում է գաղափարապաշտ բանաստեղծի գլխավոր նպատակ, մտավոր հայեցողության խորհրդանիշ: «Զ՛նե» պաշտեմ բանաստեղծության մեջ անգամ աղջկա անունն է տալիս՝ «Ես կը պաշտեմ գ՛իմ Պ ...» (Պիստոս, թատրոնի հույն դերասանուհի): Սա իրական, բայց նաև անիրական անուն է, այնքանով, որ, ինչպես նշեցինք, Դուրյանի անձնական կյանքում կնոջ կենդանի ներկայությունն չի եղել: Այս պաշտամունքը մահվան հակընդդեմ կյանքն է վերածված միակ արժեքի, որի հեռակա, անգամ բացակա երևույթն անձնականից բարձրանում ձուլվում է Աստծու հովանու ներքո ապրող կնոջ կենարար շնչին՝ որպես հրեշտակ. «Հրեշտակ մ՛էր նե, հրեշտակ անթե» («Սև, սև»): Այս բնույթի բանաստեղծությունները շատ են՝ «Կոկոն – ծաղիկը կույսին» քերթվածն ավարտվում է արդեն իսկ ծանոթ պատկերի տարբերակով. «Այն ցուրտ հողերն իմ դատարկ սիրտ // Լրցուցին փոսն գոցելուն հետ // Եվ այս աշխարհն ալ անժպիտ // Գոցեցին իմ առջև հավե՛տ» (նույն տեղում, էջ 70): Հոգեվիճակին ուղեկից նաև բնության պատկերներ են՝ «Առ Մայիս», «Մանիչակ», «Խնչ կ՛ըսեն», որոնցից վերջինում հոգու խորքում պահած ցավի լուսապատկերն է. «Ո՛հ, հատակն են իմ փրփուրներս»: Նույն հոգեվիճակը բեկվում է նաև հայրենիքի կերպարում. «Սև, սև» քերթվածին հաջորդում է «Նոր սև օրեր»-ը, այսպիսի անդրադարձով. «Ա՛յ, դալկահար դու հայրենիք... // – Եվ դեռ Քրդի՞ն ալ խոնարհինք» և գենքի է կոչում, ինչպես Աբովյանն ու Բաֆֆին: Այս զգացողությամբ անգամ հաղթահարում է անձնական ցավը.

Սուրբ տենչերով լուկ ծարաված՝  
Ցամաք գտնե՛լ աղբերքն յամայր,



Ցամքի՛լ ծաղիկ հասակի մեջ,  
Ո՛հ չէ՛ այնչափ ցալ ինձ համար:

<...> Հեզ մարդկության մեկ ոստը գոս՝  
Հայրենիք մը ունիմ թըշվառ,  
Չ՛օգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,  
Ո՛հ, այս է սոսկ ցալ ինձ համար (նույն տեղում, էջ 79):

Ինչքան էլ լայնացնում է շրջանակը, իրեն փորձում տեսնել այլ միջավայրում, միևնույն է՝ հիմնական դադափարը հանգիստ չի տալիս և հասնում է անվարագույր վերջին քերթվածներից մեկին՝ վերնագրված «Իմ մահը», որին նախորդում է բախտակից ընկերոջ՝ Վարդան Լուծֆյանի հիշատակին ձոնված «Հծծմունք» քերթվածը. իրենք են՝ որպես «երկու տոգույն բոցեր», որոնցից մեկն արդեն «հող էր հագել», մյուսն էլ այդ ճանապարհին էր: «Հնւշք» քերթվածում մոտիկներից մեկին ապապրում է. «Տըխուր կոչնակ մ՛երբ հնչե, // Մըտերմիդ մահը հիշե»: Այսպես իր մահը տեսնելով, զգալով, վերապրելով Դուրյանը հասավ «Իմ մահը» արդեն ոչ թե տեսական, այլ իրական վերջաբանին և ասաց՝ ինչ մահ, երբ կա հիշատակը. «Իսկ աննշան եթե մնա // Երկրի մեկ խորշն հողակույտն իմ, // Եվ հիշատակս ալ թառամի, // Ա՛հ, այն ատեն ես կը մեռնի՛մ ...» (նույն տեղում, էջ 87):

Հիշատակն արդեն հավերժության զբավական է:

#### Թատերգությունները

Թատրոնը, որպես այդպիսին, հայ եկեղեցին մերժեց դեռևս V դարում<sup>31</sup>, իսկ կաթոլիկ եկեղեցին պահպանեց: Թատրոնը հայ կյանք մտավ Մխիթարյանների միջոցով և XIX դարում տարածվեց նախ արևմտահայ իրականության մեջ, ապա՝ արևելահայ:

Դուրյանը Պեշիկթաշյանի հետ մեկտեղ հայ թատրոնի կազմավորման շրջանի դեմքերից է, պահանջը հոգևոր-կրոնական և պատմական-հայրենասիրական նյութն էր, որ կենդանանում-նորոգվում էր պատմական անցյալից: Ընդ որում՝ «Թատրոն Օսմանիե»-ում, ներկայացումները սկսվում էին գիշերվա ժամը 3-ին և միշտ անցնում լեցուն դահլիճներում<sup>32</sup>:

Դուրյանը թատրոն մտավ նախ ժամանակակից նյութով՝ Միքայել Նալբանդյանին պայմանականորեն կերպավորող «Տարագիր ի Սիպերիա» այլա-

<sup>31</sup> Տե՛ս Հովհան Մանդակունուն և Հովհան Մայրավանեցուն (հայտնի է նաև որպես Մայրագոմեցի) վերագրվող «Վասն անօրեն թատերաց դիվականաց» ճառը. – Յո՛վհան Մանդակունի Հայրապետ. 2001, (գրաբար բնագիր և աշխարհաբար զուգադիր թարգմանություն), Սուրբ Հովհան Մանդակունի. 2008, Կարապետ Եպիսկոպոս, Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի. 1913, Մովսես Խորենացու «Ողբ»-ը, նաև Դ. Գասպարյան. 2010, էջ 312–315: Միջնադարյան հայ թատրոնի համապատկեր տե՛ս Չ. Հովհաննիսյան. 2004, էջ 300:

<sup>32</sup> Տե՛ս ներկայացումների ազդերը ժամանակի մամուլում՝ «Օրագիր» (Կ. Պոլիս), 1870, 8 հունվարի, «Մանգումեի էֆքյար» (Կ. Պոլիս), 1870, 7 փետրվարի, 5 մարտի, 13 մարտի, «Մասիս» (Կ. Պոլիս), 13 նոյեմբերի:

բանական ողբերգությունը և «Վարդ և Շուշան կամ Հովիվք Մասյաց» մելոդրամայով, որը ևս պայմանական ժամանակի ու տարածության միջավայր է ընդգրկում, այնուհետև խորացավ պատմության մեջ: Պայմանականությունն ու այլաբանությունը գեղարվեստական միջոցներ են, որոնք յուրովի մերձեցնում են հիշյալ թատերգությունները:

«Տարագիր ի Սրպերիա»-ի «Նալպանտյանի դիակը և Հայաստան» տեսիլում հայության կերպարը մատնված է հուսահատության. «Գերեզմանի մոտեցեր էք, Հայեր՛, սթափեցեք, վերջին ճիգ մ'ալ ... <...>: ... հիմա հայ չկա, անուն կա, հայ չկա, մատնիչ կա, հայ չկա, օտար կա, հայ չկա, դիակ կա, մահ կա, ծնունդ չկա, գերեզման կա, խանձարուր չկա, սեր չկա, ատելություն կա, և ամենն ավելի միություն չկա ... Օրհասական է: Հայաստանի ավերակաց վրա թափառահած թռչող հայության անունը հանգչելու տեղ մը չը գտնելով և վերջապես հոգնելով ավերակաց տակ հոգին պիտի տա ... Վահ պիտի ջնջվի ուրեմն Հայության անունը» (հ. II, էջ 475–476): Գլխավոր գաղափարն ազատությունն է, իսկ «Գործող անձինք»՝ Միքայել Նալպանտյան, Հայաստան, Սրպերիա, ժամանակ, Մահ, Ազատություն: Նալպանտյանի կապակցությամբ ավելացնենք՝ Դուրյանը կրել է նաև նրա ստեղծագործական ազդեցությունը, որի ակնհայտ վկայությունը «Իդճք առ Հայաստան» քերթվածն է:

«Վարդ և Շուշան» երգախառն հովվերգական մելոդրաման, որը Դուրյանը գրել է 15 տարեկանում, Վարդուլյանը բեմադրել է 1871 թ. նոյեմբերի 13-ին: Ինչպես այս, այնպես նաև «Արտաշես աշխարհակալ» թատերգության երաժշտությունը գրել է Տիգրան Չուխաճյանը: Սիրային բնական ապրումների ու հարաբերությունների մաքուր միջավայր է, որ, որպես հովվերգություն, բախվում է իրականությունը ներկայացնող չար ուժերին (Սուրմակի կերպարը): Թատրոնը սիրում է ուժերի կենտրոնացում, բեկեռացում ու բախում, որով առաջ են շարժվում բավական սուր գործողությունները՝ սեր ու ատելություն, սպանություն ու ինքնասպանություն ... Բանասիրությունը պարզել է, որ «Վարդ և Շուշան»-ն ազդված է Ֆրանսիացի արձակագիր Ժակ Անրի Սեն-Պիեռ դը Բեռնարդենի «Պոլ և Վիրգինիա» (1787) վեպից, որը մինչև Դուրյանի թատերգությունը (1867) ունեցել է հայերեն չորս թարգմանություն ու հրատարակություն և բեմականացվել Հ. Վարդուլյանի կողմից<sup>33</sup>: Այդ նյութով հայտնի է նաև Սրապիոն Հեթումյանի «Պողոս և Վիրգինիա» (1864) թատերգությունը:

Որպես «ժամանակակից թատերախաղ» է գրված «Թատրոն կամ Թշվառներ»-ը (1871): Ունի «Հառաջաբան», որի մեջ կարդում ենք. «Ձայս երկասիրելով, իմ մասնավոր դիտումն է իմ աննշանությամբ օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց, որ ավելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բարոյալից թատերախաղեր հորինելու աշխատին, որով ավելի օգուտ կրնան ընծայել Հայ հասարակության, քան թե ազգային հին դյուցազներգությունքը ողբերգությունց վերածելով, որք միշտ միակերպություն վրիպած չեն, վասնզի նյութոց հարուստ աղբյուրներ չունին և հետևաբար ունկնդիր թատերասերներու

<sup>33</sup> Ա. Շ ա ր ու լ յ ա ն. 1972, էջ 110–113:

տաղտկալի կրնան ըլլալ իրենց միակերպ և անընդհատ ներկայացումներովը» (Տ. Ա, էջ 374–375): Այստեղ հիշում է Հյուզոյի «Էռնանի» դրաման և ավելացնում. «Իրավ է որ սույն թատերախաղը Վիքթոր Հյուկոյի Էրնանի թատերահանդեսին պես չի պիտի հեղափոխե հասարակության գաղափարքն ու զգացմունքը, սակայն և այնպես սորա և փոշիները թոթվելով գրողական դուրս հանելով թերևս դույզն ծառայություն մ'ըրած համարիմ» (նույն տեղում, էջ 375): Ժամանակակից կյանքի հիմքում սերն է, աղքատության պատուհասած իրավիճակներն են և կյանքում տեղը գտնելու ողբերգական ճիգը, նաև թատրոնը՝ այս դեպքում որպես կյանքի բեմահարթակ: Թշվառությունից դուրս գալու ելքն աղջկա պատիվը վաճառելու առաջարկն է, որը որպես հնարավորություն, ավելի խոր թշվառության է մատնում սնանկացած վաճառական Թովմային, նրա դուստր Վարդուհուն և աղջկան սիրահարված որդեգիր Էդուարդին: Այստեղ արդեն ժամանակակից ողբերգությունն է Էդուարդի և Վարդուհու ինքնասպանությունը, որով մայր է մտնում նրանց սիրո արևը: Այս ծանր բախումը ժամանակի հայ գրականության հիմնական նյութն էր, որն առաջնային է դարձնում աղքատի պատիվը (Պարոնյան, Բաֆֆի, Սունդուկյան, Մուրացյան, Զոհրապ, Նար-Դոս, Երուխան):

Պատմական թատերգությունները, որպես «մեծահանդես ողբերգություններ» («Տիգրան Բ.»-ին տված իր բնորոշումն է), հետևյալներն են՝ «Ան հողեր կամ Հետին գիշեր Արարատյան» (1868, նյութը՝ Լենկթեմուրի արշավանքը Սեբաստիա 1403 թ., սկզբնաղբյուրը՝ Թովմա Մեծոփեցի, բեմադրվել է 1871 թ. մարտի 6-ին), «Արտաշես Աշխարհակալ» (1869, նյութը՝ Արտաշես Ա-ի, նաև նրա որդու՝ Տիգրան Բ.-ի հայրենաշեն գործունեությունը, սկզբնաղբյուրը՝ Մովսես Խորենացի, բեմադրվել է 1870 թ. հունվարի 10-ին), «Անկումն Արշակունի հարստության» (1870, հերոսը վերջին Արշակունի արքան է՝ Արտաշիր [Արտաշես], սկզբնաղբյուրը՝ Մովսես Խորենացի, բեմադրվել է 1870 թ. փետրվարի 7-ին), «Ասպատակությունը Պարսկացի Հայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց» [(1870), սելջուկներից Տուղրիլի և Ալփասլանի արշավանքի ժամանակներն են՝ 1054–1064 թթ., սկզբնաղբյուրը՝ Արիստակես Լաստիվերցի, իրական հերոսներ են Գագիկ Աբասյանը, Թաթուլ սպարապետը, նյութը՝ բյուզանդացիներին հանձնելուց հետո Անիի գրավումն է թուրքերի կողմից, բեմադրվել է 1871 թ. մարտի 13-ին], «Տիգրան Բ.» (անավարտ): Վկայություններ կան նաև 1870-ին սկսված և կորած հա-մար-վող անավարտ երկու թատերախաղերի մասին՝ «Կործանումն Հոովմա» և «Շահատակություն Հայոց» (հնարավոր է «Շահատակություն Հայոց կամ Շուշանիկ»):

Սրանց մեջ և՛ պատմական սկզբնաղբյուրներն են (վերը նշվածներից բացի նաև Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմություն»-ը), և՛ գաղափարապաշտ գրողի ազատ ու նպատակային երևակայության թռիչքը: Կոչված էին ազգային համախմբման և գաղափարական միաբանության: Համենայն-դեպս, ներկայացումներից առաջ և հետո հայ մարդը տարբեր էր: Արիստոտելյան կատարսիսին, որ հոգեմաքրումն է, այստեղ փոխարինում է ազգային զարթոնքի երազանքը, քանի որ ժողովուրդը հատկապես դրա՝ պահանջն ուներ և դրա՝ համար էր թատրոն հաճախում: Հայոց պետականությունը երազանք էր բոլորի համար և ստեղծագործական երևակայության հենակետ:

Այս երկերում կերպավորված են թե՛ պատմական դեմքերը, թե՛ հորինովի: Ընդհանուր միջավայրը պատմական է. կան մարդկային զգացմունքներ՝ սեր ու ատելություն, համակրանք ու հակակրանք, հաղթանակ ու պարտություն, բռնագրավման կոչեր ու ազատության կանչեր, հերոսներ և ուրացողներ: Դիպաշարի ընթացքն առաջ են տանում գաղափարակիր հերոսները և օրինակ դառնում թատերասրահից դուրս եկող ապագա հերոսների համար: Այսինքն՝ ինչպես Աբովյանն ու Բաֆֆին, Դուրյանը ևս հերոսներ էր կերտում ազգային կյանքի գալիք օրվա համար: Ապագային ուղղված Դուրյանի քայլերը տեղ հասան և հանրության արթնացման ու հոգեկերտման գործում ունեցան իրենց կազմակերպիչ դերը:

Հարկ չկա մանրամասնելու այս երկերի քննությունը, որովհետև բեմի համար նախատեսված, ուստի՝ հանդիսականին հրապուրող խնդիր ունեն լուծված հնարավորինս հետաքրքրաշարժ սյուժետային անցումներով, արթնացած ազգային զգացմունքներին բավականություն պատճառելու պահանջով: Կան փայլուն էջեր, որոնցում վերստին շողարձակում է բանաստեղծը, կան նաև դիպաշարային հարմարեցումներ, ակնբախ է պատահականության գործոնը. այդ երկերը իրենց դերը կատարել են XIX դ. 60–70-ական թվականներին, բայց այսօր հեռու են գեղարվեստի այն բարձր պահանջներից, որ կրում է նրա մեծարժեք հոգեբուխ պոեզիան:

Իր անմիջական նախորդների (Մկրտիչ Պեչիկթաշյան, Սրապիոն Հեքիմյան, Թովմաս Թերզյան, Արմենակ Հայկունի, Սարգիս Վանանդեցի) համեմատ Դուրյանն անշրջանցելի քայլ արեց դասականապաշտությունից (կլասիցիզմ) դեպի գաղափարապաշտություն (ռոմանտիզմ): Սա համակարգային փոփոխություն էր, որ բերում էր հերոսի նոր նկարագիր, նոր գրական տեսակներ, նոր լեզու, պատկերամտածողության նոր սկզբունքներ: Այս ամենն ավելի խորությամբ արտահայտվեց Դուրյանի պոեզիայում:

#### Գեղագիտությունն ու արվեստը

Կան գրողներ, որոնք թողնում են տեսական-գեղագիտական հանգանակներ, կան, որոնք արվեստի իրենց ըմբռնումն արտահայտում են հենց գեղարվեստական երկերի, նամակների կամ այլ գրությունների տողամիջում: Դուրյանի այս բնույթի դատողությունները բանալի են իր գեղարվեստական աշխարհի դոնները բացելու հենց իր իսկ բանալիներով:

1971 թ. դեկտեմբերի 10-ին Լուսինյանին հասցեագրած նամակում գրում է. «Աշխարհի մեջ ապրեցա՛ս և Ձեզի պես միայն ձայն մ'ըլլալ սիրեցի. Ձեզի պես երգել սիրեցի: Ով որ այդ երգը չունի կամ երգել չ'գիտեր, զգալու ներդաշնակության, գեղեցիկին և սիրունին խոնարհականը շոշափելու քաղցրությունը չ'ունի»:

Մարդուն նշանաբանը երգն է. էն Առաջին ձայնը երգն է. բնությունն ամբողջ երգ մ'է. Այո՛, Եղբայր իմ խիստ ընտիր խոսեր էիք օր մ'ինձ, թե «Երգը ոչ այլ ինչ է բայց եթե ձայներու ներդաշնակավոր փունջ մը»: Այո՛, ես ալ կ'ըսեմ.

«Երիտասարդ ըլլալ և երգել  
Ծեր լինիլ և աղոթել»  
Այս է կյանքը (հ. I, էջ 184–185):

Սա իրական կյանքի ճայնն է, որ շունչ ու ոգի է ներշնչում հոգեբուխ կենդանի ապրումներին: Լամարթինյան տողերով ավարտվող այս նամակում ամեն ինչ բնականություն սահմաններում է, որ ինքնատիպ ու անկրկնելի է դառնում գեղարվեստական վարպետ պատկերավորումով:

Դուրյանն անդրադառնում է թատրոնի ոչ միայն կազմակերպական, այլև տեսական-գեղագիտական խնդիրներին: Այս տեսակետից կարևոր է «Թատրոն» հոդվածը, որի մեջ՝ որպես թատերագիր, իր պատկերացումն է արվեստի այդ ճյուղի մասին: Ըստ նրա՝ «Թատրոնը հայելի մ'է, որուն մեջ մարդս կրնա իր ճշմարիտ պատկերը տեսնել, <...>, իսկ դերասաններն ալ մեկ մեկ դաստիարակներ են, որ <...> մարդու բարոյական զարգացմանը պատճառ կրլլան ...»: Ըստ այդմ թատերասերը «... բարոյականության ծավալման ալ փափագող է» (նույն տեղում, էջ 114): Անցնում է թատրոնի խնդիրներին. «Մենք, որ իբր լուսավորյալ ազգ կը պարծինք և միշտ հառաջադիմության քայլեր առնելու կ'աշխատինք, <...> ցարդ օրինավոր Հայ թատերաբեմ մը ունեցած չենք» (նույն տեղում, էջ 115): Սրանով էլ բացատրում է այն ցավալի վերաբերմունքը, որ հեռացումն է ազգային թատրոնից. «Մենք թողլով մեր հայկական ներկայացումները, կը դիտենք օտար թատրոններ, որ մեզի բնավ օգուտ մը չընելեն զատ՝ մեծ ամոթ մ'ալ կրնա համարվիլ ...» (նույն տեղում, էջ 117): Այսպես ճոխ ու զարդարուն օտար թատրոնների համեմատ Հայ թատրոնն աղքատության պատճառով զիջում է իր առաջադեմ դիրքերը և անդեմանում: Բնորոշում է նաև ժողովրդին. «Մեր ժողովուրդը միշտ նորասեր ու կասկածոտ է» (նույն տեղում), որ, ըստ Դուրյանի, նրա առաջադիմության նշան է, բայց հետևողական չէ ...

Ազգային ինքնության հարցերը մշտապես հետաքրքրել են նրան, այդ իսկ պատճառով «Լուսավորության հսկա մը այս օրերու» (նույն տեղում, էջ 125) թեկադրանքով անտարբեր չէր ոչ մի բանի հանդեպ: Նոր հիմնադրված «Օրագիր» թերթի կապակցությամբ ազդարարում է. «Վարժարան և տպարան, ասոնք են մեր զարգացման վառարանները» (նույն տեղում, էջ 122): Մարդ և գիրք, որ, ըստ նրա, ազգի անմահության նախադրյալ է: «Երկու խոսք առ Սամթիացիս» գրության մեջ «Հայկական ընկերության» պահպանման առիթով այդ Հայ մարդու պատիվն է բարձրացնում ընդդեմ ճիգ-վիտների քայքայիչ գործունեության. «Պատվո և զգացման տեր Սամթիացի՛ք, ձեր էն նվիրական պատիվը, ձեր էն գեղեցիկ ու վեհ զգացումը Հայկականի մեջ կը փայլի. երբ զՀայկականն հեզնեն ու անվանարկեն, ձեզ, ձեր պատիվն ու զգացումը հեզնած ու անվանարկած կ'ըլլան, դեռ անտարբեր կը մնա՛ք, Սամթիացի՛ք. զձեզ բաժանել կ'ուզեն, որպեսզի տիրեն, միացե՛ք, զորություն ի միություն է ...» (նույն տեղում, էջ 140): Այդ չարքը, ըստ նրա, «... գլխատե պիտի գՀայկականը». սա գույժ էր, որ այդուհետև՝ մինչև Չարենց, մինչև խորհրդային գաղափարախոսություն և մինչև նոր ժամանակները պիտի հնչեր պատմության գալարափողերից: Դուրյանն իր ժամանակ զգաց այդ ազգակործան վտանգը և գրիչը սուր դարձրած պայքարի կոչեց հայությանը պառակտելու, հային այլացնելու, օտարացնելու, իր միջավայրից ու մշակույթից կտրելու գլխավոր փորձանքի դեմ, որը համարում է քաղցկեղ և հրահանգում. «... արտասահման տարագրել դահիճը» (նույն տեղում, էջ 141): Նաև դեմ է կուսակցական պառակտիչ գործունեության, որի բացած վի-

Տի մեջ առաջարկում է «սեր, սեր լնունք», «պագտովինք» (նույն տեղում, էջ 144) և մոռանալ իրար զատող մրրիկները, կուսակցական ոխն ու ասելությունը և սիրո ձեռք մեկնել իրար ու հաշտվել: Դուրյանն այստեղ մարգարեանում է, որովհետև հետագայում այդպես պիտի բախվեին ու արյուն հեղեին բուշեիկները, ավելի ուշ արդեն՝ նորաստեղծ խմբավորումները ...

Բնության հանճարն ու մարդկության ոգին, ըստ նրա, պարփակվում է վսեմի, բարու, ճշմարտի և գեղեցիկի մեջ. սրանք են կյանքի, հանրային կեցողության ու արվեստի հիմքերը: 1871-ի սեպտեմբերին Լուսինյանին հղած նամակում գրում է. «Ձեզ հիշեցուցած եմ արդեն, որ ես «վսեմ»ին առջև կը պապանձիմ»: Մինչ այդ՝ 1871 թ. օգոստոսի 13-ին, նույն հասցեով մեկ այլ նամակում գրել էր, որ «վսեմությանց առջև երբեմն կ'ապշի» (նույն տեղում, էջ 168): Դարձյալ նույն հասցեով 1971-ի սեպտեմբերի 9-ին «Այսպիսի վսեմ նյութերու առջև լռելը մեծ բան է ինձ համար, վսեմ է ինձ համար լուր դողդոջել» (նույն տեղում, էջ 175):

«Թատրոն կամ Թշվառներ» թատերգության մեջ կա մի տեսարան, ուր իրար հետ խոսում են թատրոնի տնօրեն Պողյանցը և դերասաննապես Վահագնյանը (հավանաբար նկատի ունի Վարդույանին): Խոսքի մեջ քննարկում են այն հարցը, թե ինչպիսի երկ է նպատակահարմար բեմադրել թատրոնում: «Գաղտնիք մուրացկանին» վերնագրով գործի դեպքում, ըստ Պողյանցի. «Ահ, ըսել է որ այդ խաղը չը կրնար ներկայացվիլ» և առաջարկում է վերնագիրը փոխել «... մեր մեծ դյուցազներեն մեկուն ծանոթ» անունով: Եվ, քանի որ հնարավոր չէ վերնագիրը փոխել, վերջնականապես հրաժարվում է ներկայացնել, որովհետև վնասաբեր է. «... մեր հասարակությունը թատերազդերուն վրա խոշոր, փառավոր և ահավոր անուններ կը փնտռե և անունեն կը գուշակե խաղին լավ կամ գեշ ըլլալը. եթե մեր հեղինակներեն մեկը խելք ունենա՝ «Կործանումն աշխարհի» կամ «Վերջին դատաստանը» անունով խաղ մը կը գրե, ես ալ ազդին վրա «արտաքո կարգի փառավոր ներկայացում» մը կը գրեմ, թատրոնը լեցավ գնաց»: Վահագնյանը միջամտում է. «Բայց հայ հասարակության արդի հառաջընթացությանը նայելով ժամանակակից խաղերն ավելի հաճո և օգտակար պետք է համարվին իրեն»: Պողյանցը շարունակում է դժգոհել՝ լրագիրներն անտարբեր են թատրոնի հանդեպ, «... վասնզի մեր հասարակության մեջ թատրոնի և գրականական նյութերու վրա գրված հոդվածներ կարդացող չկա. ամենքն ալ քաղաքագետ են եղեր ...» (հ. II, էջ 432–433):

Իր հերոսների բերանով Դուրյանի ասածն այն է, որ արվեստի, այս դեպքում՝ թատրոնի ինչպիսին լինելը, ըստ հանրային ճաշակի, թելադրում է շուկան, մինչդեռ արվեստն ապտակ է հանրային ճաշակին և կոչված է ոչ թե համակերպվելու, այլ բարձրացնելու այդ ընկած շուկայական ճաշակը: Ահա այդպես եղավ, որ Վարդույանը հրաժարվեց ներկայացնել «Թատրոն կամ Թշվառներ» թատերախաղը:

Դուրյանը թեև չխոսեց «հայադրոշմ» (Դ. Վարուժան) արվեստի մասին, բայց բորբոքեց հայության-հայկականության վերածնունդի գաղափարը. «... հայը դեռ իր արժանապատվության կետերուն լավ վերահասու եղած չէ» (հ. I, էջ 110):

Դուրյանը, ոչ թե հասավ վարպետության, այլ ծնվել էր որպես խոսքի վարպետ: Առաջին բանաստեղծությունը գրել է 13 տարեկանում, 20 տարե-

կանում, իհարկե, այլ էր, քան 13-ում, այսինքն՝ կյանքը շարունակվելու դեպքում այդ վարպետությունը դեռևս կարող էր հասնել կատարելագործման: Կյանքի կարճ տևողությունը խտացրել էր ամեն ինչ:

Նրա բանաստեղծություններից շատերը գրված են որպես երգեր: Բանաստեղծություններից մեկը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Երգ մարտին Վարդանանց», որ Ալիշանից եկող մի նուրբ շունչ ունի: Երբեմն ստեղծում է կրկնաբերումներ, որոնք չափական ընդհանուր կշռությին հաղորդում են իմաստային այնպիսի թեթև անցումներ, որ, ասես, խոսքի այլքի հաջորդական մակրնթացություններ լինեն՝ «Վիշտք Հայուն», «Ի պատրիարքական ընտրություն. Ամեն, Հայրիկին», «Կույսն լքյալ». այս տեսակետից կատարյալ գործեր են «Սիրել»-ն ու «Իրժել»-ը:

«Հայրիկն Հայոց» բանաստեղծությունը գրված է կից տողերի բարդ հանգերով և հիշեցնում պոլսեցի բանաստեղծներ Պաղտասար Դպիրի ու Պետրոս Ղափանցու ճոխ հանգաբանությունը: Սա ավանդույթի անմիջական փոխանցում է, որը դառնում է ոչ թե սոսկ պարզ նմանակում, այլ՝ արվեստ: Եվ այս քերթվածի կառուցվածքի հնչյունական ներքին պահանջից չի բխում այսպիսի վերագրումը. «Սա գրված է բառախաղային հանգավորմամբ <...> կամ բռնի նմանեցմամբ»: Եզրակացությունը՝ «... հնչում է բռնագրես»<sup>34</sup>:

Համաշխարհային պոեզիայի գրեթե բոլոր ներկայացուցիչների ստեղծագործության մեջ կարելի է գտնել այսպիսի օրինակներ, որոնք այլ բան չեն, քան բանաստեղծության տաղաչափական հնարավորությունների բացահայտման փորձեր, որը գեղարվեստի պահանջների շրջանակում է թեկուզ հենց ձևի բովանդակայնացմամբ: Այսինքն՝ այս դեպքում ոչ թե բովանդակությունն է թելադրում իր ձևը, այլ ձևը բովանդակություն: Իսկ Դուրյանը հասու էր ոչ միայն արտաքին ձևի, այլև ներքին ձևի բնական ու լիարժեք իմաստավորման, ինչի վկայություն է նրա ամբողջ պոեզիան:

Գեղարվեստական հնարքներից օգտագործել է դիմառնություն (գրաբարում նախապես օգտագործվել է բարառնություն եզրույթը, որ նշանակում է ի բարք առնել): Գալիս է դեռևս Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմից, որ հետո տարածվեց հայ գրականության մեջ (Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությանը Դուրյանը ծանոթ էր)<sup>35</sup>: Դուրյանի «Լճակ»-ն անձնավորված է որպես բանաստեղծի երկրորդ ես:

Ամենակարևորը՝ Դուրյանը դարձավ ձևավորվող աշխարհաբարի ստեղծողներից մեկը: Ճիշտ է, դեռևս ուղեկից են գրաբարյան քերականական ձևերը, բառապաշարը, բայց դրանք արդեն աշխարհաբարի համակարգի մեջ են և յուրահատուկ հմայք են հաղորդում նրա խոսքին: Արևմտահայ աշխարհաբարը պահպանեց գրաբարի բառազանձը, Դուրյանը խոսքի մեջ ոճավորեց նաև քիչ օգտագործվող բառաչերտը՝ անոսը, անտի, աստ, անդ, պրտոսը, գեղուկ, գվարթուն, թինդ, ժպիրհ, իցիվ թե, լնուկ, խոկ, ծյուրիլ, կայթել, կարի, հայել, հեգ, հեծել, ձորձ, յանգեստ, շառայլ, չվառ, ջամբել, սյալ, վետ... Դեռ ավելին, աշխարհաբարին նրբորեն ձուլում է միջին հայերենից և, հատկապես, հայրեններից եկող ակ, իկ, ուկ նրբացուցիչ վերջավորություն ունեցող բառաձևեր՝ համբուրիկ, դայլայլիկ, վայրիկ, ձայնիկ, թշվառիկ... Եվ իրական չէ

<sup>34</sup> Ա. Շ ա ր ու ը յ ա ն. 1972, էջ 187:

<sup>35</sup> Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան, Վ. Թորգոմյանի ֆ., 1-1, էջ 39:

այսպիսի համոզումը. «Միջնադարյան հայ քնարերգությունը Դուրյանին անձանոթ մնաց»<sup>36</sup>: Ընդ որում՝ բառապաշարի այս շերտն անպակաս է ժամանակի գեղարվեստական խոսքից, ահա Պեչիկթաշյանը՝ զեփյուռիկ, կուսիկ, թուչնիկ, ձայնիկ, համբուրիկ, հանդարտիկ, փափկիկ, մինակուկ ... Ստեղծեց նոր բառեր. նրա նորաբանություններից դառնաթափսիծ բառը նոր կյանք ստացավ Չարենցի «Շան կարոտներ» բանաստեղծության «Շո՛ւն, կարոտի՛ իմ եղբայր, դառնաթափսի՛ծ իմ ընկեր» տողում:

Դուրյանի պատկերավոր մտածողությունը ոչ միայն քերթվածներում է, այլև արձակ էջերում: Ահավասիկ. «Սամաթիա նյութական մոխրին տակ վառ պահեց բարոյական կայծը» (հ. I, էջ 107):

Դուրյանի անուրանալի բարձրագույն ձեռքբերումը գեղարվեստական լեզուն որպես լեզվի երկրորդ հնարավորություն հայտնաբերելն էր, ինչն առավելապես դրսևորվեց փոխաբերական մտածողությամբ և փոխաբերական պատկերներով: Որպես օրինակ՝ բավական է հիշել միայն «Սիրել»-ն ու «Դրժել»-ը: Սրանով, ահա, Դուրյանը պոկվեց իր ժամանակի մխիթարյանական-կոստանդնուպոլիսյան պոեզիայից, որի բնորոշ հատկանիշներն էին նկարագրականությունը, դիպաշարայնությունը, լեզվի գրաբարխառն ծանրաբեռնվածությունը, կշռությունը, շնչի ծանրությունը, բազմաբառությունը, ուսուցողականությունը, միապաղաղությունը, սահմանափակվածությունը ... Նա բառերին հրեղեն ոգի հաղորդեց, խտացրեց պատկերի տարողությունը երկու բառ ընդգրկող փոխաբերության մեջ և բանաստեղծությունն ազատեց ծանրաքայլ շնչառությունից, որ ոչ թե շնչառություն էր, այլ բառերով բարձված տողերի հետք...

### Եզրակացություն

Դուրյանն արդիականացրեց հայ բանաստեղծությունը. արդիականացումը համակարգային էր որպես գեղարվեստական մտածողություն և ընդգրկում էր ինչն ու ինչպեսը համակողմանիորեն:

Ինչը՝ ասելիքը, ինքն էր՝ իր կյանքը, ժամանակը, միջավայրը, որով անձնավորեց պոեզիան, հառաչանքով բարբառեց, որ իր տողերի մեջ մարդ է ապրում՝ ճանաչե՛ք նրան, հասկացե՛ք նրան, լսե՛ք նրա ձայնը: Եվ ինքը ոչ թե մեկ պահ պատկերող լուսանկարի, այլ հաջորդական պահերի շարժանկարի տեսականությամբ իր հետ բերեց ոչ միայն ժամանակի ու միջավայրի ձայները, այլև վավերական պատկերները՝ ընտանիք, հարազատներ, տուն, սենյակ, մահիճ, լիճ, թատրոն, կանացի զգայական տեսիլքներ, քաղաքային տեսարաններ, ընկերներ ...

Ինչպեսը՝ արտահայտման արվեստն ու գեղագիտությունը, հագեցած է պոեզիայի զարգացման ապագան կանխորոշող թռիչքային նորարարությամբ, որի մեջ են լեզուն, ոճը, պատկերի կառուցվածքը, կշռությունը, պատկերավորման միջոցների համակազմը, արտաքին ու ներքին ձևի տարրերը: Այս ամենով Դուրյանը հզոր ներգործություն ունեցավ հայ պոեզիայի վրա:

<sup>36</sup> Ա. Շ ա ր ու ը յ ա ն. 1972, էջ 251: Շարուրյանը բացառություն է անում միայն Նարեկացուն: Մինչդեռ Դուրյանի ժամանակ հայրենները դեռ ժողովրդի շուրթերին էին:



*Խոսքի այս բարձր վարպետությունը հենց հանճարի նշան էր, որով Դուրյանը ճեղքեց իր ժամանակի գրական պատմեչը և, որպես բանաստեղծական մոլորակ, սկսեց պտտվել գեղարվեստի հավերժության մեջ: Դա է վկայում Պետրոս Դուրյանի խոսքի ուժն այսօր՝ մահից 150 տարի անց, երբ լրանում է նրա երանելի ծննդյան 170-ամյակը:*

Դավիթ Գասպարյան – ք. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի Հայ գրականության ու մշակույթի պատմություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների: grakanagetgasparyan@mail.ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր. 1911, թիվ 15–16, 19–20, Գրական դեմքեր. Պետրոս Դուրյան. – «Լույս» (Նոր Նախիջևան):

Աճառյան Հր. 1912, Պատմություն հայոց նոր գրականության, պր. Գ, Նոր Նախիջևան, 336 էջ:

«Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1; 1968, № 1; 1969, № 3:

Բրյուսով Վ. 1967, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, ԳԱ հրատ., 298 էջ:

Գասպարյան Դ. 2002, Հայ գրականություն, գիրք 2, Երևան, «Ձանգակ», 704 էջ:

Գասպարյան Դ. 2010, Հայ գրականություն, հ. 4, Երևան, «Ձանգակ», 624 էջ:

«Գրական թերթ», 05. III. 1966; 03. VI. 1966:

Դուրյան Պ. 1963, Տաղեր, Երևան, Հայպետհրատ, 83 էջ:

Դուրյան Պ. 1967, Տաղեր, Երևան, Հայպետհրատ, 106 էջ:

Դուրյան Պ. 1971, հ. 1, Երևան, ԳԱ հրատ., 564 էջ, 1972, հ. 2, Երևան, ԳԱ հրատ., 368 էջ:

Դուրյան Ե. 1885, Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժամանակաց մինչև մեր օրեն: Ի պետս ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, 118 էջ:

Երեմյան Ս. 1913, Ազգային դեմքեր. Գրագետ հայեր, չորրորդ շարք, Վենետիկ, 484 էջ:

Էքսերձյան Բ. 1892, Տաղք և թատերությունք, նամականի, դամբանական, տապանագիր, Կ. Պոլիս, 260 էջ:

Էքսերձյան Բ. 1893, Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի, Կ. Պոլիս, 146 էջ:

Թամրազյան Հր. 1986, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, «Սովետական գրող», 528 էջ:

Թեզիբաշյան Վ. 1959, Պետրոս Դուրյան, Երևան, Հայպետհրատ, 196 էջ:

Թումանյան Հ. 2018, հ. 2, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ԳԱԱ հրատ., 688 էջ:

Լամարթին. 1859. Դաշնակք, Կ. Պոլիս, 396 էջ:

Կարապետ Եպիսկոպոս, Հովհան Մանդակունի և Հովհան Մայրազոմեցի. 1913, «Շողակաթ», գիրք 1, Վաղարշապատ, 136 էջ:

Հակոբյան Ս. 1922, Պետրոս Դուրյան. Նրա կյանքն ու երկերը, գրական-քննական վերլուծություն, Վիեննա, 188 էջ:

Հայ նոր գրականության պատմություն, 1962, հ. 2, Երևան, ԳԱ հրատ., 516 էջ:

Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան, Վ. Թորգոմյանի ֆ.:

Հովհան Մանդակունի. 2008, Ճառեր, էջմիածին, Մայր աթոռ, 284 էջ:

Հովհաննիսյան Հ. 2004, Միջնադարյան բեմ, Երևան, ՀՀ «Գիտություն» հրատ., 300 էջ:

Ղազարյան Ռ. 2000, Գրաբարի բառարան, հ. Բ., Երևան համալսարանի հրատ., 688 էջ:

Ղանալանյան Հ. 1957, Պետրոս Դուրյան, Երևան, Հայպետհրատ, 112 էջ:

Ճանաչյան Մ. 1953, Պատմություն արդի հայ գրականության (վերածննդի շրջանեն մինչև մեր օրերը), հ. 1, Վենետիկ, 687 էջ:

Մեծարենց Մ. 1981, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ԳԱ հրատ., 426 էջ:

«Մեղու» (Կ. Պոլիս), 1871, 19 հուլիս, թիվ 50:

Յովհան Մանդակունի Հայրապետ. 2001, Ճառեր, Անթիլիաս, 220 էջ:

Շարուրյան Ա. 1972, Պետրոս Դուրյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 362 էջ:

Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, ԳԱ հրատ., 626 էջ:

Չոպանյան Ա. 1894, Պետրոս Դուրյան. Կենսագրական և քննադատական ուսումնասիրություն, Թիֆլիս, 196 էջ :

Չոպանյան Ա. 1967, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, երկրորդ տպագրություն վերամշակված ու ճոխացած, Երևան, «Հայաստան», 242 էջ:

Պեշիկթաշյան Մ. 1987, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ԳԱ հրատ., 564 էջ:

Սարգսյան Ս. 1959, Պետրոս Դուրյան, Երևան, Հայպետհրատ, 144 էջ:

Սարինյան Ս. 1966, Հայկական բռնանտիգմ, Երևան, ԳԱ հրատ., 558 էջ:

Սևակ Պ. 1974, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, «Հայաստան», 416 էջ:

Ստեփանյան Գ. 1962, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ.1, Երևան, ԳԱ հրատ., 524 էջ:

Վարուժան Դ. 1987, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, ԳԱ հրատ., 720 էջ:

Օշական Հ. 1942, Հայ գրականություն, Երուսաղեմ, 480 էջ:

Օշական Հ. 1945, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 1, Երուսաղեմ, 368 էջ:

Օշական Հ. 1953, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 2, Երուսաղեմ, 448 էջ:

## ХУДОЖЕСТВЕННЫЙ МИР ПЕТРОСА ДУРЯНА

ДАВИД ГАСПАРЯН

### Резюме

*Ключевые слова: Петрос Дурян, западноармянский язык, не-она, театр, любить, нарушить клятву, озеро, ропот, смерть, могила, память, Армения, Константинополь, Скютар.*

В этом году исполняется 170 лет со дня рождения классика армянской литературы Петроса Дуряна (1851–1872). Он прожил всего 20 лет, и даже

свою смерть страдающий туберкулезом поэт превратил в стихотворение. Еще школьником Дурян стал известен как поэт и драматург. Свое первое стихотворение он написал в 13 лет, а первую драму – в 15. Поэт успел написать 41 стихотворение и 10 драм. Стихи публиковались в печати, драмы ставились в театрах. Он писал драмы как на современные, так и на исторические темы. Если драмы сегодня имеют литературно-историческое значение, то его стихи продолжают сиять первой свежестью. Дурян был мастером метафорического мышления, с помощью которого создал такие шедевры, как «Любить», «Разбить», «Озеро», «Турчанка», «Ропот», «Моя боль», «Моя смерть».

Дурян – один из представителей романтизма. Он был хорошо знаком с творчеством Гюго, Ламартина, Шелли, Шекспира, переводил их произведения.

Сразу после смерти поэта последовало бессмертие, был опубликован сборник его стихов, и началось дуряноведение.

170-летие Дуряна – повод еще раз прочувствовать его пылающую душу, еще раз убедиться, что он настоящий гений, который предопределил дальнейшее развитие армянской поэзии. Всегда считалось, что Дурян находился под влиянием других поэтов, в то время как влияние его самого на армянскую литературу имеет большое историческое значение.

*Давид Гаспарян – д. филол. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: история армянской литературы и культуры XX века, Египте Чаренц. Автор множества книг и статей. grakanagetgasparyan@mail.ru*

## PETROS DURYAN'S ARTISTIC WORLD

DAVID GASPARYAN

### Summary

*Key words: Petros Duryan, Western Armenian, ne-she, theater, to love, to break an oath, pond, murmur, death, grave, memory, Armenia, Constantinople, Scutar.*

This year marks the 170th anniversary of the birth of the classic of Armenian literature Petros Duryan. He lived only 20 years, turning his death into a poem, passing away with incurable tuberculosis. Still a schoolboy Duryan became known as a poet and playwright. He wrote his first poem at the age of 13 and his first drama at the age of 15. The poet managed to write 41 poems and 10 dramas. The poems were published in the press, the dramas were staged. He wrote dramas on both contemporary and historical themes. While his dramas have a literary-historical significance today, then his poems continue to shine with the first freshness. Duryan was a master of metaphorical thinking, with which he



ԶԱԼԱԼ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՍԱԼԼՅՈՒՄՅԱՆ).  
ԶԱՎԱԽՔԻ ԱՐՑԱԽՑԻ ԶԱՎԱԿԸ\*

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-60>

Բանալի բառեր՝ Արցախ, Զավախք, Զավալ Տեր-Գրիգորյան (Սալլյունյան), «Վերնատուն»:

**Նախաբան**

Հայաստանի յուրաքանչյուր պատմաագագազրական երկրամաս իր ուրույն ու ծանրակշիռ տեղն ունի հայ ժողովրդի պատմամշակութային աստվածի ժառանգության մեջ: Կասկածից վեր է, որ Հայոց Արևելից կողմանց, մասնավորապես նրա կարևորագույն մասը կազմող Արցախ աշխարհի ու արցախահայության դերն այդ առումով բացառիկ է, որն առաջին հերթին պայմանավորված է Հայոց պետականության պահպանման ու զարգացման գործում նրանց խաղացած վճռորոշ դերով: Հայկական միասնական թագավորության անկումից հետո՝ ի թիվս Մեծ Հայքի մի շարք նահանգների ու գավառների, V դարի վերջերից մինչև XVIII դարավերջ ընկած ժամանակահատվածում, ապա նաև 1918 թվականից առ այսօր Արցախն իր վրա է վերցրել Հայոց պետականության անընդհատականության ապահովման առաքելությունը՝ դրանով իսկ հայության մեջ գոնե հատվածաբար պահպանելով պետականության իրողությունն ու գաղափարը<sup>1</sup>: Հենց այդ պետական մտածողությունն էլ արցախահայության մոտ ծնել է համահայկական առումով թե՛ քաղաքական և թե՛ մշակութային կյանքում որոշակի դերակատարություն ստանձնելու անհրաժեշտությունը:

Նոր և նորագույն ժամանակներում պետական ու ռազմական գործում արցախցիների ավանդի վերաբերյալ ստեղծվել է ստվարածավալ գրականություն: Սակայն մշակութային կյանքում նրանց ունեցած դերի մասին գրականությունը, անկասկած, ավելի համեստ է: Թերևս՝ հասկանալի պատ-

\* Ներկայացվել է 02. XI. 2021 թ., գրախոսվել է 19. XI. 2021 թ., ընդունվել է տպագրության 23. XI. 2021 թ.:

<sup>1</sup> Հայոց պետականության պահպանման գործում Արցախի ունեցած վճռական դերի մասին տե՛ս Ա. Մ ե Լ ք ո ն յ ա ն. 2018, էջ 44–73:

ճառներով, կարող է բացառություն կազմել միայն Շուշին, որի վերաբերյալ գրվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ: Այդուհանդերձ, կատարված աշխատանքն անգամ Շուշիի պարագայում, հնարավոր չէ համարել բավարար, և նոր հետազոտությունների հրամայականը մնում է օրակարգում:

Հատկանշական է, որ հայոց պատմամշակութային ժառանգության ստեղծման խնդրում արցախցի մտավորականների ազգօգուտ գործունեության աշխարհագրությունը երբեք չի սահմանափակվել Արցախով: Հատկապես Շուշիի կրթամշակութային հզոր դպրանոցն անցնելուց հետո նրանցից շատերն իրենց գործունեությունը շարունակել են Այսրկովկասի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի ու Արևմտյան Եվրոպայի ճանաչված կենտրոններում, ժամանակի ընթացքում դարձել են տարբեր երկրների նշանավոր ուսանողական ու պետական գործիչներ, համալրել հայ գրողների, գիտնականների, մանկավարժների աստղաբույլ շարքերը: Անշուշտ, այդ մասին էլ բավականաչափ գրված է: Բայց իրականությունն այն է, որ Արցախը միաժամանակ Հայաշխարհին տվել է գործիչներ, որոնք կարևոր դերակատարություն են ունեցել նաև հայկական զանազան գավառների կրթամշակութային կյանքի զարգացման գործում և, ցավալիորեն, չեն արժանացել հետազոտողների պատշաճ ուշադրությանը, հետևապես՝ նրանց գործունեությունը մնացել է ստվերի տակ: Արցախցի այդպիսի գործիչների մեջ առանձնանում է Զալալ Տեր-Գրիգորյանը, որը XIX դարավերջերին և XX դարի առաջին տասնամյակներին գործած այն նշանավոր մտավորականներից էր, առանց որի դժվար է պատկերացնել տվյալ ժամանակաշրջանում հատկապես Զավախքի հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքը:

**Գործունեության սկզբնական շրջանը**

Զալալ Հովհաննեսի Տեր-Գրիգորյանը ծնվել է Արցախում՝ Ելիզավետպոլի նահանգի Զևանչիի գավառի Մաղավուզ գյուղում՝ ներկայիս ԼՂՀ Մարտակերտի շրջանում, 1866 թ. ապրիլի 21-ին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, ապա ուսումը շարունակել Շուշիի ռեալական ուսումնարանում, և այն ավարտելով 1882 թ.՝ դարձել այդ նշանավոր հաստատության առաջին շրջանավարտներից մեկը: Ինչպես հայտնի է, Ռեալականում հատկապես ուսաց լեզվի մասնագետներ պատրաստելով հայ մտավորական շրջանակները նպատակ ունեին հայկական իրականության մեջ բարելավելու ուսերենի իմացությունը, որը Ռուսական կայսրությունում ազգօգուտ գործունեություն ծավալելու համար դառնում էր ավելի ու ավելի պահանջված: Ուստի պատահական չէ, որ Զ. Տեր-Գրիգորյանը ներառվում է այն շրջանավարտների ցանկի մեջ, որոնք Այսրկովկասի հայաշատ քաղաքների հայկական հաստատություններում պետք է ստանձնեին ուսերենի դասավանդման գործը:

Սակայն մինչև մանկավարժական գործունեության անցնելը, Զ. Տեր-Գրիգորյանը որոշում է խորացնել իր գիտելիքները՝ մասնավորապես ուսերենի իմացությունը, ուստի ուսումը շարունակում է Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտում, որն ավարտում է 1887 թ.: Հավանաբար, այստեղ էլ նա Այսրկովկասի ամենահայաշատ քաղաքներից մեկում՝ Ախալքալաքում, մանկավարժական աշխատանքի անցնելու հրավեր է ստանում:

XIX դ. երկրորդ կեսին Հայաստանյայց առաքելական եկեղեցու հովանուներքո գործող գավառական կրթօջախների մեջ առանձնանում էին Վրացա-խմբեթական թեմի երկու դպրոցներ՝ Ախալցխայի Կարապետյան և Ախալքալաքի Մեսրոպյան վարժարանները, որոնք XIX դ. 30-ական թվականներին հիմնադրել էր Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին<sup>2</sup>: Երկու դպրոցներն էլ արդեն ունեին կից գործող իգական (օրիորդաց) վարժարաններ. Ախալցխայում՝ Եղիսաբեթյան, Ախալքալաքում՝ Սանդիստյան անուններով: Այս բոլոր հաստատությունները կոչված էին հայկական ծխական դպրոցներն ուսուցիչներով ապահովելու գործին:

Ինստիտուտն ավարտելու նույն տարում 1887 թ. էլ Ջ. Տեր-Գրիգորյանն աշխատանքի է անցնում Ախալքալաքի Մեսրոպյան վարժարանում: Ջուզա-հեռաբար դասավանդում է նաև Ախալքալաքի ու Ախալցխայի այլ դպրոցներում: Հարուստ գիտելիքներ ունեցող և ուսանողներին կատարելապես տիրապետող երիտասարդ մանկավարժը, որ միաժամանակ օժտված էր մարդկանց հետ վարվեցողության բարձր մշակույթով ու կազմակերպչական ձիրքով, շուտով արժանանում է Ջավախքի հանրության համընդհանուր հարգանքին և սիրուն: Ջալալը շատ կարճ ժամանակում հարմարվում է նոր միջավայրին և իր գործունեության շուրջ քառորդ դարը նվիրում իր նոր հայրենիքի՝ Ջավախքի կրթամշակութային կյանքի կազմակերպմանը: Հատկանշական է, որ արցախցի մանկավարժին այդուհետ Այսրկովկասի հայ հասարակական շրջանակներն սկսում են ընկալել որպես Ջավախքի մտավորականության վառ անհատականություններից մեկը, հանրային նշանակության յուրաքանչյուր միջոցառման մասնակից դարձնում նրան: Պատահական չէ, որ դժվար է գտնել XIX դարավերջին և XX դ. առաջին տասնամյակներին Ջավախքում տեղի ունեցած կարևոր ձեռնարկ, որին անմասն մնար Ջ. Տեր-Գրիգորյանը:

#### Մանկավարժական-բարեսիրական գործունեությունը

Հարգելով մի խումբ ախալքալաքցի մտավորականների խնդրանքը՝ 1890 թ. հունվարի 21-ին «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» խորհուրդը թույլատրում է մասնաճյուղ բացել Ախալքալաքում: Խորեն ավագ քահանա Բարսեղյանի նախագահությամբ անցկացված մասնաճյուղի հիմնադիր ժողովն ընտրում է վարչություն՝ Աբրահամ Երիցփոխյան (նախագահ), Ջալալ Տեր-Գրիգորյան (գործավար) և Հարություն Հարությունյան (անդամ) կազմով: Գործադիր անդամների թիվը 23-ից հասնում է 60-ի: Մասնաճյուղն ավելի եռանդուն աշխատանք է ծավալում, երբ Ջ. Տեր-Գրիգորյանը դառնում է մասնաճյուղի փոխտնօրեն, ապա՝ տնօրեն: Կազմակերպությունն օգնություն է տրամադրում դպրոցներին, աղքատներին ու հիվանդներին: Տեր-Գրիգորյանն ու մասնաճյուղի մյուս անդամները ջանքեր են գործադրում աղքատների ու ծնողազուրկ երեխաների համար արհեստանոց բացելու ուղղությամբ: Սակայն իշխանություններն արհեստանոցի բացման արտոնություն չեն տալիս<sup>3</sup>:

<sup>2</sup> Կարապետյան և Մեսրոպյան դպրոցների մասին մանրամասն տե՛ս Ա. Մելքոնյան. 2005:

<sup>3</sup> Տե՛ս Երեսնամեակի հայոց բարեգործական ընկերության Կովկասում. 1881–1911, 1911, էջ 196:

«Կովկասի Հայոց բարեգործական ընկերության» Ախալքալայի և Ախալքալաքի մասնաճյուղերը մեծ ու շնորհակալ աշխատանք են կատարում հատկապես 1895–1896 թթ. համիդյան կոտորածներից խույս տված արևմտահայ գաղթականներին նյութական օգնություն ցուցաբերելու և նրանց ապաստան տալու գործում: Ժամանակակիցների վկայությամբ՝ այդ հարցում հատկապես մեծ աշխատանք է կատարում Զ. Տեր-Գրիգորյանը:

1892 թ. դեկտեմբերի վերջին Զ. Տեր-Գրիգորյանը Թիֆլիսի Խոջեվանքի գերեզմանատանը մասնակցում է «Մշակ» թերթի խմբագիր Գր. Արծրունու հուղարկավորությանը որպես Զավախքի ներկայացուցիչ, որտեղ և ծանոթանում է Հովհ. Թումանյանի հետ: Այդ ժամանակվանից սկսվում է նրա մտերմությունն ապագա հայ մեծանուն բանաստեղծի հետ<sup>4</sup>: Զալալն սկսում է գործակցել Թիֆլիսի «Կովկասի Հայոց հրատարակչական ընկերության» հետ:

**Հասարակական-քաղաքական գործունեությունը**

Մանկավարժական ու բարեսիրական գործունեությանն առընթեր՝ Տեր-Գրիգորյանը ծավալում է նաև հասարակական-քաղաքական գործունեություն: Ըստ Ախալքալաքի գավառագիտական թանգարանում պահվող մի թղթածրարի՝ 1890-ական թվականների սկզբին նա Պողոս Աբելյանի հետ ստեղծվում է ազատագրական խմբակ<sup>5</sup>: Այն գտնվում էր Հայ հեղափոխական դաշնակցության ազդեցության տակ: Հնարավոր է, որ վերջինիս հիմքի վրա էլ ձևավորվում է ՀՅԴ տեղական կազմակերպությունը<sup>6</sup>: Այն ջախջախելու ցարական իշխանությունների ջանքերն ապարդյուն են անցնում: Հալածանքների են ենթարկվում նաև Զ. Տեր-Գրիգորյանն ու նրա ընկերները, որոնց դատարանում պաշտպանելու գործը ստանձնում է 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության ապագա վարչապետ Համո Օհանջանյանի քույրը՝ Սաթենիկը<sup>7</sup>: Վերջինիս հետ Զալալը գործընկերային ջերմ հարաբերություններ էր հաստատել Ախալքալաքի Մեսրոպյան վարժարանում համատեղ աշխատանքի ընթացքում և թրծվել էր հայկական դպրոցները փակելու կառավարության քաղաքականության դեմ պայքարում:

Փաստերը հուշում են, որ Զավախքում հեղափոխական շարժման կենտրոնը Մեսրոպյան ու Սանդիստյան դպրոցներն էին: Հայրենասիրական պաթոսը նկատելի էր անգամ պատանի աշակերտների մոտ: Զալալ Տեր-Գրիգորյանի, Սաթենիկ Օհանջանյանի, դպրոցի տնօրեն Խաչատուր Դիլանյանի հայրենաշունչ գաղափարներով տոգորված 11–12 տարեկան աշակերտները, որոնց թվում ապագա Առաջին Հանրապետության նախարարներ Ռուբեն Տեր-Մի-

<sup>4</sup> Զ. Տեր-Գրիգորյանի վկայությամբ՝ թաղման արարողության կազմակերպչական գործը զբղված է եղել Հովհ. Թումանյանի վրա, որին նա ներկայացել է ասելով՝ «Զալալ Տեր-Գրիգորյան, Ախալքալաքից» (տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում, 1969, էջ 401):

<sup>5</sup> Տե՛ս Ախալքալաքի գավառագիտական թանգարան (Ա ԳԹ), գործ 3674, թ. 1–10:

<sup>6</sup> ՀՅԴ Ախալքալաքի կազմակերպության ձևավորման մասին տե՛ս Գ. Խոսրոսյան. 2000, էջ 116, հմմտ. Ա. Մելքոնյան. 2003, էջ 241–242:

<sup>7</sup> Տե՛ս Ա ԳԹ, գործ 3674, թ. 8:



նասյանն ու Արտաշես Չիլինգարյանը (Դարբինյան), հնարավոր ամեն ինչով զինվելով, 1890-ական թվականների կեսերին՝ իրենց պատկերացնելով վիպասան Ռաֆֆու վեպերի հայրենասեր հերոսների դերերում, ոտքով ճանապարհ են ընկնում Արևմտյան Հայաստան՝ էրզիրն ազատագրելու և սուլթանի Համիդից վրեժ լուծելու նպատակով: Ոստիկանությունը մի քանի օր երեխաներին փնտրելուց հետո նրանց հայտնաբերում է Կարսի մերձակայքում Մազրա գյուղում: Պատանիների հանդուգն քայլի համար բռնություններ են սկսվում ուսուցիչների՝ Ջալալի, Սաթենիկի, Դիլանյանի, Բագրատ Պիճիկյանի, աշակերտների ծնողների նկատմամբ: Մեծ դժվարություններ հաջողվում է դպրոցը փակելուց փրկել<sup>8</sup>:

Ժամանակի մամուլում հանդիպող կցկտուր տեղեկություններից երևում է, որ Ջ. Տեր-Գրիգորյանը քաջատեղյակ է եղել Հայ եկեղեցու գործերին<sup>9</sup>, մասնակցություն է ունեցել նրա գույքը բռնագրավելու վերաբերյալ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ համազգային պայքարին, դատապարտել է 1905–1906 թթ. ազգամիջյան շարժեր հրահրելու ցարիզմի քաղաքականությունը, հնարավոր նպաստ բերել Արևմտյան Հայաստանում հայդուկային շարժման ծավալմանը: Հայկական դպրոցները փակելու դեմ հուժկու շարժմանը նրա մասնակցությունից հետո իշխանությունների ճնշման տակ 1906 թ. վերջին որոշվում է Ջալալին ազատել Ախալքալաքի Մեսրոպյան վարժարանի հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնից<sup>10</sup>:

#### Գրական գործունեությունը

XIX դ. վերջից, ավելի բուռն կերպով XX դարասկզբից Ախալքալաքում և նրա սահմաններից դուրս սկսում են գործել ջափախքցի գրական–մշակութային կյանքի բազմաթիվ նշանավոր դեմքեր՝ գրողներ Արշակ Մադոյանը (Սեյլան), Դերենիկ Դեմիրճյանը, Վարդան Շահպարտյանը, Դազար Տեր-Գրիգորյանը (Ջավախեցի), ավելի ուշ՝ վերջինիս երբայր Վահան Տերյանը, հրապարակախոսներ Բագրատ Պիճիկյանը, Պողոս Աբելյանը, պատմաբան Եղիշե (Հովակիմ) Գեղամյանցը, ազգագրագետ Երվանդ Լալայանը<sup>11</sup> և ուրիշներ: Ուշագրավ է, որ ծագումով արցախցի Ջ. Տեր-Գրիգորյանը, որն արդեն իր հրատարակած բազմաթիվ ստեղծագործությունների տակ ստորագրում էր Սալյուսյան գրական կեղծանունով, դառնում է ջափախքյան գրական աշխարհի ներկայացուցիչների գործունեության համակարգողը: Ժամանակի մամուլում հատկապես «Մշակ», «Տարագ», «Մուրճ», «Արձագանք», «Աղբյուր» և այլ պարբերականներում, տպագրվում են Տեր-Գրի-

<sup>8</sup> Տե՛ս Ռ ո լ է է ն. 1982, էջ 333:

<sup>9</sup> Տե՛ս Ս ա լ լ ի լ մ ե ա ն. 1903, թիվ 1, էջ 181–185:

<sup>10</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 22, ց. 1, գ. 189, թ. 5:

<sup>11</sup> Ի դեպ, Ալեքսանդրապոլում ծնված, բայց ծագումով Արցախի հնագույն գերդաստաններից մեկի զավակ Երվանդ Լալայանին էլ վիճակված էր տեղափոխվել Ջափախք, այնտեղ ամուսնանալ տեղի ճանաչված հասարակական գործիչ Արտեմ Հարությունյանի դստեր՝ Հայկանուշի հետ և երկար տարիներ ուսուցչությամբ ու գիտական գործունեությամբ զբաղվել Ախալքալաքում, հետագայում հեղինակել Ջափախքին վերաբերող արժեքավոր աշխատություններ (տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. 1983, էջ 7–32):

գորյանի բազմաթիվ գրական երկեր, գրախոսություններ, թարգմանություններ, Զավախքի խնդիրներին վերաբերող թղթակցություններ:

1895 և 1901 թթ. Զավախք է այցելում հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը: Նրան հյուրընկալելու պատիվը տրվում է տեղի մտավորականներ Զալալ Տեր-Գրիգորյանին, Գրիգոր Վանցյանին, Սեդրակ Աղաբալյանին, Վարդան Շահպարտյանին, Ղազար Զավախեցուն և այլոց, որոնց ուղեկցությամբ բանաստեղծը շրջում է Ախալքալաքում, մեկնում Թմկաբերդ, Փարվանա, լինում մի շարք գյուղերում, Թափարվան և Քառասնաղբյուր գետակների ձորերում, Տավշան թափա ծաղկավետ բլրակի շրջակայքում: Ախալքալաքում կազմակերպվում է մեծ ընդունելություն: Առաջին այցելությունից հետո, երբ Թումանյանը տեղեկացել էր Թմկաբերդի լեգենդի մասին, Տեր-Գրիգորյանի վկայությամբ՝ արդեն գրել էր ապագա պոեմի որոշ հատվածներ և երկրորդ այցի ժամանակ, դրանք մեծ ոգևորությամբ արտասանում էր իր հետ Կուրի աջափնյա բարձունքի վրա գտնվող հայկական Գումբուրդո գյուղ մեկնելու ճանապարհին: Վերոհիշյալ գյուղի բարձունքից էլ բանաստեղծը հեռադիտակով դիտել էր գետի ձախ ափին վեր խոյացող Թմկաբերդը: Բերդը դիտելու պահին էլ Տեր-Գրիգորյանը լուսանկարչական սարքով անմահացրել էր Մեծ լոռեցուն<sup>12</sup>: Զավախքյան այցելությունների արդյունքում ծնվում են Թումանյանի «Թմկաբերդի առումը» ու «Փարվանա» անմահ ստեղծագործությունները:

Հայ գրողների ոսկեբույլի՝ հատկապես Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Ավ. Իսահակյանի, Ալ. Շիրվանզադեի, Լ. Շանթի, Վ. Թեքեյանի և այլոց հետ Զ. Տեր-Գրիգորյանի մտերմությունը խորանում է 1899 թ. Թիֆլիսում հիմնադրված «Վերնատուն» գրական ակումբի աշխատանքներին նրա մասնակից դառնալուց հետո: «Բացի տանտիրոջից (Թումանյանից) մինչև այդ էլ, – իր հուշերում գրում է Սալլյունյանը, – դեռ իմ ուսանող եղած ժամանակից, ես մոտ ծանոթ ու բարեկամ եմ եղել նաև Ղ. Աղայանին, Դ. Դեմիրճյանին, (նրանց – Ա. Մ.) ճանաչում էի պատանեկության տարիներից, Ավ. Իսահակյանը շաբաթներով ինձ մոտ հյուր է եղել: Այդ էր պատճառը, որ ես ինձ օտար չէի զգում «Վերնատան» անդամների շրջանում»<sup>13</sup>: Հայ դասականների հետ շփումները նոր թափ են հաղորդում Սալլյունյանի գրական-ստեղծագործական աշխատանքներին: Նա հեղինակում է բազմաթիվ երկեր, ուսական ու ելրոպական դասական գրականությունից թարգմանություններ կատարում<sup>14</sup>, ամեն անգամ Ախալքալաքից երկար ճանապարհ անցնելով

<sup>12</sup> «Նա հեռադիտակը հարմարեցրեց, – հիշում է Զ. Տեր-Գրիգորյանը, – ու, խողովակի ծայրը դնելով աչքին, սկսեց երկար նայել, հետախուզել պատմական Թմկաբերդի շրջակայքը: Ես էլ օգտվելով հանգամանքից՝ լուսանկարեցի բանաստեղծին» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 403): Հովհ. Թումանյանի Զավախքյան այցելությունների մասին տե՛ս նույն տեղում, էջ 377, 401–404, 417–436:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 404:

<sup>14</sup> Սալլյունյանը թարգմանել է Լ. Տոլստոյի «Աստված ճշմարտությունը տեսնում է, բայց շուտ չի հայտնում», Մ. Գորկու «Մրկահավի երգը», Ն. Գոգոլի «Խելագարի հիշատակարանը», Վ. Շեքսպիրի «Անտոնի սանձահարու-

Թիֆլիսում մասնակից է դառնում «Վերնատան» գրական բուռն քննարկումներին:

Թումանյանի տանը Տեր-Գրիգորյանը ծանոթանում և շատ տպավորվում է ուսուսանողի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ, Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում գրական-մշակութային, հասարակական-քաղաքական հայանպաստ գործունեություն ծավալած Սերգեյ Գորոդեցկու<sup>15</sup> հետ հանդիպումներից, ծանոթություն է հաստատում Արևմտյան Հայաստանում Առաջին աշխարհամարտի տարիներին մեծ ճանաչում ձեռք բերած ուսուսանող Ալեքսանդր Կուլեբյակինի<sup>16</sup>, հայ քաղաքական գործիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի և այլոց հետ: Սալլումյանի համար իսկական անակնկալ է դառնում ծանոթությունը ուսուսանող, դերասան, Հայկական թատերական ընկերությունից պատվավոր անդամ Ալեքսանդր Սումբատով-Յուժինին հետ: «Թումանյանը ինձ ներկայացրեց Սումբատով-Յուժինին, – գրում է Սալլումյանը, – հայտնելով, որ նրա «Դավաճանություն» պիեսի հայ թարգմանիչն եմ: Յուժինը շնորհակալություն հայտնեց «ուշադրություն» համար»<sup>17</sup>:

Ջ. Տեր-Գրիգորյանը ջերմ հարաբերություններ ուներ ինչպես Թիֆլիսահայ, այնպես էլ Ջավախահայ մտավորականության հետ: Նա առիթը բաց էր թողնում Ջավախեցիներին հիշեցնելու, որ ինչպես ինքը, այնպես էլ Հայաստանի այլ շրջաններից Ախալքալաք տեղափոխված այլ գործիչներ՝ ազգագրագետ, ուսուցիչ Երվանդ Լալայանը, «Մուրճ» ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանը<sup>18</sup> և ուրիշներ անսահման սիրով են լցված Ջավախահայության նկատմամբ ու այդ երկրամասն ընկալում են որպես իրենց ծննդավայր: Պատահական է, որ Ախալքալաքում ծնված Ջալալի զավակներից դուստրը՝ Վեհիկ (ծնվել է կամ 1902 կամ 1903 թթ.), որ խորհրդային տարիներին պետք է դառնար ճանաչված գեղանկարիչ, իրեն լիովին Ջավախցի էր համարում<sup>19</sup>:

Գործունեությունն Առաջին աշխարհամարտի և հետպատերազմյան տարիներին

Սալլումյանն իր Ջավախքյան հայրենանվեր գործունեությունը շարունակում է Առաջին աշխարհամարտի դժվարին օրերին: Նա մինչև 1916 թ. զբաղեցնում էր Ախալքալաքի արդեն չորսդասյա դարձած Մեսրոպյան

---

մը», Ս. Պշիբեղևսկու «Ձյուն» և այլ երկեր, հեղինակել է շվեյցարացի նշանավոր մանկավարժ Յոհան Պեստալոցցիին նվիրված մենագրություն:

<sup>15</sup> Տե՛ս Ա. Закарян. 2015.

<sup>16</sup> Տե՛ս Ա. Закарян. 2003, с. 31, 33.

<sup>17</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 408:

<sup>18</sup> Ավ. Արասխանյանը 1912 թ. նշանակվել էր Ախալքալաքի դպրոցների տեսուչ: Նրա մահվանից հետո Ջ. Տեր-Գրիգորյանին հանձնարարվել էր գործչի դին Թիֆլիսի Խոջեվանքի գերեզմանատուն հասցնել և Ախալքալաքցիների անունից դամբանական ճառ արտասանել (նույն տեղում, էջ 406–407):

<sup>19</sup> Վեհիկ Ջալալի Տեր-Գրիգորյանի մասին տե՛ս Հանրագիտական բառարան, 2018, հ. 2, էջ 978:

դպրոցի տեսուչի պաշտոնը<sup>20</sup>: Պատերազմի պատճառով ստեղծված ծանր իրավիճակում նա առժամանակ թողնում է այդ պաշտոնը և ավելի շատ նվիրվում Մեծ եղեռնից հետո Զավախքում հաստատված արևմտահայ գաղթականներին օգնելու, 1918 թ. գարնանն Ախալքալաքի գավառը թուրքերից պաշտպանելու, Բակուրիանի անտառներում և Ծաղկայի գյուղերում հաստատված ախալքալաքցի սովյալներին օգնություն ցուցաբերելու գործին:

1918 թ. մայիսին թուրքերի կողմից Զավախքի գրավումից հետո Զ. Տեր-Գրիգորյանը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ էլ անդամակցում է Թիֆլիսսարնակ ախալքալաքցիներից կազմված «Ախալքալաքի Հայրենյաց (Հայրենակցական – Ա. Մ.) միությունը», որը Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ մեծ աշխատանք է կատարում գավառը թուրքերից ազատելու, գաղթականներին հայրենի բնակավայրեր վերադարձնելու, սովի ու համաճարակների դեմ պայքարելու համար: Վարչություն մեջ մտնում են ճանաչված հասարակական գործիչներ Պ. Աբելյանը (քարտուղար), Բ. Օհանջանյանը (նախագահ), Կ. Շահպարտյանը և ուրիշներ<sup>21</sup>:

Մինչև Վրաստանի խորհրդայնացումը Զ. Տեր-Գրիգորյանը ստիպված է լինում մնալ Թիֆլիսում՝ չկարողանալով վերադառնալ սոցիալ-տնտեսական ու քաղաքական դժվարին պայմաններում հայտնված Ախալքալաքի գավառ: Նա, Վրաստանի մայրաքաղաքում չունենալով մշտական աշխատանք, հայտնվում է նյութական ծանր վիճակում: 1921 թ., երբ Հովհ. Թումանյանը ստանձնել էր Հայաստանի օգնություն կոմիտեի նախագահի պաշտոնը, կարողանում է խորհրդային Հայաստանի իշխանություններից ստացած սուղ նյութական միջոցներից ի թիվս Թիֆլիսսարնակ այլ հայ գրողների, բաժին հանել նաև Զ. Տեր-Գրիգորյանին<sup>22</sup>:

1922 թ. սեպտեմբերին, հավանաբար, ՀՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի հրավերով Տեր-Գրիգորյանը տեղափոխվում է խորհրդային Հայաստան: Դրանով ավարտվում է նրա կենսագրության «Զավախքյան» էջը: Սակայն այդուհետև ևս, ինչպես վկայում են մեզ հասու աղքատիկ տվյալները, Զ. Տեր-Գրիգորյանը շարունակել է իր մանկավարժական գործունեությունը Զալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան), դարձել Դիլիջանի մանկավարժական տեխնիկումի տնօրեն, անդամակցել Հայ գրողների միությանը<sup>23</sup>:

<sup>20</sup> Տե՛ս Ս. Զ ու ո ն ա ջ յ ա ն. 2002, էջ 234:

<sup>21</sup> Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, էջ 291:

<sup>22</sup> Տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 414:

<sup>23</sup> «Հայկական սովետական հանրագիտարանում» Զ. Տեր-Գրիգորյանին վերաբերող հոդվածում (տե՛ս 1985, հ. 11, էջ 666) գրված է, որ նա լուսավորության բնագավառում երկարամյա բեղմնավոր աշխատանքի համար 1931 թ. արժանացել է Հայաստանի աշխատանքի հերոսի կոչման: Այս «փաստը», որ խիստ կասկածելի է, ավելի ճիշտ՝ թյուրիմացության հետևանք, տեղ է գտել հետագայի այլ հրատարակություններում և համացանցում: Նախ՝ «Հայաստանի աշխատանքի հերոս» կոչում չի եղել, հետո էլ 1938 թվականից շնորհվող ԽՍՀՄ սոցաշխատանքի հերոսների ցանկում նրա անունը բացակայում է: Բացի այդ՝ գրեթե բացառված էր, որ նախահեղափոխական շրջանում ազգային գործունեություն ծավալած նման գործչին ստալինյան ղեկավարությունն արժանացներ այդպիսի պատվի:

*Մեծ հայրենասեր գործչի կյանքի թեյը կտրվում է 1940 թ. օգոստոսի 31-ին: Շատ ուշագրավ է, որ նրան հողին են հանձնում իր հայրենի Արցախում՝ ծննդավայր Մաղավուզում, որտեղից նա դուրս էր եկել դեռ պատանեկան տարիներին, բայց երբեք հոգևոր կապը չէր կտրել նրա հետ, և գիտակցական կյանքը նվիրելով Ջավախքին՝ շարունակել էր մնալ իսկական արցախցի՝ համահայկական ազգային ընկալումներով:*

#### Եզրակացություն

*Ամփոփելով հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկի՝ Ջալալ Տեր-Գրիգորյանի հարուստ կենսագրություն միայն համառոտ, այն էլ՝ ջավախքյան շրջափուլը, կարելի է արձանագրել, որ XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գործիչներից շատերին բնորոշ է եղել համահայկական մտածողությունը, փոքր հայրենիքից՝ ծննդավայրից մինչև մեծ հայրենիքին ծառայելու գիտակցումը:*

Աշոտ Մելքոնյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Պատմության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ պատմական ժողովրդագրություն, Հայոց ցեղասպանություն, պետականության պատմություն: Հեղինակ է 18 մենագրության և շուրջ 450 հոդվածի: ashamelk@yahoo.com

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գործ 3674, թ. 1–10:

Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում. 1881–1911, 1911, տպ. Մն. Մարտիրոսեանցի, կազմեց Լէօ, Թիֆլիս, 360 էջ:

Ջուռնալյան Ս. 2002, Ջավախք. ժամանակագրություն, ակնարկներ Ախալքալաքի ամբողջական պատմության, Երևան, Հայաստան, 622 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում, 1969, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1000 էջ, 1 թ. դիմանկար:

Լալայան Ե. 1983, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 457 էջ, 1 թ. նկ.:

Խուրդինյան Գ. 2000, Հայ յեղափոխական դաշնակցության ծնունդը, Երևան, Արտագերս, 226 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 22, ց. 1, գ. 189, թ. 5:

Հանրագիտական բառարան, 2018, հ. 2, Երևան, Հանրագիտարան հրատարակչություն, 1443 էջ:

Հայկական սովետական հանրագիտարան, 1985, հ. 11, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ, 34 ներդիր + 1 մեջդիր:

Մելքոնյան Ա. 2003, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, «Ջանգակ-97», 544 էջ:

Մելքոնյան Ա. 2005, Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար–20-րդ դարի սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ. հրատ., 178 էջ:

Մելքոնյան Ա. 2018, Արցախը հայոց պետականության պատմության հոլովություն. – «Արցախը հայոց պետականության համար պայքարի քառուղիներում», մի-

ջազգային գիտաժողով, 23 փետրվարի 2018, գեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ՊԱԱ պատմության ինստ. հրատ., էջ 44–73:

Ռուբին. 1982, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Զ, Թեհրան, «Ադա-նա», 460 էջ:

Սալլիւմեան. 1903, թիվ 1, Ախալքալաքի գաւառի եկեղեցական հաշիւները. – «Սուրճ», էջ 181–185:

Закарян А. 2003, Александр Кулебякин и Армения. Ереван, авторское изд., 238 с.

Закарян А. 2015, Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 230 с.

ԺՋԱԼԱԼ ԹԵՐ-ԳՐԻԳՐՅԱՆ (ՏԱԼԼՅՈՒՄՅԱՆ):  
АРЦАХСКИЙ СЫН ДЖАВАХКА

ԱՇՈՏ ՄԵԼԿՈՅԱՆ

Р е з ю м е

*Ключевые слова:* Арцах, Джавахк, Джалал Тер-Григорян (Саллюмян), «Вернатун».

Арцах известен своими деятелями, сыгравшими значительную роль в развитии образовательной и культурной жизни армян как крупных, так и малых городов различных областей Армении, Закавказья и Европы. К сожалению, деятельность представителей арцахской интеллигенции в провинциальных городах до сих пор мало изучена. Среди таких деятелей Арцаха выделяется Джалал Тер-Григорян (литературный псевдоним – Саллюмян), который в течение многих лет вел общественную, педагогическую и литературную деятельность в Джавахке.

Дж. Тер-Григорян родился 21 апреля 1866 г. в селе Магавуз Джебаширского уезда Елизаветпольской губернии (ныне Мартакертский район НКР). Молодой педагог, обладающий богатыми знаниями и в совершенстве владеющий русским, вскоре назначается на должность учителя Месропянского училища Ахалкалаки, где завоевывает всеобщее уважение и любовь джавахкской общественности. С конца XIX века Саллюмян становится одним из координаторов деятельности литературных кругов армянских писателей Тифлиса и Джавахка, автором многих литературных произведений.

С участием Дж. Тер-Григоряна в начале 1890-х годов в Ахалкалаки начинает действовать национально-освободительный кружок, а Месропянская школа превращается в центр распространения общенациональных идей. Молодой Джалал активно участвует в оказании помощи западноармянским беженцам 1890-х годов и периода Первой мировой войны, в борьбе против политики царских властей в отношении Армянской

Апостольской церкви, в организации обороны Ахалкалакского уезда от турецких захватчиков весной 1918 г.

В сентябре 1922 г. Саллюмян переезжает в Советскую Армению, продолжая свою литературную и педагогическую деятельность до 1940 года – конца своей жизни. Его хоронят в родном Магавузе, откуда он уехал, когда был еще подростком. Дж. Тер-Григорян всю свою сознательную жизнь посвятил Джавахку, одновременно оставаясь истинным сыном родного Арцаха и всей Армении.

*Ашот Мелконян – д. и. н., проф., академик НАН РА, директор Института истории. Научные интересы: историческая демография, Геноцид армян, история государственности. Автор 18 монографий и около 450 статей. ashamelk@yahoo.com*

JALAL TER-GRIGORYAN (SALLYUMYAN):  
JAVAKHK'S SON OF ARTSAKH

ASHOT MELKONYAN

Summary

*Key words: Artsakh, Javakhk, Jalal Ter-Grigoryan (Sallyumyan), "Vernatun".*

Artsakh is known for its figures who had a significant role in the development of the educational and cultural life of Armenians in big and small cities of various regions of Armenia, Transcaucasia and Europe. Unfortunately, the activities of representatives of the Artsakh intelligentsia in provincial cities are still poorly known. Among such figures is Jalal Ter-Grigoryan (the literary pseudonym of Sallyumyan) who for many years led public, pedagogical and literary activities in Javakhk.

J. Ter-Grigoryan was born on April 21, 1866 in the village of Maghavuz of the Jevanshir district, Elizavetpol province (currently: the Martakert region of the Nagorno-Karabakh Republic). The young intellectual with a wealth of knowledge and fluent in Russian language, soon, as a teacher at the Mesropyan School of Akhalkalaki won huge respect and love of the whole Javakhk community. Starting from nearly the end of the 19th century Sallyumyan, being the author of many literary works has become one of the coordinators of the literary circles' activities of the Armenian writers in Tiflis and Javakhk.

In the early 1890s, with the participation of J. Ter-Grigoryan a national liberation group began to operate in Akhalkalaki, then the Mesropyan School turned into a center for the dissemination of national ideas. Young Jalal was actively got involved in helping the Western Armenian refugees of the 1890s and during the First World War, in the struggle against the policy of the Tsarist

authorities in relation to the Armenian Apostolic Church, in organizing the defense of the Akhalkalaki district from Turkish invaders during the spring of 1918.

In September of 1922 Sallyumyan moved to Soviet Armenia, continuing his literary and pedagogical activity until end of his life in 1940. He was buried in his native village Maghavuz, the place he left when he was still a teenager. Jalal Ter-Grigoryan devoted his entire life to Javakhk, meanwhile remaining a true son of his native Artsakh and Armenia in general.

*Ashot Melkonyan – Doctor of Sciences in History, Professor, NAS RA Academician, Director of the Institute of History. Scientific interests: historical demography, Armenian Genocide, history of statehood. Author of 18 monographs and about 450 articles. ashamelk@yahoo.com*



ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՈ  
ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍՈՒՈՒՄ  
(XXI դարի առաջին տասնամյակ)\*

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-72>

Բանալի բառեր՝ Վրաստան, Վրաց Ուղղափառ եկեղեցի, Թբիլիսի, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմ, եկեղեցիներ, Ջավախք, Լոռի, Գուգարք, Տայք, ուղղափառ (օրթոդոքս) հայուկություն, վրաց հասարակական-քաղաքական և գիտական շրջանակներ, մամուլ:

Նախաբան

Ներկայիս Վրաստանի տարածքում գտնվող կանգուն, կիսավեր կամ ավերված եկեղեցիների<sup>1</sup>, խորհրդային կարգերի օրոք Հայ Առաքելական եկեղեցու (ՀԱԵ) Վիրահայոց թեմից խլված ունեցվածքի, եկեղեցապատկան կալվածքների (հողատարածքների և այլևայլ շարժական ու անշարժ գույքի) Վիրահայոց թեմին վերադարձնելու գործընթացը մինչ օրս տեղի չի ունեցել:

Վրաստանի անկախացումից ի վեր չընդունվեց կրոնական կազմակերպությունների ոլորտը կանոնակարգող և վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանող «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը: Պետության և Վրաց Ուղղափառ եկեղեցու (ՎՈՒԵ) միջև կնքված սահմանադրական համաձայնագրով (այն հաստատվել է խորհրդարանի կողմից 2002 թ. հոկտեմբերի 22-ին) երկրում բացառիկ արտոնյալ կարգավիճակ է շնորհված վերջինիս: ՎՈՒԵ-ն բացառիկ արտոնություններ, տնտեսական, ֆինանսական խոշոր կարողություններ ունեցող, միաժամանակ՝ ամենափակ ինստիտուտն է, որի գործունեությունը պետական ոչ մի օղակ չի կարող վերահսկել, ստուգել կամ հաշվետվություններ պահանջել<sup>2</sup>:

\* Ներկայացվել է 21. IX. 2021 թ., գրախոսվել է 16. XI. 2021 թ., ընդունվել է տպագրության 22. XI. 2021 թ.:

<sup>1</sup> Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (ներկայումս՝ Հիմնադրամ) հրապարակած քարտեզ-ցուցակի համաձայն՝ Վրաստանում հայկական եկեղեցիների թիվը 638-ն է: Եթե այս թվից հանենք Վրաստանից անջատված և մասամբ ճանաչված պետություններ Աբխազիայի ու Հարավային Օսիայի տարածքում գտնվող համապատասխանաբար 8 և 9 եկեղեցիները, ապա, ըստ նույն ցուցակի, Վրաստանում ներկայումս փաստացի հաշվվում է 621 եկեղեցի (տե՛ս Ս. Կարապետյան. Ցուցակ և քարտեզ, 1995): Սույն ցուցակում ներառված որոշ եկեղեցիներ (հատկապես՝ Ջավախքի հայաբնակ շրջաններում գտնվող) առանձին բարերարների կողմից 1995 թ. ի վեր այս կամ այն չափով նորոգվել են:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Վ. Սարգսյան. 2021, № 2, էջ 134–149:

Վրաստանում գործող բոլոր եկեղեցիները, ներառյալ՝ ՀԱԵ Վիրահայոց թեմը, հետխորհրդային ողջ ընթացքում հանդես են եկել կրոնական կազմակերպությունների մասին օրենքի ընդունման պահանջով, որով կկանոնակարգվեր նաև խորհրդային կարգերի օրոք եկեղեցիներից խլված գույքի, պատմաճարտարապետական հուշարձանների, հողատարածքների և այլնի վերադարձման գործընթացը, այնպես, ինչպես դա տեղի էր ունենում ՎՈՒԵ-ի պարագայում: Վրաստանի իշխանությունները, սակայն, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի բացակայության պայմաններում, ի պատասխան բարձրաձայնվող պահանջների, այլ կրոնական համայնքներին մշտապես առաջարկել են գրանցվել որպես հասարակական կամ ոչ կառավարական կազմակերպություններ:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունման փոխարեն՝ 2011 թ. Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները հնարավորություն տվեցին երկրում գործող կրոնական միություններին, այդ թվում՝ ՀԱԵ Վիրահայոց թեմին, գրանցվել որպես հանրային իրավունքի սուբյեկտ<sup>3</sup>: Դրանով, սակայն, ոչ մի հիմնախնդիր չլուծվեց. օրենքը հնարավորություն չտվեց, որպեսզի ՀԱԵ Վիրահայոց թեմին վերադարձվի խորհրդային և հետխորհրդային տարիներին խլված ժառանգությունը: Օրենքով չկանոնակարգվեցին նաև ՀԱԵ Վիրահայոց թեմի հանրային իրավունքի դաշտում որպես կրոնական կազմակերպություն գործելու մեխանիզմները. այն շարունակում է հոգևոր-մշակութային, կրթական, սոցիալական, բարեգործական, գրասենյակային և այլ բնույթի ու բովանդակության գործունեություն ծավալելիս բավել վարչաիրավական բազմաթիվ խնդիրների:

### Վրաց հասարակական-քաղաքական և գիտական շրջանակների դիրքորոշումը

2000 թ. տեղի ունեցած ուռ-վրացական սահմանային հերթական միջադեպի առիթով «Ալիա» թերթին տված ծավալուն հարցազրույցում «Վրաստանի ավանդականների միություն» կուսակցության անդամ Իրակլի Մելաշվիլին անդրադարձել է Վրաստանի պետական սահմանի և սահմանագատման խնդիրներին, տեսակետ հայտնել այն մասին, թե Վրաստանի բոլոր հարևանները մշտապես տարածքներ են խլել Վրաստանից ու այսօր էլ ունեն նման հավակնություններ: Մեղադրելով Վրաստանի իշխանություններին քաղաքական կամք չցուցաբերելու և Վրաստանի ռազմավարական շահերի ու տարածքների հանդեպ անտարբերության մեջ՝ հասարակական գործիչը խոսում է նաև ՀՀ-Վրաստան սահմանային լարվածության և Խուճապի վանքի պատկանելության մասին. «Խուճապը վրացական եկեղեցի է<sup>4</sup>, այո,

<sup>3</sup> Տե՛ս Վրացական հասարակական-քաղաքական և գիտական շրջանակների դիրքորոշումը վրացական մամուլում ... 73

<sup>4</sup> 451 թ. Կոստանդնուպոլսի արվարձան Քաղկեդոնում (այժմ՝ Կադըք-քյոյ) գումարված չորրորդ Տիեզերածողովից սկիզբ առած վարդապետությունը՝ քաղկեդոնականությունը (ուղղափառություն, օրթոդոքսություն), սկսած Ամենայն Հայոց եզր Ա Փառաժանակերտցի (630-641) կաթողիկոսից մինչև Հովհան Օձնեցի կաթողիկոսի գահակալության սկիզբը, Հայաստանում տիրապետող դավանանքն էր: Հ. Օձնեցին 726 թ. Մանագլեքում գումարում է եկեղեցական ժողով և մերժում

փաստաթղթերի համաձայն՝ վրացական է, իսկ հայերը, ձեռքի տակ ունենալով միայն մեկ փաստաթուղթ, փորձում են հաստատել, որ այն հայկական է և իրենցն է (համաձայն այդ փաստաթղթի՝ 20-ական թթ. վերջում Անդրկովկասյան բյուրոն<sup>5</sup>, որի կազմում կային երկու հայ և մեկ ադրբեջանցի, որոշում ընդունեց այդ տարածքը վրացական գյուղխորհրդից անջատել և միացնել Հայաստանի գյուղխորհրդին): Դրա հետևանքով վերը նշված իրոք գեղաաբանչ եկեղեցիներից մեկը հայտնվեց Հայաստանի տարածքում»<sup>6</sup>: Վրացի գործիչը չի մանրամասնել, թե ինչ փաստաթղթերի մասին է խոսքը: Իրականում, սակայն, տեղի է ունեցել ճիշտ հակառակ գործընթացը. 1921 թ. նոյեմբերի 6-ին Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանն ու Վրաստանի Հեղկոմի նախագահ Բ. Մդիվանին թիֆլիսում կնքել են հայ-վրացական սահմանի մասին պայմանագիրը, և եթե այդ պայմանագրով Ալեքսանդրապոլի ու Ախալքալաքի սահմանադատման հիմքում ընկած էր ցարական վարչաբաժանման սահմանագիծը (որը ևս հետագա տարիներին աղավաղվեց հօգուտ Վրաստանի), ապա Լոռու «Չեզոք գոտին» (որը բա-

քաղկեդոնական վարդապետությունը: 607–608 թթ. [Աբրահամ Ա Աղբաթանեցի (607–615) կաթողիկոսի օրոք] վրաց հոգևորականությունը ևս քաղկեդոնականություն է ընդունում ու բաժանվում ՀԱԵ-ից (Ուխտանէս. 1871, էջ 132–136): Ուղղափառություն (օրթոդոքսություն) համար պայքարը շարունակվել է նաև X–XI դարերում ու զգալի կերպով գլուխ բարձրացրել XII–XIII դարերում վրաց պետության ուժեղացման և Հայաստանում Իվանե ու Ջաքարե Ջաքարյան եղբայրների տիրապետության ժամանակաշրջանում: Նշված փուլերում Տայքում, Գուգարքում և այլուր կառուցված հայ ճարտարապետության հոյակերտ նմուշները ևս կրել են ուղղափառության ազդեցությունը, որոնց մի մասը, ինչպես, օրինակ, Խուճապի վանքը (IX–XIII դդ.), կառուցվել են ավելի վաղ գոյություն ունեցած վանքերի կամ եկեղեցիների շուրջ: Բնականաբար, VII դ. ուղղափառ հայությունը ստեղծած պատմաճարտարապետական հուշարձանների վրա արձանագրվող առաջնային լեզուն հայերենն էր, քանի որ քաղկեդոնականությունը պաշտոնապես ընդունված էր Ամենայն Հայոց կաթողիկոսության կողմից: Մինչդեռ X–XIII դարերում, երբ արդեն քաղկեդոնական շրջանակները ոչ միայն չէին հովանավորվում Ամենայն Հայոց կաթողիկոսության կողմից, այլև՝ ընդհակառակը, մերժված էին, ուղղադավան հայությունը տաճարների վրա զանգվածորեն ի հայտ է գալիս վրացերենը: Սա է ուղղադավան հայության ճարտարապետական հուշարձանների վրա վրացերեն արձանագրությունների հայտնվելու գլխավոր պատճառը: Հատկանշական է, որ վրացական շրջանակների տվյալ հուշարձանները վրացական համարելու հիմքում հիմնականում ընկած է վրացերեն արձանագրությունների առկայությունը: Ամենևին չմերժելով այդ դարաշրջանի հուշարձանների վրա, բացի ուղղափառ դավանանքի ազդեցությունը, նաև վրացական միջավայրի ներգործության հնարավորությունը՝ այդուհանդերձ, այդ հանգամանքը չի կարող որոշիչ դեր ունենալ տվյալ հուշարձանի պատկանելությունն որոշելու գործում:

<sup>5</sup> 1922 թ. փետրվարի 18–22-ը ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի (Կովբյուրո) փոխարեն համագումարը, որպես երկրամասի կուսակցական կազմակերպությունների ղեկավար օրգան, ընտրել է ՌԿ(Բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեն: Այսինքն՝ Անդրկովկասյան կամ Կովկասյան բյուրոն 1920-ական թվականների վերջերին այլևս գոյություն չունի: Վրացի գործիչը, հավանաբար, նկատի ունի Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի (ԱնդրԿԳԿ) ստեղծած հողային հանձնաժողովներից ինչ-որ մեկը:

<sup>6</sup> “ճղոճ” («Ալիա» – «Վերադարձ»), 2000, № 72:

նակցային սեղանի վրա ստեղծված արհեստական վարչամիավոր էր) մնաց Հայկական իՍՆ-ի կազմում կորցնելով ևս մի քանի գյուղեր՝ Իրգանչայ, Սա- աթի, Ջանդար, Աղքյորփի, Օփրեթ, Խոժոռնի, Բրդաձոր, Սաղախլո գյուղերը մնացին Վրացական իՍՆ-ի կազմում: Սա նշանակում է, որ Լոռու «Ձեզոք գոտին» ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 7-ի հայտնի որոշմամբ ամբող- ջովին չի անցել Խորհրդային Հայաստանին<sup>7</sup>: 1932 թ. հրատարակված Հայկա- կան իՍՆ-ի քարտեզում<sup>8</sup> Աղքյորփի, Չանախչի և Բերդաձոր (Բրդաձոր) գյուղերն, իրենց չընկալված ընդարձակ տարածքներով, գտնվել են ՀԽՍՀ կազմի մեջ, իսկ Օփրեթ ու Սաղախլո գյուղերը նշված են ճիշտ սահմանագծի վրա: Դա փաստում է, որ, հավանաբար, 1921 թ. նոյեմբերի 6-ի պայմանագիրն անմիջապես չի իրագործվել:

Ի. Մելաշվիլու չփաստարկված տեսակետն է բառացիորեն կրկնում նաև վրաց չընկալներում հայտնի հայագետ, գրականագետ, բ. գ. դ., պրոֆ. Բ. Արվելաձենն՝ իր հրապարակումներից մեկում նշելով, թե, իբր, Խուճապա- վանքը<sup>9</sup> Հայաստանի սահմաններում է հայտնվել արհեստականորեն սահմա- նագիծն աննկատելիորեն առաջ քաշելու միջոցով<sup>10</sup>:

Խուճապավանքի «վրացապատկան լինելու», վանքին հարող տարածքը «ԽՍՀՄ ղեկավարության կողմից ՀԽՍՀ-ին նվիրելու», Հայաստան-Վրաս- տան սահմանի այդ հատվածը վերանայելու, վանքն այս կամ այն կերպ վրացական կողմի տնօրինությունը հանձնելու վերաբերյալ գրեթե նույնա- կան տեսակետներ է հայտնել «Խվալինդելի դղե» թերթը՝ մեջբերելով նաև պետական բարձրաստիճան երկու պաշտոնյայի տեսակետներ: Ըստ մշա- կույթի նախարարի տեղակալ Ն. Վաչեիշվիլու «... Խուճապավանքի տա- րածքը խորհրդային կարգերի օրոք անմտորեն փոխանցվել է Հայաստանին: ... 90-ական թթ. սկզբներին Արվեստի պատմության ինստիտուտը (խոսքը, հավանաբար, Վրաստանի գիտությունների ակադեմիայի համանուն ինստի- տուտի մասին է – Վ. Ս.) արխիվային հատուկ հետազոտություն անցկացրեց, որտեղ մեկ անգամ ևս հաստատվեց պատմական հուշարձանի փոխանցման անհրաժեշտության փաստը: ... Եթե հետագայում սահմանագատումից հե- տո, չհասնենք ինչ-որ համաձայնություն, և եկեղեցին մնա իրենց տա- րածքում, պետք է հաջողեցնենք, որ Խուճապը ՎՈՒԵ-ի ներքո անցնի»<sup>11</sup>:

Խորհրդարանական Լ. Բերձենիշվիլին ևս անդրադառնում է սահմանա- գատման աշխատանքների կարևորությունը՝ քննադատելով այդ ոլորտում տիրող քառասային իրադրությունը, որի պատճառով, ըստ նրա, անորոշ վիճա- կում է «խլված տարածքների» վերադարձման, ինչպես նաև անտերություն

<sup>7</sup> Ա. Մ Ե Լ ք ո ն յ ա ն. 2003, էջ 345:

<sup>8</sup> Карта Социалистической Советской Республики Армении. 1932.

<sup>9</sup> Խուճապավանքի եկեղեցին նաև առանձնանում է ավագ խորանի վրա երեք լուսամուտ ունենալու իրողությամբ: Գիտնականներն առանձնացնում են Հայաս- տանի տարբեր վայրերում նման ձևով կառուցված շուրջ մեկուկես տասնյակ (16) այլ հուշարձաններ: Ավագ խորանի վրա երեք լուսամուտ ունենալու հանգաման- քը բացատրվում է տվյալ դարաշրջանի հայ ճարտարապետության վրա քաղկե- դոնիկ դավանանքի ունեցած ազդեցությամբ (Ա. Ե ր Ե մ յ ա ն. 1966, № 4, էջ 155):

<sup>10</sup> “გალობა” («Գալոբա» – «Դալլալլ, երգեցողություն»), 2005, № 4:

<sup>11</sup> “ხვადობდელი დღე” («Խվալինդելի դղե» – «Վաղվա օր»), 2005, № 47:

մատնված հոյակերտ *Խուճապավանքի վերականգնման հարցը*<sup>12</sup>: Իրականում մինչև 1930-ական թվականների կեսերը ստեղծվել են հողային և վարչատարածքային սահմանադատման համար «ուսումնասիրություններ կատարող» հանձնաժողովներ<sup>13</sup>, կնքվել մի շարք պայմանագրեր, որոնց արդյունքում, թեև ոչ էականորեն, փոփոխություն է ենթարկվել հայ-վրացական խորհրդային սահմանը ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Լոռու մասնատված հատվածներում և ամեն անգամ հօգուտ վրացական կողմի<sup>14</sup>:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում: Վրաստանի սահմանների և պատմական հուշարձանների հանդեպ հոգատարություն չցուցաբերելու համար խստորեն քննադատելով երկրի նախագահ Մ. Սահակաչվիլուն և, ընդհանրապես, երկրի իշխանություններին՝ հողավածագիր Դիտո Չուբենիձեն դիմում է Վրաստանի կաթողիկոս-պատրիարք, Մցխեթա-Մթբիլիսիի արքեպիսկոպոս, Բիճվինթայի ու Յխում-Աբխազիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն և երանելի կաթողիկոս-պատրիարք Իլիա 2-րդին՝ խնդրելով տագնապի զանգեր հնչեցնել, հիշեցնել նախագահին, որ Խուճապավանքը միշտ եղել է Վրաստանի սահմաններում. «... Շեարդնաձեի օրոք հայերը քայլ առ քայլ այնպես յուրացրին մեր Հուշաքի (Խուճապավանք – Վ. Ս.) հոյակապ վանքն՝ իր շրջակայքով, որ այնտեղ այցելած վրացի լրագրողներին վրա սահմանապահները կրակ բացեցին» [“სხავდალ-დასხავდალო” («Ասավալ-դասավալի») – «Վերելք-վայրէջք»), № 44, 2005]:

<sup>13</sup> Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, էջ 347, հմմտ. Հավելված, փաստաթուղթ № 49, էջ 496–499, փաստաթուղթ № 50, էջ 499–500:

<sup>14</sup> Կովբյուրոյի՝ 1921 թ. հուլիսյան տիրահռչակ որոշումներից և հայ-վրացական նոյեմբերյան «սահմանագծումից» հետո չդադարեցին, ընդհակառակը, էլ ավելի սրվեցին վիճելի հարցերը, ուստի ԱնդրԿԳԿ-ն իր ստեղծած հանձնաժողովներով [1923 թ. փետրվարի 6-ին ստեղծվեց «Գավառների սահմանները որոշող» հանձնաժողովը (նախագահ՝ Ս. Համբարձումյան, ապա՝ Ս. Կասյան.), 1923 թ. նոյեմբերի 5-ին ԱնդրԿԳԿ-ն հաստատեց հանձնաժողովի կազմը՝ Ս. Կասյան (նախագահ), Ստուբուրա և Յակուբով (անդամներ): Այն 1924 և 1927 թթ. անվանափոխվեց, ստեղծվեցին նաև առանձին սահմանային հատվածների վիճելի հարցերը կարգավորող հողային այլ հանձնաժողովներ] մինչ 1930-ական թվականների սկզբները քայլեր կատարեց սահմանների վերագծման ուղղությամբ, ինչի արդյունքում բոլոր կողմերից «մկրատվեց» ՀԽՍՀ-ն (տե՛ս Ա. Սահակեան. 1999, հոկտեմբեր, թիւ 16, էջ 47–50): Հողային վեճերն, ընդհանուր առմամբ, իրենց «լուծումները» գտան 1933 թ. կեսերին: 1929 թ. սեպտեմբերի 2-ին ՀԽՍՀ Լոռու հատվածի սահմանային վեճին անդրադարձավ ԱնդրԿԳԿ-ն. այդ ժամանակ անցկացվեց սահմանագիծ, իսկ ահա 1933 թ. հունիսի 26-ին նույն հատվածի հողային վեճերը կարգավորող հանձնաժողովը (որի կազմում հայ չկար), վրացի թողբիայի գլխավորությամբ, որոշում է՝ Աղբյուրփի, Չանախչի և Բրդաձոր գյուղերը հանձնվում են Վրաստանին: Ահա, փաստորեն, այդ ժամանակ են վերջնականորեն իրագործվել 1921 թ. նոյեմբերի 6-ի պայմանագրի դրույթները, և մինչ այս այդ նույն պայմանագրի մասնակի կիրառումն է եղել պատճառը, որ վերոնշյալ 1932 թ. ՀԽՍՀ քարտեզում որոշ հայկական գյուղեր դեռևս նշվել են ՀԽՍՀ կազմի մեջ: Հիշեցնենք, որ խնդրո առարկա Խուճապավանքը ներկայումս գտնվում է Վրաստանի կազմում գտնվող Աղբյուրփի գյուղի հատվածում՝ Պրիվոլնոյե-Աղբյուրփի սահմանային անցակետից որոշ հեռավորության վրա: ՀՀ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կողմից վերահսկվող սահմանագծի աննշան (մի քանի մետր) փոփոխման դեպքում Խուճապավանքը ևս

Բ. Արվելաձեն, մատնանշելով իր՝ «“Армянские” или грузинские церкви в Грузии» (Тбилиси, 1996) խորագրով գիրքը, ծավալուն հոդվածում անդրադառնալով հայ-վրացական պատմական առնչություններին, ժխտելով Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց այբուբենն ստեղծելու փաստը, վրաց եկեղեցուն՝ 607 թ. հայ առաքելական եկեղեցուց անջատման և երկբնակություն (ուղղափառություն) ընդունելու իրողությունը, հայկական կողմին «ավանդաբար» մեղադրելով «զավթողականություն», «յուրացման», «կեղծիքի» և այլնի մեջ, քննարկում է նաև Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների պատկանելության խնդիրը<sup>15</sup>։ Նա բավականին մանրամասն քննություն է առնում Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության հրատարակած քարտեզ-ցուցակը<sup>16</sup> ժխտելով այնտեղ բերված տվյալները։ Վրացի հեղինակը, որպեսզի առավել համոզիչ դարձնի իր անհամաձայնությունը քարտեզ-ցուցակում բերված տվյալների հետ, անդրադառնում է նաև առանձին եկեղեցիների ու հուշարձանների (Թբիլիսիի Սբ. Նշան և այլն) հայտնելով, որ դրանք ի սկզբանե, իբր, եղել են վրացական, և հայ գիտնականները, վերցրել են դրանց «յուրացման» կամ «հայկականացման» թվերը՝ անտեսելով սկզբնական կառուցման թիվը։ Բ. Արվելաձեն խիստ քննադատության է ենթարկում եվրոպացի, ռուս և հայ գիտնականներ Ի. Ստրժգովսկուն (Ավստրիա), Ա. Յակոբսոնին (Ռուսաստան), Ն. Տոկարսկուն (Ռուսաստան), Հ. Օրբելուն (Հայաստան–Ռուսաստան), Պ. Մուրադյանին (Հայաստան)՝ հայ պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրման ոլորտում վրացական տեսակետներին հակադրվելու և Վրաստանում առկա հայկական հուշարձանների թվի ու պատկանելության մասին փաստարկված տեսակետների համար։

Հետխորհրդային շրջանում ՎՈՒԵ-ի՝ Զավախքում հաստատման գործընթացի մասին խիստ ուշագրավ հարցազրույցում Բորժոմ–Ախալքալաքի թեմի<sup>17</sup> առաջնորդ վերապատվելի Սերաֆիմ եպիսկոպոսը (որպես նշյալ թեմի առաջնորդ ծառայել է 1995–2002 թթ.), մանրամասն ներկայացնելով ՎՈՒԵ-ի՝ Զավախքում հաստատման գործընթացում առկա բոլոր դժվարություն-

կարող է արժանանալ վերոհիշյալ գյուղերի ճակատագրին (տե՛ս Վ. Սարգսյան. 2009, հ. 2, էջ 96–115)։

<sup>15</sup> “მაცრთალო ვახეთი” («Մառթալի գագեթի» – «Իսկական թերթ»), 2000, № 8։

<sup>16</sup> Ս. Կարապետյան. Յուզակ և քարտեզ, 1995։

<sup>17</sup> ՎՈՒԵ թեմերի վերականգնման և նորացման շրջանակներում 1995 թ. ձևավորվեց Բորժոմ–Ախալքալաքի թեմը, և նույն թվականի ապրիլի 20-ին Սերաֆիմ եպիսկոպոս Ջոջուան ձեռնադրվում է թեմի առաջնորդ։ 2002 թ. հոկտեմբերի 17-ին, ՎՈՒԵ Սբ. Սինոզի որոշմամբ, Բորժոմի և Ախալքալաքի թեմի տարածքում կազմավորվեցին երկու թեմեր՝ Բորժոմ-Բակուրիանի և Ախալքալաք–Կոմուրդոյի թեմերը։ Ախալքալաքի և Կոմուրդոյի թեմերի հոգևոր հովիվ նշանակվեց Յագերի ու Սվանեթի նախկին արքեպիսկոպոս Նիկոլոզ (Պատտա) Փաշուաշվիլին։ 2018 թ. դեկտեմբերի 27-ին, ՎՈՒԵ Սբ. Սինոզի որոշմամբ և համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա 2-րդի հրամանագրով, Ախալքալաքի ու Կոմուրդոյի թեմը վերանվանվեց Ախալքալաքի, Կոմուրդոյի և Կառի (Կարս քաղաքի վրացերեն անվանաձևն է) թեմի (Սբ. Սինոզի որոշումը տե՛ս <https://www.patriarchate.ge/news/2332>)։

ները, խոսում է նաև Զավախքում լայնորեն տարածված օրթողոքա հայերի միջնադարյան պատմամշակութային հուշարձանների խնդրի մասին<sup>18</sup>։ Դրանք համարելով վրացական՝ դժգոհում է, որ վերջիններս հայկական շրջանակներում համարվում են հայկական և ենթարկվում վերանորոգման<sup>19</sup>։

Հիմք ընդունելով որոշ հուշարձանների վրա պահպանված վրացագիր արձանագրությունների մնացորդները՝ վրաց արդի հասարակական-գիտական շրջանակներն անխտիր վրացական են համարում և՛ ներկայիս ՀՀ Լոռու, Տավուշի ու Կոտայքի մարզերում գտնվող X–XIII դդ. [Քոբայրավանք, Խուճապավանք, Պղնձահանք (Ախթալա), Հնեվանք, Կիրանցի վանք, Սրվելի վանք, Թեժառույթի վանք և այլն], և՛ պատմական Տայք նահանգի<sup>20</sup> ու վերջինիս սահմանակից Գուգարք նահանգի մի շարք գավառների (Կղարջ<sup>21</sup>,

<sup>18</sup> «Երեզնի» («Ռեզոնանսի» – «Ռեզոնանս»), 2001, № 159:

<sup>19</sup> Իբրև ուղղափառ դավանանքի հայություն ժառանգություն՝ տվյալ ոճին պատկանող միջնադարյան եկեղեցիներ և այլ հուշարձաններ են հանդիպում Զավախքի Աբուլ, Ագավրեթ, Ալաստան, Բավրա, Բեժանո, Բուռնաչեթ, Գանձա, Գուճաբուրդո, Դամալա, Թմկաբերդ, Թոք, Մեծ Խորենիա, Մեծ Սամսար, Ծունդա (Նաքալաք), Կոկիա, Ղաուրմա, Սաղամո, Փոկա, Քարցե և այլ բնակավայրերում ու վերջիններիս հարակից վայրերում (տե՛ս Ս. Կ ր ա պ ե տ յ ա ն. 2006):

<sup>20</sup> Հիմնվելով վրացի հեղինակներ Ս. Զանաչիայի, Վ. Բերիձեի, Պ. Զաքարայի, Ե. Թաղաչվիլու, Ի. Զդանեիզի և այլոց տեսակետների վրա՝ վրաց արդի հասարակական-գիտական շրջանակները Մեծ Հայքի Տայք նահանգը ճառ անվանաձևով համարում են պատմական Վրաստանի հարավային ծայրագավառներից մեկը, այն է՝ վրացապատկան երկիր։ Հետևաբար, ըստ նրանց, վրացական են նաև Տայքում կառուցված ճարտարապետական այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Իշխանն ու Բանակը, Օչկվանքը և Խախուվանքը, Չորդվանքն [վրացիներն այն բառացի թարգմանել են՝ անվանակոչելով «Երեզնի» («Օթխթա էկեսիա», թարգմ.՝ Չորսի եկեղեցի)] ու Պարխարը, Էգրեկն (Ագարակ) և մյուսները։ Վրացի ուսումնասիրողների նշյալ տեսակետներին մանրամասն անդրադարձել, հայ ու օտար աղբյուրների և ուսումնասիրողների նյութերի հենքի վրա փաստարկված հակադարձել է մեծանուն ճարտարապետ, հայ ճարտարապետության պատմության և տեսության լավագույն գիտակ Տիրան Մարությանն իր մի շարք հիմնարար աշխատանքներում (տե՛ս Տ. Մ ար ու թ յ ա ն. 1972, 1978, 1989, 2003 և այլն):

<sup>21</sup> Վրացիները Կղարջ գավառն անվանում են Կլարջեթի։ XX դ. վրացի հեղինակները, Գուգարք նահանգի սույն գավառն արհեստականորեն միավորելով հարավից վերջինիս սահմանակցող Տայք նահանգի հետ, ստեղծել են «Տառ-Կլարջեթի» միանգամայն արհեստածին վարչամիավորը՝ դասելով այն պատմական Վրաստանի հարավային գավառների շարքին։ Անգամ վրացի ուսումնասիրող Վ. Բերիձեն է նշել՝ ««Տառ-Կլարջեթյան իշխանապետություն» անվանումը, որ գրականության մեջ ընդունված է, պայմանական է» (В. Беридзе. 1981, с. 18): Տ. Մարությանը ևս շատ կտրուկ է գրել. «Տայքը Կղարջքին, առավել ևս Վրաստանի մյուս շրջաններին քաղաքականապես կապել-միավորելը և արդյունքում Տառ-Կլարջեթի անվանելը ոչ միայն սխալ է, այլ կանխապես մտածված անթույլատրելի, պախարակելի արարք։ X դարում այդ տարածքների ոլորտում գոյություն չի ունեցել այդպիսի միացյալ, այդ անվանումով քաղաքական կազմավորում։ Այդ նահանգները բոլորովին անկախ ինքնուրույն իշխանություններ էին։ Ե. Թաղաչվիլին հատկապես նշում է. «Տառյում եղել են տառյան թագավորներ,

Արտահան, Շավչեթ, Զավախք, Թոնդը և այլն) ուղղափառ ոճի մի շարք հուշարձաններ:

Վրաց հասարակական-քաղաքական և գիտական շրջանակները խնդրո առարկա ժամանակաշրջանում բազմիցս հանդես են եկել վերոնշյալ և այլ ուղղափառ ոճի հուշարձանների՝ որպես վրացական պատմաճարտարապետական հուշարձանների, վերանորոգման պահանջով: Օրինակ՝ Օշկվանքի, Զորգվանքի (Օթխսթայի վանք) և Խանձթայի վանքերի նկատմամբ պետական հոգածություն տաժելու պահանջով 2005 թ. Թբիլիսիի պետական համալսարանի ուսանողները դիմել են Վրաստանում Թուրքիայի դեսպանին<sup>22</sup>: Նույն թվականին «Ազգային լրբբի» կազմակերպության ղեկավար Գիորգի Անդրիաձեն դիմել է վրաց պետական օղակներին՝ պահանջելով «... վրաց մշակույթի բացառիկ արժեք ներկայացնող երկու հուշարձանները՝ Խանձթան»<sup>23</sup> և Իշխանին (գտնվում է Տայքում, կառուցել է Ներսես Գ Տայեցին՝ VII դ. – Վ. Ս.), որոնք հրաշքով են փրկվել տվյալ տարվա դժգոհ ձմռան և գարնան հորդ անձրևներից, արժանան ուշադրություն»<sup>24</sup>:

Զավախքի Թոք գյուղում առկա վերստին ուղղափառ դարաշրջանի եկեղեցական համալիրին են անդրադարձել «Կրիմինալի» և «Կլիրիս պալիտրա» թերթերը: Դրանցում վրացի պրոֆեսոր Թինա Իվելաշվիլին ահագանգել է, թե, իբր, Զավախահայերը դիտավորյալ ոչնչացնում են Թոքի եկեղեցիների վրացերեն արձանագրությունները և տեղը դաժում հայերեն «հնաոճ» արձանագրություններ<sup>25</sup>: «Նորերս հայտնաբերված հայերենով քերձվածները, հնարավոր է, որ շուտով ավելի մեծ գրությունների վերածվեն, որը հետագայում եկեղեցու հիմնման հարցը վեճի առարկա կդարձնի»<sup>26</sup>, – հայտարարել է նա: Նաև ավելացնում է, որ փաստերը փոխանցվել են Ասպինձայի (Թոք գյուղը գտնվում է Զավախքի այդ շրջանում) ոստիկանությանը, հարուցվել է քրեական գործ: Հողվածագիրը հուզախառն տոնով տեղեկացնում է, որ, չնայած հետաքննությանը, եկեղեցու վրա հայերեն գրությունների թիվն օրորի ավելանում է:

Հաշվի առնելով Թ. Իվելաշվիլու՝ նման պարզունակ դատողություններն ու մոտեցումները, համոզված ենք, որ խոսքը պատմաճարտարապետական հուշարձանների վրա հաճախակի հանդիպող գրությունների մասին է, որոնք

Կլարջեթիում՝ կլարջեթյան: Սակայն նրանց պետք չէ շփոթել համավրացական թագավորների հետ»: Այստեղից հետևում է, որ չէր կարելի գործածել «հին վրացական տաօ-կլարջեթյան հողեր» հասկացությունը, այդ հանդիսանում է, մեղմ ասած՝ պատմության կոպիտ աղավաղում: «Տաօ-Կլարջեթի» անվանումը, որ ընդունված է այժմյան վրացական պատմագրության մեջ, XX դարի արգասիք է [խնդրի քննարկման մանրամասները տե՛ս Տ. Մարությանի մեծարժեք աշխատության «Տայքի ճարտարապետական հուշարձանները» գլուխը (Տ. Մ ա ռ ու թ յ ա ն. 2003)]:

<sup>22</sup> «24 სდათი» («24 սաաթի» – «24 ժամ»), 2005, № 249:

<sup>23</sup> Գտնվում է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Կղարջք գավառում (տե՛ս Ա. Ե ղ ի ա գ ա ռ յ ա ն. 2011, № 134.1, էջ 3–12):

<sup>24</sup> «გლიბი» («Ալիա»), 2005, № 68:

<sup>25</sup> Տե՛ս «კრიმინალი» («Կրիմինալ»), 2004, № 44, «კვირის პალოტრა» («Կվիրիս պալիտրա» – «Շաբաթվա ներկայակեր»), 2004, № 44:

<sup>26</sup> «კვირის პალოტრა» («Կվիրիս պալիտրա»), 2004, № 44:



արվում են հիմնականում երեխաների կամ անփույթ մարդկանց ձեռամբ՝ կավիճով կամ այլ առարկաների օգնությամբ: Այդպիսի գրությունները հիմնականում անբովանդակ են կամ ինչ-որ անունների ու սիրո խոստովանությունների տեսքով, և, դրանք համարել լեռնային հեռավոր այդ գյուղի մատուցներում գտնվող լքված ու կիսավեր եկեղեցու «հայկականացում» կամ «հիմնադրման թվականի աղավաղում», մեղմ ասած, զավեշտ է: Մեր այս պնդումն ավելի հիմնավոր կդառնա, եթե քննարկենք թ. Իվելաշվիլու մեկ այլ հոդված՝ հրատարակված 2004 թ. «Լիտերատուրա դա խելովներա» ամսագրում: Թերթի միջոցով նա հնչեցնում է «գաղտնի աղբյուրներից իրեն հասանելի դարձած» ահագանգը, իբր, տեղի ջավախահայերը, «Ջավախք» կազմակերպության միջոցով և Երևանի անմիջական ցուցումով, Ախալցխա քաղաքի Մարդա թաղամասում գտնվող եկեղեցու արևելյան ճակատին 2002 թ. փորագրել են 9 տողանոց մեծ չափի արձանագրություն<sup>27</sup>: Պրոֆ. թ. Իվելաշվիլին այս արձանագրությունը վերծանել է ակադեմիկոս Գ. Քուրդիանիի և պրոֆ. Լ. Դավլիանիձեի հետ, ովքեր ևս անուղղակիորեն հաստատում են թ. Իվելաշվիլու պնդումները: Ջավեշտ է, բայց փաստ, որ թ. Իվելաշվիլին նման կարգի մեղադրանքներ, որակումներ (կատարվածը համարում է բարբարոսություն, սրբապղծություն և այլն) տալուց առաջ անգամ հարցում չի արել տեղացիների շրջանում, թե արդյո՞ք Մարդա կոչվող թաղամասում, միջնադարյան Սբ. Նշան եկեղեցու տեղում (այստեղից էլ Սբ. Նշան բլրի անունը) Ախալցխայի պատվավոր քաղաքացի Վարդան Վարդանյանցի կողմից 1861 թ. հիմնադրված Սբ. Վարդանանց (Սբ. Նշան) եկեղեցու պատին 2002 թ. առաջ նման մեծ չափի արձանագրություն եղե՞լ է, թե՞ ոչ:

Թ. Իվելաշվիլու հոդվածում տեղ են գտել նաև Ախալցխայի այլ եկեղեցի-հուշարձանների տեղում վրացական հետքերի որոնմանն առնչվող դրույթներ, այդ առիթով վրացի հեղինակներից մեծքերումներ և այլն: Մեր խնդրի շրջանակներից դուրս համարելով դրանց քննությունը միայն փաստենք, որ «Ջավախահայության բարբարոս վարքի արդյունքում 2002 թ. Սբ. Վարդանանց եկեղեցու պատին հայտնված» մեծածավալ արձանագրությունն իրականում փորագրվել է եկեղեցու շինարարության ավարտական տարում՝ 1868 թ., հրատարակվել 1990 թ.<sup>28</sup>: Ահա այսպիսի պարզունակ «փաստերով» ու դատողություններով է վրացի պրոֆեսորը փորձել ապացուցել, որ «... Ախալցխայում, մինչև հայերի հայտնվելը [նկատի ունի Կարնո հայության ուռու-թուրքական պատերազմի արդյունքում Ռուսաստանի տիրապետության տակ անցած Ախալցխայի և Ախալքալաքի գավառներ տեղափոխվելը (1829–1830 թթ.) և նշյալ գավառներում ապրող տեղաբնիկ («եղևական») հայության կողքին հաստատվելը – Վ. Ս.] Մարդայի եկեղեցին ուղղափառ (օրթոդոքս) էր ...»<sup>29</sup>: Նա նաև դժգոհում է Վրաստանի ղեկավարությունից, պատրիարքարանից և պատկան մարմիններից այն բանի համար, որ վերջիններս 2002–2004 թթ. չեն արձագանքել «կատարվածին» ու պատժել «հանցագործներին»:

<sup>27</sup> “«Լուծյրաճյրա ճա եղևօցեյծ» («Լիտերատուրա դա խելովներա» – «Գրականություն և արվեստ»), 2004, № 2, էջ 22–23:

<sup>28</sup> С. Карапетян, А. Марутян, Р. Наатакян. 1990, № 5, с. 75–85.

<sup>29</sup> “«Լուծյրաճյրա ճա եղևօցեյծ» («Լիտերատուրա դա խելովներա»), 2004, № 2, էջ 22–23:

Միջնադարյան մեկ այլ եկեղեցու՝ Ախալքալաքի Մերենիա գյուղից 2 կմ հեռավորության վրա գտնվող «Խիղիսջվար» (վրաց.՝ «Կամրջախաչ») կամ «Կոտրած ժամ» անվամբ գյուղատեղիում գտնվող և XIII–XIV դդ. թվագրվող եկեղեցու<sup>30</sup> պատկանելության խնդիրն է բարձրացրել «Մծեուխա գագեթի» թերթը: Անդրադառնալով գյուղացիների կողմից եկեղեցու վերանորոգման փաստին՝ ՎՈՒՆ պատրիարքարանի աշխատակից Զ. Էկալաձեն նշել է հետևյալը. «Ախալքալաքի և Բողգանովկայի շրջանները չեն վերահսկվում: Օրինակ՝ Ախալքալաքի շրջանի Մերենիա գյուղի վրաց միջնադարյան եկեղեցին քանդեցին և ավերակների վրա կառուցեցին հայկական եկեղեցի: Նման դեպքերը շատ են, ցավոք»<sup>31</sup>: Փաստենք, որ միջնադարյան աղբյուրներում հիշատակվող գյուղի ավերակների (գյուղատեղին ներկայումս հայտնի է «Կոտրած ժամ» անվամբ) վրա պահպանված կիսավեր եկեղեցին 2000–2001 թթ. մերենիացիները կամայաբար վերանորոգել են՝ խաթարելով եկեղեցու ճարտարապետական տեսքը: Բնականաբար, նման նորոգումից հետո խոսք չէր կարող լինել «յուրացման» կամ «հայկականացման» մասին. նորոգվելով մասնագիտական միջամտության և համապատասխան նախագծի բացակայության պայմաններում՝ եկեղեցին պարզապես աղավաղվել է ու կորցրել իր միջնադարյան պատմաճարտարապետական հուշարձանին հատուկ նկարագիրը<sup>32</sup>:

Վրաց տպագիր մամուլում սուր արձագանք են ստացել նաև Ջավախքի ևս երկու միջնադարյան ուղղափառ ոճի հուշարձանների՝ Գումբուրդոյի Սբ. Համբարձման եկեղեցու (974 թ.) և Մեծ Սամսարի ժայռափոր եկեղեցական համալիրի (XI–XIII դդ.) շուրջ տեղի ունեցող զարգացումները, որոնք երբեմն վերաձվել են բախումների: Տեղի հայ բնակչությունը նշված երկու հուշարձանները համարում է իրենց նախնայաց ժառանգությունը և դեմ է, որպեսզի

<sup>30</sup> Տե՛ս Ս. Կարապետյան. 2006, էջ 394–396:

<sup>31</sup> “მწველინ ვახუშტი” («Մծեուխա գագեթի» – «Գրական թերթ»), 2004, № 16:

<sup>32</sup> Գ. Մամալաձեն «Ջեորջիան թայմս» թերթում անդրադարձել է նման ևս մեկ խնդրի: Խոսքն Ախալքալաքի շրջանի Դիլիսկա գյուղի տարածքում (գյուղից 2 կմ հյուսիս)՝ Փարվանա գետի ձախ ձորապռնկին գտնվող միջնադարյան Մուրճիկան գյուղատեղիում գտնվող կիսավեր, միանավ եկեղեցու վերանորոգման մասին է: Հայ ուսումնասիրողների եզրահանգմամբ՝ XII–XIII դդ. թվագրվող, սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու՝ 2001–2002 թթ. տեղի ունեցած վերանորոգումը, որը կրկին իրականացվել է տեղացի գործարարի կողմից (իբր, նրան երազում են հուշել վերջինս ձեռնարկի այդ գործը), կամայականորեն և առանց մասնագիտական միջամտության, վրացիները վերստին ներկայացնում են որպես եկեղեցու հայկականացմանն ու յուրացմանն ուղղված քայլ: Ի դեպ, նույն թերթի միջոցով այդ մասին իր բողոքն է հայտնել Սամցխե–Ջավախքի բնակիչ Ս. Մանջավիձեն՝ նշելով, որ Մուրճիկան գյուղատեղիում գտնվող Ծմինդա Գիորգի (Սբ. Գիորգի) անվամբ եկեղեցու՝ նման կերպ վերանորոգումը լրջորեն վնասել է հուշարձանի պատմաճարտարապետական տեսքը: Բնակչին վրդովեցրել է նաև այն փաստը, որ վերանորոգումից հետո եկեղեցու բակի մուտքին ամրացվել է մարմարյա սալիկ՝ հայերեն գրություն (վերանորոգողի անուն-ազգանուն, վերանորոգման մասին տեղեկություններ և այլն): Ս. Մանջավիձեն քննադատում է վրաց աշխարհիկ ու կրոնական վերնախավին՝ հուշարձանն անտերություն մատնելու և տեղի ունեցածին պատշաճորեն չարձագանքելու համար [“ჯეორჯიან თაიმსი” («Ջեորջիան թայմս»), 2005, № 46]:

վրացական կողմը դրանք օգտագործի որպես վրացական աղոթատեղիներ<sup>33</sup>։ Նման բախում տեղի ունեցավ 2005 թ. հուլիսի 15-ին Սամսարի ժայռափոր եկեղեցի այցելած Թբիլիսիի պետական համալսարանի 32 ուսանողների, ՎՈՒԵ Ախալքալաք-Կոմուրդոյի թեմի հոգևորականների և տեղի բնակիչների հետ<sup>34</sup>, որը համատեղ հայտարարությամբ դատապարտեցին երկու կողմերի հոգևոր առաջնորդները<sup>35</sup>։ Անդրադառնալով Գումբուրդո գյուղի եկեղեցու շուրջ առկա լարվածությանը՝ վրացի հեղինակ Գ. Ուձիլաուերին իր հոդվածներից մեկում գրում է, որ 2006 թ. հունվարին խորհրդարանի խոսնակի հետ մտադրվել էր Ախալքալաք ուղևորվել նաև կաթողիկոս – պատրիարք Իլիա 2-րդը՝ դիտելու « ... Ախալքալաքի շրջանի Կոմուրդո գյուղի վրացական եկեղեցին, սակայն նրան խորհուրդ են տվել չգնալ, քանի որ ի վիճակի չէին ապահովելու նրա անվտանգությունը»։ Հոդվածագիրը մեղադրանքներ է ներկայացնում նախագահ Մ. Սահակաշվիլուն, որ նա չի կարողանում նվազեցնել լարվածությունն Ախալքալաքի նշված գյուղում և հնարավորություններ չի ստեղծում կաթողիկոս Իլիա 2-րդի համար՝ այցելելու, ըստ հեղինակի, վրացական եկեղեցի։ Գ. Ուձիլաուերին գումբուրդոցիներին ևս անվանում է Հայաստանի կողմից աջակցություն ստացող հայ անջատողականներ, « ... որոնք Ախալքալաքի անջատողականներից ոչ պակաս աչքի են ընկնում հակավրացական տրամադրվածությամբ»<sup>36</sup>։

Ձափախքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներին, հայ-վրացական պատմական վեճերին, ինչպես նաև Վրաստանի հայկական եկեղեցիների և պատմաճարտարապետական այլ հուշարձանների պատկանելության խնդրին «Գալոբա» թերթում 2005 թ. անդրադառնում է Բ. Արվելաձեն<sup>37</sup>։ Հրապարակման առիթը 2002 թ. լույս տեսած «Ձափախքի պատմական հուշարձանները» քարտեզ-ուղեցուլցն էր<sup>38</sup>։ Վրացի հայագետը նախ խստորեն քննադատում է ջափախահայերին՝ նրանց մեղադրելով ինքնավարություն պահանջելու մեջ, այնուհետև հուշարձանագետ Ս. Կարապետյանին, որը շրջանառության մեջ է դրել Վրաստանի (այդ թվում՝ Ձափախքի) հայկական հուշարձանների վերաբերյալ գրքեր ու քարտեզներ<sup>39</sup>, ճարտարապետ Տ. Մարությանին<sup>40</sup>, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր

<sup>33</sup> Տե՛ս <https://armenpress.am/arm/news/404109.html>. Գումբուրդոյի եկեղեցու շուրջ լարվածությունը պահպանվում է մինչ օրս. հուշարձան-աղոթատեղին հայտարարված է վրացական, գյուղացիները գրկված են այն տնօրինելու իրավունքից, ինչն էլ հանդիսանում է գյուղում մերթնդմերթ սաստկացող լարվածության պատճառ։

<sup>34</sup> Տե՛ս <https://regnum.ru/news/accidents/485545.html>.

<sup>35</sup> «Վրաստան», 2005, № 57–58։

<sup>36</sup> “ახალგაზრდა თაობა” («Ախալի թաօբա» – «Նոր սերունդ»), 2006, № 14։

<sup>37</sup> “გალობა” («Գալոբա»), 2005, № 4։

<sup>38</sup> Տե՛ս Ս. Կարապետյան. 2002։

<sup>39</sup> Տե՛ս Ս. Կարապետյան. 1995, Յուլյակ և քարտեզ, Ս. Կարապետյան. 1995, Ս. Կարապետյան. 2002 և այլն։

<sup>40</sup> Նկատի է առնվում Տ. Մարությանի հրատարակած «Տալի ճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1972) և «Հայ ճարտարապետության հուշարձաններ. խորագույն Հայք» (Երևան, 1978) աշխատությունները։

գործիչ, համբավավոր հայագետ Նիկոլայ Տոկարսկուն<sup>41</sup> և այլոց: Ս. Կարապետյանի՝ դաշտային հետազոտությունների և գրավոր աղբյուրների ուսումնասիրության շնորհիվ հիշյալ ցուցակ-քարտեզում հաշվառած ու ներկայիս Վրաստանի տարածքում գտնվող 621 եկեղեցիների շուրջ կեսը Բ. Արվելաձեն համարում է վրացական<sup>42</sup>: Վերջինս կրկին հավատարիմ է մնացել վրաց հասարակական-քաղաքական ու գիտական-ակադեմիական շրջանակներում տիրող կարծրատիպերին և ամենուր տեսնում հայ քաղաքական կուսակցություններից մեկի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀԾԴ) հետքերը: Ըստ նրա՝ Վրաստանի հայկական հուշարձանների մասին քարտեզների և գիտական աշխատանքների հրատարակումը Ս. Կարապետյանին պատվիրել է ՀԾԴ-ն: Փաստենք, որ ո՛չ վերջինս, ո՛չ էլ նրա կողմից տասնամյակներով ղեկավարած հաստատությունը՝ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն-հիմնադրամը, որևէ առնչություն չեն ունեցել և չունեն ՀԾԴ-ի հետ ու առաջնորդվել են միմիայն սեփական համոզմունքներով և հաստատված ծրագրերով:

«Ռեզոնանս» թերթում ներկայացված է Նորաշենի Աբ. Աստվածածին եկեղեցու պատկանելության հարցի մասին ՎՈՒԵ-ի քահանա Հայր Տարիել Սիկինճալաչվիլու տեսակետները: Նկատենք, որ խորհրդային կարգերի փլուզման շրջանից ի վեր Վրաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների թողտվությամբ կամ հանձնարարությամբ գործող սույն քահանայի՝ Նորաշենի Աբ. Աստվածածին եկեղեցու հանդեպ շուրջ երկու տասնամյակ իրագործած քայլերի արդյունքում եկեղեցին հիմնովին դիմագրկվեց և պղծվեց: Զավթելով խորհրդային տարիներին գրապահոց ծառայող ու արժեքավոր գրքեր պարունակող եկեղեցին՝ այն արագորեն «գրքաթափ» անելով<sup>43</sup> և 1994–1995 թթ. լինելով նույն եկեղեցու ավագ քահանան<sup>44</sup> Հայր Տարիելն այդ տարիներին կազմակերպել ու անմիջականորեն ղեկավարել է եկեղեցու ինչպես ներսի, այնպես էլ դրսի՝ հուշարձանի հայկականությունը խորհրդանշող բոլոր հատվածների՝ մկրտարանի ավազանի, բարձր բեմի քանդման, պատերում ազուցված խաչքարերի, հայերեն արձանագրութ-

<sup>41</sup> Հեղինակը մատնացույց է անում Ն. Տոկարսկու հրատարակած «Архитектура Древней Армении» (Ереван, 1946) աշխատությունը:

<sup>42</sup> Տե՛ս “გალობდა” («Գալոբա»), № 4, 2005:

<sup>43</sup> Հայր Տարիել քահանայի վկայությամբ՝ եկեղեցու գրքերը նվիրել է Վրաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալբերտ Թավադիձենին [“<sup>43</sup>გალობდასი” («Ռեզոնանսի» – «Ռեզոնանս»), № 77, 2005]:

<sup>44</sup> 1995 թ. փետրվարի 15-ին վրաց պատրիարքարանի որոշմամբ՝ եկեղեցին վերածվում է Ս. Կույա Մարիամ անվամբ և պատարագ է մատուցվում վրացական (ուղղափառ) ծիսակարգով: Հայկական կողմի բողոքների արդյունքում պատրիարքարանն ստիպված թողնում է եկեղեցին, որը, սակայն, այդպես էլ չի վերադարձվում ՀԱԵ Վիրահայոց թեմին [տե՛ս “<sup>44</sup>საგლო თაობა” («Ախալխ թառա»), 2005, № 355]: Հայր Տարիելը եկեղեցին անվանում է Խարբեայի եկեղեցի (Թարգմ.՝ ավետյաց), որը, իբր, Ռուսաստանի տիրապետության տակ եղած ժամանակ վաճառվել է հայ վաճառականներին: Ըստ քահանայի՝ «Խարբեան Վախթանգ Գորգասալի ժամանակ կառուցված Զվարիս մամա եկեղեցու մի հավաքին է ներկայացրել» [“<sup>44</sup>გალობდასი” («Ռեզոնանսի»), 2005, № 77]:

յունների, որմնանկարների ոչնչացման (իբրև թե՛ վերականգնման) աշխատանքները<sup>45</sup>:

2005 և 2008 թթ. Հայր Տարիելը հանդես եկավ Նորաշենի Սբ. Աստվածածնի դեմ ուղղված նոր ոսնձգություններով. 2005 թ. գարնանը եկեղեցու հարավային պատին կից հանկարծ հայտնվեց նոր գերեզմանոց՝ 5 վրացերեն արձանագրություններով տապանաքարերով հանդերձ<sup>46</sup>, իսկ 2008 թ. մայիսին նրա անմիջական ղեկավարութամբ սկսվեց եկեղեցու շուրջ ցանկապատի կառուցումը, որը զարդարվում էր բացառապես ՎՈՒԵ-ին բնորոշ խորհրդանիշերով ու խաչերով<sup>47</sup>: Իսկ նույն թվականի նոյեմբերի 16-ին էլ

<sup>45</sup> Այդ մասին վկայող բազմաթիվ փաստերի ու վկայությունների մասին տե՛ս Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները, (1988–1998 թթ.), 1998, էջ 11–22: Հավելենք՝ 1995 թ. մարտի 13-ին Թբիլիսի ժամանած ՀԱԵ բարձրաստիճան հոգևորականների և ՀՀ խորհրդարանի Մարդու իրավունքների և ազգութային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պապյանի՝ Իլիա 2-ի հետ հանդիպման արդյունքում որոշվում է առժամանակ փակել եկեղեցին, ստեղծել հայ և վրաց մասնագետներից բաղկացած հատուկ խումբ, որոնք կհետազոտեն եկեղեցու պատկանելության հարցը: Այդուհանդերձ, այդ ամենը մնաց թղթի վրա:

<sup>46</sup> «Ռեզոնանսի» թերթին տված պարզաբանման մեջ Հայր Տարիելը դա բացատրել է հետևյալ կերպ. «Ուղղակի բակն ենք գեղեցկացնում, այգի ենք գցում ... Ավելի ճիշտ, շինարարական քարերն այն պատճառով թափեցինք Խարեբայի մուտքի մոտ, որպեսզի վերացվեր անօթևանների ապաստարանը: Հայերին չպետք է զարմացնի բակում վրացական քարերի հայտնվելու փաստը. տարածքն ուղղում էինք և պատահաբար հայտնաբերեցինք այդ տապանաքարերը մի քանի ամիս առաջ, որոնք գեղեցիկ դասավորեցինք: ... Եթե կրկին փորձենք, ապա էլի կգտնվեն վրացական տապանաքարեր: Չպետք է զարմանալ. եկեղեցին վրացական է, և այնտեղ անպայման լինելու էին վրացական տապանաքարեր» [“Դյոնոսնո” («Ռեզոնանսի»), 2005, № 77]: Նկատենք, որ եկեղեցու բակում հայտնված տապանաքարերի թվում է եղել նաև ոմն Մաղլակելիձեի չիրմաքարը՝ վախճանված 1874 թ.: Ս. Կարապետյանն այդ առիթով հայտնել է, որ, համաձայն Վրաստանում վրաց ազգատոհմերի բնակության վայրերը մատնանշող մի հետազոտության, Մաղլակելիձեներ բնակվել են միայն մի քանի բնակավայրերում, այդ թվում՝ Դուշեթի չրջանի Մլեթի գյուղում, ուր մինչև հունական Ջվարիս մամա վրացականացված եկեղեցու հոգևոր հովիվ նշանակվելը քահանա էր եղել Հայր Տարիելը: «Սրանից հետևում է, որ Նորաշենի եկեղեցու վրացականացմանը նպաստելու կոչված տապանաքարերը Հայր Տարիելը փոխադրել էր իր հովվությանը վստահված Մլեթի գյուղի գերեզմանոցից», – հաստատել է Ս. Կարապետյանը (տե՛ս <https://hetq.am/hy/article/4677>): Նորաշենի Սբ. Աստվածածնի ՀԱԵ Վերահայոց թեմին վերադարձնելու մասին հարցը բարձրացվել է նաև Հայաստանի երջանկահիշատակ վարչապետ Ա. Մարգարյանի՝ 2005 թ. հունիսին Վրաստան կատարած այցի ժամանակ: Մեկնաբանելով ՀՀ վարչապետի այդ քայլը՝ Վրաստանի խորհրդարանի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Կ. Գաբաշվիլին հայտարարել է, որ կարիք չկա ստեղծել հիմնախնդիրներ. «Եթե ժողովուրդը (նկատի ունի հայ ժողովուրդին – Վ. Ս.) մի քանի տասնյակ տարի այցելում էր այդ եկեղեցին, ապա կրկին պետք է տանք դրա իրավունքը», – նշել է նա [“ճեղո տաճ” («Ախալի թառք»), 2005, № 150, “კვირის პალოტრა” («Կվիրիս պալիտրա»), 2005, № 23]:

<sup>47</sup> ՀԱԵ Վերահայոց թեմն այդ առիթով մտահոգություն էր հայտնել՝ դա գնահատելով որպես Հայ Առաքելական և Վրաց Ուղղափառ եկեղեցիների միջև Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու և Թբիլիսի չորս այլ եկեղեցիների պատկա-

Հայր Տարիելի գլխավորությամբ ՎՈՒԵ-ի ներկայացուցիչները ծանր տեխնիկայի օգնությամբ փորձեցին տեղահանել Նորաշենի բակում հանգչած թիֆլիսահայ բարեգործներ Թամամչյանների ընտանիքի ներկայացուցիչների շիրմաքարերը, որոնք ավելի քան 100 տարի թաղված են Նորաշեն եկեղեցու բակում: Այդ քայլը քահանան կատարել էր, իբր թե, եկեղեցու «չըջակալքը բարեկարգելու և տարածքն աղբից մաքրելու նպատակով»<sup>48</sup>:

ՎՈՒԵ Պատրիարքարանին առընթեր Միջկրոնական հարաբերությունների կենտրոնի ղեկավար Լեյլա Ջոջելյանն նոյեմբերի 26-ին Պատրիարքարանում ՀԱԵ Վիրահայոց թեմի առաջնորդի, Սամցխե-Ջավախքի Ընդհանուր Առաջնորդական փոխանորդի և Վրաստանի հայերի միության փոխնախագահի մասնակցությամբ կայացած քննարկմանն ընդգծել է, որ եկեղեցին հայկական է, և հարևան եկեղեցու հոգևորականն իրավունք չունի իր գործողություններով ոչնչացնել պատմամշակութային արժեքները<sup>49</sup>: Ի վերջո՝ 2008 թ. դեկտեմբերի 4-ին, ՎՈՒԵ Պատրիարքարանը դատապարտեց Հայր Տարիել Սիկինճալաչվիլու գործողությունները Թբիլիսիի Սբ. Նորաշեն եկեղեցու նկատմամբ այն համարելով ապօրինի պատմական-ճարտարապետական արժեք հանդիսացող հայկական եկեղեցու նկատմամբ: Հակառակ այս հայտարարություններին՝ եկեղեցին այդպես էլ մինչ օրս չի վերադարձվել Վիրահայոց թեմին և գտնվում է կիսավեր, հիմնովին քայքայված ու լքված վիճակում:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի օրերին՝ 2005 թ. ապրիլի վերջին, հրապարակմամբ հանդես եկավ «Ասավալ-դասավալի» թերթը՝ գուգահեռներ անցկացնելով Հայոց ցեղասպանության ու Աբխազիայում 1992–1993 թթ. տեղի ունեցած արյունալի բախումների միջև, որտեղ, ըստ խմբագրության, ռուսների և հյուսիսկովկասցիների շարքերում իրենց մեղքի բաժինն ունի «Մարչալ Բաղրամյան» հայկական գումարտակը: Փորձելով վրացիներին ներկայացնել զոհի, իսկ հայերին՝ մեղավորի դերում, թերթը հիշեցնում է, թե, իբր, հայերն էլ այսօր «Խուջաբ գյուղում» (Խուճապավանքի շուրջ համանուն գյուղ գոյություն չունի. վանքը, ինչպես վերը նշվեց, գտնվում է ՀՀ–Վրաստան ուղիղ սահմանագծի վրա՝ թավ անտառի մեջ) քերում և ոչնչացնում են «... XIII դարի վրացական հուշարձանի՝ Խուջաբի վրացերեն արձանագրությունները (դա հաստատող որևէ փաստ գոյություն չունի. ստուգվել է նաև տողերիս հեղինակի՝ Խուճապավանք այցերի ժամանակ – Վ. Ս.), փորում են որմնանկարներում պատկերված հրեշտակների աչքերը, իսկ գյուղ (°) այցելած վրաց լրագրողներին քարկոծում-վոճոճում են. թող ոչ-ոք չմտածի, որ մեր դժբախտությունից երջանկություն կվաստակեն»<sup>50</sup>:

նեղություն հարցի քաղաքակիրթ լուծման հարցում ձեռքբերված պայմանավորվածության խախտում (տե՛ս <https://armenpress.am/arm/news/458703/>):

<sup>48</sup> Չնայած հայ համայնքի ջանքերով հաջողվեց շիրմաքարերը կրկին տեղը դնել և տարածքից դուրս բերել ծանր տեխնիկան, սակայն, ինչպես և սպասելի էր, Հայր Տարիելը դրա համար որևէ պատիժ չկրեց:

<sup>49</sup> Տե՛ս <https://armenpress.am/arm/news/453679/>:

<sup>50</sup> “ՆՆՅՅՁՁ-ՂՁՆՅՅՁՁ” («Ասավալ-դասավալի»), 2005, № 17:

Վիրքում ՀԱԵ Վիրահայոց թեմի հաստատման դարաշրջանին, ՀԱԵ – ՎՈՒԵ պատմական և դավանաբանական հարաբերություններին ու Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների պատկանելության խնդրին է «Խվալինդելի դղե» թերթին տված հարցազրույցում անդրադարձել պատմաբան Գուրամ Մայխուրաձեն: Դրա համար առիթ է հանդիսացել 2005 թ. աշնանը Թբիլիսիում կայացած «Քրիստոնեությունը մեր կյանքում. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովը, որտեղ Վիրահայոց թեմի ներկայացուցիչ Լևոն Իսախանյանի զեկույցը՝ թեմի խնդիրների, Վրաստանում գտնվող 600-ից ավելի հայկական եկեղեցիների վերադարձնելու պահանջը սուր արձագանք է ստացել վրաց եկեղեցական, հասարակական ու գիտական շրջանակներում<sup>51</sup>: Գ. Մայխուրաձեն անհեթեթություն է համարում հայկական կողմի զեկույցում տեղ գտած մի շարք դրույթներ, ի մասնավորի՝ ՀԱԵ-ի՝ Վրաստանում որպես առանձին եկեղեցական միավոր V դարից գործելու<sup>52</sup>, երկրի տարածքում ՀԱԵ Վիրահայոց թեմին պատկանող 600-ից ավելի եկեղեցիների առկայության փաստերը<sup>53</sup>: Գ. Մայխուրաձեն որպես Թիֆլիսում առաջին հայկական եկեղեցու կառուցման թվական է նշում 1251 թիվը (նկատի ունի այդ թվականին հիմնադրված Թիֆլիսի Սբ. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին) ավելացնելով՝ դրանից առաջ հնարավոր է, որ լինեին հայկական եկեղեցիներ, թեև դա հաստատող փաստաթղթեր չեն գտնվի ոչ հայկական, ոչ էլ վրացական աղբյուրներում: Գ. Մայխուրաձեն դրանով անտեսում է, օրինակ, 754 թ. Թիֆլիսում կառուցված հայկական Հրեշտակապետաց եկեղեցու (1593 թ. ավերվել է, հիմնովին վերակառուցվել՝

<sup>51</sup> Անհիմն համարելով Վիրահայոց թեմի՝ Վրաստանի տարածքում առկա հայկական շուրջ 600 եկեղեցիների առկայության մասին տեսակետը՝ 2005 թ. դեկտեմբերին այդ առիթով հատուկ հայտարարությամբ է հանդես եկել նաև ՎՈՒԵ Սուրբ Սինոդը. «Նշված հայտարարությունները լարում են մեր երկրների և եկեղեցիների միջև հարաբերությունները, որի պատճառով էլ ՎՈՒԵ-ն զսպաժուկության կոչ է անում ՀԱԵ Վիրահայոց թեմին: Իր հերթին, ՎՈՒԵ-ն թույլ չի տա, որպեսզի հարաբերությունները լարվեն» [տե՛ս “სხადლო თაობა” («Ախալի թաղբա»), 2005, № 360]:

<sup>52</sup> Գ. Մայխուրաձեն չի ընդունում Վիրահայոց թեմի ներկայացուցչի՝ գիտաժողովին ներկայացրած փաստերը, ըստ որոնց՝ ՀԱԵ-ն, Վրաստանում որպես առանձին եկեղեցական միավոր, գործել է V դարից, և այս մասին է վկայում X դ. պատմիչ Ուխտանես եպիսկոպոսը՝ նշելով, որ արդեն V դարում Ցուրտավում նստում էր հայ եպիսկոպոս: Ըստ Վիրահայոց թեմի պաշտոնական տեսակետի՝ Ցուրտավը, թեպետ Վրաց եկեղեցուն պատկանող, սակայն հայալեզու թեմ էր, որտեղ V դարից սկսած, Սբ. Շուշանիկի կարգադրությամբ, եկեղեցական պաշտամունքը կատարվում էր հայերեն (տե՛ս <https://armenianchurch.ge/hy/ekegheciner2/vi-rahayoc-tem>): Գ. Մայխուրաձեն թեև չի ժխտում այս փաստը, սակայն ավելացնում է, որ Սբ. Շուշանիկի մահից հետո վրաց Կյուրիոն կաթողիկոսը (կաթողիկոս է ձեռնադրվել Հայոց Մովսես Բ կաթողիկոսի կողմից 599 թ., վերջինիս մահից հետո անտեսելով Հայ եկեղեցու հորդորները՝ 608 թ. ընդունել է Քաղկեդոնի ժողովի որոշումները՝ դառնալով ուղղափառ և գահակալելով մինչև 614 կամ 616 թթ.) Ցուրտավում ժամերգությունը կրկին վրացերենով սահմանեց [տե՛ս “სხადლო თაობა” («Խվալինդելի դղե»), 2005, № 199]:

<sup>53</sup> Նույն տեղում:

1781 թ. և վերջնականապես քանդվել՝ 1937 թ.), 931 թ. կառուցված Հարանց վանքի (վերանորոգվել՝ 1430 և 1715 թվականներին, իսկ 1900 թ.՝ հայ մեծահարուստ բարերար Ա. Մանթաշովի միջոցներով) և այլ եկեղեցիների առկայության փաստերը: Վրացի պատմաբանը նույն կերպ ուռճացված է համարում հայկական կողմի ներկայացրած՝ Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների թվաքանակը (621 առանց Աբխազիայում և Հարավային Օսեթիայում գտնվող եկեղեցիների): Այս խնդրի վերաբերյալ Գ. Մայիսուրաձեն առավել քան անհեթեթ միտք է արտաբերում՝ նշելով, թե, իբր, հայերը, միջազգային հարթակներում նման թվեր ներկայացնելով, ցանկանում են արևելյան Վրաստանի հանդեպ ներկայացնել տարածքային պահանջներ<sup>54</sup>:

Նույն գիտաժողովում Վիրահայոց թեմի ներկայացուցչի պաշտոնական տեսակետներին ծավալուն հարցազրույցների միջոցով արձագանքել է նաև Բ. Արվելաձեն: Վերջինս նույնպես չի ընդունում դեռ V դարից Ցուրտավում հայալեզու թեմի (Վրաց եկեղեցուն պատկանող), հայ եպիսկոպոսական աթոռի առկայության փաստը՝ հայտարարելով, որ հայկական կողմը դրա համար չունի ոչ մի ապացույց: Բ. Արվելաձեն հիմնովին մերժում է «Սբ. Շուշանիկի վկայաբանության» բնագրի հայերեն լինելու վարկածը<sup>55</sup> միանշանակ հաստատելով, որ «Վկայաբանության» հայերեն ընդարձակ խմբագրությունը թարգմանված է վրացերեն ընդարձակ խմբագրությունից, իսկ վրացական համառոտ խմբագրությունը՝ հայկական համառոտից: Ըստ այդմ, ըստ Բ. Արվելաձեի՝ միայն Շուշանիկի հայագրի (Վարդան Մամիկոնյանի դուստր) լինելու հանգամանքը էր կարող հիմք լինել ո՛չ «Վկայաբանության» սկզբնական տարբերակի հայերենով ստեղծվելու, ո՛չ էլ, առավել ևս, նրա օրոք Ցուրտավում հայկական (իմա՝ հայալեզու) թեմի գոյության համար: Մերժելով Վրաստանում վաղ միջնադարում հայալեզու, իսկ հետագայում հայոց թեմի գոյության փաստը<sup>56</sup>՝ նա անգամ Թբիլիսիի առաջնորդանիստ Սբ. Գևորգ եկեղեցին (կառուցված XIII դարում) համարում է ի սկզբանե վրացական: Ըստ նրա՝ կան փաստեր, որ այն սկզբնական շրջանում կոչվել է «Բերդի մեծ եկեղեցի» և միայն XIII դարում, երբ Վրաստան արշավեցին մոնղոլները, այն հայտնվեց հայերի ձեռքում<sup>57</sup>: Բ. Արվելաձեն առիթը

<sup>54</sup> Նույն տեղում: Գ. Մայիսուրաձեն գրեթե նույնական տեսակետներ է ներկայացնում քննարկվող խնդրի առիթով տպագրված մեկ այլ ընդարձակ հոդվածում [տե՛ս «ՃՆՆԾ» (“ԳյՆՆՆՆՆ”) («Բաստա» – «Ռեզոնանսի» հավելված), 2005, № 333]:

<sup>55</sup> Խնդրի քննարկման մասին տե՛ս Պ. Մ ու ը ր ա դ յ ա ն. 1996, էջ 179, 181–182:

<sup>56</sup> Ըստ Բ. Արվելաձեի՝ հայկական կողմը հայտարարում է Վրաստանում (Ցուրտավում և Թիֆլիսում) V դարից գոյություն ունեցող հայկական թեմի մասին՝ հեռահար նպատակ ունենալով հաստատելու, որ Թիֆլիսը ևս հայերն են կառուցել [“თბილისელები” («Թբիլիսեლებի» «Թբիլիսցիներ»), 2005, № 49]:

<sup>57</sup> Տե՛ս նույն տեղում: Նույն գիտաժողովին իր մեկ այլ արձագանք-հարցազրույցում Բ. Արվելաձեն ավելի է խտացնում գույները՝ նշելով XII դարից սկսած, երբ տարբեր նվաճողներ տիրապետեցին Վրաստանին, մի շարք վրացական եկեղեցիներ դատարկվեցին: «Էջմիածինն ուժեղ էր, նա զավթեց և յուրացրեց այդ



բաց չի թողնում սուր քննադատության ենթարկելու հուշարձանագետ Ս. Կարապետյանին՝ հիշատակելով 1995 թ. նրա հրատարակած քարտեզ-ցուցակը: Վերստին մատնանշելով իր «“Армянские” или грузинские церкви в Грузии» խորագրով գիրքը, գրականագետ-հայագետը ցուցակի 638 հայկական եկեղեցիներից շուրջ 400-ը համարում է վրացական, սակայն՝ ներկայացված որպես հայկական: Այս անգամ էլ նա դրանց շարքում հիշատակում է առաջնորդանիստ Սբ. Գևորգը, Թբիլիսիի Բեթղեհեմի Սբ. Աստվածածին<sup>58</sup> և Նորաշենի Սբ. Աստվածածին<sup>59</sup> եկեղեցիները, Խուճապավանքը (եկեղեցու՝ ուղղափառ հանդիսանալու, և, դրանից ելնելով, այն երբեմն հայկական գրականության մեջ «Հունածես» անվանվելու փաստը Բ. Արվելյաձեին հիմք է տալիս հայտարարելու՝ վրացական Խուճապավանքը հայերը համարում են հունական եկեղեցի) և այլն: 2005 թ. նույն օրերին տված իր մեկ այլ հարցազրույցում էլ Բ. Արվելյաձեի քննադատության թիրախում, Ս. Կարապետյանից, Ն. Տոկարսկուց զատ, հայտնվել է նաև Պ. Մուրադյանը, ում մեղադրում է վրացական աշխարհագրական անվանումներն ու տեղանունները, իբր, վրացականացնելու, Թբիլիսիի Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկե-

կեղեցիները: Նրանք քերեցին վրացական արձանագրությունները և գրեցին հայերեն գրություններ՝ օժեկով եկեղեցիները որպես հայկական» [“ՅճԵԾ” («Բաստա»), 2005, № 333]: Նա նույն գործընթացի արդյունք է համարում նաև Սամցխե-Ջավախք-Մալխայում կարճ ժամանակում (1830–1900-ական թվականներ) 87 հայկական եկեղեցու կառուցման փաստը (նշյալ թիվը Բ. Արվելյաձեինն է): Ըստ նրա հնարածին և բոլոր արժանահավատ աղբյուրներին հակասող մտքերի ու տեսակետների՝ 1830 թ. Կարինից այստեղ տեղափոխված 40.000 (նշյալ թիվը Բ. Արվելյաձեինն է) հայությունն արագորեն յուրացրել է Օսմանյան կայսրություն տեղափոխված քրիստոնյա վրացիների թողած եկեղեցիները՝ որոշները քանդելով ու նորից կառուցելով, իսկ որոշները՝ վերափոխելով:

<sup>58</sup> Խորհրդային կարգերի հաստատումից հետո միջնադարյան հայոց եկեղեցին հայտնվում է ազատ եկեղեցականների ձեռքին, իսկ XX դ. վերջին վրացական իշխանությունների նախաձեռնած «վերանորոգման» պատրվակով վերացվում են եկեղեցու պատերին առկա շուրջ երեք տասնյակ հայերեն արձանագրությունները, 1501, 1679 թվականների խաչքարերը, որմնանկարները: Արդյունքում եկեղեցին 1990–1993 թթ. վրացականացվում է և վերանվանվում «Ջեմո (Վերին) Բեթղեհեմ» [տե՛ս Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները. 1998, (1988–1998 թթ.), էջ 11, 88–90]: Պ. Մուրադյանի վկայությամբ՝ որոշ ժամանակ առաջ (հետխորհրդային առաջին տարիներին) իր հայերեն հիշատակարաններից, խաչկալից ու խաչքարերից զրկված Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցին հայոց դավանության և մշակույթի երևելի կենտրոնատեղի է եղել (տե՛ս Պ. Մուրադյան. 2009, էջ 72):

<sup>59</sup> Ըստ հայագետի՝ Նորաշենից քիչ հեռու գտնվող վրացական Ջվարիս մամա եկեղեցու գոյությունը վկայում է VII դարից իրարից բաժանված հայոց և վրաց եկեղեցիների՝ միմյանց հանդեպ ոչ բարյացակամ դիրքերից հանդես գալու պայմաններում «հին» Ջվարիի կողքին անհնար էր, որ հայերին թույլատրվեր կառուցելու «Նորաշեն», այն է՝ նոր եկեղեցի: Հետևաբար, ըստ Բ. Արվելյաձեի, այն ի սկզբանե կառուցվել է որպես վրացական եկեղեցի [“თბილისელები” («Թբիլիսեლებի»), 2005, № 49]:

ղեցին հայկական համարելու համար<sup>60</sup>: Բ. Արվելաձեն ոչ միայն օրինախախտում, այլև հանցագործություն է համարում Վիրահայոց թեմի արխիվը, որը պահվել է Վրաստանի պատմության կենտրոնական արխիվում, 1965 թ. Հայաստանի պետական արխիվին փոխանցելու քայլը: Դրանով, ըստ հայագետի, իրենք զրկվել են Ս. Կարապետյանի, Պ. Մուրադյանի և այլոց գիտական արժանահավատությունն ստուգելու հնարավորությունից<sup>61</sup>:

Հիշյալ գիտաժողովից հետո Վիրահայոց թեմի առաջնորդի խորհրդական Լևոն Իսախանյանը «Ռեզոնանսի» ամենշաբաթյա հավելված «Բաստա» թերթում ներկայացրել է Վրաստանի տարածքում գտնվող ավելի քան 600 եկեղեցիների պահպանության և Վիրահայոց թեմին վերադարձնելու, թեմի իրավական կարգավիճակի անորոշության, երկրի իշխանությունների այդ հարցում ունեցած անտարբեր ու կրավորական կեցվածքի, վրաց գիտնականների անհանդուրժող կեցվածքի մասին պահանջներն ու դժգոհությունները<sup>62</sup>: Դրանց ի պատասխան՝ ՎՈՒԵ Պատրիարքարանի մամուլի ծառայության ղեկավարի տեղակալ Զուրաբ Ցխովեբաձեն հայտնել է, որ բարձրացված հարցերի վերաբերյալ կաթողիկոս-պատրիարք Իլիա Չրդն առաջարկել է ստեղծել համատեղ հանձնաժողով: Չնայած այս, առաջին հայացքից խոհեմ առաջարկին՝ պաշտոնյան, այնուհանդերձ, արդեն իսկ առաջ ընկնելով, հայտարարում է (իմա՝ ոչ պաշտոնապես հաստատում է), որ խոսք չի կարող լինել ոչ միայն շուրջ 600, այլ նույնիսկ շուրջ 100 եկեղեցիների մասին: Ըստ նրա՝ շատ եկեղեցիներ հայերը զավթել են ցարիզմի ժամանակաշրջանում, երբ իշխանությունները բարյացակամ էին տրամադրված հայերի հանդեպ, իսկ վրացիներին ճնշում էին<sup>63</sup>:

Մեծ աղմուկ բարձրացրած հիշյալ գիտաժողովի նախաձեռնության հետևում մեծ դավադրություններ է փնտրել և գտել ակադեմիկոս Գուրամ Շարաձեն: Ըստ նրա՝ գիտաժողովը նախաձեռնել և Վիրահայոց թեմի ներկայացուցչին նման հայտարարություն-պահանջներով հանդես գալու հնարավորություն են տվել պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Դ. Մուխանիշվիլին և Ցխովե-Աբխազիայի թեմի առաջնորդ Դանիել վերապատվելին, ովքեր, ըստ Գ. Շարաձեի, համաձայն են՝ կատարվեն հայկական կողմի պահանջները<sup>64</sup>:

<sup>60</sup> “საქართველოს რესპუბლიკა” [«Աաքարթվելուս ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)], 2005, № 286–287: Բ. Արվելաձեն եկեղեցու հիմնադրումը XV դարից տեղափոխում է շուրջ 1000 տարի հետ՝ հասցնելով մինչ Վախթանգ Գորգասալի ժամանակներ: Բնականաբար, այդ միջոցով Բեթղեհեմի Սբ. Աստվածածինին տալով վրացական «ազգություն»՝ նա հայտարարում է, որ վերջինիս վրացերեն արձանագրությունները ոչնչացվել են Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ, ինչից հետո էլ եկեղեցին հայտնվել է հայերի ձեռքում:

<sup>61</sup> Տես՝ նույն տեղում:

<sup>62</sup> “ბასტა” («Բաստա»), 2005, № 333:

<sup>63</sup> Նույն տեղում:

<sup>64</sup> Նպատակը, ըստ ակադեմիկոսի, «Վրաստանի իշխանությունների հոգևոր դատարարակ» Դանիել վերապատվելիին Վրաստանի կաթողիկոսի գահին նստեցնելն էր և, Վատիկանի հետ պայմանագրի կնքման միջոցով, ՎՈՒԵ-ն կաթողիկոսանելը: Գ. Շարաձեի կարծիքով՝ Վրաստանի օրենսդիր և գործադիր իշխանության

Գիտաժողովից հետո Վիրահայոց թեմի պահանջների, Ս. Կարապետյանի ցուցակ-քարտեզում տեղ գտած 638 եկեղեցիների պատկանելության խնդրին է անդրադարձել «Ախալի 7 դղե» թերթը: Հրապարակման նախաբանում է կրկնելով և մեջբերելով Բ. Արվելաձեին՝ թերթն այնուհետև ներկայացնում է պատմաբան Բուբա Կուրավայի ծավալուն հարցազրույցը: Խոսելով Զավախքի եկեղեցիների մասին՝ նա ինչ-որ տեղ կրկնում է Բ. Արվելաձեին՝ նշելով 1830 թ. Կարինից այստեղ տեղափոխված հայությունն արագորեն յուրացրել է X դարից կառուցված վրացական (իմա՝ ուղղափառ հայության) եկեղեցիները, և, որ այդ գործընթացը շարունակվում է հետխորհրդային տարիներին<sup>65</sup>: Ըստ Բ. Կուրավայի՝ Վրաստանում կան այնպիսի կատեգորիայի եկեղեցիներ, որոնք սկզբում եղել են վրացական, հետո ՀԱԵ Վիրահայոց թեմը ձեռք է բերել դրանք, իսկ հետխորհրդային շրջանում «վերականգնվեց արդարությունը», և վերջիններս վերստին գործում են որպես վրացական եկեղեցիներ: Նրա կարծիքով՝ շատ հաճախ վրացական եկեղեցիների հենքի վրա կառուցել են հայկական եկեղեցիներ, «որպեսզի հետագայում յուրացվեր ոչ միայն եկեղեցիների կառուցման վայրը, այլև պատմությունը»: Պատմաբանի առանձնացրած մյուս կատեգորիայի եկեղեցիները պատկանում են նախկին վրացական գյուղերում «հայացված վրաց-յուսավորչականների» կառուցած եկեղեցիներին, որոնք կառուցվել են հայոց եկեղեցիների հիմքի վրա: Նման և այլ կատեգորիաների եկեղեցիների փոխանցումը հայերին Բ. Կուրավան անթույլատրելի է համարում: Միակ բանը՝ ըստ պատմաբանի, կարելի է անել, դա այն է, որ չկեղծվի և չմոռացվի յուրաքանչյուր եկեղեցու պատմության հայոց ժամանակաշրջանը, չքերվեն և չոչնչացվեն հայերեն արձանագրություններն ու այլն<sup>66</sup>:

«Ախի» թերթին 2005 թ. տված իր ծավալուն հարցազրույցում Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների պատկանելության, Հայոց ցեղասպանության և հայ-վրացական հարաբերություններին առնչվող այլևայլ խնդիրներ է շոշափել պատմաբան Սվիմոն Մասխարաշվիլին: Անհիմն համարելով Վրաստանի՝ շուրջ 650 եկեղեցիների նկատմամբ հայկական պահանջատիրությունը, ինչպես նաև անդրադառնալով մի շարք պատմական անցքերին՝ վերջինս հայտարարում է, որ այդ ամենի նպատակն է, «... որպեսզի Վրաստանում հայերը ինչ որ ձևով փոխարինեն վրացիներին: Դրա համար ամբողջ վրաց ազգը պետք է լինի մոնոֆիզիտ, և ոչ միայն հնագույն հուշարձանները, այլ նաև Վրաստանի տարածքները պետք է համարել հայ-

---

որոշ դեմքեր այդ նպատակով ցանկացել են ֆիզիկապես վերացնել կաթողիկոս Իլիա 2-րդին, որի համար էլ, ըստ նրա, 2005 թ. դեկտեմբերի 21-ին վերջինիս թունավորել էին [“სხადლი თაობა” («Ախալի թաոբա»), 2005, № 358]:

<sup>65</sup> “სხადლი 7 დღე” («Ախալի 7 դղե» – «Նոր 7 օր»), 2005–2006, № 42:

<sup>66</sup> Վրացական հասարակական-քաղաքական և գիտական շրջանակներում կարծրացած վերոբերյալ տեսակետների կողքին Բ. Կուրավան, այդուհանդերձ, ընդունում է նաև հայկական մի շարք եկեղեցիների՝ հետխորհրդային շրջանում վրացականացվելու փաստերը՝ դրանք համարելով սովորական երևույթ: Նաև ընդունում է՝ կան հայկական եկեղեցիներ, որոնք կառուցվել են հայոց եկեղեցու կողմից ձեռք բերված կալվածքներում, ըստ նրա՝ «համարձակ կերպով կարելի է համարել հայկական» (տե՛ս նույն տեղում):

կական: Նրանք (Հայերը – Վ. Ս.) հույս ունեն, որ հզոր, երկարաժամկետ քաղաքացիական պայքարում և ֆինանսական լուրջ միջոցներով կհասնեն նրան, որ աշխարհը Վրաստանի բոլոր պատմական հուշարձանները կճանաչի գրիգորյանական: Այսինքն ուզում են մեզ՝ վրացիներին, համոզել, որ մենք մոլորված հայեր ենք»<sup>67</sup>: Հայկական պահանջների հանդեպ կոշտ հակադրություններում պատմաբան Ս. Մասխարաշվիլին կրկնում է Գ. Մախտուրաձեին՝ աղաղակելով, թե հայերը դրանով Վրաստանին ներկայացնելու են տարածքային պահանջներ: «Երբ նրանք մեզ ապացուցում են, որ Վրաստանում 650 եկեղեցի հայկական է, չէ՞ որ դրանով վիրավորանք են հասցնում մեր բարոյականությունը, ազգային ինքնազնահատականին, և թող իրենք չնեղանան, երբ համապատասխան պատասխան են ստանում: Փոխանցել իրենց այդ եկեղեցիները՝ նշանակում է այդ եկեղեցիներում անցկացնել պատարագ հայերենով, իրենց հավատացյալների շատացում վրացիների հաշվին, հողատարածքների ձեռքբերում ... Այսինքն առաջանում է վրացական հողերի, մեր եկեղեցական գանձարանի պահանջ ...», – հայտարարում է Ս. Մասխարաշվիլին<sup>68</sup>: Պատմաբանը, ի վերջո, հանգում է մի արտառոց եզրակացություն, ըստ որի՝ «... «Էջմիածնի» (չակերտները հեղինակին են – Վ. Ս.) գլխավոր խնդիրը Վրաստանի սեփականացումն է՝ ժողովրդի և պատմության հետ միասին: Իրա համար նա երբեք չի ամաչել հսկայական գումարներ ծախսել, որպեսզի գնի վրացի դավաճանների և այսուհետ էլ չի ամաչելու: Չէ որ այդ ազգին կամ Իրանն էր օգտագործում Վրաստանի դեմ որպես հինգերորդ շարայուն կամ Ռուսաստանը: Իսկ իրենք՝ Անտանտի պետությունները, 1918 թ. Հայաստանին օգտագործել են Վրաստանի դեմ»<sup>69</sup>:

Վրահայոց թեմի իրավական կարգավիճակի և թեմի՝ Վրաստանի հայկական եկեղեցիների հանդեպ ունեցած պահանջների շուրջ վրաց հասարակական-քաղաքական ու գիտական շրջանակների բարձրացրած հերթական աղմուկի առիթ էր Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) Սոգար Սուբարիի՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջոցով մասին 2005 թ. առաջին կիսամյակային զեկույցը՝ ներկայացված Վրաստանի խորհրդարանի արտահերթ նիստում 2005 թ. դեկտեմբերի 23-ին: Այդ զեկույցում առանձնահատուկ քննության էր առնված Վրաստանում կրոնական ազատությանը, ՎՈՒԵ-ի և պետության միջև 2002 թ. կնքված Սահմանադրական համաձայնությունում ստեղծված խտրական միջավայրին, Վրահայոց թեմին ու Կաթոլիկ եկեղեցուն վերադարձվելիք եկեղեցիներին առնչվող հարցերը: Գրավոր զեկույցի մեջ «Սահմանադրական համաձայնության խտրականության հարցը» վերտառությամբ բաժինը շարադրված էր հետևյալ կերպ. «Ըստ Սահմանադրական համաձայնության ՎՈՒԵ հոգևորականները ազատվում են գինավորական ծառայությունից, կառավարությունը ճանաչում է եկեղեցու ունեցվածքը, պահպանում է գաղտնի խոստովանությունը, եկեղեցական նշանավոր տոներին հայտա-

<sup>67</sup> “Տօնօ” («Ախի» – «Արշալույս»), 2005, № 49:

<sup>68</sup> Նույն տեղում:

<sup>69</sup> Նույն տեղում:

րարում է հանգստյան օրեր, եկեղեցին և պետությունը համագործակցում են ընդհանուր շահերի տարբեր ոլորտներում, եկեղեցին օգտվում է հարկային արտոնություններից և այլն: Կառավարությունը միայն ՎՈՒԵ-ին է տալիս արտոնություններ Վրաստանում: Դրանով, փաստորեն, խախտվում է հավասարության սկզբունքը, ինչն ընդունվել է Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով: Քանի դեռ կառավարությունը չի տրամադրել այդպիսի առավելություններ մյուս կրոնական հոսանքներին ևս, դրանք ենթարկվելու են անուղղակի խտրականության՝ ըստ երկրի Սահմանադրության, և այդպիսով ՎՈՒԵ-ի համեմատ գտնվելու են անհավասար իրավիճակում»<sup>70</sup>: Ձեկույցում նաև փաստվում է, որ չլուծված է մնում եկեղեցիների՝ ՀԱԵ-ին և կաթոլիկ եկեղեցուն վերադարձնելու մասին հարցը: ՄԻՊ-ը հստակորեն նշում է, որ խորհրդային տարիներին Թբիլիսիում գործել է ընդամենը երկու հայկական եկեղեցի, և այդ իրավիճակը պահպանվում է մինչ օրս: Ձեկույցում նաև տեղ էին գտել Թբիլիսիում գտնվող և ՀԱԵ-ի ու ՎՈՒԵ-ի միջև վիճելի համարվող 5 եկեղեցիների և ողջ Վրաստանի տարածքում սփռված հայկական եկեղեցիների մասին դրույթներ: Ս. Սուբարին փաստել էր, որ կաթոլիկ եկեղեցին իր հերթին պահանջում է վերադարձնել Պատրիարքարանի կողմից զբաղեցրած 4 եկեղեցիները, որոնք գտնվում են Քուլթայիում, Գորիում, Իվլիտայում և Ուդեում (վերջին երկուսը գտնվում են Սամցխե-Ջավախքում): Խոսելով ՀԱԵ-ի և ՎՈՒԵ-ի միջև առկա լարված հարաբերությունների մասին՝ ՄԻՊ-ը նշել էր, որ սովյակ փուլում (2005 թ.) ՀԱԵ Վիրահայոց թեմն արմատական կերպով առաջադրել է Նորաշենի Աբ. Աստվածածին (Թբիլիսի) և Աբ. Նշան (Ախալցխա) եկեղեցիների վերադարձման հարցը. «Պատրիարքարանը հայտարարել է, որ այդ հարցի ուսումնասիրման համար հանձնաժողով կարելի է ստեղծել միայն այն դեպքում, եթե ընդունվի «Կրոնական միավորումների մասին» օրենքը: Խորհրդարանը սովյակ օրենքի ընդունման վերաբերյալ արդեն արտահայտել է իր բացասական դիրքորոշումը: Տվյալ եկեղեցիների պատմական սեփականատերերի մասին Պատրիարքարանի դիրքորոշումը պաշտպանում է նաև կառավարությունը, որը միակողմանի չի որոշում՝ այդ եկեղեցիները վերադարձնել պատմական սեփականատերերին, թե՛ ոչ: Այդպիսով, հայկական և կաթոլիկ եկեղեցիների հայտարարությունները, ինչպես նաև Մարդու իրավունքի պաշտպանի հանձնարարականներն առայժմ չեն տվել որևէ արդյունք»<sup>71</sup>:

ՄԻՊ Ս. Սուբարի այսպիսի հնչեղությունն իսկական փոթորիկ է բարձրացնում վրաց հասարակական-քաղաքական, աշխարհիկ և կրոնական շահագրգիռ շրջանակների մոտ: Հենց զեկույցի ընթերցման պահին խորհրդարանի դահլիճը լքում են ինչպես իշխող, այնպես էլ՝ ընդդիմադիր մի շարք պատգամավորներ, հանձնաժողովի նախագահներ՝ բողոքելով զեկույցում սովյակ հարցի շուրջ տեղ գտած հակաուղղափառ մոտեցումների դեմ<sup>72</sup>:

<sup>70</sup> “ახადგილი თაობა” («Ախալի թաօբա»), 2005, № 355:

<sup>71</sup> Նույն տեղում: ՄԻՊ-ի զեկույցում նաև խոսվում է Նորաշենի Աբ. Աստվածածին եկեղեցու ճակատագրի մասին, որի վերադարձման հարցն առանձնակի սուր էր դրված:

<sup>72</sup> «Մենք չենք կարող լսել այդ նողկանքը և ի նշան բողոքի լքում ենք նիստերի դահլիճը», – ասել էր կրթության հանձնաժողովի նախագահ Ռ. Կու-

Ստեղծված շրկացած իրադրությունը ստիպում է խորհրդարանական մեծամասնության դեկավար Մայա Նաղիրաձեին բարձրաձայնել, որ Ս. Սուբարիի հայտարարությունը կառավարության դիրքորոշումը չէ<sup>73</sup>: Արձագանքելով Ս. Սուբարին պարզաբանել է, որ նա չի պահանջում վերանայել Սահմանադրական համաձայնագիրը, այլ հաստատում է կառավարությունը պետք է կրոնական հարաբերությունների առնչությամբ ունենա ճիշտ դիրքորոշում: Ըստ նրա՝ կառավարությունը մյուս կրոնական հոսանքների հետ ևս պետք է ունենա նման համաձայնագրեր<sup>74</sup>:

Վրաստանի ՄԻՊ-ի հաշվետու զեկույցին, ինչպես և սպասելի էր, լայնորեն անդրադարձան և՛ հասարակական-քաղաքական, և՛ գիտական շրջանակները՝ սփիններով ընդունելով Ս. Սուբարի՝ իրական ժողովրդավարության հետ միանգամայն հաշտ մոտեցումները: Քրիստոնեա-դեմոկրատների շարժման առաջնորդ Գիորգի Բուրջանաձեն նրա ելույթն ու մոտեցումները կապում է համաշխարհայնացման գործընթացների հետ՝ դրանք համարելով անհավատ, անազգ մարդու հայտարարություն և գլոբալ մարտահրավեր՝ ազգի ու պետության դեմ, իսկ իրեն՝ Ս. Սուբարին՝ տիկնիկ<sup>75</sup>:

Խնդրին անդրադարձել է նաև «Ախսի» թերթը՝ ներկայացնելով Ս. Սուբարիի զեկույցի՝ կրոնական ազատության ու եկեղեցիների վերադարձի խնդրին առնչվող մասերը և «Ազգային լուբլի» կազմակերպության առաջնորդ Գ. Անդրիաձեի դիրքորոշումը, համաձայն որի՝ Սահմանադրական համաձայնագիրը վավերացնող փաստաթղթում գրված է՝ 1801 թվականից՝ Վրաստանում իրականացված կրոնական բոլոր գործընթացներն ապօրինի են համարվում, քանի որ այդ թվականից ՎՈՒԵ-ն կորցրել էր ինքնուրույնությունը: Հետևաբար, ըստ Գ. Անդրիաձեի, Ռուսաստանի կայսրության հովանու տակ կառուցված եկեղեցիները գողության միջոցով են կառուցվել: Նա Ս. Սու-

սիանին, իսկ մեկ այլ խորհրդարանական Մ. Մաչավարիանին հայտարարել էր, որ Վրաստանում չի խախտվել և ոչ մի կրոնական հոսանքի իրավունք: Ըստ նրա՝ բոլոր հոսանքներն էլ իմացել են ՎՈՒԵ-ի և պետության միջև ձևակերպված Սահմանադրական համաձայնագրի մասին: Այդ տեսակետն է պաշտպանել նաև Ընթացակարգային հարցերի հանձնաժողովի նախագահ Խ. Գոգորիշվիլին, ով իր հարցադրումներով խստորեն քննադատել էր Ս. Սուբարիին (տե՛ս նույն տեղում):

<sup>73</sup> Նույն տեղում:

<sup>74</sup> Նույն տեղում: Պատասխանելով խորհրդարանականների հարցերին՝ Ս. Սուբարին նաև հայտարարել է՝ կրոնական ազատության հարցն ամենակարևոր խնդիրներից մեկն է Վրաստանում և հավելել, որ ինքը կրոնի մասին ազատական ու հավասար օրենքի ընդունման կողմնակից է (նույն տեղում):

<sup>75</sup> Գ. Բուրջանաձեն նաև սպառնում է հայերին՝ պահանջների շարունակական լինելու դեպքում հիշեցնել «բռնագավթված» Լոռու մասին: Նաև վիրավորում է Ս. Սուբարիին՝ նրան համարելով կա՛մ դաշնակցականներից ֆինանսավորվող և նրանց պատվերը կատարող, կա՛մ դեգեներատ, որով պարտավոր էին զբաղվել Վրաստանի հատուկ ծառայությունները: Ըստ քաղաքական գործչի՝ հայերը հաղթել են Ղարաբաղում և ամենուր հանդես են գալիս հաղթածի դիրքերից, ու այդ ամենին գումարվում է նաև հայկական համաշխարհային ներուժը [տե՛ս «Հոյճոյն» («Արգումենտի» — «Արգումենտ»), 2006, № 1]:

բարիի գործունեությունն անհասկանալի և անտրամաբանական է որակում՝ հոնտորական հարց հնչեցնելով, թե վերջինս ժողովրդական պաշտպան է, թե՛ ուղղափառություն թշնամի<sup>76</sup>:

Վրաստանի ՄԻՊ-ի հաշվետու գեկույցի և վերջինիս շուրջ բարձրացված աղմուկի կապակցությամբ 2006 թ. հունվարի 19-ին նիստ է գումարել Սամցխե-Ջավախքի ու Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը՝ պատրաստակամություն հայտնելով աջակցել Ս. Սուբարիին և հույս հայտնել, որ նրա ջանքերը մարդու իրավունքների պաշտպանության գործում ապարդյուն չեն լինի: Բնականաբար, Ջավախահայության այս քայլը ևս առկա հայատյացության խորապատկերին խստորեն քննադատվեց վրաց մամուլում, իսկ հայտարարության հեղինակներն անվանվեցին «Սամցխե-Ջավախքի հայ անջատողականներ»<sup>77</sup>:

2005 թ. տեղի ունեցած վերը նշված երկու աղմկահարույց իրադարձությունները՝ «Քրիստոնեությունը մեր կյանքում. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովը և Վրաստանի ՄԻՊ Ս. Սուբարիի 2005 թ. առաջին կիսամյակային հաշվետվությունը, որոնցում ի ցույց տրվեց կամ առավել ցայտուն ընդգծվեց Վրաստանի կրոնական-եկեղեցական ոլորտում առկա ճգնաժամային ու պայթյունավտանգ իրադրությունը, ևս մեկ առիթ էր վրաց հասարակական-քաղաքական, գիտական և եկեղեցական շրջանակների համար՝ հայկական պահանջների հանդեպ առանց այն էլ ոչ բարյացակամ վերաբերմունքն ուղղակի թշնամանքի վերածելու, գիտական հիմնավորումներից զուրկ, զգացական հողի վրա կատարվող քննարկումները երկար ու ձիգ դարձնելու համար: Արդեն բազմիցս հիշատակված Բ. Արվելաձեն 2006 թ. և հետագա շրջանում ևս կատաղի պայքար է մղում ՀԱԵ Վիրահայոց թեմի պահանջների դեմ: Վրաստանի հայկական եկեղեցիների պահանջի տակ կրկին տարածքային հավակնություններ տեսնելով առաջնորդանիստ Սբ. Գևորգ եկեղեցին վերատին հայտարարելով Բերդի մեծ բակի հին վրացական (ըստ նրա՝ եկեղեցին նկարագրողված է, ինչը հաստատում է նրա վրացական ծագումը), իսկ XIII դարում հայկականացված, Թբիլիսիի Սբ. Նշանը (Սուրբ Նիկողայոս)՝ Ծմինդա Ջվարի կամ Սբ. Նիկողոզ անունով հին վրացական, իսկ XVIII դարում հայերի կողմից խլված եկեղեցիներ՝ Բ. Արվելաձեն, իր «փաստարկների» վրա ավելացնելով նորերը, շարունակել է հակահայկական նյութերով ողողել վրացական մամուլի էջերը<sup>78</sup>:

<sup>76</sup> “սոսո” («Ախսի»), 2005, № 8: Ավելի վաղ կառուցված եկեղեցիների հարցն էլ, բնականաբար, վրացի գործիչն առաջարկում է քննարկել «Հայաստանի տարածքում գտնվող վրացական» կամ «հայկականացված» եկեղեցիների հարցին զուգահեռ:

<sup>77</sup> “სხადლო თაობა” («Ախալի թաոբա»), 2006, № 25:

<sup>78</sup> “ქობიბა” [«Քրոնիկա» («Խրոնիկա»), 2006, № 8]: Այդուհանդերձ, Բ. Արվելաձեն հայկական է համարել Թբիլիսիի Շամխորեցոց (Շամխորեցոնց) Սբ. Աստվածածին (Կարմիր Ավետարան), Սբ. Էջմիածին եկեղեցիները, իսկ Նորաշենի Սբ. Աստվածածինն այս անգամ վերջինս դժվարանում է վրացական համարել (սակայն վերատին պնդում է, որ վերջինս ի սկզբանե կառուցվել է վրացական եկեղեցու հիմքի վրա):

Քննարկվող խնդրին 2006 թ. անդրադարձել է նաև քաղաքագետ Սոսո Յինցաձեն՝ նշելով այն պահանջները, որոնք հայ եկեղեցին ներկայացնում է վրացական եկեղեցուն, անհեթեթուվթյուն են<sup>79</sup>:

Հայերի՝ Վրաստանի հայկական եկեղեցիների հանդեպ պահանջների և «Ջավախքի հանդեպ հավակնությունների», «Վրաստանի աստիճանական մասնատման մասին» խոսել է նաև հայտնի գրող Ռևազ Միշվելաձեն: Չնայած, իր խոստովանությամբ, հայ գործընկերների հետ ջերմ հարաբերություններին՝ նա, այդուհանդերձ, խնդրո առարկա հարցերի մասին խոսելիս հետևում է վրաց հասարակական-քաղաքական, գիտական շրջանակներում կարծրացած ավանդույթներին. «Վրաստանում եկեղեցի-վանքերի թիվը 789 է: Եթե դրանցից 600-ը հայերին է պատկանում, ուրեմն Վրաստանը երբեք գոյություն չի ունեցել: Բայց իրականում ոչ թե գոյություն չի ունեցել, այլ Հայաստանը Վրաստանի մի մասնիկն էր, այն էլ ոչ թե 10 կամ 20 տարի, այլ դարերի ընթացքում: Երբ Դավիթ Շինարարն ազատագրեց Անին (վրաց թագավորի դեպի Անի արշավանքը տեղի է ունեցել 1124 թ. – Վ. Ս.), ոչ թե Հայաստանի մայրաքաղաքն ազատագրեց, այլ իր հարազատ մայրաքաղաքը»<sup>80</sup>, – հայտարարել է գրողը:

Խնդրի շուրջ վրացական շրջանակների հարատև աղմուկի հերթական (ուսումնասիրվող ժամանակահատվածի, թերևս՝ վերջին) շիկացումը տեղի ունեցավ 2009 թ.: Նույն թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ Արտաքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի ու արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, անդրադառնալով Վրաստանի հետ հարաբերություններին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «Ինտեգրում առանց ձուլման» սկզբունքից: Ինտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը: Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի՝ Հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության միջուկորտի խորացմանը: Այս բոլոր

<sup>79</sup> “ახალცი თაობა” («Ախալի թաօբա»), 2006, № 190: ՀՀ-Վրաստան-Ռուսաստան բազմակողմ հարաբերությունների քննարկման համատեքստում միակողմանի լույսի ներքո ներկայացնելով խնդիրները՝ քաղաքագետը քննադատում է հայկական կողմին և՛ Վրաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիները պահանջելու, և՛ վրաց-աբխազական երկաթուղու վերագործարկման առաջարկներին (նա դրանում Աբխազիայի առանձնացման ու որպես կողմ հանդես գալու վտանգ է տեսնում), և՛ Վրաստանի հանդեպ, իր որակմամբ, թշնամական տրամադրություններ հրահրելու, և՛ վրաց-ադրբեջանական հարաբերություններում տհաճ միջադեպերի պատճառ հանդիսանալու, և՛ ՌԴ-ի տարածաշրջանային ակտիվացման պայմաններում Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ գործելու ու Ջավախքում ինքնավարության պահանջների առաջադրման համար:

<sup>80</sup> “თბილისელები” («Թբիլիսեյեբի»), 2006, № 12:



Հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային» (ընդգծումները մերն են – Վ. Ս.)<sup>81</sup>:

Հայկական կողմը, բնականաբար, ողջունեց նախագահ Ս. Սարգսյանի այս քայլը, վրացական մամուլը և հասարակական-քաղաքական միտքը, ընդհակառակը, հուժկու քննադատության ենթարկեցին այն<sup>82</sup>: Այդ գործի «առաջամարտիկներին» մեկը վերադարձրեց Բ. Արվելյանին էր: Համարելով, որ ՀՀ նախագահի հայտարարությունը եղել է Ռուսաստանի նախագահ Վլ. Պուտինի թելադրանքով, իսկ Վրաստանի հայկական հուշարձանների պահպանման մասին պահանջը հիմնված է եղել Ս. Կարապետյանի 1995 թ. հայտնի քարտեզ-ցուցակի վրա՝ նա կրկին սուր քննադատության է ենթարկում վերջինիս՝ այս անգամ նրա ցուցակի հայկական եկեղեցիների 70–80 %-ը համարելով վրացական: «Ինչ վերաբերում է Վիրահայոց թեմին իրավական կարգավիճակ տալու հարցին, նախ, չէ՞ որ այդ թեմն ազատ կերպով գործում է, ոչ-ոք չի խանգարում հոգևոր գործունեության ընդլայնմանը, Զավախքում և այլ վայրերում նորանոր եկեղեցիների բացմանը, մեկ-մեկ էլ «Նորաչեն» ամսագիր է հրատարակվում և այլն. էլ ի՞նչ են ուզում, չգիտեմ, թեև դա իրավական ոլորտ է, և իրավագետներն ավելի լավ կրատեն այդ հարցը»<sup>83</sup>, – նշել է նա:

Քաղաքագետ-հրապարակագիր Գիորգի Գիգաուրին էլ, վրացական «ավանդական» կանխատեսումներով մատնանշելով Վրաստանի մասնատումն ու վրաց պետականության վերացումը (բնականաբար՝ «ՀՀ-ի ու Ռուսաստանի ակտիվ ներգրավմամբ»), Ս. Սարգսյանի հիշյալ հայտարարություն-պահանջները համարել է Մ. Սահակաշվիլու՝ 2009 թ. հունիսին Երևանում ստացած Պատվո չբանչանի և ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման (իր որակմամբ՝ կաշառքի) արդյունք<sup>84</sup>:

Ս. Սարգսյանի պահանջներն անհիմն ու անհեթեթ համարեց կամ Զավախքում անկայունացման վտանգներ տեսավ նաև քաղաքագետ Մամուկա Արեշիձեն, ով, մատնանշելով Ս. Սարգսյանի՝ ՀԱԵ Վիրահայոց թեմի գրանցման անհրաժեշտության մասին հայտարարությունը, ՀՀ և Վրաստանի իշխանություններին ուղղված «հակընդդեմ» հարց է բարձրացրել, թե ինչու՞ է Աբխազիան ներառված է ոչ թե Վիրահայոց, այլ Ստավրոպոլի թեմի կազմում<sup>85</sup>:

<sup>81</sup> «Հայաստանի Հանրապետություն», 02. IX. 2009, № 168:

<sup>82</sup> Վրացական մամուլում հայերենին իրավական կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկման մասին տե՛ս Վ. Սարգսյան. 2018, № 3, էջ 171–183:

<sup>83</sup> «საქართველოს რესპუბლიკა» («Սաքարթվելոս ռեսպուբլիկա»), 2009, № 179:

<sup>84</sup> «სხვადა-დასხვადალი» («Ասավալ-դասավալի»), 2009, № 36, Գ. Գիգաուրու՝ նույն թեմայով հարցազրույցը տե՛ս «სხვადა-დასხვადალი» («Ասավալ-դասավալի»), 2009, № 39:

<sup>85</sup> «რეზონანსი» («Ռեզոնանսի»), 2009, № 186: 1997 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կոնդակով Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերականգնվողից երեք թեմերի՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմ, Հարավային Ռուսաստանի թեմ, Ուկրաինայի թեմ: Հարավային Ռուսաստանի թեմը կազմավորվել էր 1991 թ. ստեղծված Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդության հիման վրա: Մ. Արեշիձեն «Ստավրոպոլի թեմ» ասելով՝ նկատի

Հրապարակագիր Մամուկա Վաչակիձեն, առավել «հեռուն գնալով» ու Ս. Սարգսյանի պահանջները համարելով «դաշնակցական նկրտումներ», հիշեցնելով հայերի «Վրաստանում հյուր լինելու» և վերջիններիս «դավաճանական» պահվածքի, արխագահայերից կազմված «Մարշալ Բաղրամյան» գումարտակի ու այլնի մասին՝ հայտարարել է, որ ՀԱԵ Վիրահայոց թեմին պաշտոնական կարգավիճակ տալու անհրաժեշտության մասին հայտարարության պատասխանը Ս. Սարգսյանը կստանա ՎՈՒԵ Պատրիարքարանից<sup>86</sup> :

### Եզրակացություն

Ի տարբերություն ՎՈՒԵ-ին շնորհած բացառիկ իրավունքների ու արտոնությունների (2002 թ. Սահմանադրական համաձայնագրով սահմանված)՝ վրացական կողմը հետխորհրդային ողջ ընթացքում ոչ միայն համապատասխան քայլեր չի ձեռնարկել երկրի տարածքում գործող այլ թեմերի՝ խորհրդային տարիներին խլված ժառանգությունը վերադարձնելու ուղղությամբ, այլև՝ ճիշտ հակառակը, ամեն կերպ ձգտել է կամ ոչնչացնել, կամ յուրացնել այն: Այդ նպատակով վրացական գիտական, հասարակական-քաղաքական ու կրոնական շրջանակների կողմից շրջանառության մեջ են դրվել այլոց մշակութային ժառանգության արգասիք հուշարձանների, վանքերի ու եկեղեցիների՝ վրացական լինելու մասին արհեստական, հաճախ՝ զգացական և ոչ փաստական հենքի վրա ստեղծված կարծիքներ, տեսակետներ ու դիրքորոշումներ:

Ըստ վրացական դիրքորոշման՝ վրացական (ՎՈՒԵ-ին պատկանող) են ոչ միայն Հայ Առաքելական և Հայ Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցու (VII դ.) մի շարք վանքեր ու եկեղեցիներ, այլև հետագայում ուղղադավան (օրթոդոքս) հայության կառուցած միջնադարյան (հիմնականում X–XIII դդ.) մի շարք հուշարձաններ, որոնք գտնվում են ներկայիս Վրաստանի (հիմնականում Ջավախքի), ՀՀ Լոռու, Տավուշի և Կոտայքի մարզերի, պատմական Տայքի, վերջինիս հյուսիսից սահմանակից Գուգարքի Կղարջք, Արտասան ու այլ գավառների տարածքում:

ՀԱԵ-ի բազմաթիվ եկեղեցիներ վրացական համարելու հիմքում հիմնականում դրվում են «ինչ-որ մի ժամանակ դրանք վրացական լինելու և հետագայում հայության կողմից դրանք զավթվելու» մասին տեսակետներ: VII դարի Հայ Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցուն և ուղղադավան (օրթոդոքս) հայության կառուցած միջնադարյան վանքերն ու եկեղեցիները վրացական շրջանակներում համարվում են վրացապատկան հուշարձաններ՝

ունի ՀԱԵ Հարավային Ռուսաստանի Հայոց թեմը, որն ընդգրկում է Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետություններում (այդ թվում՝ մասամբ ճանաչված Աբխազիայում) գործող հայկական եկեղեցիներն ու ծխական համայնքները (տե՛ս Բրիտանյա Հայաստան հանրագիտարան. 2002, էջ 578, 802): Վերլուծելով տարածաշրջանային իրողությունները՝ Մ. Արեշիձեն Ս. Սարգսյանի պահանջները համարել է ՌԴ-ի ճնշման պատճառով իրականացված քայլ [տե՛ս “კვირის პალოტრა” («Կվիրիս պալիտրա»), 2009, № 31]:

<sup>86</sup> “საქართველოს რესპუბლიკა” («Սաքարթվելոս ռեսպուբլիկա»), 2009, № 175:

*Հիմնականում ելնելով այդ հուշարձանների վրա առկա հին վրացերեն արձանագրություններից:*

*Վերոնշյալ իրողությունների արդյունքում՝ հայ և վրաց պետական, եկեղեցական, գիտական, հասարակական-քաղաքական, անգամ կենցաղային հարաբերություններում առկա է մշտական լարվածություն, որը պարբերաբար շիկանում է ու բացասական ազդեցություն թողնում ինչպես երկու դրացի ժողովուրդների, այնպես էլ միջպետական հարաբերությունների վրա:*

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ ջավախահայության խնդիրներ, Հայաստան-Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 20 հոդվածի: Vsargsyan83@gmail.com

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Եղիազարյան Ա. 2011, 134.1, Կղարջքի և Սամցխեի՝ IX դարի պատմության որոշ խնդիրների շուրջ. – «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», էջ 3–12:
- Երեմյան Ա. 1966, № 4, VII դարում հայկական հուշարձանների կրած մի փոփոխության մասին. – ՊԲՀ, էջ 151–172:
- Մարության Ս. 2003, Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Երևան, «Մուղնի», 487 էջ:
- Մարության Ս. 1978, Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, Երևան, «Սովետական գրող», 182 էջ:
- Մարության Ս. 1972, Տայքի ճարտարապետական հուշարձանները, Երևան, «Հայաստան», 138 էջ:
- Մելքոնյան Ա. 2003, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Ջանգակ-97», 543 էջ:
- Մուրադյան Պ. 2009, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրատ., 396 էջ:
- Մուրադյան Պ. 1996, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, բնագրեր և հետազոտություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 218 էջ:
- Կարապետյան Ա. 1995, Հայկական եկեղեցիները Վրաստանում, Ցուցակ և քարտեզ, Երևան, Առանց հրատարակչի (Ա.հ):
- Կարապետյան Ա. 2006, Ջավախք, Երևան, «Գիտություն», 590 էջ:
- Կարապետյան Ա. 1995, Ջավախքի խաչքարերը, Երևան, Ա. հ, Առանց հրատարակչի, 15 էջ:
- Կարապետյան Ա. 2002, Ջավախքի պատմական հուշարձանները, քարտեզ-ուղեցույց, 1 թերթ, գուն.: 70X50 սմ, Բեյրութ, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հասարակական կազմակերպություն:
- Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը մտահոգություն է հայտնում Սբ Նորաշեն եկեղեցու նկատմամբ վրաց հոգեւորականի իրականացրած ոտնձգության փաստի առնչությամբ. – <https://armenpress.am/arm/news/458703/>
- «Հայաստանի Հանրապետություն», 02. IX. 2009, № 168:
- Պատմական ակնարկ Նորաշենի Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին. – <https://hetq.am/hy/article/4677>:
- Սահակեան Ա. 1999, հոկտեմբեր, թիւ 16, Անդրֆեդերացիայի ղեկավարութիւնը և Խորհրդային Հայաստանի սահմանների «ճշգրտումը». – «Դրօշակ», էջ 47–50:

Սարգսյան Վ. 2009, Հայ-վրացական «սահման». հին օրերի իրականությունն ու մերօրյա խաբկանքը, Հայոց հյուսիսային դարպասները.– Ջավախք, Լոռի, հողվածների ժողովածու, հ. 2, «Միտք» վերլուծական կենտրոն, Երևան, էջ 96–115:

Սարգսյան Վ. 2018, № 3, Ջավախքում հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու խնդիրը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (2001–2009 թթ.). – ՊԲՀ, էջ 171–183:

Սարգսյան Վ. 2021, № 2, Վրաց Ուղղափառ եկեղեցու և Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի իրավական կարգավիճակի օրենսդրական կարգավորումը հետխորհրդային Վրաստանում.– ՊԲՀ, էջ 134–149:

Վիրահայոց թեմի պատմությունը, ՀԱԵ Վիրահայոց թեմի պաշտոնական կայք.– <https://armenianchurch.ge/hy/ekegheciner-2/virahayoc-tem>.

Վրաստանի վարչապետն այցելել է Ախալքալաք.– <https://armenpress.am/arm/news/404109.html>:

«Վրաստան», 2005, № 57–58:

Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները (1988–1998 թթ.).– Դիվան վավերագրերի և լուսանկարների (կազմ.՝ Ս. Կարապետյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 124 էջ:

Վրացական Պատրիարքարանը դատապարտում է Հայր Տարիել Սիկինձալաշվիլու գործողությունները Թբիլիսիի Նորաշենի Աբ. Աստվածածին եկեղեցու նկատմամբ.– <https://armenpress.am/arm/news/453679/>.

Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, հատուած երկրորդ, Պատմութիւն Բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1871, 136 էջ:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, 1076 էջ:

Беридзе В. 1981, Архитектура Тао-Кларджети: место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры. Тбилиси, «Мецниереба», 429 с.

Карапетян С., Марутян А., Наатакян Р. 1990, № 5, Церковь Сурб Вардананц (Сурб Ншан) города Ахалцха. – «Вестник общественных наук» НАН РА, с. 75–85.

Карта Социалистической Советской Республики Армении. 1932. Эривань, Государственное издательство АССР.

Марутян Т. 1989, Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Анийской Богоматери. Ереван, «Хорурдаин грох», 270 с.

«Քաղաքային համայնքային խորհուրդի Դժախախուրի մոնաստիրը – պատմության փոփոխությունները», <https://regnum.ru/news/accidents/485545.html>.

Токарский Н. 1946, Архитектура Древней Армении. Ереван, Изд. АН АрмССР, 383 с.

“ճօնօ” («Ախի» – «Արշալույս»), 2005, № 49, № 8.

“ճօնօ” («Ախի» – «Վերադարձ»), 2000, № 72, 2005, № 68.

“ճրջըմբեց” («Արգունենտի» – «Արգունենտ»), 2006, № 1.

“ճնննչա-ճննչա” («Ասավալ-դասավալի» – «Վերելք-վայրէջք»), 2005, № 17, № 44.

“ճննչա-ճննչա” («Ասավալ-դասավալի»), 2009, № 36, № 39.

“ճննչա տօնօ” («Ախալի թառքա» – «Նոր սերունդ»), 2005, № 150, № 355, № 358, № 360, 2006, № 14, № 25, № 190.

“ճննչա 7 ճրջ” («Ախալի 7 դրէ» – «Նոր 7 օր»), 2005–2006, № 42.

“ճննչա” (“ճրջօննչօ”) [«Բաստա» («Ռեզոնանսի» – «Ռեզոնանսի» հավելված), 2005, № 333.

“ճննչա” («Վալորքա» – «Դալալ», երգեցողություն), 2005, № 4.

“ճննչա ճննչա” («Թբիլիսեցի» – «Թբիլիսցիներ»), 2005, № 49, 2006, № 12.

“ճննչա ճննչա” («Վիրիս պալիտորա» – «Շաբաթվա ներկայանակ»), 2004, № 44, 2005, № 23, 2009, № 31.

“კრიმინალი” («Կրիմինալ»), 2004, № 44.

“ლიტერატურა და ხელოვნება” («Լիտերատուրա դա խելովնեբա». – «Գրականություն և արվեստ»), 2004, № 2, էջ 22–23.

“მართალი გაზეთი” («Մարթալի գագեթի» – «Իսկական թերթ»), 2000, № 8.

“მწერლის გაზეთი” («Մժեռլիս գագեթի» – «Գրական թերթ»), 2004, № 16.

“24 საათი” («24 საათი» – «24 ժամ»), 2005, № 249.

“რეზონანსი” («Ռեզոնանսի» – «Ռեզոնանս»), 2001, № 159, 2005, № 77, 2009, № 186.

საქართველოს კანონი საქართველოს სამოქალაქო კოდექსში ცვლილების შეტანის შესახებ, 2011 წლის 5 ივლისი, № 5034-რს.

“საქართველოს რესპუბლიკა” («Սաքարթվելის რესպուბლიკა» – «Կրաստանի Հանրապետություն»), 2005, № 286-287, 2009, № 175, № 179.

საქართველოს საპატრიარქო, საქართველოს სამოციქულო ავტოკეფალური მართლმადიდებელი ეკლესიის წმიდა სინოდის განჩინება, 27.12.2018.– <https://www.patriarchate.ge/news/2332>).

“ქრონიკა” («Քրոնիկა» – «Խրոնիկა»), 2006, № 8.

“ხვალისდელი დღე” («Խվալիսդելի դღե» – «Վաղվա օր»), 2005, № 47, № 199.

“ჯორჯიან თაიმსი” («Ջորჯիան թայմს»), 2005, № 46.

## ВОПРОС ПРИНАДЛЕЖНОСТИ АРМЯНСКИХ ЦЕРКВЕЙ В ГРУЗИНСКОЙ ПРЕССЕ (Первое десятилетие XXI века)

ՎԱԶ ՏԱՐԿԻՍՅԱՆ

### Резюме

*Ключевые слова: Грузия, Грузинская Православная церковь, Тбилиси, Епархия Армянской Апостольской церкви в Грузии, церкви, Джавахк, Лори, Гугарк, Тайк, православное (ортодоксальное) армянство, грузинские общественно-политические и научные круги, пресса.*

Действующие в Грузии религиозные организации (в том числе Епархия Армянской Апостольской церкви) все постсоветское время ратовали за принятие закона о религиозных организациях и выступали с требованием возврата имущества, историко-архитектурных памятников, земельных угодий и пр., отнятых в советское время. Но эти требования всегда сталкивались с жесткой и отрицающей позицией как светской власти и духовенства, так и общественно-политических и научных кругов.

Грузинская сторона в течение постсоветского времени не только не предпринимала шагов для возврата отобранного в советское время наследия других епархий, но, наоборот, всячески уничтожала или присваивала чужое. С этой целью грузинские научные и общественно-религиозные круги в таких изданиях как «Аиси» («Рассвет»), «Алиа» («Возвращение»), «Ахали таоба» («Новое поколение»), «Галоба» («Трель»), «Тбилиселеби» («Тбилисцы»), «Квирис палитра» («Палитра недели»), «Литература да хеловнеба» («Лите-

ратура и искусство»), «24 саати» («24 часа»), «Резонанси» («Резонанс»), «Сакართველოს Республика» («Республика Грузия»), «Хвалиндеლი дхе» («Завтрашний день») и других начали распространять искусственные точки зрения, мнения и тезисы, подчас эмоциональные, не основанные на фактах, о том, что памятники, церкви и монастыри других культур на самом деле грузинские.

В основе того, что церкви Епархии ААЦ якобы грузинские, в основном лежит точка зрения, что «когда-то они были грузинскими и в последующем были захвачены армянами». В грузинских кругах средневековые церкви, построенные в VII веке Армянской Православной (ортодоксальной) церковью и ортодоксальными армянами, считаются грузинскими памятниками, в основном из-за высеченных на них надписей на старогрузинском языке.

В результате вышеизложенных реалий в армяно-грузинских отношениях – межгосударственных, межцерковных, научных, общественно-политических, даже в бытовых, присутствует постоянное напряжение, которое периодически накаляется и оказывает негативное воздействие как на добрососедские, так и на межгосударственные отношения двух народов.

*Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, разные вопросы отношений Армения–Грузия, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и более 20 статей. Vsargsyan83@gmail.com*

THE ISSUE OF THE AFFILIATION OF ARMENIAN CHURCHES  
IN THE GEORGIAN PRESS  
(the 1st decade of the 21st century)

VAHE SARGSYAN

Summary

*Key words: Georgia, Georgian Orthodox Church, Tbilisi, Armenian Apostolic Church, Diocese of the Armenian Apostolic Church in Georgia, churches, Javakhk, Lori, Gugark, Tayk, orthodox Armenians, Georgian socio-political and scientific circles, press.*

The religious organizations operating in Georgia (including the Diocese of the Armenian Apostolic Church of Georgia) throughout the post-Soviet period demanded the adoption of a law on religious organizations and the return of property confiscated during the Soviet era, historical and architectural monuments, land, etc. These demands, however, have always been confronted

with the rigid and denialist positions of the Georgian secular and spiritual authorities, as well as the socio-political and scientific circles.

Throughout the post-Soviet period, the Georgian side not only did not take appropriate steps to return the legacy of other dioceses operating in the country in Soviet times, but, on the contrary, tried in every way to either destroy or assign it. For this purpose, the Georgian scientific and socio-religious circles in “Aisi” (“Dawn”), “Alia” (“Return”), “Akhali taoba” (“New generation”), “Galoba” (“Trill”), “Tbiliselebi” (“Tbilisians”), “Kviris palitra” (“Palette of the week”), “Literatura and Khelovneba” (“Literature and Art”), “24 Saati” (“24 hours”), “Resonansi” (“Resonance”), “Sakartvelos Respublika” (“Republic of Georgia”), “Khvalindeli dghe” (“Tomorrow”) and other publications began to disseminate artificial points of view, opinions and theses, sometimes emotional, not based on facts that monuments, churches and monasteries of other cultures are actually Georgian.

Many churches of the AAC are considered Georgian at the basis of their views that they “were once Georgian, and later were occupied by Armenians”. The 7th-century Armenian Orthodox Church, as well as medieval monasteries and churches built by Orthodox Armenians, are considered Georgian monuments in Georgia, mainly based on the Old Georgian language on these monuments.

As a result of the abovementioned realities, there is a constant tension in the Armenian-Georgian state, church, scientific, social-political, even domestic relations, which regularly flares up and has a negative impact on both neighboring peoples and interstate relations.

*Vahe Sargsyan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of the History of Diaspora and Armenian Colonies of the NAS RA Institute of History. Scientific interests: the problems of Armenians of Georgia, particularly Javakhk, various issues on relations between Armenia-Georgia, issues of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and over 20 articles. Vsargsyan83@gmail.com*

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԻ ԵՎ ԳԱՎԱՌԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ԲՈՆԱԶԱՎԹՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Կոմունիստ» թերթի 1920–1921 թթ. հաղորդագրություններում)\*

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-103>

Բանալի բառեր՝ Ալեքսանդրապոլ, թուրքական բռնազավթում, «Կոմունիստ» թերթ, հայերի ցեղապանություն, Մ. Տեր-Գրիգորյան, Ա. Նուրիջանյան, Ս. Կասյան, Ա. Բեկզադյան, Պ. Մակինցյան:

**Նախաբան**

*Ինչպես 1918 թ. մայիսին, այնպես էլ 1920 թ. նոյեմբեր – 1921 թ. ապրիլ ամիսներին թուրքական զորքը, գրավելով Ալեքսանդրապոլը և գավառը, բազմաթիվ անօրինականություններ է իրագործում<sup>1</sup>: Երևանում հայերենով հրատարակվող Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ու ՀՍԽՀ Ռազմահեղկոմի օրգան «Կոմունիստ» թերթը 1920 – 1921 թթ. մեկնաբանություններ և տեղեկատվություն է տվել հայկական տարածքները բռնազավթած թուրքական զորքի, քրդական ու մահադական ավազակախմբերի կողմից կատարված հանցագործությունների մասին, Ալեքսանդրապոլի հեղկոմի հանցավոր համագործակցությունը զավթիչների հետ, Հայաստանի և Ռուսաստանի իշխանությունների փորձերը թուրքական զորքը քաղաքից ու գավառից դուրս բերելու և այլ հիմնախնդիրների մասին:*

*Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում խնդրո առարկա բոլշևիկյան մամուլը փորձում էր ապատեղեկատվություն տարածել, սակայն որոշ ժամանակ անց, երբ, հավանաբար, Ալեքսանդրապոլի իր թղթակցից, ով հանդես էր գալիս «Պատրիկ» կեղծանունով, սկսեց ստանալ տարաբնույթ հազորդումներ, կտրուկ փոխեց տպագրվող նյութերի բնույթը: Թերթը սկսեց ներկայացնել թուրք – քրդական ելուզակների կողմից իրականացվող ավազակությունները, բնակչության կոտորածները, անօրինականությունները: Հե-*

\* Ներկայացվել է 11. IX. 2021 թ., գրախոսվել է 15. IX. 2021 թ., ընդունվել է տպագրություն 01. X. 2021 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի և ՀՀՌՀ (ՌԳ), տրամադրված Փինանսավորմամբ 20RF–103 ծածկագրով գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:

<sup>1</sup> Տե՛ս Կ. Սարգսյան. – [http://ysu.am/files/10K\\_Sardaryan.pdf](http://ysu.am/files/10K_Sardaryan.pdf), էջ 79–86, Կ. Ալեքսանյան. 2009, № 2, էջ 123–143, Կ. Ալեքսանյան. 2012, էջ 360–361, Կ. Ալեքսանյան. [http://www.Shirak\\_center.sci.am/pictures/ashkhatakazm/k.aleksanyan/hator%2016.pdf](http://www.Shirak_center.sci.am/pictures/ashkhatakazm/k.aleksanyan/hator%2016.pdf), Հայոց պատմություն. 2010, հ. 4, գիրք I, էջ 338:



տաքրքիր է նաև այն փաստը, որ Բաքվում հայերենով հրատարակվող «Կոմունիստ» թերթն աշխատում էր քողարկել վերը նշված բռնությունները, սպանությունները և անօրինականությունները, որոնց մասին ահազանգում էր Երևանում լույս տեսնող «Կոմունիստը»:

**Թուրքական բանակի մուտքն Ալեքսանդրապոլ և հեղկոմի կազմակերպումը**

1920 թ. սեպտեմբերի 22-ի լույս 23-ի գիշերը թուրքական զորքը հարձակվում է Հայաստանի Հանրապետության վրա, սկսվում է թուրք-հայկական պատերազմը, որն ավարտվում է նոյեմբերի 18-ին հայկական կողմի պարտությունով: 1920 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ զորքի մեծ մասն Ալեքսանդրապոլից նահանջեց: Այդ ժամանակ կազմվում է քաղաքային վարչություն՝ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ<sup>2</sup>: Տեղի կոմունիստները պատգամավորություն են ուղարկում թուրքերին ընդառաջ՝ Ախուրյանի ափին նրանց դիմավորելու և բանակցելու նպատակով: «Ստանալով երաշխավորություն, որ տաճկական զորքը մտնում է քաղաք խաղաղ նպատակներով, կոմունիստների պատգամավորությունը թուրք հրամանատարության շտաբի մի քանի սպաների հետ մտավ քաղաք», – գրում է թերթը<sup>3</sup>:

1920 թ. նոյեմբերի 5-ին թուրքերը գրավում են Ալեքսանդրապոլի բերդն ու կայարանը<sup>4</sup>, իսկ նոյեմբերի 17-ի առավոտյան Ալեքսանդրապոլ է մտնում թուրքական առաջապահ զորքը<sup>5</sup>: Ինչպես նշում է «Պատրիկ» թղթակիցը, «... կոմունիստները, որ արդեն կազմակերպվել էին, ուղարկեցին մի պատգամավորություն Արփաչայ (Ախուրյան – Ռ. Ս.) դիմավորելու նրանց (թուրքական զորքին – Ռ. Ս.): Ստանալով երաշխավորություն, որ տաճկական զորքը մտնում է քաղաք խաղաղ նպատակներով, կոմունիստների պատգամավորությունը թուրք հրամանատարության շտաբի մի քանի սպաների հետ մտավ քաղաք»<sup>6</sup>: Տեղի կոմունիստները, թուրքական հրամանատարության գիտությունով, հիմնում են Հայաստանի հեղկոմ, որի իրավունքը, սակայն, չունեին, և հռչակում են խորհրդային իշխանություն: Հեղկոմի նախագահի և ներքին գործերի ժողովրդական կոմիսարի պաշտոնը զբաղեցնում է Մաթևոս (Արծվիկ) Տեր-Գրիգորյանը: Այն ուներ համապատասխան բաժիններ, այդ թվում՝ քաղաքային և գավառային միլիցիա: Թուրքերը նույնիսկ իրենց «աջակցությունը» ցույց տվեցին. բռնագրավեցին միլիցիոներների արդիական մարտական հրացանները՝ փոխարենը տալով հին «Բերդան» մակնիշի 200-ից ավելի մարտական հրացաններ: Այս և այլ «օգնություններ» թուրքերը «կակուղ բարձ էին դնում մեր գլխի տակ, շատ մոտիկ բարեկամներ էին ձևանում մեզ: Ամեն մի պահանջ, խնդիր, բողոք «մեծ ուշադրություն» էր առնվում, ի հարկե, առանց դրական հետևանքների մեզ համար»<sup>7</sup>:

<sup>2</sup> Կ. Ս արդարյան. էջ 79:

<sup>3</sup> «Կոմունիստ» (Երևան), 27. I. 1921:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> «Կոմունիստ», 28. I. 1921:

Պատմաբան Կարինե Ալեքսանյանը նշում է. «Գործեցին միայն իշխանության այն մարմինները, որոնց միջոցով թուրքերն իրականացնում էին բնակչության թալանն ու տեռորը: Մասնավորապես, ներքին գործոց բաժինն ու Արտակարգ Հանձնաժողովը իսկական պատուհաս դարձան թուրքական սարսափներն ապրող Ալեքսանդրապոլի գավառի բնակչության գլխին»<sup>8</sup>:

Հեղկոմը, հավանաբար, իր քաղաքական կշիռը ծանրացնելու համար կամ էլ տեղի տալով թուրքերի խարդավանքներին՝ շարունակում էր հանդես գալ որպես Հայաստանի Ռազմհեղկոմ<sup>9</sup>: Կարելի է նաև ենթադրել, որ նման գործողությամբ թուրքական հրամանատարությունը ցանկացել է Ալեքսանդրապոլի հեղկոմը հակադրել Հայաստանի Ռազմհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի գլխավորած մարմնի հետ՝ արդարացնելու իրենց բռնությունները՝ քողարկվելով Ալեքսանդրապոլի հեղկոմի անվան հետ և հնարավորության դեպքում իրենց իշխանությունը տարածեն ողջ Հայաստանով: Կազմակերպվում են իշխանության քաղաքային և շրջանային մարմիններ: Այդ մարմիններում, ընդգրկվում են նաև ազգային դիմագիծ չունեցող որոշ անձինք, որոնք հիմնականում սպասարկում էին թշնամուն: Բացի այդ, թուրքերը ներքին գործերի բաժնի ու Արտակարգ Հանձնաժողովի միջոցով իրականացնում էին «բնակչության թալանն ու տեռորը»<sup>10</sup>:

1920 թ. դեկտեմբերի 5-ին Սարգիս Կասյանը և Հայաստանում Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Բորիս Լեգրանը, Անկարայի կառավարությունում ՌՄՏԽՀ լիազոր Պոլիկարպ (Բուզու) Մղիվանիին ու ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և Կովկասյան ռազմաճակատի Ռազմհեղկոմ-ի անդամ Գեորգի Օրջոնիկիձենին ուղղված հեռագրում խնդրում են արգելել Ալեքսանդրապոլի հեղկոմին հանդես գալ որպես Խորհրդային Հայաստանի հեղկոմ և «նրանց պարզաբանեք այն խայտառակ դերը, որ նրանք (Ալեքսանդրապոլի հեղկոմը – Յու. Բ.) խաղում են թուրքական հրամանատարության ցուցումով»<sup>11</sup>:

Դեկտեմբերի 6-ին Բ. Լեգրանը Գ. Օրջոնիկիձենի ուղղված հեռագրում տեղեկացնում է՝ Ալեքսանդրապոլի հեղկոմը շարունակում է իրեն անվանել Հայաստանի հեղկոմ, քանի որ իր կողմից Հայաստանում խորհրդային կարգեր են հռչակվել դեռևս նոյեմբերի 18-ին: Միաժամանակ թույլ է տվել հետևյալ հայտարարությունը՝ «թուրքերի զավթած տարածքներում «հաստատվել են բանվորա-գյուղացիական կարգեր»»<sup>12</sup>:

Սկզբնապես Ալեքսանդրապոլի կոմունիստները, չգիտես ինչու, որևէ գործողության չեն դիմում. չեն բողոքում, չեն ընդվզում քեմալական հրամանատարությունը կատարվող անօրինականությունների դեմ, քանի որ նրանց համար «բավարար» էր թուրքերի պատճառաբանությունները՝ նման քայլերի դիմել են ՀՀ զորքերի դիմադրության պատճառով, որոնք նոյեմբերի 9-ին կամ 10-ին, Ջաջուռի մոտ, Սեպուհի (Արշակ Ներսիսյան) գլխավորությամբ, ընդհարվել են թուրքական զորքի հետ: Դա թուրքերի համար առիթ

<sup>8</sup> Կ. Ալեքսանյան. 2009, № 2, էջ 123:

<sup>9</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 305.

<sup>10</sup> Կ. Ալեքսանյան. 2009, № 2, էջ 123:

<sup>11</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 304.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 307:

էր շրջակա գյուղերի տղամարդկանց գերելու համար: Կանայք և երեխաները փախչում են Ալեքսանդրապոլ: Գյուղերը ենթարկվում են զանգվածային կողոպուտի<sup>13</sup>: Ինքնին հասկանալի է, որ այս պնդումը չէր համապատասխանում իրականությանը. թուրքական հրամանատարությունը, փաստորեն, խաբել էր կոմունիստներին և սկսել իր համար սովորական «աշխատանքը»՝ կողոպուտն ու սպանությունները: Ինչպես կտեսնենք հետագայում՝ նման գործողությունները պատահական չէին, այլ նպատակ ունեին հայազրկել բնակավայրերը ու բնակեցնել թուրքերով:

Ինչևէ. «Պատրիկն» արձանագրում է. «... խորհրդային իշխանությունը որոշ պատվար հանդիսացավ տաճկական հրամանատարության առաջ հայ ժողովրդի նկատմամբ նրանց (թուրքերի – Ռ. Ս.) կատարած ավերումների ժամանակ»<sup>14</sup>: Ինքնին հասկանալի է, որ թղթակիցը բավականին «մեղմ» է բնորոշում տեղական խորհրդային իշխանությունների համագործակցությունը քեմալականների հետ: Դա էլ միայն սկզբնական շրջանում: «Կոմունիստ» թերթն իր հետագա հոդվածներում սուր քննադատություն է ենթարկում հեղկոմականներին:

Թուրքական հանցագործություններն Ալեքսանդրապոլում և գավառում

Մտնելով Ալեքսանդրապոլ՝ քեմալական զորքը սկսում է բնակչության կողոպուտը: Սկզբնապես այս ամենի պատճառը համարվում է Ջաջուռի մոտ տեղի ունեցած ընդհարումը: Ինքնին հասկանալի է, որ պնդումը չի համապատասխանում իրականությանը. այն միայն առիթ էր: Թուրքական հրամանատարությունը, փաստորեն, խաբել էր կոմունիստներին և սկսել իր համար սովորական «աշխատանքը»՝ կողոպուտն ու սպանությունները: «Պատրիկի» բնորոշմամբ՝ «Տաճկական հրամանատարության, ըստ երևույթին շատ նուրբ, սակայն ըստ էության շատ վուլգար քաղաքականությունը իհարկե անմիջապես չհասկացվեց ու ըստ արժանավույն չգնահատվեց»<sup>15</sup>:

Այդ ընթացքում թուրքական զորքը ժամանակ առ ժամանակ ներխուժում էր, այսպես կոչված, «չեզոք գոտի», որը սկսվում էր Նալբանդ կայարանից մինչև Ղարաքիլիսայից (Վանաձոր) 17 կմ հեռավորության վրա գտնվող Բոզիգյուղ (Մարգահովիտ)<sup>16</sup>: Այս տարածքում հաստատվել էին հայկական և թուրքական դիտորդական առաքելությունները: Վերջիններս իրենց գործողություններին ազատություն տալու և ապահովելու դրանց «արդարացիությունը», տարածում էին ապատեղեկատվություն, թե, իբր, Ղարաքիլիսայի հեղկոմը ոչնչացրել է թուրքական երեք գյուղ<sup>17</sup>:

Իրականում կատարվել է հակառակը՝ թուրք զինվորներն են իրականացնում զանգվածային կողոպուտներ: Ղարաքիլիսայի հեղկոմի բազմաթիվ բողոքները թուրքական հրամանատարությունն անուշադրության է մատնել, իսկ հանցանքի վայրում ձերբակալվածները չէին պատժվել: 1921 թ. հուն-

<sup>13</sup> «Կոմունիստ», 27. I. 1921:

<sup>14</sup> «Կոմունիստ», 28. I. 1921:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> «Կոմունիստ», 02. II. 1921:

<sup>17</sup> Նույն տեղում:

վարի 6-ին՝ Սբ. Ծննդյան օրը, կարելի է ենթադրել, որ օրն էլ պատահաբար չէին ընտրել, 50-ից ավելի ասկյարներ, սպայի գլխավորութեամբ, հարձակվում են Վորդնավ (Ջրաչեն) գյուղի վրա: Գյուղացիները ոչ միայն հակահարված են տալիս, այլև ստիպում են վերադարձնել կողոպուտը<sup>18</sup>:

Հարկ է փաստել, որ Հայաստանի Ռազմհեղկոմի անդամ, ռազմական կոմիսար, ծայրահեղ ձախ հայացքներով հայտնի Ավիս Նուրիջանյանն իր սաղրիչ հայտարարություններով հրահրում էր թուրքերին շարունակել հարձակումները: Եվ դա այն դեպքում, երբ Ս. Կասյանը և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալեքսանդր Բեկզադյանը բազմիցս բողոքներ էին ուղղել թուրքական հրամանատարությունը, տեղեկացրել Մոսկվային կատարվող հանցագործությունների մասին: Ա. Նուրիջանյանը կտրականապես մերժում է Ալեքսանդրապոլում ու չեղոք գոտում թուրք զինվորների և քուրդ ելուզակների կողմից իրականացվող զանգվածային կողոպուտներն ու սպանությունները: Նրա համոզմամբ՝ նման սաղրիչ լուրերը տարածվում են, որպեսզի պատերազմ սկսվի «Նորհրդային Հայաստանի և Ալեքսանդրապոլում կանգնած տաճկական զորքերի մեջ, որպեսզի ... արյան մեջ խեղդեն մեր հեղափոխությունը»<sup>19</sup>: Կեղծելով փաստերը՝ հայտարարում է, որ, անձամբ լինելով չեղոք գոտում, չի հանդիպել որևէ քրդի կամ թուրքի: Նրա համոզմամբ՝ «Ալեքսանդրապոլի բոլշևիկներն այս անգամ ևս գտնվեցին արժանավոր և պարտաճանաչ հեղափոխականներ»<sup>20</sup>:

Ալեքսանդրապոլի Հայաստանի կոմունիստական կուսակցության շրջանային կոմիտեի օրգան «Կոմունիստ» թերթում տպագրված հոդվածներում հեղինակները իրենց հերթին թուրքերի կատարած անօրինականությունները որակում են որպես «անհասկանալի լուրեր»<sup>21</sup>:

Բ. Լեզրանը դեկտեմբերի 9-ին ահազանգում է Գ. Օրջոնիկիձեին այն մասին, որ Ալեքսանդրապոլի գավառում թուրքերը բացահայտ կողոպուտում են ունեցվածքը՝ տանելով ամեն ինչ՝ նույնիսկ որբերի համար նախատեսված պարենը, գյուղացիների ընտանի կենդանիները<sup>22</sup>:

1921 թ. հունվարի 19-ին Ալեքսանդր Բեկզադյանը<sup>23</sup> Մոսկվա ուղարկված նոտայում ներկայացնում է քեմալականների կատարած հանցագործություններն Ալեքսանդրապոլում և գավառում: 18-ից մինչև 50 տարեկան արական բնակչությունը բռնի ուժով հեռացվում է բնակավայրերից և ուղարկվում Սարիղամիշ ու Էրզրում հարկադիր աշխատանքների: Ալեքսանդրապոլի գավառում թուրքերի կողմից կողոպուտվել են 36 գյուղեր<sup>24</sup>: Ժողկոմի համոզմամբ՝ Ալեքսանդրապոլի հեղկոմը նման պայմաններում թուրքերի ձեռքում վերածվել է գործիքի<sup>25</sup>:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> «Կոմունիստ», 22. XII. 1920:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Կ. Ս ա Ր դ ա Ր յ ա ն. էջ 80:

<sup>22</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 317.

<sup>23</sup> Պաշտոնը զբաղեցրել է 1920 թ. նոյեմբերի 29-ից մինչև 1921 թ.

մայիս:

<sup>24</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 355.

<sup>25</sup> Նույն տեղում:

### Թուրքերի խուսանավումները և սադրանքները

Մուստաֆա Քեմալի կողմից կազմված, այսպես կոչված, Անկարայի կառավարությունն աշխատում էր Ալեքսանդրապոլում և գավառում կատարվող անօրինականությունների մեղքը բարդել նախկին Հայկական կառավարության վրա<sup>26</sup>: Ա. Բեկզադյանը, քեմալական կառավարության արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուխթարին, Արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին և Պ. Մզիվանուն ուղղված 1920 թ. դեկտեմբերի 10-ի հեռագրում հաճոյախոսելով, թուրքերին որակելով որպես հեղափոխականներ, որոնք բոլշևիկների հետ պայքարում են իմպերիալիզմի դեմ, միաժամանակ նրանց ուշադրություն է հրավիրում Ալեքսանդրապոլում ու գավառում թուրքական հրամանատարության կողմից կատարվող բազմաթիվ անօրինականությունների վրա: Նա հայտնում է, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունն իր տրամադրության տակ ունի բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են թուրքերը թշնամաբար են վերաբերվում հայերի նկատմամբ. այսպես. «Ալեքսանդրապոլի շրջանում քշվում է գյուղացիների ողջ տավարը, քաղաքներում բռնազրավման են ենթարկվում պարենային պահեստները, որոնք պահված են անտուն երեխաների և որբերի համար...»<sup>27</sup>:

Նման գործողություններն որևէ արդարացում չեն կարող ունենալ: Ինչպես ընդունված է դիվանագիտական նման գրություններում՝ Ա. Բեկզադյանը հույս է հայտնում՝ «Ազգային մեծ ժողովի կառավարությունը ձեռք կառնի բոլոր միջոցները՝ նկարագրված գործողությունների դեմն առնելու և Հայաստանի ազատագրված ժողովուրդների հետ բարեկամական փոխհարաբերություններ սահմանելու համար»<sup>28</sup>:

Ինչպես և սպասվում էր, նրա հեռագրին Ք. Կարաբեքիրը պատասխանում է ընդհանուր արտահայտություններով՝ որևէ կերպ չանդրադառնալով Ալեքսանդրապոլում և գավառում կատարվող անօրինականություններին: Նա ողջունում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը՝ հայտարարելով, որ նախկին հանրապետության գոյությունը «ուղղակի վտանգավոր էր վերածնվող Թուրքիայի համար: Սակայն այժմ, երբ Հայաստանում սահմանվում է խորհրդային իշխանություն մենք խորթ չենք լինի»<sup>29</sup>: Նման ընդհանուր, ոչինչ չստող գրությամբ Ք. Կարաբեքիրը որոշեց, որ Ալեքսանդրապոլի հայության հարցը փակված է:

### Խորհրդային իշխանությունների երկակի մոտեցումները

Որոշ ժամանակ «Կոմունիստ» թերթը չէր անդրադառնում Ալեքսանդրապոլի հիմնախնդրին: Նրա էջերում կարելի է հանդիպել տարբեր բնույթի հոդվածների, ինչպես օրինակ՝ Երևանի և այլ բնակավայրերի բանտարկյալների մի մասի համաներման, Վրաստանում տեղի իշխանությունների կողմից կոմունիստների հետապնդման, Երևանում անցկացվող շաբաթօրյակների, Մոսկվայում համառուսաստանյան խորհուրդների VIII համագումարի ըն-

<sup>26</sup> Կ. Ս ա Ր դ ա Ր յ ա ն. էջ 83:

<sup>27</sup> «Կոմունիստ», 14. XII. 1920:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> «Կոմունիստ», 15. XII. 1920:

թացքի ու այլնի մասին<sup>30</sup>: Սակայն ոչինչ չէր ասվում թուրքական զորքերի և քրդերի կողմից բռնազավթած Ալեքսանդրապոլում ու գավառում ստեղծված ծայրահեղ ճգնաժամային վիճակի մասին:

1920 թ. նոյեմբերի 16-ի Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Լենինին ուղղված հեռագրում Ի. Ստալինը գտնում էր՝ Թուրքիան իրենից սպառնալիք է ներկայացնում, ուստի չպետք է թույլ տալ, որպեսզի թուրքերն ամրապնդվեն Հայաստանում, քանի որ կունենան ընդհանուր սահման Ադրբեյջանի հետ: Նրա համոզմամբ պետք է խորհրդայնացնել Հայաստանը և «խորհրդային հայկական սեպով խրվել Թուրքիայի և Ադրբեյջանի միջև»<sup>31</sup>:

Նոյեմբերի 28-ին Բ. Լեգրանը, արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինին ուղղված ռադիոհեռագրում օրինակ բերելով Ալեքսանդրապոլի հեղկոմի թուրքական զորքերի մուտքի վերաբերյալ հայտարարությունը, տազնապով հայտնում է, որ նման պայմաններում Հայաստանին քեմալացում է սպառնում: Նրան ապշեցրել է այն հանգամանքը, որ Պ. Մդիվանին հավատում է թուրքերին և առաջարկում է օգտագործել «թուրքերի կողմից կազմված «Խորհրդային Հայաստանի Ռազմահեղկոմը»<sup>32</sup>:

Այդ ժամանակ Կովկասի խորհրդային «փոխարքա» հորջորջվող Գ. Օրջոնիկիձեն Մոսկվա ապատեղեկատվություն էր ուղարկում, որով ավելի էր սրում իրավիճակը: Դրա վկայություններից է 1920 թ. նոյեմբերի 16-ից 22-ը թվագրված երկտողը, որտեղ Ի. Ստալինին տեղեկացնում է դաշնակցական ջոկատները վերադարձվել են Ալեքսանդրապոլը: Նման պայմաններում հեղկոմը ստիպված է եղել ընդառաջ գնալ քեմալականներին<sup>33</sup>: Ինքնին հասկանալի է, որ բոլշևիկ գործչի տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությունը:

Ի. Ստալինը նոյեմբերի 19-ի գրությունում ուղղված Գ. Չիչերինին, առաջարկում է Գ. Օրջոնիկիձենին ուղարկել հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «... ոչ մի դեպքում չհավատալ քելականների խոսքերին, ... բոլոր ուժերն ուղղել ուժեղացնելու խորհրդային քարոզչությունը Քեմալի բանակում և նախապատրաստել խորհրդային շարժումը Թուրքիայում...»<sup>34</sup>:

Գ. Չիչերինը պաշտոնապես դիմում է Ա. Մուխոմարին՝ արձանագրելով, որ իմպերիալիստների դեմ ինքնապաշտպանական պատերազմներ մղող Թուրքիան ու Ռուսաստանը բնական դաշնակիցներ են և առկա խնդիրները հասկանալի են երկու երկրների համար<sup>35</sup>: Մոսկվան կրկին հավաստիացնում է, որ ամենայն անկեղծությամբ է վերաբերվում Թուրքիային: Միաժամանակ թուրքերին ուղղակիորեն հայտնում է. «Հայաստանի և Թուրքիայի մեջ խաղաղությունը պետք է հիմնված լինի ժողովրդների ինքնորոշման իրավունքի վրա»<sup>36</sup>: Խորհրդային կառավարությունը հիշեցնում է քեմալական-

<sup>30</sup> «Կոմունիստ», 24. XII. 1920, 01. I. 1921:

<sup>31</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 237.

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 262:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 243:

<sup>35</sup> «Կոմունիստ», 28. XII. 1920:

<sup>36</sup> Նույն տեղում:

ներին, որպեսզի նրանք անհապաղ հեռանան Ալեքսանդրապոլից և գավառից<sup>37</sup> :

1920 թ. դեկտեմբերի 2-ին Գ. Օրջոնիկիձեն շտապում է Վ. Լենինին հայտնել, որ Ալեքսանդրապոլ մտած քեմալականները «մեր նկատմամբ տրամադրված են վերին աստիճանի բարեկամաբար, գինվորները կրում են կարմիր նշաններ և իրենց համարում են Կարմիր բանակայիններ»<sup>38</sup> :

Գ. Չիչերինը 1920 թ. դեկտեմբերի 9-ի հեռագրում ուղղված Պ. Մդիվանուն, պահանջում է թուրքերին զենքը հանձնել միայն այն բանից հետո, երբ նրանք կհեռանան Ալեքսանդրապոլից և կանցնեն Ախուրյանի աջ ափը<sup>39</sup> :

Քեմալական զորքերի հրամանատարությունը, սակայն, չէր էլ մտածում գործնական որևէ քայլի դիմելու մասին: Ավելին, նրա հովանավորությունը 1920 թ. դեկտեմբերի 19-ին Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցում տեղի է ունենում Ստ. Շահումյանի անվան ժողովրդական համալսարանի բացումը:

«Կոմունիստ» թերթի հաղորդագրությունում հայտնվում է, որ համալսարանի բացումը կատարել է Ալեքսանդրապոլի հեղկոմի հանրային կրթութայան կոմիսար Նուշիկ Զավարյանը, որից հետո «քաղաքային թատրոնում տեղի ունեցավ ընկեր բանվորների համար ներկայացում»<sup>40</sup> : Հաղորդումից հետևում է, որ միայն դեկտեմբերի 19-ին քաղաքում տեղի են ունենում «մշակութային» խոշոր իրադարձություններ՝ Արշալույս Փանյանի անունը կրող թատրոնի բացումը և ներկայացման բեմադրություն: Հիմնվում է բանվոր եզոր Սևյանի անունը կրող հեղկոմի հանրային կրթութայան կոմիսարիատի առաջին գրադարանի բացումը: Ընթերցողներին տեղեկացվում է նաև, որ Ալեքսանդրապոլի գավառի I, II և IV տեղամասերում կազմակերպվում են կոմունիստական կազմակերպություններ, իսկ Ղարաքիլիսայի շրջանից Ալեքսանդրապոլ են վերադարձել փախստականների առաջին խումբը<sup>41</sup> : Այս տեղեկատվություններն ընթերցող քաղաքացու մոտ կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե Ալեքսանդրապոլում և գավառում իրավիճակն այնքան կայուն է և խաղաղ, իսկ իրականում այդ ամենն արվում էր, որպեսզի քողարկվեն կատարվող անօրինականությունները՝ սպանությունները և կողոպուտը:

Միաժամանակ նման բնույթի հաղորդագրություններով խորհրդային իշխանություններն ամեն գնով ցանկանում էին իրենց ազդեցություն տակ պահել քեմալականներին, փորձում էին խուսանավել, մի շարք դեպքերում «չտեսնել» անօրինականությունները, թուրքերի բացահայտ արհամարհանքը, քանի որ ցանկանում էին քեմալականներին օգտագործել առաջին հերթին Արևելքի երկրներ հեղափոխություն արտահանելու և բրիտանական ազդեցությունից դուրս բերելու, ինչպես նաև՝ վերջիններիս դեմ պայքարելու համար<sup>42</sup> :

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> Կ. Ս ա Ր դ ա Ր յ ա ն. էջ 79:

<sup>39</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 314.

<sup>40</sup> «Կոմունիստ», 30. XII. 1920:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Ավելի մանրամասն տե՛ս Р. Саакян. 2021, № 2, с. 37–65.

«Կոմունիստ» թերթն իր հերթին հայտարարում է. «Բոլշևիզմն Արևելքի բոլոր ժողովուրդների համար դառնում է նոր Մեկկա, ուր ճանապարհորդներն որոնում են Լենինին այնպես, ինչպես երբեմն Մահմեդին (Մուհամմեդին – Ռ. Ս.) էին որոնում»<sup>43</sup>: Նման անհեթեթություն երբևիցե հնարավոր չէր պատկերացնել: Համեմատել Վ. Լենինին իսլամի հիմնադիր Մուհամմեդին հետ կարող էր անցնել միայն հոգեկան լուրջ խանգարում ունեցող անձնավորության մտքում: Եվ դա հայտարարվում է այն ժամանակ, երբ թուրքական զորքն ու քրդական ելուզակախմբերը զանգվածային սպանություններ, կոդուպուտ էին իրականացնում Ալեքսանդրապոլում, գավառում, չեզոք գոտում: Զավեշտալին այն է՝ «եղբայրական» օգնության ձեռք մեկնած քեմալական զինվորներն ամենուրեք հայտարարում էին, որ իրենք բոլշևիկներ են: Սակայն, երբ նրանց հարցնում էին՝ արդյո՞ք կկռվեն ուսումնասիրության ղեմ, պատասխանում էին. «... եթէ այլահը ու Կարաբեքիր փաշան ... հրամայեն՝ անշուշտ կկռվի»<sup>44</sup>:

Թուրքական «հանրաքվեն» և բռնությունների սաստկացումը Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 11-ին Ա. Բեկզադյանի նոտա է հղում Անկարայի Ազգային մեծ ժողովին և մի շարք պատասխանատու անձանց, ուր մտահոգությունն է հայտնում, որ թուրքական կողմը շարունակում է պնդել 1920 դեկտեմբերի 3-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի իրագործումը: Ժողկոմն անընդունելի է համարում այն սին պնդումը, որ քեմալական զորքերի կողմից գրավված շրջաններում հանրաքվե է անցկացվել, և տեղի բնակիչները կողմ են քվեարկել թուրքիային միանալուն: Ա. Բեկզադյանը նշում է, որ «հանրաքվեն ոչ մի դեպքում չի կարող համարվել տերիտորիալ վեճերի լուծման համար միակ ուղիղ միջոցը»<sup>45</sup>: Ժողկոմի համոզմամբ՝ հայկական շրջաններում հանրաքվեն չի կարող օրինական լինել հայերի նկատմամբ «վերջին տարիներում գործադրված ահուելի հալածանքների պայմաններում, պայմաններ, որոնք միանգամայն գցում են հանրաքվեի բարոյաքաղաքական արժեքը և նրա գործադրման գործնական հնարավորություն»<sup>46</sup>:

Անկարայի կառավարության արտաքին գործերի ժողկոմ Ա. Մուխամբարը 1920 թ. դեկտեմբերի 19-ի պատասխան նոտայում հայտարարում է, որ թուրքական զորքն Ալեքսանդրապոլ մտնելուց անմիջապես հետո տեղի հայ կոմունիստներից կազմակերպել են իշխանության մարմիններ: Թուրքական կողմը բացահայտ ծաղրում է հայ ղեկավարներին, երբ լկտիաբար հայտարարում են. «Ինչ վերաբերում է անասուններին և Ալեքսանդրապոլի երեխաների հարցերին, դրանց արդեն Արևելյան բանակի հրամանատարության կողմից երևանում գտնվող զինվորական ներկայացուցչի միջոցով հարկ եղած պատասխանները տված լինելով ուրիշ ավելացնելիք չունենք»<sup>47</sup>:

<sup>43</sup> «Կոմունիստ», 02. I. 1921:

<sup>44</sup> «Կոմունիստ», 03. II. 1921:

<sup>45</sup> «Կոմունիստ», 12. I. 1921:

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> «Կոմունիստ», 14. I. 1921:



Փաստորեն, թուրքերի համար անասունների և հայ որբերի հիմնախնդիրը գտնվում է միևնույն մակարդակի վրա:

Վերոնշյալ պատասխանն նոտայում թուրքերը կրկին պնդում են՝ անցկացված հանրաքվեն օրինական է, և, որ թուրքիայի կազմում ապրելու ցանկություն են հայտնել ոչ միայն մահմեդականները, այլ հայերը: Ա. Մուխթարը հիշեցնում է, որ հանրաքվեի սկզբունքն առաջադրվել է դեռևս 1918 թ. Բրեստ-Լիտովսկում կայացած բանակցությունների ժամանակ Լև Տրոցկու կողմից: Հայ գործընկերոջը նաև հիշեցնում է, որ մոտակա ժամանակներում գումարվելիք ուս-թուրքական կոնֆերանսում «մենք տված բացատրությունները կրկնելու և մեր անխախտելի իրավունքները հաստատելու պատրաստ ենք»<sup>48</sup>:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը մոլորություն մեջ գցելուց և Ալեքսանդրապոլի հեղկոմի հետ «բարեկամական» հարաբերություններ հաստատելուց հետո թուրքերն ավելի են սաստկացնում բռնություններ գործադրել: Առաջին հերթին հեղկոմին զրկում է գավառների նկատմամբ որևէ վերահսկողությունից, գյուղերում իրականացնում են զանգվածային բռնություններ, որոնց մասնակցում են նաև քրդական հրոսակախմբերը: Այդ գործում վերջիններիս ընդգրկումը նպատակ ուներ մեղքը բարդել «անկառավարելի» քրդերի վրա: Սպանվում են գավառի կոմիսարներից մեկը և մի քանի միլիցիոներներ: Բողոքների դեպքում թուրքական հրամանատարության ներկայացուցիչ Ռուշտի բեյը միայն ափսոսանք և խորը մտահոգություն էր հայտնում, սակայն գործնական որևէ քայլի չէր դիմում<sup>49</sup>: Թուրքերն այլևս չէին թաքցնում իրենց իրական նպատակը՝ հայազրկել Ալեքսանդրապոլն ու գավառը և այն բնակեցնել մահմեդականներով: Քեմալական զինվորները Քաֆթաուլու (Փանիկ) գյուղում սպանում են մի խումբ հայ կոմունիստների, որոնց ղեկներն այրում են: 4-րդ գավառամասում արձանագրվել են 300-ից ավելի սպանության դեպքեր<sup>50</sup>, անհայտ կորել կամ սպանվել են շուրջ 5.000 հոգի, իսկ գավառից բռնագրավել՝ շուրջ 300.000 գլուխ խոշոր և մանր եղջրավոր կենդանիներ<sup>51</sup>:

«Պատրիկը», նկարագրելով ստեղծված ծանր վիճակը, վկայակոչում է նաև մի շարք այլ տազնապալի փաստեր. թուրքերը Կարսը և չրջանն ամբողջությամբ դատարկել են հայերից, որոնց տներն արագորեն բնակեցվում են թուրք գաղթականներով: Բռնությունների են ենթարկվում չրջանում գտնվող շուրջ երեք տասնյակ մալականների գյուղերը: Քեմալականները ցանկանում են արագ թուրքացնել Կարսը ու չրջանը, որպեսզի գումարվելիք ուս-թուրքական կոնֆերանսի ժամանակ հայտարարեն, որ այդ վայրերում բնակվում են միայն թուրքեր և հնարավոր հանրաքվեի դեպքում արդյունքը լինի իրենց օգտին: Բացի այդ, թուրքերը շարունակում են քայլեր ձեռնարկել Ալեքսանդրապոլի չրջանը թուրքիային միացնելու ուղղությամբ: Այս բոլոր գործողությունները ղեկավարում է 1918 թ. սեպտեմբերին

<sup>48</sup> Նույն տեղում:

<sup>49</sup> «Կոմունիստ», 28. I. 1921:

<sup>50</sup> «Կոմունիստ», 26. I. 1921:

<sup>51</sup> «Կոմունիստ», 08. II. 1921, Կ. Ս ա Ր դ ա Ր Յ ա ն. էջ 85:

Բաքվի հայուլթյան ջարդերի հեղինակներից, Կովկասյան իսլամական բանակի հրամանատար Նուրի փաշան<sup>52</sup>:

Ստեղծված իրավիճակում Խորհրդային Ռուսաստանը և, հատկապես, Հայաստանի Ռազմահեղկոմը չէին կարող որևէ հստակ գործողությունների դիմել, քանի որ նախապատրաստվում էր Վրաստանի խորհրդայնացումը, փորձում էին սիրաշահել թուրքերին: Այս հանգամանքը հայտնի էր քեմալականներին, ուստի անպատիժ գործում էին Ալեքսանդրապոլում և գավառում: Կարսի ու նահանգի հայ բնակչության՝ 1920 թ. աշնան բռնագաղթից հետո նրանք սկսում են ավելի հանդուգն ու լիտի գործել Ալեքսանդրապոլում: Թուրքերը սկսում են բռնագրաված զենքը բաժանել Աղբաբայի (Աշոցք) թուրքերին, նրանցից կազմել հետևակային և հեծյալ երևզակային ջոկատներ: Գործելով թուրքական հրամանատարության անունից՝ նրանք մտնում են Ալեքսանդրապոլ և իրականացնում բռնագրավումներ, հաշվեհարդար տեսնում անցանկալի բնակիչների հետ, խլում հավանած տները<sup>53</sup>:

Հորվածագիր Արամ Եսայանի համոզմամբ՝ Կարսում կատարված «գազանությունները գերազանցում են անգամ 1895–1896 և (1908 – Ռ. Ս.) թվականներին սուլթան Համիդի, երիտասարդ թուրքերի ձեռքով կազմակերպված կոտորածներին»<sup>54</sup>: Ավելին, թուրք սպաները բացահայտ հայտարարում են, որ իրենց դաշինքը Ռուսաստանի հետ հարկավոր էր Անտանտի դեմ պայքարելու համար:

Ինչպես հաղորդում է «Պատրիկը», Կարս–Ալեքսանդրապոլ գավառում «այժմ միտում է Աղբաբայի և Զարիշատի թուրքերով, և ո՛չ թուրք, հատկապես հայ երևալ այդ շրջանում երբեք չի կարող: Երևացողը իսկույն սպանվում է և թալանվում»<sup>55</sup>:

«Կոմունիստի» թղթակցի համոզմամբ՝ թուրքացման քաղաքականությունն Ալեքսանդրապոլի գավառում շարունակվում է: Նրա կարծիքով, գավառում «գործն» ավարտելուց հետո թուրքերն անցնելու են Ալեքսանդրապոլին: Թուրքերը գործում են բացահայտ, տղամարդկանց ձերբակալում են և սպանում: Հրամանատարությունն արգելել էր հայ տղամարդկանց լքել քաղաքը: Այդ ամենի հետևանքով բնակչության շրջանում զանգվածային խուճապ էր սկսել, մարդիկ շտապում են հեռանալ Ալեքսանդրապոլից: Ինչպես երևում է քեմալական հրամանատարության հետագա գործողություններից՝ նրանց հիմնական նպատակներից է խուճապի առաջացումը և մարդկանց փախուստը քաղաքից: Փախստականների բնակարաններն անմիջապես զբաղեցվում են Զարիշատի և Աղբաբայի շրջանից եկած թուրքերով<sup>56</sup>: Թուրքական անօրինականություններն այն աստիճան ակնհայտ են դառնում, որ թերթի թղթակիցը ստիպված է լինում ցավով արձանագրել. «Տաճիկ փաշաները ձեռներին կարմիր դրոշակ էին առել, սակայն իրապես բորենու արյունառուշտ բնագղներով էին առաջնորդվում»<sup>57</sup>:

<sup>52</sup> «Կոմունիստ», 28. I. 1921:

<sup>53</sup> «Կոմունիստ», 01. II. 1921:

<sup>54</sup> «Կոմունիստ», 05. II. 1921:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Նույն տեղում:

1921 թ. փետրվարի 9-12-ի ծածկագիր նամակում Գ. Օրջոննիկիձեն տեղեկացնում է Վ. Լենինին է, որ Անկարայի կառավարության հետ ունեցած հարաբերություններում անհրաժեշտ է հրաժարվել Մուշը, Վանը և Բիթլիսը հայերին հանձնելուց, իսկ ինչ վերաբերվում է Ալեքսանդրապոլին, ապա թուրքերն այնտեղից կհեռանան կամավոր, առանց որևէ հիշեցման<sup>58</sup>:

Ապրիլի 6-ի հեռագրում ուղղված Գ. Չիչերինին, Գ. Օրջոննիկիձեն հայտնում է, որ թուրքերը հրաժարվում են հեռանալ Ալեքսանդրապոլից քանի դեռ Հայաստանի հետ պայմանագիր չի կնքվել: Գ. Օրջոննիկիձեն, ով փետրվարին «համոզված» էր՝ քեմալականները կհեռանան բռնազավթված վայրերից, այժմ պահանջում է թուրքերից կտրականապես հեռանալ Ալեքսանդրապոլից<sup>59</sup>: Ապրիլի 7-ի ճեպագրում ուղղված Պ. Մոլոտովին, Գ. Չիչերինը հանձնարարում է պահանջել թուրքերից հեռանալ այդտեղից՝ հակառակ դեպքում սպառնալ պատերազմով<sup>60</sup>:

#### Հեղկոմի լուծարումը

Ալեքսանդրապոլի հեղկոմը, գրեթե լուեյայն, աջակցում էր քեմալականներին և մի շարք դեպքերում գործում էր նրանց հետ համատեղ, դարձել էր թշնամու կցորդը: Քեմալականներն էլ իրենց հերթին սիրաշահում էին հեղկոմին՝ թույլ տալով, որպեսզի նա «ղեկավարի» քաղաքը, որը թուրքերին հնարավորություն էր տալիս Կարսում, Սարիղամիշում, Կաղզվանում և այլուր վարել «բացարձակ թուրքոֆիլացիայի քաղաքականություն»<sup>61</sup>: Ավելին, թուրքերը բացահայտ սկսում են հովանավորել քրեական տարրերին, որի հետևանքով «Գիշերները թալանն ու մարդասպանությունը առօրյա երևույթների շարքն անցան»<sup>62</sup>: Այս ամենը հարկադրում է Հայաստանի Ռազմահեղկոմին խիստ միջոցների դիմել՝ 1921 թ. հունվարի 25-ին լուծարել Ալեքսանդրապոլի հեղկոմը<sup>63</sup>: Հրաժարականի մասին հայտարարությունը ստորագրել էին հեղկոմի նախագահ Մ. Տեր-Գրիգորյանը, նրա տեղակալ Ն. Զափարյանը և 6 անդամները<sup>64</sup>:

«Կոմունիստ» թերթին իր համարներից մեկում տպագրում է հոդված «Ինչո՞ւ հրաժարվեց Ալեքսանդրապոլի հեղկոմը» վերնագրով, որտեղ բացահայտ մեղադրում է թուրքական հրամանատարությունը, որի հիմնական նպատակը հայության ոչնչացումն էր<sup>65</sup>: Վերլուծելով թուրքերի վարած քաղաքականությունը ինտերդային Հայաստանում անհայտ հեղինակը եզրակացնում է. «Իմակաները վերջնականապես պատռված են: Քեմալականներն ամենացինիկ կերպով վարում են մի քաղաքականություն, որ իսկական

<sup>58</sup> Геноцид армян. 2003, т. 2, ч. 1, с. 374.

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 485:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 488:

<sup>61</sup> «Կոմունիստ», 03. II. 1921:

<sup>62</sup> «Կոմունիստ», 28. I. 1921:

<sup>63</sup> «Կոմունիստ», 08. II. 1921:

<sup>64</sup> Նույն տեղում:

<sup>65</sup> «Կոմունիստ», 03. II. 1921:

չարունակությունն է տաճիկ սուլթանիզմի քաղաքականությունը՝ փոքր, ճնշված ժողովուրդների նկատմամբ»<sup>66</sup>:

Ալեքսանդրապոլի հեղկոմը հանդես եկավ հրաժարականի հայտարարությամբ, որտեղ պարզաբանեց լուծարման պատճառները: Նախ նշվեց՝ կոմունիստներն ողջունեցին թուրքական գործի մուտքն Ալեքսանդրապոլ, սակայն առաջին իսկ օրից պարզվեց, որ հեղկոմը թուրքական հրամանատարության համար ոչ թե «աշխատավորության իշխանությունն է, այլ օկուպացիոն տաճիկական զորահրամանատարության մտադրությունների և հրամանների հյուսկամակատար»<sup>67</sup>:

Հայտարարության մեջ հեղկոմը բազմաթիվ փաստերով ներկայացնում է թուրքական բռնագավթման ժամանակ քաղաքին ու գավառին հասցված մարդկային և նյութական ահռելի վնասները: Թուրքական հրամանատարությանն արված ցանկացած դիմում, բողոք չի քննարկվել և որևէ գործողություն չի արվել: Սկսած 1921 թ. հունվարի 31-ից՝ թուրք զինծառայողները սպաների գլխավորությամբ, բացահայտ կողոպուտ են սկսել՝ մտնելով Ալեքսանդրապոլի տներն ու տանելով շարժական գույքը՝ աթոռները, մահճակալները, գրասեղանները, վերմակները, հայելիները, վառելյափայտը և այլն: Ելուզակները գործել են քաղաքի պարես Քյազիմ բեյի հրամանով:

Հեղկոմի հայտարարությունում մասնավորապես ասվում է. «Բերված փաստերը հաստատում են անպայմանորեն, որ Ալեք-պոլի հեղկոմի իշխանությունը դառնում է ֆիկցիա, որ վարկաբեկվում է խորհրդային իշխանության գաղափարը»<sup>68</sup>:

«Կոմունիստ» թերթը երկար ժամանակ չանդրադարձավ բռնագավթված Ալեքսանդրապոլին, քանի որ 1921 թ. փետրվարի 16-ին սկսվել էր հակաբոլշևիկյան համաժողովրդական ապստամբությունը, որը ճնշելուց հետո բոլշևիկների ուշադրության կենտրոնում հայտնվեց Լոռու չեզոք գոտին, որի միջոցով խորհրդային Ռուսաստանը խորհրդայնացրեց Վրաստանը: Բացի այդ, ընթանում էին ուսուլեհական խաղաղության և բրիտանա-ռուսական առևտրական բանակցությունները: Երբ Հայաստանում վերականգնվեց խորհրդային իշխանությունը, Վրաստանը խորհրդայնացվեց և կնքվեցին 1921 թ. մարտի 16-ի ուսուլեհական բարեկամության և 1921 թ. մարտի 18-ի ուսուլեհական խաղաղության մասին պայմանագրերը, նոր միայն խորհրդային Ռուսաստանը հնարավորություն ունեցավ անդրադառնալ Ալեքսանդրապոլին ու գավառին:

Թուրքական գործի հեռացումը և խորհրդային իշխանության մարմինների կազմակերպումը

1921 թ. ապրիլի 19-ին «Կոմունիստ» թերթի առաջին էջում տեղադրվեց հետևյալ հաղորդագրությունը. «Թուրքերը թողնում են Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը: Հայաստանի անբաժանելի մասը վերադառնում է խորհրդային հայրենիքին»<sup>69</sup>: Թուրքական հրամանատարությունը գործերի

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> «Կոմունիստ», 08. II. 1921:

<sup>68</sup> Նույն տեղում:

<sup>69</sup> «Կոմունիստ», 19. IV. 1921:

տարհանումը սկսել էր ապրիլի 15-ին և ամբողջությամբ ավարտվելու էր ապրիլի 22-ին: Տեղեկացնելով այդ մասին՝ թղթակիցը հույս է հայտնում. «Մի քանի օրից հետո Շիրակի չարքաչ, արնաքամ գյուղացիություն խղճուկ մնացորդները (նրանց մեծ մասը գոհվել է այս վերջին ամիսներում) դուրս կտողան իրենց գետնափոր խրճիթներից և ... եթե գուցե, լծկան ունեն՝ կսկսեն փորել մայր հողը»<sup>70</sup>:

Ինքնին հասկանալի է, որ թուրքերը կարող էին շարունակել մնալ բռնագավթված Ալեքսանդրապոլում՝ շարունակելով կողոպտել այն ամենը, ինչ որ հնարավոր էր: Սակայն ապրիլի 13-ին ռուսական 11-րդ բանակի հրամանատար Անատոլի Գեկկերի «հիշեցումից» հետո քեմալականները սկսում են տարհանել գորքը<sup>71</sup>: Խորհրդային գործադասերն Ալեքսանդրապոլ են մտնում ապրիլի 22-ին:

Ալեքսանդրապոլի գավառի արտակարգ կոմիսար է նշանակվում Պողոս Մակինցյանը, որի օգնականն էր Լևոն Սարգսյանը<sup>72</sup>: Պ. Մակինցյանի վկայությամբ՝ թուրքերն ամեն ինչ արել են, որպեսզի քաղաքը վերածեն ավերակների կույտի: Հեռանալուց առաջ, Ք. Կարաբեքիրի հրամանով, պայթեցվել է վառոդի պահեստը, որի հետևանքով Ալեքսանդրապոլին զգալի վնաս էր հասցվել: Մոսկվայում թուրքական դեսպան Ալի Ֆուադ փաշան լկտիաբար մեղքը բարդեց ՀՅԴ-ի վրա<sup>73</sup>: Թշնամին, ինչ որ չի կարողացել տանել, կամ ոչնչացրել կամ էլ անգործածելի է դարձրել:

Պ. Մակինցյանն անձամբ ականատես է եղել թուրքական վայրագությունների հետքերին Նալբանդ կայարանում, որտեղ կար մոտ 3.000 դիակ<sup>74</sup>. «Այնուհետև դիակներ են գտնված տների ներքնահարկերում, ջրհորներում և այլն»<sup>75</sup>: Կազմվել է հանձնաժողով, որը հաշվառելու էր մարդկային և նյութական կորուստները: Պ. Մակինցյանի կարծիքով՝ տվյալները կօգտագործվեն թուրքիայի հետ վարած բանակցությունների ժամանակ: Սակայն այդ հարցը երբևիցե չառաջադրվեց:

Ալեքսանդրապոլում կազմակերպվում է նոր հեղկոմ, որը գլխավորում է Վահան Սարգսյանը: Ինչպես պարզվում է, թուրքական բռնագավթման ժամանակ Ալեքսանդրապոլում գործել են տեղական 3 իշխանություններ: Թուրքերը խորամանկ են եղել և թույլ են տվել երեքին էլ գործել, որոնք մեկը մյուսի հետ ունեցել են ոչ «բարեկամական» հարաբերություններ ու մրցակցություն մեջ են մտել, թե իրենցից ո՞վ կարող է ավելի մեծ վստահություն ձեռք բերել թուրքերի մոտ: Իշխանություններից առաջինն եղել է թուրքերի կողմից ձևավորված հեղկոմը, երկրորդը՝ քաղաքային ինքնավարությունը և երրորդը՝ Ս. Մատինյան ազգանունով մի ինքնակոչի, որն իրեն հայտարարել է Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: Ինչպես պարզվեց, նա եղել է նաև դրամանենգ և տպել է մեծ քանակությամբ կեղծ թղթադրամներ<sup>76</sup>:

<sup>70</sup> Նույն տեղում:

<sup>71</sup> Հայոց պատմություն. 2010, հ. 4, գիրք I, էջ 338, «Կոմունիստ», 19. IV. 1921:

<sup>72</sup> «Կոմունիստ», 23. IV. 1921:

<sup>73</sup> Տե՛ս С. И. Арапов. 1960, с. 32.

<sup>74</sup> «Կոմունիստ», 29. IV. 1921:

<sup>75</sup> Նույն տեղում:

<sup>76</sup> Նույն տեղում:

Երկրորդ «իշխանությունը», տեղեկանալով թուրքական զորքի հեռանալու մասին, ժողով է հրավիրել և որոշել «պատգամավորություն ուղարկել տաճիկ հրամանատարության մոտ և խնդրել մնալ»<sup>77</sup>:

1921 թ. հունիսի 6-ի Ալ. Մյասնիկյանի ներկայացրած գրությունից հետևում է, որ թուրքերը, քուրդ և մահմեդական ելուզակներն Ալեքսանդրապոլի գավառում սպանել են 60.000 հոգու, վիրավորել 38.000-ին, գերություն են քշել 18.000 տղամարդու և 6.000 կանանց ու աղջիկների: Բռնաբարվել են 50.000-ից ավելի, իսկ սովից մահացել է 32.000 մարդ<sup>78</sup>:

### Եզրակացություն

Այսպիսով, 1920 թ. սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը սկսվում է թուրք-հայկական պատերազմը, որն ավարտվում է նոյեմբերի 18-ի զինադադարի պայմանագրով, հայկական բանակի պարտությունով: Թշնամուն են անցնում զգալի տարածքներ, այդ թվում՝ Ալեքսանդրապոլը և գավառը, որոնք 1920 թ. նոյեմբերի 17-ից մինչև 1921 թ. ապրիլի 22-ը ենթարկվեցին թուրքական զորքի ռազմակալման: «Կոմունիստ» թերթն իր էջերում սկսում է տեղեկություններ ներկայացնել հայկական տարածքները բռնազավթած թուրքական զորքի, մահմեդական և քրդական ավազակախմբերի կողմից կատարված հանցագործությունների մասին, Ալեքսանդրապոլի հեղկոմի հանցավոր համագործակցությունը զավթիչների հետ, Հայաստանի իշխանությունների փորձերը թուրքական զորքը քաղաքից ու գավառից դուրս բերելու, էթնիկ գտումների, սպանությունների, կողոպուտների և այլնի մասին: Թերթի թղթակիցն իր հաղորդագրություններում մանրամասնորեն վկայակոչում է տարաբնույթ փաստեր, որոնք մերկացնում են թուրք «ինտերնացիոնալիստների» իրական նպատակները:

Քեմալական զորքի, քրդական և մահմեդական զինված ջոկատների գործունեության հիմնական նպատակներից էր ոչ միայն քայքայել Հայաստանի մաս կազմող Ալեքսանդրապոլի և գավառի տնտեսությունը, ոչնչացնել տեղի հայ բնակչությունը, այլև «ազատված» վայրերը բնակեցնել թուրքերով՝ կազմակերպելով, այսպես կոչված, «հանրաքվե»: Սակայն, ռուսական 11-րդ բանակի հրամանատարության նախագահության և զորքից հետո 1921 թ. ապրիլի 22-ին թուրքական զորքը ստիպված եղավ հեռանալ Ալեքսանդրապոլից և գավառից:

Ռուբեն Սահակյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, նոր պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայկական ոստիկանության պատմություն: rubensahakyan58@gmail.com

<sup>77</sup> Նույն տեղում:

<sup>78</sup> О. Инджикян. 1988, № 6, с. 6; վ. Ն. Ղ ա գ ա խ ե ց յ ա ն. 2003, էջ 128:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանյան Կ. 2009, № 2, Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում. – «Բանբեր Հայաստանի արխիվների», էջ 123–143:

Ալեքսանյան Կ. 2012, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914–1922 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 512 էջ:

Ալեքսանյան Կ. <http://www.shirakcenter.sci.am/pictures/ashkhatakazm/k.aleksanyan/hator%2016.pdf>, Ալեքսանդրապոլի գավառի վարչաքաղաքական պատկերը 1918–1921 թթ., էջ 49–55:

Սարգսյան Կ. [http://ysu.am/files/10K\\_Sardaryan.pdf](http://ysu.am/files/10K_Sardaryan.pdf). Իրադրությունը Ալեքսանդրապոլի գավառում 1920 թ. նոյեմբեր – 1921 թ. հունվար ամիսներին, էջ 79–86:

Ղազախեցյան Կ. Ն. 2003, Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 564 էջ:

Հայոց պատմություն. 2010, հ. 4, գիրք I. Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.) (խմբագրակազմ՝ Կ. Ղազախեցյան և ուրիշ.), Երևան, Զանգակ – 97, 800 էջ + 24 էջ ներդիր:

«Կոմունիստ» (Երևան), 14. XII. 1920, № 8, 15. XII. 1920, № 9, 22. XII. 1920, № 14, 28. XII. 1920, № 19, 30. XII. 1920, № 21, 12. I. 1921, № 30, 14. I. 1921, № 32, 27. I. 1921, № 40, 28. I. 1921, № 41, 01. II. 1921, № 44, 02. II. 1921, № 45, 03. II. 1921, № 46, 05. II. 1921, № 48, 08. II. 1921, № 50, 19. IV. 1921, № 68, 23. IV. 1921, № 71, 29. IV. 1921, № 76:

Аралов С. И. 1960, Воспоминания советского дипломата 1922–1923. М., Изд. Института международных отношений, 220 с.

Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, в 2-х томах, т. 2, ч. 1. Ред. и сост. проф. Ю. Г. Барсегов. М., 2003, «Гардарики», 912 с.

Инджикян О. 1988, № 6, Армянский вопрос и советско-турецкие отношения. – «Вестник общественных наук» АрмССР, с. 3–17.

Саакян Р. 2021, № 2, Первый съезд народов Востока (стенографический отчет: Армения и Армянский вопрос). – «Вестник общественных наук» НАН РА, с. 37–65.

## Օ ԿԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼՅԱԿ ԵՎ ԳՍԵՐՆԻՅԱԿ (Վ սոօբշչենիա գազետի «Կոմմունիստ» 1920–1921 թթ.)

ՐՍԵՆ ՏԱԿՅԱՆ

### Րեզյուե

*Ключевые слова: Александрополь, турецкая оккупация, газета «Коммунист», Геноцид армян, М. Тер-Григорян, А. Нуридджанян, С. Касьян, А. Бекзаян, П. Макинцян.*

Օսենյու 1920 թ. արմյանսկա արմյա թոտերթելա տյեժելոե թորաժենիե օտ կեմալիստսկի վոյսկ. 17 նոյաբրյա 1920 թ. տուրեքսկիե վոյսկա վոշլի վ գ. Ալեքսանդրոպոլ:

поль и организовали из местных коммунистов Революционный комитет, который фактически стал придатком захватчиков. Жители города и губернии подвергались ежедневным противозаконным действиям со стороны врага: арестам, реквизициям и убийствам. Все ноты или заявления руководства Советской Армении оставались без ответа.

Беззаконные и жестокие действия врага были зафиксированы издающейся на армянском языке в г. Ереване газетой партии большевиков «Коммунист». Турки сначала тайно «покровительствовали» Александропольскому ревкому, после перешли к откровенным действиям: этнические чистки в городе и губернии, передача туркам жилищ убитых или убежавших от преследований армян. Турецкими оккупантами был организован так называемый «референдум» среди жителей с целью сдачи Александрополя и губернии туркам. Во время оккупации Армении был нанесен огромный человеческий и материальный урон. Турки окончательно ушли из Александрополя и губернии 22 апреля 1921 г., после предупреждения командования русской 11-й армии.

*Рубен Саакян – д. и. н., ведущий научный сотрудник Института истории НАН РА, заведующий отделом новой истории. Научные интересы: российско-турецкий фронт Первой мировой войны, добровольческое движение, Геноцид армян, самооборонительные сражения, история армянской полиции. rubensahakyan58@gmail.com*

ON THE TURKISH OCCUPATION OF ALEXANDROPOL  
AND ITS PROVINCE  
(According to the 1920–1921 reports of the newspaper “Communist”)

RUBEN SAHAKYAN

Summary

*Key words: Alexandropol, Turkish occupation, newspaper “Communist”, Armenian Genocide, M. Ter-Grigoryan, A. Nurijanyan, S. Kasyan, A. Bekzadyan, P. Makintyan.*

In Autumn 1920, the Armenian army was severely defeated by Kemalist troops. On November 17. 1920, the Turkish army entered the city of Alexandropol and organized the Revolutionary Committee consisting of local Communists, which in fact became an appendage of the invaders. The residents of the city and the province were subjected to daily illegal actions by the enemy: arrests, confiscations of property, murders. All diplomatic notes or statements of the leadership of Soviet Armenia remained unanswered.

The illegal and cruel actions of the enemy were recorded by the Bolshevik Party newspaper “Communist” published in the Armenian language in Yerevan. At first,



Turks secretly “patronized” the Revolutionary Committee of Alexandropol, but afterwards they switched to undisguised actions: ethnic cleansing of the city and province, transferring to Turks the houses of the Armenians killed or escaped from persecution. The Turkish invaders organized so-called “referendum” among the residents, with the aim of surrendering Alexandropol and its province to the Turks. Armenia suffered huge human and material losses during the occupation. The Turks finally left Alexandropol and its province on April 22, 1921 after a warning from the command of the Russian 11th Army.

*Ruben Sahakyan – Doctor of Sciences in History, Leading Researcher at the NAS RA Institute of History, Chair of the Department of New History. Scientific interests: Russian-Turkish Front of the First World War, volunteer movement, Armenian Genocide, self-defense battles, history of the Armenian police. rubensahakyan58@gmail.com*

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ\*

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-121>

Բանալի բառեր՝ Կոմիտաս Վարդապետ, Ս. Էջմիածին, Հայ Առաքելական եկեղեցի, Հոգևոր ժառանգություն, երաժշտություն, մշակույթ:

**Նախաբան**

Հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության մեջ Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը կարևոր նշանակություն ունի: Այս հոգևոր դարբնոցում է ապագա Մեծ երաժիշտը ստացել իր նախնական կրթությունը, ուսումնասիրել Հայոց գիրը և գրականությունը, Հայ ժողովրդի պատմությունն ու հոգևոր երաժշտությունը:

Եկեղեցու հետ Կոմիտաս Վարդապետի առնչությունները եղել են ոչ միանշանակ: Իր ճակատագրով և կոչմամբ նա հոգևորական էր, Ս. Էջմիածնի միաբան, ում անձն ու գործն արժանացել է Հայ Առաքելական եկեղեցու երևելի հայրերի ու Գևորգյան հոգևոր ճեմարանի առաջադեմ մտավորականների բարձր գնահատանքին: Ճեմարանում է Կոմիտասը ստացել վարդապետական կոչումն ու Հայ արվեստին ծառայելու մկրտությունը: Տեղի ուսուցիչները, մասնավորապես՝ բանասեր ու ձայնագրագետ Սահակ Ամատունին, Կոմիտաս Վարդապետին ծանոթացրել է բանահավաքչական աշխատանքների առանձնահատկություններին:

Բացառիկ են Կոմիտաս Վարդապետի՝ Հայ հոգևոր մշակույթի համար ստեղծած գանձերը. Պատարագից մինչև հոգևոր երգեր, եկեղեցական երաժշտության տեսական աշխատություններից մինչև խազերի ուսումնասիրություն:

Արվեստագետի՝ նրա հուժկու հանճարը երբեմն վեր էր կանգնում խոնարհ-հոգևորականի հնազանդ կեցվածքից: Այս իրավիճակը սրում էր Կոմիտասի հակասությունն իր արվեստը չգնահատողների նկատմամբ:

Դա դառնում է Ս. Էջմիածինը թողնելու Կոմիտասի առաջին դրդապատճառներից մեկը:

\* Ներկայացվել է 25. VIII. 2021 թ., գրախոսվել է 08. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 14. X. 2021 թ.:

Կոմիտաս–եկեղեցի կապը խորհրդային ժամանակաշրջանում ներկայացվում էր միակողմանի: Արդի կոմիտասագիտությունն ունի ուսումնասիրությունն առավել լայն ասպարեզ: Անդրադառնալով Կոմիտասի կենսագրության էջմիածնական շրջանին՝ Կոմիտաս–եկեղեցի առնչությունները կարելի է դիտարկել երկու ուղղությամբ. ա) Կոմիտաս Վարդապետ–Հայ հոգևոր մշակույթ, բ) Կոմիտաս Վարդապետ–Հայ եկեղեցու գործիչներ:

Կոմիտաս Վարդապետ–Հայ Առաքելական եկեղեցի կապն արդի կոմիտասագիտության և հայագիտության հետաքրքիր, բայց դեռ լիովին չուսումնասիրված թեմաներից է:

Հայ երաժշտագիտության մեջ բազմիցս լուսաբանված է այն իրողությունը՝ Կոմիտաս Վարդապետը Հայ եկեղեցու միաբան էր, որ բավական բարդ ու ոչ միանշանակ էին նրա փոխհարաբերությունները եկեղեցու Հայրերի հետ՝ մասնավորապես Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի մահից հետո:

Ի՞նչ ակնկալիքներ ուներ Կոմիտասը Հայ Առաքելական եկեղեցուց, և ի՞նչ էր սպասում կամ պահանջում իր վարդապետից Ս. էջմիածինը:

Այս հիմնահարցերի նորովի լուսաբանումը հնարավորություն կընձեռի բացահայտել Կոմիտաս Վարդապետի կենսագրության խնդրահարույց էջերը՝ նամանավանդ այս շրջանում, երբ Հայ Առաքելական եկեղեցին ձեռնամուխ է եղել Կոմիտաս Վարդապետին սրբագործելու նպատակին:

Կոմիտաս Վարդապետ–Հայ հոգևոր մշակույթ կապը, թերևս, ամենաներդաշնակ ու խորը կապն է, որը կարող էր Կոմիտասի պես ստեղծագործ անհատը ձևավորել եկեղեցու և Հավատքի նկատմամբ:

Կոմիտասի հսկայական դերն ու նշանակությունը Հայ հոգևոր մշակույթի համատեքստում

Կոմիտաս Վարդապետի՝ Հայ հոգևոր մոնոդիային, եկեղեցական երաժշտությանն ու միջնադարյան խաղային համակարգին նվիրված ուսումնասիրություններով պարարտացավ մի ողջ գիտություն՝ երաժշտական միջնադարագիտությունը: Նա բացահայտեց հայկական խաղագրության հիմնական սկզբունքները<sup>1</sup>:

Երաժշտի՝ Հայ հոգևոր երաժշտության տեսական հարցերին նվիրված հետազոտությունները մեծ հետաքրքրություն էին առաջ բերում Միջազգային երաժշտական շրջանակներում. մասնավորապես՝ 1914 թ. հունիսին Փարիզում կայացած Միջազգային երաժշտական կոնգրեսի ելույթները: Երբ Վարդապետը պնդում էր, որ պետք է մաքրել Հայոց երգը, առաջին հերթին նա նկատի ուներ հոգևոր երգը (մանավանդ՝ Կ. Պոլսի եկեղեցիների երգեցողությունը):

Կոմիտաս Վարդապետը Հայ հոգևոր երգը գիտականորեն առաջին ուսումնասիրողն ու պահպանողն էր: Ավելին, Հայ գեղջուկ երաժշտության ինքնուրույնությունը, ձայնակարգային համակարգի առանձնահատկությունները Կոմիտասը բացահայտեց հոգևոր երգի տեսական վերլուծությամբ: Նա էր, ով հստակ, մասնագիտական ծրագրեր էր կազմում Հայ եկեղեցական

<sup>1</sup> Ռ. Ա. Թ ա յ ա ն. 1959, էջ 141:

երաժշտությունը բարենորոգելու համար: Կոմիտասյան Պատարագը, որպես կոմպոզիտորական արվեստի գլուխգործոց, մեղեդիակերտ բազմաձայնությունների չգերազանցված օրինակ, ստեղծվեց և բյուրեղացավ հենց եկեղեցու ներսում:

Կոմիտասը Հայ հոգևոր ստեղծագործությունամբ զբաղվել է գիտակցական ողջ կյանքի ընթացքում. ստեղծագործական վաղ շրջանում՝ էջմիածնում, այնուհետև մշակութային ու հոգևոր այն կենտրոններում, որտեղ ծավալել է երաժշտալուսավորական գործունեությունը: «Կոմիտասը, հանդես գալով Հայ եկեղեցական երաժշտության ազգային ինքնատիպության գորեղ պաշտպանի դերում, նախ բյուրեղացրեց այդ երաժշտության անարատ կատարման ոճը», – գրում է կոմիտասագետ Ռ. Աթայանը: Իսկ Պատարագի մեղեդիներից Կոմիտասի համար առավել «անարատ» ու վավերական էին Ս. Էջմիածնում Նիկողայոս Թաշչյանի կողմից ձայնագրած եղանակները:

Հոգևորական-գիտնականի իր մկրտությունը Կոմիտաս Վարդապետը ստացել է Ս. Էջմիածնում: Դժվար է գերազանահատել 1874 թ. ս. Գևորգի տոնին բացված և մինչ օրս գործող ամենահին բարձրագույն ուսումնական հաստատության՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանի դերն ու նշանակությունը Կոմիտաս Վարդապետի կենսագրության մեջ:

Նախ և առաջ. կոմիտասագիտական գրականության գերակշիռ մասը գրվել է խորհրդային շրջանում, երբ գրեթե անհնար էր բացեիբաց խոսել եկեղեցու կամ հոգևոր ժառանգության իրական նշանակության մասին:

Խորհրդային շրջանում բավական թերի էր գնահատվում Կոմիտասի բազմաձայնած Պատարագը, մինչդեռ, ինչպես նշել ենք<sup>3</sup>, կոթողային այս երկը Հայ կոմպոզիտորական արվեստի բարձրագույն գրանցումներից է՝ հոգևոր մոնոդիան բազմաձայնելու վարպետության առ այսօր չգերազանցված օրինակ: Բարձր գնահատելով մեծ երախտավորներ Ռ. Աթայանի ու Ն. Թահմիզյանի վաստակը կոմիտասագիտության մեջ՝ այդուհանդերձ, նշենք, որ ժամանակին Կոմիտասին համարում էին Եվրոպայում և Մերձավոր Արևելքում խազերի միակ մասնագետը, բայց այս իրողության հետ կապված փաստերի մասին առավել համարձակ խոսում են ժամանակակից երաժշտագետները:

Չենք ժխտում, որ Խորհրդային Հայաստանից դուրս Կոմիտաս Վարդապետի հոգևոր առաքելությունը համեմատում էին Ներսես Շնորհալու կամ Մովսես Խորենացու հետ<sup>4</sup>: Եվ դա լիովին արդարացված էր, քանի որ Կոմիտասը, առանձնացնելով Շնորհալու հանճարի ընդգրկումները, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի իր ավարտաճառը նվիրել էր Ներսես Շնորհալուն. աշխատություն, որ դեռ լիովին գնահատված չէ մեզանում<sup>5</sup>:

Դժվար է պատկերացնել անկողմնակալ և ճշմարտացի արժևորել բարդ ու հակասական այն ժամանակաշրջանը, որում ապրել ու ստեղծագործել է

<sup>2</sup> Կոմիտաս. 1997, հ. 7, էջ 121:

<sup>3</sup> Լ. Սահակյան. 2010, էջ 45–99:

<sup>4</sup> Գրող, հրապարակախոս Արշակ Չոպանյանի բնորոշումը տե՛ս «Անահիտ» (Փարիզ), 1901, № 6–7, էջ 142, նաև՝ Կ. Տ. Հայր Սահակյան. 1907, № 7–8, էջ 369:

<sup>5</sup> Կոմիտաս Վարդապետ. 2005, գիրք Ա, էջ 15–54:

Կոմիտաս Վարդապետը: Դա պատմական այն շրջանն էր, երբ Հայոց ու նաև Վարդապետի կյանքում եղան բազում եղերական էջեր:

Չմանրամասնելով Կոմիտաս Վարդապետի կենսագրական փաստերը՝ նշենք. Հայտնի Հանգամանքների բերումով Կոմիտասը՝ Սողոմոն Սողոմոնյանը, 1881 թ. Գևորգ վարդապետ Դերձակյանի և Մամբրե վարդապետի ընկերակցությամբ Փոքր Ասիայի Քյոթհազիա քաղաքից գալիս է Ս. Էջմիածին: Իր ինքնակեսագրության հակիրճ շարադրանքի մեջ Կոմիտասը գրում է. «Դեռ Գեորգեան ճեմարանի Զ դասարան աշակերտ էի, երբ Մակար Ա, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով մտայ Ս. Էջմիածնի միաբանությունն շարքը: 1890 թուին, յունիսի 8-ին ձեռնադրուեցայ աւագ սարկաւագ: 1893 թուին, սեպտեմբերի 11-ին, Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով ձեռնադրուեցայ արեղայ: 1895 թուին, փետրուարի 26-ին ձեռնադրուեցայ վարդապետ»<sup>6</sup>: Կոմիտասն իր ողջ կյանքի ընթացքում մնում է Հայ Առաքելական եկեղեցու կուսակրոն քահանայության վարդապետի աստիճանով:

Վարդապետը հավատարիմ էր ուսուցիչ-գիտնականի իր կոչմանը: Բայց հարց է առաջանում. արդյո՞ք Կոմիտասը մշտապես ապրեց եկեղեցում՝ քարոզելով Ավետարանը, քրիստոսաավանդ հավատքը, արդյո՞ք նրա բոլոր ուսումնասիրություններն էին նվիրված եկեղեցուն ու գործիչներին, թե մնաց միայն վերը նշած մեկ ավարտաճառ՝ «Շնորհալին. նորա դարը եւ նորա ժամանակ յուզուած կրօնական խնդիրները» խորագրով<sup>7</sup>:

Կարող ենք նշել մեկ փաստ Կոմիտաս Վարդապետի՝ ոչ թե երաժշտատեսական աշխատության, այլ մատենախոսական բովանդակությամբ թարգմանության հետ: Հայտնի է, որ նա նամակագրական կապ է ունեցել Մխիթարյան միաբանության հոգևոր հայրերի հետ: Հայ երաժշտագիտության երախտավոր, կոմիտասագետ Ռ. Աթայանի անձնական արխիվում մեր կողմից հայտնաբերվել են Կոմիտաս Վարդապետի անտիպ մի քանի նամակ: Առաջինը Կոմիտաս Վարդապետի՝ 1898 թ. Վիեննայի Մխիթարյան Միաբանության «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիր Հայր Գաբրիել Մենեխյանից ստացած նամակն է: Վերջինս Կոմիտասին խնդրում է ուսերեն մի հոդված թարգմանել՝ ամսագրում տպագրելու նպատակով: Հաջորդ նամակը Վարդապետի թարգմանությանը ձեռնամուխ լինելու սիրալիր պատասխանն ու համաձայնությունն է:

1898-ին «Հանդես ամսօրեայ»-ի հերթական համարում<sup>8</sup> հրատարակվում է Նիկողայոս Մառի հոդվածը՝ թարգմանված Կոմիտաս Վարդապետի «ուսասահայոց բարբառով»: Հայր Գ. Մենեխյանը Կոմիտասի կատարած աշխատանքի հանդեպ իր գոհունակությունն է հայտնում հաջորդ նամակի մեջ<sup>9</sup>:

<sup>6</sup> Գրական նշխարք Կոմիտաս Վարդապետի բեղուն գրչէն, 1994, էջ 4, 3 ա. 3. Ա ս ա տ ու ռ ե ա ն. Ն. ձ., 1994, էջ 202:

<sup>7</sup> Կոմիտասը՝ այդ շրջանում 1893-ին, Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը, այս ավարտաճառով ավարտում է Գևորգյան հոգևոր ճեմարանի լսարանական բաժինը. տե՛ս Կ ո մ ի տ ա ս Վ ա ղ ա պ ե տ. 2005, գիրք Ա, էջ 15:

<sup>8</sup> «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), 1898, № 4, էջ 267–271, տե՛ս նաև «Էջմիածին», 2002, Բ–Գ, էջ 85–87:

<sup>9</sup> Կոմիտաս–Մենեխյան նամակագրության իր հոդվածում անդրադարձել է Կոմիտասի կյանքի ու գործունեության համառոտ տարեգրության հեղինակ

Եկեղեցու հայրերի հետ շփումներ ունենալը, եկեղեցում ապրելը Կոմիտաս Վարդապետի համար կենսական նշանակություն ունեն։ Նա տարիներով ղեկավարում էր հոգևոր ճեմարանի երգչախումբը, Պատարագ մատուցում և՛ Ս. Էջմիածնի միաբանությունում, և՛ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ, և՛ Կ. Պոլսի Ս. Երրորդություն եկեղեցիներում:

Բայց նրա առաքելությունը նաև եկեղեցու երաժշտական գանձերը համերգային բեմերում հնչեցնելն էր: Միջազգային երաժշտական ընկերությունների բոլոր գիտաժողովներում Կոմիտաս Վարդապետը լսարանին հիացնում էր՝ առաջին հերթին ցուցադրելով հայ եկեղեցական երաժշտության անհատակ գեղեցկությունը:

**Կոմիտասը հոգևորական լինելուց բացի հանճարեղ գեղարվեստագետ էր**

Կոմիտաս Վարդապետի առաքելությունը հայ դարավոր երաժշտական մշակույթի վերածնունդն էր, ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը, հայ ազգային ինքնուրույն երաժշտական մտածողության ու սկզբունքների վերհանումը, բարձրագույն ուսումնական հաստատության՝ կոնսերվատորիայի ստեղծումը:

Կոմիտասին բնութագրելիս իր գերմանացի ուսուցիչ Ռիխարդ Շմիդտն ասում էր. «Կոմիտասը մի մոլեռանդ արևելցի է, որ պատրաստ է ամեն մի նոտայի համար արյուն թափել»<sup>10</sup>: Վարդապետը, իրավամբ, անհողող էր երաժշտության մեջ նշագծած իր ճանապարհից: Ինչպես բնորոշ է հանճարներին, նա կարող էր լքել իր օթևանը, իր տունն ու բարեկեցությունը, բայց երբևէ չհրաժարվել երաժշտության մեջ ստեղծած իր սկզբունքներից: Այնտեղ, որտեղ խոնարհ հոգևորականի նկատմամբ գլուխ էր բարձրացնում Արվեստագետ-Անհատը, այդտեղ սկսվում էր հակասությունն ու տարաձայնությունը: Բայց՝ հակասություն՝ խավարամտության և սահմանափակության դեմ, տարաձայնություն՝ Բարձր Արվեստ ու Լուսավորություն չհասկացող կղերականության հետ:

Բացառելով «Կոմիտաս-Հայ եկեղեցի հակասություն» ձևակերպումը, մեր խորին համոզմամբ, պետք է դիտարկել «Կոմիտաս-Հայ եկեղեցու գործիչներ» հիմնահարցը, որով նորովի կմեկնաբանվի տարաբնույթ հակասությունները:

Կոմիտասի լուսավորական գործունեությունը միմիայն կարող էին հասկանալ և քաջալերել տաղանդավոր, մտավորական անհատները: Նման մեծություններ եղան Կոմիտասի կյանքում:

Եկեղեցական երկու գործիչ, երկու անհատականություն և մտավորական Կոմիտաս Վարդապետի կյանքում ունեցան բացառիկ նշանակություն:

Առաջինն աստվածաբան, հոգևոր-մշակութային ու քաղաքական գործիչ, Կ. Պոլսո Հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն

Խաչիկ Սամվելյանը. տե՛ս Խ. Ս ամվելյան. 2002, Բ-Գ, էջ 83-90, նա միայն նշում է, որ եղել է այդ նամակագրությունը: Մինչդեռ նամակները մեր կողմից հայտնաբերվել են Ռ. Աթայանի ընտանեկան արխիվում:

<sup>10</sup> Գ. Գյոզալյան. 2000, էջ 28:

էր<sup>11</sup>: Երկրորդը Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ) էր, ով Ամենայն Հայոց կաթողիկոսն էր 1892-ից 1907 թվականներին՝ Կոմիտաս Վարդապետի գլխավորությամբ, մանկավարժական և ստեղծագործական ամենաբեղուն շրջանում:

Կոմիտաս Վարդապետ և Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան Կոմիտաս Վարդապետի համար Մաղաքիա Օրմանյանը «Շատ խելօք, դիւանագէտ, զգոյշ, շրջահայեաց, քաղաքավար, միւլնույն ժամանակ հայրենասէր յառաջադիմական, բարձր ուսումով, աստուածաբան, պատմագէտ, ջերմեռանդ հավատացեալ, մի խոսքով՝ կատարեալ և յարմար եկեղեցու պետ ու ժողովրդի հայր» էր<sup>12</sup>:

Մաղաքիա Օրմանյանը 1890-ական թվականներին Գևորգյան հոգևոր ճեմարան էր բերում Հոռմի համալսարանական շրջանակների շունչը: Մեր խորին համոզմամբ, Բեռլինում Կոմիտասի ուսում ստանալու մեջ հսկայական էր նաև Օրմանյանի ազդեցությունը, ով իր լայնահայաց գիտելիքներով հեղինակություն էր Գևորգյան ճեմարանում:

Խրիմյան Հայրիկ–Մաղաքիա Օրմանյան–Գարեգին Սրվանձտյանց՝ այս փառահեղ եռյակը մեկմեկու գործունեությունը բարձր էին գնահատում, իսկ Կոմիտասի համար նրանք Հայ Առաքելական եկեղեցու ամենավսեմ ու նվիրական անուններն էին՝ օժտված իսկական հոգևորականի բարձր առաքինություններով:

Կոմիտաս Վարդապետ և Խրիմյան Հայրիկ

Կոմիտաս Վարդապետի համար Մկրտիչ Ա Վանեցի կաթողիկոսը հոգևոր առաջնորդ էր՝ բառի ամենախոր ընկալմամբ, և էջմիածնում նա, ի դեմս Խրիմյան Հայրիկի, գտավ այդ ապավենն ու պաշտպանությունը:

Լինելով ազգային գործիչ և մտավորական՝ Խրիմյան Հայրիկը խորապես հասկանում ու քաջալերում էր Կոմիտասի «աշխարհիկ» գործունեությունը՝ կոմիտասյան առաքելությունը համարելով ազգային արժեք: Ամենայն Հայոց Վեհափառը Կոմիտասի առջև բացում է կրթիկը, ստեղծագործելու, արարելու անսահման հնարավորությունները: Նրա հրամանով է Կոմիտասը 1893-ին նշանակվում Գևորգյան ճեմարանի երգեցողության ուսուցիչ առաջին անգամ Մայր տաճարում հնչեցնելով «էջմիածին ի հորե» բազմաձայնած շարականը: Վեհափառ Հայրապետն է մեկ տարի անց Կոմիտասին շնորհում վարդապետական աստիճան ու գավազան<sup>13</sup>:

Խորապես հասկանալով Կոմիտաս Վարդապետի երաժշտական տաղանդը՝ Խրիմյան Հայրիկը 1895 թվականից օգնում է Կոմիտասին երաժշտական

<sup>11</sup> Ի դեպ, Մաղաքիա Օրմանյանը 1886 թ. Մակար Թեղուտցի կաթողիկոսի կողմից եպիսկոպոս է ձեռնադրվել բանասեր-բանահավաք, ազգագրագետ ու հոգևորական Գարեգին Սրվանձտյանցի հետ, ով նույնպես ճանաչում էր Կոմիտաս Վարդապետին:

<sup>12</sup> Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, 2009, էջ 68:

<sup>13</sup> «1896 թ. փետրվարի 26-ին Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ, Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցում Մեսրոպ արք. Սմբատյանցի կողմից Կոմիտաս արքեպիսկոպոսի վարդապետական աստիճան է ստանում»։ – Ան ու շ ա վ ա ն ե պ ս. Ժ ա մ կ ո չ յ ա ն. 2007, էջ 16:

մասնագիտական կրթություն ստանալու հարցում, սկզբում թիֆլիսում, այնուհետև՝ Բեռլինում<sup>14</sup>: 1899 թ. Բեռլինից վերադառնալով՝ նշանակվում է Մայր Տաճարի դպրապետ ու Գևորգյան հոգևոր ճեմարանի երաժշտության ուսուցիչ: 1901 թ. Խրիմյան Հայրիկի միջնորդությամբ Կոմիտաս Վարդապետը մեկնում է Բեռլին՝ մասնակցելու Միջազգային երաժշտական ընկերության հերթական գիտաժողովին:

1902 թ. նկատի ունենալով Կոմիտասի բազմամյա գործունեությունը, նրա վաստակը մանկավարժական ասպարեզում և անձնվեր աշխատանքը քառաձայն երգչախումբ կազմելու գործում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը «հայրապետական կոնդակով» «Ծաղկեաց կերպասեա» փելոն է շնորհում Կոմիտաս Վարդապետին<sup>15</sup>:

Խրիմյան Հայրիկն է Կոմիտաս Վարդապետին շնորհում ակնակուռ լանջախաչ ու գոհունակություն հայտնում նրա գերմանացի ուսուցիչներ Օ. Ֆլայշերին և Ռ. Շմիդտին՝ «Կոմիտաս վարդապետին երաժշտական կրթություն ստանալու գործում ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքի համար»<sup>16</sup>: Վեհափառ Հայրիկն է օրհնում Կոմիտասի «աստվածային» շնորհները՝ ուժ ու կորով մաղթելով նրան<sup>17</sup>: Եվ ահա. «Հայրիկ, Հայրիկ քո հայրենիք» երգը, որը Կոմիտասը նվիրում է Խրիմյան Հայրիկին, հայրենասիրական երգ-երկխոսություն է՝ վասպուրականցի հոր և որդու միջև: Հաճախ էր Կոմիտասը երկխոսում Հայրիկի հետ:

Բացառիկ էին այդ շրջանում Կոմիտասի ղեկավարած ճեմարանի երգեցիկ խմբի կատարումները: Հայ գեղջուկ երգերի գրառումներն ու հոգևոր երաժշտությանը նվիրված ուսումնասիրությունները<sup>18</sup>:

Հայ մանկավարժ, լեզվաբան Խ. Կանայանի վկայությամբ՝ «Կոմիտասը ճեմարանի հոգին էր, ճեմարանը առանց Կոմիտասի դժվար էր պատկերացնել: Ճեմարանի հանդեսների, բոլոր տեսակի տոնակատարումների ժամանակ նա կյանք ու աշխույժ էր մտցնում ճեմարանի ընտանիքում իր քառաձայն երգչախմբով»<sup>19</sup>:

Կոմիտասի համար բաց էին էջմիածնի ու Մխիթարյան միաբանության մատենադարանները, որտեղ ձեռագիր մատյաններից ուսումնասիրություններ էր կատարում խազագրության, մանրուսման և հոգևոր երաժշտության վերաբերյալ: Էջմիածնում Մ. Աբեղյանի հետ Կոմիտասը ձեռնարկում և իրագործում էր «Հագար ու մի խաղ» ժողովրդական երգարանի աշխատանքները: Այնքան ազատ էր վերջինս իր ստեղծագործության մեջ, որ

<sup>14</sup> Տե՛ս Ա. Ա ս ա տ ր յ ա ն. 2020, № 1, էջ 24–42:

<sup>15</sup> «Սովետական արվեստ» (Երևան), 1969, № 12, էջ 57:

<sup>16</sup> Տե՛ս «Արարատ», 1900, № 1, էջ 5:

<sup>17</sup> Տե՛ս Յ ա. Յ. Ա ս ա տ ու ը ե ա ն. 1994, էջ 224:

<sup>18</sup> «Շար Ակնա ժողովրդական երգերի» ժողովածուն (Հնութիւնք Ակնա, 1895, էջ 502), «Հայ եկեղեցական երաժշտություն» («Արարատ», 1894, № 7–8, էջ 222–227, 256–260) խորագրով ուսումնասիրությունը:

<sup>19</sup> Խ. Կ ա ն ա յ ա ն. 1962, № 1, էջ 257–262:



հենց էջմիածնում է 1904-ին ձեռնամուխ լինում Թումանյանի «Անուշի» աշխատանքներին: Ավելին, երկու հանձարները հենց էջմիածնում են հանդիպում և զրուցում պոեմի մասին՝ ստեղծելով արվեստագիտական այն միջնորդը, որին ներկա էին բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, հայագետ Մանուկ Աբեղյանը, գրականագետ Գարեգին Լևոնյանը<sup>20</sup>:

էջմիածնում Վարդապետը մտադրվում է հրապարակել «Գեղարվեստ» գրական-գեղարվեստական հանդեսը: Այն նրա տունն էր, տեղի մտավորական-լուսավորչալ սպասավորները՝ հարազատները: էջմիածնում էր Կոմիտասը գիտական և ստեղծագործական կապեր հաստատում այն բոլոր մտավորականների հետ, ովքեր այցելում էին Արևելյան Հայաստանի միակ հոգևոր ու մշակութային կենտրոնը: Նա ծանոթանում էր եվրոպացի հնագետների ու միջնադարագետների հետ և ծրագրում իր արտասահմանյան ուղևորությունները: Կոմիտասը ճեմարան էր ներմուծում եվրոպական նոտագրություն, աշակերտներին ծանոթացնում եվրոպական երաժշտական գործիքների և կոմպոզիտորների հետ, իսկ էջմիածնի «Արարատ» ամսագիրն առաջին էր անդրադառնում Կոմիտասի՝ եվրոպայում ունեցած երաժշտագիտական և համերգային հաջողություններին: Այս լուսավորական ծրագրերում նրան օժանդակում և սատարում էր Խրիմյան Հայրիկը:

էջմիածինը Կոմիտաս Վարդապետի համար դառնում է հենարան ու հայրենիք: Նա էջմիածին՝ Հայրիկի մոտ է վերադառնում Թիֆլիսից, Բեռլինից ու Փարիզից: Վերադառնում էր նոր գաղափարներով ու ծրագրերով, միաբանություն մեջ երաժշտություն բարենորոգելու նպատակներով: Ուր էլ որ մեկներ, մշտապես պահպանում էր նամակագրական կամ գործնական կապերը էջմիածնի միաբանության հետ: Նրա ստեղծագործական կյանքի մանրամասների հավաստի վկայությունը նամակներն են՝ հասցեագրած ճեմարանական ընկերներին և ուսուցիչներին<sup>21</sup>:

Կոմիտաս Վարդապետը էջմիածնում մի որոշ ժամանակ նույնիսկ ստանձնում է գանձապահ-քարտուղարի պարտականությունները<sup>22</sup>: Այս չրջանում, Կոմիտասը չունեի որևէ բացասական վերաբերմունք, բողոք հայ եկեղեցու կամ նրա սպասավորների հանդեպ<sup>23</sup>:

էջմիածնում Կոմիտասի լուսավորական «աշխարհիկ» գործունեությունը սահմանափակվում է Խրիմյան Հայրիկի մահից հետո:

1908 թ. էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրություններին Կոմիտաս Վարդապետը մասնակցում էր որպես Քյոթահիայի և Բրուսայի հայության պատգամավոր-ներկայացուցիչ<sup>24</sup>: Նա պաշտպանում էր եպիսկոպոս Մաղաքիա Օրմանյանի թեկնածությունը, որն աներկբա հեղինակություն է մտնում Կոմիտասի համար մինչև իր գիտակցական կյանքի ա-

<sup>20</sup> Գ. Լ. Լևոնյան. 1930, էջ 75:

<sup>21</sup> Կոմիտաս Վարդապետ. 2009:

<sup>22</sup> Տե՛ս Վալերազրեր հայ եկեղեցու պատմություն, 2019, գիրք ԻԱ, էջ 57:

<sup>23</sup> Տե՛ս «Արարատ», 1903, № 4, էջ 330:

<sup>24</sup> Կոմիտաս. 1997, էջ 122:

վարտը, իսկ վերջինիս համար եկեղեցու հոգևոր առաջնորդի օրինակ էր Նորիմյան Հայրիկը:

Մկրտիչ Նորիմյանին հաջորդում է Մաթևոս Բ Կոստանդնուպոլսեցին, ով, թերևս, Կոմիտասից ակնկալում էր հնազանդ հոգևորականի ու շարքային ուսուցչի պահվածք: Սահմանափակվում են Կոմիտասի բանահավաքչական և ստեղծագործական-համերգային աշխատանքները: Էջմիածնում այլևս չեն ուզում ընկալել նրա՝ եկեղեցական երգեցողության բարեփոխումներին վերաբերող ծրագրերն ու նպատակները: Մայր Աթոռը գումար չի տրամադրում Վարդապետին, անգամ Պատարագի հրատարակության համար: Կաթողիկոսական տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի կողմից՝ Էջմիածնից բացակայելու համար, աստիճանաբար կրճատվում է Կոմիտասի ուժիկը, ով հրաժարվում է ճեմարանում պաշտոնավարելուց<sup>25</sup>: Վարդապետի համար ստեղծվում է ճղճիմ ու անձուկ միջավայր, որի վկայությունն է կաթողիկոս Մաթևոս Իգմիրլյանին հասցեագրած հայտնի նամակը<sup>26</sup>:

Կոմիտաս Վարդապետը հեռանում է Էջմիածնից

Էջմիածինը թողնելու ծրագիրը Կոմիտասի մեջ հասունանում էր որոշակիորեն և աստիճանաբար: 1909 թ. սեպտեմբերից նա հարմար առիթ էր փնտրում ճեմարանից դուրս գալու: «Նեղամուլիկներ, թիւր հասկացողութիւններ արուեստի նկատմամբ, անձնական հաշիւներէն բխող սին զրպարտութիւններ, վանական ներքին լարուածութիւններ, անհանդուրժողութիւն եւ այլ յարակից ու նմանօրինակ երեւոյթներ այնպիսի հոգեկան դրուլիւն մը կը ստեղծեն հաւատաւոր հոգեւորականին եւ ճշմարիտ ու նուիրեալ արուեստագէտին համար, որ այլեւս անկարելի կը գտնէ ապրիլն ու ստեղծագործելը նման մթնոլորտի մէջ»<sup>27</sup>:

1910-ին Կոմիտասը, պահպանելով հոգևորականի իր կոչումը, թողնում է ծառայությունը Էջմիածնում և հաստատվում Կ. Պոլսում<sup>28</sup>: Կաթողիկոսական տեղակալին ուղղված նրա վերջին գրության մեջ կարդում ենք. «Որովհետև ես մնալու եմ Կ. Պոլիս, ուստի խնդրում եմ, բարի եղէք հրամայելու, որ կարճեն իմ Էջմիածնի միաբանական ուժիկը»<sup>29</sup>:

«Տաճկահայատակ» Կոմիտաս Վարդապետը հաստատվում է Կ. Պոլսում՝ դառնալով «Սուլթանների մայրաքաղաքի» մտավորականության ոգին: Նա երգեցողության դասեր է տալիս Ղալաթիո Կեդրոնական վարժարանում, ինչպես նաև իր ապագա երգչախմբի համար սաներ հավաքագրում Կեդրոնական, Էսայան և Պերպերյան վարժարանից: Այդ հավաքագրման արդ-

<sup>25</sup> Խ. Սամվելյան. 1970, № 6, էջ 62–64:

<sup>26</sup> Կոմիտաս Վարդապետ. 2009, էջ 166:

<sup>27</sup> Գ. եպոս. Սարգիսեան. 1969, էջ 30:

<sup>28</sup> Տե՛ս Լ. Սահակյան. 2019, էջ 138–152:

<sup>29</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, 2019, գիրք ԻԱ, էջ 89:

յունքում Պոլսում կազմում է 300 հոգանոց երկսեռ երգչախումբ, որն իր նախնյաց Գողթան գավառի երգիչների պատվին կոչում է «Գուսան»<sup>30</sup>:

Կ. Պոլսում Կոմիտաս Վարդապետը նույնպես հանդիպում է կղերականության պատրիարք Ղևոնդ Դուրյանի անհանդուրժողականությանը՝ կապված համերգային-լուսավորական գործունեության հետ: Հայտնի է Կոմիտասի ներկայությունը 1912-ին մտահոգացրած «Աստեղատուն» անունով գրական եղբայրակցության կազմում, ինչը նույնպես չէր քաջալերվում հոգևորականների կողմից<sup>31</sup>:

Կ. Պոլսի «Կրոնական ժողովի որոշումը» բողոք-հոդված<sup>32</sup> է Փարիզում 1914-ին Կոմիտասի գրամոֆոնի վրա ձայնագրած երգերի առիթով: Կ. Պոլսի Կրոնական ժողովը հրապարակավ դիմել էր պատրիարքին, որպեսզի վերջինս Կոմիտասի հարցը քննելու համար դիմեր կաթողիկոսին: Այս «Անկրոն որոշման» դեմ ընդվզեցին բազմաթիվ մտավորականներ<sup>33</sup>:

Կ. Պոլսի եկեղեցականների հարձակումներին ու արգելքներին Կոմիտաս Վարդապետը մշտապես պատասխանում էր, թե ինքը Հայ հոգևոր գանձերը համերգային սրահում հնչեցնելու թույլտվություն ժամանակին ստացել է Ամենայն Հայոց կաթողիկոս Նրիմյան Հայրիկից: Իսկ Հայրիկի պատգամը Վարդապետի համար սրբություն էր:

Կոմիտաս Վարդապետը հոգևորականի իր կոչմանը հավատարիմ մնաց 1915 թ. դեպի Չանկըր տանող աքսորի ճանապարհին՝ աղոթելով և Պատարագ մատուցելով Հայ ազգի համար:

1931 թ. նոյեմբերի 27-ին՝ Կ. Պոլսի Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում պատրիարք Նարոյանի նախագահությամբ տեղի է ունենում հանդիսավոր Պատարագ՝ նվիրված Կոմիտաս Վարդապետին: Տեղի գանազան երգչախմբերի երգիչներից կազմված խումբը, Էդգար Մանասի ղեկավարությամբ, կատարում էր նրա «Պատարագը»<sup>34</sup>:

Այդ օրը Կ. Պոլսի Հայոց եկեղեցում նշվում էր «Կոմիտասի օրը»: Եվս մեկ վկայությունն այն իրողության, որ Վարդապետը մշտապես կապված էր Հայոց եկեղեցուն:

Կոմիտասի եղերական վախճանի արդյունքում կորավեցին բազմաթիվ ձեռագրեր, վկայություններ և երաժշտական նյութեր: Կոմիտասագիտությունը Մեծ արվեստագետի երաժշտական ժառանգության բացահայտման և ուսումնասիրման դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

<sup>30</sup> Լ. Սահակյան. 2019, էջ 142:

<sup>31</sup> Անդամակցում էին Դանիել Վարուժանը, Զապել Եսայանը, Սիամանթոն, Վահան Թեքեյանը, Ռուբեն Զարդարյանը, Փ. Թերլեմեզյանը. տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» (Էջմիածին), 2010, դեկտեմբեր, Բ, թիվ 24, էջ 6–8:

<sup>32</sup> Տե՛ս «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 1914, 7/20 հունիս:

<sup>33</sup> Ա. Չոպանյան. 1914, 24 և 25 հունիս, Երվանդ Օտյան. 1914, հունիս 9/22:

<sup>34</sup> Ռ. Աթայան. 1964, № 11, էջ 59:

*Սուրբ Էջմիածինը, որպես Կոմիտաս Վարդապետ ձևավորած հոգևոր դարբնոց, իր բարձր առաքելությունն է իրականացնում՝ սրբազործելով Հայրիկի բնորոշմամբ՝ «իր բլբուլ սանին»:*

**Եզրակացություն**

*Կոմիտաս Վարդապետը XX դարասկզբի մեծագույն երաժիշտներից է, եկեղեցում կրթված, եկրոպական հիմնավոր կրթություն ստացած արվեստագետ, որին հաջողվեց համաշխարհային բեմերում ճանաչելի դարձնել Հայոց երգը:*

*Մեծ բեմեր նվաճած հոգևորական Կոմիտասը, ով օժտված էր բացառիկ տաղանդով, կարող էր անհանդուրժող լինել անարդարության նկատմամբ, իր արվեստը չգնահատողների հանդեպ, երաժշտությանն ու հայ բնատուճմիկ երգի հավաքագրման իր սուրբ պարտականությունները քննադատողների և արգելողների նկատմամբ, բայց ոչ երբեք Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու ու նրա երևելի Հայրերի հանդեպ, որոնց պատվիրանները մշտապես դարձան հանճարեղ երաժշտի ստեղծագործ կյանքի ուղեկիցը:*

Լուսինե Սահակյան – արվ. թ., դոցենտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ կոմիտասագիտություն, համաշխարհային երաժշտության պատմության և տեսության հարցեր: Հեղինակ է 3 մենագրության և ավելի քան 50 հոդվածի:  
lusine\_sahakyan72@mail.ru

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Աթայան Ռ. 1964, № 11, Կոմիտասի նյութերը Թորոս Ազատյանի արխիվում. – ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», էջ 59-74:

Աթայան Ռ. 1959, Հայկական խազային նոտագրություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 285 էջ:

«Անահիտ» (Փարիզ), 1901, № 6–7:

«Արարատ» (Էջմիածին), 1894, № 7–8; 1900, № 1; 1903, № 4:

Անուշավան Եպս. Ժամկոյան. 2007, Կոմիտաս, Երևան, Հեղ. հրատ., 109 էջ:

Ասատրյան Ա. 2020, № 1, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանը և հայ երաժշտությունը. – ՊԲՀ, էջ 24–41:

Ասատուրեան Յա. Յ. 1994, Կոմիտաս Վարդապետի հետ Հայ երգի արահետներով, Թենդֆլայ, Ն. Ճ., Ա. Հ., 320 էջ:

«Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 1914, 7/20 հունիս:

Գրական նշխարք Կոմիտաս Վարդապետի բեղուն գրչին, 1994, աշխ. Դր. Աբել Վրդ. Օլլուգեանի, Մոնթբեալ, 236 էջ:

Գյոդակյան Գ. 2000, Կոմիտաս, Երևան, 80 էջ:

Երվանդ Օտյան. 1914, հուլիս 9/22, Ֆիելիետոն. – «Ժամանակ» (Կ. Պոլիս):

«Էջմիածին», 2002, Բ–Գ:

«Հանդես ամսօրեայ» (Վիեննա), 1898, № 4, օգոստոս-սեպտեմբեր:

Историко-филологический журнал  
2021 № 3  
Историко-филологический журнал  
2021 № 3

- Սարգիսեան Գ. եպս. 1969, Կոմիտաս վարդապետ, Հայ երաժշտութեան առաքեալը, Պէյրուք, Համազգային տպ., 77 էջ:
- Լևոնյան Գ. 1930, «Մեր Կոմիտասը». – «Ժողովածու նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին», Յերևան, 111 էջ:
- Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, 2009, Երևան, «Սարգիս Խաչենց», 445 էջ:
- Կոմիտաս. 1997, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, Անահիտ, 190 էջ:
- Կոմիտաս Վարդապետ. 2005, Ուսումնասիրություններ և յօդուածներ, գիրք Ա, Երաժշտական մատենաշար, Երևան, «Սարգիս Խաչենց», 520 էջ:
- Կոմիտաս Վարդապետ. 2009, Նամականի, Երևան, «Սարգիս Խաչենց», 552 էջ:
- Կանայան Խ. 1962, № 1, Հուշեր, Կոմիտաս. – ՀՊՀՄ ինստիտուտի Տեղեկագիր, էջ 257–262:
- Կ. Տ. Հայր Սահակյան. 1907, № 7–8, Հայկական երաժշտությունն ի Վենետիկ. – «Բազմավէպ» (Վենետիկ), էջ 369–373:
- Չոպանյան Ա. 1914, 24 և 25 հունիս, Անկրոն որոշում մը. – «Բյուզանդիոն»:
- Սահակյան Լ. 2010, Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Երևան, 168 էջ:
- Սահակյան Լ. 2019, Կոմիտաս Վարդապետը Պոլսում, հոդվածների ժողովածու, Երևան, 305 էջ:
- Սամվելյան Խ. 1970, № 6, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ բովանդակություն.– «Սովետական արվեստ», էջ 62–64:
- Սամվելյան Խ. 2002, Բ–Գ, Մի անհայտ էջ Կոմիտասի կենսագրությունից.– «Էջմիածին», էջ 83–90:
- «Սովետական արվեստ» (Երևան), 1969, № 12:
- Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, 2019, գիրք ԻԱ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 704 էջ:
- «Քրիստոնյա Հայաստան» (Էջմիածին), 2010, դեկտեմբեր, Բ, թիվ 24:

## НАБЛЮДЕНИЯ О ВЗАИМООТНОШЕНИЯХ КОМИТАСА ВАРДАПЕТА И АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ

ЛУСИНЕ СААКЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Комитас Вардапет, Св. Эчмиадзин, Армянская Апостольская церковь, духовное наследие, музыка, культура.*

Тема взаимоотношений Комитаса Вардапета (архимандрит) с Армянской Апостольской церковью недостаточно изучена. В советское время она представлялась односторонне. Современное комитасоведение подходит к этому факту биографии великого композитора в более широком аспекте. Взаимосвязь Комитаса с Армянской Апостольской церковью можно рассматривать в двух направлениях: а) Комитас Вардапет – армянская духовная культура, б) Комитас Вардапет – представители армянского духо-

венства. Комитас имел разногласия не с Первопрестольным Святым Эчмиадзином и выдающимися отцами церкви, а с теми представителями клерикализма, которые не оценили по достоинству значение его искусства и миссии в контексте национальной культуры.

*Лусине Саакян – к. иск., доцент, заведующая кафедрой истории музыки Ереванской государственной консерватории им. Комитаса. Научные интересы: комитасоведение, вопросы истории и теории мировой музыки. Автор 3 монографий и более 50 статей. lusine\_sahakyan72@mail.ru*

SOME OBSERVATIONS ON THE RELATIONSHIP OF  
KOMITAS VARDAPET WITH THE ARMENIAN  
APOSTOLIC CHURCH

LUSINE SAHAKYAN

S u m m a r y

*Key words: Komitas Vardapet, Holy Etchmiadzin, Armenian Apostolic Church, spiritual heritage, music, culture.*

Komitas Vardapet's relationship with the Armenian Apostolic Church has not been studied in depth to this day. During the Soviet era, the attitude towards Komitas was unilateral as he was a member of Etchmiadzin Congregation. Modern studies on Komitas present a new approach to this issue of Komitas's biography. The present article is another attempt to look at the relationship of Komitas with the Church in a new light, with new perspectives. In the article, Komitas's relationship with the Armenian Apostolic Church is examined in two directions: a) Komitas Vardapet – Armenian spiritual culture, b) Komitas Vardapet– figures of the Armenian Church. Komitas's disagreements were not about the Armenian spiritual heritage, his title, nor with the fathers of the Mother See of Holy Etchmiadzin, but with the clergy who did not appreciate the role and significance of the mission of Komitas Vardapet in the context of national culture.

*Lusine Sahakyan – Candidate of Sciences in History, Assistant Professor, Head of the Chair of History of Music at the Yerevan State Conservatory after Komitas. Scientific interests: Komitas studies, issues of history and theory of World music. Author of 3 monographs and over 50 articles. lusine\_sahakyan72@mail.ru*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ  
(1919 թ. վերջ – 1920 թ. սկիզբ)\*

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-134>

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, ԱՄՆ, ճանաչում, բանաձև, քաղաքացիական առաքելություն, ենթահանձնաժողով, օժանդակություն, պարեն, փոխառություն, համայնք, միասնություն, հանրահավաք:

Նախաբան

1919 թ. սկզբին երիտասարդ Հայաստանի Հանրապետության կառավարության առջև ծառայած բազմաթիվ խնդիրների շարքում պարենավորման հարցը շարունակում էր մնալ լրջագույններից մեկը: Այն լուծելու նպատակով ՀՀ կառավարությունը 1919 թ. հունվարի վերջին կայացնում է որոշում<sup>1</sup>, որը փետրվարի 4-ին որպես հատուկ օրինագիծ հաստատվում է Խորհրդարանի կողմից: Վերջինիս համաձայն կազմավորվում է աշխատանքային խումբ՝ քաղաքացիական առաքելություն<sup>2</sup>, որին հանձնարարվում է «ուղևորվել Եվրոպա և Ամերիկա, դիմել Հայաստանի Խորհրդի անունից համաձայնության պետությունների և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություններին և խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ուրիշ ապրանքներ»<sup>3</sup>:

ՀՀ-ի քաղաքացիական առաքելության գործունեության մեկնարկն ԱՄՆ-ում

ՀՀ-ի կառավարության քաղաքացիական առաքելությունը՝ ՀՀ նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունու նախագահությամբ, 1919 թ. մայիսի 18-ին մեկնում է Թիֆլիս՝ Եվրոպա ուղևորվելու նպատակով<sup>4</sup>: Աշխատանքային խմբում ընդգրկված էին կապիտան Սուրեն Մելիքյանը՝ իբրև նախագահի

\* Ներկայացվել է 25. IX. 2021 թ., գրախոսվել է 30. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 28. X. 2021 թ.:

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 15–16, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., 2014, էջ 106–107, Ս. Վրացյան. 1998, էջ 254:

<sup>2</sup> Աշխատանքային խմբի կազմավորման մասին համառոտ տե՛ս Ա. Ղամբարյան. 2019, № 3, էջ 254–261:

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., 2010, էջ 167:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 59, մաս 2, թ. 1:

քարտուղար, տնտեսական խորհրդականներ՝ Ֆինանսների նախկին նախարար Արտաշես Էնֆիաջյանն ու գյուղատնտես Արտեմ Փիրայյանը: Պատվիրակությունը Փարիզ է հասնում հունիսի 16-ին<sup>5</sup>: Շուրջ երեք ամիս Հ. Քաջազնունու առաքելությունը՝ դաշնակից պետություններից Ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով, ակտիվ աշխատանքներ էր կատարում թե՛ Փարիզում և թե՛ Լոնդոնում, սակայն շոշափելի արդյունքների չհասավ: Հասկանալով, որ եվրոպայում որևէ հստակ պատասխան չի տրվում հայոց հայցադիմումներին՝ Փարիզում ՀՀ-ի ու Ազգային պատվիրակությունների համատեղ նիստում, որոշում է կայացվում պաշտոնապես և ուղղակիորեն դիմել ամերիկյան կառավարությանը՝ հենց ԱՄՆ-ում<sup>6</sup>: Յրանսիայից ԱՄՆ մեկնող Քաջազնունու գլխավորած պատվիրակությունը միացավ Փարիզում ՀՀ պատվիրակություն անդամ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), ով նշանակվել էր ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ:

Հ. Քաջազնունու գլխավորությամբ ՀՀ պաշտոնական պատվիրակությունը Փարիզից ԱՄՆ է ուղևորվում 1919 թ. հոկտեմբերի 1-ին: Այնտեղ հանդես գալու քաղաքացիական առաքելության հիմնական այդ երկրից տնտեսական աջակցություն ստանալու նպատակից բացի, Քաջազնունին լիազորվել էր նաև քաղաքական խնդիրների լուծումներն ապահովելու իրավունքով:

Առաքելությունն ԱՄՆ է հասնում և ափ իջնում Նյու Յորքում 1919 թ. հոկտեմբերի 9-ին՝ հինգշաբթի օրը: Նույն ժամանակ այդտեղ էր արդեն նաև ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ Գ. Փաստրմաճյանը, ով, ինչպես հաջորդում էր մամուլը, «ՀՀ կառավարության մասնավոր ներկայացուցիչն էր»<sup>7</sup>:

Նավամատուցյում անկախ Հայաստանի պատվիրակներին դիմավորում էր Նյու Յորքի հայությունից բոլոր խավերի ներկայացուցիչներից հավաքված բազմությունը: Ներկա էին նաև ամերիկահայ մամուլի՝ մասնավորապես «Կոչնակ Հայաստանի», «Ազգի» ու «Հայրենիքի» թղթակիցները. «Երբ որ Հանրապետության ներկայացուցիչները դուրս ելան նաև, զիրենք դիմավորելու եկող բազմությունը ծափերով և կեցցէներով ողջունեց զանոնք, օգին մեջ շարժելով հայկական եռագոյնի դրոշներ ու դրոշակներ»<sup>8</sup>:

Խանդավառ ողջունների ուղեկցությամբ առաքելության անդամներն առաջնորդվում են նավամատուցի հյուրասրահ, ուր որոշ ծիսակատարություններ էին նախատեսված: Դիմավորող հանձնախմբի ատենապետ Տ. Ասլանյանը, հանդես գալով «բարի գալուստի ճառով», ցավ հայտնեց՝ ամբողջ Հայաստանը դեռ ազատագրված չէր և մաղթեց, որ բոլոր հայերը շուտով կարողանան տոնել միացյալ Հայաստանի անկախությունը: Ի պատասխան՝ Հ. Քաջազնունին, մի քանի «հուզիչ նախադասություն հնչեցնելով», հույս հայտնեց մոտ ժամանակները Հայաստանում տեսնել բոլոր հայերին. «Խանդավառությունը իր ծայրահեղ աստիճանին հասավ, և կեցցեները օղբ

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 290, թ. 55–60:

<sup>7</sup> «Կոչնակ Հայաստանի» (Նյու Յորք), 1919, 18 հոկտեմբերի, թիվ 42, էջ 1353:

<sup>8</sup> Նույն տեղում:



կլթնդացրնէին, երբ ներկայացուցիչները օթոմոպիլ մտան»<sup>9</sup>: Այդ պահից սկսած ՀՀ քաղաքացիական առաքելութեանը՝ որպէս ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ միանում է մինչ այդ Նյու Յորք ժամանած Գ. Փաստրմաճյանը: Մինչև հյուրանոց հյուրերի մեքենան ուղեկցում էին բավական մեծ թվով ավտոմեքենաներ, որոնք զարդարված էին ամերիկյան և հայկական դրոշներով: Ավտոշարասյան դիմացից ընթանում էր ամերիկյան մի զինվորական մոտոցիկլետավոր: Պատվիրակների ժամանման առթիվ դրոշակադրվել էին հայկական կուսակցութիւնների շենքերը, ճաշարանները, թերթերի խմբագրութիւնները, անհատական շենքերն ու բնակարանները:

Նյու Յորքի Ծրագրի պոդոտայի վրա գտնվող «Ուոլդորֆ Աստորիա» հյուրանոցի, ուր կանգ էին առնելու ներկայացուցիչները, շենքի վրա նույնպէս ծածանվում էր Հայոց Եռագույնը՝ ամերիկյան դրոշի կողքին:

Հ. Քաջագնունու պատվիրակութիւնը Վաշինգտոնում՝ վկայութիւն լինելով ԱՄՆ Սենատի ենթահանձնաժողովի լսումներին, հանդիպումներ ամերիկյան վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների հետ

Հոկտեմբերի 9-ի երեկոյան պատվիրակութեան անդամները Նյու Յորքից մեկնեցին Վաշինգտոն՝ ամերիկյան կառավարութեանը ներկայացնելու իրենց խնդիրները: Հոկտեմբերի 10-ին Հ. Քաջագնունին<sup>10</sup> իբրև ՀՀ-ի քաղաքացիական առաքելութեան նախագահ և Գ. Փաստրմաճյանը<sup>11</sup> որպէս հանրապետութեան դիվանագիտական ներկայացուցիչ, հանդես եկան վկայութեամբ ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերութիւնների հանձնաժողովի ենթահանձնաժողովում՝ «Նաղաղութեան պահպանումը Հայաստանում» խորագրի ներքո ընթացող լսումներին: Դրանք մեկնարկել էին 1919 թ. սեպտեմբերի 27-ին՝ սենատոր Ջոն Շարփի Ուիլյամսի ներկայացրած բանաձևի շուրջ, որն ԱՄՆ կառավարութեանը լիազորում էր ստանձնել հայերի համար դաշնակիցների ծրագրած օգնութիւնը և ամերիկյան զորքեր տրամադրել Հայաստանին<sup>12</sup>:

Հայ պատվիրակների վկայութիւնները կարևոր նշանակութիւն ունեցան ենթահանձնաժողովի անդամների կարծիքների ձևավորման գործում: Անգամ ենթահանձնաժողովի նախագահ սենատոր Ուորեն Գ. Հարդինգը, ով հայկական հարցերի շուրջ զուսպ կեցվածք էր դրսևորում, մասնավոր զրույցներում ակնարկում էր, թե, թերևս, խելամիտ կլիներ առաջարկել՝ Երևանի կառավարութեանը քաղաքական ճանաչում, ռազմական նյութեր և ֆինանսական վարկ հատկացվի<sup>13</sup>:

Ենթահանձնաժողովի առջև վկայութեամբ հանդես գալուց հետո ՀՀ-ի ներկայացուցիչները, սենատոր Ջ. Ուիլյամսի ուղեկցութեամբ, մեկնեցին Սպիտակ Տուն: Սակայն նախագահ Վ. Վիլսոնը վատառողջ լինելու պատճառով

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Սենատի ենթահանձնաժողովի առջև Հ. Քաջագնունու վկայութեան մասին տե՛ս Ա. Ղամբարյան. 2019, № 3, էջ 254–261:

<sup>11</sup> Գ. Փաստրմաճյանի վկայութեան մասին տե՛ս Ա. Ղամբարյան. 2020, էջ 89–93.

<sup>12</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտութեան և սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828–1923), 1972, էջ 566:

<sup>13</sup> «Հայրենիք» (Պոսթոն), 12 հոկտեմբերի 1919, էջ 1:

չկարողացավ հանդիպել առաքելության անդամների հետ: Բարձրաստիճան հյուրերին ընդունել էր նրա քարտուղար Զ. Պ. Թումուլտին: Վերջինս, փոխանցելով Վ. Վիլսոնի ափսոսանքները հանդիպման չկայանալու հանգամանքի վերաբերյալ, նաև հայտնել էր հայ պատվիրակներին Հայկական հարցի նկատմամբ ԱՄՆ նախագահի համակրանքի մասին:

Նկատենք, որ նախագահի հիվանդության կապակցությամբ այդ օրերին Փարիզից հայկական պատվիրակությունների հեղափոխականներ Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը հայության անունից հեռագիր էին հղել Վ. Վիլսոնին. «Մեծ ցաւ զգացինք իմանալով ձեր հիւանդ ըլլալը, եւ այժմ ուրախ ենք որ սկսած էք ապաքինիլ: Մենք, հայ ազգին հետ միատեղ, մեր ամենէն անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնենք ձեր խանգարեալ առողջութեան մասին՝ որ այնքան թանկագին է ձեր փառապանծ հայրենիքին, մարդկութեան եւ Հայաստանին համար»<sup>14</sup>:

Հոկտեմբերի 10–11-ի ընթացքում հայ պատվիրակությանն ընդունել էին նաև ԱՄՆ փոխնախագահ Թ. Ռ. Մարշալը, Սենատի մեծամասնության ղեկավար Հ. Ք. Լոջը և փոքրամասնության ղեկավար Գ. Մ. Հիչքոքը, սենատոր Ու. Հ. Քինգը, պետական քարտուղար Ռ. Լանսինգը<sup>15</sup>:

Հանդիպումների ժամանակ ԱՄՆ պետական այրերը շատ սիրալիր էին և խրախուսական խոսքեր էին հնչեցրել: Սրտագին ընդունելությունը, սակայն, չէր նշանակում, որ նրանք ամբողջությամբ կհառնէին հայ ժողովրդի ցավը և միանշանակ ու անհետաձգելիորեն պատրաստ էին աջակցել՝ առնվազն տվյալ պահին առկա հայկական խնդիրների լուծմանը: Այն հանգամանքը, որ ԱՄՆ ժամանելուն պես՝ ընդամենը երկու օրվա ընթացքում, ՀՀ քաղաքացիական առաքելության անդամներն առանց որևէ խոչընդոտի, հետաձգման ու ձգձգման ընդունվել էին մեծ տերության պաշտոնական ամենաբարձր ատյանների ներկայացուցիչների կողմից, ինչ խոսք, ոգևորիչ էր: Այդուհանդերձ, որոշ պետական այրերի կողմից անգամ ջերմ ընդունելությունը, չէր ապահովում քաղաքական, կամ ռազմական օժանդակության ուղղությամբ որևէ քայլի փորձ: Իրականությունը հասկանալու համար Հայաստանի պատվիրակներին շատ ժամանակ պետք չեղավ:

Պետական քարտուղար Ռ. Լանսինգի հետ հանդիպման ժամանակ, Հ. Քաջազնունու ներկայացրած ՀՀ ճանաչման հարցին ի պատասխան, ամերիկյան պաշտոնյան ընդամենը խորհուրդ էր տվել պաշտոնական հուշագիր ներկայացնել<sup>16</sup>:

Այդ հանդիպման մասին «Կոչնակ Հայաստանին» գրում էր. «Ուօշինկ-թընէն Հոկտ. 13 թիւով Ամերիկեան թերթերու կը հեռագրեն թէ հրապարակ դրուած է այն հարցը՝ ըստ որում Հայկ Հանրապետութեան նախկին վարչապետ Քաջազնունի եւ ելեմտական նախարար Էնֆիլէճեան՝ պետական Քար-

<sup>14</sup> «Կոչնակ Հայաստանի», 1919, 18 հոկտեմբերի, թիվ 42, էջ 1352, «Հայաստան» (Փարիզ), 1919, 11 հոկտեմբերի, թիւ 8, էջ 76:

<sup>15</sup> «Յառաջ» (Երևան), 10. I. 1920, «Կոչնակ Հայաստանի», 1919, 18 հոկտեմբերի, թիվ 42, էջ 1351, «Հայրենիք», 15 հոկտեմբերի, 1919 թ., Ռ. Գ. Հովհաննիսյան. 2014, հ. II, էջ 459:

<sup>16</sup> Ռ. Գ. Հովհաննիսյան. 2014, հ. II, էջ 464, Г. Ованисян. 2007, с. 286; Г. Махмуриян. 2018, с. 264.

տուղար Լենսինկի դիմում ընելով խնդրեցին որ գինուորներ հավաքուին Ամերիկայի Հայերէն»<sup>17</sup>: Շաբաթաթերթը տեղեկացնում է՝ նշված հարցը նաև պատերազմական նախարար Նյուտոն Դ. Բեյքերի ուշադրութայան կենտրոնում էր, ով առաջիկայում, ըստ թերթի, հավանաբար՝ հոկտեմբերի 14-ին, պատրաստվում էր ներկայացնել այն Սենատի նիստին<sup>18</sup>: Նույն օրը նախարարը նաև պարզաբանումներ էր ներկայացրել հայկական առաքելութայան անդամներին՝ ՀՀ ամերիկահայ քաղաքացիներից հավաքագրված զորքեր ուղարկելու հնարավորությունների վերաբերյալ<sup>19</sup>:

Աշխատանքներ առաքելութայան հիմնական հանձնարարականների իրականացման ուղղությամբ 1919 թ. վերջին

1919 թ. հոկտեմբերի երկրորդ կեսից սկսած մինչև նույն տարվա վերջ՝ անկախ քաղաքացիական առաքելութայան ձեռնարկած քայլերի, ինչպես նաև ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների համակրանքի և պատրաստակամութայան արտաքին դրսևորումների, ԱՄՆ-ի կողմից ոչ՝ քաղաքական, ոչ՝ ռազմական օժանդակութայան որևէ պատկեր չէր ձևավորվում: Իրականում Սենատի ենթահանձնաժողովի լսումների արդյունքը ոչ այլ ինչ էր, քան մերժում՝ թե՛ մանդատի և թե՛ ռազմական օգնութայան: Ջ. Շ. Ուելլամսի բանաձևի վերաբերյալ լսումներն ընդամենը նպաստել էին Կոնգրեսի կողմից միայն հումանիտար օգնութայան պարենի հետագա մատակարարումների համար բյուջետային միջոցների հատկացմանը: Դա ակնհայտ դարձավ արդեն հոկտեմբերի 16-ին՝ ԱՄՆ ռազմածովային նախարար Ջ. Դենիելսի ելույթից, ով Նյու Յորքում «Մերձավոր Արևելքի օգնութայան» համագումարում, իր ելույթի ժամանակ գովաբանելով հումանիտար օգնությունը և ընդգծելով վերջինիս կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ փաստացի հաստատեց՝ ԱՄՆ-ը հրաժարվում էր ստանձնել Հայաստանի թե՛ մանդատը և թե՛ ռազմական օժանդակությունը<sup>20</sup>:

Պաշտոնական ԱՄՆ-ի կողմից ոչինչ չէր ձեռնարկվում նաև ՀՀ-ի ճանաչման օգտին: Անհաղորդ էր նաև պետական քարտուղարությունը թեպետև հայ պատվիրակներն արդեն հոկտեմբերի 28-ին պետական քարտուղար Ռ. Լանսինգին ներկայացրել էին պահանջված փաստաթուղթը՝ «Հայաստանի Հանրապետության ճանաչման մասին» ՀՀ առաքելութայան նախագահ Հ. Քաջազնունու կազմած հուշագիրը: Սենատոր Հ. Ք. Լոջի կողմից նոյեմբերի 10-ին հուշագիրը ներկայացվել էր Սենատին և տպվել որպես Սենատի № 151 փաստաթուղթ<sup>21</sup>: Պետական քարտուղարի մեկնաբանմամբ՝ ցանկացած քայլ, որը կարող էր այդ պահին անդրադառնալ նախկին Ռուսական կայսրության անդամահատմանը, ցանկալի չէր ԱՄՆ-ի համար:

Անպատասխան էր մնում ոչ միայն ՀՀ-ի պաշտոնական ճանաչման դիմումը: Հայերին սպառազինելու հարցը նույնպես միանշանակ չէր ընդունվում պետքարտուղարի կողմից: Պաշտոնապես հավաստվում էր՝ այդ քայլը

<sup>17</sup> «Կոչնակ Հայաստանի», 1919, 18 հոկտեմբերի, թիվ 42, էջ 1354:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Г. Г. Махмуриян. 2018, с. 264.

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 525, թ. 4:

<sup>21</sup> Նույն տեղում, գ. 498, թ. 20–58:

կարող էր ուղղակի՝ անհատապես թույլատրվել նախագահ Վիլսոնի կողմից և, որ արդեն նմանօրինակ փաստ կար՝ Լեհաստանի պարագայում: Սակայն, ըստ Լանսինգի, լեհերի օրինակը չէր կարող նախադեպ ծառայել: Լեհերին թույլ էին տվել ԱՄՆ-ում կամավորական զորագունդ հավաքագրել ու հանդերձավորել պատերազմի ընթացքում՝ ելնելով պատերազմական ժամանակների պահանջներից և, ինչը որոշիչ էր, այն արտոնվել էր միայն ԱՄՆ-ի կողմից Լեհաստանի կառավարության ճանաչումից հետո<sup>22</sup>: Բացի այդ, գլխավոր դատախազ Ա. Փալմրի վերապահությունը բխում էր նմանօրինակ զորահավաքի օրինականության հանգամանքից: Այն է՝ լեհերի դեպքում նկատի էր առնվել նաև, որ «Լեհաստան կը կոռէր ընդդեմ այն ազգերուն՝ որոնց դէմ պատերազմ յայտարարած էր Մ. Նահանգները, մինչդեռ Միացյալ Նահանգներ երբեք պատերազմ չհայտարարեց ընդդեմ Թուրքիոյ՝ որուն մեկ մասը կը կազմէ Հայաստան»<sup>23</sup>:

Առաքելության անդամների ոգևորությունը՝ հատկապես ռազմական օգնություն ստանալու առումով, գնալով նվազում էր: Շուտով այն ընդհանրապես վերածելու էր հիասթափության՝ կապված ոչ միայն վարչակազմի, այլև Կոնգրեսի դիրքորոշումների հետ: Սենատի ենթահանձնաժողովում Ուիլյամսի բանաձևի լուսնները, փաստորեն, հետագա որևէ ընթացք չունեցան: Ոչինչ չարվեց բանաձևի քննարկումն իրականացնելու ուղղությամբ, անգամ ենթահանձնաժողովի զեկույցը չհրատարակվեց՝ չներկայացվեց ԱՄՆ-ի Սենատի նիստին մինչև 1920 թ. մայիսի կեսերը:

Ստեղծված իրավիճակում ՀՀ-ի պատվիրակությանը ոչինչ չէր մնում անել, բացի երկկողմանի հարաբերությունների զարգացման ուղղությամբ աշխատանքներ տանելը, ինչը պետք է նպաստեր առաքելության հիմնական հանձնարարականների իրականացմանը՝ տնտեսական ու քաղաքական անմիջական աջակցություն ստանալուն և հայկական պետության անկախության ամրապնդմանն ու ճանաչմանն ԱՄՆ-ի կողմից: Սակայն այս ուղղությամբ արդյունքները նույնպես փայլուն չէին՝ բացառությամբ որոշ դեպքերի: Հ. Քաջազնունին հեռագրում էր Հայաստան՝ ԱՄՆ-ը 35.000 տոննա ՀՀ-ին այլուր էին վաճառել և, որ նոյեմբերի 28-ին առաջին նավը՝ 8.500 տոննա հացամթերքով՝ Նյու Յորքից ճանապարհվել է Բաթում<sup>24</sup>: Ըստ Հ. Քաջազնունու, Հայաստանի համար նախատեսված բեռով երկրորդ շոգենավը՝ Նյու Յորքից մեկնելու էր դեկտեմբերի առաջին օրերին:

Նման հաջողությունները ոգևորությամբ էին ընդունվում ամերիկահայերի շրջանում և նշվում ցնծությամբ: Եվ, ընդհանրապես, հայ գաղութի համար ՀՀ-ի քաղաքացիական առաքելության ներկայությունն արդեն տոն էր: Առաքելության անդամներն ամերիկահայերի համար մարմնացումն էին վերածնված Հայաստանի:

Նկատենք, որ Հ. Քաջազնունու առաքելությունը՝ ԱՄՆ-ից տնտեսական և քաղաքական աջակցություն ստանալու նպատակից բացի, նաև պետք է ապա-

<sup>22</sup> «Հայրենիք», 15 հոկտեմբերի 1919, էջ 3, Թ. Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2014, հ. II, էջ 465:

<sup>23</sup> «Կոչնակ Հայաստանի», 1919, 18 հոկտեմբերի, թիւ 42, էջ 1354:

<sup>24</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 184-185:

Հովեր ամերիկահայ պառակտված համայնքի միավորումը<sup>25</sup>, որի «մարդկային ուժն ու տեխնիկական կարողությունները կենսական նշանակություն ունենին Հայաստանի անկախ պետության համար»<sup>26</sup>: Այդ հանձնարարականի կատարման նպատակով փոխադարձ զիջումների և ըմբռնումների հիման վրա համագործակցություն էր հաստատվել Ազգային պատվիրակության փոխնախագահ Աբր. Տեր-Հակոբյանի հետ: Վերջինս, որպես Պողոս Նուբար փառալուսի լիազոր ներկայացուցիչ, Փարիզից ԱՄՆ էր ժամանել 1919 թ. հոկտեմբերի 12-ին և միանալով ՀՀ քաղաքացիական առաքելությանն՝ ամենուր ուղեկցում էր նրա անդամներին: Ավելի ուշ քաղաքացիական պատվիրակությանը միանում են և մասնակցում կազմակերպված տարբեր միջոցառումներին նաև ՀՀ-ի ռազմական առաքելության անդամները: Ռազմական առաքելությունը, գեներալ Հակոբ Բագրատունու գլխավորությամբ, Փարիզից Նյու Յորք էր ժամանել նույն թվականի նոյեմբերի 22-ին: Առաքելության կազմում որպես Ազգային պատվիրակության Պողոս Նուբարի հատուկ ներկայացուցիչ ընդգրկված էր զորավար Անդրանիկը<sup>27</sup>: Վերջինիս անդամակցությունը գինվորական պատվիրակությանը հանգեցրեց նրան, որ առաքելությունը ձևակերպվեց որպես ԱՄՆ-ում Միացյալ Հայաստանի ռազմական ներկայացուցչություն: Այդ մասին «Հայաստան» շաբաթաթերթը գրում էր. «... զոր. Բագրատունի և զոր. Անդրանիկ կը մեկնին ամբողջական Հայաստանի Պատվիրակության կողմէ իբր միաձույլ առաքելութիւն»<sup>28</sup>: Ռազմական հարցերից զատ՝ զորավար Անդրանիկը Պողոս Նուբարի կողմից լիազորվել էր նաև ստանձնել ամերիկահայությունից շրջանում արդեն որոշակիորեն սկսված Փրկության հանգանակության կազմակերպման գործը, որն էլ զորավարը կատարեց բարձր արդյունավետությամբ:

Ամերիկահայ համայնքի հետ ձևավորվող հարաբերությունների մասին Հ. Քաջազնունին ղեկտեմբերի 18-ին վարչապետ Ալ. Խատիսյանին գրում էր. «Մեր կյանքն անցնում է բոլորի աչքի առաջ՝ հանրահավաքներ, բանկետներ, այցելություններ, ընդունելություններ: Տանը հանգիստ չկա այցելուներից: Մեր բնակարանը դարձել է յուրատեսակ ուխտագնացության վայր ... Շատ հաճախ մարդկանց աչքերին արցունքներ են, ավելի հաճախ ստիպված ենք խլել իրենցից մեր ձեռքերը՝ որպեսզի չհամբուրեն դրանք»<sup>29</sup>:

Նկարագրված նման հուզումնալից տեսարաններ հաճախ էին հանդիպում բազմազան հանրահավաքների ու արարողությունների ժամանակ, որոնք կազմակերպվում էին թե՛ հայ համայնքի և թե՛ ամերիկյան տարբեր կազմակերպությունների կողմից: Հայաստանի Անկախության ամերիկյան կոմիտեի ատենապետ Զ. Զերարդը հոկտեմբերի 23-ին խնջույք էր կազմակերպել ի պատիվ հայ ներկայացուցիչների՝ ՀՀ նախկին վարչապետ Հ. Քաջազնունու, Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Աբր. Տեր-Հակոբյանի և նրանց ուղեկցող Ա. Էնֆիալյանի, Ա. Փիրալյանի, Ս. Մելիքյանի ու Գ. Փաստրմաջ-

<sup>25</sup> «Հայրենիք», 11 հոկտեմբերի 1919, էջ 1, «Կոչնակ Հայաստանի», 1919, 11 հոկտեմբերի, թիվ 41, էջ 1301–1302:

<sup>26</sup> Ռ. Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2014, հ. II, էջ 457:

<sup>27</sup> Մ. Գ. Ճ ի գ մ է ճ ե ա ն. 1930, էջ 417:

<sup>28</sup> «Հայաստան», 25 հոկտեմբերի, 1919, թիւ 9–10, էջ 78:

<sup>29</sup> ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 14–15:

յանի<sup>30</sup>: Խնջույքին ներկա էին մեծ թվով անվանի ամերիկացիներ, որոնց մեջ էին գրող, բանաստեղծ Հենրի Դեխար, Օսմանյան կայսրությունում ԱՄՆ նախկին դեսպաններ Հենրի Մորգենթաուն ու Աբրահամ Էլբրար և այլք:

Ջ. Ջերարդի ողջույնի խոսքին հաջորդած խանդավառ ծափողջոյններից հետո հանդես եկան նաև հայ պատվիրակները: Առաջինը խոսեց Հ. Քաջազնունին, ում խոսքը թարգմանաբար ներկայացնում էր հայ համայնքի ներկայացուցիչ դոկտոր Կոստանդյանը: ՀՀ-ի անունից խորին շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով ամերիկյան ժողովրդին՝ ցույց տված անկեղծ բարեկամության և Հայաստանի Անկախության Ամերիկյան Կոմիտեին՝ ի նպաստ Հայ Դատի կատարած քայլերի համար՝ Հ. Քաջազնունին ասաց. «Հայը գիտէ գնահատել եւ որչափ Հայ ազգը կապրի անիկա պիտի երախտագիտութեամբ պիտի յիշէ Ամերիկայի ըրածը Հայաստանի համար, մասնաւորաբար այս մեծ պատերազմի միջոցին»<sup>31</sup>: Նա նշեց. «Հայը զէն ի ձեռին հաստատապէս որոշած է վերաշինել իր աւերած հայրենիքը, թէպէտ ուժապառ եւ ընկճած, բայց երբեք յուսահատիլ չգիտեր: Այսօր Կովկասի մեջ ունինք Հայ Հանրապետութիւն մը որ գոյութեան եկաւ տասնեւվեցամիս առաջ անհուն դժուարութեանց մէջէն: Այդ փոքր Հանրապետութիւնը լոկ մասն է միայն Ամբողջական Հայաստանի, որ հայ ժողովուրդը դարերէ ի վեր մշակած է եւ անոր սահմաններու մեջ բնակած է հակառակ թշնամիին հաստատ ծրագրին, որով այն միշտ ջանացած է խել Հայուն հայրենիքը իր ձեռքէն: Այս փոքր Հանրապետութիւնը պետք է ճանաչվուի՝ որպէս զի կարելի ըլլայ նիւթական օգնութիւն դրկել Հայաստան՝ Հայկական բանակ մը կազմելու եւ ժողովուրդը կերակրելու համար: Այս Հանրապետութեան ճանաչուիլը կարելոր է աս պատճառաւ ալ որ երբ հայկական եւ թրքական խնդիրը վճռուի, կազմակերպեալ Հայկական բանակ մը կարող ըլլայ թրքական Հայաստանը գրաւելու մեջ զօրաւոր դեր մը կատարել: Չեզմէ մեր խնդրածը, ուրեմն այս է միայն որ դուք մեզի տաք բարոյական ու նիւթական օգնութիւն կարճ ժամանակի մը համար, այնպես որ մեր նորածին Հանրապետութիւնը ժամանակ եւ պատեհութիւն ունենայ իր իշխանութիւնը հաստատելու: Մենք բացարձակ հաւատք ունինք թէ Դաշնակից պետութիւնները, եւ մանաւանդ այս մեծ Հանրապետութիւնը, պիտի չզլանան մեզի այս օգնութիւնը»<sup>32</sup>:

Ի. Ջ. Ջերարդի խնդրանքին՝ հայտնել ներկաներին, թե ՀՀ-ի պատվիրակներն ինչ խնդրաքով են դիմում ամերիկյան կառավարությանը, Հ. Քաջազնունին հետևյալ հայտարարությունն արեց. «Հայ Հանրապետութեան ներկայացուցիչները եկած են խնդրելու նախ որ Սեւ ծովում եզերքը գտնուող Պաթում քաղաքէն մինչեւ Հայաստանի սահմանները երկարող երկաթուղիի գիծը, եթե կարելիէ, գրաւուի երկու կամ երեք հազար Ամերիկոան ծովային զինուորներու կողմէն: Երկրորդ կը խնդրենք որ Ամերիկա դրկէ Հայաստան ուտեստեղէն, զէնք ու ռազմամթերք որպեսզի կարելի ըլլայ կազմել 30,000 զինուորներէ բաղկացած բանակ մը, եւ երրորդ կխնդրենք որ Հայաստանի ժողովուրդը, կերակրելու համար պարէն տրուի մինչեւ առաջիկայ հունձքի

<sup>30</sup> «Կոչնակ Հայաստանի», 1919, 1 նոյեմբերի, թիվ 44, էջ 1412:

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Նույն տեղում:

եղանակը: Տուէք Հայաստանին զէնք, եւ կրնաք վստահ ըլլալ թէ Թուրքը, Քիւրտը եւ Թաթարը պիտի այլ եւս չհամարձակին Հայ ժողովուրդին հանգիստը վրդովել»<sup>33</sup>:

Խնջուլքին խոսեց նաև պրոֆ. Աբր. Տեր-Հակոբյանը, ով սահուն անգլերենով Հայ ժողովրդի անունից երախտագիտութեան զգացումներ հայտնելով Ամերիկյան Կոնֆիտեին և նրա պատվարժան ատենապետ Զ. Ջերարդին, ասաց՝ հայերը երազում էին ունենալ անկախ և միացյալ Հայաստան: Նա նշեց՝ ասելով՝ անկախ՝ նկատի ունենալ Թուրքիայի հետ քաղաքականապես որևէ գործ չունենալը: Իսկ միացյալ Հայաստանը նշանակում էր, որ «Ռուսահայաստանը եւ Տաճկահայաստանը որ այսօր քան երկար ատեն անիրաւաբար իրարմէ բաժանեալ մնացած են, պետք է միանան մեկ ազգային դրօշակի տակ»<sup>34</sup>: Տեր-Հակոբյանն ընդգծեց, որ հայերը հավատում են՝ ԱՄՆ-ը նախախնամութեան կողմից է կոչված ի սեր արդարութեան ու հանուն մարդկութեան մեծ դեր կատարել Մերձավոր Արևելքում և հանձն առնել նորանկախ Հայաստանի պաշտպանությունն ու տալ նրան անհրաժեշտ բարոյական և նյութական աջակցությունը:

1919 թ. վերջին հասարակական-քաղաքական բազմամարդ միջոցառումներից էին. Նյու Յորքի ամենամեծ՝ Սուրբ Հովհաննես Ավետարանչի տաճարում նոյեմբերի 23-ին կայացած՝ քաղաքացիական և ռազմական միացյալ առաքելութեանը պատվելու շքեղ արարողությունը<sup>35</sup>, նոյեմբերի 30-ին Նյու Ջերսի նահանգի Ուեստ Հորտքեն քաղաքում կազմակերպած մեքենաների շքերթը, Հայաստանի ազատության համար գոհված մարտիկների հիշատակին անցկացված հոգեհանգստյան արարողությունը, բազմամարդ ցույցն ու ճաշկերույթը<sup>36</sup>, դեկտեմբերի 7-ին Նյու Յորքի «Հիպոդրոմ» թատրոնում կայացած բազմահազարանոց հավաքը<sup>37</sup>, դեկտեմբերի 13–17-ը նույն ցնծութամբ Բոստոնում անցկացված բազմազան ու բազմամարդ (8000 մարդ) արարողությունները, ընդունելություններն ու հանդիպումները<sup>38</sup>: Հ. Քաջանունին իր վերոհիշյալ նամակում նշում էր, որ առաքելության անդամները հրավիրում էին շատ ու շատ քաղաքների համայնքների, կազմակերպությունների, անհատների կողմից և, որ Ֆիզիկապես հնարավոր չէր այդ բոլոր հրավերներն ընդունել:

Նշված բոլոր միջոցառումներին, հայկական՝ թե՛ քաղաքացիական, և թե՛ ռազմական առաքելությունների անդամներից բացի, ճառերով հանդես էին գալիս ինչպես ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ, այնպես էլ անվանի ամերիկյան հասարակական-քաղաքական բազմաթիվ գործիչներ: Ծածանվող հայկական և ամերիկյան դրոշների ներքո հնչեցվում էին «Կեցցե՛ Հայաստանի Հանրապետություն», «Կեցցե՛ անկախ Հայաստան» կարգախոսերը, կոչեր էին արվում աջակցել միացյալ Հայաստանի ստեղծմանը: Գրեթե բոլոր խոշոր հավաքներն ընդունում էին բանաձևեր, որոնք հղվում էին

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 1413:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 1412:

<sup>35</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 6–7:

<sup>36</sup> Նույն տեղում, թ. 7–8:

<sup>37</sup> Նույն տեղում, թ. 10:

<sup>38</sup> Նույն տեղում, թ. 10–11:

ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին, Սենատի ղեկավար Հ. Ք. Լոջին, Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովին՝ պահանջելով ճանաչել ՀՀ-ն, հաստատել և ընթացք տալ սենատոր Ջ. Ուիլյամսի առաջարկած հայանպաստ բանաձևին: Հ. Քաջազնունին տեղեկացնում էր Ալ. Խատիսյանին, որ բոլոր միջոցառումները, հանդիպումներն ու հավաքները և՛ լուսանկարվում էին, և՛ նկարահանվում, մանրամասն լուսաբանվում մամուլում՝ ինչպես ամերիկահայ ու հայաստանյան, այնպես և՛ ամերիկյան<sup>39</sup>:

Այսինքն, ինչպես նշում էր ինքը՝ Հ. Քաջազնունին, քարոզչության գործն առաքելությունը կատարում էր բարձր մակարդակով<sup>40</sup>: Առաքելությունն ինքնին անգամ առանց ավելորդ ջանքերի, նպաստում էր ամերիկահայության միավորմանը: Միասնականության առումով ամերիկահայ համայնքում տվյալ ժամանակ տիրող իրավիճակն աննախադեպ էր: Այն փաստը, որ թե՛ քաղաքացիական և թե՛ ռազմական առաքելությունների շրջանակներում ՀՀ-ի կառավարության պատվիրակների հետ մեկտեղ գործում էին Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչները նույնպես մեծ ոգևորություն էր առաջացրել ամերիկահայ համայնքում որպես համախմբվածության ու միասնության ցուցիչ:

Այսպիսով, նախկին վարչապետ Հ. Քաջազնունին գործող նախարարապետին ղեկտեմբերի 18-ի հաշվետվության մեջ գրում էր՝ պատվիրակությանը հաջողվել է համակրանք հարուցել ոչ միայն հայկական գաղութում, այլև ամերիկյան հասարակության մեջ և, որն չափազանց կարևոր էր, քաղաքական ու կառավարական շրջաններում: Այդուհանդերձ, նա նշում էր. «Արդյունքներ (իրական իմաստով) առայժմ չկան: Հայ գաղութը դեռ ոչնչով չի իրականացրել իր հայրենասիրական վերելքը: Մյուս կողմից, Միացյալ Նահանգների կառավարությունը դեռ դանդաղում է պատասխանել մեր ներկայացրած պահանջներին: Եզրակացություններ չեմ անում»<sup>41</sup>: Փոքր-ինչ հուսահատված Հ. Քաջազնունին շարունակում էր. «Ես դեռ սպասում եմ (ավա՛ղ, շատ վաղուց) որոշ հարցերի լուծմանը: Ես դեռ չեմ կորցնում հույսս՝ վերջապես Ձեզ ինչ-որ կուռ, որոշակի, ընդ որում՝ ուրախ բան հայտնելու համար»<sup>42</sup>:

Ցավոք, Քաջազնունու սպասումները 1919 թ. վերջին իրականություն չդարձան:

ՀՀ քաղաքացիական առաքելության գործունեությունը 1920 թ. սկզբին

Քաջազնունու պատվիրակության համբերատար աշխատանքը 1920 թ. տարվա առաջին ամիսներին սպասվելիք արդյունքների չհանգեցրեց: Ի պատասխան 1920 թ. փետրվարի 11-ին՝ փոխառությունների վերաբերյալ կառավարությունից ստացված փաստաթղթերի փաթեթի, Հ. Քաջազնունին փետրվարի 23-ին Ալ. Խատիսյանին ուղարկած ծավալուն նամակում ներկայացնում էր իր մտավախությունները: Ըստ նախկին վարչապետի՝ այն, որ

<sup>39</sup> Նույն տեղում, թ. 8–9:

<sup>40</sup> Նույն տեղում, թ. 5:

<sup>41</sup> Նույն տեղում, թ. 15:

<sup>42</sup> Նույն տեղում, թ. 29:



փոխառությունների թողարկման գործը ծրագրվում էր իրականացնել երկու մասով՝ նախ բաժնետոմսերի տպումը եվրոպայում Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակության և հետո դրանց իրացումն ԱՄՆ-ում իր միջոցով, արդեն լուրջ տեխնիկական բնույթի անհարմարություններ էր առաջացնում և զգալի կոֆարացներ փոխառությունների գործի իրականացումը<sup>43</sup>։ Բացի այդ, ըստ Հ. Քաջազնունու՝ շատ անգամ ավելի դժվար խնդիր կար՝ կապիտալի հետ կապված. այն է՝ գտնել բանկիրների, որոնք համաձայնության կգալին առևտրական խոշոր տների հետ և կստանձնեին հայկական վարկի բաժնետոմսերի մարումը։ Նա նշում էր, որ տվյալ պահին՝ չնայած իր խմբի կողմից կատարվող աշխատանքներին, դեռևս որևէ տարբերակ չկար։

Հ. Քաջազնունին ընդգծում էր երկու հանգամանք, որոնք հիմնովին տապալում էին իրենց ներդրած ջանքերը։ Առաջինը՝ ԱՄՆ-ում ձևավորված այն համոզմունքն էր, որ ՀՀ-ն չի կարող գոյատևել առանց մանդատար երկրի, սակայն որևէ մեկը չէր ցանկանում ստանձնել այդ հոգատարությունը։ Ըստ Հ. Քաջազնունու՝ այն, որ ԱՄՆ-ը դեռևս չէր ճանաչել հայկական պետության ինքնուրույնությունն, անմիջականորեն բխում էր հայերի անկենսունակ լինելու մասին նրանց համոզմունքից։ Երկրորդ՝ Հայաստանի մասին հիմնովին հաստատվել է արմատախիլ արվածի և վերջնականապես աղքատացածի, ոչինչ չունեցողի և որևէ ապրանքաշրջանառության անկարողի համբավ<sup>44</sup>։ Հ. Քաջազնունին նշում էր՝ ամերիկացիների համար, փաստորեն, ակնհայտ էր, որ հայերն օգնության կարիք ունեն։ Սակայն այդ օգնությունն անհատույց և անհասխանաբար պետք է լիներ։ Այս կետը, ըստ Քաջազնունու, հատկապես քարոզում է Մերձավոր Արևելքի կոմիտեն, որը, իհարկե, խղճահարություն էր արթնացնում հասարակության մոտ։ Այնուամենայնիվ, հասկանալի է, որ դա կարող էր բարի մարդկանց բարեգործության մղել, բայց «կոմերսանտին կամ բանկիրին» բնավ չէր խրախուսի նման անհուսալի պարտատիրոջը վարկ տալ։

Ինչևէ, քաղաքացիական առաքելության անդամները դեռ որոշ հույսեր ունեին լուծում գտնելու պարտատոմսերի խնդրի վերաբերյալ։ Հ. Քաջազնունին գրում էր. «Մենք փորձում ենք վստահություն ներշնչել թե՛ ինքներս մեզ, թե՛ մեր ապագային, փորձում ենք ներշնչել, որ թեև հիմա աղքատ ենք, բայց ունենք բոլոր տվյալները, որպեսզի արագ ոտքի կանգնենք և արդարացինք մեզ ցուցաբերած վստահությունը»<sup>45</sup>։

Սպասելով պարտապանի, որի միջոցով կարելի էր իրականացնել ամբողջ փոխառությունը (կամ դրա մի զգալի մասը)՝ Հայաստանին վարկ տալու համար՝ ՀՀ առաքելությունը լրջորեն մտածում էր կազմակերպել մասնակի թողարկում (առաջին սերիան՝ 5 միլիոնի չափով)՝ ամերիկահայերի և հենց ամերիկացիների ոչ խոշոր գումարների միջոցով։ Հատկանշական է, որ նման պարագայում բաժնետոմսերի գնորդների համար իրենց քայլն ոչ այնքան ֆինանսական գործարք կլիներ, որքան հայրենասիրական ակցիայի իմաստ կկրեր։

<sup>43</sup> Նույն տեղում, թ. 35:

<sup>44</sup> Նույն տեղում, թ. 36–37:

<sup>45</sup> Նույն տեղում:

Վերոնշյալ հարցի շուրջ քննարկումներ էին տեղի ունեցել Հ. Յ. Դաշնակ-ցուծության Բոստոնի կենտրոնական կոմիտեում: Այստեղ լավատեսները պնդում էին, որ նշված տարբերակով հնարավոր էր փոխհատուցել ամբողջ հինգ միլիոն գումարը: Թերահավատները, որոնց թվում էր նաև Հ. Քաջագնունին, չէին հավատում նման հաջողությանը, բայց մտածում էին, որ մոտ մեկ միլիոն կարելի է հավաքել: Ամեն դեպքում ջանքեր չէին խնայվում փոխառությունների վերաբերյալ ծրագրերն իրականացնելու համար: Դրա հետ մեկտեղ նրա պատվիրակությունն ակտիվ գործունեություն էր վարում նաև ՀՅ Դաշնակցության կողմից Հայոց բանակին օգնելու նպատակով 1920 թ. հունվարի վերջից նախաձեռնած հանգանակության իրականացման գործում<sup>46</sup>:

Այդ ընթացքում 1920 թ. փետրվարին, Հ. Քաջագնունին շարունակում էր բանակցել «Equipment Company»-ի հետ: Վերջինիս հետ մինչ այդ ինչպես արդեն նա տեղեկացրել էր վարչապետին, պայմանագիր էր կնքվել: Սույն կազմակերպության ներկայացուցիչների հետ քննարկումների նպատակով առաքելության իրավախորհրդատու Քեբաբյանը երկու անգամ Նյու Յորքից մեկնել էր Վաշինգտոն, որտեղ ընկերությունն ակտիվ գործունեություն էր ծավալել: Գործարքի հաջողության դեպքում ՀՀ-ն կարճ ժամանակում կմատակարարվեր մեծ քանակությամբ ապրանքով: Այս հանգամանքը նպատակ էր մեկ այլ հաջող գործարքի Հայաստանի համար այլուր տեղափոխող «U. S. Shipping Board» ընկերության հետ: Վերջինիս վարչությունը հայտարարել էր՝ եթե ԱՄՆ-ի ռազմական նախարարությունը համաձայնի «Equipment Company»-ի միջոցով վարկով ապրանքներ տրամադրել ՀՀ-ին, ապա նա, իր կողմից, կհամաձայնի այդ ապրանքները Բաթում հասցնել նույնպես վարկով: Այս վերջին գործարքը հիանալի հնարավորություն կլիներ և, ինչպես գրում էր Քաջագնունին, «չատ կթեթևացներ մեր վիճակը, քանի որ ծովային տրանսպորտի համար մեզնից կարող է պահանջվել 1-1, 5 միլիոն դոլար կանխիկ»<sup>47</sup>:

1920 թ. փետրվարի վերջին Հ. Քաջագնունին տեղեկացնում էր նաև Ա. Խատիսյանին, ով կապ է պահպանում «Ռոքֆելերի ֆոնդ»-ի հետ ու, որ Հայաստանի կառավարության անունից շնորհակալություն է հայտնել վերջինիս տնօրենին առ այն, որ հիմնադրամն իր վրա էր վերցրել Հայաստանի համար 35 000 տոննա այլուրի ծովային փոխադրման ծախսերը: Նա հույս էր հայտնում, թե հնարավոր է, որ ապագայում էլ այդ հիմնադրամն օգնի հալածությանը:

### Եզրակացություն

Այսպիսով, Հ. Քաջագնունու գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակությունը ջանք չէր խնայում և անում էր հնարավոր ամեն բան իր առաքելությունը հաջողությամբ պսակելու համար: Այդուհանդերձ, 1919 թ. վերջին – 1920 թ. սկզբին արդյունքները հուսադրող չէին, իսկ ակնկալիքներն ԱՄՆ վարչակազմի քաղաքականությունից գնալով նվազում էին:

<sup>46</sup> Գ. Տ օ ն ա պ ե տ ե ա ն. 1995, Բ հատոր, էջ 511:

<sup>47</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 38:

*Ձկար առաքելության նախկին ոգևորությունը հայոց հայցադիմումների իրականացման հետ կապված, քանի որ անգամ հայամետ ամերիկյան շրջաններում հստակ քաղաքական դիրքորոշում չկայացվեց հայկական պահանջների հանդեպ: Այդ ամենն առաջիկայում իրադարձությունները տանելու էին դեպի անցանկալի զարգացումներ և, ի վերջո, ԱՄՆ գործուղված ՀՀ-ի քաղաքացիական առաքելության երկար ամիսների գործունեության գրեթե անարդյունք ավարտին:*

Արմենուհի Ղամբարյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ի հասարակական առարկաների ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունը՝ հայ-ամերիկյան, հայ-բրիտանական հարաբերությունները XX դ. սկզբին: Հեղինակ է 3 մենագրության և շուրջ 40 հոդվածի:  
vanarmin@mail. ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Կոչնակ Հայաստանի» (Նյու Յորք), 1919, 11 հոկտեմբերի, թիվ 41; 18 հոկտեմբերի, թիվ 42; 1 նոյեմբերի, թիվ 44:

«Հայաստան» (Փարիզ), 1919, 11 հոկտեմբերի, թիւ 8, 25 հոկտեմբերի, թիւ 9–10:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 1, 43; ֆ. 200, ց.1, գ. 20, 290, 431, 498, 525; ֆ. 200, ց. 2, գ. 59:

Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., 2014, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 624 էջ:

Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., 2010, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 616 էջ:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), 1972, խմբ. Զ. Կիրակոսյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 810 էջ:

«Հայրենիք» (Պոսթոն), 11 հոկտեմբերի 1919; 12 հոկտեմբերի 1919; 15 հոկտեմբերի 1919:

Հովհաննիսյան Ռ. Գ. 2014, հ. II, Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն, 1919–1920, Երևան, 708 էջ:

Ղամբարյան Ա. 2019, № 3, Հ. Քաջագնունու հաղորդումը ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (հոկտեմբեր, 1919 թ.). – ՊԲՀ, 254–261 էջ:

Ղամբարյան Ա. 2020, Գ. Փաստորմաճյանի հաղորդումը ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (հոկտեմբեր, 1919թ.). – «Регион и мир» (Ереван), том XI, № 6, с. 89–93.

Ճիզմէճեան Մ. Գ. 1930, Պատմութիին ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890–1925), Ֆրէզնո, «Նոր օր», 572 էջ:

«Յառաջ» (Երևան), 10. I. 1920:

Վրացյան Ս. 1998, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 704 էջ:

Տօնապետեան Գ. 1995, Բ հատոր, ՊՀ. 3. Ղաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մեջ (1910–1923), Պոսթոն, Հայրենիք հաստատութիւն, 511 էջ:

Ованисян Р. Г. 2007. Международные отношения Республики Армения 1918–1920. Ереван, «Тигран Мец», 889 с.

Махмурян Г. Г. 2018. Армения в политике США 1917–1923 гг. Ереван, изд. Института истории НАН РА, 608 с.

ГРАЖДАНСКАЯ МИССИЯ ПЕРВОЙ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В США  
(Конец 1919 г. – начало 1920 г.)

АРМЕНИУИ ГАМБАРЯН

Резюме

*Ключевые слова:* Республика Армения, США, признание, резолюция, гражданская миссия, подкомитет, содействие, продовольствие, заем, община, единство, митинг.

В начале 1919 г. продовольственный вопрос продолжал оставаться одним из серьезнейших в ряду многочисленных проблем, стоявших перед правительством молодой Республики Армения.

С целью борьбы с голодом, все еще царившем в стране, правительством Армении в конце января 1919 г. было принято решение, утвержденное парламентом в качестве специального законопроекта о формировании гражданской миссии, которая в конце мая того же года была командирована в Европу, а затем в США. Под председательством бывшего премьер-министра Республики Армения Оганеса Каджазнуни в группу делегатов входили капитан Сурен Меликян в качестве секретаря председателя, экономические советники – бывший министр финансов Арташес Энфиаджян и агроном Артем Пиралян.

Понимая, что на иски армян в Париже в 1919 г. не было дано однозначного ответа, в конце сентября миссия отправилась в США, где ее главной целью было заручиться экономической поддержкой Америки. Несмотря на выступления в подкомитете Сената США, многочисленные встречи с различными высокопоставленными официальными лицами в конце 1919 г. – в начале 1920 г., усилия гражданской миссии Республики Армения не увенчались успехом, за исключением решения некоторых продовольственных вопросов.

*Арменуи Гамбарян – к. и. н., старший научный сотрудник отдела общей истории Института истории НАН РА, доцент кафедры общественных дисциплин ЕрГМУ. Научные интересы: армяно-американские, армяно-британские отношения в начале XX в. Автор 3 монографий и около 40 статей. vapartin@mail.ru*

CIVIL MISSION OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA  
IN THE USA  
(late 1919 – early 1920)

ARMENUHI GHAMBARYAN

S u m m a r y

*Key words: The Republic of Armenia, the USA, recognition, resolution, civil mission, subcommittee, assistance, food, loan, community, unity, demonstration.*

At the beginning of 1919, the food issue continued to be one of the most serious among the numerous problems the Government of the young Republic of Armenia faced.

In order to combat the famine still reigning in the country, the Government of Armenia at the end of January 1919 adopted a decision approved by the Parliament as a special bill on the formation of a civil mission, which at the end of May of the same year was sent to Europe, and then to the United States. Under the chairmanship of former Prime Minister Hovhannes Kajaznuni, the group of delegates included Captain Suren Melikyan as the Chairman's secretary, economic advisers – former Finance Minister Artashes Enfiayyan and agronomist Artem Piralyan.

At the end of September, realizing that the claims of the Armenians in Paris in 1919 were not given an unambiguous answer, the mission went to the United States, where its main goal was to enlist the economic support of the United States. Despite the statements before the US Senate Subcommittee, numerous meetings with various high-ranking US officials in late 1919 – early 1920 the efforts of the civil mission of the Republic of Armenia, with the exception of some food issues, were not crowned with success.

*Armenuhi Ghambaryan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of General History of the NAS RA Institute of History, Associate Professor of the Department of Social Disciplines of the YSMU. Scientific interests: Armenian-American, Armenian-British relations at the beginning of the 20th century. Author of 3 monographs and about 40 articles. vanarmin@mail.ru*

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ  
ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
(XIX դար – XX դարասկիզբ)\*

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-149>

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան, օդա, հազարաչեն, գետնափոր տուն, հատակագիծ:

**Նախաբան**

Բնակարանը կենսապահովման մշակույթի էթնիկ առանձնահատկությունները կրող ակնառու համալիրներից է: Անկախ պատմաաշխարհագրական, բնակչությունից և տնտեսավարման գերակայությունը պայմանավորված գործոններից՝ հայ բնակչությանը շրջապատող ռազմատենչ այլ էթնիկ թշնամական տարրերից սպառնացող վտանգն ամենուրեք հայ մարդուն հարկադրել է հիմնել կյանքի և գույքի անվտանգության համար հնարավորինս համախմբված, ներփակ, բազմաբաժին բնակարանային համալիր: Ժամանակին և հուսալի ինքնապաշտպանության կազմակերպմանը մշտապես պատրաստ լինելու մղումով էր պայմանավորված ոչ միայն գերդաստանական տներով կենցաղավարելու, այլև ազգատոհմերով համատեղ բնակավայր կամ թաղ կազմած ապրելու դարավոր սովորույթը: Ավանդական այդ կենսակերպը պայմանավորված էր նաև բնակչության ու աշխարհագրական բարդ պայմաններով, տնտեսության վարման կոլեկտիվ ջանքերով, ազգատոհմային սերտ կապերից բխող փոխադարձ օգնության հանգամանքներով: Բացառություն էին Սասունը և Պոնտական Հայաստանը, որոնց բնորոշ էր տների ցրվածությունը՝ պայմանավորված լեռնային անմատչելի կտրտված տեղանքով, տնամերձ հողերի վրա տուն կառուցելու, անտառահատական հողագործությամբ զբաղվելու, պարարտացման գործի դյուրացումն ապահովելու, շինանյութի, բերքի ու անասնակերի փոխադրման բացառիկ դժվարություններից զերծ մնալու, երկրի բնական պաշտպանվածությունից օգտվելու հանգամանքով և ինքնապաշտպանությանը մշտապես վարժված լինելու բնակչության բնագրով: Լեռնային կտրտված այս տեղանքներում բերքի, անասնակերի և կենցաղային այլ փոխադրումների գրեթե անհնարինության պատճառով գյուղական բնակավայրերն ունենում էին նաև ռազմական հենակետ-ամրոցների վերածված տնտեսական ու արտադրական նշանակության մզրաներ՝ գոմ, ախոռ, փարախ, կալտուն, կալ, մարագ և այլն:

\* Ներկայացվել է 09. VI. 2021 թ., գրախոսվել է 21. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 28. VII. 2021 թ.:

Ուստի սասունցիների և պոնտաճայերի լեռնային գյուղերի ցրված լինելը ինքնապաշտպանությունը չէր խանգարում:

XIX դար – XX դարասկզբին Հայաստանում գյուղական բնակարանի գերակշռող տիպը գլխատունն էր<sup>1</sup>, որը բնորոշ էր գրեթե բոլոր պատմաազգագրական շրջաններին: Այն կրել է տարբեր անվանումներ՝ գլխատուն (Տավուշ, Լոռի), հացատուն (Արարատյան հովիտ, Աշտարակ), հացատուն (Սյունիք), դարադամ (Արցախ), հացատուն, քուրսա տուն (Նոր Բայազետ), ջոջ տուն (Մարտունու շրջան, Վան), սողոմաքաչ տուն, տան տուն (Վասպուրական), տուն, հացարան, թնդրատուն, թոնդրատուն (Կարին, Ախալքալաք, Ախալցխա, Շիրակ), թոնրտուն (Ակն, Խարբերդ, Մուշ, Տիգրանակերտ), թոյնի տուն, կենպատուն (Արաբկիր), թոնրուք (Խարբերդ), թորվանտուն (Մոկա), կրակտուն (Դերսիս), մեծ տուն, կրակտուն (Աղձնիք), խորընդուն (Սասուն), հազարաչեն տուն (Ապարան, Մուշ, Հարք, Ալաշկերտ), կտրավոր տուն, օրթօջափ տուն (Իջևան) և այլն: Այս բոլոր անվանումներն ունեն իմաստային ընդհանրություն՝ տուն, բնակարան, օթևան, ընտանիք, ազգատոհմ:

Հայկական ավանդական բնակարանի առանձնահատկությունների շուրջ

Առանձնահատկությունները ճիշտ դիտարկելու համար շատ կարևոր է հաշվի առնել բնակարանն իր պատմական զարգացման մեջ: Հայկական բնակարանի վերաբերյալ ամենանախնական գրավոր տեղեկությունը պատկանում է հույն պատմիչ և գորավար Քսենոփոնին (401 թ. Ք. ա.): Պարսկաստանից դեպի Սև ծով Հայաստանի վրայով նահանջի ճանապարհին ընկած հայկական գյուղական տների մասին նա գրում է. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքն ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր (հողի մեջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը»<sup>2</sup>: Հետագայի շատ ճանապարհորդներ, նկարագրելով Հայաստանի տները, հիշատակել են Քսենոփոնին<sup>3</sup>: Այդուհանդերձ, ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջբերել նրանցից մեկի՝ անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերի նկարագրությունը, որը XIX դ. սկզբներին անցել է Հայաստանով. «Մենք հասանք Եքրեք [Ekrek] մի հայ գյուղ (Ազարակ գյուղն էր Տիկոր գետի եզերքին՝ Թալինի շրջանում, որն 1931 թ. ուներ 411 բնակիչ – Ռ. Ն.), որի տները նման են Հայաստանում Քսենոփոնի նկարագրա-

<sup>1</sup> Մ. Տեր-Մովսիսյան. 1894, Խ. Աբովյան. 1961, էջ 59–96, Վ. Բդոյան. 1974, էջ 73–84, Ստ. Լիսիցյան. 1969, էջ 96–114, Խ. Սամուելյան. 1941, հ. II, էջ 199–216, Ս. Վարդանյան. 1959, էջ 43–70, Ռ. Նահապետյան. 2021, № 1, էջ 25–40, Ռ. Նահապետյան. 2020, թիվ 2, էջ 96–108, Ռ. Նահապետյան. 2020, գիրք 3, էջ 122–137, С. Лисициан. 1925, с. 97–108; С. Лисициан. 1927, с. 119–133; С. Лисициан. 1955, с. 182–264; Ю. И. Мкртумян. 1983, с. 150–188; А. Марутян. 1989, с. 63–142; А. Марутян. 1990, с. 19–33; А. Марутян. 2012, с. 205–232 և այլն:

<sup>2</sup> Քսենոփոն. 1970, էջ 97:

<sup>3</sup> Ռ. Նահապետյան. 2020, գիրք 3, էջ 138–161:

ծին, և կարելի է նկատել, թե նույնանման տներ ունեն Հայաստանի ամբողջ տարածքում, ներառյալ Վրաստանի մի մասը, որ նշանավոր է իր ցրտի խտությամբ: Բնակիչները կատարում են բավականին ընդարձակ հողային աշխատանք՝ գետնի բնույթին համաձայն փորում են իրենց տան մեկ, երկու կամ երեք կողքերը, և հետո մնացյալը կառուցում են կիկլոպյան պարիսպների նման վիթխարի քարերով: Սրանց վրա դնում են շատ հաստ գերաններ, և ապա ամբողջով ծածկում են հողի հաստ շերտով, այնքան հաստատուն կերպով, որ երբ ման ենք գալիս գյուղում, դժվար է ասել, թե դուք քայլում եք մի տան կտուրի, թե մի պարզ գետնի վրա: Նրանք միայն մի անցք են թողնում ծածկի կատարին (երդիկ – Ռ. Ն.), որ լուսավորում է ընտանիքի բնակած սենյակը: Այս սենյակը բաժանված է հաստ տախտակներով ու ճաղերով ներքնամասի մեծ մասից, որ ծառայում է որպես ախոռ կենդանիների համար: Մի կարգ պարագաներում բնակիչներն ու կենդանիները հասարակաց մի մուտք ունեն, ինչպես բնակության համար ընդհանուր մի վայր: Բնակիչներն ու կենդանիները իրար տաք են պահում, առաջինները կրակ վառելով (թոնրի կրակով – Ռ. Ն.) իրենց հարկաբաժնում և վերջինները իրենց շնչառության տաքությամբ»<sup>4</sup>:

1930-ական թվականների կեսերին Գյումրի (Լենինական) քաղաքի մսի կոմբինատի կառուցման վայրում հայտնաբերվեցին հնավանդ բնակատեղիի մնացորդներ, որոնք, ըստ հնագիտական իրեղեն տվյալների, թվագրվում են բրոնզե դարով. այդ բնակարանները եղել են կիսագետնափոր, անմշակ քարերից շարված պատերով, փայտե սյուների քարե պարզունակ պատվանդաններով, ծածկը՝ փայտե գերաններով, ինչպես հայ գյուղական տան հետագա կառույցները<sup>5</sup>:

Եթե վերը բերված նկարագրությունները դիտենք որպես գլխատան նախնական օրինակներ, ապա մինչև XIX դարավերջը կարելի է մատնանշել գլխատան հետագա զարգացման երկու ուղղություն: Առաջինը տան զարգացումն է ուղղահայաց գծով. գլխատունն աստիճանաբար դուրս է եկել գետնի երես, և XIX դարավերջին ու XX դարասկզբին գերիշխող են եղել կիսագետնափոր և վերգետնյա տները: Գետնի մակերևույթի նկատմամբ ունեցած հարաբերությամբ գլխատունը կարելի է բաժանել երեք տեսակի՝ գետնափոր, կիսագետնափոր ու վերգետնյա, որոնց առկայությունը պայմանավորված էր առաջին հերթին բնակլիմայական և աշխարհագրական գործոններով: Գերիշխող տեսակը կիսագետնափոր տներն էին. անխուսափելի մի երևույթ, քանզի հայկական բնակավայրերը հիմնականում տեղադրված էին լեռնային տեղանքներում՝ պայմանավորված ինքնապաշտպանության կազմակերպման ու մշակելի հողատարածությունների խնայողության և այլ դրդապատճառներով: Ուստի նման բնակարանային համալիր կառուցելու համար անհրաժեշտ էր փորել ու հավասարեցնել լանջային տեղանքը: Վերգետնյա տները կառուցվում էին հիմնականում հարթ ուղիք ունեցող շրջաններում:

<sup>4</sup> Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն. 1934, հ. 2, էջ 253–254:

<sup>5</sup> Խ. Ս ա մ ո լ ե լ յ ա ն. 1941, հ. II, էջ 191–192:



Գետնափոր տների շարքին, որ կիրառական էին ավելի երկար ժամանակ, պայմանականորեն կարելի է դասել Տավուշի տարածաշրջանի XIX դարի բնակարանը, որի առջևի մասը բաց էր: Բանասացների վկայությամբ՝ այստեղ տները թաղված էին հողի մեջ՝ հաճախ քարե պատեր անգամ չունենալով: Հողի շերտը պահվել է ամուր և հաստ տախտակների հերմետիկ միակցմամբ, ու, փաստորեն, բնակարանի ամբողջ շինանյութը փայտն էր: Այս հանգամանքը կարելի է բացատրել շինաքարի բացակայությամբ կամ էլ բնակավայրից հեռու ընկած լինելով, տեղափոխման դժվարություններով: Հակառակ դրան՝ տարածաշրջանը հարուստ էր անտառափայտով: Բացի այդ, գետնափոր լինելու անհարմարությունն այնքան էլ սուր չի զգացվել համեմատաբար սակավ տեղումների, տաք ձմռան, հով ամռան պատճառով<sup>6</sup>:

Հայկական ավանդական ժողովրդական բնակարանի զարգացման երկրորդ ուղղությունը հազարամյակների ընթացքում մեկ բաժնով տան՝ բնակելի ու տնտեսական-արտադրական գործառույթներին համապատասխան հորիզոնական ծավալումն է՝ առանձին կառույցների ավելացմամբ, բազմաբաժին համալիրի վերածմամբ. երևույթ, որ պայմանավորված էր հետագա ժամանակներում տնտեսական-արտադրական և մշակութային կյանքի առաջընթացով:

Որպես տնային տնտեսության ամենակարևոր բաժանմունքներից մեկը՝ գլխատունը պատմական Հայաստանի տարածքում զանազան հորինվածքներով ու ճարտարապետական տարբեր չափեր ունեցող հարկաբաժին էր: Դրա չափերը պայմանավորված էին ընտանիքների կազմով և կառուցվածքով, տնտեսավարման եղանակներով ու ծավալներով: Մեծ մակերեսով գլխատները հատուկ ու անհրաժեշտ էին մեծ կազմ ունեցող գերդաստաններին, որոնցում կային առնվազն 5–7 և ավելի նորածիններ: Բանահավաք Վ. Պետոյանի հավաստմամբ, Սասունում այդպիսի ընտանիքներում «7–10 օրորոց էր օրորվում»<sup>7</sup>, իսկ մեր գրառած նյութերում նույն վայրում գերդաստանական շատ ընտանիքներ XX դարի սկզբներին կազմված էին 50–60 անձից<sup>8</sup>: Գերդաստանական տների բնական պահանջներով և հնագույն ավանդներով էր պայմանավորված բնակելի և տնտեսական շենքերի կառուցապատումը: Գերդաստանների գոյատևումը բնականորեն հուշում էր մեծ տանը ներհատուկ բազմաբաժին շենքերի ստեղծումը: Տուն հիմնող նահապետն ուներ հետևյալ նկատառումները. ա) փոքր ընտանիքի հետագա աճն ու գերդաստանի վերածվելը, բ) նախապես մեծ ընտանիքին համապատասխան շենքային համալիր ստեղծելը, գ) ապագայում այդ ընտանիքի առանձնանայր, հետևապես կառուցվող տունը նախօրոք առանձին մասերի բաժանելու և դուստր ընտանիքներին հատկացնելու հեռանկարը: Ահա այսպես էլ ձևավորվում էր ամեն մի գերդաստանական շենքի համալիրը: Նման կառույցների հսկայական չափերով էին պայմանավորված ծածկաձևերն ու հատակագծերը, թեև հաճախ էլ պահանջվում էին ծածկի միևնույն տեսակները:

XIX դ. երկրորդ կեսին և XX դարասկզբին գլխատունը ներկայացված է երկու հիմնական տիպերով, որոնց առանձնացման հիմքում ընկած են ներքին

<sup>6</sup> Կ. Օ հ ա ն յ ա ն. 1977, էջ 266–269:

<sup>7</sup> Վ. Պ ե տ ո յ ա ն. 1965, էջ 221:

<sup>8</sup> Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2004, էջ 61–72:

պլանավորման յուրահատկություններն ու ծածկերի ձևերը: Առաջին տիպը բնորոշ էր Հայաստանի նախալեռնային, անտառաշատ շրջաններին՝ Լոռի, Տավուշ, Արցախ, Սյունիք, Վանա լճի արևելյան ու հարավային ափամերձ շրջաններ, Մշո դաշտ, որտեղ կլիման չափավոր է, և չկա ջերմաստիճանի կտրուկ տատանում: Այս տիպի տարբերակիչ առանձնահատկությունը բնակելի և տնտեսական-արտադրական շինությունների առանձնացվածությունն է: Գլխատան այս տիպը հիմնականում բաղկացած էր սրահից (երեսբաց, էյվան), գլխատնից (կենալատուն, դարադամ), հացատնից, մառանից, գոմից, երբեմն էլ՝ սենյակ կամ օթախ սնվանումով բաժնից:

Երկրորդ տիպի գլխատան համալիրը կազմում էին բակը (չվաք), գլխատունը (տան տուն, տուն), մառանը (քոխ, քիլար), գոմը (թավյա), գոմին կից սենյակը (գոմի օղան), երբեմն էլ քաղաքային տիպի հյուրասենյակը-օթախը: Այս համալիրի կարևորագույն առանձնահատկությունը բնակելի և տնտեսական շինությունների համախմբումն է մի ծածկի տակ: Գլխատան բնակելի համալիրի երկրորդ տիպը տարածված էր ջերմաստիճանի կտրուկ տատանումներ ունեցող, ցրտաշունչ սարահարթային և գրեթե անտառազուրկ շրջաններում Բարձր Հայք, Տուրուբերան, Ծոփք, Աղձնիք, Զավախք, Շիրակ, Արագածոտն, Գեղարքունիք: Այս համալիրում գլխատունը բաժանված էր երկու մասի. փոքր, վերին կիսակտոր (աբսիդ հիշեցնող) մասը ներքևի մասից բարձր էր 40–50 սմ երկու քարե աստիճանով, դրա մակերեսը հողաքարե թմբիկ էր, որտեղ կար մեկ մեծ թոնիր կամ որոշ դեպքերում մեծ ու փոքր թոնիրներ, իսկ ներքևի մասից անջատվում էր երկու սյան մեծ կամարով և հացի ու ընդեղենի շարժական փեթակ-ամբարներով: Այն կանանց հարկաբաժինն էր: Ընդ որում, թմբիկավոր մասը, որը մեծ մասամբ աբսիդավոր էր լինում, կոչվում էր վերին տուն կամ թնդրօջախ, իսկ ստորին քառակուսի կամ քառանկյունի մասը՝ ցածի տուն կամ մեծ տուն, քանզի այն գլխատան առավել մեծ մասն էր, որտեղ էլ կենտրոնացած էր ամբողջ գերդաստանի գործունեությունը: Այստեղ կարող էր տեղադրվել կենցաղային կարիքների և ջեռուցման համար փոքր թոնիր կամ բաց օջախ-կրակարան՝ հանգուլթ: Օտար էթնիկ տարրի առկայությունը հարկադրել է հայ բնակչությանը հեռու պահել կանանց նրանց հետ հնարավոր շփումներից, ուստի գլխատան մի մասը իր երկու մառաններով, ջահել կանանց համար առանձնարան էր ծառայում:

Սակավ տարածված երրորդ տիպի հացատունն Արարատյան հովտում ուներ երկու թմբիկ մեկի վրա 1–2 թոնիրներով կամ յուրաքանչյուրի վրա մեկական՝ հողաքարե բազմոցի կամ թախտ-մահճակալի նշանակությունը: Ըստ գլխատուն-թորվան տան մեկ այլ հատակագծի՝ Մոկսում հայոց տան համակառուցի երկրորդ հարկի հարթ հատակի կենտրոնում առկա էր «կախովի» թոնիր, փայտե քառակուսի կմախքի մեջ՝ ներսից և դրսից կալե շաղախով երեսպատված: Դրանք կալե հաստ շուրթերով թոնիրներ էին՝ Այստեղ, բացի թոնիրներից, գոյություն ուներ նաև բաց կրակարան-օջախ հանգուլթ: Այն թրծած կալե կամ սալե պատերով ու ծածկով կրակարան էր, որը Սասունում կոչվում էր թվեք<sup>10</sup>:

<sup>9</sup> И. А. Орбели. 2002, с. 11; Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2019, գիրք 2, էջ 328:

<sup>10</sup> Ե. Կ ա Ր ա պ ե տ յ ա ն. 1962, էջ 55:

Մասնագիտական գրականության մեջ անցյալ դարի վերջին տասնամյակներին քննարկման առարկա էր դարձել Անդրկովկասի ժողովուրդների բնակարանային համալիրների, այդ թվում նաև գլխատների համանմանությունների հարցը: Ուշադրության է արժանի Տ. Ա. Չիկովանու՝ Անդրկովկասի ժողովուրդների բնակարանների դասակարգումը: Նա առանձնացնում է աստիճանավոր գմբեթաձև ծածկով բնակարանների չորս տեսակ. «1) միատարր կամ մեկ բաժնով տուն՝ դարադամ՝ բնորոշ Լեռնային Ղարաբաղի հայերին, 2) երկտարր հատվածավորված տուն, որում միավորված էին բնակելի մասը, գոմը և սրահը՝ տարածված Ղարաբաղյան աղբբեջանցիների, քրդերի մեջ, 3) պարզ համալիր-տուն, որտեղ մեկ տանիքի տակ միավորված են բնակելի մասը, մառանը, փուռը, սրահը, երբեմն նաև գոմը, որոնց մուտքերը բացվում էին սրահից՝ բնորոշ Ներքին և Ստորին Քարթլիի, Ղազախի, Լոռու համար, 4) փակ համալիր՝ կազմված բնակելի մասից, փոխից, մառանից, գոմից, մարագից և սրահից՝ այստեղից գլխատուն բացվող մուտքով, որտեղից մյուս հարկաբաժինները հաղորդակցվում էին ներսից: Այսպիսիները տարածված էին Վրաստանում (Թրիալեթի, Մեսխեթ-Ջավախեթի, Թաո-Կղարջեթի) և Հայաստանում՝ Բարձր Հայքում, Գեղարքունիքում, Շիրակում, մասամբ Լոռի-Փամբակում և Վանի վիլայեթում»<sup>11</sup>: Ինչպես երևում է, բոլոր չորս տեսակներն էլ տարածված էին նաև հայերի շրջանում: Սակայն այնքան էլ պարզ չէ, թե հեղինակը, միատարր տուն ասելով, ինչ նկատի ունի. չէ՞ որ Ղարաբաղի հայերի գոմը, փարախը, մարագը, սովորույթի համաձայն, տնից հեռու էր կառուցվում: Ստացվում է, որ մի դեպքում գոմը մտնում է համալիրի մեջ, եթե բնակելի համալիրին կից է, մյուս դեպքում՝ ոչ, եթե առանձին է: Բացի այդ, գուտ հայկական առանձնահատկություն է այն, որ այստեղ կա գոմի ճակատային մասի երեք-քառորդը կազմող օդա՝ կոթողային կառույց, որ հայկական հազարաչեն գլխատան գուգակիցն է, քանզի այն, բացի բնակարանի մի հատվածը լինելուց, նաև հասարակական արժեք է ու գլխատան նման բազմագործառույթ նշանակություն ունի. երևույթներ, որոնք դուրս են մնացել վրացի գիտնականի ուշադրությունից:

Ուստի նպատակահարմար է դասակարգումը կատարել ոչ այնքան հաշվի առնելով համալիրի բաղկացուցիչ մասերի քանակը, որքան դրանց փոխադարձ գործառույթային նշանակությունը և դասավորության բնույթը: Այսպես, ժողովրդական բնակարանի «գլխատուն» տիպը Հայկական բարձրավանդակում լինելով համընդհանուր՝ պայմանավորված աշխարհագրական, բնակլիմայական և տնտեսամշակութային գործոններով, առանձին պատմա-ազգագրական մարզերում ունեցել է յուրահատուկ տարբերակներ<sup>12</sup>: Գլխատունն առհասարակ նստակյաց, երկրագործա-այգեգործա-անասնապահական տնտեսություն վարող ժողովրդին բնորոշ բնակարանի տիպ է, որպիսին էր հայ ժողովուրդը վաղնջագույն անցյալից: Այս առումով ձեռքի տակ եղած պատմագրական և ազգագրական նյութերը մեզ բերել են այն համոզման, որ պատմական Հայաստանում կարելի է առանձնացնել գլխատուն բնակարանային համակառույցի երեք հիմնական ձև՝ ազատ, բաց և փակ:

<sup>11</sup> Т. А. Чиковани. 1971, с. 34–35.

<sup>12</sup> Դ. Վ. արդույան. 2004, № 2, էջ 48–64:

Ազատ համակառուցում բնակելի և տնտեսական կառույցները սովորաբար միմյանցից մեկուսացված էին: Բնակելի հատվածը բաղկացած էր տնից, նրա առջև եղած սրահից, երբեմն էլ տանը կցակառուցվել է մառանը՝ մուտք ունենալով սրահից կամ անմիջապես տնից: Բոլոր մյուս կառույցները՝ գոմը, թոնրատունը, մարագը և այլն, տեղադրվել են բնակելի տնից անջատ՝ մեկուսի: Այս ձևը բնորոշ էր հիմնականում Ղարաբաղի հայտնությանը, Տավուշին, մասամբ՝ Լոռուն ու Զանգեզուրին:

Բաց համակառուցում տունը, մառանը, գոմը, երբեմն նաև ոչխարի փարախը կցակառուցվել են միմյանց, սակայն դրանց մուտքերն առանձին էին և հիմնականում բացվում էին բակից կամ տան առջև գտնվող բաց սրահից: Բնակարանային այս համալիրը բնորոշ էր մասամբ Զանգեզուրին, հատկապես՝ Սիսիանի, Վայոց ձորի մեծ մասին, Այրարատին, Լոռու մի զգալի մասին: Այրարատ պատմաազգագրական շրջանին հատուկ բնակարանը՝ տափակ կտուրով, առանձին խոհանոցով և հնձան-մառանով, շրջափակված բարձր ցանկապատով, ուներ ճարտարապետորեն ձևավորված դարպաս: Այստեղի բնակարանը հարմարեցված էր խաղողագործական-այգեգործական տնտեսությունն ու շոգ կլիմային:

Հորինվածքային լուծումներով փակ համալիրը համապատասխանել է արևմտահայկական ու արևմտահայերով բնակեցված արևելահայկական բնակավայրերին, իսկ ազատ և բաց համալիրները՝ արևելահայկականին: Փակ համալիրի առանձնահատկությունն այն էր, որ գլխատանը կից բոլոր հարկաբաժինները մուտքերով հաղորդակցվել են գլխատան բնակելի մասին, դրսի հետ ունեցել են միայն մեկ ընդհանուր մուտք՝ փակ նախասրահի միջով: Դա միհարկանի գմբեթաղ շինություն էր, միասնական բարդ համակառուցով, որտեղ գրեթե բոլոր օժանդակ տնտեսական և բնակելի շենքերը համախմբված էին մի տանիքի ներքո: Տվյալ համալիրը լավագույնս հարմարեցված էր լեռնային խստագույն պայմաններում երկրագործական-անասնապահական տնտեսություն վարելուն և գերդաստանական տներով բնակությունը: Բնորոշ էր Արևելյան Հայաստանի ցրտաշունչ կլիմայով ազգազավառներին Շիրակին, Զավախքին, Գեղարքունիքին, Արագածոտնին, մասամբ Այրարատի բարձրադիր շրջաններին և Վայոց ձորին: Քանի որ ձմեռն ավելի երկար էր տևում, մարդիկ ստիպված էին ամեն կողմից շինություններով շրջափակել բնակելի հարկաբաժինը՝ գլխատուն-թոնրատունը: Հատկանշական է, որ բաց համալիր ունեցող Այրարատի բարձրադիր մասում՝ Կոտայքի սարավանդում, համալիրը փակ բնույթի էր: Եվ պատահական չէ, որ հենց այդ համալիրներում է գոմի օդան իր առավելագույն զարգացմանը հասել: Բնակարանային համակառույցի ձևերի առաջացման գործում կարևոր նշանակություն է տրվել ոչ միայն բնակլիմայական պայմաններին հարմարվելուն, այլև վաճկատուներից անվտանգությունն ապահովելուն: Այս համալիրներում արդեն շատ կարևոր տեղ էր գրավում գոմի օդան՝ իբրև գլխատան գույքակիցը: Նշված շրջանների հիմնական բնակիչներն Արևմտյան Հայաստանի Բարձր Հայքից 1830-ական թվականների ներգաղթողներն էին՝ իրենց հետ բերելով տեղական ճարտարապետական հորինվածքային ավանդույթները:

Առաջավոր Ասիայի մյուս երկրներում և այլուր օդան գոմին կցված ձևով հայտնի չէ: Մինչդեռ հայկական իրականության մեջ այդ կառույցը գործել է

գրելի՞նք ամենուրեք: Լեռնական վաչկատուն կյանքով ապրող ցեղերը հարևանությամբ ապրող նատակյաց երկրագործական կյանք վարող հայ ընտանիքի համար իսկական չարիք էին, որոնք ձմռանը հաճախակի հարձակումներ էին գործում հայերի ունեցվածքը կողոպտելու և անասունները խլելու նպատակով: Հետևաբար, յուրաքանչյուր գյուղ և ընտանիք պետք է դիմեր ինքնապաշտպանության: Հայ ընտանիքն ինքնապաշտպանության նպատակով հարկադրաբար ավելի ու ավելի էր համակենտրոնացնում իր ննջարանը: Առավել մեծ ընտանիքները կհավում էին՝ գիշերելով գլխատանը և գոմի օդայում:

Այս վայրագություններն աննկատ չեն մնացել նաև եվրոպացի ճանապարհորդների տեսագրաչտից: Այսպես, օրինակ, անգլիացի դիվանագետ Ու. Աուզլեյը գրում է, որ Հայաստանն այն երկիրն է, «ուր սեփականությունը այնքան անապահով է սեփականատիրոջ համար, որ (գոմի ու գոմի օդայի համատեղումը) մի առավելություն է իր աչքի առաջ ունենալ այն բոլորը, որ կազմում է իր հարստությունը, և սովորությունը վարժեցնում է նրան կենդանիների շնչառության... հետ»<sup>13</sup>: Մի կողմից՝ ջեռուցման ապահովման, մյուս կողմից՝ հրոսակների ավարառությունները կանխելու նպատակով հայ գյուղական բնակչությունն իր ձմեռնատունը կցել է գոմին, դրանով նաև ամբողջ ընտանիքով կամ մշակների միջոցով կանխել է գիշերային ավարառությունները, որով և բացատրվում է գոմի օդաները որպես պահակակետեր օգտագործելը: Մի հանգամանք ևս. այդ նույն նկատառումից ելնելով՝ դարեր շարունակ մշակվել էին կնոջ պատիվը պահելու և ներխուժող ավարառությունների դիմագրավելու ձևեր. դռներն ամրացվում էին սողնակներով, տղամարդիկ քնում էին մուտքի կողմում՝ առևանգիչ-թալանչիների և առաջին իսկ պահին դիմագրավելու համար:

Ընդհանրապես, գոմի օդան հայկական բնակարանի ուշագրավ տարրերից է, և, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այն ժամանակի ընթացքում փոփոխվել ու զարգացում է ապրել կառուցվածքային և գործառությունային առումներով: Սկզբում ունենալով թմբիկի կամ գոմի մեծ ցանկապատով անջատված թախտի ձև՝ այն եղել է ծառաների ու հովիտների սենյակը, ապա կատարելագործվելով ստացել է ընդարձակ սենյակի տեսք՝ երկկողմանի յայն թախտերով, կամարածև ծածկով և գեղեցիկ ձևավորված բուխարիով<sup>14</sup>: Օտարի, մասնավորաբար՝ թուրքական տիրապետության պայան-թալանի շրջանում, միջին դարերից ի վեր, գոմին առընթեր, ճակատային մասում հիմնված սենյակը Հայաստանի գավառների մեծ մասում ստացել է օդա անվանումը<sup>15</sup>, իսկ Պարսկահայքում, Արարատյան որոշ շրջաններում կոչվել է միյանա-միանա կամ սաքու<sup>16</sup>, բազմոց նշանակությամբ: Այստեղ էին կայանում հասարակական նշանակությամբ ժողովները և ընդունվում համայնքին

<sup>13</sup> Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն. 1934, հ. 2, էջ 475:

<sup>14</sup> С. Лисициан. 1925, с. 66.

<sup>15</sup> Օդա բառը Հր. Աճառյանը բացատրել է որպես «գոմի քով ծառաներու հատուկ ննջասենյակը» (տե՛ս նրա «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և փոխառյալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզվին մեջ համեմատած վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն» հոդվածը. «Էմինեան ազգագրական ժողովածու», 1902, հ. 9, էջ 370):

<sup>16</sup> Համառոտ բառարան պարսկերեն-հայերեն, 1858, Բ, էջ 874:

վերաբերող բանավոր որոշումները: Վ. Բդոյանի դիտարկմամբ՝ օդան էլ գլխատան նման համապարփակ սենյակ էր: Ամենից առաջ այն անասնախնամ մարդկանց հանգստարանն ու ննջարանն էր: Այն նաև հյուրասենյակ էր. բոլոր ծանոթ ու անծանոթ հյուրերը, քարավաններով անցնող վաճառականները քնում էին օդաներում և անասուններին էլ տեղավորում գոմերում: Տանտերերն իրենց պարտավոր էին համարում կերակրել թե՛ հյուրերին և թե՛ անասուններին: Այս իմաստով օդան ոչ միայն հյուրատուն էր, այլև իջևանատուն<sup>17</sup>: Նաև զրուցարան էր, տղամարդկանց հասակային խմբերի զվարճարան, հակաթուրքական պայքարի քաղաքական գաղտնի ընկերությունների ակումբ, շատ դեպքերում՝ յուրօրինակ արվեստի տուն, որտեղ տեղի էին ունենում ժողովրդական, աշուղական, գուսանական երգերի կատարումներ, հեքիաթասացություններ, պարահանդեսներ, թատերախաղեր, մարզական մրցումներ: Օդայի գոյությունը, ինչ խոսք, պայմանավորված էր ցուրտ վայրերում կենդանիների ջերմությունից օգտվելու հանգամանքով<sup>18</sup>, որի այդպիսի կարևոր դերին ու նշանակությունը որոշակիորեն նպաստել է նաև վառելիքայտի սակավությունը: Համեմատությունը ցույց է տալիս, որ վառելիքայտով հարուստ, մեղմ կլիմա ունեցող և համեմատաբար անվտանգ շրջաններում (Չանգեզուր, Ղարաբաղ, Տավուշ) օդան բացակայել կամ ունեցել է ամենապարզունակ տեսք՝ մնալով, փաստորեն, զարգացման սկզբնական մակարդակի վրա: Բաց համալիրների տարածման բարձրագույն, ցուրտ կլիմայով շրջաններում (Սիսիան, Այրարատ) նույնպես հանդես է գալիս գոմի օդան, սակայն դա կարելի է կապել ոչ այնքան կլիմայի խստություն, որքան վառելիքայտի պակասություն հետ: Ուշագրավ է, որ օդայի տարածման տարածաշրջանը համընկնում է բոլոր այն շրջաններին, որտեղ որպես հիմնական վառելիքայտ օգտագործվել է ալթարը:

Վառելիքայտի առատությունը պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ Ղարաբաղում, Տավուշում, Լոռիում, մասամբ էլ՝ Չանգեզուրում թոնրատունն առանձնացվում էր բուն տնից: Անտառների առկայությունը հնարավորություն է տվել այդ շրջանների բնակչությանը միաժամանակ կրակ վառել և՛ տանը, և՛ դրսում. մի բան, որ բացառվում էր անտառազուրկ շրջաններում<sup>19</sup>:

Լեռնային անտառազուրկ ցրտաշունչ վայրերում գոմի օդան կամ, ինչպես ընդունված է ասել, ձմեռային բնակարանը, անասունների շնչով ջեռուցվող գլխատանը կից հարկաբաժին էր, հազարաչեն գլխատան զուգակիցը: Հայկական օդաների բազմագործառույթ լինելու և ներսույթի ճարտարապետական գեղագիտական լուծումների (ներսից հղկված պատեր, բուխարի և սյուների գեղազարդված տեսք, ծածկի ու հատակի յուրօրինակ ձևեր, որմնաթախտեր, ամֆիթատրոն) շնորհիվ գլխատան համալիրը էականորեն տարբերվում էր առաջավորասիականից. վերջինս հայկական օդաների շքեղությունը չի ունեցել: Այստեղ բուխարու աջ և ձախ կողմերի պատերի երկայն-

<sup>17</sup> Վ. Բդոյան. 1963, հ. 1, էջ 52, Վ. Բդոյան. 1974, էջ 79–82, Л. Варданян. 1981, с. 101, 102, 134–137; А. Марутян. 1989, с. 76–77.

<sup>18</sup> Обзорение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях. 1836, т. 4, с. 320, Л. Уаргужан. 1890, էջ 19–20, 23, М. Шагинян. 1926.

<sup>19</sup> А. Л. Якобсон. 1950, с. 59.

քով, հաստատուն փայտե կամ հողաքարե բազմոցներին փոխարինում էին շարժական զույգ թախտերը, որտեղ բազմում էին տարեց տղամարդիկ, պատվավոր հյուրերը:

Քանաքեռի գոմի օդան ճանապարհորդ Առագուստ Փոնն Հաքստհաուզենը հիշատակել է սաք[ու] անվանումով<sup>20</sup>, իսկ Տավուշի Բերդ գյուղում այն կոչվել է գոմի օթախ: Ի դեպ, օդա են անվանվել նաև թուրքական հասարակական իջևանատները: Այս հարկաբաժինն օդա է հիշատակել Ե. Լալայանը<sup>21</sup>, իսկ Ստ. Լիսիցյանն<sup>22</sup> այն անվանել է գոմի օդա, Վ. Բդոյանն առաջարկել է օդա, սաքու-սէքի օտարահունչ եզրույթների փոխարեն անվանել գոմասենյակ<sup>23</sup>:

Գոմի օդան թե՛ գլխատան համալիրում, թե՛ դրանից հեռու ընկած, ինքնուրույն բաժանմունք չէր, այլ գոմի մի անկյունը կամ ճակատը զբաղեցնող ներդիր սենյակ, որը միտված էր ծառայելու իբրև անասուններին խնամողների հանգստարան ու ննջարան, սակայն շատ ազգազավառներում այն բազմագործառույթ էր: Լեռնային ցուրտ շրջաններում այն գերզատանի համար ծառայում էր նաև ննջարան: Ժամանակի ընթացքում այստեղ ավելանում է մակերեսը, ծխնելուզավոր կրակարան-բուխարին, ներսը ստանում է գեղազարդված, կահավորված տեսք: Բուխարի-օջախի դիմաց, օդայի ամբողջ երկարությամբ մեկ մետր լայնությամբ փոս էին փորում՝ ոտքերը կախելու, կոշիկները տեղավորելու համար: Սրա երկու կողմերը քարե պատերով անջատելով՝ աջ ու ձախ կողմերին մեկական թմբիկ էին ստեղծում: Սրբատաշ քարերից շարված պատերը նստարանի բարձրություն էին ունենում, որոնց վրա մարդիկ նստում էին ավագություն կարգով: Երբեմն հողե թմբիկներին փոխարինում էին փայտե անշարժ կամ շարժական թախտերը: Փայտաշատ շրջաններում դրանց փոխարինում էին տախտակե դարավանդաձև, անշարժ ու գեղեցիկ նախշազարդված թախտերը: Նմանատիպ օդաները գոմից անջատվում էին միայն սյունաշարով, բազրիքներով և թախտերի ճակատներով ու կողերով գոմից տաքությունը թափանցելու համար:

Բնակլիմայական պայմաններից որոշ չափով կախված էր նաև հիմնական ու սեզոնային բնակարանների շինանյութի տեսակը: Գլխատները հիմնականում քարաշեն էին, սակայն Արևելյան Հայաստանում կառուցվել են նաև կավաշեն տներ: Վերջինիս տարածումն ընդգրկել է Արարատյան հովիտը, Վայոց ձորը և Սիսիանը: Դա առաջին հերթին պայմանավորված էր այստեղ կավահողերի լայն տարածմամբ, որի հետևանքով կավը վերածվել էր կարևոր շինանյութի: Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ նշված շրջաններում սակավ էին տեղումները<sup>24</sup>: Սեզոնային կառույցները փայտաշեն էին

<sup>20</sup> «Բարոն Ա. Հաքստհաուզենի ճանապարհորդությունից».— «Կոտնկ Հայոց աշխարհի» (Թիֆլիս), 1862, էջ 25:

<sup>21</sup> Ե. Լալայան. 1896, ԱՀ, գ. Ա, էջ 220 և այլն:

<sup>22</sup> С. Д. Лисициан. 1925, с. 55–70.

<sup>23</sup> Վ. Բդոյան. 1974, էջ 73–84:

<sup>24</sup> Հայկական ՄՍՀ ֆիզիկական աշխարհագրությունը, 1971, էջ 184, 226:

անտառաչատ շրջաններում (Տավուշ, Լոռի, Ջանգեզուր, Ղարաբաղ) և քարաշեն, որտեղ դրանք բացակայում էին (Շիրակ, Գեղարքունիք)<sup>25</sup>:

Որպես փակ համալիրի բնորոշ հատկանիշներից մեկը՝ սովորաբար նշվում է «հազարաշեն» ծածկը, որի կիրառման հիմնական պատճառը համարվել է կարճ գերաններով մեծ թռիչքներ ծածկելու անհրաժեշտությունը, քանի որ երկար գերանների պակասություն կար<sup>26</sup>: Սակայն գրառված նյութերը ցույց են տալիս, որ ծածկի այդ ձևը միակը չի եղել փակ համալիրի տարածման շրջաններում, և այնտեղ զգալի տեղ են գրավել նաև գերանների զուգահեռ շարվածքով ծածկերը: Այնպես որ, ծածկերի առաջացման հարցերը դեռևս քննարկման կարիք են զգում:

Գլխատան գմբեթաձև ծածկը նույնպես կատարելագործվել է տան ընդհանուր զարգացման հետ: Ծածկի գմբեթայնությունը պայմանավորվել է նախևառաջ տան մեջ բաց օջախի առկայությունը: Գմբեթաձև ծածկն ավելի լավ, քան հարթ ծածկը նպաստել է օջախի ծխի համեմատաբար արագ հեռացմանը: Միաժամանակ նման ծածկը ինչ-որ չափով նպաստել է լուսամուտներ չունեցող տան՝ քիչ թե շատ հավասարաչափ լուսավորմանը: Իսկ լուսամուտների բացակայությունը պայմանավորված էր տան գետնափոր կամ կիսագետնափոր տեղադրությունը ու շարունակվել է ավանդույթի ուժով նաև գետնի երես դուրս գալուց հետո: Տան կոնաձև ծածկը բացառել է դրսից մեծ քանակությամբ մթնոլորտային տեղումների կուտակումը տանիքի վրա<sup>27</sup>:

Ծածկի բարձրությունը Հայաստանի տարբեր շրջաններում տարբեր էր: Դա երևի չպետք է կապել փայտանյութի առկայության կամ պակասության հետ, որովհետև Շիրակում, որտեղ փայտը սակավ էր, ծածկերը բավական բարձր էին, իսկ, օրինակ, Տավուշում՝ ընդհակառակը: Ցածր էին նաև Արարատյան հովտի գլխատների ծածկերը: Այդ հանգամանքը բացատրվում է տեղումների պակասությամբ և, մասնավորաբար, տների փոքր չափերով, որն իր հերթին պայմանավորված էր նաև դրանցում բնակիչների ոչ մեծ թվով, գերդաստանական բազմանդամ տների սակավությունը: Ուշագրավ է, որ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո Արևելյան Հայաստանում արագացավ գերդաստանական տների տրոհման գործընթացը:

Ըստ ծածկաձևի ևս գլխատների տիպերը տարբեր են: Գրականության մեջ սովորաբար մատնանշվել է գլխատան ծածկի երկու տարբերակ՝ արևմտահայկական ու արևելահայկական, որոնցից առաջինին բնորոշ էր հազարաշեն ծածկը, որով և անվանվել է մեկ տանիքի ներքո համախմբված բնակելի ու տնտեսական կցակառույցներով ամբողջ համալիրը, իսկ երկրորդին՝ մինչև Արևմտյան Հայաստանից հայ բնակչության ներգաղթը հիմնականում բնորոշ էին գերանների զուգահեռ շարվածքով հարթ ծածկը և բնակելի ու տնտեսական կառույցների առանձնացված լինելը: Այդ հանգամանքն առա-

<sup>25</sup> Ю. И. Мкртумян. 1974, с. 56–57:

<sup>26</sup> Ս. Վարդանյան. 1959, էջ 119, Ն. Պապուխյան. 1972, էջ 134:

<sup>27</sup> Ստ. Լիսիցյան. 1969, էջ 101, Т. А. Чиковани. 1964, с. 5; Т. А. Чиковани. 1971, с. 66–67.



ջին անգամ նշել է Ի. Պանտյուխովը<sup>28</sup>, իսկ հետագայում կրկնել և հիմնավորել են այլ հեղինակներ<sup>29</sup>:

Ուշադրություն է արժանի պատմական Հայաստանի երկու հատվածներում XIX դարում և XX դարասկզբներին տարածում գտած մի քանի ծածկածներ ևս:

Ծածկի դասական ձևը, որը հատկապես լեռնային ցրտաշունչ շրջաններում էր տարածված, հազարաչենն էր: Իսկ վերջինս մեծ բազմազանություն ուներ: Տարածված ձևերից էր եռանավ ծածկը՝ գույգ գերաններով երկուական կամ մեկական սյուներով, ինչպես նաև՝ երկու կիսազմբեթավոր երդիկներով: Երկնավ և եռանավ ծածկածներն առավել չափով գոմածածկին էին բնորոշ: Մեկ այլ տիպ էր հազարաչենի ու գոմածածկի խառնուրդով Սյունիքում տարածում գտած բազմազերան ծածկածները: Արարատյան հովտում պահպանված հարթ ծածկածներ իրականացվել է եռանավի սկզբունքով, կենտրոնում ունեցել է ծխաքաշ գմբեթ: Հարթ ծածկածն անխուսափելիորեն առաջացնում էր հարթ, գմբեթաված ծածկը՝ բլրածև, երկնավ ծածկը՝ ձկնամեջք կոչվող երկթեք կտուր, եռանավ ծածկը՝ կտրավուն կտուր: Բացի հազարաչենից՝ բոլոր ծածկածների դեպքում կրակարանի ծուխը վատ էր քաշվում, ուստի ծխերդիկների վրա դրվում էին լրացուցիչ ծխաքաշներ: Ամենատարածվածը կողովածև ճիպոտահյուս ծխաքաշն էր, որը հարդախառն ցեխի կամ հարդախառն գոմաղբի սվաղ էր ունենում: Արարատյան հովտում լայնորեն տարածված էր նաև մանր տախտակներից հազարաչեն ծածկի ձևով կազմված մանրակերտ ծխաքաշը՝ նույնպիսի սվաղով: Արևմտյան Հայաստանում տարածված էր երդիկի վրա բուխարիկ կոչված քարաչեն ծխաքաշը: Ամենուրեք իբրև ծխաքաշ օգտագործվում էին ծակված կիսակարասներն ու կճուճները: Այս արհեստական ծխաքաշների բարձրությունը հասնում էր 50–100 սմ-ի, իսկ Կարին-Ալեքսանդրապոլում և Ախալցխա քաղաքներում՝ ավելի քան 1 մ-ի: Ժամանակակիցների վկայությամբ XIX դարում ամենուրեք տարածված այդ ծխաքաշները հայկական գյուղական բնակավայրերի արտաքին ամենաաչքի ընկնող պարագաներն էին, որոնցով էլ հաշվում էին ընտանիքների (ծխերի) թիվը<sup>30</sup>:

Ազգագրական դիտարկման տեսակետից կարևոր է նաև գլխատան ներսույթի ուսումնասիրության խնդիրը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե տարբեր ժողովուրդների մեջ կարող են դիտվել նույն տիպի բնակելի տներ, ապա դրանց ներսույթը՝ որպես արգասիք տվյալ էթնիկ ընդհանրության կենցաղամշակութային առանձնահատկությունների, անպայման տարբեր դրսևորումներ ունեն<sup>31</sup>: Նախ, պատմագրական բազում նյութեր ևս ցույց են տալիս բնակարանային համալիրի ոչ միայն ներսույթի, այլև արտաքին ձևավորման խղճուկ, անհրապույր տեսքը, որը, ըստ ժամանակա-

<sup>28</sup> И. Пантюхов. 1896, с. 82.

<sup>29</sup> Խ. Սամուելյան. 1941, հ. II, էջ 199–209; А. Якобсон. 1950, с. 157–159; С. Лисициан. 1955, с. 205–207; В. П. Кобычев, А. Н. Робакидзе. 1967, с. 28.

<sup>30</sup> Մ. Տեր-Մովսիսյան. 1894:

<sup>31</sup> А. Марутян. 1989, с. 63–142.

կիցների, տիրող օտար վարչաձևերի հայահալած քաղաքականությունից խույս տալու միջոցներից էր: Գ. Արվանձտյանցը, Սեբաստիայում եղած ժամանակ, դիտել է հայի հագուկապի և բնակություն խղճուկ վիճակն ու արձանագրել. «Մեզ ցույց կուտային քաղաքի մեջ այնպիսի հայեր, որ մուրացկանի ձևով հագնված էին, բայց քանի մը հագար ոսկվո տեր էին. այնքան զորացած է բռնավորած երկյուղին այս ողորմելյաց վրա, որ չեն համարձակիր իրենց հարուստ լինելը ցույց տալ, գաղտուկ-մաղտուկ գործեր կ'ընեն, ցած և հին տներու մեջ կը բնակին, ստակին կը թաղեն, վասն զի եթե հայտնվի իրենց ունևոր լինելը, կը վախենան թե իսկն ձեռքներեն»<sup>32</sup>: Համաձայն ուսումնասիրությունների և ձեռքի տակ եղած ազգագրական նյութերի՝ գլխատունն ուներ համեստ կահկարասի և վերջինս լրացնող պարագաներ: Ծավալուն իրերն էին տախտակե կամ կավե և ծեփածո փեթակները՝ հացի ամբարները, հարսների օժիտի զարդարված սնդուկները, օրորոցները, կարճատ սեղան-քուրսին և այլն: Ոմանք ունեին փայտե անշարժ որմնաթախտեր կամ շարժական բազմոցներ, որոնց վրա ցերեկն աշխատում և հանգստանում էին, գիշերը՝ քնում: Դրանք ծածկվում էին խփրներով, կարպետներով, գորգերով, թաղիքներով, փալասներով և այլն: Մեծերի ու պատվավոր հյուրերի համար նստելու ներքնակներ և բարձեր էին դրվում: Պատրհանները և փայտե շարժական պահարանները ծառայում էին տոնական զգեստները, սպիտակեղենը և անկողինը պահելուն, իսկ սյուներին ու պատերին ամրացված փայտե, եղջյուրե և մետաղե կախիչները՝ ամենօրյա հագուստը կախելուն: Հացի սեղանը, քուրսին, տախտակե երկար նստարանը, մինդարները, պղնձե մեծ սկուտեղները, սեղան-սիռոցը, փայտե զարդարուն սկուտեղը և այլ պարագաներ ծառայում էին ճաշկերույթներին ու հանգստին:

Լուսավորության միջոցներ էին ձեթի, սպա՝ նավթի ճրագն ու լամպը, կարասաձև (գլխիվայր դրվող) ճրագակալը, մետաղե և փայտե ճրագակալներն ու մոմակալները և այլն: Ներսույթի հաճելի տեսքին էին ծառայում գլխավոր սյուների, դրանց խոյակների, ամբարների, հացի և հարսների սնդուկների զարդաքանդակները, կավե ու բրդե հյուսածո աղամանները, խեցեղենի շարքերը, նորապսակների գունավոր և ծոպավոր վարագույրները, փայտե ու հյուսածո գլխավորները: Յուրատեսակ արվեստին ու կրոնական հայեցողություններին էին ծառայում ամբարների, խոյակների, սյուների գլխամասերի և այլ պարագաների վրա փորագրվող սվաստիկաները, խաչերը, հավերժության նշանները, երկնային լուսատուների խորհրդանշանային պատկերները, տունը կարծեցյալ չար աչքից պաշտպանելու մեծածավալ հմայիլ-դադդաղանները, երկնային քարերից պատրաստված ուլունքաշարերը, տիկնիկները և այլն:

Կրակտուն-գլխատանը մինչև XX դ. առաջին քառորդը պահպանվում էին անթեղը վառ պահելու սովորությունները: Ընդ որում՝ գոմի օղայի բուխարիի անթեղի հսկողությունը համարվում էր տան նահապետի, իսկ գլխատան թոնրի անթեղինը՝ նրա կնոջ պարտականությունը: Տանտիկնոջ խոհանոցային ամբողջ աշխատանքները կենտրոնացած էին թոնրի շուրջը, իսկ նահա-

<sup>32</sup> Գ. Արվանձտյանց. 1982, հ. 2, էջ 254:

պետը ցուրտ ժամանակ իր օրն անցկացնում էր գոմասենյակի բուխարիկի շուրջը:

Գլխատունը, որպես ծիսապաշտամունքային կենտրոն, «սուրբ օջախ», համարվում էր հիմնականում բնակավայրի հիմնախնդիրների համայնքային մակարդակով գործունեություն վարած նշանավոր տոհմերի կամ ընտանիքների տները: Նման «սուրբ օջախներն» այն գյուղերում, որտեղ եկեղեցի չկար, փաստորեն, փոխարինում էին նրան՝ իրենց վրա վերցնելով պսակի ծիսակատարությունը: Ուշագրավ է, որ թոնիրն էլ օջախին համագոր հանդես էր գալիս որպես ընտանեկան ծեսերի և արարողությունների կենտրոնավայր<sup>33</sup>:

Ազգագրական ուշագրավ ուսումնասիրությունների համաձայն՝ գլխատունը նաև յուրատեսակ ծիսապաշտամունքային կենտրոն էր: Բուն տան հողաթումբ վերնատունն իր կրակարանով (թոնիր) համապատասխանում է եկեղեցու բեմին (համտ. Սուրբ Էջմիածնի մայր տաճարի բեմի տակ պեղված ատրուշանը), ըստ որում՝ թոնրի շուրջը նաև կնունք ու պսակ է արարվել՝ ինչպես եկեղեցում, որով պաշտամունքային արմատները ձգվում են բնապաշտական, հեթանոսական ժամանակների խորքը՝ կապված կրակի սրբագործող ուժի հետ<sup>34</sup>: Տան նահապետի և տանտիկնոջ կողմից կրակի պահպանման դերով էր պայմանավորված այն՝ այս գույգը քնում էր թոնրի մոտ<sup>35</sup>, որպիսի երևույթը Ստ. Լիսիցյանը համեմատել է հույների տանտիրուհու հատուկ ննջարանի հետ<sup>36</sup>: Միջին դարերից ցայսօր թոնիրները, որպես հացթուխի կրակարան, տարածված են ամենուրեք, բացի Սասնա լեռնային շրջաններից: Հ. Մարությանը ուշագրավ մի հողվածում անդրադարձել է «տան սրբերի» նարեկների, ավետարանների, խաչերի, շուշպանների՝ հայկական գերդաստանական տներում ընդունված պաշտամունքներին<sup>37</sup>:

Գործառույթային առումով գլխատները ժողովրդի կյանքում մեծ դեր են խաղացել: Տարվա մեծ մասը բնակչությունն անցկացնում էր այս հարկաբաժնում կազմակերպելով բազմաթիվ միջոցառումներ: Գլխատունը նախևառաջ կանանց, իսկ գոմի օդան տղամարդկանց հավաքատեղին էր: Կանայք իրենց տնային ամբողջ տնտեսությունն ու տնայնագործական աշխատանքների զգալի մասը (գորգագործություն, կարպետագործություն, խսիրագործություն, բրդի մշակում և այլն) կատարում էին գլխատանն ու զուգահեռ սրահում կամ շվաքում, ցերեկը երբեմն նաև գոմի օդայում:

Գլխատունը միակ խոհանոցն էր, որտեղ պատրաստում էին բոլոր կերակուրներն ու թխում հացը: Այն նաև կանանց սեղանատունն էր, զրուցարանն ու երեխաների խաղարանը:

<sup>33</sup> Ե. Լալայան. 1898, էջ 98, 159, И. Петрушевский. 1930, с. 4.

<sup>34</sup> С. Лисициан. 1955, с. 208.

<sup>35</sup> Թոնիրը վկայված է դեռևս ուրարտական շրջանից: Ուրարտում կային թե՛ թաղվող և թե՛ գետներեսյա թոնիրներ (Б. Б. Пиотровский. 1950, с. 24): Արտաշատում գտնվել են հացթուխի և երկաթագործի թոնիրներ՝ II դ. Ք. ա. – III դ. Ք. հ. (Ф. И. Тер-Мартirosов. 1975, с. 70–84):

<sup>36</sup> С. Лисициан. 1926, с. 64.

<sup>37</sup> Հ. Մարության. 2001, էջ 337–346:

Գոմի օդաների փոքրածավալ լինելու դեպքում ընտանեկան խրախճանքները, գյուղական ընդհանուր ժողովները և գուսանական ելույթների ունկնդրումները տեղի էին ունենում գլխատներում: Եվ, վերջապես, այն բոլոր շրջաններում, որտեղ գոմի օդաները զբաղեցնում էին մշակներն ու հյուրերը, գլխատունը գերդաստանի ննջարանն էր: Հողե հատակին լայնորեն օգտագործվում էին խոնավությունը մեկուսացնող խսիրներ:

Բացառիկ դեպքերում, սակայն, երևում էին տախտակե հատակով շքեղ ննջարան-օթավաններ, հյուրասենյակներ, դրսից առանձին մուտքով, հարթ ծածկով, պատուհաններով, որոնք ծածկվում էին ձեթոտված թղթով:

Ընդհանրապես, գլխատունը կապվում է ընտանեկան համայնքների՝ գերդաստանական տների առկայության հետ՝ համարվելով դրան բնորոշ բնակարանի տիպ<sup>38</sup>: Հատկանշական է, որ «տուն» արտահայտությունը հայերի մեջ ունեցել է ոչ միայն նյութական միավորի նշանակություն, այլև սոցիալական խմբի՝ տոհմի կամ ընտանիքի<sup>39</sup>: Մեծ ընտանիքները կամ գերդաստանները XIX դարավերջին և XX դարասկզբին դեռևս շարունակում էին կայուն կերպով պահպանվել Հայաստանի ավանդապահ շրջաններում<sup>40</sup>: Սակայն արդեն XIX դ. վերջերից, կապիտալիստական հարաբերությունների տարածմանը զուգընթաց, գերդաստանները տրոհվում էին, որով վերանում էր նաև խոշոր գլխատների անհրաժեշտությունը: Այդ գործընթացն ավելի արագ էր ընթանում հատկապես Արարատյան հովտում և նախալեռնային որոշ շրջաններում, ավելի դանդաղ՝ լեռնային շրջաններում: Եվ պատահական չէ, որ Շիրակում մեծ չափեր ունեցող գլխատներն ավելի շատ էին, քան Արարատյան դաշտավայրում:

Իսկ ինչպե՞ս են անդրադարձել տնտեսության ձևերն ու բնույթը բնակարանային համակառուցի վրա: Տնտեսական գործունեությունը լայնորեն ազդել է բնակարանի բովանդակ գոյություն, դրա ձևերի, բնույթի վրա՝ ժամանակագրական և ազգագրական առանձնահատկություններով հանդերձ: Տնտեսական գործոններով պայմանավորված՝ հնավանդ միատարր կառույցը վերածվել է բարդ բազմագործառույթ բնակարանի՝ տնտեսական-արտադրական նշանակության համակառույցների հավելումով: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի բոլոր շրջաններում էլ տարածված էր գոյակից երկրագործա-անասնապահական տնտեսությունը՝ երկրագործության գերակշռությամբ: Դրանով պայմանավորված՝ կայր հիմնականում գյուղի ծայրում և սակավ դեպքերում բնակելի տան առջև էր պատրաստվում, որի կողքին հացահատիկի խրճերը կամ չամբարված ցորենը վատ եղանակից պաշտպանելու համար երեք կողմից փակ ու դիմացից բաց մի ծածկ էին սարքում «տեպ», «կապան» (Տավուշ), այլ տեղերում՝ «կալտուն» անվանումներով: Հացահատիկը պահում էին հորերում կամ տան մեջ տեղադրված ամբարներում, որոնք տարբեր ձևեր են ունեցել՝ հյուսածո-ծեփածո, կավաշեն, փայտե: Առանձին շենք՝ ամբարտուն, առավել շատ գրանցվել է Շիրակում: Պետք է կարծել, որ

<sup>38</sup> Զ. Կարապետյան. 1958, с. 69; Թ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2004, էջ 43–51:

<sup>39</sup> Н. Джавахов. 1905, с. 84–89.

<sup>40</sup> Զ. Կարապետյան. 1958, с. 133–134; Թ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2004, էջ 60–72:

քարե պատերով ամբարներ եղել են նաև Ջավախքում: Եվ դա պատահական չէ: Նշված շրջանները դաշտավարական կարևոր կենտրոններ էին<sup>41</sup>:

Ինչ վերաբերում է անասնապահական տնտեսությունը, ապա դրա գոյությունը է պայմանավորված սեզոնային բնակավայրերի ու բնակարանների, ինչպես նաև մի շարք այլ կառույցների առկայությունը հիմնական բնակարանային համալիրներում գոմ, փարախ, մարագ: Չանդրադառնալով դրանց կառուցվածքային առանձնահատկություններին՝ մատնանշենք այն փաստը, որն արտահայտվել է նաև գրականության մեջ, որ արևմտահայերի ու արևելահայերի գոմերի հորինվածքային և ներսույթի կառուցվածքները տարբեր էին: Վերջինների համեմատ՝ առաջինները նշվում են որպես մեծ չափեր ունեցող և ճարտարապետությունը ավելի աչքի ընկնող<sup>42</sup>: Այդ երևույթի բացատրությունը կարելի է գտնել անասնապահության բնույթի մեջ: Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի գյուղերում անասունը երկարատև ձմեռվա ընթացքում պահվել է բնակավայրում, գլխատանը կից կառուցված գոմում: Հակառակ դրան՝ Տավուշում, Լոռիում, Ջանգեղուքում և Արցախում ձմռանը անասունը հիմնականում պահվել է գյուղից հեռու գտնվող ձմեռանոցներում, որտեղ կառուցվում էին գոմ ու բնակելի շենք<sup>43</sup>: Եվ բնական է, որ հիմնական գյուղում գտնվող անասնաշենքերին պատշաճ ուշադրություն չէր դարձվում: Եվ գուցե այս հանգամանքով էր պայմանավորված նաև այն, որ նշված շրջաններում գոմի օդան չզարգացավ:

Արարատյան հովտում և Մեղրիում, որտեղ զարգացած էր այգեգործությունն ու խաղողագործությունը, բնակարանային համալիրում ներառված էր հնձանը (չիրխանա), որը մնացած շրջաններում բացակայում է:

Բնակարանների տիպերի ու դրանց որոշ առանձնահատկությունների ձևավորման վրա ազդել են բնակչության տեղաշարժերը, ներէթնիկական խմբերի և միջէթնիկական հարաբերությունները:

Շիրակի, Գեղարքունիքի, Ջավախքի բնակարանային տիպերը կրկնություն են Բարձր Հայքի բնակարանային համալիրների, որտեղից 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո զգալի թվով հայեր գաղթել ու բնակություն են հաստատել այս շրջաններում՝ հարազատությունը պահպանելով իրենց նախկին բնակարանների ճարտարապետական լուծումները, որոնք միանգամայն համապատասխանում էին նոր բնակավայրի աշխարհագրական ու կլիմայական պայմաններին, առկա շինանյութին<sup>44</sup>: Դա, անշուշտ, այդպես է, եթե հաշվի առնենք, որ XIX դ. սկզբին այդ շրջաններում հայ բնակչությունը համարյա չէր մնացել, և դժվար է ասել, թե նախկինում բնակարաններն այստեղ ինչ տիպի են եղել: Բարձր Հայքին բնորոշ շենքերը բաղկացած էին երեք հիմնական մասից. ա) շվաք, բ) տուն և գ) գոմ, որոնք

<sup>41</sup> Ախալքալակի շրջանի Կարգախ գյուղի մասին Կ. Գրիգորովը գրում է. «Յուրաքանչյուր տանտեր ուներ մարագ, խոտանոց, կալ, աթարանոց և հացի ամբար, որը հաճախ հիմնվում էր տան մեջ» (К. Григоров. 1893, вып. XVII, с. 93): Նշանակում է՝ դրսում եղել է նաև քարե պատերով ամբար:

<sup>42</sup> Народы Кавказа, 1962, т. II, с. 498; Т. А. Чиковани. 1971, с. 46.

<sup>43</sup> Ю. И. Мкртумян. 1974, с. 46–47.

<sup>44</sup> Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն. 1941, հ. II, էջ 203, С. Д. Лисициан. 1927, с. 55–70.

միասին կազմում են քառանկյուն մի կառույց, *ի. Սամուելյանի ներկայացմամբ՝ նման «տձև ամրափակ արկղի»<sup>45</sup>*: Դրանք, ըստ գիտնականի դիտարկումների, նախնական շրջանում եղել են գետնափոր, XIX–XX դդ. սկզբներին՝ կիսագետնափոր, շատ դեպքերում երեք պատերն ամբողջովին սարի լանջի մեջ թաղված, իսկ չորրորդ՝ առաջակողմինը, գետնի երեսից չարված: XX դ. առաջին տասնամյակներին ամբողջ կառույցը գետներեսյա էր: Ճակատային պատը խնամքով և տաշված քարերով էր շարված:

Գլխատան տիպը բնորոշ է միայն հայերին: Վրաստանում այն տարածված է հայերով բնակեցված շրջաններում: Ազրբեջանում «ղարաղամ» կառուցում էին հայերը<sup>46</sup>:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հայերն Անդրկովկասում չփվել են վրացիների, կովկասյան թաթարների, քրդերի ու պարսիկների հետ: Գլխատան տիպի տները որոշ չափով բնորոշ էին նաև հարևան երկրների հայաշատ վայրերին, և դա համարվում է հայերից եկվորների ընդհանուր ձևաբանումը, ինչը մշակութային-պատմական երկարատև կապերի հետևանք էր<sup>47</sup>: Գրականության մեջ, սակայն, կան նյութեր, որոնք վկայում են, որ XIX դ., հատկապես Արցախում և հարակից շրջաններում, թաթարների համար «ղարաղամներ» կառուցում էին հայ վարպետները<sup>48</sup>: Ինչ վերաբերում է քրդերի շրջանում գլխատների տարածմանը, ապա այն համարվում է փոխառություն հայերից, և առավելապես բնորոշ էր Հայաստանի տարածքում ապրող քրդերին<sup>49</sup>:

Համանման տարբերակներ Լոռիում արձանագրել է Ե. Լալայանը<sup>50</sup>: Նա մատնանշել է նաև հայ-պարսկական փոխազդեցությունների մասին Նախիջևանի գավառում, որտեղ բնորոշ էր փողոցից տների մեկուսացումը<sup>51</sup>:

Ճամբարակում գրանցվել են փայտաշեն տներ. մի բան, որ ընդհանուր առմամբ հայերին բնորոշ չի եղել, բացառությամբ Սև ծովի ափերին ապրող համաշենահայերի<sup>52</sup>, որտեղ փայտաշեն տները յուրօրինակ բնակլիմայական պայմանների հետևանք են: Իսկ Ճամբարակում դրանց առկայությունը պետք է բացատրել որպես ոռոս վերաբնակիչների հետ չփման հետևանք, որոնք այդ շրջանում ապրում են XIX դ. կեսերից սկսած<sup>53</sup>:

Փոխազդեցություն է նկատվում նաև սեզոնային բնակարանների միջև: Դեռևս XIX դ. երկրորդ կեսի որոշ հեղինակներ սեզոնային բնակարանները նկարագրելիս, որպես հայերին բնորոշ տիպ նշել են քարաշեն մշտական կանգուն բնակարանը, իսկ վրանատիպ ժամանակավոր կացարանները համարվել են փոխառություն քրդերից ու թաթարներից<sup>54</sup>: Նյութերի քննությունը ցույց է տալիս, որ, իրոք, այդպես է. ինչպես հայտնի է, թաթարների մի մասը

<sup>45</sup> *ի. Սամուելյան. 1941, հ. II, էջ 199:*

<sup>46</sup> В. П. Кобычев. 1957, с. 64–66; А. Марутян. 1989, с. 71–72.

<sup>47</sup> А. Чиковани. 1971, с. 67–68.

<sup>48</sup> Н. Давидбеков. 1888, с. 180–181; С. Д. Лисициан. 1925, с. 100.

<sup>49</sup> Т. Ф. Аристова. 1966, с. 87–89.

<sup>50</sup> Ե. Լալայան. 1902, ԱՀ, դ. IX, էջ 200:

<sup>51</sup> Ե. Լալայան. 1904, ԱՀ, դ. XII:

<sup>52</sup> Հ. Մուրադյան. 1899, ԱՀ, դ. Դ:

<sup>53</sup> Հայ ժողովրդի պատմություն, 1974, հ. 5, էջ 224–225:

<sup>54</sup> П. С. Варавин. 1888, с. 26; А. Калантар. 1895, с. 93.

և քրդերի հիմնական մասը նախքան 1917 թ. հեղափոխությունը վարում էին կիսաքոչվոր և քոչվորական կյանք<sup>55</sup>: Անընդհատ տեղաշարժերի պատճառով նրանք ստիպված էին կառուցել շարժական վրանատիպ կացարաններ, մի բան, որի կարիքը հայերը գրեթե չէին զգում, որովհետև ամառանոցներում մնալով կարճատև և չունենալով ճանապարհային միջանկյալ կանգառներ՝ հիմնականում բավարարվում էին մեկ տարածքով ու տեղափոխություններ չէին կատարում: Բայց, քանի որ քրդերն ու թաթարները հաճախ էին հայերի հետ միևնույն արոտավայրերից օգտվում<sup>56</sup>, ապա բնական է ենթադրել՝ հայերը նրանցից փոխառած լինեն բնակարանի նշված տիպը: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ վրանատիպ կացարանի ձևերը հայերի մեջ կոչվում էին միայն օտար անվանումներով: Հայտնի են նաև դեպքեր, երբ թաթարական որոշ ընտանիքներ հայերի օրինակով ամառանոցներում կառուցել են մշտական բնակարաններ:

XIX դ. վերջին որոշ քաղաքների հետ ավելի սերտ շփում ունեցող շրջաններում (Արցախ, Զանգեզուր, Այրարատ, Լոռի) որպես նոր երևույթ սկսեց տարածում գտնել «օթախ» կոչված հյուրասենյակը, որը համարվում էր ունևորություն չափանիշ: Այդուհանդերձ, այն եզակի երևույթ էր, ուստի և գերակշռող շարունակում էր մնալ գլխատունը:

### Եզրակացություն

Պատմական Հայաստանի երկու հատվածներում ի սկզբանե մինչև XIX դ. վերջը և XX դ. սկզբները բնակարանային համալիրի ամենալայն տարածում գտած տիպը գլխատունն է: Բնակարանի այդ ձևը տարածված է եղել նաև Հայաստանի հարևան երկրներում, որոնցում հայ բնակչության թիվը զգալի էր:

Պատմական Հայաստանի բնակլիմայական ու աշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունը, տնտեսական զբաղմունքների բնույթը, վառելանյութի և շինանյութի հնարավորությունները, ազգային մտածողությունն ու դարավոր ավանդույթները, երկրի ռազմաքաղաքական վիճակը, բնակչության սոցիալական շերտավորման աստիճանը, հարևան ժողովուրդների հետ շփումներն իրենց ազդեցությունն են թողել հայ ժողովրդական բնակարանային համալիրի տեղանքի, չափսերի, բաղադրատարրերի հարաբերակցության, կառուցվածքային հորինվածքի և ներսույթի կազմակերպման յուրահատկությունների ձևավորման վրա:

Մասնավորապես, գերդաստանական մեծ ընտանիքներով ապրելու դարավոր ավանդույթով պայմանավորված՝ գլխատները կառուցվում էին մեծ մակերեսներով, քանզի դրանք բազմագործառույթ էին: Հատկապես Արևմտյան Հայաստանում կյանքի անապահովվածությունն ու մշտական կողոպուտները հարկադրել են մարդկանց համախմբված ապրել: Գլխատուն հարկաբաժինը ներառում էր գերդաստանի ննջարանը, խոհանոցը, սեղանա-

<sup>55</sup> Народы Кавказа, 1962, т. II, с. 104, 603.

<sup>56</sup> П. С. Варавин. 1888, с. 123–124; А. Д. Ерицов. 1856, с. 26; С. П. Зенский. 1885, т. I, с.

տունը, աշխատանոցը, զրուցարանը և ընտանեկան ու համայնքային հանդիսությունների, հոգևոր արարողությունների անցկացման վայր էր:

Պատմական Հայաստանում XIX դարում և XX դարի սկզբներին երկրի ներսի ու դրսի այլազգի թշնամական տարրերի ալան-թալանից մշտապես սպառնացող վտանգը հայ մարդուն հարկադրել է բնակարանը տնտեսա-արտադրական շինություններով հիմնել մեկ ծածկի տակ՝ դարձնելով յուրատեսակ ռազմական ամրոց: Հորինվածքային լուծումներով փակ համալիրը համապատասխանել է հիմնականում արևմտահայկական ու արևմտահայերով բնակեցված արևելահայկական բնակավայրերին, իսկ ազատ և բաց համալիրները բնակլիմայական մեղմ պայմանների ու ազգային ավանդույթի արդյունք էին:

Ռաֆիկ Նահապետյան – պ. գ. դ., ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ Հայ ազգագրություն, հայ ազգագրության պատմություն: Հեղինակ է 9 մենագրության, 4 ուսումնական ձեռնարկի և 180 հոդվածի: rafiknahapetyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Խ. 1961, Գյուղական տների կառուցվածքը. Երկեր, հ. 10, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, էջ 59–96:

«Բարոն Օ. Հաքստհաուզենի ճանապարհորդությունից».–«Կռունկ հայոց աշխարհի» (Թիֆլիս), 1862, թիվ 1, էջ 20–33:

Բդոյան Վ. 1974, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 288 էջ:

Բդոյան Վ. 1963, հ. 1, Հայ ժողովրդական խաղեր, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 295 էջ:

«Էմինեան ազգագրական ժողովածու», 1902, հ. Գ, Մոսկվա–Վաղարշապատ, 381 էջ:

Լալայան Ե. ԱՀ, 1896, գ. Ա, Ջավախք.– Ազգային գրական հանդես, Շուշի, տպ. Ա. Մահտեսի-Հակոբեանց, էջ 224–226:

Լալայան Ե. 1898, Վարանդա: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռոտինեանցի, էջ 21–25:

Լալայան Ե. ԱՀ, 1902, գ. IX, Բորչալուի գավառ, Թիֆլիս, էջ 197–204:

Լալայան Ե. ԱՀ, 1904, գ. XII, Նախիջևանի գավառ, Թիֆլիս, էջ 109–111:

Լիսիցյան Ստ. 1969, Ջանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 96–114:

Կարապետյան Ե. 1962, Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, էջ 46–56: Համառոտ բառարան պարսկերեն–հայերեն, 1858, Բ, Վիեննա, 874 էջ:

Հակոբյան Հովհ. 1934, հ. 2, Ուղեգրություններ, ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800–1820), Երևան, Պետհրատ, 278 էջ:

Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրությունը, 1971, Երևան, 469 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, 1974, հ. 5, Երևան, 683 էջ:

Պատմաբանափորձիկական հանրագիտական 2021 № 3 Историко-филологический журнал



Մարության Հ. 2001, «Տան սուրբ» երկույթը, ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները.– Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 337–346 :

Մուրադյան Հ. ԱՀ, 1899, գ. Դ, № 2, Հանչենի հայեր, Թիֆլիս, էջ 123–128:

Նահապետյան Ռ. 2021, № 1, Գլխատան ավանդույթային տիպերը Արևելյան Հայաստանում (XIX դար – XX դարասկիզբ).– «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», էջ 25–40:

Նահապետյան Ռ. 2020, թիվ 2, Հայկական լեռնաշխարհը բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն.– «Պատմություն և քաղաքականություն» (գիտական հանդես) (Երևան), էջ 96–108:

Նահապետյան Ռ. 2020, գիրք 3, Հայկական ժողովրդական բնակարանի ազգագրական ուսումնասիրության շուրջ.– Ազգաբանական ուսումնասիրություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:

Նահապետյան Ռ. 2004, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, էջ 42–51:

Նահապետյան Ռ. 2019, գիրք 2, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական և գիտակազմակերպչական գործունեության էջերից.– Ազգաբանական ուսումնասիրություններ, Երևան, 328 էջ:

Պապուխյան Ն. 1972, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, էջ 168:

Պետոյան Վ. 1965, Սասնա ազգագրություն, Երևան, էջ 188–206:

Սամուելյան Խ. 1941, հ. II, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, էջ 191–236:

Սարգսյան Լ. 1890, Այց Թիւրքաց Հայաստանին, Թիֆլիս, 82 էջ:

Սրվանձտյան Գ. 1982, հ. 2, Երկեր, Երևան, 254 էջ:

Վարդանյան Ս. 1959, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, Հայպետհրատ, 131 էջ:

Վարդումյան Դ. 2004, № 2, Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի բնութագրությունը.– ՊԲՀ, էջ 48–64:

Տեր-Մովսիսյան Մ. 1894, Հայ գյուղական տունը, Վիեննա, 84 էջ:

Քսենոփոն. 1970, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 282 էջ:

Օհանյան Վ. 1977, Հայկական ՍՍՀ ֆիզիկա-աշխարհագրական շրջանացումը, Երևան, էջ 266–269:

Аристова Т. Ф. 1966, Курды Закавказья. М., «Наука», 214 с.

Варданян Л. 1981, Традиции мужских возрастных групп у армян (конец XIX – начало XX вв.).– Армянская этнография и фольклор (АЭФ). Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, вып. 42, с. 87–142.

Варавин П. С. 1888, Летние и зимние пастбища Закавказского края.–Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. V. Тифлис.

Витов В. 1953, О классификации поселений.– «Советская этнография» (СА) (М.). № 3, с. 27–38.

Григоров К. 1893, Селение Карзах Ахалкалакского уезда Тифлисской губернии.– Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. XVII. Тифлис.

Давидбеков Н. 1888, Село Гадрут Елисаветпольской губернии Джебраильского уезда. – СМОМПК, вып. VI, с. 180–181.

Джавахов Н. 1905, Государственный строй древней Грузии и древней Армении. СПб., Тип. Имп. акад. наук, 153 с.

Ерицов А. Д. 1856, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губернии. – Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК), т. II. Тифлис.

Зеленский С. П. 1885, Экономический быт государственных крестьян в Шорагяло Александропольского уезда Эриванской губернии. – МИЭБГКЗК, т. I.

Карапетян Э. 1958, Армянская семейная община. Ереван, Изд. АН АрмССР, 143 с.

Калантар А. 1895, Алагязские казенные летние пастбища Александропольского и Эчмиадзинского уездов Эриванской губернии. – Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе, т. III. Тифлис.

Кобычев В. П. 1957, Жилище народов Восточного Закавказья в XIX в.– СЭ, № 3, с. 64–66.

Кобычев В. П., А. Н. Робакидзе. 1967, Основы типологии и картографирования жилища народов Кавказа (материалы к кавказскому историко-этнографическому атласу). – СЭ, № 2. с. 26–44.

Лисициан С. 1925, К изучению армянских крестьянских жилищ (карабахский карадам).– «Известия кавказского историко-археологического института» (ИКИАИ) (Тифлис), т. III, с. 97–108.

Лисициан С. 1927, Из материалов по изучению жилищ Армении. Крестьянское жилище Мегринского района. – ИКИАИ, т. V, с.119–133.

Лисициан С. 1955, Очерки этнографии дореволюционной Армении.– «Кавказский этнографический сборник» (М.), № 1 (новая серия), т. XXVI, с. 182–264.

Лисициан С. 1927, Из материалов по изучению жилищ Армении. «Нор-Баязетский азарашенк и заметки о крестьянских жилищах соседних районов– Тамбовского и Даралагязского». – ИКИАИ, т. VI, с.133–140.

Лисициан С. 1926, Крестьянское жилище Высокой Армении. – ИКИАИ, т. IV, с. 55–70.

Марутян А. 1989, Интерьер армянского народного жилища (вторая половина XIX – начало XX в.).– АЭФ, вып. 17, с. 63–142.

Марутян А. 1990, Город Ахалцха. Вопросы этнической истории и традиционного жилища.– «Вестник общественных наук» АН АрмССР, № 6, с. 19–33.

Марутян А. 2012, Поселения и жилища.– Армяне. Серия «Народы и культуры». М., «Наука», с. 205–232.

Мкртумян Ю. И. 1983, Сельское жилище армян.– Культура жизнеобеспечения и этнос. Ереван, Изд. АН АрмССР, с. 150–188.

Мкртумян Ю. И. 1974, Формы скотоводства в Восточной Армении.– АЭФ, вып. 6, с. 7–90.

Народы Кавказа. 1962, т. II. М., Изд. АН СССР, 967 с.

Орбели И. А. 2002, Избранные труды в двух томах, т. II. Ереван, «Зангак», 208 с.

Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, 1836, т. 4, СПб., 401 с.

Пантюхов И. 1896, О пещерных и позднейших жилищах на Кавказе. Тифлис, Тип. М. Д. Ротинианца, 142 с.

Петрушевский И. 1930, О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха, т. 1, вып. 5. Баку, Изд. АзГНИИ, 43 с.

Пиотровский Б. Б. 1950, Кармир-блур. Ереван, Изд. АН АрмССР, 100 с.

Тер-Мартirosов Ф. И. 1975, Античные печи из раскопок Арташата. – «Вестник общественных наук» АН АрмССР, № 7, с. 70–84.

Чиковани Т. А. 1971, Классификация и генезис закавказского жилища со ступенчато-венцеобразным перекрытием. – Хозяйство и материальная культура народов Кавказа XIX – XX вв., вып. 1. М., «Наука», с. 33–37.

Чиковани Т. А. 1964, Опыт сравнительного изучения жилищ типа «дарбази». – VII Международный конгресс антропологических и этнографических наук. М.

Шагинян М. 1926, Армянская деревня. – «Известия» ЦИК СССР (М.), № 161, 162.

Яacobсон А. 1950, Очерк истории зодчества Армении в V–XVIII в. М.–Л., Гос. Изд. архитектуры и градостроительства, 163 с.

## О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ АРМЯНСКИХ НАРОДНЫХ ТРАДИЦИОННЫХ ЖИЛИЩНЫХ КОМПЛЕКСОВ (XIX век – начало XX века)

РАФИК НААПЕТЯН

Р е з ю м е

*Ключевые слова:* Западная Армения, Восточная Армения, ода, азарашен, землянка, план.

Исследование исторических данных и имеющихся под рукой полевых этнографических материалов показывает, что в двух частях исторической Армении изначально до конца XIX в. и начала XX в. наиболее широко распространенным типом жилищного комплекса является головной дом. Это обстоятельство свидетельствует об однородности армянского населения с незапамятных времен. Данная форма жилища была также распространена в соседних с Арменией странах, в которых армянское население было многочисленным.

Большое разнообразие природно-климатических и географических условий исторической Армении, характер экономических занятий, возможности пахотных земель и строительного материала, национальный мен-

талитет и многовековые традиции, военно-политическое положение страны, степень социального расслоения общества, контакты с соседними странами оказали влияние на местоположение, размеры армянского народного жилищного комплекса, соотношение составляющих элементов, структурную композицию и формирование особенностей организации интерьера.

В частности, в связи с многовековой традицией жить большими родовыми семьями, головные дома строились с внушительными площадями, поскольку они были многофункциональными. Особенно в Западной Армении необеспеченность жизни и постоянные грабежи заставляли людей жить сплоченно. Головной дом включал в себя спальню семейства, кухню, столовую, мастерскую, беседку и служил местом для проведения семейных и общинных торжеств, духовных церемоний.

*Рафик Наапетян – д. и. н., проф. кафедры археологии и этнографии исторического факультета ЕГУ. Научные интересы: армянская этнография, история армянской этнографии. Автор 9 монографий, 4 учебных пособий и 180 статей. rafiknahapetyan@mail.ru*

ON SOME FEATURES OF THE ARMENIAN PEOPLE'S  
HOUSING COMPLEXES  
(the 19th – the early 20th)

RAFIK NAHAPETYAN

S u m m a r y

*Key words: Western Armenia, Eastern Armenia, oda (head house), hazarashen, dugout, plan.*

In the article, the author, on the basis of historical materials and materials of field ethnographic research at hand, shows that in two parts of historical Armenia, initially before the end of the 19th century. and the beginning of the 20<sup>th</sup> century. the most widespread type of housing complex is the head house. This circumstance testifies to the homogeneity of the Armenian population since time immemorial. This form of dwelling was also widespread in the neighboring countries of Armenia, in which there was a large number of the Armenian population.

The extreme diversity of the climatic and geographical conditions of historical Armenia, the nature of economic activities, the possibilities of arable land and building materials, the national mentality and centuries-old traditions, the military-political situation of the country, the degree of social stratification of society, contacts with neighboring countries influenced the terrain, the size of the Armenian folk housing complex, the ratio of the constituent elements, the

structural composition and the formation of the peculiarities of the organization of the interior.

In particular, due to the centuries-old tradition of living in large clan families, the head houses were built with large areas, since they were multifunctional. Especially in Western Armenia, insecurity and constant robbery made people live together. The main house included the family's bedroom, kitchen, dining room, workshop, gazebo and was a place for family and community celebrations and spiritual ceremonies.

*Rafik Nahapetyan – Doctor of Sciences in History, Professor at the YSU Department of Archaeology and Ethnography of the Faculty of History. Scientific interests: Armenian ethnography, history of Armenian ethnography. Author of 9 monographs, 4 textbooks and 180 articles.  
rafiknahapetyan@mail.ru*

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՑ ԿԵՐՏԿԱԾ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\*

ՍԻԼՎԱ ՄԻՆԱՍՅԱՆ (Արցախ)

Բանալի բառեր՝ Հովհաննես Շիրազ, հատուկ անունից կերտված նորակազմություն // նորաբանություն, կաղապար, հատուկ անունից կերտված գոյական, ածական, բայ, ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր բառույթներ, բարդ բառույթների բառահիմք, բարդությունների բաղադրիչների ձևաբանական արտահայտություն, բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերություններ:

Նախաբան

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Շիրազի ստեղծագործություններում<sup>1</sup> հատուկ անուններից (հիմնականում անձնանուն, տեղանուն) բառասերմամբ հարյուրից ավելի նոր բառույթներ<sup>2</sup> կան: Դրանք հիմնականում բազմաձևույթ հասարակ գոյական, ածական և բայ խոսքի մասեր են: Հատուկ անուններից բառասերմամբ սովորական կաղապարներ են ձևավորվել, որտեղ հնչեղութայամբ ու իմաստաբանական առանձնահատկությամբ իշխում են բայակազմական ածանցներով դրսևորվածները: Բառակազմական հարացույցում հիմնականում երկքայլությամբ, եռաքայլությամբ ձևավորվածներն են: Արարատ, Մասիս, Թոնդրակ, Հայկ, Պառնաս, Վահագն հատուկ անուններից սերված նորակազմությունները (նորակերտություն) առավել գործուն են Շիրազի ստեղծագործական համակարգում և ունեն բազմազան կաղապարներ: Սովորաբար բառակազմական հիմքերից մեկն է հատուկ անուն լինում, բացառություն է թոնդր+ա+արես (Թ, էջ 75)՝ արմատ+հոդակապ+արմատ (ԱՀԱ): Օտար Թուրան (հին միջինասիական տեղանուն) բառույթով միայն հինգ բարդություն

\* Ներկայացվել է 02. VI. 2021 թ., գրախոսվել է 12. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 10. IX. 2021 թ.:

<sup>1</sup> Հովհ. Շիրազի ստեղծագործությունների տասնմեկ հատորները թվագրվել են հետևյալ կերպ. հ. 1, 1981, հ. 2, 1982, հ. 3, 1984, հ. 4, 1986, ՀԴ (Հայոց դանթեականը), 1990, Ա (Անի), 2011, Թ (Թոնդրակեցիները), 2014, ՀՀ (Հուշարձան հայրիկիս), 2017, Ա պր. (Անտիպ էջեր, Ա պր.), 2018, Բ պր. (Անտիպ էջեր, Բ պր.), 2019, Գ պր. (Անտիպ էջեր, Գ պր.), 2020 թ.: Այսուհետ հիշյալ հատորներից և գրքերից բերված օրինակների էջերը կնշվեն տեքստում:

<sup>2</sup> Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականի» հատուկ անուններից սերված մի քանի նորաբանություններ (աբելված, կայենված, երևանվել, ազրախիվել, ասորեստանվել, արարատվել, մասիսաչափ, մասիսատես, մասիսվել) գրանցված են Արա Թորոսյանի «Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորաբանությունների բառարան» գրքում (Երևան, 2010):

կա. դրանք դիպվածային են ու գեղագիտական արժևորումները քիչ թույլ թուրանահայ (Ն. 2, էջ 218), թուրանաթուր (Թ, էջ 240, 248) և այլն:

Հատուկ անուններից սերված նորակազմությունները Հովհ. Շիրազի ստեղծագործություններում հնչեղ են. հատկապես բայերը՝ իրենց ընթացականությունները ուղղորդված են գրավում: Թոնդրակ տեղանունից սերված<sup>4</sup> քառասունից ավելի բարդ բառային կա: Հատուկ անուններից սերված կաղապարներ հայոց բառապաշարում վաղուց են (երուսաղէմանալ<sup>5</sup>-խաղաղիլ), հիմա համեմատաբար ավելացել են (լինչել՝ линчевать<sup>6</sup>, դոնկիխոտանալ՝ донкихотствовать<sup>7</sup>, հոմերական<sup>8</sup> և այլն): Հատուկ անուններից սերված բառերը մեծ մասամբ ձևավորվել են գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում: Այդ տիպի բառային համակարգը Հովհ. Շիրազի ստեղծագործություններում իր կառուցվածքով տարաբնույթ է: Հատկանունների իմաստային փոխանցումները և ուղղորդված են գրավում, հանդես են գալիս որպես փոխաբերություն, փոխանունություն, խորհրդանիշ և այլն: Ավելի մեծ ճանաչում ունեն այդ տիպի անուններից՝ հուրա (դավաճան, Քրիստոսին դավաճանածը), վասակ (դավաճան՝ Վասակ Սյունեցու նմանը. հայ ազգի համար ատելի՝ վասակյաններ (Ա, էջ 195, Թ, էջ 158), Վասակ (Թ, էջ 43, 262), վասակյանք (նույն տեղում, էջ 276), նոր Վասակ (Ա պր., էջ 94), ձեզ վասակ պիտի ասեմ (նույն տեղում, էջ 179), վասակներ (նույն տեղում, էջ 191), իշխանավոր վասակները (Բ պր., էջ 77), պիտի մարես վասակովդ անդեմ (նույն տեղում, էջ 101), նոր վասակ (Գ պր., էջ 137), աբել՝ անմեղ տուժած (Ծովերին ի՞նչ, թե մորթեց Կայենն Աբել-հայերին (Բ պր., էջ 110. Կայեն՝ թուրք), Աբելներս (նույն տեղում, էջ 111), Աբելները դեռ խոցված (նույն տեղում, էջ 158) և այլն: Եղեռնի կազմակերպիչների անունները Հ. Շիրազը որպես շների անուններ է գործածել և փոքրատառով գրել «Ահեղ դատաստան» բանաստեղծությունում [Ա պր., էջ 196 (համիդ, էնվեր և այլն)]:

Մի շարք ձևեր բառատարբերակներ են, որոնք ուղղակի գեղագիտական խոսքում տաղաչափական նպատակին են ծառայել [հիմքի, հողակապի (ներույթ) կիրառություններ], ինչպես՝ Աա// (Աա)ա՝ թոնդր<sup>+</sup>ուհի (Թ, էջ 117)// թոնդր<sup>+</sup>ակ<sup>+</sup>ուհի (Ն. 3, էջ 149, Թ, էջ 69, 110, 130, 187, 205, 209), Ա(աա)// (Աա)(աա)՝ Թոնդր<sup>+</sup>(աց<sup>+</sup>ի) (Թ, էջ 71)// (թոնդր<sup>+</sup>ակ<sup>+</sup>)(եց<sup>+</sup>ի) (նույն տեղում, էջ 184), արմատ<sup>+</sup>արմատ / արմատ<sup>+</sup>հողակապ<sup>+</sup>արմատ՝ թոնդր<sup>+</sup>աղանդ (նույն տեղում, էջ 48)// թոնդր<sup>+</sup>ա<sup>+</sup>աղանդ (նույն տեղում, էջ 131) և այլն:

Հատուկ անուններից սերված նորակազմությունները Հովհ. Շիրազի չափածոյում բառակազմական տարբեր կաղապարներով են դրսևորվել, որտեղ բառայինների ձևաբանական կառուցվածքների մեծ մասն ածանցայինն է: Դրանց ձևաբանական բանաձևերում գործածել ենք հայատառ՝ խորհրդանիշները:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Մինայան. 2004:

<sup>4</sup> Ս. Ա. Մինայան. 2019:

<sup>5</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1979, Ն. I, էջ 703:

<sup>6</sup> Ռուս-հայերեն բառարան, 1954–1958, Ն. I–IV, Ն. II, էջ 167–168:

<sup>7</sup> Н. С. Ашукин, М. Г. Ашукина. 1988, с. 105.

<sup>8</sup> Է. Բ. Աղայան. 1976, էջ 892:

<sup>9</sup> Է. Բ. Աղայան. 1967, էջ 146:

**I. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԿԵՐՏՎԱԾ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱ-ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ**

Հատուկ անուններից սերված ածանցավոր բառույթների կաղապարները Հովհ. Շիրազի ստեղծագործություններում քսանի են հասնում: Այս տիպի կառույցներում ածանցները պարզ ու բաղադրյալ են (երբեմն ածանցավոր բաղադրյալ բառն է հավելվել հատուկ անվանը, այսինքն՝ հատուկ անունից բառասերման գործընթացին ածանցը չի մասնակցել): Հոդակապի (ներույթ) կիրառությունը բարեհնչյունություն համար հայերենի օրինաչափություններով է գործել:

**Ա. ՊԱՐԶ ԱԾԱՆՑԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ:** Հատուկ անունից սերված նորակազմ բաղադրյալ կառույցներում իշխում են բարդ ու ածանցավոր տիպի բառույթները: Բարդը, ածանցավորի համեմատությամբ, քիչ է: Պարզ հատուկ անվանը համադրվել են տարբեր ածանցներ: Ա/ԿԱՆ և մի քանի այլ բառակազմական երկրորդական ձևույթներով ու հատուկ անվամբ կառուցված բառեր նշված են միայն Հ. Բարսեղյանի բառարանում<sup>10</sup> դանթեական և այլն, որին չենք անդրադարձել, միայն Հայկ անունից սերվածն ենք գործածել, քանի որ իմաստային տարբերություն է զգացվում:

Քննվող համակարգում գերակայում են վերջաձայնները: Նախաձայններից միայն մեկն է՝ ՆԱԽ/Ա-, որը համադրվել է վերջաձայնավոր հիմքին (ԱՀա՝ իսլամ+ա+կան)՝ աՀ (ԱՀա)՝ նախ+ա+իսլամ+ա+կան (Գ պր., էջ 5):

**ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ**

ա) – ԱԾ գոյականակերտ բառակազմական երկրորդական ձևույթը համադրվել է Թոնդրակ հիմքին ու ձևք բերել «սովյալ տեղանքում կատարված գործողությունը իբրև հատկանիշ» իմաստը, որը կարող է մեկնաբանվել որպես առաջադիմական ընկալվող, բայց հայություն կենտրոնացմանը վնասած՝ Աա՝ Թոնդր-ած/ներ (Թոնդրակացածներին, Թ, էջ 244 ժողվե Թոնդրածներին):

բ) – Ա+ԿԱՆ՝ (ԱԱ)հա՝ (Շիր/ակ+ագ/ն)՝ (չիր+ագ)+ա/կան՝ շիրազականներից (Գ պր., էջ 182), շիրազականներ (նույն տեղում, էջ 253, 255, 286):

գ) Ան- նախաձայն՝ ածանց+արմատ համադրվել է պարզ հատուկ օտար՝ համաշխարհային ճանաչում ունեցող անուններին՝ ան+պառնաս (Բ պր., էջ 194), ան+քարոն (Հ Դ, էջ 39), ան+հիսուս (նույն տեղում, էջ 122):

դ) – ԵՆ բայակերտ բառակազմական երկրորդական ձևույթը համադրվել է հատուկ անվան բառարմատին՝ Թոնդր(ակ)՝ Թոնդր+ել (Թ, էջ 44), մուշ/մշ+ել (Հ Դ, էջ 123), Մուշս այնտեղ է լուռ մշել (Բ պր., էջ 166), պառնաս+ել՝ Քեզ Մասիսիդ պառնասի՛ր ... Երգի (բանաստեղծություն – Ս. Մ) սով է Պառնասում ... Սով է հայոց Պառնասում...Քեզ պառնասի՛ր այն լյառը, նրա հետ մասիսիս (նույն տեղում, էջ 20): Բաղադրյալ հատուկ անվանը համադրված կառույց (ածանցավոր բառահիմք). (Ա+ա)+ա՝ (հայ)+կ<sup>11</sup> (ուկ/իկ)+ել (հ. 1, էջ 234), Բանտից հանեմ Մեծ Հայաստանն այս ազատված Փոքրիս խառնեմ // Գրկելով հողն իմ բովանդակ՝ հայկեմ Անին ու նոր մեռնեմ (հ. 2, էջ 327, Ա, էջ 306): (Թոնդր+ակ)+ել (Թ, էջ 94, 248): Բարդ բառահիմքին՝

<sup>10</sup> Հ. Խ. Բարսեղյան. 1973, էջ 245:

<sup>11</sup> Այս անունը համարում են չստուգաբանված:



Տիգրանակերտին համադրվել է բայակերտ պարզ –ել ածանցը (հազվադեպ)՝ [(տիգրան) +ա+ (կերտ)]+ել՝ արտահայտելով ընթացականություն, շարժում՝ մայրաքաղաք դարձնելու աշխատանք, որպես երկիր՝ բարգավաճելու հնարավորություն՝ Բայց հայոց հողում տիգրանակերտեց իր մայր ուստանը (հ. 2, էջ 200): Դեր-Ձոր՝ դերգորել՝ Դեր-Ձորի անապատը դառնալ, բնակչությունը ոչնչանալ (ՀԴ, էջ 233):

ե) – Ի՛ Աա՛ լոխման+ի [Թե լոխմանի եք՝ այս ցավը կհսեք, (ՀԴ, էջ 70)՝ Լոխման բժշկի նման ցավը թեթևացնող]:

զ) – ԻԿ՝ համադրվել է ածանցավոր և բարդ հիմքերին՝ (Աա)ա՛ (թոնդր+ակ)+իկ (Թ, էջ 100), (ԱՀԱ)ա՛ (թոնդր+ա+գլխ)+իկ (նույն տեղում, էջ 72):

է) – ՅԱ՛ Աա՛ Վահագն+յա՛ (հ. 3, էջ 169), (ՀԴ, էջ 250): (Աա)ա՛ (թոնդր+ակ)+յա՛ (Թ, էջ 75, 158, 196, 302):

ը) – ՅԱ՛Ն՝ «տվյալ հատուկ անվանը պատկանող, նրան յուրահատուկ» իմաստով Աա՛ եփրատ+յան (ՀԴ, էջ 171):

Ածանցով հատուկ անվանը կցվել է –յան վերջածանցը՝ (Աա)ա՛ (Հայ+կ)+յան<sup>12</sup> [ամենաշատ կիրառվածներից է. (հ. 1, էջ 47, 199, հ. 2, էջ 169, 172, 187), այստեղ հայկյան-ը անտեղի մեծատառ է գրված, իսկ Սլկունիքը, հայկունիքը՝ փոքրատառ], զորքն իմ հայկյան (Ա, էջ 139, 145, 171, Թ, էջ 98, 134, Բ պր., էջ 72), Ումի՞ց է պակաս անզույգն իմ հայկյան (Գ պր., էջ 106), իմ ժողովուրդը կմնա հայկյան (նույն տեղում, էջ 147), հայկյան գլուխն առյուծակերպ (Մասիսը) (նույն տեղում, էջ 205), հայկյան սոխակ (նույն տեղում, էջ 216, 250): Նա է անբախտ երազիս արքան՝ Ով ետ կբերի Մասիսը հայկյան (Գ պր., էջ 272). Մաշտոց> (մաշտ+ոց)+յան [ազգագուտ, ազգափրկիչ դեր ունեցող, սրբացող (հ. 1, էջ 234)]:

թ) – ՈՍ՝ օտար ձևից սերված (իբր այդ տեղանքից լինող մարդ)՝ Աա՛ թոնդր+ոս (թոնդրակեցի, Ա, էջ 189): (Աա)ա՛ (Հայ+կ)+ոս (հ. 2, էջ 278, 282, 327, 230, 333, ՀԴ, էջ 87, 116):

ժ) – ՈՐԵՆ՝ մակբայակերտ ածանց (հայ+կ)+որ+են (հ. 1, էջ 207, հ. 2, էջ 208, 257):

ժա) – ՎԱ՛ տեղանքի, տեսակի իմաստ է արտահայտել և սերված է հոլովաձևից. Աա՛ Գյումրի+վա (Հապա գազարը հայրիկիս՝ «չոկոլադը գյումրվա»... (հ. 4, էջ 189): Մուչ՝ (մչ+վա)+բոթ (ՀԴ, էջ 96):

ժբ) – ՈՒՀԻ՛ պարզ ածանցը կցվել է արմատին՝ Աա՛ Գյումրի+ուհի> գյումրուհի (Բ պր., էջ 64), թոնդրուհի (Թ, էջ 117), վանուհի (հ. 3, էջ 55, ՀԴ, էջ 150):

Ածանցավոր բառին կցված օրինակ է (թոնդր+ակ) +ուհի (հ. 3, էջ 149, Թ, էջ 69, 110, 130, 187, 205, 209):

Բ. ԲԱՂԱԴԻՅԱԼ ԱԾԱՆՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆԻՑ ՍԵՐՎՈՂ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: Պարզ և բաղադրյալ հատուկ անուններին համադրվել է բաղադրյալ ածանց: Իշխողը – վել (վ+ել) նոր բայակերտ բաղադրյալ ածանցն է: Այս գործընթացը կես դարից ավել է ու նորակազմություն-

<sup>12</sup> Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան»-ում նշվածն իմաստով հստակ է՝ Հայկի սերնդի՞ն, թե՞ հայուլթ-յանը: Հայկը սերված է հայ անունից (տե՛ս Հ. Ա ճ ա ո յ ա ն. 1942, հ. II, էջ 34):

ներ սերելու բնագավառում գործուն է: Հովհ. Շիրազի ստեղծագործություններում հատուկ անուններից սերված բայերում այս տիպի 36 բառ կա: Ամենաշատը գործառել է Մասիս հատուկ անունից սերված ու շատ կիրառված բայաձևը: Այն բազմիմաստ բառույթ է և ձեռք է բերել վեհանապ, սրբանապ, հայանապ, դիմացկուն լինել, հավերժանապ, ահաբանանապ, կատարյալ դառնապ, հային խորհրդանշել, հարգարժան լինել, ճերմակել իմաստները: Օրինակ՝ Աա (աա)՝ Նառն եմ հայոց իմ լեռների վեր մասիված Պառնասում, // Ինձ չեք հասնի, ուր էլ հասնեք դեռ դառնալով պոչն այլոց (հ. 1, էջ 327), Այնքան պիտի Մասիս գոռամ, միչև ես էլ մասիվեմ (նույն տեղում, էջ 359), Լեռներն ավելի վեր բռունցքվեցին, // Մեկը հիմալայվեց, Մեկը մասիվեց, // Ու մասիվելով խղ գեղեցկացավ ու վեր խոյացավ (հ. 2, էջ 81) և այլն:

ա) – Ան+ԱԼ բաղադրական-քերականական ածանցը նաև բառակազմական գործառույթ ունի (-վ/ել-ի համեմատությամբ սրա բառակազմական արժեքը նվազ է)՝ Աա (աա)՝ դանթե+(ան+ալ)՝ հանդերձյալ կյանքի աստվածաբանական գործերի նկարագրող, քննարկող դառնալ, թուրքի կատարած դազանությունները քրիստոնյաների՝ հատկապես հայերի նկատմամբ տեսած, հասկացած լինել, հայերի ցեղասպանությունը տեսած, հասկացած լինել, հայերին վշտակցող լինել. Ո՛ւր ես, ո՛վ Հիսուս, // Օ՛, հասի՛ր, թե դեռ սուրբ է հրեան, // Ե՛կ դանթեանանք, տե՛ս, թե ո՛ւմ կերան... // Ու դեռ հոշվում է հուսալով բազկիդ// Հայոց ազգն է, ահա, երկվորյակն ազգիդ (Հ Դ, էջ 42): Ա+ա (ա+ա)՝ թոնդր+(ան+ալ) (Ա, էջ 156, 233, 238, Թ, էջ 51, 53, 70, 79, 80, 225):

Քննվող ածանցը բարդ հիմքին է ավելացել բյուրակնանալ բառում (ԱԱ)ա/(աա)՝ (բյուր+ակն) +(ան+ալ) [Գ պր., էջ 149՝ պիտի բյուրակնանա սերված է Բյուրական՝ Բինգյոլ (հազար լիճ՝ լճակ)]:

բ) – ԱՅ+Ի՝ -ացի բարդ ածանցը գոյականակերտ ու ածականակերտ է՝ Աա/(աա)՝ թոնդր+(աց+ի) (Թ, էջ 71), թուրան+(աց+ի) (Ա, էջ 231):

գ) – ԱՅ+ՅԱԼ՝ սերված գրաբարյան դերբայական երկրորդական ձևույթից (թոնդր+ակ)+աց+յալ (հ. 2, էջ 91), թոնդրակացյալ նոր մեղքերով (Ա, էջ 240, Թ, էջ 200, 233, 235):

դ) – ԵՆ+Ի՝ ածականակերտ ածանց՝ Աա/(աա)՝ արաքս+են+ի<sup>13</sup> (Բ պր., էջ 140):

ե) – ԵՅ+Ի՝ (Աա) (աա)՝ (թոնդր+ակ)+(եց+ի) (Ա, էջ 46, 232, Թ, էջ 37, 41, 43, 45, 49):

զ) – Ի+Ք՝ գոյականակերտ ածանց՝ լոխման+(ի+ք) ճոխ արևելքի (բժշկագետ-ժողովագետներ, հ. 2, էջ 125):

է) – ՅԱՆ-Ք՝ գոյականակերտ ածանց՝ գրաբարյան հոգնակերտից ձևավորված. (թոնդր+ակ)+յան+ք (Թ, էջ 119, թոնդրակցիներ, նրանց կողմնակիցներ):

ը) –Վ/ԱԾ (կրավորաձև -վ/ել ածանցից սերված. հարակատար դերբայի կառույցի քարացում)՝ Հազար, հազար հայ Մուշում էլ մշված (Հ Դ, էջ 274):

թ) –Վ/ԵԼ՝ այս գործուն բառակազմական բարդ ածանցի ձևավորումը հագիվ դարի պատմություն ունի և արդի ժամանակահատվածում ամենագործուն բառակազմական երկրորդական ձևույթն է: Դրանով ու տարաբա-

<sup>13</sup> Հ. Խ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն. 1973, էջ 134:

ղաղբիչ հատուկ անուններով ձևավորված կազմությունները Շիրազի ստեղծագործություններում երեք տասնյակից անցնում են: Իրար մերձ կիրառվածներ կան, որոնք աստիճանավորում են նպատակադրված փոփոխային հատկանիշը: Օրինակ՝ գեղագիտորեն շեշտվել է թուրքի չարությունը՝ Թալեթն էլ թուրվեց ... Չինգիզվեց թուրքը ... էնվերն էլ գորքվեց ... Նոր լենկթեմուրվեց (ՀԴ, էջ 84): Մի այլ տեղ նոր խոսքամիջոցով բարեմիտ արվեստագետների, գիտնականների անունների միջոցով գործողության տեսակներ են արտահայտվում. Խորենացին մենտորվում էր մեզ. // Ամեն մեկս էինք իրար մենտորվում՝ // Հսկայի մեղքը մենք էինք քավում, // Երգի արքայի նման կիսվելով // Կանցներինք, կարծես, կոմիտավելով (ՀԴ, էջ 85):

Քննվող ածանցն ավելանում է կազմությամբ տարբեր հիմքերի:

1. Հատուկ անուն պարզ հիմքով և -վ/ել ածանցով համադրված բառույթներն ունեն հետևյալ կաղապարը՝ Աա (աա), ինչպես՝ արել+վել (վ+ել), կայեն+վել (վ+ել) էլ ո՞ւր է խիղճը թեկուզ Հիսուսի, էլ ի՞նչն է անմեռ, // Երբ ջնջեց ողջ իմ հայ արելված ազգին կայենված մի նեռ (ՀԴ, էջ 122), անդրանիկ+(վ+ել). հերոսանալ իմաստ՝ Անկողմնակալ խաղաղություն, ամենուրվիր օդի պես, // Որ գայիքվեն, անդրանիկվեն, իմ դեռ բարուր յոթն էլ քեզ (հ. 2, էջ 284): Ո՞վ խաբեություն, ինքդ քեզ փրկած // Սուրբ հայդուկներից խոլ անդրանիկված (ՀԴ, էջ 57), Այսպես թուրքաց գորքը բեկվեց, // Քանգի հայ գորքն անդրանիկվեց (նույն տեղում, էջ 324), աշտիչատ+(վ+ել)՝ սրբատեղի դառնալ, ավելի բարեկիրթ բնակավայր լինել. Հանեց մեր տնից, // Դուրս վանեց, արծվի մեր բույնը խլեց, // Հանեց Տարոնից սուրբ աշտիչատված, // Դուրս վանեց, մեզ էլ դարձուց անաստված (նույն տեղում, էջ 249), արագած+(վ+ել). Արագածված խաղաղություն, դու երբ պիտի մասիսվես (հ. 2, էջ 286, Ա պր., 189, 196): Արարատ+վ+ել՝ հավերժանալ, դիմացկուն լինել, կատարյալ լինել, հայ խորհրդանշել՝ Հայոց լեզուն արարատված (հ. 1, էջ 49), Մինչև որ դու էլ վեր արարատվես (նույն տեղում, էջ 98), Հազար օտար լեզվից զատվեց, իր հայ լեզվով արարատվեց (հ. 2, էջ 172), Յոթ փարսախ մնաց յոթ հազար փարսախ հողից ահարկու, // Հայոց դրախտի յոթը գետերից հազիվ մնաց մի Զանգու, // Վեր արարատված յոթ լեռնապարից մեն մի Արագած (ՀԴ, էջ 52, Ա պր., էջ 171), Վարդան՝ վարդան+վ+ել (հերոսանալ)՝ Դարեր ի վեր հայոց ազգի անխաբ հերոս Վարդան, // Վարդան ... այս անունը թունդ է հանում հայ ոգին, // Ավարայրից Սարգարապատ՝ ծիածանում հայ ոգին, // Վարդանվելով այս էլ ահա տասն ու վեց դար անդադար // Մասիսվել է-ահա՝ ինչու չի մահանում հայ ոգին (հ. 1, էջ 320). Վարդանվելով պիտի ճշամ // Արդար վճիռ Հայոց դատին (Բ պր., էջ 161, Գ պր., էջ 159): Ամենաչատր գործածված է մասիսվել կաղապարը (մինչև հիմա հրատարակված գործերում շուրջ 32-ից ավելի կիրառություն կա):

2. «Ածանցավոր հատուկ անուն+ -վ/ել ածանց» կաղապարը ներկայանում է ենթակաղապարներով: Ածանցյալները հոդակապով (Ահա) և անհոդակապ են (Աա)ա (աա): Հնչյունափոխված հոդակապով ասոր+ե+ստան)+վ+ել (ի+ա>ե, որը նշանակում է գրկվել երկիր լինելուց, խեղճ լինել)՝ Մի՞թե չպիտի ապրիլի քսան և չորսին// Մոնչանք հայոց մեծ դատի մասին ... Ասորեստանվես, կորցնես քո ողջ անցյալները հզոր (անեծքը վերաբերում է Թուրքիային, (ՀԴ, էջ 276). անհնչյունափոխ հոդակապով (հուն+ա+ստան)+վ+ել

(Հունաստան կիրթ երկիրի նման դառնալ). Եվ դարը դարին սա էլ գեղեցիկ մի նոր ցեղ դառավ, // Եվ Հունաստանվեց մայր իմաստությամբ իր աստվածությամբ (Հ. 2, էջ 28), անհոդակապ կառույց՝ [(Աա)]ա (աա)՝ Աքիլլ (-ես՝ Աա՝ -ես-ը իմաստափոխական ածանց չի գիտակցվում)՝ (վեր / աքիլլ+ես)+վ/ել (մեծ ուժ ունենալ, անպարտ լինել)՝ Օ, ճչա՛, Հոմե՛ր, ճա՛յն տուր՝ գա գորքը..., // Վեր աքիլլեսավի՛ր, ո՛վ երգը անզուսպ՝ // Որ աշխարհ տանենք հայոց դատն էլ սուրբ, (ՀԴ, էջ 65). Մաշտոց՝ մաշտ+ոց)+վ/ել (ազգօգուտ, ազգափրկիչ դեր ունենալ, սրբանալ)՝ Դու (խաղաղություն – Ս. Մ.) իմ հույսի Հայաստանիկ, իմ մաշտոցված սրբություն (Հ. 1, էջ 286):

3. Բարդ հիմքով կազմություններից են՝ ա) հարադիր հատուկ անունից բառասերում՝ Դեր-Չոր, կցվել է բաղադրյալ ածանցը՝ (ԱԱ)ա / (աա)՝ (դեր+զոր)+վ+ել (Դեր-Չորի անապատը դառնալ, ոչնչանալ, անհայ մնալ)՝ Լուսինն Աստծո հավերժավառիկ կանթեղը վառեց // Մեր գլխի վրա մեր ճամփաներին, // Որ անվախ այցենք հայոց դերզորված մահ-ճամբարներին (ՀԴ, էջ 17): Հողակապով համադրական բարդ հիմք ունեցող հատուկ անվամբ բառասերում (ԱՀԱ)ա / (աա)՝ Ղար+ա+բաղ<sup>14</sup> (քար>ժայռ>լեռ+ սուրբ, աստվածային)՝ (ղար+ա+բաղ)+վ+ել՝ Ղարաբաղված իմ Արցախ (Ա պր., էջ 180): Բարդ համադրական անհոդակապ օտար հիմքով հատուկ անվամբ՝ ԱԱ հավելվել է -վ+ել՝ ա+ա բաղադրյալ ածանցը. Լենկթեմուր՝ (լենկ՝ կաղ, ոչ կանտնավոր քայլող+թեմուր)+վ+ել աշխարհակալ լինել, դառնալ, բռնակալ լինել, անբուժ ցեղասպան, մարդասպան լինել, ավազակաբարո լինել. Թալեաթն էլ թուրվեց՝ վերջին մոր կրծքին հայ վերջին մանկան// Ձինգիզվեց թուրքը՝ «Ձիդճաք հային և ոչ մի վայրկյան», // էնվերն էլ զորքվեց՝ աչքերն էլ հանեց, սպանեց մոր հետ, // Նոր լենկեմուրվեց՝ «Չախտի- շնչե այս ազգն այսուհետ», (ՀԴ, էջ 84):

ա) – ՅԻ՝ - ՅԻ՛՝ ա+ա՝ ԵՅԻԻ>-ցի բարդ ածանց՝ (Աա)ա / (աա)՝ Թոնդրակցի (Թ, էջ 123):

բ) – ՈՒՆ-Ի-Ք՝ [(հայ+կ)+ուն+ի]+ք] հայկունիք (հայություն ունեցող, կա բյուրաբերդ մի հայկունիք) (Հ. 2, էջ 187):

Գ. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ՍԵՐՎԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ: Հատուկ անուններից սերված բարդ նորակազմությունները Հովհ. Շիրազի ստեղծագործություններում բավական ծավալուն կիրառություն ունեն (միայն թոնդրակ տեղանունից սերված քառասուն բարդություն կա): Այդ տիպի բարդ նորակազմություններն ունեն հետևյալ յուրահատկությունները:

1. Հիմնականում երկարմատ բարդություններ են, որտեղ անհոդակապ կառույցները սակավ են՝ Ա+Ա թոնդր+աղանդ (Թ, էջ 48). այս բառը նաև հոդակապով տարբերակ ունի՝ Ա+հ+Ա թոնդր+ա+աղանդ (նույն տեղում, էջ 131):

2. Հատուկ անուններից սերված նորակազմ բարդ բառերի կաղապարում հատուկ անունները նախադաս են, ինչպես չարենցակեր (Գ պր., էջ 238), պառնասացալ (Հ. 1, էջ 333), պառնասալեռ (ՀԴ, էջ 15), պառնասալեղը (նույն տեղում, էջ 170), սենամայր (Հ. 2, էջ 27), սիսաչափ (Ա պր., էջ 246), սիփանահաս, սիփանաչափ, (Հ. 3, էջ 233), վասականենգակերպ (Բ պր., էջ 77) և այլն:

<sup>14</sup> Ս. Ս ա ռ գ ս յ ա ն. 2018, էջ 232:

Историко-филологический журнал  
2021 № 3  
Պատմամանկավարչական հանդես

3. Հատուկ անունները բարդությունում հետադաս շարադասությամբ հազվադեպ են, ինչպես՝ Փարիզ՝ մեղսափարիզ (ՀԴ, էջ 20), Մոդոք՝ բազմոդոք (նույն տեղում, էջ 93) (Մոդոքը չար ուժ է՝ զոհաբերություն պահանջող, արևմտասեմական հնագույն աստված էր), ծաղկալան<sup>15</sup> (ծաղկած Վան. Գ պր., էջ 154 թոռս վաղվա ծաղկող Վանն է, // Մայրս՝ Անին ավերակ, // Անին՝ վաղվա ծաղկալանն է, // Մայրս՝ անծիլ ավերակ):

4. Հոդակապով երկբաղադրիչ բարդությունները տարածված են (այս կաղապարում հոդակապի հնչյունափոխություն չկա)՝ Ա+հ+Ա՝ թոնդր+ա+ աղանդ (Թ, էջ 131), (նույն տեղում, էջ 48), թոնդր+ա+բերան (նույն տեղում, էջ 103), թոնդր+ա+գլուխ (ղեկավար, նույն տեղում, էջ 52), թոնդր+ա+կախարդ (նույն տեղում, էջ 312), թոնդր+ա+նետ (թոնդրակեցիներից ստացված վնաս) (նույն տեղում, էջ 94), թոնդր+ա+քամի (նույն տեղում, էջ 248), թուրան+ա+գեն, (Բ պր., էջ 279), թուրան+ա+հայ (հ. 2, էջ 218), թուրան+ա+թուր (Թ, էջ 240, 248) և այլն:

5. Հազվադեպ են միայն հատուկ անուններով հիմքերով ձևավորված կազմությունները՝ Ա+հ+Ա՝ թոնդր+ա+արես<sup>16</sup> (նույն տեղում, էջ 75):

6. Երբեմն բաղադրյալ հատուկ անվան կազմությունը միթազնված է լինում: Որպես օրինակ ենք քննում հենց հեղինակի անունը, որը շփոթվում է պարսկական Շիրազ տեղանվան հետ: Այս պարագայում շիրազական բառի ձևափոխման կաղապարը կլինի՝ (ԱԱ)հա՝ (Շիր/ակ+ազ/ն<sup>17</sup>+ա+կան) (Գ պր., էջ 182, 253, 255, 286):

7. Բարդածանցավոր կառույցներում կան հետևյալ կաղապարները.

ա) անցանցավոր հատուկ անուն + պարզ հասարակ անուն, ինչպես՝ Հայկ (Հայկի -ի-ն հավելված է հայ արմատին<sup>18</sup> (Աա) հԱ (հայ+կ)+ա+թաղը նորից դնել (հ. 1, էջ 200), (Աա)հԱ (թոնդր+ակ)+ա+ծին (Թ, էջ 101), (թոնդր+ակ)+ա+մեծ (Ա. Ջարեհավանցին՝ ղեկավար, նույն տեղում, էջ 100) և այլն, (Ահա)հԱ (հայ+ա+ ստան)+ա+տեր (Հայ գենքի աստված հայաստանատեր Տիգրանից խոսե՞մ) (ՀԴ, էջ 122):

բ) Պարզ հատուկ անուն+ անցանցավոր անուն՝ Ահ(Աա)՝ թոնդր+ա+նոր+ք (Թ, էջ 177), տիգրանագորք (ՀԴ, էջ 232, Տիգրան Մեծ արքան), Ահ(Աաա)՝ թոնդր+ա+[(համ+այն)+ք (Թ, էջ 255)]:

8. Հարաբարդ կազմությունները Շիրազի ստեղծած նորաբանություններում սակավ են՝ արմատ+հոդակապ+ածանց (ստեղծվել է միանգամից, ոչ աստիճանական)՝ վասակ+ա+նենդ+ա+կերպ (Բ պր., էջ 77). իրան+ա+հայ-թուրան+ա+հայ, (հ. 2, էջ 168, 278)՝ (ԱհԱ)-(ԱհԱ):

<sup>15</sup> Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարանում» կա այս ձևը (էջ 440), բայց իմաստը տրված չէ. երևի՝ ծաղկած ավան:

<sup>16</sup> Խոսքը վերաբերում է թոնդրակ եկած առաջադեմ մտածող Շիրակցի Ներսեսին, որը կողմնակից էր հարցերը պայքարով միանգամից լուծելուն: Դրա համար նա նաև կրում էր հունական ուղղի աստուծ անունը, այսինքն՝ թոնդրակի ուղղի աստված մակդիրը:

<sup>17</sup> Դ. Գ ա ս պ ա ը յ ա ն. 2016, էջ 134:

<sup>18</sup> Հայկ՝ հսկա, հայ + ուկ/իկ անցանց:

9. Օտար հատուկ անունների գործառույթը բաղադրյալ բառույթներում մեծ մասամբ ընկալելի է և չի խաթարում հեղինակային ամբողջական նպատակադրումը: Օրինակ, հայ ժողովրդի համար հարգի, արևելյան հին ժամանակների բժիշկ Լոխ/ղմանի անունից սերված երկբաղադրիչ հոգակապով բարդույթյունը վերաբերում է հիվանդ մարդկանց ցավերն ամոքողի, ամենախելոքի բժշկագիտական գրույթուններին՝ Ա+հ+Ա՝ լոխման+ա+գիր (նույն տեղում, էջ 124): Օտար Իսլամ հատուկ անունից սերված իսլամ+ա+գուն բարձրաձև բարդույթը, որն այնքան էլ պատշաճ չէ հայույթյանը, կիրառված է հանուն հանգի՝ Երբ յոթ ազգերն իսլամազուն // Մեր ազգն իրենց ճանկն առել // Հայոց կրոնն ու հայ լեզուն // Չուլող դժոխք էին դառել (նույն տեղում, էջ 165): Այդ արմատից սերված մի այլ նորակազմույթյուն ևս հանգի համար հոգնակի է կիրառված՝ կարծես շեշտելու դրանց շատույթյունը՝ Ա+հ+Ա՝ իսլամ+ա+սյուն/եր՝ Չորս նիզակաձև իսլամասյուներ // Պաշարել էին վանքը զույգ ազգի, // Որպես գավթիչի քարե դաշույններ // Թրի օրենքով ցեղասպան ազգի (Հ Դ, էջ 59):

II. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԿԵՐՏՎԱԾ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՋՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկվող նորակազմույթյուններում հատուկ անուն գոյական բաղադրիչներին համադրվել են՝ գոյական, ածական, բայահիմք, սակավ մակբայ (կապերը միազնված են [օտար նաճե (նամակ, գրույթյուն)<sup>19</sup> բաղադրիչը գեղագիտական հնարանք է հեղինակի կողմից և ստեղծել է խոսակցական ոճ]: Այն նաև կապի իմաստ է ձեռք բերում. Գյումրի՝ գյումրի+նամե (Գյումրիի վերաբերյալ)՝ ինդճն է ծնել գյումրինամես, // Որ մարդանաք վերստին (հ. 4, էջ 176):

Ուրեմն՝ հատուկ անուններից սերված բառերը հիմնականում գոյական, ածական ու բայ բաղադրույթյուններով են, և դրանց նորակազմ բարդույթյունների բաղադրիչների ձևաբանական կաղապարները հետևյալն են՝ Գ+Գ, Գ+Ա, Գ+Բ, Գ+Կ:

1. Գոյական+գոյական՝ գյումրամայր Երևան (Ա պր., էջ 257), դանթեադժոխք (Հ Դ, էջ 49), էնվերազորք՝ էնվերազորքեր՝ գերմանազրահ (նույն տեղում, էջ 293), թոնդրաարես (Թ, էջ 75), թոնդրաաղանդ (նույն տեղում, էջ 131), թոնդրաբերան (նույն տեղում, էջ 103), թոնդրաբողոք (նույն տեղում, էջ 146), թոնդրապուլս (թոնդրակեցիների ղեկավար Սմբատ Զարեհավանցին) (նույն տեղում, էջ 52, 132, 244, 275), թոնդրակամեծ (թոնդրակի մեծավորը՝ Սմբատ Զարեհավանցին) (նույն տեղում, էջ 100), թոնդրանորք (նույն տեղում, էջ 177), թոնդրակաձայն (Գ պր., էջ 111), իրանահայ-թուրանահայ (հ. 2, էջ 168, 278), իրանաթուխայ (Բ պր., 233):

2. Գոյական+ածական՝ սվարայրաուրբ Վարդանի նման (Հ Դ, էջ 55), դանթեակուռ (նույն տեղում, էջ 38), դանթեակուռ (նույն տեղում, էջ 93), թոնդրախեղճ (Թ, էջ 184), մասիսավիթխար (Գ պր., էջ 242), Հոմեր // Հոմերոս հոմեր+(ընդ+դեմ, Բ պր., էջ 51):

<sup>19</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. 1977, հ. III, էջ 425:

Историко-филологический журнал  
2021 № 3  
Պատմաբանական հանդես

3. Գոյական+բայահիմք՝ Աքիլես>Աքիլլ՝ աքիլլավրեժ երթանք, հայր իմ (Հոմերոս–Ս. Մ.) աքիլլավրեժ, // Որ զույգ ականջդ տեսնեն յոթ դժոխք (ՀԴ, էջ 62), եփրատընթաց՝ եվ անցնում էինք եփրատընթաց՝ // Գրի առնելով մեղքերն էլ քրդաց (նույն տեղում, էջ 218), թոնդրակածին (Թ, էջ 101), մասիսատես (ՀԴ, էջ 96), մասիսաբաղձ (հ. 1, էջ 266) // (Բ պր., էջ 145, 277), մասիսատենչ (Ա պր., էջ 29) // (Գ պր., էջ 143), մասիսածին ազգն իմ հայոց // էլ չտեսնի ոչ մի վայրէջք (Բ պր., էջ 76) և այլն: Երբեմն զգացվում է դերբայական դարձված լինելը. միայն գոյականների արտահայտությունը չի խաթարում դերբայի ընկալմանը, ինչպես՝ Գ+Գ+(Բ)՝ վարդան+ա+չունչ՝ վարդանի շունչ ունեցող (հ. 2, էջ 162):

4. Կապի խնդիր՝ գոյական+կապ՝ մասիսաչափ (նույն տեղում, էջ 171), Վշտից կուացած ամբոխն հայություն ասես ահագին՝ // Մի մասիսաչափ վիթխարի խաչ էր իր մեջքին տանում (ՀԴ, էջ 292, Ա պր., էջ 246, Բ պր., էջ 149), մասիսաչափ աղաքարն էլ // Կհալվի ձուլող ծովում ամբարիշտ (Գ պր., էջ 249), Գյումրի+նամե Գյումրիի վերաբերյալ գրվածը (բանաստեղծություն (հ. 4, էջ 176):

### III. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԿԵՐՏՎԱԾ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻԶՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհ. Շիրազի ստեղծագործություններում կիրառված հատուկ անուններով համադրական բարդությունների բաղադրիչները շարահյուսական տարբեր հարաբերություններ ունեն (համադասական հարաբերությամբ չկան): Երբեմն ստորոգումային ու խնդրային հարաբերությունները կարծես մեկ տեղվում են՝ ներգործական կամ կրավորական սեռի ընկալմամբ: Օրինակ՝ լեյլայախաբ (Խչխանի հարս արաբ Լեյլան խաբել է՝ ենթակայական և Լեյլայի կողմից խաբված՝ խնդրային (հ. 2, էջ 212), պառնասախեղդը (ՀԴ, էջ 170) կարելի է հասկանալ Պառնասը՝ արվեստը, խեղդում է և Պառնասից՝ արվեստի կողմից խեղդվում է (ստեղծագործելու մարմաջ) և այլն:

1. Ստորոգումային թոնդրաչեն (կողմնակի ենթակա՝ թոնդրակացիների շինած, Աշխարհի վաղը դարձնեն թոնդրաչեն) (Թ, էջ 116), թոնդրապղծյալ [[թոնդրացիների պղծած (նույն տեղում, էջ 116)], թայեաթաթուրք (ՀԴ, էջ 298), լոխմանազիր մագաղաթների (հ. 2, էջ 124, բժշկական գրություն):

#### 2. Ստորադասական

Ա. Գոյականին լրացնող (իշխում է որոշչային հարաբերությունը).

ա) Որոշչային հարաբերություն՝ թոնդրաորձ (Թ, էջ 208), թոնդրավազր (նույն տեղում, էջ 225), մեղսափարիզ (ՀԴ, էջ 20), վանահուչ (հ. 3, էջ 66), իրանազեն (Բ պր., էջ 279), սենամայր (հ. 2, էջ 27), վահագնածով (Ա պր., էջ 240) և այլն:

բ) Հատկացական՝ թոնդրազուլխ (Թ, էջ 52), թոնդրահայր (Սմբատ Զահեզավանցի) (նույն տեղում, էջ 116), թոնդրաորդի (նույն տեղում, էջ 281), թոնդրաորը (նույն տեղում, էջ 40), տիգրանազորք (ՀԴ, էջ 232), թոնդրահամայնք (Թ, էջ 255), իրանահայ (հ. 2, 168, 278), իրանաթուխալ (Բ պր., էջ 233), մշվաբոթ (ՀԴ, էջ 96), մասիսատեսիլ իմ սեզ Սիփանը (հ. 1, էջ 202):

Բ. Բայական անդամին լրացնող միավորներ.

- ա) խնդրային հարաբերություն՝ մասիսատես (ՀԴ, էջ 96), մասիսախեղդ (Բ պր., էջ 183), չարենցակեր (Գ պր., էջ 238), վահագնածին (հ. 2, էջ 311), վահագնավայել (Ա պր., էջ 70), վասակավայել (նույն տեղում, էջ 48), մասիսատենչ (Բ պր., էջ 29), սիփանահաս (հ. 3, էջ 233) և այլն,
- բ) պարագայական հարաբերություններ՝ դանթեակուռ (ՀԴ, էջ 38), դանթեայուռ (նույն տեղում, էջ 93), եփրատրնթաց (նույն տեղում, էջ 218), թոնդրախորով (Թ, էջ 133), թոնդրակածին (նույն տեղում, էջ 101)՝ թոնդրակում ծնված, իսայամախոս թաս (Ա պր., էջ 225):

**Եզրակացություն**

Այսպիսով՝ Հովհ. Շիրազի կերտած հատուկ անուններով բաղադրյալ նորակազմություններում գերակշռում են ածանցյալները: Իշխում են -վ/ել բառակազմական երկրորդական ձևույթով սերվածները:

Թոնդրակ տեղանունը բառակազմական ծավալուն կիրառություն ունի: Հատուկ անուններից սերված համադրական բարդ նորակազմ բառերում ձևաբանական ու շարահյուսական քերականական յուրահատկությունները հայերենին հարազատ ձևեր են, միայն տվյալ հատուկ անունը տալիս է իր անվան հետ կապված իմաստաբանական ճանաչողական արժեքումները:

Սիլվա Մինասյան – ք. գ. Թ., Արցախի պետական համալսարան, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հովհ. Շիրազի գեղարվեստի լեզվատնային վերլուծություններ, հնչյունաբանություն, բառագիտություն, բայագիտության ուսուցումը բուհում, հատուկ անուններից կերտված բայեր: Հեղինակ է 10-ից ավելի գրքի և 50-ից ավելի հոդվածի: silvaminasyan50@mail.ru

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Աճառյան Հ. 1942, հ. II, Հայերեն անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 539 էջ:

Աճառյան Հ. 1977, հ. III, Հայերեն արմատական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 636 էջ:

Աղայան. Է. Բ. 1967, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 404 էջ:

Աղայան. Է. Բ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հաստան» հրատ., 892 էջ:

Բարսեղյան Հ. Խ. 1973, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 980 էջ:

Գասպարյան Դ. 2016, Գրականություն (VII դասարան), Երևան, վերահրատարակություն, 136 էջ:

Թորոսյան Ա. 2010, Հովհաննես Շիրազի «Հայոց Դանթեականը» պոեմի նորաբանությունների բառարան, Երևան, «Կռունկ» հրատ., 164 էջ:

Հովհ. Շիրազ. Երկերի ժողովածու, հ. 1, 1981, Երևան, Սովետական գրող, 386 էջ; հ. 2, 1982, Երևան, Սովետական գրող, 352 էջ; հ. 3, 1984, Երևան, Սովետական գրող, 352 էջ; հ. 4, 1986, Երևան, Սովետական գրող, 310 էջ; ՀԴ (Հայոց Դանթեականը), 1990, Երևան, Խորհրդային գրող, 384 էջ; Ա (Անի), 2011, Երևան, ԵՊՀ հրատ., 308 էջ; Թ (Թոնդրակեցիները), 2014, Երևան, «Հայրապետ», 327 էջ; ՀՀ (Հուշարձան

Պատմաբանական հանրագիտություն 2021 № 3 Историко-филологический журнал



հայրիկիս), 2017, Երևան, «Հայրապետ» 240 էջ: Ա պր. (Անտիպ էջեր), 2018, Երևան, «Հայրապետ» 240 էջ: Բ պր. (Անտիպ էջեր), Երևան, «Էդիտ պրինտ» հրատ., 300 էջ: Գ պր. (Անտիպ էջեր), 2020, Երևան, «Հայրապետ» 320 էջ:

Մինասյան Ս. 2004, Հատուկ անուններից կերտված բայեր, Երևան, «Հայաստան» հրատ., 72 էջ:

Մինասյան Ս. Ա. 2019, Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը, Ստեփանակերտ, «Դիզակ պրես» հրատ., 320 էջ:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1979, հ. I, Երևան, ԵՊՀ հրատ.:

Ռուս-հայերեն բառարան, 1954–1958, հ. I–IV, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., հ. I, 744 էջ; հ. II, 690 էջ; հ. III, 810 էջ; հ. IV, 800 էջ:

Սարգսյան Ս. 2018, Արցախի բնակավայրերը (ստուգաբանություն) Երևան, 232 էջ:

Ашукин Н. С., Ашукина М. Г. 1988. Крылатые слова. М., Изд. «Художественная литература», 528 с.

## СТРУКТУРЫ НЕОЛОГИЗМОВ, ОБРАЗОВАННЫХ ОТ СОБСТВЕННЫХ ИМЕН В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВАНЕСА ШИРАЗА

СИЛЬВА МИНАСЯН (Арцах)

### Резюме

*Ключевые слова:* Ованес Шираз, неологизм, образованный от собственного имени, структура, образованные от собственного имени существительное, прилагательное, глагол; сложные, сложнопроизводные слова, основа сложнопроизводных слов, морфологическое выражение компонентов сложных слов, синтаксические отношения компонентов сложных слов.

В произведениях Ов. Шираза используются более ста сложных неологизмов, образованных от собственных имен. Они произошли от личных имен и топонимов. В этих новообразованных сложных словах преобладают производные структуры. В них использовалось 27 простых и сложных суффиксов, большинство из которых были простыми. Словообразовательные суффиксы *ւ/ել*, которые были недавно сформированы (стали употребляемыми с конца прошлого века), используются и в произведениях Шираза: *մասիւվել*, *արարատվել*, *հայկել*, *հիսուսվել*.

Иногда словообразовательный суффикс добавлялся не к собственному имени, а к производному слову добавлялось имя собственное, например, Тигран + а + (зор + к) (армия царя Тиграна, 5232).

Топоним Тондрак широко используется в составных сложных словах, образованных от специальных имен в поэме «Тондракийцы».

В произведениях Ов. Шираза грамматические компоненты вновь образованных составных слов, производных от собственных имен, используются в синтаксических отношениях – это существительные, прилагательные.

тельные, глаголы, редко союзы. В словах этого типа преобладают структуры существительное + существительное.

В произведениях Ов. Шираза, в синтаксических отношениях сложных неологизмов, образованных от собственных имен, функционируют предикационные, определительные, определенные, дополненные и обстоятельственные связи. Здесь преобладают определительные и определенные синтаксические связи, отчасти и дополненные.

*Сильва Минасян – к. филол. н., доцент кафедры армянского языка им. С. Абрамяна Арцахского государственного университета. Научные интересы: лингвостилистический анализ творчества Ов. Шираза, обучение фонетике, лексикологии, глаголоведению в вузе, глаголы, образованные от собственных имен. Автор более 10 книг и более 50 статей.  
silvaminasyan50@mail.ru*

## STRUCTURES OF NEOLOGISMS FORMED BY PROPER NAMES IN THE WORKS OF HOVHANNES SHIRAZ

SILVA MINASYAN (Artsakh)

### Summary

*Key words: Hovhannes Shiraz, neologism formed by proper names / a noun, an adjective, a verb formed by proper names; complex, compound-derivative word, bases of compound-derivative words, morphological expression of compound words, syntactic relations of compound words.*

More than a hundred complex neologisms formed from proper names are used in the works of Hovhannes Shiraz. They came from personal names and toponyms. Derivative structures prevail in these newly formed compound words. 27 simple and complex suffixes, most of which simple, were used in them. Derivational suffixes, *վ/ել*, that have been recently formed (have been used since the end of the last century), are used in the works of Hovhannes Shiraz: words *մասիսվել, արարատվել, հայկել, հիսուսվել*.

Sometimes a derivational suffix was added not to a proper name, but a proper name was added to the derivative word, for instance: Tigran + a + (zor + k) (the army of King Tigran, 5232).

The toponym Tondrak is widely used in compound words formed by proper names in the poem “The Tondrakians”.

Grammatical components of newly formed compound words derived from proper names in syntactic relations are used in the works of Hovhannes Shiraz – these are nouns, adjectives, verbs, rarely conjunctions. Noun + noun structures prevail in words of this type.

In the syntactic relations of complex neologisms formed from proper names, function as predicative, determinative, definite, supplemented and adverbial connections in the works of Hovhannes Shiraz. It is dominated by definitive and definite syntactic connections, partly supplemented.

*Silva Minasyan – Candidate of Sciences in Philology, ArSU, Associate Professor of the Armenian Language Department named after S. Abrahamyan. Scientific interests: Linguostylistic analysis of the art of Hovhannes Shiraz, teaching phonetics, lexicology, verb studies at the university, verbs derived from proper names. Author of over 10 ten books and over 50 articles. [sivaminasyan50@mail.ru](mailto:sivaminasyan50@mail.ru)*

ԱՐՇԱՐՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԹԵՄԱ  
(IV–XI դդ.)\*

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ եպիսկոպոսություն, կաթողիկոս, աթոռ, հոգևոր կենտրոն, աթոռակալություն, արձանագրություն, ժողով, հիշատակություն, մատենագրական, աստվածաբանական:

Նախաբան

Արշարունյաց եպիսկոպոսությունը Հայաստանի հնագույն թեմերից է: Այն կազմավորվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի (302–325) իրականացրած թեմական երկրորդ բաժանման ժամանակ: Թեմական այդ նոր բաժանման ուխտանայան անվանացանկում Արշարունիքի եպիսկոպոսությունը 30 թեմերի շարքում 17-րդ աթոռն է<sup>1</sup>: Ստեփանոս Օրբելյանը թեմերի թիվը ներկայացնում է 36 առանց Ուխտանեսի նման հանվանե թվարկելով դրանք<sup>2</sup>: Արշարունյաց նորաստեղծ եպիսկոպոսության հոգևոր իրավասությունը պիտի տարածվեր նաև Շիրակի վրա, քանի որ վերջինս Արշարունիք (Երասխաձոր) գավառի հետ կազմում էին միևնույն Կամսարական տան տիրույթները, որոնք այդ նախարարական տոհմին շնորհել էր Տրդատ Մեծը (286–330)<sup>3</sup>: Իսկ եպիսկոպոսությունը կոչվեց Արշարունիքի այն պատճառով, որ իշխանության կենտրոնը՝ Մարմետը (Երվանդաշատը), գտնվում էր այդ գավառում<sup>4</sup>: Արշարունյաց եպիսկոպոսությունը 700 տարի լուրջ դերակատարություն է ունեցել Հայոց եկեղեցական-վարչական, հոգևոր-մշակութային, կրթագիտական կյանքում:

Արշարունյաց եպիսկոպոսներին, մինչև VIII դ. սկիզբը ներառյալ, անդրադարձել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Սահակ Կոզյանը, որի մոտ, սակայն, նկատվում են որոշ անճշտություններ<sup>5</sup>:

Բագրևանդի և Արշարունյաց միացյալ եպիսկոպոսությունը IV–V դդ.

Սուրբ Ներսես Մեծը (353–373) կաթողիկոս ձեռնադրվելուց հետո, ինչպես մակաբերվում է Ստեփանոս Օրբելյանի՝ ստորև հղվող վկայությունից, ձեռնա-

\* Ներկայացվել է 14. V. 2021 թ., գրախոսվել է 31. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 23. VI. 2021 թ.:

<sup>1</sup> Ուխտանէս եպիսկոպոս. 1871, էջ 100: Ուխտանեսը նշում է, որ գավառների առաջնորդներ կարգվեցին ևս 370 եպիսկոպոսներ (տե՛ս նույն տեղում), որոնք իրականում քորեպիսկոպոսներ էին:

<sup>2</sup> Պատմութիւն նահանգին Սիսական, 1910, էջ 25:

<sup>3</sup> Մովսէս Խորենացի. 1981, էջ 295:

<sup>4</sup> Ս. Կոզեան. 1926, էջ 22:

<sup>5</sup> Ս. Կոզեան. 1924, թիւ 1–2, ս. 22–31:

մուխ է եղել Հայոց նվիրապետության բարեկարգմանը, քանի որ Արշակ «Թագաւորն հրամայէ մեծաւ ժողովով սահմանել զբովանդակ կարգս եկեղեցոյ անթերի: Կացուցանեն պատրիարք գտուրբն Ներսէս, և ի ներքոյ նորա արքեպիսկոպոս զԱղվանիցն, որ է կաթողիկոս. և մետրապօլիտս զՍիւնեաց եպիսկոպոսն եւ զՎրաց և զՄարդաբետականն, և յետոյ այլ ևս մետրապօլիտս կացուցանեն զՄելիտինեայն և զՍեբաստիոյն»<sup>6</sup>: Ակներև է, որ Ստ. Օրբելյանը բավարարվել է բարեփոխված Հայոց նվիրապետական կառույցի ամենավերին օղակները միայն հիշատակելով հաստիակա, որ իր հայրենի Սյունիքի աթոռն էլ դրանց շարքում էր, և հետագայում մնաց որպես Հայաստանյայց միակ մետրոպոլիտությունը: Ենթադրելի է այդ ժողովում կատարվել են նաև թեմական վիճակների կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում իրար են միացվել Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոսությունները: Հավանաբար, այդ ամենը տեղի է ունեցել Աշտիշատի 354 թ. Ա ժողովում<sup>7</sup>: Ինչ վերաբերում է Աշտիշատի 356 թ. Բ ժողովին, որի մասին շատ մանրամասներ է հայտնում Փավստոս Բուզանդը, ի տարբերություն առաջինի (որը գումարվել է արքայի կարգադրությամբ), հրավիրվել է կաթողիկոսի նախաձեռնությամբ<sup>8</sup>:

Որոշ ժամանակ անց վերակազմավորված Բագրևանդի և Արշարունյաց եպիսկոպոսությունը (այն իր մեջ ներառում էր նաև Շիրակ գավառը<sup>9</sup>) դարձել է Հայաստանյայց ամենաազդեցիկ թեմը: Եվ դա այն բանից հետո, երբ Ներսես Մեծ կաթողիկոսը 364 թ. Հունաց աշխարհ գնալուց առաջ իր ձեռնասուն սան Խաղ Կարնեցուն, որին մինչ այդ վստահել էր աղքատների հոգաբարձության գործը, որում նա աչքի ընկավ որպես բարեխնամ տեսուչ, «ձեռնադրեաց զայս Խաղ յեպիսկոպոսութիւն Բագրևանդա և Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ ետեղեպահ»<sup>10</sup>:

Բագրևանդը, ըստ էության, երկրի հոգևոր կենտրոնն է դարձել, երբ Հայոց Մեծաց կաթողիկոս Սուրբ Սահակ Ա Պարթևը (387–439) պարսկական գերութունից 432 թ. վերադառնալուց հետո հաստատվում է այդ գավառում՝ աթո-

<sup>6</sup> Պատմութիւն նահանգին Սիսական, 1910, էջ 26: Կարծում ենք՝ վերապահումով պետք է ընդունել Ներսես Ա Մեծի կողմից Մելիտենեի և Սեբաստիայի աթոռակալների նշանակման մասին տեղեկությունը, քանի որ այդ ժամանակ Փոքր Հայքը գտնվում էր Հռոմեական կայսրության տիրապետության ներքո, և վերոհիշյալ աթոռների առաջնորդներին նշանակում էր Կեսարիայի արքեպիսկոպոսը:

Ակնհայտ է, որ Ներսես Ա Մեծը մինչև Աշտիշատի հայտնի Բ ժողովը, գումարել է ևս մեկը (Ա ժողով)՝ արքայի հրամանով: Ծիշտ է, Ստ. Օրբելյանն առաջինի անցկացման վայրը չի նշում, բայց հիմք ընդունելով Փավստոս Բուզանդի այն վկայությունը, որ Աշտիշատն էր «մայր եկեղեցեացն, և ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոգոսին» (Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. 1987, էջ 118)՝ ուստի փաստվում է, որ այն գումարվել է Տարոնի այդ կենտրոնատեղիում: Բ ժողովն ընդունված է թվագրել 356-ով (տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, 2002, էջ 69), իսկ Ա-ի 354 թվականի հիմքը Մ. Օրմանյանի ենթադրությունն է (Մ ա դ ա ք ի ա ր ք ե պ ս. Օ Ր մ ա ն ե ա ն. 2001, ս. 186):

<sup>8</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. 1987, էջ 118:

<sup>9</sup> Ս. Կ ո գ յ ա ն. 1924, թիւ 1–2, ս. 23:

<sup>10</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. 1987, էջ 166:

ուանիստ դարձնելով Վաղարշակերտի լուսավորչաչեն Ս. Երրորդություն վանքը, որտեղ նրա շուրջն են հավաքվում իր աշակերտներից մի քանիսը<sup>11</sup> :

Արտաշատի 449 թ. ժողովի մասնակից 17 եպիսկոպոսների շարքում է «ԵՁՆԻԿ եպիսկոպոս Բագրևանդայ»<sup>12</sup> («Տէր Եզնիկ Բագրևանդեայ եպիսկոպոս»<sup>13</sup> : Նա նույնացվում է հայտնի Եզնիկ Կողբացու հետ) : Մասնակից 18 նախարարներից տասներորդն է «տէրն Արշարունեաց Արշաւիր»<sup>14</sup> , ով ավելի վաղ ներկա է եղել Շահապիվանի 444 թ. եկեղեցական կանոնական ժողովին<sup>15</sup> :

Սուրբ Գյուտ Ա Արահեզացի (461–471/4) կաթողիկոսն իր հայրապետության շրջանում Բագրևանդի եպիսկոպոս է նշանակում Մովսես Խորենացուն<sup>16</sup> : Պատմաբան Վրեթ Վարդանյանը Հայր Ղևոնդ Ալիշանի «Հայապատում»-ից մեջբերում է այն ավանդական պատմությունը, որի «համաձայն՝ Գյուտը մի գյուղում հյուրընկալվելիս հանդիպում է մոռացության մատնված Մովսես Խորենացուն և նրան ձեռնադրում է Բագրևանդի ու Արշարունիքի եպիսկոպոս»<sup>17</sup> :

Մ. Չամչյանի պարզաբանմամբ՝ Արշարունյաց հոգևոր գործերը վարում էր քորեպիսկոպոսը, ով կարգվում էր Բագրևանդի եպիսկոպոսի կողմից<sup>18</sup> :

#### Արշարունյաց եպիսկոպոսությունը V–VIII դդ.

Պատմահոր մահից հետո եպիսկոպոսական աթոռը բաժանվում է երկու մասի<sup>19</sup> . « ... և կարգեցաւ երկու եպիսկոպոսսարան. մին՝ բագրևանդայ, և միւրն՝ արշարունեաց. և յայնմհետէ թէպէտ և նստէին եպիսկոպոսսունք յարշարունիս, բայց հասարակ անուամբ առաջնոցն երբեմն քորեպիսկոպոս ևս անուանէին. որոց առաջինն եղև խնդակ անուն. յետ նորիւայրովհան. և ապա թաթուլ թումա. հաւուկ. թովմաս. մովսէս. յոյս. թէոփիլոս. մովսէս. և դազար. և զկնի դազարու սոյն այս նախակարգեալդ զգրիգորիս. որ եկաց յեպիսկոպոսութեանյամս զ. (30 – Ա. Մ.)»<sup>20</sup> :

Հայր Ղ. Ալիշանը, ի տարբերություն Մ. Չամչյանի, Արշարունյաց վերոնշյալ եպիսկոպոսների ցանկը ներկայացնում է նրանց աթոռակալության տևողության տարիներով մինչև 706 թվականը.

<sup>11</sup> Մովսես Խորենացի. 1981, էջ 440, 441, Մաղաքիա արքեպս. Օրմանյան. 2001, ս. 353:

<sup>12</sup> Եղիշե. 1989, էջ 54, 55 (Եզնիկը մասնակից եպիսկոպոսների անվանացանկում չհաշված Այրարատի եպիսկոպոս, կաթողիկոսական տեղապահ Ս. Հովսեփի Հողոցմեցուն, երրորդն է) :

<sup>13</sup> Ղազար Փարպեցի. 1982, էջ 100, 101 (Եզնիկը մասնակից եպիսկոպոսների անվանացանկում հինգերորդն է) :

<sup>14</sup> Նույն տեղում :

<sup>15</sup> Մաղաքիա արքեպս. Օրմանյան. 2001, ս. 379:

<sup>16</sup> Բրիտտոնյա Հայաստան հանրագիտարան, 2002, էջ 762:

<sup>17</sup> Վ. Վարդանյան. 2005, էջ 215:

<sup>18</sup> Մ. Չամչյանց. 1984, էջ 374:

<sup>19</sup> Ռ. Հարությունյանի պարզաբանմամբ՝ «Թեմերի մասնատման երևույթը նկատելի է նաև Տուրուբերան և Վասպուրական աշխարհներում, որտեղ նոր թեմեր են առաջացել» (Ռ. Հարունյան. 2008, № 2, էջ 146) :

<sup>20</sup> Մ. Չամչյանց. 1984, էջ 374:

Կնդակ կամ խնդակ ամս	46
Յովհան	11
Թաթուլ	9
Թովմաս 20 կամ	40
Հաւուկն 11 կամ	16
Թովմաս 10 կամ	16
Մովսէս 10 կամ	15
Յոյս	1
Թէոփիլոս	36
Մովսէս 13 կամ	12
Ղազար	37
Գրիգորիս	23 <sup>21</sup> :

Մովսես Խորենացու մահը, բանասիրության մեջ գերակա կարծիքների համաձայն, ընդունվում է 490 թվականը: Սակայն, երբ 490-ին գումարում ենք վերոհիշյալ տարիները, ստանում ենք 732/752 թվականները: Այս դեպքում իրենց թվային համապատասխանությունից շեղվում են մեզ հայտնի մատենագրական ու վիմագրական թվակիր հիշատակությունները: Իսկ 706 թվից հետո հաշվարկ կատարելիս, գալիս ենք 444, այլ ոչ թե 490 թվական: Բայց նկատում ենք, որ պատմական թվագրված տեղեկությունները համընկնում են ցանկի տվյալներին: Դա մեզ ենթադրել է տալիս, որ խնդակը (Կնդակը) 490 թ., մինչև Արշարունյաց եպիսկոպոս դառնալը, 46 տարի եղել է այդ թեմի քորեպիսկոպոսը, և Խորենացու մահից հետո զառամյալ հասակում նշանակվելով արդեն թեմակալ եպիսկոպոս՝ նույն թվին էլ վախճանվել է:

Արդեն հաջորդ եպիսկոպոսի անունը գտնում ենք մեզ հասած մետրոպատառ ամենահին բնագրի՝ Տեկորի տաճարի 478–490 թվականներով ժամանակագրվող շինարարական արձանագրության մեջ, որտեղ Սահակ Կամսարական իշխանից և Հովհան Ա Մանդակունի (478–490) կաթողիկոսից հետո հիշատակվում է «... Յոհան ... Արշարունեաց (ե)պիսկապոս ...»<sup>22</sup>: Ենթադրելի է, որ Տեկորի նորահիմն Ս. Երրորդություն վանքում էլ հաստատվել է Արշարունյաց եպիսկոպոսական աթոռը:

Հ. Աճառյանը Յովհան Արշարունեաց եպիսկոպոսի աթոռակալությունը հաշվում է 490–501 թթ.<sup>23</sup>:

Թե՛ Սահակ Կամսարականը, թե՛ Արշարունեաց աթոռակալ վերակացուն մեծ դեր են ունեցել երկրի VI դարի քաղաքական-հոգևոր զարգացումներում: Այսպես, Հայոց Մեծաց կաթողիկոս Բաբեկն Ա Ոթմսեցու (490–516) հրավիրած Դվինի 506 թ. Ա եկեղեցական ժողովի մասնակից 14 նախարարների շարքում, ի դեմս երկրորդի, Հայոց մարզպան Վարդ Մամիկոնյանից հետո տեսնում ենք

<sup>21</sup> Ղ. Ա ի շ ա ն. 1890, էջ 56:

<sup>22</sup> Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. 2007, էջ 118–119:

<sup>23</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն. 1946, հ. Գ, էջ 543:

վերոհիշյալ Սահակ Կամսարականին, իսկ 20 թեմակալների ցանկում 7-րդը «Թաթուկ Արշարունեաց» եպիսկոպոսն է<sup>24</sup>: Թաթուկ եպիսկոպոսը, ըստ Հ. Աճառյանի, աթոռակալել է 501–510 թթ.<sup>25</sup>:

Թաթուկից հետո գահակալել է «Թովմա (Թումա, Թովմաս – Ա. Մ.) եպիսկոպոս Կամսարական տան և Արշարունյաց. հաջորդ Թաթուկի. նստավ 501–550 թ.»<sup>26</sup>: Այստեղ կա ակնհայտ տպագրական վրիպակ. պետք է լինի 510–550 թթ.:

554 թ. Հայոց քաջակորով կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդցի (548–557) վեհափառի գումարած Դվինի Բ եկեղեցական ժողովի մասնակիցների թվում են նախարար «Ձաւրակ Գլալ[ղ] լղլաւոն/եյանը»<sup>27</sup>, այսինքն՝ Գազավոնի որդի Ջորակը (սա սպարապետ Կարմիր Վարդան Մամիկոնյանի մերձավոր զինակից, քաջ ռազմիկ Ջորակ Կամսարականն է, ով 572 թ. հակապարսկական ապստամբութեան սկզբում սպանեց Հայաստանի պարսիկ մարզպան, հայաստյաց Սուրենին<sup>28</sup>) և Արշարունյաց Հավուկ եպիսկոպոսը<sup>29</sup>: Հ. Աճառյանը Հավուկի գահակալութունը հաշվարկում է 550–566 թթ.<sup>30</sup>:

Հավուկին հաջորդեց «Թովմաս եպիսկոպոս Կամսարական տան և Արշարունեաց ... նստավ 566–582 թ.»<sup>31</sup>:

Թովմասից հետո Արշարունյաց թեմակալ դարձավ «Մովսէս եպիսկոպոս, առաջնորդ Կամսարական տան ... նստած պիտի լինի ըստ Տաշեան Յուզակի 599–609 թ. կամ ըստ Այրարատի ցուցակի 582–597 թ.»<sup>32</sup>: Հակված ենք ավելի վստահել Այրարատյան ցուցակի թվերի հաշվարկին՝ 582–597 թթ., իսկ 599–609 թթ., մեր կարծիքով, վերաբերում է Մովսես Երկրորդին:

Հաջորդը՝ Յոյսը՝ «եպիսկոպոս Կամսարական տան, հաջորդ Մովսէսի. նստավ մի տարի 597-8»<sup>33</sup>: Ըստ Ս. Կոզյանի՝ Յոյս անվանաձևը Յուսիկ անձնանվան արմատն է<sup>34</sup>: Այս եպիսկոպոսից հետո Արշարունյաց աթոռակալների շարքում կա չփոթ: Նշված է, որ Հույսին հաջորդել է Թեոփիլոսը՝ 36 տարի, ապա՝ Մովսեսը (13 կամ 12 տարի): Թեոփիլոսն աղբյուրներում վերջին անգամ հիշատակվում է Դվինի 645 թ. Դ ժողովում, որին կանդրադառնանք ստորև: Երբ սրանից 36 տարի հետհաշվարկ ենք կատարում, ստացվում է 609 թվականը: Հ. Աճառյանը Թեոփիլոսի թեմակալութունը հաշվում է 610–646 թվականներով<sup>35</sup>: Իսկ ինչ վերաբերում է իբր նրան հաջորդած Մովսես Երկրոր-

<sup>24</sup> Գիրք թղթոց, 1994, էջ 148:

<sup>25</sup> Հ. Աճառյան. 1944, հ. Բ, էջ 258:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 315:

<sup>27</sup> Գիրք թղթոց, 1994, էջ 201, նաև՝ Մ ա ղ ա ք ի ա ա ռ ք ե պ ս. Օ Ր մ ա ն - յ ա ն. 2001, ս. 638:

<sup>28</sup> Հայ ժողովրդի պատմութուն, 1984, հ. II, էջ 257:

<sup>29</sup> Գիրք թղթոց, 1994, էջ 201, Մ ա ղ ա ք ի ա ա ռ ք ե պ ս. Օ Ր մ ա ն յ ա ն. 2001, ս. 637:

<sup>30</sup> Հ. Աճառյան. 1946, հ. Գ, էջ 65:

<sup>31</sup> Հ. Աճառյան. 1944, հ. Բ, էջ 315:

<sup>32</sup> Հ. Աճառյան. 1946, հ. Գ, էջ 435:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 531:

<sup>34</sup> Ս. Կոզյան. 1924, թիւ 1–2, ս. 28:

<sup>35</sup> Հ. Աճառյան. 1944, հ. Բ, էջ 307:



ղին, ապա նա, ըստ Հ. Աճառյանի, գահակալել է 634–646 թթ.<sup>36</sup>: Դա անհնար էր, քանի որ այդ թվերին աղբյուրներում Արշարունյաց եպիսկոպոս է հիշատակվում Թեոփիլոսը: Այստեղից ենթադրում ենք, որ Մովսես Երկրորդը նախորդել է Թեոփիլոսին՝ հաջորդելով Հուլյան և Կամսարական տունն ի հոգևորս առաջնորդել է 598–610 թթ.<sup>37</sup>: Այդպիսով, մեր կողմից առաջարկվում է Արշարունյաց եպիսկոպոսների ցանկի

Յոյս	1
Թէոփիլոս	36
Մովսէս	13 կամ 12

հատվածը վերափոխել հետևյալ կերպ.

Յոյս	1	(597–598)
Մովսէս Բ	13 կամ 12	(598–610)
Թէոփիլոս	36	(610–646):

Թեոփիլոսի՝ որպես Արշարունյաց եպիսկոպոսի հիշատակությամբ մեզ են հասել Ալամանի 637 թ. (ԹԵՈՓԻՂՈՍ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ)<sup>38</sup> և Մրենի 639/640 թ. (ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆՆ ՍՐԲԱՍԵՐ ՏԵԱՌՆ ԹԵՈՓԻՂՈՍԻ)<sup>39</sup> շինարարական վիմագրերը: Հայտնի է՝ Մրենի վիմագրի սկզբնահատվածը, որով պետք է հաշվարկվեր արձանագրության ժամանակը, կորել է: Ս. Կարապետյանի մանրամասնմամբ՝ Ալ. Մանուչարյանն այդ անհետացած սկզբնամասն առաջարկում է վերականգնել Կիրակոս Գանձակեցու հայտնած թվականի հետ համապատասխանեցմամբ՝ 613 թ.<sup>40</sup>:

Թեոփիլոսը մասնակցել է նաև Դավիթի 645 թ. Դ ժողովին: Հարկ է նշել, որ բնագրերից մեկում նա հիշատակվում է որպես «Աշմունեաց եպիսկոպոս»<sup>41</sup> (Ալր/չլա/մունեաց եպիսկոպոս): Նույն տեղում իբրև «Արշարունեաց եպիսկոպոս» նշված է «Տէր Գրիգոր»<sup>42</sup>, ինչը թյուրիմացությունների տեղիք է տվել, և կարծել են, թե նրա անունն «ի գաւազանագրիդ պակասէ»<sup>43</sup>: Ս. Օրմանյանի համար որպես բնագրագիտական հիմք ծառայած «Գիրք կանոնաց եւ դատաստանի»-ում<sup>44</sup> Դավիթի 645 թ. ժողովին մասնակից բարձրաստիճան ժողովականների ցանկում մեզ հետաքրքրող հոգևորականները վկայակոչված են որպես

<sup>36</sup> Հ. Աճառյան. 1946, հ. Գ, էջ 435:

<sup>37</sup> Ս. Կոզյանը նույնպես հնարավոր տարբերակ է համարում Մովսեսի փոխադրվելը «ընդ մէջ Թէոփեղոսի եւ Յոյսի» (Ս. Կոզյան. 1924, թիւ 1–2, ս. 29):

<sup>38</sup> И. Орбели. 1963, с. 395.

<sup>39</sup> И. Орбели. 1974, с. 35.

<sup>40</sup> Ս. Կարապետյան. 2012, № 7, էջ 55, նաև՝ Ալ. Մանուչարյան. 1966, № 1, էջ 247:

<sup>41</sup> Կանոնագիրք հայոց, 1971, Բ, էջ 214:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Ղ. Ալիշան. 1890, էջ 56:

<sup>44</sup> Գիրք կանոնաց եւ դատաստանի, 1831, էջ 138:

«Գրիգոր Աշամունեաց» և «Թէոփիլոս Արշարունեաց» եպիսկոպոսներ<sup>45</sup>: Այնպես, որ Արշարունիքի կամ Կամսարական տան եպիսկոպոսների ցանկում, իրավամբ, չպիտի լինի կարծեցյալ Գրիգոր անունը:

Թեոփիլոսին հաջորդել է Ղազարը, ով ակթուակալել է 37 տարի՝ պաշտոնավարելով 646–683 թթ.<sup>46</sup>:

Արշարունյաց եպիսկոպոսների ցանկը եզրափակում է Գրիգորիս Արշարունին: Ըստ Մ. Օրմանյանի՝ Գրիգորիս Արշարունին «Գիրք Թղթոց»-ում մեծարվում է որպես «քաջ փիլիսոփայ, եւ նախընտիր ի վարդապետս Հայոց»<sup>47</sup>: Մ. Չամչյանի տեղեկացմամբ՝ Արշարունիքի և Շիրակի տեր Վահան ձգնավոր Կամսարական պատրիկը, ով իմաստուն ծերունի էր, «յորդորել զգրիգորիս, զի ձեռն արկցէ ի մեկնեւթիւն / ընթերցուածոց եկեղեցական պաշտամաց, և թէ զի նչ խորհուրդ ունին. կարգք պահոց և տելր իւնական տօնից, և որ ի կարգի»<sup>48</sup>: Մ. Չամչյանի գնահատմամբ՝ Գրիգորիսը երևելի վարդապետ էր՝ «բանիբուն գիտութեամբ և հմուտ իմաստ ալստուածային գրոց. որ յամի տեառն. 684. և ի թուին հայոց. ճլգ. ձեռնադրեցաւ ի սահակայ կաթողիկեսէ (Սահակ Գ Չորրորդեցի – Ա. Մ.) եպիսկոպոսս գաւառին արշարունեաց, որ էր բնիկ երկիր տէրութեան / կամսարականաց յերասխաձորն»<sup>49</sup>:

Գրիգորիս վարդապետը, տեսնելով գործի զժվարությունը, անտարբեր է գտնվում, բայց երբ Վահան իշխանը երկրորդ անգամ է խնդրում, չի կարողանում մերժել, գրում է մի փայլուն աշխատություն և ուղարկում նրան<sup>50</sup>:

Մ. Չամչյանը, ինչպես ավելի վաղ ասել ենք, Գրիգորիս Արշարունու ակթուակալությունը հաշվում է «Լ» (30) տարի<sup>51</sup>: Ստացվում է, որ նա գլխավորել է թեմը 683 (ըստ Չամչյանի՝ 684)–713 թթ.<sup>52</sup>: Այնինչ, Ղ. Ալիշանի ցուցակում նշված է 23, այսինքն՝ «ԻԳ» տարի: Այս դեպքում Գրիգորիսը թեմն առաջնորդել է 683–706 թթ.: Ս. Կոզյանի պարզաբանմամբ՝ Հ. Տաշյանի կարծիքով ցուցակի անանուն հեղինակը, որից օգտվել են Մ. Չամչյանը և Ղ. Ալիշանը, ցանկը կազմել է 713 թվականին<sup>53</sup>:

Մեր երկու դասականներն անտեսել են Սուրբ Հովհան Գ Օձնեցու (717–728)՝ Մանազկերտում 726 թ. հրավիրած հայ-ասորական եկեղեցական ժողովի մասնակիցների ամբողջական ցուցակը<sup>54</sup>, մինչդեռ դասական հայագիտությունը երրորդ սյունը՝ Մ. Օրմանյանը, այդ ցանկը ներկայացնում է ամբողջությամբ,

<sup>45</sup> Մ ա ղ ա ք ի ա ա ռ ք ե պ ս. Օ Ր մ ա ն յ ա ն. 2001, ս. 829:

<sup>46</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. 1946, հ. Գ, էջ 116:

<sup>47</sup> Մ ա ղ ա ք ի ա ա ռ ք ե պ ս. Օ Ր մ ա ն յ ա ն. 2001, ս. 977:

<sup>48</sup> Մ. Չ ա մ չ յ ա ն ց. 1984, էջ 374:

<sup>49</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 373:

<sup>50</sup> Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 374–345:

<sup>51</sup> Տ ե ' ս ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 374:

<sup>52</sup> Այն, որ Գրիգորիսը 713 թ. եպիսկոպոսական ակթուի վրա էր, փաստում է Ս. Կոզյանը, բայց զժվարանում է պնդել, որ նա Մանազկերտի 726 թ. ժողովի մասնակից Գրիգորիս Արշարունյաց քորեպիսկոպոսն է (տե՛ս Ս. Կոզյան. 1924, թիւ 1–2, ս. 31):

<sup>53</sup> Տ ե ' ս ն ու յ ն տ ե ղ ու մ, ս. 26:

<sup>54</sup> Մ. Չ ա մ չ յ ա ն ց. 1984, էջ 397–398: Նշում է 23 հայ եպիսկոպոսներից և 8 վարդապետներից միայն 6-ի անունը:

որտեղ առկա է «Գրիգորիա Արշարունեաց» եպիսկոպոսի անունը<sup>55</sup>։ Չնայած Ստեփանոս Տարոնեցին հայտնում է՝ Մանազկերտի ժողովի մասնակից հայ եպիսկոպոսների (առանց անունները նշելու) հետ էր «Գրիգորիա փիլիսոփայ քորեպիսկոպոս Արշարունեաց»<sup>56</sup>, որը «եղել է Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի անխոնջ օգնականը»<sup>57</sup>։ «Բագմավեպ» հանդեսի մի հոդվածագիր Ս. Մ. (նա չի նշում իր անվան ամբողջական տվյալները – Ա. Մ.) հավելում է, որ Գրիգորիսին «Ասողիկի ժամանակակից մէկն ալ Սամուէլ Կամրջածորեցի՝ կը յիշատակ է ... իր «Յաղագս սօնից տէրունականց» գրուածքին մէջ։ Ապա Սակս ժողովոց կոչուած գրութիւնն ալ և Միքայէլ Ասորի կը յիշեն զինքը Մանազկերտի ժողովին գումարման վրայ խօսած ժամանակինն, ինչպէս նաև ուրիշներ»<sup>58</sup>։ Մեջբերումներից ենթադրելի է, որ Գրիգորիա Արշարունին ավտոակալել է ոչ թե «Լ» (30) կամ «ԻԳ» (23) տարի, այլ՝ «ԽԳ» (43)՝ եպիսկոպոսությունն առաջնորդելով 683–726 թթ.։ Ակնբախ է, որ հետագա գրչական արտագրությունների ժամանակ «ԽԳ» (43)-ն սխալմամբ ընդօրինակվել է «ԻԳ» (23)։

Այսպիսով, Արշարունյաց եպիսկոպոսների պիղանյան ցանկը, համալրված Հ. Աճառյանի հաշվարկներով և մեր փոքրիկ խմբագրական միջամտություններով, ստանում է հետևյալ ամփոփ տեսքը.

Անուն	Տևողություն	Առաջնորդության տարիներ
Կնդակ կամ Խնդակ	46 տարի	444–490 թթ.
Յովհան	11	490–501 թթ.
Թաթուլ	9	501–510 թթ.
Թովմաս Ա	20 կամ 40	510–550 թթ.
Հաւուկ	11 կամ 16	550–566 թթ.
Թովմաս Բ	10 կամ 16	566–582 թթ.
Մովսէս Ա	10 կամ 15	582–597 թթ.
Յոյս	1	597–598 թթ.
Մովսէս Բ	13 կամ 12	598–610 թթ.
Թէոփիլոս	36	610–646 թթ.
Ղազար	37	646–683 թթ.
Գրիգորիա	43	683–726 թթ. <sup>59</sup> ։

<sup>55</sup> Տե՛ս Մ ա դ ա ք ի ա ր ք ե պ ս . Օ Ր մ ա ն յ ա ն . 2001, ս . 977:

<sup>56</sup> Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն Տրեգերական, 1885, էջ 103:

<sup>57</sup> Պ . Հ ա կ ո բ յ ա ն . 2003, էջ 25:

<sup>58</sup> Ս . Մ . 1929, թիւ Ժ , էջ 300:

<sup>59</sup> Ըստ Ս . Կոբյանի՝ Արշարունյաց եպիսկոպոսների ցանկն ունի հետևյալ տեսքը.

1. Կնդակ 444/8–490/4
2. Յովհան 490/4–501/5
3. Թաթուլ 501/5–507/8–510/4
4. Թովմաս Ա. 510/4–550/4
5. Հաւուկ 550/4–554/5–561/5
6. Թովմաս Բ. 561/5–571/5
7. Մովսէս Ա. 571/5–581/5
8. Յոյս 581/5–582/6

Գրիգորիս Արշարունի փիլիսոփային շարունակել է աջակցել Վահանի որդին՝ Հայոց իշխան Ներսես Կամսարականը (689–693), որը հովանավորում էր նաև Անանիա Շիրակացուն (610–685) և թարգմանիչ Փիլոն վարդապետ Տիրակացուն (Շիրակացուն): Վերջինս Ներսես Կամսարականի առաջարկով ժամբ հունարենից հայերեն է թարգմանել Սոկրատ Սկոլաստիկոսի եկեղեցական պատմությունը<sup>60</sup>: Իսկ Անանիա Շիրակացին երախտագետ է գտնվել իր հովանավորողի նկատմամբ. մեծ գիտնականի թվաբանական «խնդրագրքի» 20-րդ խնդրում հիշատակում է Շիրակի և Արշարունեաց տեր Ներսես Կամսարականին<sup>61</sup>, որի որսատեղին էր Արտին լեռան ստորոտը, և ով որսից առաջ իր եղբայրների ու ազատների հետ գտնվում էր Թալին գյուղում<sup>62</sup>: Այդտեղ Հայոց իշխան Ներսես Կամսարականի իրար մոտ կառուցած եկեղեցիներից (Ս. Աստվածածին, Ս. Կաթողիկե) երկրորդը, կարծում ենք, նրա իշխանավարության շրջանում (689–693) ծառայել է որպես Արշարունյաց եպիսկոպոսության աթոռանիստ:

Կամսարականները մեծապես աջակցել են նաև կրթությանը, հատկապես՝ բարձր կարգի դպրոցները. ըստ ամենայնի, խնամակալել են Արշարունյաց եպիսկոպոսության հոգևոր սահմաններում գործող վարդապետարանները: Դրանցից առավել հայտնի էին Շիրակի դպրեվանքը (որը մերթ տեղադրվում է Ախուրյանի աջ ափին գտնվող Կարմիր վանքում՝ Հոռոմոսից ոչ հեռու<sup>63</sup>, մերթ Գյումրու մոտ՝ Առյուծի [Չարքյազի] ձորում, ռուսական ամրոցի տարածքում<sup>64</sup>) և Արշարունյաց դպրոցը:

Հայ եկեղեցու ամուլ վիճակը (728–855) պիտի բացասաբար անդրադառնար նաև Արշարունյաց եպիսկոպոսության վրա, նրա դիրքերը որոշ չափով պիտի թուլանային, և երկրի հոգևոր կյանքում չունենար այն ազդեցությունը, որ իր թեմակալ եպիսկոպոսի մասնակցությամբ հիշատակվեց Պարտավի 768 թ. Բ ժողովում: Չնայած այս շրջանում հայտնի է դարձել Շիրակի Զրեակի անապատի դպրոցը, որը բացել է վանքի հիմնադիր առաջնորդ, հետագայում՝ Հայոց կաթողիկոս Սողոմոն Ա Գառնեցին (791–792)<sup>65</sup>:

Թեև 785 թ. հետո Կամսարականները, իրենց տիրույթները վաճառելով, հեռացան Արևելյան Հայաստանից, սակայն եպիսկոպոսությունը շարունակեց պահպանվել և առկա փաստագրական նյութերով Բագրատունյաց թագավորության ժամանակ էլ շարունակում էր կոչվել Արշարունյաց: Աշոտ Մսակեր Բագրատունին (Հայոց իշխան՝ 804–824) «գանձագին արար զգաւառն Արշա-

? 582/6–604/8 ?

9. Թէովփիլոս 604/8–638/40–640/4

10. Գրիգոր 640/4–645–?

11. Մովսէս Բ. ամս ժԲ ? – ?

12. Ղազար ? –683

13. Գրիգորիս 683 /4–713. (Ս. Կոպյան. 1924, ս. 30):

<sup>60</sup> Մ ա դ ա ք ի ա ա ր ք ե պ ս. Օ Ր մ ա ն յ ա ն. 2001, ս. 929–930:

<sup>61</sup> Ա շ. Մ ա ն ո լ չ ա ր յ ա ն. 2020, էջ 38:

<sup>62</sup> Յ ա դ ա գ ս հ ա ր ց մ ա ն ե ւ լ ու ծ մ ա ն ե ր ի ց ս ե ր ա ն ե ա լ Ա ն ա ն ի ա վ ա ր դ ա պ ե տ ի Շ ի ր ա կ ա ց ո յ, 1918, էջ 25–26, Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի. 1979, էջ 58:

<sup>63</sup> Ղ. Ա լ ի շ ա ն. 1881, էջ 16:

<sup>64</sup> Ս. Ա տ ր պ ե տ. 1913, թիւ 10, ս. 580:

<sup>65</sup> Ա. Ա լ պ ո յ ա ճ ե ա ն. 1946, հ. Ա, էջ 142:

րունեաց յագգէն Կամսարականաց (նաև Շիրակը – Ա. Մ.) և զարքունիսն ի Կոզովտէ յԱրշարունիս փոխեաց»<sup>66</sup>: Այս եղելութիւնը պիտի նորից բարձրացնէր Արշարունյաց եպիսկոպոսութեան կշիռը:

Արշարունյաց եպիսկոպոսութիւնը Բագրատունյաց թագավորութեան շրջանում (IX–XI դդ.)

Ցավոք, մեզ հայտնի չեն տեղեկութիւններ IX դարից մինչև X-ի կես Արշարունյաց թեմակալ առաջնորդների մասին: Միայն X դարի կեսին, ըստ Հայր Առաքել Երզնկացիի, հիշվում է «Յովհաննէս»<sup>67</sup>: Այս ընթացքում երկրի ներքաղաքական, հոգևոր կյանքում աննախադեպորեն բարձրանում է Շիրակ գավառի դերը. Հայոց կաթողիկոս Անանիա Ա Մոկացին (946–968) հայրապետական ակտիվ 947 թ. Վասպուրականի Աղթամարից տեղափոխում է Արգինա գյուղաքաղաք: Արդեն 965–972 թթ. Արշարունյաց եպիսկոպոս է հիշատակվում Անանիա Մոկացու քրոջ որդի Խաչիկը, ով հետո «եղև կաթողիկոս»<sup>68</sup>: Վահան Ա Սյունի կաթողիկոսի (968–969)՝ քաղկեդոնականութեան հանդեպ համակրութեան հարցը քննարկելու նպատակով Աշոտ Ողորմած թագավորի (953–977) նախաձեռնութեամբ Անի մայրաքաղաքում 969 թ. հրավիրված Ա ժողովի մասնակիցների շարքում է «Տէր Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս»<sup>69</sup>: Նա 972 թ. դառնում է Հայոց կաթողիկոս՝ Խաչիկ Ա Արշարունի (972–990)<sup>70</sup>, ով հայտնի է շինարարական գործունեութեամբ. վերանորոգել է Ախուրյան գետի ափին գտնվող Արգինայի կաթողիկոսարանը, որի կողքին Անանիա Մոկացու հանգստարանն է, կառուցել է Արգինայի Ս. Կաթողիկէ եկեղեցին՝ ձեռամբ Հայոց ճարտարապետ Տրդատի<sup>71</sup> (ինքն էլ թաղված է այդ տաճարի հյուսիսային կողմում)<sup>72</sup>: Խաչիկ Ա Արշարունին «պաշարել է Սեբաստիայի և Մելիտինեի մետրոպոլիտների ոտնձգութիւնների դեմ՝ պաշտպանելով Հայ առաքելական եկեղեցու ուղղափառ դավանութիւնը»<sup>73</sup>: Բյուզանդական կայսրութեան արևելյան շրջաններում հայ բնակչութեանը հունական եկեղեցու դավանաբանական ոտնձգութիւններից զերծ պահելու նպատակով Անտիոքում, Տարսոսում, Իսապրիայում և այլուր նշանակել է եպիսկոպոսներ»<sup>74</sup>:

Աղբյուրների վկայութիւններով Խաչիկի Ա Արշարունուց հետո Արշարունյաց եպիսկոպոս է հիշատակվում Տեր Սահակը. «Եւ ապա զկնի Տեառն

<sup>66</sup> Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, 1885, էջ 106:

<sup>67</sup> Ղ. Ա. Լիշան. 1890, էջ 56:

<sup>68</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>69</sup> Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, 1885, էջ 181:

<sup>70</sup> Խաչիկ Ա. Արշարունու հայրապետութեան թվականների հետ կապված տե՛ս Ա. Շ. Մանուչարյան. 2019, էջ 85–88:

<sup>71</sup> Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, 1885, էջ 187:

<sup>72</sup> Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, 2002, էջ 430:

<sup>73</sup> Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, 1885, էջ 202–243:

<sup>74</sup> Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, 2002, էջ 430:

Խաչկայ՝ Գագիկ արքայ Հայոց ժողով եպիսկոպոսաց արարեալ, որ յաշխարհէս Հայոց և որ Յունաց կողմանէն, որոց գլուխ Տէր Սահակ Արշարունեաց եպիսկոպոս և նստուցանեն զնա (Սարգիս Ա Սևանցուն– Ա. Մ.) յաթոռ կաթողիկոսութեանն մեծաշուք պատուով»<sup>75</sup>: Հայոց և Վրաց շահնշահ Գագիկ Ա Բագրատունին (990–1020) Մրենի Ս. Կաթողիկէ եկեղեցու անթիվակիր վիմագրում հրամայում է. «ԱՁԱՏԵԱԼ ԵՄ ՁՄՐԵՆՈՅ ԶԿՈՒ ՈՐ Ի ՆԱԽՃԱԻԱՆԻ ԷՐ ՁՄԱՐԴՈՒ ԵՒ ԶԵԶԻՆ Ի ԶԵՈՒ ԽՆԴՐՈՅ ԱՐՄԱՍԻՒՍՏԻ ՏԵԱՌԵՆ ՍԱՀԱԿԱ ԱՐՇԱՐՈՒՆ/ԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՐ ԱՆՄԱԻՌԱՑ ԽՆԴՐԵ Ի ՔՐԻՍՏՈՍԷ ԹՈՂՈՒԹԻՒՆ ԼԻՆԵԼ ՄԵՂԱՑ ԻՄՈՅ»<sup>76</sup>: Այսինքն՝ Արշարունյաց եպիսկոպոս Տեր Սահակի խնդրանքով Հայոց հզորագույն արքա Գագիկ Շահնշահն ազատում է Շիրակի նախնական գյուղաքաղաքի բնակիչներին, նաև՝ եղներով հանդերձ, պարտադիր, ճրի աշխատանքներ կատարելուց: Այդ ապահարկության դիմաց Սահակ եպիսկոպոսը պարտավորվում է անմոռաց կերպով Քրիստոսին խնդրել արքայի մեղքերի համար թողություն: Արձանագրության մոտավոր ժամանակը որոշվում է Գագիկ Ա Բագրատունի թագավորի գահակալության տարիներով, ինչպես իրավացիորեն նկատվել է<sup>77</sup>: Սահակ Արշարունի եպիսկոպոսը հիշատակվում է Մրենի տաճարի այլ վիմագրերում ևս. «...Ի ՆԽԱ (992) ԹԻՒՎԱԿԱՆԻՆ ԵՍ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱ ՈՐԴԻ ԷՏՈՒ ԶԻՄ ԱՅԳԻՆ/ ՈՐ Ի ԳԵՏԵԶՐԵ ԻՄ ԶՈՈԱՑ ԱՐԿԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ Ի ԶԵՈՒ ԱՐՄԱՍԻՎ/ ԵՒ ՀՈԳՈՒՈՐ ՏԵԱՌԵՆ ՍԱՀԱԿԱՑ ...»<sup>78</sup>: Որոշ ժամանակ անց Գագիկ Ա-ի քույր Սոփին հայտնում է՝ ԵՍ՝ ՀԱՅՈՑՈՅ ԵՒ ՎՐԱՑ ԹԱԳՈՒՀԻ, ՏՎՅԱԼ ԵՄ ԵՒ/ ՀԱՍՏԱՏԵԱԼ ԶԴԱՎԹԻ ԶԱՅԳԻՆ Ի ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԱՂԻԿԵ ԵՒ Ի ՏԷՐ ՍԱՀԱԿ ԵՒ Ի ՆՈՐԻՆ ԱԹՈՈՒԱԿԱԼՍ ԶՈՐ ԻՆՔԵ...»<sup>79</sup>:

Առկա վիմագրական նյութերից պետք է փաստել, որ Արշարունիքի աթոռակալի հոգևոր-վարչական պաշտոնում Տեր Սահակին հաջորդել է Անանիա եպիսկոպոսը: Այսպես, Խձկոնքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային ճակատի ՆԾԵ (1006) թվականի արձանագրությունը հիշատակում է. «ՏԵԱՌԵՆ ԱՆԱՆԵԱՑ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ»<sup>80</sup>:

Տեր Անանիան Հռոմոսի՝ մի բավականաչափ արժեքավոր, եզակի, խոսուն տեղեկություն պարունակող արձանագրությունում կոչվում է՝ «Արշարունեաց եւ Ճակատոց եւ Արայրարտեան գաւառի եպիսկոպոս»<sup>81</sup>: Ճակատք պատմագավառը գտնվել է Երասխաձոր–Արշարունիքից հարավ-արևելք: Անանիան, որպես «նուստ եւ յետին ի վերակացուս եկեղեցո առաջնորդ գոլով սուրբ ուխտիս», հիշատակվում է նաև Հռոմոսի 1013 թ. վիմագրում<sup>82</sup>:

Հռոմոսի այս արձանագրությունից պետք է եզրակացնել, որ Բագրատունյաց թագավորության շրջանում (874/85–1045) Արշարունյաց եպիսկոպոսութ-

<sup>75</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, 1885, էջ 259:

<sup>76</sup> И. Орбели. 1974, с. 35.

<sup>77</sup> Ս. Կարապետյան. 2012, № 7, էջ 56:

<sup>78</sup> И. Орбели. 1974, с. 36; Ս. Կարապետյան. 2012, № 7, էջ 55:

<sup>79</sup> И. Орбели. 1974, с. 37; Ս. Կարապետյան. 2012, № 7, էջ 55–56:

<sup>80</sup> Ղ. Ալիշան. 1890, էջ 113:

<sup>81</sup> Վիմական տարեգիր. ցուցակ արձանագրութեանց հայոց, 1913, էջ 26:

<sup>82</sup> Ղ. Ալիշան. 1881, էջ 32:

յունը մի տեական ժամանակ՝ ենթադրաբար սկսած Անանիա Մոկացու կողմից 947 թ. հայրապետական աթոռը Շիրակում՝ Արգինայում, հաստատելուց մինչև 1031 թ., համարվել է կենտրոնական Հայաստանի գլխավոր թեմը: Այս շրջանում աթոռանիստը պետք է, որ եղած լինի Մրենի Ս. Կաթողիկե եկեղեցին՝ կառուցված 613–639 թթ.:

1031 թ. Բջնիի եպիսկոպոսության ստեղծմամբ՝ Այրարատ աշխարհում գլխավորի դերն անցնում է Նիգի նորաստեղծ թեմին<sup>83</sup>:

Ըստ ամենայնի, Բագրատունյաց թագավորության կործանումը (1045) խիստ բացասաբար է անդրադարձել Արշարունիքի եպիսկոպոսության վրա, որը թուլանալով որոշ ժամանակ անց դադարել է գոյություն ունենալուց ավելի քան յոթ դար գործելուց հետո:

Շիրակում և Արշարունիքում Բագրատունիների հաստատվելուց հետո ոչ միայն հաջողությամբ շարունակվեց թեմում Կամսարականների ավանդած կրթական գործի զարգացումը, այլև այն բարձրացվեց նոր մակարդակի: Այդ գործում իրենց նպաստը բերեց Հայոց Աբաս արքայի (928–953) ու Անանիա Մոկացի կաթողիկոսի օրոք Հայաստանի բյուզանդահայատակ մասից դավանաբանական հողի վրա հալածանքների ենթարկվող հայ վանականների ներգաղթը Բագրատունյաց թագավորություն, Վասպուրական և այլուր, որտեղ այդ ուսյալ, հունարենին ազատ տիրապետող, հունական դպրությունը, փիլիսոփայությունն ու մշակույթին քաջածանոթ հոգևորականները հիմնեցին մենաստաններ. մասնավորապես՝ Շիրակում և Արշարունիքում Հոռոմոսի, Կապուտքարի, Կամրջածորի վանքերը, բացեցին կրթական կենտրոններ, վարդապետարաններ՝ իրենց ջանադիր ուսուցմամբ նոր մակարդակի բարձրացնելով հայկական գիտական, աստվածաբանական միտքը: Հատկապես մեծ հռչակ էին վայելում Կամրջածորի, Արգինայի, Անիի վարդապետարանները, որտեղ դասավանդում էին նշանավոր գիտնականներ, տոմարագետներ, մատենագիրներ Սամուել Կամրջածորեցին (X–XI դդ.), Հայոց վարդապետ Հովհաննես Կոզեռնը (XI դ.), Հովսեփ Հնձացին, Կիրակոս Թեղենացին, փիլիսոփա, լեզվաբան, բանաստեղծ, հայտնի ռազմաքաղաքական, դիվանագիտական գործիչ Գրիգոր Մազիստրոս Պահլավունին (985/90–1058) և ուրիշներ:

Խաչիկ Արշարունին Արգինայում հիմնել էր հարուստ մատենադարան, որտեղ պահվում էին Սուրբ գրոց գրքեր, առաքելական, մարգարեական պատգամներ, ընդհանրական և Հայ եկեղեցու վարդապետների գրվածքներ<sup>84</sup>. «Կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (990–1019 – Ա. Մ.) կաթողիկոսարանի հետ միասին Արգինայից Անի է տեղափոխել նաև մատենադարանը և վարդապետարանը»<sup>85</sup>:

### Եզրակացություն

Արշարունյաց եպիսկոպոսությունն ավելի քան 700 տարի կարևորագույն դերակատարություն է ունեցել ոչ միայն Հայոց քաղաքական, այլև Հայ եկեղեցու պատմության մեջ: Պատմական այդ թեմը վաղ շրջանում իր անուրա-

<sup>83</sup> Մանրամասները տե՛ս Ա. Ղ. Մանուչարյան. 2019, էջ 116–118:

<sup>84</sup> Մ ա ղ ա ք ի ա ար ք ե պ ս. Օր մ ա ն յ ա ն. 2001, ս. 1329–1330:

<sup>85</sup> Բրիտոնյա Հայաստան հանրագիտարան, 2002, էջ 144:

նալի նպաստն է բերել Հայ գիտակրթական մտքի զարգացման գործում՝ վայելելով Կամսարական նախարարական տան հովանավորությունը: Այս շրջանում եպիսկոպոսանիստը եղել է Տեկորի տաճարը, ապա, կարճ ժամանակով Թալինի Ս. Կաթողիկե եկեղեցին: VIII դ. 30-ական թվականներից մինչև IX դ. կեսերն անկում ապրելով՝ Արշարունիքի թեմը վերստին ծաղկեց Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում (874/885–1045), հատկապես՝ կաթողիկոսական աթոռի՝ Շիրակում հաստատվելուց հետո (947 թ.): Այդ ընթացքում նոր մակարդակի բարձրացավ Հայ գիտակրթական միտքը՝ շնորհիվ Արշարունիք բուզանդասայ ուսյալ հոգևորականության ներգաղթի: Մինչև 1031 թ. Արշարունյաց եպիսկոպոսությունը եղել է կենտրոնական Հայաստանի գլխավոր թեմը, եպիսկոպոսական աթոռանիստը՝ Մրենի Ս. Կաթողիկե եկեղեցին:

Հայոց պետականության կորստից հետո (1045 թ.) Արշարունյաց թեմը կարճ ժամանակ անց դադարեց գոյություն ունենալ: Փոխարենը վերելք ապրեց 1072 թ. կազմավորված Շիրակի թեմը, որն իր հոգևոր-վարչական իրավասությունն տարածեց նաև Արշարունիք գավառի վրա:

Աշոտ Մանուչարյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճակագրության բաժնի առաջ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ վիճակագրություն, Միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, պատմամշակութային հուշարձանների (վանքերի, եկեղեցիների) ուսումնասիրություն պատմական և ժամանակակից աղանդներ: Հեղինակ է 7 գրքի, 76 հոդվածի և հրատարակման: ashot.manucharyan.1959@mail.ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալիշան Ղ. 1881, Շիրակ, Վենետիկ-Ս. Ղազար, 192 էջ:  
 Ալիշան Ղ. 1890, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Ս. Ղազար, 590 էջ:  
 Ալպոյաճեան Ա. 1946, հ. Ա, Պատմութիւն հայ դպրոցի, Գահիրէ, տպ. Նոր Աստղ, 626 էջ:  
 Աճառյան Հ. 1944, հ. Բ, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 682 էջ:  
 Աճառյան Հ. 1946, հ. Գ, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 742 էջ:  
 Անանիա Շիրակացի, 1979, Մատենագրություն, թարգմ., առաջ. և ծանոթ. Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 400 էջ:  
 Ատրպետ Ս. 1913, թիւ 10, Ղարեվանք.– «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), ս. 577–587:  
 Գիրք թղթոց, 1994, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 712 էջ:  
 Գիրք կանոնաց եւ դատաստանի, 1831, Կ. Պոլիս:  
 Եղիշե. 1989, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ե. Տեր-Մինասյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 448 էջ:  
 Կանոնագիրք հայոց, 1971, Բ. (աշխատ. Վ. Հակոբյանի), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 473 էջ:



Կարապետյան Ս. 2012, № 7, Մրենը և նրա հուշարձանները. – «Վարձք» (Երևան), էջ 31–64:

Կոզեան Ս. 1924, թիւ 1–2, Եպիսկոպոսը Արշարունեաց եւ տան Կամսարականացն. – «Հանդէս ամսօրեա» (Վիեննա), ս. 22–31:

Կոզեան Ս. 1926, Կամսարականները «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, Մխիթարեան տպ., 179 էջ:

Հակոբյան Պ. 2003, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 492 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, 1984, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 692 էջ:

Հարությունյան Ռ. 2008, № 2, Հայ եկեղեցու թեմական բաժանումը մարզպանական Հայաստանում. – «Բանբեր Երևանի համալսարանի», ԵՊՀ հրատ., էջ 141–148:

Ղազար Փարպեցի. 1982, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուբաբյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 537 էջ:

Ղաֆաղարյան Կ. 2007, էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, «Գիտություն» հրատ., 334 էջ:

Մ. Ս. Գրիգորիս Արշարունի, 1929. – «Բազմավէպ», թիւ Ժ, էջ 299-303:

Մաղաքիա արքեպս. Օրմանեան. 2001, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ» հրատ., 1870 ս.:

Մանուչարյան Ալ. 1966, № 1, Մրենի և Թալինի տաճարների շինարարական արձանագրությունները. – ՊԲՀ, էջ 247–252:

Մանուչարյան Աշ. 2019, Հայոց եկեղեցու պատմության վիճաբարագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, «Լուսաբաց» հրատ., 301 էջ:

Մանուչարյան Աշ. 2020, Գառնահովիտ. Սբ. Գևորգ եկեղեցի, Երևան, «Լուսաբաց» հրատ., 104 էջ:

Մովսես Խորենացի. 1981, Հայոց պատմություն (քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանցի), Երևան, ԵՊՀ հրատ., 588 էջ:

Յաղագս հարցման եւ լուծման երիցս երանեալ Անանիա վարդապետի Շիրակացոյ, 1918, տպագրեաց Յ. Արբելի, Պետրոգրադ, Ռուսաստանի ԳԱ տպ., 79 էջ:

Չամչյանց Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1060 էջ:

Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, 1910, Թիֆլիս, Էլեքտրաշարժ տպարան, 618 էջ:

Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, 1885, հրատ.՝ Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, տպարան Ի. Ն. Սկորոխոդովի, 438 էջ:

Վարդանյան Վ. 2005, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, «Մայր Աթոռ» Ս. Էջմիածնի հրատ., 398 էջ:

Վիճական տարեգիր. ցուցակ արձանագրութեանց հայոց, 1913, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, տպարան Գիտութեանց ձեմարանի կայսերականի, 292 էջ:

Ուխտանէս Եպիսկոպոս, 1871, Պատմութիւն Հայոց, հատուած Ա, Վաղարշապատ, տպարան Ս. Էջմիածնի, 141 էջ:

Փավստոս Բուզանդ. 1987, Հայոց պատմություն (բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ.՝ Ստ. Մալխասյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:

Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, 2002, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1076 էջ:

Орбели И. 1963, Избранные труды. Ереван, Изд. АН АрмССР, 683 с.

Орбели И. 1974, Надписи Мрена. – «Հայագիտական հետազոտություններ», պր. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 33–43:

## ЕПИСКОПАЛЬНАЯ ЕПАРХИЯ АРШАРУНИКА

(IV–XI вв.)

## АШОТ МАНУЧАРЯН

## Р е з ю м е

*Ключевые слова: епископство, католикос, престол, духовный центр, епархия, надпись, собор, памятная запись, историографический, богословский.*

Епархия Аршаруник – одна из старейших епархий Армении, образованная Св. Григорием Просветителем во втором епархиальном отделении. В середине IV века, во время правления католикоса Св. Нерсеса Великого, она была присоединена к епископству Багреванда. Он стал главным епископатом страны, когда католикос Св. Саак Партев, в 432 г. вернувшись из Персии, поселился в провинции Багреванд. Известными епископами Багреванда в этот период были философ V в. Езник Кохбаци и родоначальник армянской историографии Мовсес Хоренаци.

После смерти Мовсеса Хоренаци (490 г.) епархия Аршаруник отделилась от Багреванда и действовала самостоятельно. В период с 490 г. до собрания Маназкерта (726 г.) из источников известны имена 12 епископов Аршаруника. Самым известным из них был философ Григор Аршаруни (683–726), который был помощником Армянского католикоса Св. Иоанна III Одзунского. В епархии Аршаруник были высшие учебные заведения (Ширакская семинария, духовная школа Аршаруника), где преподавали математик, космолог Ананя Ширакаци (610–685), философ, переводчик Пилон Тиракаци.

После 726 г. епархия Аршаруник пришла в упадок. Она возродилась во время правления Багратидов (874 / 855–1045). Самым известным епископом Аршаруника в этот период был Хачик, впоследствии ставший Армянским католикосом – Хачик I Аршаруни (972–990). Во время его правления знаменитый архитектор Трдат построил католикосскую церковь Аргины.

Вскоре после падения династии Багратидов (1045 г.) епископство Аршаруник прекратило свое существование.

*Ашот Манучарян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела эпиграфики Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: эпиграфика, политическая история Средневековой Армении, история Армянской церкви, изучение историко-культурных памятников (монастыри, церкви), исторические и современные секты. Автор 7 книг, 76 статей и публикаций. [ashot.manucharyan.1959@mail.ru](mailto:ashot.manucharyan.1959@mail.ru)*

EPISCOPAL DIOCESE OF ARSHARUNIK  
(the 4th– the 9th cc.)

ASHOT MANUCHARYAN

S u m m a r y

*Key words: bishopric, Catholicos, throne, spiritual center, diocese, inscription, cathedral, commemorative inscription, historiographic, theological.*

The Diocese of Arsharunik is one of the oldest dioceses in Armenia, formed by St. Gregory the Illuminator in the second diocesan department. In the middle of the 4th century, during the reign of Catholicos St. Nerses the Great, it was annexed to the bishopric of Bagrevand. It became the main episcopate of the country when Catholicos St. Sahak Partev returning from Persia in 432 AD, settled in the province of Bagrevand. The famous bishops of Bagrevand during this period were the 5th century philosopher Yeznik Koghbatsi and the patriarch of the Armenian historiography Movses Khorenatsi.

After the death of Movses Khorenatsi (490 AD), the diocese of Arsharunik separated from Bagrevand and acted independently. From 490 AD to the Council of Manazkert (726), the names of 12 bishops of Arsharunik are known from sources. The most famous of them was philosopher Grigor Arsharuni (683–726), who was an assistant to the Armenian Catholicos St. John III of Odzun. In the diocese of Arsharunik there were higher educational institutions (Shirak seminary, theological school of Arsharunik), where mathematician, cosmologist Anania Shirakatsi (610–685), philosopher, translator Pilon Tirakatsi taught.

After 726, the diocese of Arsharunik fell into decay. It was revived during the reign of the Bagratids (874/855–1045). The most famous bishop of Arsharunik during this period was Khachik, who later became the Armenian Catholicos Khachik I of Arsharuni (972–990). During his reign, famous architect Trdat built the Cathedral of Argina.

Soon after the fall of the Bagratid dynasty (1045), the bishopric of Arsharunik ceased to exist.

*Ashot Manucharyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Senior Researcher at the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: epigraphy, political history of medieval Armenia, history of the Armenian Church, the study of historical-cultural monuments (monasteries, churches), historical and modern sects. Author of 7 books, 76 articles and publications. ashot.manucharyan.1959@mail.ru*

ՀՏԴ 664.7(479.25)

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԲԱՇՆՈՒՄԸ  
ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱԳԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ\*

ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՑԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-203>

Բանալի բառեր՝ Ուրարտական թագավորություն, տաճարային-պալատական տնտեսություն, սեպագիր արձանագրություններ, Հնագիտական աղբյուրներ, Հացահատիկի պաշարներ, օրապահիկ, վերաբաշխում:

## Նախաբան

Ուրարտական թագավորությունը (Բիայնիլի, Ք. ա. IX–VII դդ.) վերաբաշխման համակարգով տնտեսությամբ առաջավորասիական տիպի պետություն էր և նմանվում էր, օրինակ, շումերական Ուրի III հարստությանը, միկենյան քաղաք-պետություններին կամ խեթական տերությունը Ք. ա. III–II հազարամյակներում<sup>1</sup>: Պատահական չէ, որ մեզ հասած ուրարտական կառույցների մի զգալի մասը թագավորության քաղաքներում/վարչատնտեսական կենտրոններում բացված խոշորածավալ ամբարներ ու մառաններ են: Այդ նույնը վերաբերում է նաև ուրարտական գրավոր աղբյուրներին:

Վերաբաշխման համակարգը ներառում էր պետական շտեմարաններում տարբեր միջոցների, նախևառաջ՝ Հացահատիկի պաշարների կուտակում և տաճար-պալատի հետ կապված հասարակության տարբեր շերտերին ծառայություն/աշխատանքի դիմաց դրանց հետագա վերաբաշխում, ինչն իրականացվում էր տաճար-պալատի անմիջական վերահսկողության ներքո: Վերաբաշխման համակարգի վկայություններից է նաև ստանդարտացված խեցեղենի զանգվածային արտադրությունը պետական արհեստանոցներում՝ դրանց տարողության հստակ նշումներով, ինչպիսիք են, օրինակ, 1 LIŠ (մոտ 1 լ) ծավալով խեցանոթները<sup>2</sup>: Այս երևույթը հիշեցնում է միջագետքյան, այսպես կոչված, «sila-անոթներ»-ի, այն է՝ մոտ 1 լ տարող-

\* Ներկայացվել է 06. IX. 2021 թ., գրախոսվել է 30. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 16. XI. 2021 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած Փինանսական աջակցությամբ՝ 20TTSH–005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

<sup>1</sup> Տե՛ս Համապատասխանաբար P. Steinkeller. 1987, pp. 15–33; J.-P. Grégoire. 1999, pp. 223–237; R. K. Englund. 2012, pp. 427–458 (նշված գրականությունները):

<sup>2</sup> A. Çilingiroğlu, M. Salvini. 2012, p. 101, Figs. 9–11.

ղությամբ խեցեղենի զանգվածային արտադրությունը օրապահիկ հատկացնելու, այսինքն՝ վերաբաշխում կատարելու համար<sup>3</sup>:

Վերաբաշխման համակարգի վրա հիմնված տնտեսությունը չէր ենթադրում ազատ շուկայական հարաբերություններ, իսկ արտաքին առևտուրը գտնվում էր տաճար-պալատի վերահսկողության ներքո: Պատահական չէ, որ տնտեսական/առօրյա գրագրությունը ներկայացնող ուրարտական դիվանի մեզ հասած տեքստերից և ոչ մեկը չի վերաբերում ապրանքների կամ շարժական ու անշարժ գույքի առքուվաճառքին, գրավադրմանը կամ շուկայական հարաբերությունների ենթադրած ինչ-որ այլ գործարքի ի տարբերություն Ուրարտուի հարևանների<sup>4</sup>:

Ուրարտուում տնտեսության հիմքը կազմող վերաբաշխման համակարգի գոյություն գլխավոր վկայությունը, ինչպես և վերը նշվեց, հացահատիկի պաշարների խոշորածավալ կուտակումն էր պետական շտեմարաններում [ամբարներ, սիլոսներ (հացահատիկի ստորգետնյա պահեստահորեր) և մառաններ՝ հարյուրավոր կարասներով]: Դա պարզ դարձավ ուրարտական խոշոր վարչատնտեսական կենտրոնների պեղումներից հետո: Պատահական չէ դրանց տրված բնութագիրը՝ «քաղաք-շտեմարան»<sup>5</sup>: Այս առումով ուրարտական վարչատնտեսական կենտրոնները հիշեցնում էին միջինասորեստանյան դարաշրջանի «արքայական շտեմարաններ»-ը (URU.É.karme)<sup>6</sup>, որոնք գտնվում էին թագավորության գլխավոր քաղաքներում (Աշշուր, Կար-թուկուլթի-Նինուրտա, Դուր-Կատլիմու, Վաշշուկաննի և այլն)<sup>7</sup>: Ակնհայտ է, որ հացահատիկի պաշարների կուտակումն ուրարտական տնտեսության և, ընդհանրապես, պետության գոյության գրավական էր:

**Պետական շտեմարանները. գրավոր և հնագիտական վկայություններ**

Պետական պահուստներ ստեղծելու և պետության հիմնական գործառույթներից մեկը՝ վերաբաշխում իրականացնելու համար արքայական իշխանությունը կարևոր տեղ էր հատկացնում պետական ամբարների կառուցմանը, որոնք կոչվում էին wari (É), a-(a)-ri, հգն. warili (É), a-ri-li)<sup>8</sup>: Որպես կանոն՝ ամբարները կառուցվում էին վարչատնտեսական կենտրոնների պարիսպներից ներս՝ տեղի վարչակազմի տնօրինության ներքո և կայազորի պաշտպանության տակ: Ասորեստանյան արքա Սարգոն II-ի (Ք. ա. 722–705 թթ.) կողմից Ք. ա. 714 թ. դեպի Ուրարտու ձեռնարկված, այսպես կոչված, «Ց-րդ տարվա արշավանք»-ի նկարագրության մեջ հիշատակվում են պարսպապատ Թարվի և Թարմաքիսա քաղաքները և նշվում դրանցում գտնվող արքայական շտեմարանի մասին: Ասորեստանյան աղբ-

<sup>3</sup> L. Senior, H. Weiss. 1992, pp. 16–23.

<sup>4</sup> Y. H. Grekyan. 2019, p. 257.

<sup>5</sup> Ch. A. Burney. 1977, p. 1.

<sup>6</sup> B. Faist, J. Llop. 2012, pp. 25–33.

<sup>7</sup> J. Llop. 2005, S. 41–55; B. Faist, J. Llop. 2012, pp. 20–25.

<sup>8</sup> Г. А. Меликишвили. 1951, с. 25–26. Տե՛ս նաև Ռ. Մ. Թորոսյան, Ս. Գ. Հմայակյան. 1984, էջ 165–168:

յուրն այն անվանում է «նրա (իմա՝ Ուրարտուի արքայի) մեծաքանակ գարու տուն» (É ŠE.PAD.MEŠ-šú mātti)<sup>9</sup>: Այդ նույն աղբյուրն արշավանքի տարբեր դրվագներում հիշատակում է կուտակված «մեծաքանակ գարու» մասին, որն օգտագործվել է ասորեստանյան զինվորներին կերակրելու համար<sup>10</sup>: Նման դրվագներից մեկում ասվում է. «Գարու և ցորենի հսկա բուրգերը, որոնք օրեր շարունակ նրանք կուտակել էին ամբարներում՝ երկրի և նրա ժողովրդի կեցության համար, ես իմ ողջ բանակին հրամայեցի (դուրս) տանել՝ ձիերի, ջորիների, ուղտերի և ավանակների վրա (բարձած), և ինչպես բլուրներ կուտակեցի իմ ճամբարի մեջ»<sup>11</sup>:

Արքայական վիմագիր արձանագրությունների շուրջ մեկ-յոթերորդ մասը (37 արձանագրություն) վերաբերում է հացահատիկի շտեմարաններ կառուցելուն՝ սկսած Մենուա Իշպուխնորդուց (Ք. ա. մոտ 810–791 թթ.) մինչև Ռուսա Էրիմենայորդի (Ք. ա. մոտ 713–710/709 թթ.)<sup>12</sup>: Ոչ պակաս, քան տասնմեկ նման արձանագրություն է հայտնի միայն Արին Բերդից (Էրեբունի): Դրանցից հինգը թողել է քաղաքի հիմնադիր Արգիշթի Մենուայորդին (Ք. ա. մոտ 791/790–771 թթ.)<sup>13</sup>, առնվազն հինգը<sup>14</sup>՝ նրա հաջորդ Սարդուրի Արգիշթորդին (Ք. ա. 771–735 թթ.)<sup>15</sup>, և մեկը վերաբերում է Ռուսա Էրիմենայորդու իշխանության շրջանին<sup>16</sup>: Ամրոցում կառուցված պետական շտեմարանների տարողությունը միասին վերցրած՝ կազմում էր ավելի քան 106 հազ. 748 «կապի»:

Վանա լճից հյուսիս՝ Բաղնոցի մոտ կառուցված Ազնավուրթեփեի խոշոր ամրոցից (քաղաքի ուրարտական անվանումը հայտնի չէ) գտնվել են Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու թողած մեկական արձանագրություն՝ շտեմարան կառուցելու մասին: Դրանցից մեկը մատնանշում

<sup>9</sup> W. Mayer. 2013, S. 114–115 (Z. 189).

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 114–115 (Z. 186).

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 122–123 (Z. 262–263), տե՛ս նաև՝ նույն տեղում, էջ 116–119 (Z. 197, 219), 124–127 (Z. 274, 295):

<sup>12</sup> Վերջին ուսումնասիրություններից տե՛ս B. Christiansen. 2019, pp. 134–143.

<sup>13</sup> Н. В. Арутюнян. 2001 (այսուհետև՝ КУКН), № 207–211; M. Salvini. 2008, A 8–28A–E (այսուհետև՝ CTU I).

<sup>14</sup> Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում պահվող արձանագրություններից մեկը՝ Սարդուրի Արգիշթորդու կողմից 10 հազ. 100 «կապի» տարողությամբ ամբար կառուցելու մասին (CTU I, A 9–22a), ըստ Մ. Իսրայելյանի, ծագում է Էրեբունիից: Սակայն, այն տեղ չի գտել Գ. Մելիքիշվիլու և Ն. Հարությունյանի կազմած դիվանների՝ արինբերդյան տեքստերի շարքում: Բացի դա, արձանագրության համար նշվում են հայտնաբերման տարբեր թվականներ (1966՝ ըստ Մ. Իսրայելյանի, 1967՝ ըստ Մ. Սալվինիի, իսկ թանգարանի հաշվառման մատյանում նշված է 1959 թ.): Ձի բացառվում, որ արձանագրությունն, իրոք, Էրեբունիից է, սակայն միանշանակ պնդել չենք կարող: Շնորհակալություն ենք հայտնում թանգարանի տնօրեն Կ. Փահլևանյանին՝ աջակցության համար:

<sup>15</sup> КУКН, № 254, 265–268; CTU I, A 9–20–A 9–24.

<sup>16</sup> КУКН, № 444; CTU I, A 14–6.

է մինչ օրս հայտնի ամբարներից խոշորագույնի տարողությունը՝ 32 հազ. 57 «կապի»: Երկրորդ արձանագրությունը մատնանշում է 17 հազ. 20 թիվը<sup>17</sup>: Բաղնոցից նախկինում գտնված և Սարգուրի Արգիշթորդուն պատկանող արձանագրությունը ևս, ամենայն հավանականությամբ, ծագում էր Ազնավուրթեփեից<sup>18</sup>: Այն հայտնում է 18 հազ. 400 «կապի» տարողությամբ ամբար կառուցելու մասին<sup>19</sup>: Ըստ այդմ, Ազնավուրթեփեի ամբարների ընդհանուր տարողությունն առկա տվյալներով կազմել է ավելի քան 67 հազ. 477 «կապի»:

Ինչ արձանագրություն է հայտնաբերվել Հայկաբերդից (ուրարտ. Սարգուրիխինիի քաղաքը՝ ներկայիս Չավուշթեփեն Հայոց ձորում՝ Վան քաղաքից հարավ-արևելք): Բոլոր արձանագրությունները վերաբերում են քաղաքի հիմնադիր Սարգուրի Արգիշթորդու իշխանության շրջանին<sup>20</sup>: Շտեմարանների տարողությունը միասին վերցրած՝ հասնում էր 90 հազ. 632 «կապի»-ի:

Հետաքրքիր է, որ մեզ հասած նման արձանագրություններից մի քանիսը հունեն շտեմարանի տարողության չափի նշում, բայց փոխարենն առկա է մեկ կամ երկու դատարկ տող<sup>21</sup>: Ակնհայտ է, որ դրանք լրացվելու էին շտեմարանը կառուցելուց հետո:

Ուրարտական շտեմարանների մեծ մասի ծավալը միջինում տատանվում էր 5–10 հազ. «կապի»-ի սահմաններում: Ամենափոքր տարողությամբ շտեմարանը կառուցվել է Արմավիր–Արգիշթիխինիլում և տեղավորում էր 1432 «կապի»<sup>22</sup> հացահատիկ այն դեպքում, երբ ամենախոշոր շտեմարանների տարողությունն անցնում էր 30 հազ. «կապի»-ից<sup>23</sup>: Մեզ հասած ուրարտական արքայական արձանագրությունների տվյալներով՝ Ք. ա. IX–VIII դդ. կառուցված շտեմարանները միասին կարող էին կուտակել 414 հազ. 98 «կապի» հացահատիկ: Դա կազմում է ավելի քան 10 մլն 353 հազ, 450 լ<sup>24</sup> կամ 6723 տ<sup>25</sup>: Սարգուրի Արգիշթորդու տարեգրության հատվածներից մեկում նշվում

<sup>17</sup> Տե՛ս, Համապատասխանաբար, КУКН, № 182, 252; СТУ I, А 8–29, А 9–26.

<sup>18</sup> K. Balkan. 1960, S. 145.

<sup>19</sup> КУКН, № 251; СТУ I, А 9–25.

<sup>20</sup> КУКН, № 253; СТУ I, А 9–27, А 9–35.

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ, КУКН, № 267, прим. 1; СТУ I, А 8–33, А 9–23.


<sup>22</sup> КУКН, № 443; СТУ I, А 14–5.

<sup>23</sup> КУКН, № 182; СТУ I, А 8–29, А 8–32.


<sup>24</sup> Որպես միջին 1 kapi-ի (= BANEŠ/šimdu) համար ընդունում ենք 25 լ արժեքը՝ հիմնվելով միջագետքյան 1 BANEŠ/šimdu = 3 BÂN/sūtu և 1 BÂN/sūtu = 8 SILA/qû հարաբերակցության վրա: Տե՛ս, դեռևս, M. Salvini. 1969, p. 20. Այլ համադրության համար տե՛ս և հմմտ. M. Salvini, F. Mileto. 2010, pp. 367–368; M. Payne. 2005, pp. 89–94. Միջագետքյան ծավալի միավորների համար տե՛ս և հմմտ. M. A. Powell. 1987–1990, S. 501–502.

<sup>25</sup> Հաշվարկների համար որպես հիմք ենք վերցրել գարու 1 լ: 0.65 կգ հարաբերակցությունը: Տե՛ս P. Варданян, Д. Асатрян. 1980, с. 174–175 и прим. 12. Ըստ այդմ, 1 կգ գարին հավասար կլինի 1.54 լիտրի: 1 մ<sup>3</sup> ծավալով տարածքում հնարավոր է ամբարել 650 կգ կամ շուրջ 1000 լ գարի: Տարբեր հրատարակություններում այդ թիվը տատանվում է 600–850 կգ միջև. տե՛ս, օրինակ, R. J.


է 1 մլն 22 հազ. 133 «կապի» գարու մասին<sup>26</sup>, ինչը հավասար է մոտ 25 մլն 553 հազ. 325 լիտրի կամ շուրջ 16.6 հազ. տոննայի:



Պժ. 1




Պժ. 4



Պժ. 2



Պժ. 5



Պժ. 3



Պժ. 6

Ամբարների մի մասը վկայված է հնագիտորեն: Արին Բերդի շտեմարանները գտնվում են միջնաբերդի հյուսիսարևելյան հատվածում (Պժ. 1)<sup>27</sup>:

van der Spek. 2014, S. 237 (1 լ : 0.62 կգ) նաև՝ F. A. M. Wiggemann. 2000, p. 186; J. Seeher. 2000, S. 293, Anm. 105.

<sup>26</sup> КУКН, № 241G<sub>10</sub>; СТU I, А 9–3 VII<sub>10</sub>.

<sup>27</sup> Բոլոր գծանկարները մերն են: Հենվել ենք Б. Б. Пиотровский. 1962, с. 21, рис. 5; К. Л. Оганесян. 1980, с. 93, рис. 68; Կ. Ղաֆաղարյան. 1984, էջ 41, 90, Պժ. 10, 17բ, 28; С. Аvсі. 2013, с. 45 գծանկարների վրա:



Դրանք խուլ պատերով կառույցներ են, մուտքն ապահովվել է տանիքից: Հատակը սալարկված էր և պատված 5 սմ հաստությամբ խճաքարի շերտով: Դրա վրա փռվել է 5–7 սմ հաստությամբ մանր կտրատված և տափանցված ծղոտ, ինչը պաշտպանում էր հացահատիկը խոնավությունից<sup>28</sup>: Այդ նույն սկզբունքով էին կառուցված հացահատիկի պահեստահորերը խեթական տերություն մայրաքաղաք Խաթվոսասում (տե՛ս ստորև):

Առնվազն երեք ամբար է պեղվել Հայկաբերդում (գծ. 2–3)<sup>29</sup>: Այդ մասին են վկայում ոչ միայն դրանցում գտնված արձանագրությունները՝ շտեմարան կառուցելու մասին, այլև սենյակների կառուցվածքը. դրանք ևս ունեն խուլ պատեր, իսկ մուտքն ապահովվել է վերին հարկից/տանիքից<sup>30</sup>: Ամբարները համեմատաբար փոքր են՝ 98.8, 33.75 և 38.25 մ<sup>2</sup> մակերեսով: Գտնված արձանագրությունները վկայում են դրանցում համապատասխանաբար 13 հազ. 200, 5 հազ. և 5 հազ. 800 «կապի» հացահատիկ ամբարելու մասին: Դա կազմում է շուրջ 600 հազ. լ, և եթե հաշվի առնենք սրահների ընդհանուր մակերեսը՝ մոտ 170.8 մ<sup>2</sup>, ապա կարելի է կարծել, որ հացահատիկը դրանցում ամբարվել է միջինը շուրջ 3.50 մ բարձրությամբ<sup>31</sup>:

Կարմիր Բլուրի միջնաբերդի նկուղային (առաջին) հարկի կենտրոնական հատվածը կառուցվել է իբրև շտեմարան: Դրանք քառանկյուն և ուղղանկյունաձև սենյակներ են (գծ. 4) և հիշեցնում են խորը պահեստահորեր: Ունեցել են նեղ դռնակներ, որոնք գտնվել են հատակից որոշակի բարձրության վրա: Այդ դռնակները հետո փակվել են և կնքվել<sup>32</sup>: Նման մի բուլլա՝ կնքված երկու կնիքներով, որոնցից մեկը Ռուսա Ռուսայորդու «դինաստիական» կնիքի դրոշմն էր, հայտնաբերվել է հացահատիկի թիվ 5 պահեստահորի հատակից՝ ածխացած գարու կույտերի մեջ: Ընդ որում, դրոշմի վրա ընթերցվում է Ë «տուն» շումերագիրը, ըստ երևույթին՝ մատնանշելով ամբարելու հետ կապված ինչ-որ կառույց/ինստիտուտ<sup>33</sup>: Ընդհանուր առմամբ, Կարմիր Բլուրից հայտնաբերված նման պահեստահորերը տասներեքն են, յուրաքանչյուրը՝ 80–100 մ<sup>3</sup> տարողությամբ<sup>34</sup>: Միջնաբերդի հյուսիսային կողմի արտաքին պարսպապատին կից կառուցված թիվ 12 սրահը պատված էր 25–45 սմ հաստությամբ ածխացած հացահատիկի շերտով: Ըստ երևույթին, սկզբնապես սրահն ունեցել է այլ գործառույթ և որպես հացահատիկի պահեստ է օգտագործվել հետագայում: Համենայն դեպս, մոտ 30 մ<sup>2</sup> (9.35 x 3.25 մ) մակերեսով սրահը 3 մ բարձրությամբ լցնելու պարագայում

<sup>28</sup> К. Л. Оганесян. 1961, с. 18, прим. 20; S. Hodjasch. 1999, S. 225–228.

<sup>29</sup> М. Payne. 2005, pp. 86–88.

<sup>30</sup> Հմմտ. А. Batmaz. 2015, pp. 141–142.

<sup>31</sup> Համապատասխանաբար, առաջին ամբարը, որը գտնվել է ամրոցի «Ուլքալե» կոչվող հատվածում, լցվել է 3.33, երկրորդը՝ 3.7, իսկ երրորդ ամբարը՝ մոտ 3.8 մ բարձրությամբ: Հմմտ. М. Salvini, F. Mileto. 2010, pp. 367–368.

<sup>32</sup> Б. Б. Пиотровский. 1955, с. 13–14.

<sup>33</sup> КУКН, № 445; М. Salvini. 2012, p. 213, Sig. 19–1 (այսուհետև՝ CTU IV).

<sup>34</sup> Ս. Ա. Ե ս ա յ ա ն. 1982, էջ 19:

կարող էր տեղավորել առնվազն 90 հազ. 1 հացահատիկ: Ընդհանուր առմամբ, ենթադրվում է, որ Կարմիր Բլուրի հացահատիկի պաշարները կարող էին հասնել մինչև 1500 տոննայի<sup>35</sup>:

Արմավիր–Արգիշթիխիների «Արևմտյան միջնաբերդ»-ի (Աբ. Դավթի բլուր) շտեմարաններից մեկը, այսպես կոչված, «Հյուսիսային շտեմարան»-ը զբաղեցնում է ավելի քան 200 մ<sup>2</sup> մակերես (26.00 x 7.50 մ): Ինչպես վերը նշված դեպքերում՝ այս խոշոր կառույցն ունի խուլ պատեր և ակնհայտ է, որ մուտքն ապահովվել է տանիքից (գծ. 5): Սրահի հատակը ծածկված էր ածխացած հացահատիկի շերտով: Վատ պահպանված երկրորդ՝ հարավային շտեմարանը, ըստ երևույթին, ունեցել է նույն մակերեսը<sup>36</sup>: Քաղաքի «Արևմտյան միջնաբերդ»-ում բացված վեց այլ շտեմարանների ընդհանուր մակերեսը կազմում է ավելի քան 400 մ<sup>2</sup> (գծ. 6): Պատերի պահպանված բարձրությունն անցնում է 3 մ-ը, իսկ ընդհանուր բարձրությունը լինելու էր մոտ 10 մ: Այս շտեմարաններում հնարավոր էր կուտակել մոտ 2 հազ. 300 տ հացահատիկ: Ենթադրվում է, որ Արմավիր–Արգիշթիխիների շտեմարանների ընդհանուր տարողությունը, հաշվի առնելով նաև «Արևելյան միջնաբերդ»-ում (Արմավիր-բլուր) բացված ամբարները (գծ. 7)՝ կարող էր հասնել ընդհուպ մինչև 5 հազ. տոննայի<sup>37</sup>: Այս հնարավորություններով Արմավիր–Արգիշթիխիների դառնում է թագավորության մեջ հացահատիկի պաշարներ կուտակելու ամենամեծ հնարավորություններն ունեցող ամրոցը:

Հացահատիկի մեկ այլ ամբար պեղվել է Այանցում (Այանիս հնավայրը Վանից դեպի Հյուսիս): 9.60 x 5.50 մ չափերով սրահի հատակը ծածկված էր 8–15 սմ հաստությամբ ածխացած հացահատիկի շերտով: Ենթադրվում է, որ այստեղ կարող էր ամբարվել մինչև 148 հազ. 1 հացահատիկ<sup>38</sup>:

Ուրարտական կարևոր կենտրոններից մեկից՝ մայրաքաղաք Տուշպայից ոչ հեռու գտնվող Վերին Անձավի ամրոցից ամբար կառուցելու մասին որևէ արձանագրություն չի գտնվել: Փոխարենը, ամրոցի պեղումները ցույց են տալիս, որ այն ևս ծառայել է իբրև կարևոր շտեմարան: Մասնավորապես, ամրոցի արևմտյան պարսպի երկայնքով պարսպապատին կից, բացվել են խուլ պատերով կառույցներ, որոնց մուտքն ապահովվել է տանիքից (գծ. 8): Դրանցից երկուսը (թիվ 1–2 սրահները) գտնվել են ամրոցի գլխավոր դարպասի անմիջական մերձավորությամբ և զբաղեցնում են համապատասխանաբար 107.8 (9.80 x 11.00 մ) և 196 մ<sup>2</sup> (9.80 x 20.00 մ) մակերես: Հաջորդող թիվ 3 սրահի մակերեսը 170 մ<sup>2</sup> է (10.00 x 17.00 մ) և նախորդից բաժանվում է բավական հզոր՝ 3.80 մ հաստությամբ պատով: Արևմտյան պարսպապատի հյուսիսային կողմում գտնվող համանման սրահն ամենամեծն է՝ զբաղեցնելով 260 մ<sup>2</sup> տարածք (10.00 x 26.00 մ)<sup>39</sup>:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>36</sup> Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. 1984, էջ 81, 89:

<sup>37</sup> А. А. Мартиросян. 1974, с. 85, 137–138.

<sup>38</sup> A. Ü. Erdem. 2011, s. 86, Res. 3. Տե՛ս նաև՝ A. Çilingiroğlu, A. Batmaz. 2014, s. 186.

<sup>39</sup> O. Belli. 1998, s. 550–551, Çiz. 7–8; O. Belli. 1999, s. 508–509, Çiz. 1–7.

Թեև մասնագիտական գրականության մեջ նշված կառույցները երբեք չեն դիտարկվել իբրև հացահատիկի ամբարներ, սակայն, այդպես կարծելու համար կան բավարար հիմքեր: Նախ, կառույցներն ունեն խուլ պատեր, ինչը հուշում է, որ դրանց մուտքն ապահովվել է վերևից: Հետաքրքիր է, որ այս խոշոր կառույցների պատերն իրենց հզորությամբ չեն գիջում արտաքին պարսպապատին (դա տեսնում ենք նաև Արմավիր–Արգիշթիխիլիլիլիլու), ինչը կարող էր նախատեսված լինել սրահը հացահատիկով լցնելու դեպքում առաջանալիք կողային բարձր ճնշումը չեզոքացնելու համար<sup>40</sup>: Մյուս կողմից, հաստ պատերը կապահովեին ամբարների ջերմամեկուսացումը, ինչը նույնպես կարևոր պայման էր՝ հացահատիկը երկար պահելու համար<sup>41</sup>: Կարևոր է նաև կառույցների դիրքը՝ արտաքին պարսպապատին կից և գլխավոր դարպասի անմիջական մերձավորությամբ, ինչը ևս տեսնում ենք, օրինակ, Արմավիր–Արգիշթիխիլիլիլիլի գույգ ամրոցներում և Ագնավուրթեփեում<sup>42</sup>: Հետևաբար, եթե այս կառույցները ծառայել են իբրև ամբար, ապա ավելի քան 734 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով վերը նշված չորս սրահները՝ 3 մ բարձրությամբ գարի ամբարելու դեպքում, կարող էին կուտակել շուրջ 1430 տ հացահատիկ: Ընդ որում, պատերի հաստությունը հաշվի առնելով կարող ենք նշել, որ կառույցների բարձրությունը կազմելու էր առնվազն 7–8 մ: Ամբողջությամբ լցնելու դեպքում ամբարները կարող էին պահեստավորել ընդհուպ մինչև 3800 տ հացահատիկ (գարի): Հաշվի առնելով Հայկաբերդի վերը նշված գրավոր վկայություններն ու ամբարների ծավալը, կարելի է կարծել, որ դրանց օպտիմալ տարողությունը լինելու էր շուրջ 1900 տ:

Ըստ էության, նույն պատերի հետ գործ ունենք Ք. ա. VII դ. հիմնադրված մի քանի այլ կենտրոնների դեպքում ևս: Դրանցից առաջինն ուրարտական վերջին արքաներից Ռուսա Արգիշթորդու (Ք. ա. մոտ 680–640-ական թթ.) կողմից կառուցված Զիուկունի երկրի նալգիի քաղաքն է (Քեֆքալե ամրոցը Արծկե/Ադրլլեագից դեպի հյուսիս): Ուրարտական այս կենտրոնը պեղվել է մասամբ, գլխավորապես՝ «պալատական» հատվածը<sup>43</sup>: Ամրոցի ընդհանուր հատակագիծ, հնագետ Չարլզ Բրյրնիի կողմից դեռևս անցյալ դարի 50-ականներին արված արտաքին պարսպի ուրվագծից բացի, չկա: Այդ հատակագիծում ամրոցի արևելյան պարսպապատի երկարությամբ տեղ են գտել ուղղանկյունաձև երկու կառույցներ<sup>44</sup>: Ամրոցի արբանյակային պատկերներում պարզորոշ երևում են միմյանց հաջորդող առնվազն երեք ուղղանկյունաձև կառույցների հետքեր, յուրաքանչյուրը շուրջ 9–10 մ լայնությամբ և 25–30 մ երկարությամբ

<sup>40</sup> J. Seeher. 2000, S. 283.

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 264–266:




<sup>42</sup> Վերջինիս համար տե՛ս, մասնավորապես, K. Balkan. 1964, s. 236–237.

<sup>43</sup> E. Bilgiç, B. Öğün. 1964 [1966], pp. 65–92/93–124.


<sup>44</sup> Ch. A. Burney. 1957, p. 51, Fig. 12.

յամբ, ինչը թույլ է տալիս ունենալ այդ հատվածի մոտավոր հատակագիծը (գծ. 9): Եթե այդ կառույցները ևս, ինչպես Վերին Անձալի դեպքում, ծառայել են իբրև ամբար, ապա զբաղեցրած մակերեսն ու հավանական բարձրությունը հաշվի առնելով կարելի է մտածել, որ դրանցից յուրաքանչյուրն ունեցել է առնվազն 650–700 տ հացահատիկ ամբարելու հնարավորություն, միասին՝ շուրջ 2000 տ: Այստեղ նշենք, որ ամրոցի պեղումները վերսկսվել են 2018 թ. Բիթլիսի Երենի Համալսարանի կողմից, սակայն, ցավոք, որևէ նոր հրատարակություն առայժմ չկա:

Գծ. 7



Գծ. 10



Բաստամի ուրարտական ամրոցը («Ռուսայի փոքր քաղաք»-ը Կարա Զիա էդ-դինի հովտում, Հյուսիսարևմտյան Իրան) նույնպես կառուցվել է Ք. ա. VII դ.: Ռուսա Արգիշթորդու կողմից: Ավելի քան 30 հա զբաղեցնող

այս խոշոր ամրոցում պեղումներն իրականացվել են Հնագետ Վոլֆրամ Կլայսի գլխավորած գերմանական արշավախմբի կողմից (1970-ական թթ.), և առավել մանրակրկիտ ուսումնասիրված ուրարտական հնավայրերից մեկն է<sup>45</sup>: Որքան էլ տարօրինակ թվա, պեղված տարաբնույթ կառույցներից և ոչ մեկը չի դիտարկվել իբրև հացահատիկի ամբար, թեև որպես պետական շտեմարան Բաստամը, անշուշտ, ունենալու էր նման տարողություններ, ինչպես, օրինակ, այստեղ բացված և տարբեր մեծությամբ 68 կարաս տեղավորող մառանը<sup>46</sup>: Հաշվի առնելով ուրարտական ամբարների դիրքը՝ ամրոցի մուտքի/մուտքերից մեկի մերձավորությամբ՝ արտաքին պարսպին կից, կարելի է ենթադրել, որ ամրոցի ընդարձակված հատվածներից, այսպես կոչված, «Արևելյան նախաամրոցի»-ի արևելյան պարսպապատին կից, հարավային 2-րդ դարպասի մոտ բացված միանման և, ըստ երևույթին, խուլ պատերով կառույցների համալիրը ծառայել է իբրև հացահատիկի շտեմարան (գծ. 10): Պարսպապատին կից վեց սենյակների լայնությունը տատանվում է 5.20-ից 6.50 մ միջև՝ միջինում 12.00 մ երկարությամբ<sup>47</sup>: Եթե իրոք գործ ունենք ամբարների հետ, ապա շուրջ 420 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով այդ սրահներում կարող էր ամբարվել մոտ 1100 տ հացահատիկ՝ 4 մ բարձրությամբ լցվելու դեպքում: Այս թիվը միանգամայն համադրելի է Կարմիր Բլուրի, Հայկաբերդի կամ Արին Բերդի համար մեր ունեցած պատկերին: Ընդ որում, նկատենք, որ այս համալիրը կառուցվել է ամրոցի կառուցապատման/ընդարձակման երրորդ փուլում<sup>48</sup>, ինչը նշանակում է այլ շտեմարանների գոյությունը ամրոցի սկզբնական տարածքում: Ըստ այդմ, հացահատիկ ամբարելու Բաստամի կարողությունը շատ ավելի մեծ էր լինելու:

Հավելենք, որ հացահատիկն ամբարվել է նաև մառաններում՝ խոշոր կարանների մեջ: Ընդ որում, հետաքրքիր է, որ տարողության նշաններ կրող կարանների մի մասն արձանագրվել է կրկնակի, նույնիսկ եռակի անգամ: Դա կարող էր պայմանավորված լինել կարաններում պահվող հեղուկի փոխարեն սորուն մարմիններ և նախևառաջ՝ հացահատիկ լցնելու փաստով: Արդյունքում փոխվում է կարասի ծավալը: Մառանների նշանակությունը փոփոխությունը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Ք. ա. VII դ.<sup>49</sup>: Ուրարտական վարչատնտեսական տարբեր կենտրոնների մառաններում կարասների մեջ հայտնաբերվել է հացահատիկ, գերազանցապես՝ գարի, ինչպես նաև ցորեն, կորեկ կամ խոշոր աղացված ալյուր (Կարմիր Բլուր<sup>50</sup>, Այանց<sup>51</sup>, Արծկե-Քեֆքալե<sup>52</sup>, Հայկաբերդ<sup>53</sup> և այլն): Ընդհանուր

<sup>45</sup> Պեղումների ամփոփիչ հրատարակությունները տե՛ս W. Kleiss. 1979; W. Kleiss. 1988.

<sup>46</sup> W. Kleiss. 1979, S. 77, Abb. 86.

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 68–73:

<sup>48</sup> W. Kleiss. 1988, S. 40.

<sup>49</sup> Y. H. Grekyan. 2009, pp. 98–102.

<sup>50</sup> Տե՛ս, օրինակ, Б. Б. Пиотровский. 1952, с. 19–20.

<sup>51</sup> A. Çilingiroğlu. 2001, pp. 71–73.

<sup>52</sup> Ch. A. Burney. 1998, p. 159; S. Erdoğ an. 2017, s. 36.

<sup>53</sup> A. Erzen. 1976, s. 47.

առմամբ, ուրարտական վարչատնտեսական կենտրոնների մառանների տարողությունը հասնում էր մոտ 2 մլն լ:

Եթե հաշվի առնենք գրավոր աղբյուրները (Արին Բերդ, Ազնավուրթեփե, Հայկաբերդ) և հնագիտական տվյալները (Կարմիր Բլուր, Արմավիր–Արգիշթիխինիլի, Վերին Անձավ, Այանց, Թերևս, նաև Արծկե–Քեֆքալե և Բաստամ), ապա կարող ենք նշել, որ ուրարտական վարչատնտեսական նշված կենտրոններում կարող էր պահվել, առանց հաշվի առնելու մառանների հնարավորությունները, շուրջ 24 մլն 336 հազ. լ կամ մոտ 15 հազ. 800 տ հացահատիկ: Այդ թվում՝ Արին Բերդը (2 մլն 668 հազ. լ կամ մոտ 1730 տ), Կարմիր Բլուրը (2 մլն 310 հազ. լ կամ 1500 տ), Ազնավուրթեփեն (1 մլն 687 հազ. լ կամ մոտ 1100 տ), Հայկաբերդը (2 մլն 265 հազ. լ կամ 1470 տ), Արմավիր–Արգիշթիխինիլին (7 մլն 700 հազ. լ կամ 5000 տ), Վերին Անձավը (2 մլն 926 հազ. լ կամ 1900 տ), Թերևս, նաև Բաստամը (շուրջ 1.7 մլն լ կամ 1100 տ) և Արծկե–Քեֆքալեն (առնվազն 3 մլն 80 հազ. լ կամ շուրջ 2000 տ ամբարելու հնարավորությամբ): Կարելի է նշել, որ յուրաքանչյուր քաղաք ունեցել է նվազագույնը 1500–2000 տ հացահատիկ պահեստավորելու հնարավորություն: Հնագիտորեն վկայված նման կենտրոնների թիվը հասնում է տասնհինգի՝ ներառելով այնպիսի խոշոր հնավայրեր, ինչպիսիք են, բացի վերը նշվածները, նաև Թոփրաքալեն, Քայալըղերեն, Վերախրամը, Կալեհ Էսմայի Աղան և այլն<sup>54</sup>: Փաստորեն, միայն նման խոշոր կենտրոնները կարող էին ամբարել մի քանի տասնյակ հազար տոննա հացահատիկ:

Ուրարտական պետության վերաբաշխման կարողությունները

Հացահատիկի պաշարի մի մասն առանձնացվում էր իբրև նոր ցանքսի սերմացու: Դա կազմում էր բերքի մոտ 10–15 տոկոսը, եթե հիմք ընդունենք բերքատվության 1 : 6-ից մինչև 1 : 10-ի հարաբերակցությունը ուրարտական դարաշրջանի ոռոգվող հողատարածքների համար՝ հեկտարից միջինը 7 ցենտներ բերքատվությամբ (օրինակ՝ Արարատյան դաշտավայրում)<sup>55</sup>: Այս թվերը միանգամայն համահունչ են հինմիջագետքյան տվյալներին<sup>56</sup>: Հաշվի առնելով պահեստավորված հացահատիկի բնական մեծ կորուստները տարբեր վնասատուների պատճառով և խոնավությամբ պայմանավորված, ինչը հասնում էր մինչև 25 տոկոսի<sup>57</sup>, կարող ենք եզրակացնել, որ վերա-

<sup>54</sup> Ուրարտական խոշոր հնավայրերի մասին տե՛ս Հ. Գ. Ավետիսյան, Ա. Ա. Բոբոխյան. 2010:

<sup>55</sup> Ըստ Ս. Եսայանի (Ս. Ա. Եսայան. 1982, էջ 19) Արարատյան դաշտավայրի ոռոգովի հողերի միջին բերքատվությունն ուրարտական շրջանում կազմում էր 500–1000 կգ:

<sup>56</sup> Տե՛ս, օրինակ, C. Zaccagnini. 1975, pp. 209–214; F. A. M. Wiggermann. 2000, p. 193; R. Koliński. 2003, pp. 89–90, Table 1; M. Altaweel. 2008, p. 829. Տե՛ս և հմտ. J. Seeher. 2000, S. 294.

<sup>57</sup> F. A. M. Wiggermann. 2000, p. 196; R. Koliński. 2003, p. 89. Հետաքրքիր է, որ վնասատուների, հատկապես՝ հացահատիկի վնասատու բզեզների (*Sitophilus granarius* L) մնացորդներ են հայտնաբերվել Կարմիր Բլուրից և Այանցից գտնված հացահատիկի կույտերի մեջ. տե՛ս Բ. Բ. Плот-

բաշխման համար պետութիւնը կարող էր տրամադրել տվյալ տարվա բերքի ոչ ավել, քան 60 տոկոսը: Ընդ որում, սա այն դեպքում, եթե լծկան կենդանիների և զոհաբերութիւնների կամ արքայական սեղանի համար նախատեսված ոչխարների հոտերի կերը, ինչը տրվում էր գարով (Հմմտ. շում. *udu.še-ն*՝ «գարով կերակրված ոչխար»<sup>58</sup>), իրենց վրա վերցնեին վարչատնտեսական կենտրոնների շուրջը՝ երկրագործական գոտում սփռված գյուղական, այսպես կոչված, «չրջակա բնակավայրեր»-ը: Իսկ այդ քանակութիւնները փոքր թիվ չէին կազմելու: Օրինակ՝ միայն Կարմիր Բլուրի երկրագործական գոտին մշակելու համար (շուրջ 2–3 հազ. հա) անհրաժեշտ էր առնվազն 140–200 զույգ լծկան<sup>59</sup>, որոնց կերակրելու համար կպահանջվեր 150–220 հազ. լ գարի տարեկան: Հինառաջավորասիական աղբյուրներից դատելով մեկ ցլի օրապահակը կազմում էր 1.5 զն (մոտ 1.5 լ) գարի<sup>60</sup>: Այստեղ պետք է հաշվի առնել նաև խոշոր կենտրոններին կից արքայական ախոռներում պահվող ձիերի չափաբաժինները: Միայն Բաստամի երեք ախոռներում պահվել է 160–170 ձի, ինչը ենթադրում է տարեկան առնվազն 250 հազ. լ գարու պահանջ, եթե ձիերին տրվում է գարու սովորական օրապահակ: Իսկ դա, տարվա եղանակով պայմանավորված, տատանվում էր 2–5 զն-ի միջև (2–5 լ)<sup>61</sup>:

Հինառաջավորասիական աղբյուրներից հայտնի է, որ տղամարդու համար հատկացվող գարու օրապահակը կազմում էր 1 լ: Դա ապահովում էր մոտ 2700 կկ, ինչը բավարար չափաբաժին էր<sup>62</sup>: Ընտանիքի մյուս անդամների համար տրվող օրապահակը տարբեր էր և կախված էր ինչպես սեռից, այնպես էլ՝ տարիքային խմբից: Միջինասորեստանյան աղբյուրները վկայում են, որ տղամարդկանց տրվում էր ամսական 3 sūtu (մոտ 30 լ), այսինքն՝ օրական 1 լ գարի, կանանց համար տրվող օրապահակը 1 ամսվա համար կազմում էր 2 sūtu կամ այլ կերպ ասած՝ օրական մոտ 0.75 լ, պատանեկան տարիքի երեխաներին հասնում էր ամսական 1 sūtu 5 զն՝ գարի կամ օրական 0.5 լ, իսկ մանկահասակ երեխաների համար սահմանված էր 1 sūtu գարի կամ օրական 0.3 լ<sup>63</sup>: Պատկերը նույնն էր նաև նորասորեստանյան<sup>64</sup> կամ արքեմենյան դարաշրջաններում<sup>65</sup>:

Հիմնվելով այս տվյալների վրա՝ կարելի է նշել, որ 4–5 անձից բաղկացած ընտանիքի համար, ենթադրելով նրանում մեկ կամ երկու դեռահասների և

ровский. 1950, с. 27–28, 53; T. Solmaz, E. Oybak Dönmez. 2013, p. 285.

<sup>58</sup> Ուրարտական տեքստերում նման վկայութիւնների համար տե՛ս, օրինակ, CTU I, A 14–1 V06-17.

<sup>59</sup> Տե՛ս և Հմմտ., օրինակ, F. A. M. Wiggermann. 2000, p. 189.

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 189:

<sup>61</sup> S. Jakob. 2003, S. 355–356.

<sup>62</sup> E. R. Ellison. 1981, pp. 38–39.

<sup>63</sup> Տե՛ս և Հմմտ. S. Maul. 1995, S. 117–124; S. Jakob. 2003, S. 48–49; J. Llop. 2014, p. 455, Table 6. Ուրի III հարստութիւնի դարաշրջանի համար մանրամասն տե՛ս H. Waetzoldt. 1987, pp. 117–141.

<sup>64</sup> Տե՛ս, օրինակ, S. Parpola. 1987, № 257.

<sup>65</sup> P. Briant. 2002, pp. 431–432.

մեկ կամ երկու մանկահասակ երեխաների առկայությունը<sup>66</sup>, անհրաժեշտ էր լինելու 70–90 լ կամ, եթե առաջնորդվենք միջինացված հաշվարկով, մոտ 80 լ գարի: Հետաքրքիր է, որ Այանցից հայտնաբերված բուլլաներից մեկի տեքստը հայտնում է երկու անձնաց 6 BANEŠ գարի (մոտ 150 լ) տրամադրելու մասին<sup>67</sup>: Գարու այդ քանակությունը բավարար էր կերակրելու համար երկու ընտանիքի մեկ կամ մեկ ընտանիքի երկու ամիս շարունակ:

Արին Բերդի՝ վարչատնտեսական նման խոշոր կենտրոնի անձնակազմը, կայազորը ներառյալ, ըստ երևույթին, կազմել է մոտ 300 մարդ: Եթե նրանք ստացել են ստանդարտ օրապահիկ, այն է՝ յուրաքանչյուրը 1 լ գարի, ապա նրանց սնունդն ապահովելու համար պետությունը հատկացնելու էր 109 հազ. 500 լ գարի կամ ամրոցի՝ վերաբաշխման ենթակա գարու պաշարների (մոտ 1 մլն 601 հազ. լ) 6.84 տոկոսը: Լրացուցիչ 43 հազ. 800 լ գարի (վերաբաշխման ենթակա հացահատիկի մոտ 2.73 տոկոսը) անհրաժեշտ կլիներ ամրոցի արքունի ախոռի ձիերին կերակրելու համար (30 ձիու հաշվարկով<sup>68</sup>): Մնացած պաշարը կբավարարեր ավելի քան 3 հազ. 967 հասուն մարդու մեկ տարի շարունակ (1 մլն 447 հազ. 700 լ/օրապահիկ) կամ կարող էր բավարարել 4–5 անձից կազմված շուրջ 1500 ընտանիքի, այլ կերպ ասած՝ շուրջ 6–7.5 հազ. բնակչության մեկ տարվա սնունդը<sup>69</sup>: Հիմնվելով նման հաշվարկի վրա՝ կարող ենք նշել, որ Հայկաբերդի պաշարները հացով կապահովեին շուրջ 1250 ընտանիքի կամ 5–6.3 հազ. մարդու մեկ տարի շարունակ: Գրեթե նույն թվաքանակներն ենք ունենում Կարմիր Բլուրի համար: Ազնավուրթեփեն, առկա տվյալներով, կարող էր ապահովել մոտ 900 ընտանիքի կամ շուրջ 3.6 հազ-ից 4.5 հազ. մարդու: Մինչդեռ, երկրագործական բարեբեր և ոռոգովի ջրով ապահովված գոտում գտնվող Արմավիր–Արգիշթիխիսիլին, իր ընդարձակ շտեմարաններով, ի գորու էր կերակրելու ավելի քան 4650 ընտանիքի կամ 18 հազ. 600-ից 23 հազ. 300 մարդու:

Եթե ամփոփենք առկա թվերը, ուրարտական՝ վերը նշված վարչական հինգ խոշոր կենտրոնները (Արին Բերդ, Արմավիր–Արգիշթիխիսիլի, Ազնավուրթեփե, Հայկաբերդ, Կարմիր Բլուր), որոնք միասին ունեին ավելի քան 16 մլն 630 հազ. լ կամ մոտ 10.8 հազ. տ հացահատիկ կուտակելու հնարավորություն, այդ պաշարի 60 տոկոսի վերաբաշխման դեպքում (մոտ 9 մլն 978 հազ. լ կամ մոտ 6 հազ. 480 տ) կարող էին հացով ապահովել տեղի վարչակազմերի/տաճարային անձնակազմի և կայազորային զորքերի շուրջ 1500 անդամի, արքունի ախոռի 150 ձիերի և 4–5 անդամից կազմված մոտ 9.6 հազ. ընտանիքի կամ այլ կերպ ասած՝ շուրջ 38 հազ-ից 48 հազ. Բնակչության սնունդը: Այս թիվը կարելի է մեծացնել առնվազն 45 տոկոսով,

<sup>66</sup> Միջինասորեստանյան ընտանիքը միջինում կազմված էր չորս անձից. տե՛ս F. A. M. Wiggermann. 2000, p. 190: Միջինում 4–5 անձից էր կազմված նորասորեստանյան ընտանիքը: Մանրամասն տե՛ս G. Galil. 2007, pp. 288–290, 346–347.

<sup>67</sup> CTU IV, CB Ay-1.

<sup>68</sup> Բաստամի արքունի ախոռներից ամենափոքրը, օրինակ, տեղավորում էր 36 ձի. տե՛ս W. Kleiss. 1980, pp. 299–300; W. Kleiss. 1988, S. 17.

<sup>69</sup> Ե. Հ. Գրեկյան. 2018, № 3, էջ 55:



եթե, ինչպես կարծում ենք, Վերին Անձամի, Բաստամի և Արծկե-Քեֆքալեի՝ վերը նշված կառույցների դեպքում ևս գործ ունենք հացահատիկի ամբարների հետ: Դա նշանակում է վերաբաշխմանը ենթակա ևս 4.62 մլն լ հացահատիկ, որից 460 հազ. լ-ը կօգտագործվեր վարչակազմերի, կայազորի և արքունի ձիերի համար: Մնացած քանակությունը՝ 4.16 մլն լ, կապահովեր 4330 ընտանիքի կամ 17.3–21.6 հազ. մարդու մեկ տարի շարունակ:

Ուրարտական վարչատնտեսական խոշոր կենտրոնները կամ քաղաքները, լինելով պետական ծրագրի ու քաղաքաշինական միևնույն մտքի արդյունք, իրենց կառուցվածքով չէին տարբերվում մեկը մյուսից և փաստացի հանդիսանում էին ամրացված տաճար-պալատներ՝ կենտրոնական կառույցով՝ ինքի աստծո սրբարանով, սյունազարդ սրահով և ընդարձակ մառաններում ու ամբարներով: Ընդամենը մի քանի հա զբաղեցնող միջնաբերդից դուրս տարածվում էր ամրություններից զուրկ, համեմատաբար սահմանափակ տարածք զբաղեցնող (մինչև մի քանի տասնյակ հա) և ազատ կառուցապատված, «արտաքին քաղաք»-ը՝ 1.5–2 հազ. (Կարմիր Բլուր), բայց ոչ ավելի, քան 3–4 հազ. բնակչությամբ (Վան–Տուչպա, Արմավիր–Արգիշթի-խինիլի)<sup>70</sup>: Ըստ այդմ, սխալված չենք լինի, եթե ուրարտական վարչական մյուս խոշոր կենտրոններին ևս օժտենք հացահատիկ ամբարելու նույն հնարավորություններով: Իսկ դրանց թիվը, վերստին հիշենք, հասնում էր տասնհինգի: Յուրաքանչյուր նման կենտրոնի համար ենթադրելով նվազագույնը 1500–2000 տ հացահատիկ ամբարելու կարողություն՝ կարելի է մտածել, որ ուրարտական թագավորության վարչատնտեսական կենտրոնները միասին կարող էին ամբարել նվազագույնը 22 հազ. 500-ից 30 հազ. տ հացահատիկ, որի 60 տոկոսի վերաբաշխման պարագայում (13 հազ. 500-ից 18 հազ. տ) այդ կենտրոնները կարող էին ապահովել ավելի քան 20.8–27.7 մլն լ/օրապահիկ: Յուրաքանչյուր օրվա համար այն կազմում է մոտ 57 հազ-ից 76 հազ. լ/օրապահիկ և կարող էր կերակրել, միջինացնելով թվերը, 21 հազ. 600-ից 29 հազ. ընտանիքի, այսինքն՝ 86 հազ-ից մինչև 145 հազ. բնակչության:

Ամբարներ կառուցելու մասին հայտնող ավելի քան 37 արձանագրությունների տվյալների հանրագումարը կազմում է շուրջ 414 հազ. «կապի»: Այդ քանակության 60 տոկոսի վերաբաշխումը (6 մլն 210 հազ. լ/օրապահիկ) կբավարարեր 17 հազ. տղամարդու կամ հացով կապահովեր 6.5 հազ. ընտանիքի՝ 26–32.5 հազ. բնակչությանը մեկ տարի շարունակ: Սարդուրի Արգիշթորդու տարեգրության մեջ նշված գարու ամենամեծ քանակությունը՝ 1 մլն 22 հազ. 133 «կապի» կամ շուրջ 25.5 մլն լ, հացով կապահովեր ավելի քան 26.6 հազ. ընտանիքի կամ ընդհուպ մինչև 130 հազ. բնակչությանը մեկ տարի շարունակ:

Այս թվերը տպավորիչ են, երբ համեմատում ենք հինարևելյան այլ երկրների հետ: Օրինակ՝ հացահատիկի պետական պաշարների կուտակման հնագիտական վկայություններ են հայտնի խեթական տերության տարբեր կենտրոններից, նախևառաջ՝ մայրաքաղաք ինթիլուսասից (Բողազքյոյ, այժմ՝ Բողազքալե): Այստեղից հայտնաբերված խոշոր սիլոսների համալիրը՝

<sup>70</sup> Y. H. Grekyan. 2017, p. 124; Ե. Հ. Գրեկյան. 2018, № 3, էջ 51:

7–9 Հազ. մ<sup>3</sup> ծավալով, կարող էր ամբարել 4 Հազ. 200-ից 5 Հազ. 900 տոննա հացահատիկ: Դա բավարար էր կերակրելու 23–32 Հազ. բնակչության մեկ տարի շարունակ<sup>71</sup>: Խաթիթուսասի հյուսիսարևելքում գտնվող հատվածից, այսպես կոչված, Բյույուքքայայից, հայտնաբերվել են տասնմեկ խոշոր հորեր՝ շուրջ 800 տ հացահատիկ ամբարելու հնարավորությամբ<sup>72</sup>: Խեթական մեկ այլ քաղաքից՝ Սարիսասայից (Քուշաքլը), հայտնաբերված խոշոր շտեմարանը կարող էր կուտակել 720 տ հացահատիկ<sup>73</sup>: Քաման-Քալեհյույուքի խեթական դարաշրջանից հայտնաբերված հացահատիկի հորերը տեղավորել են մինչև 900 տ ցորեն<sup>74</sup>: Խեթական տերությունից հայտնի են այլ վկայություններ ևս<sup>75</sup>՝ փաստելով հացահատիկի պետական պաշարներ ունենալու կարևորությունը խեթական տերության համար<sup>76</sup>:

Գնալով ավելի վաղ դարաշրջան՝ Ք. ա. III Հազ., կարող ենք նշել միջագետքյան Շուրրուպակ քաղաքի օրինակը (Թեյլ Ֆարա հնավայրը Ալ Դիվանիյահի մոտ, Իրաք): Շուրրուպակը Միջագետքի քաղաքական-պաշտամունքային կարևոր կենտրոններից էր հատկապես Վադինաստիական IIIb շրջանում (Ք. ա. XXVI–XXIV դդ.): Այստեղ պեղվել են 32 սիլոսներ՝ ավելի քան 3.2–4 մլն լ հացահատիկ ամբարելու հնարավորությամբ: Այդ քանակությունը բավարար էր հացով ապահովելու 3 Հազ. 300-ից 11 Հազ. մարդու մեկ տարի շարունակ<sup>77</sup>: Ընդ որում, դա բավարար չէր ամբողջությամբ ապահովելու քաղաքի բնակչության կարիքները, քանի որ, ենթադրաբար, Շուրրուպակն ունենալու էր բազմամարդ բնակչություն: Ի տարբերություն Շուրրուպակի, խեթական մայրաքաղաքի շտեմարանները, փաստորեն, կարող էին լիովին ապահովել քաղաքի բնակչությանը, որի թիվը ենթադրվում է 9–15 Հազ. մարդու սահմաններում<sup>78</sup>:

Հետաքրքիրն այն է, որ ուրարտական վարչատնտեսական յուրաքանչյուր կենտրոնի հացահատիկի պաշարները շատ ավելին էին, քան կարող էր սպառել քաղաքի վարչակազմը, կայազորը և «արտաքին քաղաք»-ի բնակչությունը միասին վերցրած: Նման կենտրոնների բնակչության թիվը սովորաբար չէր գերազանցում 1500–2000 մարդը, ինչպես, օրինակ, շուրջ 40 հազարեցնող Կարմիր Բլուրի դեպքում<sup>79</sup>: Վերջինիս հացահատիկի պաշարները բավարար էին քաղաքի բնակչությանն ապահովելու ավել քան երեք տարի կամ քաղաքը կարող էր սննդով ապահովել իր իսկ բնակչությանը

<sup>71</sup> J. Seeher. 2000, S. 278–287, 292–295, Abb. 6–11; J. Seeher. 2015, s. 195–196, Res. 6 (նշված գրականություններ):

<sup>72</sup> J. Seeher. 2000, S. 270–278, Abb. 2–5; J. Seeher. 2015, s. 193–194, Çiz. 2–5.

<sup>73</sup> D. P. Mielke. 2011, p. 176, Fig. 8.1.

<sup>74</sup> A. Fairbairn, S. Omura. 2005, pp. 18–21, Figs. 6–8, Table 2.

<sup>75</sup> Տե՛ս J. Seeher. 2015, s. 197; D. P. Mielke. 2011, pp. 176–178; R. M. Czichon, J. Klingner, P. Hnila, D. P. Mielke et al. 2016, S. 38–42, Abb. 18.

<sup>76</sup> L. Castellano. 2018, p. 260.

<sup>77</sup> T. Paulette. 2016, p. 102, Table 4.1.

<sup>78</sup> D. P. Mielke. 2011, pp. 183–184.

<sup>79</sup> Y. H. Grekyan. 2017, p. 124.

երեք անգամ գերազանցող բնակչության մեկ տարի շարունակ: Արմավիր–Արգիշթիխինիլին կարող էր ապահովել իր բնակչությանը 5–6 անգամ գերազանցող բնակչության կարիքները մեկ տարի շարունակ: Վերին Անձավի դեպքում պատկերն առավել տպավորիչ է: Ընդամենը 20 հա զբաղեցնող ուրարտական այս կարևոր կենտրոնը, որի միայն միջնաբերդի տարածքը կազմում էր 6 հա, հազիվ կարող էր ունենալ 1000-ի հասնող բնակչություն: Եթե ճիշտ է Վերին Անձավի հացահատիկի շտեմարանների նույնականացման հետ կապված մեր դիտարկումը, ապա ամրոցը կարող էր կերակրել իր բնակչությանը 7–9 անգամ գերազանցող բնակչության մեկ տարի շարունակ: Կարելի է կարծել, որ նման խոշոր պաշարները նախատեսված էին ամրոցից ընդամենը 11 կմ հեռավորությամբ գտնվող մայրաքաղաք Տուշպայի և հարակից բնակավայրերի կարիքները բավարարելու համար և՛ հաշվի առնելով Տուշպայի շրջանի, և ընդհանրապես, Վանա լճի արևելյան ավազանի երկրագործական սահմանափակ հնարավորությունները: Ուրարտական ամենախոշոր ամրոցը՝ Բաստամը (մոտ 30 հա), գրեթե 18 հա զբաղեցնող «արտաքին քաղաք»-ի հետ ունեցել է ընդամենը 1500-ի հասնող բնակչություն՝ ներառյալ՝ ամրոցի վարչակազմը և կայազորը<sup>80</sup>: Մինչդեռ ամրոցում կուտակվել է բավարար պաշար՝ շուրջ 7–9 հազ. մարդու մեկ տարի շարունակ հացով ապահովելու համար: Այլ կերպ ասած՝ քաղաքը կարող էր իր բնակչությանը հացով ապահովել 4–6 տարի:

Ինչպես երևում է, պատկերը նույնն էր նաև երկրագործական գոտիներում ընկած փոքր բնակավայրերի համար: Օրինակ՝ Դուչգագիի ամրացված բնակավայրը Մակուի մոտ՝ հյուսիսարևմտյան Իրանում, ունեցել է 50 տուն՝ շուրջ 300 բնակչով: Այստեղ բացված ուղղանկյունաձև, հաստ պատերով և առանց մուտքի կառույցը՝ 237.5 մ<sup>2</sup> մակերեսով (19.00 x 12.50 մ), ամենայն հավանականությամբ, ծառայել է իբրև ամբար<sup>81</sup>: Նման ամբարը կարող էր տեղավորել շուրջ 950 հազ. լ կամ 600 տ-ից ավելի հացահատիկ: Այդ քանակությունը երկար տարիներ կապահովեր բնակչության հացի պահանջարկն անգամ եթե հավաքված բերքի մի զգալի մասը որպես հարկ ուղարկվեր կենտրոն:

### Եզրակացություն

Փաստորեն, եթե պետությունն ամբողջությամբ ապահովում էր քաղաքների բնակչությանը հացով, ապա այդ դեպքում անգամ պետական ամբարներում մնում էր տասնյակ հազարավոր տոննա հացահատիկ: Որտե՞ղ էր սպառվում այդ հացահատիկը: Այստեղ կարելի է նշել մշտական բանակը: Բայց զինվորական խավը՝<sup>LU</sup>huradinili-ն, ըստ երևույթին, պետությունից ստացել է հողակտոր ռազմական ծառայության դիմաց և, ամենայն հավանականությամբ, միայն կայազորային զորքերն էին, որոնք ստացել են օրապահիկ ողջ տարին: Ի դեպ, դրա համար ունենք նաև գրավոր վկայություն Բաստամից<sup>82</sup>: Ուրարտական դաշտային բանակը՝ շուրջ 20–25 հազ. զինվո-

<sup>80</sup> W. Kleiss. 1980, p. 301.

<sup>81</sup> W. Kleiss, S. Kroll. 1978, S. 41, Abb. 14.

<sup>82</sup> KYKH, № 394; CTU IV, CT Ba-2 Ro 128.

րով, միջինը երեք ամիս տևող արշավանքի ժամանակ կապառեր մի քանի հազար տոննա հացահատիկ որպես սնունդ և կենդանիների կեր<sup>83</sup>։ Բայց միայն Արմավիր–Արգիշթիխինիլի հացահատիկի պաշարները բավարար էին ապահովելու համար բանակի պահանջները։ Առավել ևս, երբ արշավանքի շրջանը սովորաբար համընկնում էր բերքի հասունացման շրջանի հետ կամ իրականացվում էր բերքահավաքից անմիջապես հետո՝ հակառակորդի տարածքում բանակը կերակրելով նրա իսկ հավաքած բերքի հաշվին<sup>84</sup>։

Հաշվի առնելով Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմանները՝ բնական է ենթադրել, որ պետությունն ունենալու էր հացահատիկի պաշարներ՝ երաշտային/անբերրի տարիների համար։ Բացի դա, պետական շտեմարաններում կուտակված հացահատիկը, հավանաբար, նախատեսված էր սպառելու ոչ թե մեկ, այլ մի քանի տարվա ընթացքում։ Այս առումով հետաքրքիր գուգահեռ կարող են ծառայել միջինասորեստանյան տեքստային վկայությունները՝ «Հին գարու» (SE SUMUN) ու «Նոր գարու» մասին (SE GIBIL)՝ նկատի ունենալով նախորդ և տվյալ տարվա բերքը<sup>85</sup>։ Բայց արդյո՞ք պետությունը նպատակ ուներ պահեստավորել նման մեծաքանակ հացահատիկ երկար ժամանակի համար՝ հաշվի առնելով այդ դարաշրջանում հացահատիկի պահման պայմանները<sup>86</sup>։ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, վերգետնյա ամբարներում հացահատիկը երկար հնարավոր չէր պահել՝ ի տարբերություն հացահատիկի ստորգետնյա պահեստահորերի<sup>87</sup>։

Եթե վերստին անդրադառնանք շումերական Ուրի III հարստությանը, որին հիշատակեցինք հոգվածի սկզբում, ապա ենթադրվում է՝ Ուրի գերկենտրոնացված տնտեսությունն ամեն տարի հացով էր ապահովում ավելի քան 300–500 հազ. բնակչության՝ ծառայող խավերի և կախյալ աշխատուժի<sup>88</sup>։ Վերաբաշխման վրա հիմնված ուրարտական տաճարային-պալատական տնտեսությունը ևս կարող էր հացով ապահովել մեծաթիվ բնակչության՝ զիջելով միայն միջազետքյան ոռոգովի երկրագործության վրա հիմնված Ուրի III հարստության տնտեսությանը։ Պալատի-տաճարի հետ կապված մեծաթիվ բնակչության ապահովումը պետության կողմից վկայում է նրա տնտեսության բնույթի մասին։ Կարելի է կարծել, որ պետական շտեմարանների հացահատիկը նախատեսված էր ոչ միայն տվյալ քաղաքի/վարչատնտեսական կենտրոնի, այլև՝ այդ կենտրոնի շուրջը, նրա երկրագործական գոտում ընկած կախյալ բնակչությանը ապահովելու համար։ Վերջինս ձևավորվել էր հիմնականում գերեվարությունների հաշվին, երբ տասնյակ հազարավոր ռազմագերիներ, գրեթե բացառապես՝ կանայք և

<sup>83</sup> Տե՛ս և հմմտ. F. M. Fales. 1990, pp. 23–34; F. M. Fales, M. Rigo. 2014, p. 420.

<sup>84</sup> Տե՛ս և հմմտ. J. Marriott, K. Radner. 2015, pp. 127–143.

<sup>85</sup> F. A. M. Wiggermann. 2000, p. 180.

<sup>86</sup> P. B. Adamson. 1985, pp. 7–12.

<sup>87</sup> Տե՛ս J. Seeher. 2000, S. 268–269.

<sup>88</sup> H. Waetzoldt. 1987, p. 119.

երեխաներ, բնակեցվում էին նորանվաճ «ամայի, չոր/խոպան» հողերի վրա՝ կազմելով պետություն հիմնական աշխատուժր: Սա ամենևին չի նշանակում, թե Ուրարտական թագավորության ողջ բնակչությունը մատակարարվում էր պետության կողմից: Ասվածը վերաբերում է պետական/ինստիտուցիոնալ հողերի վրա նստեցված կախյալ բնակչությանը, ինչպես նաև պետության հետ կապված սոցիալական խավերին: Ուրարտում գործող տնտեսության կազմակերպման այս ձևն է, որը մեզ թույլ է տալիս այս թագավորությունը համարելու տաճարային-պալատական պետություն՝ վերաբաշխման վրա հիմնված տնտեսությամբ: Ուրարտական «քաղաք-շտեմարաններ»-ում կուտակվող հազարավոր տոննա հացահատիկը դրա վկայությունն էր:

Որքան էլ տարօրինակ թվա, ուրարտական պետության կազմաքանդմանը հանգեցրած գլխավոր գործոններից մեկը, այնուամենայնիվ, այս համակարգի անարդյունավետությունն էր՝ բնության գլոբալ մարտահրավերներին դիմազրավելու հարցում: Պետության կուտակած անգամ մի քանի տարվա հացահատիկի պաշարը չէր կարող երկիրը փրկել տասնամյակ(ներ) տևող կործանարար երաշտից՝ կլիմայական փոփոխություններից: Իսկ Ուրարտուն, ինչպես ողջ Առաջավոր Ասիան, Ք. ա. VII դ. գտնվել է տևական շուրջ վաթսուն տարի տևած երաշտի տիրապետության տակ<sup>89</sup>: Ուրարտական տերության անկման նախօրեին ամրոցների դատարկ շտեմարանները, մառաններն ու սովի մատնված բնակչությունը երկրում տիրող ճգնաժամի ու մոտալուտ վախճանի ակնհայտ վկայությունն են<sup>90</sup>:

Երվանդ Գրեկյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի վաղ հնագիտության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների և հին Առաջավոր Ասիայի երկրների պատմություն և պատմական աշխարհագրություն, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, հոգևոր մշակույթ, հնագիտություն և հնամիջավայր: Համահեղինակ է 2 կոլեկտիվ մենագրության և հեղինակ ավելի քան 80 հոդվածի: [ervandgr@yahoo.com](mailto:ervandgr@yahoo.com)

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Հ. Գ., Բորիսյան Ա. Ա. 2010, Ուրարտուի հնագիտություն (ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, «Բավիղ», 236 էջ:

Գրեկյան Ե. Հ. 2018, Քաղաքաշինությունը և քաղաքաշինական միտքը Բիսյանիլի-Ուրարտուում. – ՊԲՀ, № 1, էջ 225–255:

Գրեկյան Ե. Հ. 2018, Էրեբունի ամրոցը. – ՊԲՀ, № 3, էջ 38–68:

<sup>89</sup> A. Sinha, G. Kathayat, H. Weiss, H. Li, H. Cheng, J. Reuter, A. W. Schneider, M. Berkelhammer, S. F. Adalı, L. D. Stott, R. L. Edwards. 2019, pp. 1–10.

<sup>90</sup> Ե. Հ. Գրեկյան. 2019, էջ 45–46:

Գրեկյան Ե. Հ. 2019, Կլիմայական փոփոխությունները և ուրարտական պետության անկումը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 35–71:

Եսայան Ս. Ա. 1982, Կարմիր Բլուր, Երևան, «Հայաստան», 80 էջ:

Թորոսյան Ռ. Ս., Հնայական Ս. Գ. 1984, 1983 թ. պեղումները Արգիշթեխինելուն և նորահայտ ուրարտական արձանագրությունը. – ՊԲՀ, № 4, էջ 160–169:

Ղաֆաղարյան Կ. 1984, Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը (1962–1977 թթ. պեղումների նյութերով), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 164 էջ, 13 էջ աղյուսակ:

Арутюнян Н. В. 2001, Корпус урартских клинообразных надписей. Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 541 с., CLXXXIII табл., 1 л. карт.

Варданян Р., Асатрян Д. 1980, Некоторые замечания по метрологии Урарту. – ИФЖ, № 2, с. 166–178.

Мартиросян А. А. 1974, Аргиштихинили. – Археологические памятники Армении, т. 8. Урартские памятники 1. Ереван, Изд. АН АрмССР, 176 с., 61 табл.

Меликишвили Г. А. 1951, Некоторые вопросы социально-экономической истории Наири-Урарту. – «Вестник древней истории» (М.), № 4, с. 22–40.

Оганесян К. Л. 1961, Арин-Берд I. Архитектура Эребуни по материалам раскопок 1950–1959 годов. – Археологические раскопки в Армении, № 9. Ереван, Изд. АН АрмССР, 115 с.

Оганесян К. Л. 1980, Крепость Эребуни (782 до н. э.). Ереван, «Айастан», 144 с., ил.

Пиотровский Б. Б. 1950, Кармир-блур I: результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Армянской ССР и Государственного Эрмитажа 1939–1949 гг. – Археологические раскопки в Армении, № 1. Ереван, Изд. АН АрмССР, 100 с., 16 табл.

Пиотровский Б. Б. 1952, Кармир-блур II: результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Армянской ССР и Государственного Эрмитажа 1949–1950 гг. – Археологические раскопки в Армении, № 2. Ереван, Изд. АН АрмССР, 89 с., 24 табл.

Пиотровский Б. Б. 1955, Кармир-блур III: результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Армянской ССР и Государственного Эрмитажа 1951–1953 гг. – Археологические раскопки в Армении, № 5. Ереван, Изд. АН АрмССР, 74 с., 16 табл.

Пиотровский Б. Б. 1962, Искусство Урарту (VIII – VI в.в. до н.э.). Л., Изд. Государственного Эрмитажа, 122 с., XXXVI табл.

Adamson P. B. 1985. Problems over Storing Food in the Ancient Near East, Die Welt des Orients. Wuppertal – Göttingen, vol. 16, pp. 5–15.

Altaweel M. 2008, Investigating Agricultural Sustainability and Strategies in Northern Mesopotamia: Results Produced Using a Socio-Ecological Modelling Approach, Journal of Archaeological Science. Amsterdam, vol. 35/4, pp. 821–835.

Avcı C. 2013, Sardurihinili Kenti ve Yeni Değerlendirmeler, O. Tekin, M. H. Sayar, E. Konyar (eds.), Tarhan Armağani. M. Taner Tarhan'a Sunulan Makaleler / Essays in Honour of M. Taner Tarhan. Istanbul, Ege Yayınları, S. 37–51.

Balkan K. 1960, Ein urartäischer Tempel auf Anzavurtepe bei Patnos und hier entdeckte Inschriften / Patnos Yakınında Anzavurtepe'de Bulunan Urartu Tapınağı ve Kitabeleri, Anatolia. Ankara, vol. 5, S. 100–131/133–158.

- Balkan K. 1964, Patnos'ta Keşfedilen Urartu Tapınağı ve Urartu Sarayı, TTK Yıllık Konferansları I: Atatürk Konferansları, TTK Yayınları 17, Ankara, Türk Tarih Kurumu Yayınları, pp. 235–243.
- Batmaz A. 2015, Votive Objects and their Storage Areas in Urartian Fortresses, *Ancient Near Eastern Studies*. Louvain, vol. 52, pp. 127–205.
- Belli O. 1998, 1996 Yılı Aşağı ve Yukarı Anzaf Urartu Kaleleri Kazısı, Kazı Sonuçları Toplantısı, Ankara, Cilt 19/1, s. 543–569.
- Belli O. 1999, 1997 Yılı Aşağı ve Yukarı Anzaf Urartu Kaleleri Kazısı, Kazı Sonuçları Toplantısı. Ankara, Cilt 20/1, s. 507–525.
- Bilgiç E., Öğün B. 1964 [1966], 1964 Adilcevaz Kef Kalesi Kazıları/Excavations at Kef Kalesi of Adilcevaz, *Anatolia*. Ankara, vol. 8, s. 65–92/p. 93–124.
- Briant P. 2002, *From Cyrus to Alexander. A History of the Persian Empire*. Winona Lake, Indiana, Eisenbrauns, Pp. 1216.
- Burney Ch. A. 1957, Urartian Fortresses and Towns in the Van Region, *Anatolian Studies*. London, vol. 7, pp. 37–53.
- Burney Ch. A. 1977, The Economic Basis of Settled Communities in North-Western Iran, L. D. Levine, T. C. Young (eds.), *Mountains and Lowlands: Essays in the Archaeology of Greater Mesopotamia*, *Bibliotheca Mesopotamica* vol. 7. Malibu, Undena Publications, pp. 1–7.
- Burney Ch. A. 1998, The Kingdom of Urartu (Van): Investigations into the Archaeology of the Early First Millennium BC within Eastern Anatolia (1956-1965), R. Matthews (ed.), *Ancient Anatolia: Fifty Years' Work by the British Institute of Archaeology at Ankara*. London, British Institute of Archaeology at Ankara, pp. 143–162.
- Castellano L. 2018, Staple Economies and Storage in Post-Hittite Anatolia: Considerations in Light of New Data from Niğde-Kınık Höyük (Southern Cappadocia), *Journal of Eastern Mediterranean Archaeology & Heritage Studies*. University Park, Pa., vol. 6/4, pp. 259–284.
- Christiansen B. 2019, Granaries in Urartu and Neighboring States and the Monumentalization of Administrative Records, P. S. Avetisyan, R. Dan, Y. Grekyan (eds.), *Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern History and Archaeology Presented to Mirjo Salvini on the Occasion of his 80th Birthday*, Oxford, Archaeopress Archaeology, pp. 134–143.
- Çilingiroğlu A. 2001, Storerooms, A. Çilingiroğlu, M. Salvini (eds.), *Ayanis I. Ten Year's Excavations at Rusaşinili Eiduru-kai 1989-1998*, *Documenta Asiana* vol. VI. Roma, CNR - Istituto per gli studi Micenei ed Egeo-Anatolici, pp. 67–83.
- Çilingiroğlu A., Batmaz A. 2014, *Ayanis Kalesi 2009-2012 Kazıları*, Kazı Sonuçları Toplantısı. Ankara, Cilt 35/1, s. 175–198.
- Çilingiroğlu A., Salvini M. 2012, New Contributions to Urartian Archaeology from the Fortress at Ayanis, A. Çilingiroğlu, A. Sagona (eds.), *Anatolian Iron Ages 7. The Proceedings of the Seventh Anatolian Iron Ages Colloquium held at Edirne, 19-24 April 2010*, *Ancient Near Eastern Studies, Supplement Series* vol. 39. Louvain – Paris – Walpole, Mass., Peeters, pp. 99–112.
- Czichon R. M., Klinger J., Hnila P. Mielke D. P. et al. 2016, *Archäologische Forschungen am Oymaağaç Höyük/Nerik 2011–2015*, *Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft*, Berlin, Bd. 148, S. 5–141.

- Ellison E. R. 1981, Diet in Mesopotamia: The Evidence of the Barley Ration Texts (c. 3000-1400 B.C.), Iraq, London, vol. 43/1, pp. 35–45.
- Englund R. K. 2012, Equivalency Values and the Command Economy of the Ur III Period in Mesopotamia, J. K. Papadopoulos, G. Urton (eds.), The Construction of Value in the Ancient World. Los Angeles, The Cotsen Institute of Archaeology Press, pp. 427–458.
- Erdem A. Ü. 2011, Ayanis Verileri Işığında Urartu'da Tahıl Depolama. Ege Üniversitesi Edebiyat Fakültesi Yayınları, Arkeoloji Dergisi. İzmir, Cilt 16, s. 83–91.
- Erdoğan S. 2017, Kefkalesi Urartu Yerleşiminin Tarihsel Arka Planı, Türk Arkeoloji Dergisi. Ankara, Cilt 36(62), s. 31–58.
- Erzen A. 1976, Çavuştepe Kazısı 1974 Çalışmaları, Türk Arkeoloji Dergisi. Ankara, Cilt 23/2, s. 45–47.
- Fairbairn A., Omura S. 2005, Archaeological Identification and Significance of ÉSAG (Agricultural Storage Pits) at Kaman-Kalehöyük, Central Anatolia, Anatolian Studies. London, vol. 55, pp. 15–23.
- Faist B., Llop J. 2012, The Assyrian Royal Granary (karmu), G. del Olmo Lete, J. Vidal, N. Wyatt (eds.), The Perfumes of Seven Tamarisks. Studies in Honour of Wilfred G. E. Watson, Alter Orient und Altes Testament 394. Münster, Ugarit-Verlag, pp. 19–35.
- Fales F. M. 1990, Grain Reserves, Daily Rations, and the Size of the Assyrian Army: A Quantitative Study, State Archives of Assyria Bulletin. Helsinki, vol. 4/1, pp. 23–34.
- Fales F. M., Rigo M. 2014, Everyday Life and Food Practices in Assyrian Military Encampments, L. Milano (ed.), Palaeonutrition and Food Practices in the Ancient Near East: Towards a Multidisciplinary Approach, History of the Ancient Near East / Monographs 14. Padova, S.A.R.G.O.N., pp. 413–437.
- Galil G. 2007, The Lower Stratum Families in the Neo-Assyrian Period, Culture and History of the Ancient Near East 27. Leiden – Boston, Brill, Pp. xvii+403.
- Grégoire J.-P. 1999, Major Units for the Transformation of Grain. The Grain-Grinding Households (e<sub>2</sub>-HAR.HAR) of Southern Mesopotamia at the End of the Third Millennium BCE, P. C. Anderson (ed.), Prehistory of Agriculture. New Experimental and Ethnographic Approaches, Cotsen Institute of Archaeology, UCLA, Monograph 40. Los Angeles, Cotsen Institute of Archaeology Press, pp. 223–237.
- Grekyan Y. H. 2009, When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire), Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies. Yerevan, vol. 4/2, pp. 98–126.
- Grekyan Y. H. 2017, The Settlement Size and Population Estimation of the Urartian Cities, P. Avetisyan, Y. Grekyan (eds.), Bridging Times and Spaces. Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies Honouring Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday. Oxford, Archaeopress Archaeology, pp. 103–132.
- Grekyan Y. H. 2019, The Problem of the Origin of the Urartian Scribal School, P. Avetisyan, R. Dan, Y. H. Grekyan (eds.), Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern History and Archaeology presented to Mirjo Salvini on the Occasion of his 80th Birthday. Oxford, Archaeopress Archaeology, pp. 244–262.



Hodjasch S. 1999, Speisekammern in Erebuni. Nach Angaben der Ausgrabungen des Staatlichen Puschkin-Museums der Bildenden Künste, H. Klengel, J. Renger (Hrsg.), *Landwirtschaft im Alten Orient. Ausgewählte Vorträge der XLI. Rencontre Assyriologique Internationale*. Berlin, 4.–8.7.1994, *Berliner Beiträge zur Vorderen Orient* Bd. 18, Berlin, Dietrich Reimer Verlag in Berlin, S. 225–228.

Jakob S. 2003, *Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen*, *Cuneiform Monographs*, vol. 29. Leiden – Boston. Brill, S. lxi+587.

Kleiss W. 1979, *Architektur*, W. Kleiss (Hrsg.), *Bastam I. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1972–1975*, *Teheraner Forschungen*, Bd. IV. Berlin, Gebr. Mann Verlag, S. 11–98.

Kleiss W. 1980, *Bastam, an Urartian Citadel Complex of the Seventh Century B.C.*, *American Journal of Archaeology*. Boston, Mass., vol. 84/3, pp. 299–304.

Kleiss W. 1988, *Die Architektur*, W. Kleiss (Hrsg.), *Bastam II. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1977–1978*, *Teheraner Forschungen*, Bd. V. Berlin, Gebr. Mann Verlag, S. 13–74.

Kleiss W., Kroll S. 1978, *Urartäische Plätze und Anlagen des 2.–1. Jahrtausend v. Chr. in Iran: A. Architektur, B. Die Oberflächenfunde*, *Archäologische Mitteilungen aus Iran*. Berlin, Bd. 11, S. 27–71.

Koliński R. 2003, *Productivity of the Mesopotamian Agriculture and Animal Husbandry in the Late 3rd and 2nd Millennium BC*, F. M. Stepiński (ed.), *The Orient and the Aegean. Papers Presented at the Warsaw Symposium, 9th April 1999*. Warsaw, *Warsaw Institute of Archaeology*, pp. 87–101.

Llop J. 2005, *Die königlichen „großen Speicher“ (karmū rabi’ūtu) der Stadt Assur in der Regierungszeit Salmanassars I. und Tukultī-Ninurtas I.*, *Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft*. Berlin, Bd. 137, S. 41–55.

Llop J. 2014, *The Families in the Middle Assyrian Administrative Texts from the “Big Silos” of Assur (Assur M 8)*, L. Marti (ed.), *La famille dans le Proche-Orient ancien: réalités, symbolismes, et images. Proceedings of the 55th Rencontre Assyriologique Internationale at Paris, 6-9 July 2009*. Winona Lake, Ind., Eisenbrauns, pp. 443–455.

Marriott J., Radner K. 2015, *Sustaining the Assyrian Army among Friends and Enemies in 714 BCE*, *Journal of Cuneiform Studies*. New Haven, vol. 67, pp. 127–143.

Maul S. 1995, *M. Eine Rationenliste aus dem Königreich Arraphē*, *Altorientalische Forschungen*. Berlin, Bd. 22/1, S. 117–124.

Mayer W. 2013, *Assyrien und Urartu, I. Der Achte Feldzug Sargons II. im Jahr 714 v.Chr.*, *Alter Orient und Altes Testament* 395/1. Münster, Ugarit-Verlag, XVI+189 S.

Mielke D. P. 2011, *Hittite Cities: Looking for a Concept*, H. Genz, D. P. Mielke (eds.), *Insights into Hittite History and Archaeology, Colloquia Antiqua 2*. Leuven – Paris – Walpole, MA, Peeters, pp. 153–194.

Parpola S. 1987, *The Correspondence of Sargon II, Part I, Letters from Assyria and the West, State Archives of Assyria 1*. Helsinki, Helsinki University Press, Pp. xxvi+262+38 Figs.

Paulette T. 2016, *Grain, Storage, and State Making in Mesopotamia (3200–2000 BC)*, L. R. Manzanilla, M. S. Rothman (eds.), *Storage in Ancient Complex Societies*.

Administration, Organization, and Control. New York – London, Routledge, pp. 85–109.

Payne M. 2005, Urartian Measures of Volume, Ancient Near Eastern Studies, Supplement Series 16. Louvain – Paris – Dudley, MA, Peeters, Pp. xv+387.

Powell M. A. 1987-1990, Maße und Gewichte, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie. Berlin – Leipzig – New York, Bd. 7, S. 457–517.

Salvini M. 1969, Nuove iscrizioni urartea dagli scavi di Arin-berd, nell'Armenia Sovietica, Studi Micenei ed Egeo-Anatolici. Roma, vol. 9, p. 7–24.

Salvini M. 2008, Corpus dei testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi, Documenta Asiana, vol. VIII/1. Roma, CNR Istituto di studi sulle civiltà dell'Egeo e del Vicino Oriente, Pp. 653.

Salvini M. 2012, Corpus die testi urartei, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti nuove iscrizioni su pietra paleografia generale, Documenta Asiana, vol. VIII/IV. Roma, CNR Istituto di studi sulle civiltà dell'Egeo e del Vicino Oriente, Pp. 323, 1235 III.

Salvini M., Mileto F. 2010, Review of: M. Payne. Urartian Measures of Volume. Ancient Near Eastern Studies Suppl. 16. Leuven – Paris – Dudley, MA 2005, Ancient West & East, Leuven, vol. 9, pp. 361–371.

Seeher J. 2000, Getreidelagerung in unterirdischen Großspeichern. Zur Methode und ihrer Anwendung im 2. Jahrtausend v. Chr. am Beispiel der Befunde in Hattuša, Studi Micenei ed Egeo-Anatolici. Roma, vol. 42/2, S 261–301.

Seeher, J. 2015, Hitit Krallarının Ambarları: Devlet Hazinesi ve Güç Kaynağı olarak Tahıl Depolama, Colloquium Anatolicum. İstanbul, vol. 14, s. 189–203.

Senior L., Weiss H. 1992, Tell Leilan “sila bowls” and the Akkadian Reorganization of Subarian Agricultural Production, Orient-Express. Paris, 1992/2, pp. 16–23.

Sinha A., Kathayat G., Weiss H., Li H., Cheng H., Reuter J., Schneider A. W., Berkelhammer M., Adalı S. F., Stott L. D., Edwards R. L.. 2019, Role of Climate in the Rise and Fall of the Neo-Assyrian Empire, Science Advances. Washington, DC, vol. 5(11), pp. 1–10.

Solmaz T. 2013, Ozbek Dönmez E. Archaeobotanical Studies at the Urartian Site at Ayanis in Van Province, Eastern Turkey, Turkish Journal of Botany. Ankara, vol. 37, pp. 282–296.

Steinkeller P. 1987, The Administrative and Economic Organization of the Ur III State: The Core and the Periphery, M. Gibson, R. D. Biggs (eds.), The Organization of Power. Aspects of Bureaucracy in the Ancient Near East, Studies in Ancient Oriental Civilizations, vol. 46. Chicago, Ill., The University of Chicago Press, pp. 15–33.

van der Spek R. J. 2014, The Volatility of Prices of Barley and Dates in Babylon in the Third and Second Centuries BC, H. D. Baker, M. Jursa (eds.), Documentary Sources in Ancient Near Eastern and Greco-Roman Economic History. Methodology and Practice. Oxford, Oxbow Books, pp. 234–259.

Waetzoldt H. 1987, Compensation of Craft Workers and Officials in the Ur III Period, M. A. Powell (ed.), Labor in the Ancient Near East, American Oriental Series 68. New Haven, Conn., American Oriental Society, pp. 117–141.

Wiggermann F. A. M. 2000, Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad, R. M. Jas (ed.), Rainfall and Agriculture in Northern Mesopotamia, Proceedings of the Third MOS Symposium, Leiden 1999,

Publications de l'Institut historique-archéologique néerlandais de Stamboul 88. Istanbul – Leiden, Nederlands Historisch-Archaeologisch Instituut te Istanbul, pp. 171–231.

Zaccagnini C. 1975, The Yield of the Fields at Nuzi, Oriens Antiquus. Roma, vol. 14, pp. 181–225.

## ХРАНЕНИЕ И ПЕРЕРАСПРЕДЕЛЕНИЕ ЗЕРНОВЫХ ЗАПАСОВ В УРАРТСКОМ ЦАРСТВЕ

ЕРВАНД ГРЕКЯН

### Р е з ю м е

*Ключевые слова: Урартское царство, дворцово-храмовое хозяйство, клинописные надписи, археологические источники, зерновые запасы, дневной рацион, перераспределение.*

Царство Урарту (Биайнили, IX–VII вв. до н. э.) было древним ближневосточным государством с перераспределительной экономикой. Согласно сохранившимся письменным и археологическим данным, большие зернохранилища и кладовые, построенные царской властью в основных городах/административных центрах Урарту, могли хранить десятки тысяч тонн зерна и обеспечивать продовольствием ок. 100–150 тысяч человек в год. В этом отношении царство Урарту напоминает новошумерское государство III династии Ура (XXI век до н. э.), централизованная экономика которого была способна обеспечить хлебом более 300–500 тысяч человек, принадлежащих к разным социальным группам, включая большое количество зависимой рабочей силы. Нет никаких сомнений в том, что хранение и перераспределение зерна были основным способом поддержания работоспособности урартской экономики и гарантом существования государства в целом.

Как ни странно, одним из основных факторов, приведших к распаду урартского государства, была неэффективность этой системы в противостоянии глобальным вызовам природы, в частности, климатическим изменениям. Даже государственное зерно, зарезервированное на несколько лет, не могло спасти страну от разрушительной засухи, продолжавшейся несколько десятилетий. Где-то во второй половине VII века до н. э., накануне неминуемого падения государства, пустые зернохранилища и кладовые урартских центров и голодающее население явно свидетельствуют о глубоком кризисе, который привел государство к его насильственному концу.

*Ерванд Грекян – д. и. н., ведущий научный сотрудник отдела ранней археологии Армении Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: история и историческая география, социально-экономи-*

*ческие отношения, духовная культура, археология и палеосреда государственных образований Армянского нагорья и стран древней Передней Азии. Соавтор 2 коллективных монографий и автор более 80 статей. ervandgr@yahoo.com*

## STORAGE AND REDISTRIBUTION OF GRAIN RESERVES IN THE KINGDOM OF URARTU

YERVAND GREKYAN

### S u m m a r y

*Key words: Urartian kingdom, palace-temple economy, cuneiform inscriptions, archaeological sources, grain reserves, daily ration, redistribution.*

The kingdom of Urartu (Biainili, 9th–7th centuries BC) was an ancient Near Eastern state with redistributive economy. According to the preserved written and archaeological data, the large granaries and cellars built by the royal power in the main cities/administrative centres of Urartu, could store tens of thousands of tons of grain and provide with food ca. 100–150 thousand people throughout a year. In this respect, the kingdom of Urartu was resembled the Neo-Sumerian state of the III Dynasty of Ur (21st century BC), the centralized economy of which was able to provide with bread for more than 300–500 thousand people, members of different social groups including large numbers of dependent labour force. There is little doubt that the grain storing and redistribution was the main way of keeping the Urartian economy functional and securing the state's existence in general.

Strange as it may seem, one of the main factors leading to the collapse of the Urartian state was the inefficiency of this system in meeting the global challenges of nature, the climate changes in particular. Even the state grain reserved for some years could not save the country from destructive drought lasted several decades. Sometime in the second half of the 7th century BC, at the eve of its imminent fall, the empty granaries and cellars of the Urartian centres and the starving population clearly evidence of a deep crisis that would lead the kingdom to its violent end.

*Yervand Grekyan – Doctor of Sciences in History, Leading Researcher at the Department of Early Archaeology of Armenia of the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: history and historical geography, social and economic history, spiritual culture, archaeology and palaeoenvironment of state formations of the Armenian Highland and the countries of the ancient Near East. Co-author of 2 collective monographs and author of more than 80 articles. ervandgr@yahoo.com*

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՉԱԿԱՆ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԸ  
(Ապաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետեր)\*

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.3-228>

Բանալի բառեր՝ սուկաչական, իրանական փոխառություններ, ձայնեղ չչական, հին սլավոներեն, սլավոնագիտություն, նախապեղու, լիտվերեն, Ավեստա, կովկասյան լեզուներ, տիպաբանական զուգահեռներ, տարաժամանակյա հայեցակետ, ապաժամանակյա հայեցակետ:

Նախաբան

Ի տարբերություն չփական \*s-ի և նրա դիրքային ձայնեղ տարբերակի՝ \*z-ի, որոնք համեմատական լեզվաբանությունը վերականգնում է ընդհանուր հնդեվրոպականում, հիմք-լեզվում \*š և \*ž հնչույթներ չեն վերականգնվում: Հետևաբար հասկանալի է, որ հայերենի շ (š) և ժ (ž) հնչույթների համար հնարավոր չէ կանխատեսել նախալեզվյան ուղիղ ծագում: Բայցևայնպես, հին հայերենում կային շ (š) և ժ (ž) հնչույթներն ունեցող ոչ մեծ թվով բնիկ, այն է՝ հնդեվրոպական ծագման բառեր, որոնց համար պատմահամեմատական հայերենագիտության մեջ առաջարկվել են հետևյալ նախաձևերը.

շ < \*k' (ǰ) (11), \*s (5), \*s(k) (1), \*s(kh) (8), \*s(t) (1), \*(i)k (1), \*ø (1) – (28),

ժ < \*g<sup>h</sup>h, \*gh – (2):

Նկատի ունենալով մի կողմից՝ այն հանգամանքը, որ \*s(k), \*s(kh) և \*s(t) հաջորդականություններում հիմնական բաղադրիչը \*s-ն է, մյուս կողմից էլ՝ այն, որ քանակական գերակշռություն ունեցող երկու դեպքերում երկրորդ բաղադրիչը խուլ հետնալեզվային է [\*s(k), \*s(kh)], բուն նախաձև պիտի համարել \*s-ն: Հետևաբար \*s-ով նախաձև կվերականգնվի 15 բառում: Խուլ հետնալեզվայինով նախաձևի դեպքում պատկերն ավելի պարզ է. այդպիսին պիտի համարել քմայնացած հետնալեզվայինը շրթնայնացման դիրքում՝ \*k(ǰ), իսկ մյուս դեպքերն ընդհանուր առմամբ դիտարկելի են իբրև շեղումներ՝ յուրաքանչյուրը պայմանավորված որոշակի գործոնով: Դա ավելի շուտ հնչյունաբանական երևույթ է, այլ ոչ թե՛ հնչույթաբանական:

Առավել բնութագրական որոշ օրինակներ են.

\* Ներկայացվել է 21. VII. 2021 թ., գրախոսվել է 21. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 12. XI. 2021 թ.:

Շ < \*k̄(u). շանդ / (շանթ) < \*k̄uŋt-, շուն < \*k̄uŋ, շող (-ոյ) < \*k̄uŋ-lo-, շողի-ք < \*k̄uŋol-, - շ < \*s. գարշ (-ի) < \*ghr̄st-, շիրտ-, շրտնում < \*skhid-ro-, շեղ < \*skhel-, շիլ < \*skhēl-, գիշեր < \*ueikero- և այլն:

Հ.-ե. \*k̄(u) > Հյ. շ (š) անցումը, ըստ ամենայնի, պիտի քննել առհասարակ Հ.-ե. հետնալեզվայինների քմայնացման գործընթացների տրամաբանություն մեջ: Շչական հպաշփականների առնչությունը նկատել ենք, որ Հյ. չ (č')-ի նախաձևերի շարքում են նաև հետնաքմային \*k-ն՝ \*j կիսաձայնին նախորդող դիրքում (Հմմտ. \*gē-kjo- > ճիչ, \*mьnkj- ? > մանչ և այլն) և շրթնահետնաքմային \*k<sup>u</sup>-ն (Հմմտ. \*k<sup>u</sup>etuores > չորք, \*uok<sup>u</sup>je- > գոչել<sup>1</sup>):

Տ-ի ծագումնաբանությունն ըստ սլավոնագիտության և հնդ-իրանագիտության տվյալների

Սլավոնագիտության մեջ III (š)-ի առաջացումը բացատրվում է որպես առաջնալեզվային с (s)-ի և հետնաքմային x [x]-ի քմայնացման արդյունք j կամ j̄ կիսաձայնին նախորդող դիրքում<sup>3</sup>: Ընդ որում, երկեսային են ընդունվում առավելագույն ընդհանուր սլավոնական ձևերը, որոնք, իրենց հերթին լինելով լեզվաբանական վերականգնումներ, ըստ էության, միջանկյալ օղակներ են Հ.-ե. նախաձևերի և հին սլավոներենի ձևերի միջև (Հմմտ. ընդհ. սլավ. \*nosja > հն. սլավ. ноша [нош'а], ռու. ноша «բռն, շալակ», – ընդհ. սլավ. \*pisjōn > հն. սլավ. пишж [пиш'оу], հն. ռու. пишу «գրում եմ», ընդհ. սլավ. \*douxja > հն. սլավ. և հն. ռու. доуша «հոգի», ընդհ. սլավ. \*souxja >

<sup>1</sup> Ա. Մեյեյն և Գ. Ջահուկյանը «գոչեմ» բառին վերագրում են հնդեվրոպական ծագում՝ այն ցեղակից համարելով հն. հնդկ. vakti «ասում է, խոսում է», vākyam «խոսք, ասույթ», ավեստա vaxš, լատ. vox «ձայն, ասույթ, բառ», հուն. ἔπος «բառ, խոսք», պրուս. wackītwēi «կանչել», թոխ. Ա wak, թոխ. Բ wek «ձայն» բառերին (տե՛ս A. Meillet. 1950, p. 110; Գ. Ջահուկյան. 2010, էջ 168): Ըստ Հ. Հյուբշմանի՝ Հյ. «գոչեմ»-ը, վերոհիշյալ ձևերի հետ համահունչ լինելով հնչյունական կազմով, դրանց հետ ունի իմաստային անհամապատասխանություն (տե՛ս Հ. Հյուբշման. 2003, էջ 436), իսկ Հ. Աճառյանն այն համարել է բնաձայնական բառ (տե՛ս Հ. Աճառյան. 1971, հ. I, էջ 580): Իրականում, սակայն, պարզ է, թե ինչ նկատի ունի Հ. Հյուբշմանը, որովհետև «գոչեմ»-ը վերոհիշյալ ձևերից շատերի, մանավանդ պրուսերենի ձևերի հետ (Հմմտ. նաև wackis «կանչ, գոչում») գտնվում է իմաստաբանական միևնույն դաշտում: Հետևաբար, կարծում ենք, այս հարցում սկզբունքորեն ընդունելի պիտի համարել Ա. Մեյեյն և Գ. Ջահուկյանի տեսակետները: Այլ հարց է, թե ինչպիսի նախաձև կվերականգնվի դրանց համար:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Պետրոսյան. 2020, թիվ 3, էջ 205:

<sup>3</sup> Տե՛ս А. Мейе. 1951, с. 29; А. Селищев. 1951, ч. I, с. 208; А. Вайан. 1952, с. 74; С. Бернштейн. 1961, с. 162; Г. Хамбургев. 1974, с. 152–154; В. Иванов. 1990, с. 117.

Հն սլավ. *сочѣа* [сyш'а], *ռս.* *сyша* «ցամաք» և այլն): Ըստ այդմ՝ գործել են «š (ш) = s+j» և «š (ш) = x+j» բանաձևերը: Ի տարբերություն Ա. Մեյերի, որը, մատնանշելով սլավոնական բայի աորիստի ձևերում առկա *c(s) // ш(š) // x(ch)* հերթագայությունները, կարծիք է հայտնել այն մասին, որ Հ.-ե. \*s > սլավ. š և Հ.-ե. \*s > սլավ. x(ch) անցումները միաժամանակյա գործընթացներ չէին, այլ վերջինն իրենից ներկայացնում էր «Հ.-ե. \*s > ընդհ. սլավ. š > Հն սլավ. x» անցման արդյունք<sup>4</sup>, – Ս. Բեռնշտեյնը, հիմք ընդունելով Վ. Բոգորոզիցկու տեսակետը, ընդհակառակը, հնարավոր է համարել «Հ.-ե. \*s > սլավ. x» չմիջնորդավորված անցումը դեռևս նախապատմական (իմա՝ նախասլավոնական) փուլի սկզբում: Ըստ Ս. Բեռնշտեյնի, Հն սլավ. x(ch)-ն սկիզբ է առել Հ.-ե. \*s-ից սերված ընդհանուր սլավոնական \*s-ից, ի տարբերություն Հն սլավ. *c(s)*-ի, որը սերել է Հ.-ե. քմայնացած \*k-ից<sup>5</sup>: Մեզ հետաքրքրողը տվյալ դեպքում «Հ.-ե. \*s / (\*k) > սլավ. š(sh) / x(ch)» ծագումնաբանական առնչություններն են, որոնք ևս վկայում են «առաջնալեզվային սուլաչչական ↔ հետնալեզվային հպական/չփական» փոխադարձ կապի մասին:

Հին հնդկերենում, մասնավորապես՝ սանսկրիտում, շ (š)-ին մոտ հնչարտաբերություն է վերագրվում 1) Հ.-ե. քմայնացած ś-ին<sup>6</sup> (հմտ. *daśa* «տասն», *diś-* «կողմ», *diś-* «ատելություն», *śván-* «շուն», *śru-* «լսել» և այլն), որը Հ.-ե. \*k-ի առաջին քմայնացման արդյունք է և 2) Հ.-ե. \*s-ից սերված ցերբերալ *ś-* ին (հմտ. *giriśu* «լեռներում» /հգն. թ., նրգ. հլ/, *deveśu* «աստվածների միջև», *vikśu* «ցեղերի միջև», *pitṛśu* «նախնիների միջև» և այլն): Ցերբերալ *ś* է տալիս ոչ վերջնային *s*-ը բոլոր ձայնավորներից առաջ, բացառությամբ *ā-*-ի, ինչպես նաև՝ *k-*-ին և *r-*-ին հաջորդող դիրքերում: Այդ երևույթը ստացել է «ներքին սանդհի» անվանումը<sup>7</sup>: Ցերբերալ *ś-*-ն չի հանդիպում բառակազմի դիրքում. բացառություն են *śaś-* «վեց» և *śāt-* (*sáh-* -ից «հաղթահարող») բառերը<sup>8</sup>:

### Տիպաբանական զուգահեռներ

Վերոհիշյալ առումներով կարևոր են նաև տիպաբանության տվյալները, մասնավորապես՝ ոչ հնդեվրոպական և հնդեվրոպական լեզուների հետ հյ. շ (š)-ի համապատասխանություններն ըստ փոխառությունների: Այսպես՝

<sup>4</sup> Տե՛ս А. Мейе. 1951, с. 28–30.

<sup>5</sup> Տե՛ս С. Бернштейн. 1961, с. 162–163.

<sup>6</sup> Համեմատական քերականություններում նշանակվում է նաև հ-ով. հմտ. *daśa* «տասն» (տե՛ս, օրինակ, А. Мейе. 1938; А. Савченко. 1974):

<sup>7</sup> Տե՛ս В. Иванов, В. Топоров. 1960, с. 66; А. Зализняк. 1978, с. 789; Т. Барроу. 1976, с. 71–78; Т. Елизаренкова. 2004, с. 33.

<sup>8</sup> Տե՛ս Т. Елизаренкова. 1982, с. 98.

Սեմական լեզուներ > հայերեն. š > շ [հմմտ. ասոր. *madrāšā* > հյ. մղրի-լայ «երգ», ասոր. *malvāšē* > հյ. մղաւաշէ (-ից) «կենդանակերպ», ասոր. *šamārā*, *šamrā*, *šūmrā*, արաբ. *šumra* > հյ. շումրայ «վայրի սամիթ», ասոր. *šəyāpā* > հյ. շուփայ «աչքի դեղ, ծարիր», արաբ. *‘aṭīša* «ծարավել» > հյ. ասոշիլ «ծարավել», ասոր. *gədišā*, եբր. *gadiš* > հյ. գադիշ (-ի, -ից) «դեզ», ասոր. *šabbəṭā* (< եբր. *šabbāt*) > հյ. շաբաթ (-ու) և այլն]. š/s > շ [հմմտ. արամ. (ասոր.) *šəbīlā* «ճանապարհ, հետք», եբր. *šəbīl* «նեղ ճանապարհ», արաբ. *sabīl* «ճանապարհ» > հյ. շափիղ (-ի, -աց),- ասոր. *sapīlā*, եբր. *sappīr* (?) > հյ. շափիղայ «մի թանկարժեք քար»,- արամ. *šīšiltā*, *šōšiltā*, ասոր. *šēšaltā*, արաբ. *silsila(t)* > հյ. շիթայ (-ի, -ից), ասոր. *kebšā*, եբր. *kebeš*, արաբ. *kabš*, ակկադ. *kabsu* «մատաղ խոյ» > հյ. քաշ (-ի, -ից) «արու այծ»]:

Կովկասյան լեզուներ > հայերեն. š > շ [հմմտ. վրաց. *šlu* «խենթ» > հյ. շիու(ա-բարոյ) «հիմար, անխելք»,- վրաց. *šmor-* «թիվել, նեխել» > հյ. շմորիլ «նեխել»<sup>9</sup>:

Ուրարտերեն > հայերեն. s > շ [հմմտ. *Sirimutara* > հյ. շիրիմ (?)]. š > շ [հմմտ. *Anaše* > հյ. Այաշ(կերտ) (?), *šerd-* «բաժանել, առանձնացնել» > հյ. շերտ, շերտեմ, *uliše* > հյ. ուրիշ]<sup>10</sup>:

Խեթալուվական լեզուներ > հայերեն. š > շ [հմմտ. *kušduāi-* «կշտամբել, նախատել, զրպարտել» > հյ. կշտամբել, - խեթ. *kuššan-* «ոռճիկ, աշխատավարձ, գին» > հյ. կոշնել,- խեթ. *šeli-* «հացահատիկի շեղ (?)» > հյ. շեղ (շիղ) «կույտ, շեղ (հատկապես հացահատիկի)», - խեթ. *šehur-*, *սեռ.* - *unaš* «մեզ» > հյ. շեռ «մեզ»,- խեթ. *paršur-* «բրդոշ (?)», մանր կտորներից կերակուր», *paršiul* «փշուր, բեկոր» > հյ. փշուր (փշրեմ), - խեթ. *Muršiliš* > հյ. Մուշեղ]:

Իրանական լեզուներ > հայերեն. š > շ [հմմտ. մ.պ. *anōš* «նեկտար, անմահության ըմպելիք», պ. *nōš* «կենաց ջուր, անուշահամ բան» > հյ. անոշ (-ի),- ավ. *xšaθra*, հ.պ. *xšaθra* պհլ. *šatr* «երկիր, նահանգ, քաղաք», պ. *šahr* «քաղաք» > հյ. աշխարհ (ի-ա),- ավ., հ.պ. *aršti-*, *aršt* > հյ. աշտեայ

<sup>9</sup> Երկու դեպքում էլ Գ. Զահուկյանը հնարավոր է համարում նաև հակառակ փոխառությունը (տե՛ս Գ. Զահուկյան. 1987, էջ 596): Նշվածներից բացի, Հ. Աճառյանը հարավկովկասյան լեզուներից՝ մասնավորապես վրացերենից կատարված փոխառություններ է համարել նաև մշակ (< *mušaki*, լագ. *muša*) և շլան «մոխիր» (< *šlami*), փշուր, փշրել, փոշի (< *pšeri*), փոշկ «թրիք» բառերը, սակայն, ըստ Գ. Զահուկյանի, այդ ստուգաբանությունները միանշանակ չեն (նույն տեղում, էջ 594): Փշուր, փոշի, փոշկ «թրիք» բառերի և դրանց վրացական համարժեքների դեպքում նա հնարավոր է համարել երրորդ լեզվից փոխառյալ լինելը (նույն տեղում, էջ 599): Հ. Աճառյանն ուշ շրջանում վրացերենից կատարված փոխառությունների շարքին է դասել նաև շեթ «խենթ» (< *šeti*), շատ «պանրի շիճուկ» (< *šrati*) և շքրիկ «սուրհանդակ» (< *šikriki* ?) բառերը (տե՛ս Հ. Աճառյան. 1951, մաս II, էջ 223):

<sup>10</sup> Տե՛ս Գ. Զահուկյան. 1987, էջ 428–445: Հմմտ. Գ. Ղափանցյան. 1940, էջ 38–40, Գ. Ղափանցյան. 1961, էջ 130–139, Հ. Աճառյան. 1940, մաս I, էջ 172:



(ի),- մ.պ., պ. dašt, սողդ. dγšt (daxšt) > Հյ. դաշտ (ի-ա), – մ.պ. tōšak, պ. toša «ուտեղիք, սնունդ, ճանապարհի պաշար» > Հյ. թոշակ (ի-ա) «ճանապարհի պաշար, աշխատավարձ, կերակուր», – մ.պ. šapīk «ծխական շապիկ», պ. šabī «գիշերային. գիշերազգեստ» > Հյ. շապիկ և այլն]:

Վերոհիշյալ տիպաբանական առնչությունները հիմք են տալիս ասելու հետևյալը. 1) «Օտար (հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական) š = Հյ. շ (š)» համապատասխանությունը գրեթե բացարձակ է: Ինչպես ուրարտագիտության, այնպես էլ խեթագիտության մեջ կա տեսակետ, որի համաձայն ուրարտական և խեթական սեպագրերի š-ն արտահայտել է ս [s], իսկ s-ն՝ շ [ʃ] հնչյունը<sup>11</sup>: Ըստ այդմ, ուրարտ. / խեթ. s > Հյ. շ (š) առնչությունը հնչյունաբանորեն նույնարժեք է՝ s [ʃ] = շ [ʃ], իսկ ուրարտ. / խեթ. š > Հյ. շ (š) առնչությունը՝ տարարժեք (s [s] = շ [ʃ]). Երկրորդ դեպքում առկա է «խուլ սուլական = խուլ շչական» համապատասխանություն: Մեր կարծիքով, չնայած նշված գուգազեռի հավանական լինելուն՝ խեթական և ուրարտական՝ շ (š) ունեցող փոխառությունները միմյանցից պիտի տարանջատել: Բացարձակի ձգտող տիպաբանական միտումը հիմք է տալիս կարծելու, որ խեթական փոխառություններն ավելի հին պիտի լինեին, քան ուրարտականները և, ըստ ամենայնի, կատարվել են դեռևս այն ժամանակ, երբ խեթերենի š-ն ուներ sh [ʃ], այլ ոչ թե՛ s [s] հնչյունական արժեքը: Դա կարող էր լինել նախքան մ. թ. ա. X դարը, այսինքն՝ մինչև Բիայնայի թագավորության կազմավորումը, որովհետև այս պետության գոյությունը շրջանում (մ. թ. ա. IX–VI դդ.) ավելի հավանական է խեթական փոխառությունների՝ հայերենին անցումը «ուրարտերեն» կոչվող լեզվի միջանկյալ աստիճանով: Մեր կարծիքով, այդ պետությունը հայկական էր, նրա բնիկ բնակիչները հայեր էին, հետևաբար լեզուն էլ նախահայերենի դրսևորումներից մեկն էր<sup>12</sup>, 2) հայերենի՝ հունարենից և լատիներենից կատարած փոխառությունները շ (š) չունեն. սրա պատճառն առաջին հերթին կարող է լինել այն, որ այդ լեզուները š հնչյուն չեն ունեցել: Իհարկե, հայերենի հնարավոր շ (š)-ն կարող էր արտացոլել նաև նշված լեզուների խուլ սուլականը՝ s/σ(ς)՝ մնալով սուլաշչականություն (սիբիլյանություն) ընդհանուր տիրույթում:

Հայերենի ժ (ž) -ի իրանական ծագման վարկածը

Հայերենի՝ ժ (ž) հնչյուն չեն ունեցող բառերը, բացառությամբ երկուսի, իրանական փոխառություններ են: Երկու բացառություններն

<sup>11</sup> Տե՛ս E. Sturtevant. 1933, p. 70–71; Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. 1940, էջ 26, И. Фридрих. 1952, с. 51; Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. 1987, էջ 431, Г. Джаукян. 1963, с. 13; Г. Меликишвили. 1960, с. 46; Г. Меликишвили. 1964, с. 22–23; В. Иванов. 1963, с. 62–63; И. Дьяконов. 1967, с. 126; М. Хачикян. 1985, с. 39–40.

<sup>12</sup> Տե՛ս Վ. Պ ե տր ո ս ե ա ն. 2021, թիվ 41, էջ 499–526:

են՝ իժ «քարք, օձ» և լիժ (բրբռ.) «ողորկ, հարթ. անամոթ, աներես»<sup>13</sup>, որոնց վերագրվում է հնդեվրոպական ծագում: Հմմտ. ժ < \*g<sup>h</sup>. իժ < \*ēg<sup>h</sup>i-(s) «օձ», - ժ < \*gh. լիժ «ողորկ» < \*(s)ligh- (?) «լորձնոտ, կպչուն. սայթաքել, սահել»<sup>14</sup>:

Հետևաբար հայերենի ձայնեղ շչական ժ (ž)-ի, ինչպես առհասարակ հպաշփականների և սուլական շփականների, տարածամանակյա քննության կարևոր խնդիրներից մեկը ետհնդեվրոպական շրջանում նրա՝ ինքնուրույն կազմավորվելու<sup>15</sup>, թե՞ փոխառությունների միջոցով հայերենի հնչույթային համակարգ ներթափանցելու հարցն է: Այդ առնչությունը է. Աղայանը գրում է. «... ժ-ն հայերենում ծագել է իրանական ազդեցության խիստ ուժեղ գործոնի գուգահեռ դերով»<sup>15</sup>:

Վերոհիշյալ առումով կարևոր երևույթներից մեկը հնդեվրոպական, մասնավորապես՝ satəm խմբի լեզուներում ž հնչույթի առկայություն (բացակայություն) և նրա առաջացման պայմանների մասին հարցն է: Ուշագրավ է երկու կարգի իրողություն. 1) ž հնչույթն ունեին իրանական հին լեզուները, որոնց հետ, առնվազն մ. թ. ա. VI դարից սկսած, գործուն շփումներ է ունեցել հայերենը [Հմմտ. ավ. aživāka- (հիվանդության անվանում), հն պրսկ. žīva- «ապրել», պրթ. žīw- «ապրել», պրթ. žān «կին», պրթ. žān- «ծեծել, հարվածել» և այլն]<sup>16</sup>, 2) այդ հնչույթն ունեին նաև սլավոնական հին լեզուները, մասնավորապես՝ հին սլավոներենը [Հմմտ. жрътва ('жертва') «զոհ», жрѣба ('жеребенок') «մտրուկ», жати ('жать') «ճգմել, քամել» և այլն]<sup>17</sup> և հին ռուսերենը (Հմմտ. жесть «դաժան, խիստ», жити «1. ողջ լինել, 2. բնակվել», дожждати «սպասել» և այլն)<sup>18</sup>, ունի լիտվերենը (Հմմտ. žiemà «ձմեռ», žvėris «գազան», žinóti «գիտենալ» և այլն)<sup>19</sup>, որոնց հետ հին հայերենը շփումներ չի ունեցել ո՛չ պատմական և ո՛չ էլ նախապատմական շրջանում: Ասվածի վկայությունն է այն, որ ո՛չ հայերենն ունի փոխառություններ այդ լեզուներից, և ոչ էլ,

<sup>13</sup> «Լիժ» բառի համար տե՛ս նաև Գ. Զահուկյան. 1972, էջ 296: Հմմտ. Հ. Աճառեան. 1913, էջ 423:

<sup>14</sup> Իր «Հայոց լեզվի պատմություն ...» գրքում Գ. Զահուկյանն այս բառի համար նշում է նաև հ.-ե. \*lei- նախածե (տե՛ս Գ. Զահուկյան. 1987, էջ 606):

<sup>15</sup> Տե՛ս է. Աղայան. 1964, էջ 156:

<sup>16</sup> Չայնեղ շփական ž-ն եղել է ավեստայում (տե՛ս В. Расторгуева. 1978, с. 22–23): Կա տեսակետ, որ «հին պարսկերենում ոչ մեծ թվով բառերում նույնպես գոյություն է ունեցել ž հնչյունը, որը գրութայմբ նշանակվել է նույն նշանով, ինչ և j-ն» (նույն տեղում, էջ 21): Չայնեղ շփական ž ունեցել է նաև միջին պարսկերենը (տե՛ս Е. Молчанова. 1978, с. 61; В. Расторгуева, Е. Молчанова. 1981, с. 21, 160).

<sup>17</sup> Տե՛ս А. Селищев. 1951, ч. I, с. 199–200; А. Вайан. 1952, с. 71–80; А. Горшков. 1974, с. 95–98; Г. Хамбургев. 1974, с. 99–101.

<sup>18</sup> Տե՛ս В. Иванов. 1990, с. 78–89; В. Борковский, П. Кузнецов. 1965, с. 160–163; Словарь древнерусского языка (XI–XIV вв.). 1990, т. III.

<sup>19</sup> Տե՛ս М. Петерсон. 1955, с. 17, 25.

բնականաբար, նրանք՝ Հայերենից: Հայերենի ու նշված լեզուների միջև կան միայն ծագումնաբանական, այն է՝ ընդհանուր հնդեվրոպական շրջանից ժառանգված ընդհանրություններ [Հմմտ. \*māter «մայր» > Հյ. մայր, հն սլավ. мати /mati/, матер- /mater- «մայր», լիտվ. motė «կին, ամուսին», mótine «մայր»,- \*dō- «տալ» > Հյ. տամ «տալիս եմ», հն սլավ. дати /dati/ «տալ», լիտվ. dūoti «տալ»,- \*seno- «հին» > Հյ. հին, լիտվ. sėnas «հին»,- \*sali- (< \*sal- ) «աղ» > Հյ. աղ, հն սլավ. соли /soli/ «աղ», ու. соль «աղ» և այլն]:

Հայերենի՝ ոչ հնդեվրոպական և հնդեվրոպական լեզուներից (սեմական, կովկասյան, իրանական, ուրարտերեն, հունարեն, լատիներեն) նախագրային շրջանում կատարած փոխառություններում ժ (ž) կա միայն իրանականներում: Այսպես՝ իրանական լեզուներ > Հայերեն. j / ž / z / x > ժ (ž) [Հմմտ. ավ. arəja «արժեք, արժանիք, արժանի», մ.պ. arj, մ.պ. arž, պ. arz > Հյ. արժ- (արժ-էք, արժ-ել), - մ.պ. bāž, պ. baji- «տուրք» > Հյ. բաժ (-ի) «բաժին, մաս, տուրք, հարկ»,- մ.պ. bižišk, bijišk, պ. bizišk > Հյ. բժիշկ (ի-ա), -պրթ. bōž «փրկել», մ.պ. (պազ.) bōžišn «փրկություն» > Հյ. բոյժ (ի-ա), - ավ. družā-, հ.պ. durūjiya-, մ.պ. druxtān, družitan «ստել, դրժել» > Հյ. դրուժ- և այլն]. g / γ / ž / j > ժ (ž) [Հմմտ. ավ. ganti-, մ.պ. gand «ժանտահոտություն», սողդ. ǰntk «վատ» > Հյ. ժանտ (ի-ա),- ավ. vāēg-, մ. պ. vēž «թափահարել, նետել», խոտ.-սակ. bijs- «թափել» > Հյ. վէժ և այլն]:

Վերոհիշյալ հնչյունական (/հնչույթային) անցումներից ակնհայտ է, որ համապատասխանություններն ընդհանուր առմամբ սուլաչափակա-նություն տիրույթում են, որը միանգամայն օրինաչափ երևույթ է: Հեշտությամբ բացատրելի են նաև իրան. g / γ > Հյ. ժ (ž) անցումները: Մի շարք լեզուներում g [g]-ն և γ [h]-ն միևնույն բաղաձայնի հպական ու շփական տարբերակներն են, որոնք կարող էին միմյանց նկատմամբ գտնվել թե՛ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, ինչպես գերմանական հին լեզուներում (Հմմտ. b, d, g, g<sup>w</sup> հպական և փ, փ, γ, w շփական ձայնեղները - ընդհ. գերմ. \*gaba «ես տվեցի», հն անգլ. brōdor «եղբայր», հն վրն գրմ. đhri «երեք», գոթ. magan [magan] «կարողանալ. ուժ») <sup>20</sup>, թե՛ ազատ փոփոխական հարաբերության մեջ, ինչպես արդի ուսերենում (Հմմտ. ու. бог «աստված» -[bog] և [boy], когда «երբ» - [kagda] և [kayda] և այլն) <sup>21</sup>: Իսկ G (g/γ) > Ž անցումը հ.-ե. հետնալեզվային հպական-

<sup>20</sup> Տե՛ս А. Мейе. 1952, с. 46–47; Э. Прокош. 1954, с. 39–43; М. Гухман. 1958, с. 44–45; Сравнительная грамматика германских языков. 1962, т. II, с. 17–48. Հմմտ. «... այդ հնչյունները (իմա՝ b, d, g-ն - Վ. Պ.) կազմել են հնչույթների հատուկ դաս, որոնց տարբերակները որոշակի դիրքերում կարող էին իրացվել մերթ՝ որպես շփականներ, մերթ էլ՝ որպես հպականներ» (տե՛ս Сравнительная грамматика германских языков. 1962, т. II, с. 47):

<sup>21</sup> Եթե Մ. Մատուսելիչի և առհասարակ Լենինգրադի հնչույթաբանական դպրոցի ներկայացուցիչների կարծիքով <g>-ն և <γ>-ն ուսերենի

ների քմայնացման արդյունք է հին սլավոներենում [Հմմտ. հ.-ե. \*gěna «ցեղ, սերունդ» (> \*ǫž'ena) > հն սլավ. жена [ž'ena] «կին»], որն արդի ռուսերենում պահպանվել է իբրև պատմական հերթագայություն (Հմմտ. бегу [begu] > бежишь [bežijʹ], друга [druga] > дружеский [družeskij], нога [naga] > ножка [nožka] և այլն)<sup>22</sup>: Հին հայերենում գ (g) > ժ (ž) հնչույթային անցման (իմա՝ պատմական հերթագայություն) միակ օրինակ կարող է համարվել տուգ-(ան-ք) (> տոյժ) > տուժ-(ել) անցումը, այն վերապահումով, սակայն, որ իրանական հին լեզուներում (երկուսն էլ իրանական փոխառություններ են) տոյժ-ը «տուժել, հատուցել» և տուգ-ը «ներզված, հարստահարված, տառապած», ըստ ամենայնի, մերձավոր հոմանիշներ էին, այլ ոչ թե՛ միևնույն արմատի հերթագայական տարբերակներ: Հավանական է, որ այդ ձևերը հայերենում են սկսել ընկալվել իբրև միևնույն բառի կրկնակներ (Հմմտ. տոյժ-տուգ-անք)<sup>23</sup>:

Ինչ վերաբերում է իրան. x - հյ. ժ (ž) առնչության հարցին, պիտի կարծել, որ այդպիսի ուղղակի հնչյունական հարաբերակցություն չի եղել: Հայերեն ձևը, ըստ ամենայնի, փոխառվել է ավեստայի (հին տերմինաբանությունը՝ գենդերենի) և միջին պարսկերենի ž ունեցող ձևերից (Հմմտ. ավ. druža-, մ.պ. družitan «ստել, դրժել» > հյ. դրուժ-): Իրան. x-ն հայերենում տալիս է խ (x) [Հմմտ. պհլ. bitaxš «կուսակալ, փոխարքա» (< իրան. \*bidixš(a)-) > հյ. բդե(ա)չխ «կուսակալ». հյ. ձևում առկա է խշ (xš) → շխ (šx) դրափոխություն]: Այդ առումով իրավիճակը չի փոխում նաև պրս. duxt- «աղջիկ» - հյ. դուստր «աղջիկ» համապատասխանությունը, որովհետև երկու ձևերն էլ ուղիղ ժառանգություն են ընդհանուրհանրակարգական լեզվից (Հմմտ. \*dhukter / \*dhug(h)ōter «աղջիկ» > dugadar-, ավ. duγdar-, պրս. duxtā, duxt, հյ. դուստր): Հետևաբար՝ g/γ>x հնչյունական անցումը զուտ իրանական երևույթ է և որևէ կերպ չի առնչվում հայ-իրանական փոխառությունների հարցին:

զարգացման որոշակի փուլում եղել են ինքնուրույն հնչույթներ, որոնք, սակայն, ժամանակակից ռուսերենում կորցնում են իրենց հնչույթային կարգավիճակը՝ վերածվելով միևնույն հնչույթի այլահնչակների (տե՛ս М. Матусевич. 1976, с. 149), ապա ըստ Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի ներկայացուցիչների՝ դրանք միմյանց նկատմամբ գտնվել են միայն ազատ փոփոխական հարաբերության մեջ (տե՛ս А. Реформатский. 1967, с. 214):

<sup>22</sup> Ինչպես մեկ անգամ արդեն նկատել ենք, սլավոնագիտության մեջ տեղ գտած պատկերացումների համաձայն հ.-ե. հետնալեզվայինների անցումը շչականների վերաբերում է առաջին քմայնացմանը, իսկ ըստ հայերենագիտության և հնդիրանագիտության՝ երկրորդ քմայնացմանը (տե՛ս Վ. Պետրոսյան. 2020, թիվ 3, էջ 204):

<sup>23</sup> Հմմտ. Հ. Աճառյան. 1940, մաս I, էջ 288, Հ. Աճառյան. 1979, մաս IV, էջ 420, 425, Գ. Ջահուկյան. 1987, էջ 549, Գ. Ջահուկյան. 2010, էջ 732, 734:

Անդրադառնալով է. Աղայանի վերը նշված տեսակետին՝ պիտի ասել հետևյալը. 1) հ.-ե. հին լեզուներից չ ունեին ոչ միայն իրանականները, որոնց հետ հայերենի առնչությունները սկիզբ են առել նախքան մեր թվագրությունը, այլև սլավոնական հին լեզուները և լիտվերենը, որոնց հետ ոչ միայն հայերենը, այլև իրանական լեզուները շփումներ չեն ունեցել և չէին կարող ունենալ առնվազն մինչև ուսական հնագույն պետական կազմավորման՝ Կիլեյան Ռուսիայի ստեղծումը (մ. թ. IX դ. երկրորդ կես 862/882), եթե ոչ՝ ավելի ուշ: Հետևաբար հիմքեր կան ասելու, որ ինչպես սլավոնաբալթյան լեզուներում, այնպես էլ հայերենում ժ (ž)-ի առաջացումն ավելի լայն, մասնավորապես՝ satəm խմբի լեզուներին բնորոշ գործընթաց էր, որը, սակայն, չի ներառել այդ խմբի բոլոր լեզուները: Կարծում ենք՝ հոգուտ այդ տեսակետի է վկայում նաև այն հանգամանքը, որ հետագայում չ հնչույթ կազմավորվել է նաև centum խմբի որոշ ժամանակակից լեզուներում, ինչպես՝ ֆրանսերենում ([ʒ])<sup>24</sup>, գերմաներենում ([ʒ])<sup>25</sup> և այլն: 2) Ըստ իս, հայերենում ժ (ž)-ի սաղմնավորումը սկսվել է իրանական փոխառությունների շրջանից շատ ավելի վաղ՝ մ. թ. ա. XII–IV դդ., երբ գործողություն մեջ էր հպական բաղաձայնների 2-րդ քմայնացումը, որի ընթացքում կազմավորվել են շչական բաղաձայնները<sup>26</sup>: Իսկ իրանական փոխառությունների մեծ մասը կարող էր կատարվել մ. թ. ա. 1-ին հազարամյակի կեսերից սկսած, երբ դեռևս Ուրարտուի թագավորությունը վերջին փուլում և մասնավորապես նրա անկումից հետո (մ. թ. ա. 585 թ.) իրանական ժողովուրդները, նախ՝ մարերը/մեդիացիները/ (Մարաստան/Մեդիա), ապա՝ պարսիկները (Աքեմենյան Պարսկաստան) սկսեցին նվաճել Հայկական լեռնաշխարհը: Հետևաբար, իրանական լեզվական ենթաշերտը (լայն առումով) կարող էր միայն նպաստել, որ ժ (ž)-ն տարածում ունենար հայերենում, ինչը և տեղի է ունեցել, այլ ոչ թե նրա առաջացման պատճառ լիներ:

### Եզրակացություն

Վերոհիշյալ քննությունը բավարար հիմք է տալիս հետևյալ եզրակացությունների համար. 1) հյ. շ (š)-ն հավասարապես կարող էր սերել ինչ-

<sup>24</sup> Ž-ն կազմավորվել է դեռևս հին ֆրանսերենի (IX–XIII դդ.) վերջին փուլում: Հպաշփականները, կորցնելով ատամնային բաղադրիչը, «վերակազմավորվել էին շփական բաղաձայնների» (տե՛ս Н. Катагощина. 1976, с. 54–55): Արդի ֆրանսերենի գրավոր խոսքում [ž]-ն նշանակվում է j և g տառերի միջոցով [համտ. le visage [le-vi-za:ʒ] «դեմք», agir [a-ʒi:r] «գործել», j'ai [ʒe] «ես ունեմ»]:

<sup>25</sup> Հանդիպում է օտար, հիմնականում՝ ֆրանսիական ծագման բառերում: Գրությունը արտահայտվում է g, j տառերով և sh տառակապակցությամբ [համտ. Gage [ga:ʒə] «1. ոտճիկ, 2. հնցծ. պարզև, շնորհ», Genie [zeni:] «հանճար», Jargon [ʒar gon] «ժարգոն», Woronesh [voroneʒ] Վորոնեժ (քաղաք Ռուսաստանի Դաշնությունում)]:

<sup>26</sup> Տե՛ս В. Порциг. 1964, с. 116–117, 319; Г. Джаукян. 1967, с. 329; Վ. Պետրոսյան. 2020, թիվ 3, էջ 213:

պես հ.-ե. խուլ սուլականից՝ \*s, որովհետև s→š / s←š փոխադարձ անցումները տիպաբանական առումով սովորական երևույթ էին հին լեզուներում, այնպես էլ հ.-ե. քմայնացած խուլ հետնալեզվայինից՝ \*k, ք կիսաձայնին նախորդող, այն է՝ շրթնայնացման դիրքում, 2) հյ. ժ (ž)-ի առաջացումը եթե ոչ՝ ընդհանուր հնդեվրոպական, առնվազն satəm խմբի լեզուներին բնորոշ երևույթ է, հետևաբար ճիշտ է է այն իրանական գործոնի ազդեցությունը բացատրելը: Իրանական փոխառություններն ավելի շուտ կարող էին նպաստել այդ հնչույթի կայունացմանը հայերենի սուլաշչականների համակարգում, քան՝ դրա կազմավորմանը, որովհետև, ըստ ամենայնի, ժ (ž)-ն հայերենում կազմավորվել է նախքան իրանական փոխառությունները:

Վարդան Պետրոսյան – ք. գ. թ., ԵՊՀ ընդհանուր լեզվաբանություն ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանություն, կառուցվածքային լեզվաբանություն, համեմատական լեզվաբանություն, ընդհանուր և հայկական հնչույթաբանություն, հայոց լեզվի պատմություն: Հեղինակ է 2 գրքի և շուրջ 50 հոդվածի: vz.petrosyan@mail.ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառեան Հ. 1913, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, Էմինեան ազգագրական ժողովածու, 1178 էջ:

Աճառյան Հ. 1951, մաս II, Հայոց լեզվի պատմություն, Երևան, Հայպետհրատ, 608 էջ:

Աճառյան Հ. 1971, հ. I, Հայերեն արմատական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 698 էջ:

Աճառյան Հ. 1979, հ. IV, Հայերեն արմատական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 674 էջ:

Աղայան Է. 1964, Գրաբարի քերականություն. Հնչյունաբանություն, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 362 էջ:

Ղափանցյան Գ. 1940, Ուրարտուի պատմությունը, Երևան, Պետական համալսարանի հրատ., 234 էջ:

Ղափանցյան Գ. 1961, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 362 էջ:

Հյուբշման Հ. 2003, Հայերենի քերականություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 604 էջ:

Պետրոսեան Վ. 2021, Հին հայերենի հպաշփականների ծագումը (տարածամանակյա քննություն). – ՎԷՄ, թիվ 3, էջ 187–218:

Պետրոսյան Վ. 2021, Հին հայերենի հպաշփականների ծագման «կովկասեան» վարկածի շուրջ. – «Հայկազեան հայագիտական հանդես», էջ 499–526:

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:

- Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Աստղիկ», 820 էջ:
- Борковский В., Кузнецов П. 1965, Историческая грамматика русского языка. М., «Наука», 555 с.
- Барроу Т. 1976, Санскрит. М., «Прогресс», 411 с.
- Бернштейн С. 1961, Очерк сравнительной грамматики славянских языков. М., Изд. АН СССР, 350 с.
- Вайан А. 1952, Руководство по старославянскому языку. М., Изд. иностранной литературы, 446 с.
- Горшков А. 1974, Старославянский язык. М., «Высшая школа», 324 с.
- Гухман М. 1958, Готский язык. М., Изд. литературы на иностранных языках, 288 с.
- Джаукян Г. 1967, Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, Изд. АН АрмССР, 382 с.
- Джаукян Г. 1963, Урартский и индоевропейские языки. Ереван, Изд. АН АрмССР, 156 с.
- Дьяконов И. 1967, Языки древней Передней Азии. М., «Наука», 492 с.
- Елизаренкова Т. 2004, Санскрит.– Языки мира: индоарийские языки древнего и среднего периодов. М., «Academia», 160 с.
- Елизаренкова Т. 1982, Грамматика ведийского языка. М., «Наука», 438 с.
- Зализняк А. 1978, Грамматический очерк санскрита.– Кочергина В. Санскритско-русский словарь. М., «Русский язык», 896 с.
- Иванов В. 1990, Историческая грамматика русского языка. М., «Просвещение», 400 с.
- Иванов В., Топоров В. 1960, Санскрит. М., Изд. восточной литературы, 134 с.
- Иванов В. 1963, Хеттский язык. М., Изд. восточной литературы, 222 с.
- Катагощина Н. 1976, История французского языка. М., «Высшая школа», 319 с.
- Матусевич М. 1976, Современный русский язык: фонетика. М., «Просвещение», 288 с.
- Мейе А. 1938, Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.–Л., Государственное социально-экономическое издательство, 510 с.
- Мейе А. 1951, Общеславянский язык. М., Изд. иностранной литературы, 491 с.
- Мейе А. 1952, Основные особенности германской группы языков. М., Изд. иностранной литературы, 167 с.
- Меликишвили Г. 1960, Урартские клинообразные надписи. М., Изд. АН СССР, 504 с.
- Меликишвили Г. 1964, Урартский язык. М., «Наука», 73 с.
- Молчанова Е. 1978, Среднеиранские языки.– Языки Азии и Африки, т. II. М., «Наука», 440 с.
- Петерсон М. 1955, Очерк литовского языка. М., Изд. АН СССР, 140 с.
- Порциг В. 1964, Членение индоевропейской языковой области. М., «Прогресс», 332 с.

- Прокош Э. 1954, Сравнительная грамматика германских языков. М., Изд. иностранной литературы, 379 с.
- Расторгуева В. 1978, Древнеиранские языки (авестийский и древнеперсидский). – Языки Азии и Африки, т. II. М., «Наука», 440 с.
- Расторгуева В., Молчанова Е. 1981, Среднеперсидский язык. – Основы иранского языкознания: среднеиранские языки. М., «Наука», 544 с.
- Расторгуева В., Молчанова Е. 1981, Парфянский язык. – Основы иранского языкознания: среднеиранские языки. М., «Наука», 544 с.
- Реформатский А. 1967, Введение в языковедение. М., «Просвещение», 542 с.
- Савченко А. 1974, Сравнительная грамматика индоевропейских языков. М., «Высшая школа», 412 с.
- Селищев А. 1951, ч. I, Старославянский язык. М., Государственное учебно-педагогическое издательство Министерства просвещения РСФСР, 336 с.
- Словарь древнерусского языка (XI–XIV вв.). 1990, т. III. М., «Русский язык», 511 с.
- Сравнительная грамматика германских языков. 1962, т. II. М., Изд. АН СССР, 402 с.
- Хачикян М. 1985, Хурритский и урартский языки. Ереван, Изд. АН Арм. ССР, 195 с.
- Хамбургаев Г. 1974, Старославянский язык. М., «Просвещение», 432 с.
- Фридрих И. 1952, Краткая грамматика хеттского языка. М., Изд. иностранной литературы, 199 с.
- Meillet A. 1950, Les dialectes indo-européens, Paris, La société de linguistique de Paris, 138 с.
- Sturtevant E. 1933. Comparative Grammar of the Hittite Language, Philadelphia, The Linguistic Society of America, 320 p.

## ШИПЯЩИЕ СОГЛАСНЫЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА (Диахронический и ахронический аспекты)

ВАРДАН ПЕТРОСЯН

Резюме

*Ключевые слова: сибиланты, иранские заимствования, звонкий шипящий, старославянский, славистика, праязык, литовский, Авеста, кавказские языки, типологические параллели, диахронический аспект, ахронический аспект.*

Определение исконной праформы древнеармянского глухого шипящего  $\zeta$  ( $\zeta$ ) не представляет трудности, это и.-е.  $*s$  и  $*k'$  ( $y$ ). В пользу данного заключения свидетельствуют как количественные соотношения праформ, так и типологические параллели  $\zeta$  ( $\zeta$ ) с родственными и неродственными языками. Вопрос возникновения звонкого шипящего  $\zeta$  ( $\zeta$ ) представ-



ляет некоторую трудность в том плане, что, с одной стороны, в древнеармянском есть всего два слова и.-е. происхождения, имеющих эту фонему: *խժ* «змея» и *լիժ* «слизистый; поскользнуться», а с другой стороны, множество иранских заимствований (ср. *արժ* (-*ել*) «стоять», *բաժ* «часть; дань», *բոյժ* «лекарство», *ղրոժ*(-*ան*) «мошенник, злодей», *ժանտա* «жесточкий, беспощадный» и т. д. Последняя реалья дала основание полагать, что в армянском языке *ժ* (ձ) мог возникнуть под воздействием иранского фактора (Э. Агаян). Однако, как и все сибиланты, *ժ* (ձ) является самостоятельным явлением в армянском языке. Он, по крайней мере, был свойственен некоторым языкам восточной, то есть, *satəm* группы (старославянскому, древнерусскому, литовскому), ни один из которых в исторический период не соотносился с древними иранскими языками. То обстоятельство, что *ձ* в более поздний период сформировался и в отдельных современных языках западной, то есть *centum* группы (французском, немецком) также свидетельствует о сказанном. Праформой армянского *ժ* (ձ) мог быть и.-е. лабиовелярный *\*gʰh*, так как эта праформа восстанавливается также для соответствующей фонемы родственных языков.

*Վարդան Սետրոսյան – к. филол. н., заведующий кафедрой общего языкознания ЕГУ. Научные интересы: общее языкознание, структурная лингвистика, сравнительное языкознание, общая и армянская фонология, история армянского языка. Автор 2 книг и около 50 статей.  
vz.petrosyan@mail.ru*

## HUSHING SOUNDS OF THE OLD ARMENIAN (Diachronic and achronic aspects)

VARDAN PETROSYAN

### S u m m a r y

*Key words: sibilants, Iranian loan words, voiced hushing sounds, Old Slavonic, Slavic studies, proto-language, Latvian, Avesta, Caucasian languages, typological parallels, diachronic aspect, achronic aspect.*

The definition of main prototypes of the Armenian voiceless hushing *չ* (ջ) does not present any difficulty: these are the I.-E. *\*s* and *\*kʰ* (*u*). The quantitative ratio of the proto-forms, as well as typological parallels of *չ* (ջ) with non relative languages confirms this conclusion. The origin of voiced hushing *ժ* (ձ) is somewhat difficult, due to the presence of only two words that have the same phoneme derived from the I.-E.: *խժ* “snake” *և* *լիժ* “slip” from one side and due to Iranian loan words from the other: (cf. *արժ*(-*ել*) “cost”, *բաժ* “part. Fee”, *բոյժ* “drug”, *ղրոժ*(-*ան*) “rogue, wicked”, *ժանտա* “cruel, merciless” etc.). The latter reality makes believe that the Armenia *ժ* (ձ) could have been formed by the

Iranian influence (E. Aghayan). However we believe, that as the sibilant sounds in general, the sound *š* (*շ*) is also an independent occurrence in Armenian. It has at least been characteristic of a group of Eastern languages of *satəm* (Old Slavonic, Old Russian, Latvian) all of which have never had relations with old Iranian languages in the historical course of time. The fact that the sound *ž* has developed in the later period in several languages of the Western centum group (French, German) also attests the above mentioned thesis. The Armenian proto-form *š* (*շ*) could have been the I.-E. labio-velar *\*gʰh*, as this is the proto-form that is restored also for the corresponding phoneme in the related languages.

*Vardan Petrosyan – Candidate of Sciences in Philology, Head of the Chair of General Linguistics at the YSU. Scientific intrerests: General Linguistics, Structural Linguistics, Comparative Linguistics, General and Armenian Phonology, History of Armenian Language. Author of two books and about 50 articles. vz.petrosyan@mail.ru*

ԻՐԱԶԵԿԻ (Հ. ՏԵՐ-ՀԱԿՈՐԵՅԱՆ) ՀՈԴԿԱԾԱՇԱՐԸ  
ԳՈՂԹԱՆ ԳԱՎԱՌԻ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ\*

Գողթան գավառը (ներկայումս՝ Նախիջևանի Հանրապետության Օրդուբադի շրջան) վաղնջական ժամանակներից եղել է պատմական Հայաստանի բաղկացուցիչ մասը<sup>1</sup>: Դարեր շարունակ գավառը կրել է այն բոլոր արհաւիրքները, ինչ ողջ Հայաստանը. ավեր, կոտորած, տեղահանություն, գաղթ ... Այս առումով խիստ արդիական նշանակություն ունի երկրամասի՝ Հատկապես 1918–1921 թթ. ժամանակահատվածի ուսումնասիրությունը, երբ արդրեջանաթուրքական հրոսակները մահ ու ավեր էին տարածում գավառում: Գողթանի այն գյուղերը, որոնք ապավինեցին իրենց ուժերին և թշնամուն ցույց տվեցին կազմակերպված դիմադրություն, զերծ մնացին կոտորածներից, ապրեցին հայրենի օջախներում, իսկ այն բնակավայրերը, որոնց բնակչությունը հավատաց թշնամու «գլխարտությունն» ու հանձնվեց՝ կոտորվեց<sup>2</sup>: Արդրեջանական իշխանությունների վարած հայահալած քաղաքականության հետևանք

\* Ներկայացվել է 22. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 16. IX. 2021 թ.:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Նախիջևանի գաւառ, Ա. մասն, Գողթն կամ Օրդուբադի ոստիկանական շրջան. – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), գիրք XI, 1904, էջ 253–270, Գ ո կ տ. Յ ո վ Տ. Հ ա խ ն ա գ ա ռ ե ա ն. Գողթան գավառ (Պատմագրութիւն եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991, էջ 9–30, А. Карагезян. Некоторые вопросы истории Нахичевана и Гохтна. – ИФЖ, 2001, № 3, с. 227–242; Ա. Ա յ վ ա գ յ ա ն. Նախիջևանը 1905 թ. և 1918–1919 թթ. կրակե շղթայի գոյամարտերում, Երևան, 2005, էջ 3–19, ն ու յ ն ի՝ Գինեւէտ Գողթն. պատմագագագրական ակնարկ, լուսանկարչական պատկերագիրք, Երևան, 2006, էջ 3–24 և այլն:

<sup>2</sup> «1914 թվականին, իմ մտերիմ գողթնեցիների հրավերով եղա Գողթանում հռչակավոր Ազուլիսում ու Քաղաքիկում: Իրոք փոքրիկ Փարիզ էր Ազուլիսը, գողտրիկ Շվեյցարիա՝ Գողթանը, – վերհիշում է Մարտիրոս Սարյանը: – Անմոռանալի են նրա շքեղաչեն տաճարները, սյունազարդ և փայլուն տուն-պալատները՝ շրջապատված պտղատու այգիներով, ծաղկավետ ու զարդարուն պարտեզներով: Աքանջելի էին ամենուրեք կարկաչող սառնորակ ու գուլալ աղբյուրները: Դարերի ընթացքում գողթնեցու շինարար ձեռքը և համառ աշխատասիրությունը կառուցել է այս բոլորը և յուր լի ու առատ ապրուստով, վայել նիստ ու կացով, բնատուր ուսումնասիրությամբ և հյուրասիրությամբ ստեղծել է մշակույթ, որը միշտ ու շարունակ փայլել է հայոց պատմության հորիզոնում: Չեմ մոռանա այն հայրենասեր, ուրախ մթնոլորտը ու ինձ շրջապատող և ուղեկցող մտավորականներին ու ուսանողներին: Գողթանի կործանումը, Ազուլիսի ողբերգությունը 1919 թվականին, անմոռաց և ամենադաժան դեպքերից է մեզ՝ Հայերիս համար, և անջնջելի էջերից մեր պատմական Գողթանից» (Մ. Ս ա ռ յ ա ն. Պատմական Գողթանում. – Ա. Ա յ վ ա գ յ ա ն. Մեզ պետք են մտքի զորավարներ, Երևան, 2012, էջ 377):

քով՝ 1921 թվականից հայ ազգաբնակչությունը սկսեց լքել հայրենի ուտանը<sup>3</sup>:

... Գողթան գավառը հայ ժողովրդի տարեգրության, գիր ու գրչության և մշակույթի նշանակալի վայրերից է: Եղել է պատմական իրադարձություններով լեցուն երկրամաս. այստեղ քարոզչական գործունեություն է ծավալել Մեսրոպ Մաշտոցը, հռչակված էր Գողթան երգիչներով, հայտնի էր «Գինեւէտ Գողթն» անվանումով, նշանավոր ավաններով ու բնակատեղիներով [Ագուլիսներ, Յդնա, Տանակերտ, Փառակա, Բիստ, Վանանդ, Գիրան, Քաղաքիկ, Որդվար (Օրդուբադ) և այլն], մետաքսագործության խոշոր կենտրոն էր, լեցուն էր ճարտարապետական կոթողներով, ունեցել է նշանավոր տոհմեր, գերդաստաններ<sup>4</sup>: Վերջիններս հայկական իրականությունն ու

<sup>3</sup> Ա. Այվազյան. Նախիջևանը 1905 թ. և 1918–1919 թթ. կրակե շղթայի գոյամարտերում, էջ 9–14, 378, Ա. Եփրիկյան. Նախիջևանը 1917–1921 թթ., Երևան, 2016, էջ 109–139, 225–227 և այլն:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Ե. Լալայեան. Նշվ. աշխ., էջ 270–334, Դոկտ. Յովհ. Հախնազարեան. Նշվ. աշխ., էջ 30–389, Ա. Այվազյան. Գինեւէտ Գողթն. պատմաազգագրական ակնարկ, լուսանկարչական պատկերագիրք, ն ու յ ն ի՝ Նախիջևան. հայկագունք. – Ով ով է: Կենսագրական հանրագիտարան, Երևան, 2012:

Մեսրոպ Մաշտոցին նվիրած իր աշխատության մեջ նշանավոր պատմաբան Լեոյի գնահատմամբ՝ Գողթանը «Սյունիքի և Արցախի լեռնաստանների պես մի անլույս աշխարհ էր: Այստեղ մարդկային միտքը գործում էր: Եվ եթե Գողթանը մինչև Մեսրոպի ժամանակը մնացել էր հեթանոսության մեջ, պատճառն այն էր, որ նա մի առանձնակի նշանավոր դեր էր կատարում հայկական հին աշխարհի մեջ: Ազգային հին աստվածների, հին հերոսների ավանդապահ էր նա և հեթանոս հայությանը ոգևորողը» (Լ. Ե. Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1962, էջ 53):

Գողթնի Յդնա ավանից սերող անվանի լեզվաբան Սարգիս Սարգսյանցի՝ դեռևս XIX դ. 80-ական թվականներին իրավացիորեն արած եզրակացության՝ «Բացի ուրիշ պատմական նշանակություններից այդ գավառը հին Հայաստանի համար նույն նշանակությունը ուներ, ինչ նշանակություն որ ուներ միջնադարյան Յրանսիայի համար գեղեցիկ Պրովանսը. ինչպես և այս վերջինը՝ Գողթնը գինու և երգերի աշխարհ էր, միայն այն զանազանությամբ, որ Պրովանսում հնչում էին տրուբադուրների սիրո քնքուշ երգերը, իսկ Գողթնի լեռները հնչեցնում էին հայոց դիցազունների քաջագործությունների երգերը» [Ս. Սարգսյանց. Ագուլեցոց բարբառը (Չօկերի լեզուն): Լեզուաբանական հետազոտություն, մասն I, Մոսկվա, 1883, էջ 1]:

Գողթնի և մասնավորապես Ագուլիսի նիստուկացին քաջածանոթ ազգային, հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանի բնութագրմամբ՝ «Հնուց ի վեր Գողթանը մեր պատմության մեջ հրապուրիչ անուն ունի: Հեթանոս դարերում նա մեր աշխարհի գուսանների հայրենիքն էր, որտեղից յուզն ու գինին ցնծություն էին սփռում Հայաստանի մեկ ծայրից մյուսը: Նոր ժամանակներում Գողթանը ... հայտնի դարձավ իր ժողովրդի քաղաքակրթական անօրինակ ձիրքերով և համարձակ ձեռներեցությամբ լուսավորության, արդյունաբերության ու առևտրի ասպարեզներում: ... Եվ այսքանն այնուամենայնիվ չի կարողացել հագեցնել այս ժողովրդի առաջադիմության ծարավը: Նա իր հացի ու արտոնների պահասը լրացրել է շերամապահությանը, մետաքսի առևտուրը զարգանալով ու ծավալվելով կամաց-կամաց ագուլեցուն մղել է դեպի անծանոթ ու հեռավոր շահաստաններ: Եվ այսպիսով այս խելացի ժողովուրդը դարձել է աշխարհի առաջին

մշակույթին տվել են հասարակական-քաղաքական, գիտամշակութային և այլ բնագավառների կարկառուն բազմաթիվ դեմքեր [Քրիստափոր Միքայելյան, Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Ռուբեն Մամուկյան, Էդգար Շահին, Ավետիք Արասխանյան, Ստեփան (Ռոստոմ) Զորյան, Ավետ Ավետիսյան, Օվի Աևուկյան, Թովմաս Վանանդեցի, Ալեքսանդր Քալանթար, Կարապետ Տեր-Մկրտչյան, Անրի Թրուայա (Լևոն Թորոսյան) և այլն]:



Գողթան աշխարհի անվանի գավակներից է նաև հասարակական-քաղաքական, պետական հայտնի գործիչ, բազմավաստակ մանկավարժ, հրապարակագիր, պատմաբան ու բանասեր Հակոբ Գաբրիելի Տեր-Հակոբյանը: Մերօրյա լայն հանրությանը քիչ հայտնի ազգային գործիչը ծնվել է Գողթան գավառի Վերին Ազա գյուղում<sup>5</sup> 1881 թվականին: Հայրը մահացել է երիտասարդ տարիքում, ընտանիքի հոգար մնացել է մոր ու ավագ

կարգի վաճառական ... Պարսկաստան ու անդրկասպյան երկրներ, դեպի հյուսիս, ուսսական խոշոր կենտրոններ, և վերջապես դեպի արևմուտք, եվրոպական շուկաները ...

Ու միաժամանակ անդիմադրելի սիրով իրենց ծննդավայրին կապված... վաճառականները, հաճախ տարիների բացակայությունից հետո՝ միշտ հետ են եկել իրենց հայրենի աշխարհը՝ բարիքով բեռնավորված և իրենց հետ բերել են նոր, անծանոթ, լուսավոր աշխարհների առաջադիմության գաղտնիքն ու սերը: ... Կովկասյան Հայաստանի ոչ մի գավառակ, քաղաք կամ ավան կարող է մրցել Ազուլիսի հետ լուսավորության ու քաղաքակրթության ասպարեզում ... Նեղ ու քարքարոտ մի ձորակի երկու լանջերին բարձրանում են երկհարկանի, նույնիսկ եռահարկ տներ, եվրոպական ճաշակով ու շնորհքով կառուցված: Ամեն տուն իր պարտեզն ունի, իր ծաղկանոց-բուրաստանը ... Հեռուներից բերված քաղաքակրթական ճաշակը ազդեցություն տվել է մաքուր ապրուստի, լուսավորության, առաջադիմության բուռն պահանջ՝ առանց խաթարելու նրա պայկենական արդար նիստուկացր և առողջ խառնվածքը:

Գավառական ոչ մի կենտրոն այնքան բարեկարգ ու ապահով դպրոցներ է ունեցել, որպիսին ունեւր Վ. Ազուլիսը, թե տղաների և թե աղջիկների համար: Մարդ թե կին, գրեթե ամենքը գրագետ են: Չկա փոքրիչատե ունեւր ընտանիք, որի որդին միջնակարգ կամ բարձրագույն ուսում ստացած չլինի: Ռուսական և առհասարակ եվրոպական համալսարաններում ազուլեցի ուսանողների թիվը միշտ շատ մեծ է եղել:

Օտար այցելուներ իսկ զարմանքով են գտել մեր աշխարհի այդ հեռավոր անկյունում քաղաքակրթական այս սիրուն կղզին:

Ազգային կյանքում ևս այս անհանգիստ և իմացական ժողովուրդը իր կարևոր դերն է ունեցել: Մեր աշխարհի կենտրոնից հեռու, մահմեդական հոժ գանգվածներով շրջապատված, Ազուլիսը այնուամենայնիվ մի անդիմադրելի թափով մեր ազգային քաղաքակրթական ու ազատագրական ճիգերի մեջ առաջին շարքերում եղավ միշտ: Գողթանը ասես մեր հայրենի գետի, Արաքսի այլքներով զգաց միշտ Հայոց աշխարհի սրտի՝ Այրարատի թրթիռն ու հույզերը և նրա կյանքն ու փոթորիկներն ապրեց» (Ա. Ա հ ա Ր Ո Ն Յ ա ն. Խավարի մեջ, գիրք Բ, Երևան, 1991, էջ 364, 366–367):

<sup>5</sup> Ազա գյուղի մասին մանրամասն տե՛ս Դ ո կ տ . Յ ո վ Հ . Հ ա խ ն ա գ ա - ը ե ա ն . ն շ վ . ա շ խ ., էջ 305–313, Ա. Ա յ վ ա գ յ ա ն . Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, Հ. Գ, Գողթն գավառ, Երևան, 2007, էջ 66–67:

եղբոր վրա: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, որն ավարտելուց հետո՝ 1894-ին, քահանա եղբոր շնորհիվ ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, սովորել դպրոցական, ապա՝ լսարանական բաժիններում: «Իրեն աշակերտակից» (երկու դասարան ցածր) Սիմոն Վրացյանի վկայությամբ՝ նա «Ջանասեր, հանդարտ, կարգապահ, շատ կարգացող ու լավ պարապող աշակերտ էր ձեմարանում, Կոմիտասի սիրելիներից, ձայնեղ երգիչ ու հմուտ դասապետ»<sup>6</sup>: Ուսանող ժամանակ նշանակվել է ճեմարանի մատենադարանապետ (Ս. Վրացյանը եղել է նրա օգնականը): Դա նրան տվել է ինքնազարգացման մեծ հնարավորություն, քանի որ մատենադարան ուներ շուրջ քառասուն հազար գիրք և մամուլի հարուստ հավաքածու:

Հ. Տեր-Հակոբյանը, 1904 թ. ավարտելով ճեմարանը՝ կիսասարկավազի աստիճանով, նվիրվել է մանկավարժական գործունեության: 1905–1912 թթ. եղել է Ալեքսանդրապոլի ծխական դպրոցների ուսուցիչ, ապա՝ տնօրեն: Լինելով Երևանի Հ. Յ. Դաշնակցության Կենտրոնական կոմիտեի անդամ՝ հասարակական և կուսակցական լայն գործունեություն է ծավալել. Ալեքսանդրապոլում 1907–1911 թթ. կուսակից ընկերների հետ «վարում էր նաև շրջանի կուսակցական պաշտոնաթերթը՝ «Ժայռ» շաբաթաթերթը»<sup>7</sup>: 1912 թ. տեղափոխվել է Նախիջևան, ապա՝ Պարսկաստան. ուսուցիչ է եղել Վերին Ագուլիսում և Սալմաստ գավառի գյուղերում: Առաջին աշխարհամարտի տարիներին՝ 1914–1917 թթ., Հ. Տեր-Հակոբյանը Սալմաստում զբաղվել է նաև պատերազմի աղետյալների օգնության գործով, ապա տեղափոխվել է Ալեքսանդրապոլ: 1917 թ. սեպտեմբերին մասնակցել է Թիֆլիսում հրավիրված Արևելահայերի առաջին համագումարին (եղել է նիստերի քարտուղարը), Երևանի, Ալեքսանդրապոլի ու Անդրկովկասի գյուղացիական համագումարներին: Ընտրվել է Ալեքսանդրապոլի Ազգային խորհրդի նախագահ: 1918 թ. թուրքական հարձակման ժամանակ՝ Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո, Գարեգին Նժդեհի հետ նա գործունե մասնակցություն է ունեցել Ղարաքիլիսայի, ապա՝ Դիլիջանի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Իր լուծման է ներդրել Հայաստանի առաջին Հանրապետության կայացման գործում. ընտրվել է խորհրդարանի պատգամավոր, եղել է խորհրդարանի ավագ քարտուղարը, Հայաստանի կոոպերատիվների կենտրոնական միության (Հայկոոպ) վարչության նախագահը<sup>8</sup>: 1920 թ. աշնանը՝ հայ-թուրքական պատերազմի օրերին, կառավարության անդամների հետ Հ. Տեր-Հակոբյանը մեկնել է Ալեքսանդրապոլի ռազմաճակատ՝ ինքնապաշտպանության գործը կազմակերպելու: Թուրքերի կողմից քաղաքը գրավելուց հետո՝ մեր գործի հետ նահանջել է Ղարաքիլիսա: Այստեղից անցել է Համամու-Որդնանի շրջան՝ թիկունքը կազմակերպելու, ժողովրդի տրամադրությունը

<sup>6</sup> Յ. Իրագրելի. Մօտիկ անցեալից: Պատմական դէպքեր եւ ապրումներ: 1917–1922, Պէյրութ, 1956, էջ ա:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ դ:

<sup>8</sup> Հայկոոպի հետ կապված՝ տե՛ս «Հայաստանի կոոպերացիա» (Երևան), № 13, հուլիս 15, 1920, էջ 527, № 14, հուլիս 31, 1920, էջ 582–583, № 17, սեպտեմբեր 15, 1920, էջ 720–721:

բարձրացնելու, կովի դաշտ գինվորներ ուղարկելու համար: Դեպքերի ընթացքը օրհասական էր, և նա Դիլիջանի վրայով մեկնել է Երևան:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հ. Տեր-Հակոբյանը մնացել է Երևանում<sup>9</sup>: Գործուն մասնակցություն է ունեցել 1921 թ. փետրվարի 18-ի ապստամբությունը. Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ էր, պարենավորման գործերի բաժնի վարիչ: Ապստամբության պարտությունից հետո անցել է Զանգեզուր:

1921 թ. մայիսի 31-ին Լեռնահայաստանի ու Հայաստանի կառավարությունները միավորվելով կազմել են նոր կառավարություն՝ Հանրապետական Հայաստանի կառավարության անվամբ՝ Ս. Վրացյանի նախագահությամբ. դրա կազմի մեջ մտել է նաև Հ. Տեր-Հակոբյանը: Զանգեզուրի անկումից հետո այս կառավարությունը տարագրվել է Թավրիզ: Որպես տարագիր կառավարության ներկայացուցիչներին մեկը՝ նա այստեղ ազգային-հասարակական մեծածավալ աշխատանք է կատարել. կազմակերպել է տա-

<sup>9</sup> Այդ օրերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի գրասենյակի գործավար (1919 թ. նոյեմբերից) Էլլեն Բուզանդի «Հայուհիները Երևանի «Ձեկա»-ի բանտում» վերնագրով հուշագրությունում: Ըստ դրա, ինքը ձերբակալվում է և տեղափոխվում Երևանի նախ Ձեկայի, ապա Կենտրոնական բանտ, որտեղ մնում է մինչև 1921 թ. փետրվարյան ապստամբությունը: Բանտում ականատես է լինում հայ կանանց նկատմամբ բոլշևիկների դաժան վերաբերմունքին: Բերվում է մի ցնցող օրինակ, որը վերաբերում է Հ. Տեր-Հակոբյանի կնոջը. «Կեսգիշերն անց, մեր դռան առջև ահուկի մի ճիչ լսվեց, ծանր մի բանի անկման աղմուկ, տղամարդկանց հայհոյանք և ... «խաղ չենք ուզում, ոտքի»:

Վեր ցատկեցինք տեղերես: Կնոջ ձայն էր ճիչը:

Դուռը բացվեց. երկու տղամարդ ոտքերեն և ուսերեն բռնած, քաշկոտելով ներս բերին մեկը և կոպտորեն ձգեցին դռանը մոտիկ թախտի վրա: Մեկ ուրիշը ներս բերեց մի փաթեթ, դրեց կնոջ քովը: Առանց որևէ խոսքի՝ դուրս գնացին բերողները, դուռը շրխկացնելով:

Փաթեթը կենդանություն ուներ, նվում էր. կինը, ջղային պրկումի ենթարկված (հիստերիա), անգիտակից ճչում էր. — «Երեխա՛ս, երեխա՛ս, երեխա՛ս» ...

Բերվածը Խորհրդարանի անդամ, նախագահության առաջին քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանի տիկինն էր՝ Մանուշակը. հետը, փաթեթում հազիվ 3–4 օր առաջ ծնած մանկիկը» [«Հայրենիք» (Բոստոն), 1965, թիվ 8, օգոստոս, էջ 13–14]: «Որքան էլ ապրեմ՝ այդ գիշերը երբեք պիտի չմոռանամ: Համայնավար անմարդկային բարքերի մի փաստ էր, որ գուցե միայն մենք տեսանք. բանտ բերել նորածին մի մանկիկ, որպես պատանդ՝ չգտնվող հայրը մեջտեղ հանելու համար, — չարունակում է է. Բուզանդը:

Երեխան անոթի էր, տակը թաց էր, լալիս էր: Մայրը անկարող վիճակում էր ... Մեկ էլ, կարծես ամենա խոսք մեկ արած, սկսեցինք աղմկել, բուռնցքներով ծեծել դուռ ու պատուհան.

— Տուն տանել, տուն տանել այս հիվանդ մայրն ու երեխան. եթե անհրաժեշտ է՝ տնային հսկողության տակ պահել, բայց տուն տանել: Անտանելի է, անմարդկային:

... Մեր աղմուկը մի բանի ծառայեց: Վերջը լսեցինք, որ տարել էին տուն՝ ենթարկելով տնային բանտարկության» (նույն տեղում, թիվ 9, սեպտեմբեր, էջ 42–43):

րագիրների կեցությունը և ապահովել նրանց պահպանությունը՝ նպաստներով կամ օժանդակությամբ: 1921–1923 թթ. Թավրիզում եղել է Հայաստանի կառավարության վերջին ներկայացուցիչներից մեկը<sup>10</sup>:

1923 թվականից Հ. Տեր-Հակոբյանը դարձյալ նվիրվել է ուսուցչական գործին՝ որպես ուսուցիչ, տնօրեն պաշտոնավարել Նոր Զուղայի և Աբաղանի դպրոցներում: Առանձնապես նշանակալի է նրա գործունեությունը Նոր Զուղայում, որտեղ եղել է Ս. Ամենափրկչյան վանքին կից գործող Ազգային վարժարանի տեսուչ: Վանքի հարուստ մատենադարանում գիտահետազոտական բեղուն աշխատանք է կատարել:

1946–1950 թթ. ապրել է Իրաքում, ստանձնել Բաղդադի հայկական ազգային դպրոցների տեսուչի պաշտոնը: Այնուհետև վերադարձել է Թեհրան<sup>11</sup>:

Մանկավարժական և հասարակական-քաղաքական գործունեությանը զուգընթաց՝ Հ. Տեր-Հակոբյանը տարիներ շարունակ զբաղվել է գրական աշխատանքով, հավաքել է հարուստ նյութեր ու պատմաբանասիրական բազմաբնույթ հոդվածներով և ուսումնասիրություններով աշխատակցել Թիֆլիսի «Հորիզոնին», Երևանի «Զանգին», «Հառաջին» ու «Հայաստանի կոոպերացիային», Փարիզի «Վեմին», Բոստոնի «Հայրենիքին», Կահիրեի «Հուսարբերին», Թեհրանի «Ալիքին» և այլ պարբերականներին՝ սկզբնական շրջանում Իրագեկ, հետագայում՝ Հ. Իրագեկ ծածկանունով:

Ազգային-պետական և կրթական վաստակաշատ գործիչը հանկարծամահ է եղել 1953 թ. Թեհրանում: ««Մեր պարոն Հակոբը», ակնածանքով են հիշում իր աշակերտ-աշակերտուհիները: Շատ տպավորիչ էին իր բովանդակալից, խտացված և պարզ ոճով դասախոսությունները, – Հ. Տեր-Հակոբյանի ծննդյան 120-ամյակի առիթով գրել է Ա. Մամյանը: – Զոկերը (ազուլիսցիները) իրավունք ունեին պարծենալու իրենց այս մեծ մտավորականով՝ պարթևահասակ, անուշ ժպիտը դեմքին ու մինչև դիմացինի հոգու խորքը թափանցող խորագնդին արքերով: Իր գաղափարակիցների հետ նա էլ ճաշակեց տարագրի կյանքի բոլոր դառնությունները, անլուր զրկանքներ կրեց, տառապեց, բայց միշտ մնաց պատենչի վրա, միշտ հուսալից ու իր տեսլականով խանդավառ»<sup>12</sup>:

Հ. Տեր-Հակոբյանի ուսումնասիրությունները վերաբերում են Հայ ազատագրական շարժմանը, հայկական մշակույթին, տպագրությանը, մամուլին, հայկական գաղթավայրերի պատմությանը: 1956 թ. Բեյրութում լույս է տեսել Իրագեկի «Մոտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ: 1917–1922» վերնագրով գիրքը, 1986-ին Անթիլիասում՝ «Պատմություն հնդկահայ տպագրության» աշխատությունը: Նրա գործերից շատերն անտիպ են, ձեռագիր վիճակում, ինչպես՝ «Հայ ազատագրական շարժումը (1548–1828)<sup>13</sup>», «Հայկական տպագրության պատմության մեկ փառավոր

<sup>10</sup> Մանրամասն տե՛ս Յ. Իրագեկ. նշվ. աշխ., էջ 116–150:

<sup>11</sup> «Ասպարեզ» (Ֆրեզնո), 23. V. 2019:

<sup>12</sup> «Ալիք» (Թեհրան), 5. XI. 2001:

<sup>13</sup> Իրագեկի «Մոտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ: 1917–1922» գրքում (էջ 9) նշված է այս թվականը, իսկ նրա «Պատմություն հնդկահայ տպագրության» (Անթիլիաս, 1986, էջ ԻԳ) աշխատության մեջ և «Նշանավոր ձեռագրականներ»-ում (պր. Բ. Ս. Էջմիածին, 2009, էջ 433) գրված է 1882:



էջը», «Սայաթ Նովա, իր կյանքը և գրականությունը», «Շտեմարան Կալկաթայի (1821–1823)» աշխատությունները, որոնք պահվում են Բեյրութի Համազգայինի մատենադարանում:

Վերը նշվեց, որ Հ. Տեր-Հակոբյանը՝ Իրագեկ ծածկանունով, բազմաթիվ ու բազմաբնույթ հոդվածներով հանդես է եկել ժամանակի պարբերականներում: Դրանց շարքում առանձնակի տեղ են գրավում հայրենի գավառի՝ 1918–1920 թթ. պատմական անցքերին վերաբերող նյութերը: Այդ շարքից առանձնացրել և ստորև հրատարակում ենք «Գողթանի կարևորությունը մեր պետության համար» վերնագրով գիտաճանաչողական և արդիական հնչեղություն ունեցող հոդվածաշարը (տպագրվել է Երևանի «Հառաջ» թերթում 1920 թ. հունվարի 24, 28, 30-ին և փետրվարի 4-ին):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ԳՈՂԹԱՆԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

I

Ինչպես գիտեք, պատմական Գողթան գավառի կենտրոնական մասը, հարավից դեպի հյուսիս ձգված ամբողջ լայնությամբ, ուսական տիրապետության օրով, կազմում էր Նախիջևանի գավառի Օրդուբադի գավառակը կամ մասի պրիստավությունը: Նա այդ ժամանակ բաղկացած էր ընդամենը 5 գյուղական հասարակայնություններից. – Վերին-Ազալի, Բիլավի, Թևիի, Վանանդի և Վերին Ագուլիսի – որոնցից յուրաքանչյուրը տարածվում էր համանուն գետակի հովտում:

Գավառակի վարչական և դատական կենտրոնն էր Օրդուբադ քաղաքը, որը սակայն իր արվարձան Հանդամիջով միասին, կազմում էր մի առանձին վարչական միավոր և վերոհիշյալ գյուղական հասարակություններից և ոչ մեկի մեջ չէր մտնում: Նա իբրև քաղաք, ուներ իր կրճատված քաղաքային ինքնավարությունը և առանձին քաղաքացիական վարչությունը:

Բայց պատերազմի ընթացքում, մանավանդ այսպես կոչված տաճիկ–հայկական պատերազմի շրջանում, քաղաքական բազմաթիվ ու բազմապիսի պատահարների ենթարկվեց այդ դժբախտ գավառամասը և շատ յուրահատուկ վիճակ ունեցավ:

Տաճիկների ներխուժման օրերին նա, կտրվելով մեր երկրի մյուս մասերից. – գլխավորապես Երևանից – միանգամայն թողնվեց իր ճակատագրին և միառժամանակ կառավարվեց ինքնուրույն կերպով, ազգային խորհուրդների միջոցով – այն է՝ հայերը Գողթանի Ազգային խորհրդի, իսկ թաթարները՝ Օրդուբադի մուսուլմանական խորհրդի միջոցով:

Երբ տաճիկները անցան Զուլֆա – որ Գողթանի կենտրոնից ընդամենը 45 վերստ հեռավորություն ունի – տեղական թաթարների և մասնավորապես Օրդուբադի թաթարների դրդամբ ու հրավերով, նրանք այդտեղից շարժ-

վեցին դեպի Գողթան՝ այդ գավառակն ևս նվաճելու կամ ավելի ճիշտ՝ այդտեղի հայությանը ևս բնաջնջելու նպատակով:

Եվ Նախիջևան - Շարուրի այսօրվա հերոս ու ղեկավար Խալիլ բեյին վիճակվեց մեծաքանակ տաճկական զորքի ու անհամար թաթար խուժանի գլուխն անցած, թնդանոթներով ու գնդացիներով դիմել դեպի Գողթան՝ հող և ջուր պահանջելու:

Սակայն ավաճ, հենց առաջին փորձից նա համոզվեց, որ դա այնքան էլ հեշտուլթյամբ չպետք է հաջողվի իրեն: Ծանապարհի վրա գտնվող առաջին հայկական գյուղը Վերին Ազան էր: Գողթան դռների քաջ պահապանը, որ դեռ հայ-թաթարական ընդհարումների օրերին և այս պատերազմի ընթացքում բազմիցս փշրել էր իր վրա խոյացող թաթարական արյունատենչ ուժերը և հերոսուլթյան հուշակ ձեռք բերել ամբողջ շրջանում:

Խալիլ բեյը կամեցավ առաջին փորձն այստեղ անել: Նա դեսպանների միջոցով հպատակություն պահանջեց այդ գյուղից: Սակայն հերոս գյուղը մերժեց տաճիկ-աղբբեջանյան լուծը և մի գեղեցիկ անխոհեմությամբ ծառայեց զենքի ուժով պաշտպանելու իր ազատությունը:

Թշնամին շատ էր գորեղ իր թվով, լավ կազմակերպությամբ և ռազմական արվեստի կատարելությամբ: Ու հերոսական գյուղը, մեկուկես օրվա անհավասար կռվից հետո, ստիպված եղավ տեղահան լինելու – ահագին զոհեր ու ծանր կորուստներ տալով:

Խալիլ բեյի ու թաթար խուժանի առջև այնուհետև արդեն բաց էր Գողթանի ճանապարհը, որովհետև Զուլֆա-Ագուլիս-Օրդուբադ տանող ճանապարհի վրա գտնվող միակ հայկական գյուղը Վերին Ազան էր, այն էլ վերջվեց մեջտեղից:

Եվ Խալիլ բեյն անարգել Օրդուբադ հասավ և իր իշխանությունը հաստատեց այնտեղ:

Նրա առաջին գործն եղավ անմիջապես հպատակություն պահանջել Գողթանի հայ գյուղերից: Հասկանալի է, որ թաթարական գյուղերի մասին խոսք լինել չի կարող, քանի որ թաթարական գյուղերն էին, որ իրենց ներկայացուցիչների միջոցով և բազմաթիվ դիմումներով տաճիկ հրամանատարին Գողթան էին հրավիրել:

1918 թվի օգոստոսի սկզբներին հրապարակած մի հրաման կոչով Խալիլ բեյը Գողթանի հայ ազգաբնակչությանը հրավիրում է ընդունել իր իշխանությունը, խոստանալով կյանքի, գույքի և պատվի ապահովություն բոլոր հպատակվածներին, իսկ պատիժ և զենքի ուժով նվաճում բոլոր անհնազանդներին:

Երկու Ագուլիսները, Յղնան ու մերձակա մի քանի գյուղերը, որոնք գտնվում են հարավային և ավելի դաշտային Գողթանում և ընդհանրապես հայտնի են իրենց խաղաղասիրական տրամադրություններով և ոչ ռազմիկ խառնվածքով, ընդունեցին Խալիլ բեյի պահանջը և հպատակություն հայտնեցին հանձնին նրա՝ տաճիկ-աղբբեջանյան իշխանությունը: Հյուսիսային մասի լեռնային գյուղերը սակայն – Բիստ, Ալահի, Մարվանիս, Փառակա և Ռամիս, որոնք իրենց բնավորությամբ և խառնվածքով հարավային Գողթանի բնակչության հակապատկերն են ներկայացնում, կտրականապես հրա-

ժարվեցին ինչիլ բեյի առաջարկից, պատրաստ կյանքի գնով պաշտպանելու իրենց անկախությունը:

Այդպիսով Գողթանում ստեղծվեց երկու կարգի իշխանություն – հարավում՝ տաճիկ–ադրբեջանյան, իսկ հյուսիսում՝ անկախ խորհրդային (նկատի ունի տեղական ազգային խորհուրդը. – Ա. Ջ.): Եվ ինչիլ բեյը մինչև վերջն էլ չկարողացավ ընկճել լեռնային Գողթանի կորովը և ոտ դնել այդ հողամասում\*:

## II

Երբ տաճիկները քշվեցին մեր երկրից և Նախիջևանի գավառը միացավ մեր հանրապետությանը, առաջինը Գողթան գավառն եղավ – խոսքը իհարկե միայն հայություն մասին է – որ խանդավառությունը ընդունեց հայրենի երկրի հարազատ իշխանությունը և Հայաստանի Հանրապետության մեջ մտավ:

Բայց դժբախտաբար այդ էլ երկար չտևեց:

Նախիջևանի վերջին աղետից հետո, երբ մեր գործերն ու բովանդակ հայ ժողովուրդը, որ տաճիկ–ադրբեջանյան խարդավանքների հետևանքով, ստիպված եղավ չափազանց ծանր կորուստներով նորից թողնելու Նախիջևանն ու հեռանալու, ահա այդ ժամանակ տաճիկ–ադրբեջանյան հրոսակախմբերը նորից խոյացան Գողթանի վրա՝ արյան և ավերածություն միջոցով իրենց տիրապետությունն այնտեղ հաստատելու:

Արդյունքն եղավ այն, որ Գողթանի մի բոլոր հայությունը, դարձյալ ահագին տանջանքներ կրելուց հետո, նորից երկփեղկվեց: Նորից Ագուլխաներն ու Յղնան իրենց հպատակությունը հայտնեցին Ադրբեջանին, հաշտվելով ամեն տեսակ բռնությունների ու ճնշումների հետ, իսկ լեռնային գյուղերը կրկին գեներալ ձեռներն առանձին իրենց ազատությունը Ադրբեջանի ոտնձգություններից պաշտպանելու:

Բարեբախտաբար նրանք այս անգամ էլ հասան իրենց նպատակին: Ադրբեջանյան կառավարությունը, չնայած իր ահագին ուժերին և գործադրած խոշոր միջոցներին, այնուամենայնիվ չկարողացան կտրել նրանց հերոսական ոգին և իր իշխանության ենթարկել:

Եվ այս ամենի բնական հետևանքով, ներկայումս Գողթանում գոյություն ունի երկու կարգի քաղաքական վիճակ – Հարավային Գողթանը, այն է՝ Ագուլխաները և Յղնան – իսկ Տանակերտը, Քաղաքիկը, Դիսարը և Հանդամեջը ավերված են ու հայությունից զրկված – Ադրբեջանի հպատակ են և ենթակա ադրբեջանյան կառավարության ու թաթար խուժանի բոլոր բռնություններին: Հյուսիսային Գողթանը, այն է՝ Բիստ, Ալահի, Փառակա, Մարվանիս և Ռամիս գյուղերը, շարունակում են կապված մնալ Հայաստանի Հանրապետությանը և համարելով Գողթանը այդ հանրապետության

\* Հողվածաշարի այս մասից քաղվածաբար հատվածներ կան է. Ա. Զոհրաբյանի «Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ.» (Երևան, 2000, էջ 131–133) և Ա. Այվազյանի «Նախիջևանը 1905 թ. և 1918–1919 թթ. կրակե շղթայի գոյամարտերում» (էջ 204, 209) գրքերում:

անբաժան մասը, հանուն նրա և իրենց ազատության անհավասար կռիվ են մղում տաճիկ–ադրբեջանյան զորքերի ու թաթար հրոսակախմբերի դեմ:

Այս խիստ կարևոր երևույթի բացատրության համար անհրաժեշտ է պատասխանել երկու հարցի. – առաջին՝ որո՞նք են այն պատճառները, որ ստիպում են Գողթանի մի բուռն հայության՝ անհավասար կռիվ դրոշակը պարզել:

Երկրորդ՝ ինչո՞ւ է տաճիկ–ադրբեջանյան քաղաքականությունը այդպես համառորեն ձգտում փոքրիկ Գողթանը նվաճելու:

Նախ պատասխանենք այն հարցին, թե ինչու Գողթանը կռիվ ճանապարհ է բռնել և չի ուզում Ադրբեջանի իշխանությունը ճանաչել:

Մեր կարծիքով, դրա գլխավոր պատճառները սրանք են: Առաջին՝ որ – ինչպես արդեն ասացինք – Գողթանը իրեն համարում է անբաժան մասը Հայաստանի Հանրապետության և հետևապես կամովին կերպով մի այլ պետության, ինչպիսին է ներկա դեպքում Ադրբեջանը, միանալ նա չէ կարող: Դա կլիներ նրա կողմից մի անորակելի դավաճանություն, մի բարոյական մահ, իսկ նման քայլի համար մաքուր և չայլասերված գյուղացիությունը միանգամայն անընդունակ է:

Երկրորդ՝ որ նա վստահություն չունի դեպի Ադրբեջանի կառավարության պետական քաղաքականությունը և թաթար հարևանների – խոսքը բացառությունների մասին չէ – լայնասիրտ վերաբերմունքը:

Ադրբեջանի կառավարության գործադրած բռնությունները հայ տարրի վերաբերմամբ Բաքվում, Գանձակում, Ղարաբաղում, Նախիջևանում, Շարուրում, իր հարևան գյուղերում կատարած նրա անթիվ ու անհամար սպանությունները, ավերումները և այլն անշուշտ չէին կարող Գողթանի ժողովրդին չհամոզել, որ Ադրբեջանի կառավարությունը հայերի վերաբերմամբ, նույնիսկ կամովին հպատակություն ցուցած հայերի վերաբերմամբ, ոչ թե պետական առողջ քաղաքականություն է վարում, այլ «քեասարախի» քաղաքականություն:

Մյուս կողմից, նա այս պատերազմի 4–5 տարիների ընթացքում շատ լավ էր ըմբռնել իր հարևանների տմարդի վերաբերմունքը դեպի իրեն. քանիքանի անգամ նրանք հարձակումներ են գործել նրա վրա՝ ոչնչացնելու և կոտորելու տենչով կուրացած: Մի խոսքով, Գողթանի հայությունը բազմաթիվ դառն փորձերից հետո, կազմել էր այն անխախտ համոզումը իր հարևանների մասին, որ եթե նրանք կարողանան կամ ինչպես ժողովուրդն է ասում՝ եթե նրանց աստամը թաղվի, անխնա պիտի բնաջնջեն իրեն:

Հետևապես ինչու համար հպատակություն հայտնելով Ադրբեջանին, կամովին կերպով պարանոցը դահճի կացնին դեմ անել:

Երրորդ պատճառը՝ Գողթանի հայությունը այն խորը համոզումն ունի, որ իր նման գործելակերպով հայ ցեղի ընդհանուր ազատագրության գործին է ծառայում Հայաստանի պետականության հիմունքների ամրապնդման է օժանդակում, – մի հանգամանք, որ նրա կարծիքով իր քաղաքացիական և ազգային պարտականություններից գերազույնն է հանդիսանում:

## III

Սակայն այս երևույթը ավելի լավ ըմբռնելու համար պիտի հասկանալ, թե ինչ աշխարհագրական դիրք և ինչպիսի բնական տեղադրություն ունի Գողթանը: Սրանից է բխում այն խոշոր կարևորությունը, որպիսին ներկայացնում է Գողթան գավառը Հայաստանի Հանրապետության համար և որը Ադրբեյջանի կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով աշխատում է չեզոքացնել:

Պետք է անշուշտ իմանաք, որ ամբողջ Գողթան գավառը և մասնավորապես նրա այն մասը, որ ուսուսաց տիրապետության ժամանակ կազմում էր Օրդուբադի գավառամասը, մի փոքրիկ լեռնաշխարհ է և գտնվում է նախկին Երևանի նահանգի հարավարևելյան ծայրում, արևելյան կողմից սահմանակից լինելով Ջանգեզուրի գավառին, իսկ հարավային կողմից՝ Պարսկաստանին, Ղարադաղի խանությունը:

Երկիրն ունի մոտավորապես հավասարաարունք եռանկյուն ձև, որի լայն մասը հենվում է Արաքսի անձուկ հունի վրա և համեմատաբար ցածրադիր է: Եռանկյունու գագաթն է կազմում Դամուրլու դաղը, իսկ կողմերը՝ արևմուտքից՝ Դառի դաղի\* կոչված լեռնաշղթան, որով Գողթանի կենտրոնական մասը բաժանվում է Երնջակի գավառամասից, արևելքից՝ բարձրաբերձ Ալանգյազը, որով Գողթանը բաժանվում է Ջանգեզուրից:

Այսպիսով Գողթանը մի կողմից՝ հենվում է Կոնգուրա-Ալանգյազ լեռնաշղթային, որ անցնում է Գողթանի ու Ջանգեզուրի սահմանով, հյուսիս-արևմուտքից դեպի հարավարևելք, և կազմում է Ջանգեզուրի թիկունքը: Մյուս կողմից՝ հենվում է Դառի դաղի կոչված լեռնաշղթային և այդպիսով կազմում է նախիջևանի գավառի լեռնային մասի, գերազանցորեն հայաբնակ մասի, թիկունքը:

Շնորհիվ իր այս չափազանց նպաստավոր դիրքի, Գողթան գավառը, մասնավորապես նրա լեռնային մասը, մեր պատմության բոլոր աղետավոր շրջաններում, միշտ էլ խաղացել է շատ կարևոր դեր: Հիշեցեք հայ-թաթարական ընդհարումների շրջանը, եթե չլինեք Գողթանի այդ փոքրիկ, բայց իր դիրքով գերազանցորեն գորեղ հողամասը, թերևս ամբողջ Գողթանի հայությունը գոհ գնար թաթար հորդանների կատաղությունը: Դեռ ավելի, Գողթանի այդ անառիկ հողաշերտը, պատմական աղետավոր շրջաններում, իբրև աննկուն բերդ ցցված մնալով, միշտ էլ իր վրա է քաշել թշնամու ուժերի մի գորեղ մասը և այդպիսով թեթևացրել մեր երկրի մյուս հայկական մասերի պայքարն ընդդեմ թշնամիների:

Հիշենք նաև Գողթանի լեռնային մասի հիասքանչ գործելակերպը տաճկական ներխուժման հետևանքով մեր երկրում ստեղծված վերավայրումի օրերին: Հենված Ջանգեզուրի ուժեղ թիկունքին, լեռնային Գողթանը մինչև վերջը շարունակեց իր հերոսական պայքարը ընդդեմ տաճիկ-ադրբեյջանական ու թաթարական հրոսակախմբերի, հանդիսանալով այդպիսով մի

\* Դամուրլու դաղը Դամիր լեռն է (Երկաթասալ լեռ), իսկ Դառի դաղը՝ Դարու լեռը (Լալանսիստ լեռ). տե՛ս Ա. Ա. յ վ ա գ յ ա ն. Նախիջևան. բնաշխարհիկ պատկերագրող հանրագիտակ, Երևան, 2017, էջ 33-34:

կողմից որպես հզոր պատենչ Ջանգեղուրի համար, իսկ մյուս կողմից՝ կասեցնելով Օրդուբադի ու Նախիջևանի թրքության շարժումը դեպի Շարուր և Բոյուքվեդի:

Այսպես ուրեմն մեր պատմության ամբողջ ընթացքում Գողթանը, շնորհիվ նպաստավոր և անառիկ տեղադրության, մի կողմից՝ հանդիսացել է իբրև մի գորեղ պատվար մեր երկրի զանազան մասերի համար, իսկ մյուս կողմից՝ նա մինչև այսօր կարողացել է իր գոյությունը պահպանել ամեն կողմից շրջապատված թաթարական ծովի մեջ:

Եվ որ ամենից նշանակալիցն է, Գողթանը միշտ էլ գիտակցել է իր այս կարևոր առաքելությունը և իր պարտքի կատարմանը զգաստ, ամեն անգամ ըմբոստացել է այն բոլոր ուժերի դեմ, որոնք եկել են այսպես կամ այնպես հարվածելու մեր ժողովրդի և մեր երկրի բախտավորությունը: Նա գիտակցել է իրեն վիճակված դժվարին պարտականությունը և ամեն անգամ, հավատարիմ նրա կատարմանը խիզախորեն ոտքի է կանգնել իր փոքրիկ կրծքով պաշտպանելու մեր մայր հայրենիքի գոյությունը բոլոր ներքին ու արտաքին փոթորիկներից:

Այդ վսեմ գիտակցության արդյունքն էր, իհարկե, որ տաճիկ-թաթարական հորդաները նույնպես, չնայած գործադրված բոլոր ջանքերին, չկարողացան իրենց ավերիչ ոտքը դնել Գողթանի լեռնային մասում: Դրանով պիտի բացատրել նաև այն, որ վերջերում տաճիկ-աղբբեջանյան բոլոր դավերն ու որոգայթները չգտավ հնարավոր հաջողությունը ոչ Երևանյան նահանգում ընդհանրապես, ոչ էլ Ջանգեղուրում մասնավորապես:

Այս ամենից հետո, կարծում ենք, պարզ է նաև այն հարցի պատասխանը, որ մենք դրինք վերևում – թե ինչու է տաճիկ-աղբբեջանյան քաղաքականությունը այդպես համառորեն ձգտում փոքրիկ Գողթանը նվաճելու և մեջտեղից վերացնելու մտքին:

Այստեղ դեր խաղալ չի կարող տնտեսական շարժառիթը, որ առհասարակ բոլոր նվաճողական քաղաքականությունների հիմքն է կազմում: Չի կարող, որովհետև Գողթանը, մանավանդ նրա հյուսիսային լեռնոտ մասը այնքան փոքրիկ երկիր է – ընդամենը մի քանի հարյուր քառ. վերստ – և աղքատ իր բնական հարստություններով, որ նրա միացումը Աղբբեջանին չէր կարող մի առանձին կարևորություն ունենալ այդ տեսակետից: Գողթանի այդ մասում, շատ տեղերում, մինչև իսկ ցորեն չի աճում, ցանում են գլխավորապես գարի, բակլա և նման հացաբույսեր: Հետևապես, հասկանալի է, որ այդպիսի ողորմելի մի երկիր չի կարող տնտեսական առանձին նշանակություն ունենալ ոչ իբրև սպառող շուկա, ոչ էլ իբրև արդյունաբերական մի շրջան:

Բայց դրա հետ միասին Գողթանն ունի ահագին ռազմագիտական նշանակություն մասնավորապես Աղբբեջանի համար: Դուք գիտեք, որ Աղբբեջանի այսօրվա պետական վարիչները երազում են ստեղծել Բաքվից մինչև Երևան մի ընդարձակածավալ և միապաղաղ աղբբեջանյան պետություն – Ղարաբաղի, Ջանգեղուրի և Նախիջևանի վրայով:

Ահա քաղաքական այս հեռանկարի իրականացման տեսակետից Գողթանի նվաճումը գերազանցորեն կարևոր նշանակություն է ստանում Աղբբեջանի համար: Այդ ցնորքը, իբրև մի մղձավանջ, նրան շատ էր անհանգստացնում:

տացնում նամանավանդ այն ժամանակ, երբ նա դեռևս չէր փորձել իր բախտը Ջանգեղուրում և տակավին օրորվում էր այն հույսով, թե Շուշու օրինակով նա կարող է հեշտությամբ զբավել նաև Ջանգեղուրը և այդտեղից մի քայլով Նախիջևան անցնել: Դժբախտաբար Ջանգեղուրում նրա քիթը քարի հանդիպեց և կարծում ենք այժմ մի փոքր արդեն զգաստացած պիտի լինի նա իր նվաճողական երազների վերաբերմամբ:

Համենայնդեպս կրկնում ենք, որ Գողթանի նվաճումը առաջնակարգ նշանակություն ունի և պիտի ունենա Ադրբեջանի համար մինչև այն ժամանակ, երբ նա կչարունակի փայտայել Ղարաբաղը, Ջանգեղուրը, Նախիջևանը, Շարուրը և Երևանի գավառի դաշտային մասը Ադրբեջանին միացնելու ծրագիրը:

## IV

Անցյալ հոդվածներում շեշտված կարևորությունը բխում է հետևյալ հանգամանքներից. –

Առաջին՝ Գողթանը միակ հարմարագույն ճանապարհն է, որ միացնում է Ջանգեղուրը Նախիջևանի հետ: Եթե չնվաճվի Գողթանը, չի կարող միանալ Նախիջևանի հետ և ուրեմն չի կարող իրականանալ Ադրբեջանի երազը՝ Բաքվից մինչև Երևան ադրբեջանյան մի պետություն կազմելու մասին:

Պետք է իմանալ, որ ամբողջ Ղարաբաղը – այսինքն՝ պատմական Սյունիքը, Արցախը, Ձազեձորը և Արևիքը – բաժանվում են Երևանյան նահանգից Գարվո բարձրաբերձ լեռնաշղթայով, որի միջին բարձրությունը 9–10 հազար ոտնաչափից պակաս չէ: Այդ լեռնաշղթայի մեջ մինչև անգամ կան մի շարք գագաթներ, որոնց բարձրությունը 10 հազար ոտնաչափից ավելի է և շատ անգամ սրանցից մի քանիսի ձյունը ամառները չի վերանում:

Այստեղից արդեն պարզ պիտի լինի, որ Ղարաբաղից դեպի Երևան անցնելու համար իզուր է այդ լեռնաշղթայի մեջ հարմարավոր ճանապարհներ որոնելը: Ճիշտ է, կան մի քանի ճանապարհանման բաներ, բայց դրանք ճանապարհներ չեն, այլ կածաններ, որտեղով ամենաբարեհաջող դեպքում մինչև անգամ կենդանիներն անցնել չեն կարողանում: Նրանք բաց մնում են միայն ամռանը, իսկ ձմեռը բոլորովին փակվում են: Ամառն էլ երթևեկելի են միայն մարդկանց համար, այն էլ մագլցելով և սողալով:

Ղարաբաղից դեպի Նոր-Բայազետ և Դարալագյազից տանող ճանապարհների – կամ ավելի ճիշտ կածանների մասին խոսք լինել չի կարող, որովհետև այդ կածանները նախ՝ չափազանց նեղ են և դժվարագնաց, երկրորդ՝ որ այդ կածաններն անցնում են հոժ հայաբնակ շրջաններով և մտնում են նույնպես հոժ հայաբնակ շրջաններ: Ուրիշ խոսքով՝ այդ ճանապարհների վրա Ադրբեջանը որևէ հույս ունենալ չէ կարող:

Մնում են ուրեմն այն ճանապարհները, որոնք Ղարաբաղից անցնում են դեպի Նախիջևանի գավառը: Ղարաբաղից դեպի Նախիջևան անցնում է երկու ճանապարհ, որ հարմար են երթևեկության համար: Առաջինը գնում է գլխավորապես գավառի լեռնային մասով, որ գերազանցորեն հայաբնակ է, այն է՝ Նախիջևան, Խալխալ, Կարաբաբա, Կարմայլինովկա գծով և Բիշա-

նաղի լեռնանցքով Զանգեզուր մտնում: Երկրորդը անցնում է Գողթանից Արաքսի հովտով և Օրդուբադ—Մեղրի գծով Զանգեզուր մտնելով:

Այս ճանապարհներից առաջինը ավելի լավ է և հարմարավոր: Թեև Ադրբեջանի նպատակների տեսակետից նա միանգամայն աննպատակահարմար է, որովհետև նախ՝ Զանգեզուրում նա անցնում է հայկական շրջաններով, երկրորդ՝ նախիջևանում – նույնպես, և երրորդ՝ Դարալագյազի սահմանի մոտով անցնելով, բնական է, որ նա Ադրբեջանի համար էլ էր կարող ապահով համարվել:

Օրդուբադ—Մեղրի ճանապարհը այնքան էլ գովելի չէ, բայց Ադրբեջանի նպատակների տեսակետից ունի մի շարք առավելություններ: Ամենից առաջ՝ նա Զանգեզուրում անցնում է համեմատաբար թաթարաբնակ շրջաններով: Երկրորդ՝ անցնելով Արաքսի ափով, Պարսկաստանի կողմից միանգամայն ապահով կարող է նկատվել Ադրբեջանի համար: Երրորդ՝ այդ ճանապարհի ամենակարևոր կետում գտնվում է, կարելի է ասել, — գուտ թաթարաբնակ Օրդուբադ քաղաքը, որ հանդիսանում է ադրբեջանական գաղափարների և ընդհանրապես պանթուրքիզմի ու պանիսլամիզմի ամենանշանավոր օջախներից մեկը ամբողջ Անդրկովկասում: Եվ վերջապես չորրորդ՝ այդ ճանապարհի ապահովությունը Ադրբեջանի համար կարող է վտանգել միայն Գողթանի մի բուռն, ընդամենը մի քանի հազար հայությունը, իսկ սրա հետ հեշտ է հաշիվ տեսնել:

Ահա թե ինչու Ադրբեջանի կառավարությունը Գողթանի նվաճումը դարձրել է իր քաղաքականության առանցքը և գնդապետ Հասկելին\* այնպես անվերապահ կերպով հայտարարում էր, թե ինքը Գողթանից ո՛չ մի դեպքում հրաժարվել չի կարող:

Ահա թե ինչու Ադրբեջանի կառավարությունը իր գործակալների միջոցով տաճիկ—հայկական պատերազմի ընթացքում ընդհանրապես և Ղարաբաղի խնդիրը հրապարակ բերելուց հետո մասնավորապես, այնքան դավեր է լարում Գողթանում, կամենալով որևէ ձևով ընկճել և բնաջնջել այդտեղի մի բուռն հայությունը:

Ահա թե ինչու Զանգեզուրի կռիվներում սպանված ադրբեջանյան զինվորականներից մեկի մոտ գտնված քարտեզի վրա խաչ է քաշված եղել Գողթանի վրա: Ադրբեջանը, արբեցած իր ուժերով, ծրագրել է մի հարվածով նախ ջախջախել Զանգեզուրը և ապա անցնելով դեպի Գողթան, ոչնչացնել այդ երկիրը և այդպիսով ապահովելով Մեղրի — Օրդուբադ ճանապարհը, միաց-

\* Վիլյամ Նեֆյու Հասկել (1878–1952) – ԱՄՆ բանակի գնդապետ, Փարիզի վեհաժողովի «Հինգի խորհրդի» կողմից 1919 թ. հուլիսի 5-ին նշանակվել էր Հայաստանի գերագույն կոմիսար: Հայաստանում նրա գործունեության մասին տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին: Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 188–189, Գ. Махмуриян. Организационная, гуманитарная и политическая деятельность Верховного комиссара Союзников В. Гаскеля в Армении в 1919 г. – Вопросы истории Армении. Сборник научных статей, № 18. Ереван, 2017, с. 49–75; Ն ու յ ն ի՝ Армения в политике США 1917–1923 гг. Ереван, 2018, с. 162, 174–179, 191–207, 213–215, 218, 283–294, 298, 302, 309–313, 316, 322, 325, 437 և այլ էջեր:



նել Զանգեզուրը (և Զանգեզուրի միջոցով նաև ամբողջ Ղարաբաղը) Նախիջևանի հետ և Նախիջևանից էլ անցնել Շարուր, Սուրմալու, մինչև Երևան:

Բայց նրա ոտքը քարի դիպավ և նրա բոլոր երազները Զանգեզուրի և Գողթանի ժայռերին գարնվելով փշուր-փշուր եղան ու խորտակվեցին:

Այս համառոտ տեսությունից հետո պարզ պիտի լինի, թե ինչ կարևոր նշանակություն ունի Գողթան գավառը մեր ժողովրդի ու մեր պետության համար, մասնավորապես Զանգեզուրի ու Ղարաբաղի համար, որովհետև նա մի խոշոր սպառնալիք է Գարվո լեռների և՛ այս կողմում, և՛ այն կողմում այն բոլոր տարրերի համար, որոնք կհանդգնեն դավեր նյութել հայ ժողովրդի և հայ պետականության դեմ:

Դժբախտաբար այս ճշմարտությունը մեզնից շատերը չեն ըմբռնում:

Գողթանի այդ մի բուռն հայությունը մինչև այժմ ամենաձանձուր պայմաններում հերոսական կռիվ է մղել միայն իր սեփական ուժերով, առանց դրսից հարկավոր օգնություն ստանալու:

Այո՛, մեր ունեցած տեղեկություններով, նա շատ դժվարին կացության մեջ է ներկայումս, սակայն և այնպես դարձյալ ունի այնքան ուժ և կորով, որ կարող է արտաքին բոլոր խարդավանքների դեմ հաջողությամբ պայքարել:

Բայց մեր ամենքի պարտքն է, առանձնապես մեր կառավարության\* , այդ

\* Նկատենք, որ Գողթան գավառի իշխանությունները քանիցս դիմել են Հայաստանի խորհրդարանի և կառավարությանը օգնության խնդրանքով: Ստորև ներկայացնում ենք այդ դիմումներից մեկը, որ 1919 թ. օգոստոսի 3-ին Վ. Ազուլիսից Գողթան գավառի կոմիսար Աշոտ Մ. Մուսինյանի և ընդհանուր հրամանատար Մ. Գյուլնազարյանի կողմից հասցեագրվել են Հայաստանի պառլամենտին, Հայաստանի կառավարության, Գորիսի, Ղափանի, Գենվազի պետական ներկայացուցիչներին, ազգային խորհուրդներին և ի լուր համայն հայությանը. «Նախիջևանը ընկավ, շրջանի հայության բավական խոշոր մասը սրի է քաշված: Արաքսի մեջ նկատված են մեծ թվով դիակներ: Նախիջևանի մեր զորքերը, ըստ թուրքական լուրերի, կոտորածներից ազատված հայության մնացորդների հետ նահանջել են դեպի Դարալագյազ: Նույն աղբյուրներից իմանում ենք, որ Նիհրամում 1000-ից ավելի հայ գերյալներ կան: Զուլֆայում ու Զուղայում խոշոր դեպքեր տեղի չեն ունեցել – ժողովրդի մեծագույն մասը և մեր փոքրաթիվ զորքը անցել են Պարսկաստան: Ազա և Դեր գյուղերը անվնաս գաղթեցին Յղնա: Երնջակի ձորում, ակա-նատեսների պատմելով, տեղի են ունեցել սոսկալի կոտորածներ: Ղազանչիից ազատվել և Գողթան են ապավինել մոտ 500 հոգի: Մի օր տևող կռիվներից հետո Գյաղը, Փորաղաչտը և Շուռուլթը շատ քիչ զոհեր տալով քաշվել են Գողթան:

Հուլիսի 25-ից Գողթանում ուժեղ կռիվներ են տեղի ունեցել: Վերին գյուղերում (Փառակա-Բիստ) հաջողությունները առայժմ մերոնց կողմն են: Տանակերտը 8 օր է պաշարման վիճակի մեջ է. այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիվներ: Պաշարված կարելի է համարել Վերին և Ներքին Ագուլիսները:

Թուրքերը խոշոր պատրաստություններ են տեսնում մաքրելու Գողթանը հայությունից: Ժողովուրդը անսկարագրելի նեղության մեջ է հացի կողմից: Արտաքին աշխարհից կտրված ենք բառի ամենալայն իմաստով: Մի քանի անգամ սուրհանդակներ ենք ուղարկել Գենվազ օգնության և լուր ստանալու համար, բայց մինչև օրս չեն վերադարձել:

**ծանր կռվում Գողթանը միայնակ չլիցքներ, այլ հնարավոր բոլոր միջոցներով օժանդակ ու նեցուկ հանդիսանալ նրան:**

Գողթանը լքված իր հարազատներից և կտրված արտաքին աշխարհից՝ իր անելիքների մասին ճիշտ հաշիվ տալ իրեն չի կարող: Ապավինել թուրքերի ողորմածությունը՝ ներկա հանգամանքներում անհնարին է:

Ի սեր Աստուծո, ցույց տվեք մեզ փրկության ճանապարհ: Սեփական միջոցներով ամենաշատը 10, 15 օր ևս հազիվ կարողանանք պահպանել ներկա դրությունը:

Սարսափելի չէ մահը ... երկրորդ տարին է, որ մենք արդեն հաշտվել ենք այդ մտքի հետ:

Գողթանը կմեռնի հերոսի մահով, սակայն թող ամբողջ աշխարհը իմանա, որ այս անգամ մեզ մահվան դուռ հասցնողը Երևանի մեր կառավարությունն է:

Փրկված է Գողթանը, եթե մոտ օրերում գոնե 400 սրտացավ գինվոր մեզ օգնության հասնի» [«Նոր Աշխատավոր» (Թիֆլիս), 26. VIII. 1919: Ռուսերեն թարգմանությունը տե՛ս «Слово» (Тифлис), 02. IX. 1919; «Наше Время» (Баку), 04. IX. 1919. Հմմտ. Մ. Ա. Ավետիսյան. Նախիջևանի պատմության վավերագրեր (1889–1920 թթ.). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, № 3, էջ 193, է. Ա. Ջոհրաբյան. Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ.– 1920 թ. ապրիլ), Երևան, 2002, էջ 158, Ա. Այվազյան. Նախիջևանը 1905 թ. և 1918–1919 թթ. կրակե շղթայի գոյամարտերում, էջ 277–278]:

ՀՏԴ 281.6 + 891.981.09

Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները (խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրության գանձարաններում), աշխատ.՝ Վարդան Գևորգի Դևրիկյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 2020, 471 էջ\*:

Բանալի բառեր՝ գանձ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Վ. Դևրիկյան, ձեռագիր, անտիպ, պատմական հայրենասիրական, Գր. Խլաթեցի, ծխական:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել «Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները» ժողովածուն,



որում գետեղված են խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրությունում ստեղծված «Գանձարան» ժողովածուների անտիպ նյութերը: Գրքի կազմողը, գանձերի, տաղերի, հորդորակների, մեղեդիների, փոխերի գիտական բնագրերը պատրաստողը հայ միջնադարյան հոգևոր գրականության լավագույն գիտակ և բեղուն հետազոտող Վարդան Դևրիկյանն է: Գիրքն ունի արժեքավոր առաջաբան, ծանոթագրություններ, գիտականորեն կազմած անվանացանկ, հոգևոր երգերի սկզբնատողերի, օգտագործված ձեռագրերի ցանկ: Ձեռագրերը գրված են XIV–XVII դդ. ժամանակահատվածում և գրված են աշխարհագրական առումով տարբեր վայրերում՝ Վան, Հիզան, Խլաթ, Լիմ անապատ, Կաֆա (Ղրիմ) և այլ բնակավայրեր:

Հայկական ձեռագիր մատյանները դեռևս շատ գանձեր ունեն իրենց մեջ. դրանց պատմական, ճանաչողական, գրական, քաղաքական, աստվածաբանական արժեքն անուրանալի է: Եվ այդ ամենի համար պարտական ենք հայոց եկեղեցուն, որը լուսավորության գործում փոխարինել է հայոց պետականությանն ու հիմք դարձել Հայոց պետականության վերականգնմանը: Տեղին է հիշել նշանավոր բյուզանդագետ ու հայագետ Ն. Ադոնցի հետևյալ միտքը. «Ազգային եկեղեցի ունենալ նշանակում էր ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ բնորոշում է ամեն ազգի հոգեկան կյանքը»<sup>1</sup>:

Գրիգոր Խլաթեցու կազմած «Գանձարան» ժողովածուների անտիպ նյութերը Վ. Դևրիկյանը հրատարակել է հետևյալ բովանդակային ու իմաստային բաժանումով՝ Հին Կտակարան, Նոր Կտակարան, Ընդհանուր քրիստոնեական, Հայկական կանոններ:

Հին Կտակարանի բաժնում մտնող կանոնների մեջ զանազան միավորները ներկայացնում են ընդհանուր քրիստոնեական եկեղեցու նախահայ

\* Ներկայացվել է 30. VII. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. IX. 2021 թ.:  
<sup>1</sup> Ն. Ադոնց. Երկեր, Բ, Երևան, 2006, էջ 45:

րերին ու մարգարեներին: Նոր Կտակարանի նյութերի մեջ Մարիամ Աստվածածնի վերափոխմանը, ԲեթՏեղեմում մանուկների կոտորածին, Բարդուղեմեոս և Թուամա առաքյալին, Ստեփանոս Նախավկային, Ղազարոսի հարուժյանը և Հիսուսի կյանքի շուրջը պտտվող նյութերն են: Ընդհանուր քրիստոնեականում տեղ են գտել այն սրբացված անձիք, որոնք պաշտելի են բոլոր կանոնիկ քրիստոնեական եկեղեցիներում, ինչպես Գրիգոր Աստվածաբանը, Հովհան Ոսկեբերանը, Կոստանդինոս թագավորը, Եպիփան Կիպրացին և ուրիշներ:

Հայկական կանոնները սերտորեն կապված են հայ ժողովրդի պատմության հետ: Բնական է, որ դրանում տեսնում ենք առաջին դարում քրիստոնեությունը ընդունած Եդեսիայի հայ արքա Աբգարին, առաջինն աշխարհում Մեծ Հայքում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Տրդատ Մեծ թագավորին: Ֆ. Բրոկհաուզ և Ի. Էֆրոնի հանրագիտարանում Տրդատ Մեծի մասին կարդում ենք. «Տրդատ III Մեծ (286–342) խիզախորեն կռվել է Սասանյանների դեմ: 302-ին ընդունել է քրիստոնեությունը, հեթանոսական տաճարները փոխարինել է քրիստոնեական եկեղեցիներով ու վանքերով: Քրիստոնեությունը հռչակել է պետական կրոն: Նրա գահակալությունը եղել է Հայաստանի պատմության ամենաերջանիկ ժամանակահատվածը»<sup>2</sup>:

Գր. Խլաթեցու կազմած «Գանձարանի» նյութերի հրատարակումը յուրօրինակ ձևով անմահացնում է XIV դ. երկրորդ կեսի և XV դ. առաջին քառորդի (1349–1425) հայ միջնադարյան եկեղեցու, գրականության, արվեստի, մանկավարժության մեջ մեծ դեր կատարած Գր. Խլաթեցու անունը: Նա նշանավոր աստվածաբան-փիլիսոփա Հովհան Որոտնեցու աշակերտներից էր, մեծանուն Գրիգոր Տաթևացու դասընկերը: Հայոց եկեղեցուն, հայերի լուսավորության գործին մեծ նվիրում ունեցող անհատականություն, որը նաև երաժիշտ ու մանրանկարիչ էր: Նա հայ եկեղեցու նոր վկաններից էր: Գր. Խլաթեցու եղբերական մահվան մասին Ողբ է գրել նրա արժանավոր աշակերտ Առաքել Բաղիչեցին: Այն կոչվում է «Եղբրգովթիւն ի մահ նահատակութեան Մերենց Գրիգոր վարդապետի Խլաթեցոյ»: Եղբրգովթյան ծավալուն բովանդակության մեջ ներբողական տաղերով ներկայացվում է Գր. Խլաթեցու համահայկական արժեք ունեցող գործունեությունը, նրա գանձերի ու տաղերի ընտիր լինելը, Մեծ Հայքում ունեցած հեղինակությունը, լուսավորչական գործունեությունը: Նկարագրվում են նաև նրա նահատակության հանգամանքները:

Եկեալ հասին վաղվաղակի  
Ազգն Մարաց, որ զքուրդ կոչի.  
Սպանին զհայրն ցանկալի,  
Ի Յիպնավանքն երևելի<sup>3</sup>:

<sup>2</sup> Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. Иллюстрированный энциклопедический словарь. М., 2012, с. 691.

<sup>3</sup> Առաքել Բաղիչեցի. Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Արշալույս Ղազինյանի, Երևան, 1971, էջ 208:

Վ. Դերիկյանը բացատրում է այն սերտ կապերը, որոնք կան «Յասմա-լուրք» ժողովածուների ու գանձերի միջև:

Ժողովածուի առաջաբանում անդրադարձ կա գանձի, տաղի, փոխի, մեղեղու, հորդորակի սահմանումներին, որոնք կատարվել են տարբեր հետազոտողների կողմից: Ժողովածուի հեղինակը դրանց հիման վրա ներկայացնում է իր հստակ սահմանումները: Գր. Խլաթեցին, ի տարբերություն Ներսես Շնորհալու, որը կատարելության հասցրեց հայ եկեղեցու ծխակարգը՝ հատկապես շարականները, գրել է գանձեր: Գանձերն առավել պատմողական բնույթի ստեղծագործություններ էին և հաճախ ունեին պատմական հիմք:

Թեպետ գանձերի առաջին հեղինակ ընդունված է համարել Գրիգոր Նարեկացուն, սակայն, ինչպես վկայակոչում է Վ. Դերիկյանը, Ասատուր Մնացականյանը Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի մեջ գտել է VIII դ. նշանավոր մատենագիր, թարգմանիչ, մանկավարժ Ստեփանոս Սյունեցու երկու տաղ, որոնք համապատասխանում են գանձարանային կանոնին: Երբ կարդում ենք Գր. Խլաթեցու «Գանձարան» ժողովածու մտած հայ իրականության հետ կապվող գանձերը, համոզվում ենք, որ հայ եկեղեցու գործիչները եկեղեցու ձեռք օգտագործել են ոչ միայն հավատացյալի մեջ քրիստոնեական եկեղեցու տասը պատվիրաններն ամրապնդելու, այլև հայրենասիրություն դաստիարակելու սրբազան գործին ծառայելու համար:

Բելգիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Նևը իր «Քրիստոնյա Հայաստանն ու նրա գրականությունը» աշխատության մեջ շատ է կարևորել Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը՝ այն համարելով ոչ միայն հավատի համար մղվող պատերազմ, այլև ազգային-ազատագրական պայքարի տարեգրություն<sup>4</sup>:

«Գանձարան» ժողովածուները, ինչպես նաև «Յասմալուրքները», սերտորեն կապված են հայ պատմիչների երկերին: Դրանց պոետիկայի գրեթե պարտադիր կանոններից է, որ ամեն մի բանաստեղծական տունն ավարտվում է աղաչեմք կամ խնդրեմք բառերով:

Գանձերը, որպես գրական տեսակ, լայն տարածում են գտնում հայ միջնադարյան գրականության մեջ X դ. մինչև XVII-ը: Եվ երբեմն ստեղծվել են պատմական դեպքի թարմ ազդեցության տակ: Դրա պերճախոս օրինակը XVII դ. փիլիսոփա, բանաստեղծ, մանկավարժ Ներսես Մոկացու գանձն է՝ նվիրված Ագուլիսում 1617 թ. նոյեմբերի 18-ին նահատակված տեր Անդրեասին: Այն գրված է կատարված դեպքի թարմ ազդեցության տակ, գրված է Սյունյաց Մեծ անապատում և շարադրվել է պահպանելով գանձի գրական տեսակի բոլոր կանոնները: Այդ քերթվածի վերնագիրն է՝ «Գանձ նոր նահատակին եւ սուրբ քահանային Անդրէասի Նախաճաւանցոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն, ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի»:

«Գանձարան» ժողովածուներն ունեցել են ցանկեր, որպեսզի հոգևոր գործիչը եկեղեցում հեշտությամբ գտնի տոնին ծիսական առումով համապատասխանող գանձը, տաղը, փոխը, հորդորակը:

<sup>4</sup> F. Nè v e . L'Arménie chrétienne et sa littérature. Louvain, 1886, p. 301.

Գանձերը երգվել են, և նշվել են դրանց համապատասխան մեղեդիները խազերի՝ միջնադարյան ձայնանիշների միջոցով: Գր. Խլաթեցու կազմած գանձարանն ամբողջովին խազագրված է: Կարապետ Բաղիչեցին գանձին նախորդող կաֆայանման քառատողերում գրում է.

Կամիս ասել՝ գանձ եմ համով,  
Ասա դու զիս եղանակով ...  
Եղանակ է դու զիս ձայնով ....

Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» ծավալուն քերթվածն այնքան տարածված էր հայ հոգևոր կյանքում, որ որոշ գանձերի համար նշվում է, թե պետք է երգել «Յիսուս Որդու» մեղեդիով:

Գր. Խլաթեցու «Գանձարանում» հատկապես շատ են Ավարայրի հերոսամարտին նվիրված միավորները, որոնցում փառաբանվում են ոչ միայն նահատակված նախարարները, այլև հոգևորականները: Եղիշեի պատմության մեջ եղած Ավարայրի ճակատամարտի նկարագիրը և գրքի վերջին՝ վկայաբանական գլուխը դարձել են գանձերի նյութ:

Տեղին է նույնությամբ մեջբերել գրքի առաջաբանն ամփոփող միտքը. «Գանձերը, լինելով կրոնաեկեղեցական խորունկ ապրումների և ազգային իղձերի արտահայտությունը, միևնույն ժամանակ հարաբերվել են տվյալ դարաշրջանի հայ կյանքի, ազգային ակնկալիքների և մտահոգությունների հետ, հոգևոր խորհուրդները առնչակցելով և կապելով հարազատ ժողովրդի ներկայի և գալիքի մտահոգություններին» (էջ 32):

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաբնագիտություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 650 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

---


UDK 929:792(479.25) Adamian

Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում (կազմողներ՝ Ռուբեն Ջարյան և Անահիտ Բեքարյան), *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտուիթ-յուն» հրատ., 2020, 656 էջ\**:

Memories of the Contemporaries about Bedros Adamian (compiled by Rouben Zaryan and Anahit Bekaryan). Yerevan, “Gitutiun” Publishing House, 2020, 656 p.

*Key words: Bedros Adamian, Rouben Zaryan, Armenian theatre, Armenian actors, Shakespeare.*

Bedros Adamian (1849–1891), genius of the Armenian stage, prematurely passed away 130 years ago in 1891, on the 4th of June, at the age of 42. He left a lasting trace with his 300 roles in the history of the Armenian culture. Adamian’s art got organically interwoven into the history of the Armenian theatre.



“In the summer of 1890, famous tragic actor Bedros Adamian toured Simferopol (A. A.). His temperament, passion, creative anxiety and authentic acting typical only of great artists impressed the audience greatly. Adamian was a great talent. Many years have passed, but the impressions of his performance still live in my memory. While watching tragic actors Rossi, Salvini, Possart on the

scene I would subconsciously compare them with Adamian and he wouldn’t suffer by this comparison with other artists. He was one of the greatest talents borne by our nation<sup>1</sup>”, – Hovhannes Nalbandian, the first great Armenian violinist records, who made it to the world stage, in his autobiography in his appreciation of the acting of the great Armenian actor.

Adamian’s investment was particularly significant in the history of Shakespearean theatre. Adamian’s best Shakespearean roles were those of Othello and King Lear and his Hamlet was a masterpiece, a role which he had performed 40 times.

Adamian had conducted his own research into Shakespeare and published “Shakespeare and the sources and criticism of his Hamlet” back in 1887 in Tiflis. The actor was also a poet and a graphic artist. Among the portraits he

---

\* *Ներկայացվել է 28. IV. 2021 թ., ընդունվել է տպագրութան 01. VI. 2021 թ.:*

<sup>1</sup> Museum of Art and Literature, Nalbandian Archives № 1, Republic of Armenia, (a) Autobiography, 1913, p.5.

painted were those of Bishop Mambreh Markossian (one of his best portraits), and artists like Hovhannes Aivazovsky, Gevorg Chmshkian, Grigor Artsruny, and others. Adamian also painted pictures of Shakespearean characters, e.g. (“self portrait in Hamlet’s role, Ofelia, etc). His artwork also includes small-sized still-lifes and under Aivazovsky’s influence he painted some seascapes.

Ararat Aghasyan, the Director of the Institute of Art of NAS RA, NAS RA associate member, mentions that “Bedros Adamian’s vast legacy also includes a dozen penciled separate etchings and eau-fortes boasting impressive artwork and unique concepts”.<sup>2</sup> B. Hovakimyan’s research “Shakespearean paintings by Bedros Adamian” (1998) addresses the study of actor’s paintings and drawings. The artist was said “to have fought oblivion” both in his literary pursuits and in art (p. 228). In response to the question “why do you need to earn an artist’s reputation, when you are already a unique stage actor” he would remark in bitterness “who can tell about me to the future generations if not the faded memory of the elderly? I want to secure testimonies of the future”, – he would add touching his handwritten notebook of novels and poems or his pictures (p. 214). It was during his lifetime that two books were published about him, “Bedros Adamian: 25-year stage activities” by P. Donapetian (Constatinople, 1888) and Aram Vruyr’s Bedros Adamian (Tiflis, 1891).

The study of Bedros Adamian’s life and art has always been in the scope of interests of art critics of NAS RA Institute of Art. In the studies addressing Adamian, it is worth mentioning Rouben Zaryan’s name, a NAS RA academician, who was the former head of the Institute of Art and who authored “Adamian. His Art” (1960) and “Adamian. Life” (1961) volumes. Through his collection of Adamian-related reviews, memories, records, and correspondence published in the press, Ruben Zaryan was able to present the story of one of the world’s greatest tragic actors and also provide an analysis of his stage career. Rouben Zaryan’s two books “Adamian’s Shakespeare” first published in Russian (1964) and a year later in Armenian (1965) discuss Adamian’s interpretation of Shakespearean characters.

Garnik Stepanyan, who was first the head of the department of the theatre of NAS RA of the Institute of Art and who later assumed the position of the head of the department of Diaspora Arts in the two volumes of his substantial work “The History of Western Armenian Theatre” also addresses Bedros Adamian’s life and career. By the time of the publication of this work, he had published “Bedros Adamian: an autobiographical sketch” (1941), and Armenian and Russian monographers on Bedros Adamian (1944 and 1956).

Henrik Hovhannisyan, the head of the department of theatre of the Institute of Art of NAS RA and a NAS RA associate member, speculates on “Bedros Adamian’s life and career in his voluminous research work “The History of the Armenian Theatre. XIX century” (1996, 2010).

<sup>2</sup> A. Aghassian, Trends in Development of Armenian Painting in the XIX–XX centuries. Yerevan, 2005, p. 35.



It was in the middle of the 1980s that Rouben Zaryan decided to compile a collection entitled “Memories of the Contemporaries about Bedros Adamian” and offered Anahit Bekaryan, a young researcher from Shakespearean department to study the publications addressing Bedros Adamian in the Armenian and Russian press. To support the research, Zarian also provided A. Bekaryan with a few reviews and assigned her to work on the notes for the provided resources and to find new narratives about the famous actor. The product of their two-year joint research was an extensive collection of materials comprising about 200 type-written pages. The collection was in its development stage but the events unfolding at the end of eighties in Armenia, brought the implementation of this important project to an abrupt halt. Several decades later, in 2017, we requested that Anahit Bekaryan, senior researcher at the department of Diaspora of the Institute of Art of NAS RA should conduct research into the Shakespearean library of the institute of Art named after Rouben Zaryan. It was in this period that she came across *Bedros Adamian* file. The Institute decided to resume the study on the work that “had been destined to oblivion”. The preface to the collection reads that the book would be Anahit Bekaryan’s “humble tribute to the great actor’s memory” (p. 7).

Time revealed that the work had not been finalized yet and required a new approach, enthusiasm, energy and time. All the scrupulous work entailing the verification of sources, was completed by Anahit Bekaryan in a duly fashion. The efforts she invested in this work produced a piece that was three times as large as the initial draft and comprised literally all the publications on Bedros Adamian published in the Armenian and Russian press by the actor’s contemporaries.

It was in 2020 that by the decree of the Scientific Council of NAS RA and the Scientific Council of the Institute of Art the publishing house “Gitutyun” published the so much anticipated collection “Memories of the Contemporaries about Bedros Adamian” compiled by Rouben Zaryan and Anahit Bekaryan and edited by Henrik Hovhannisyan. The publication of the collection would not have been possible without the support of the RA Science Committee of Ministry of Education, Science, Culture and Sport for which I would like to extend deepest gratitude to Sargis Hayotsyan, the head of the committee and Rouzan Assatryan, the chief secretary.

When considering the collection itself, it is hard to overestimate the role of the memories and the echoes of the press and the contemporaries for those researchers, who study actors. As Henrik Hovhannisyan notes in his “From the Editor” section “An actor’s art is a departing art that grows into a memory. It is timely in its arrival and creation. That art leaves its traces in reviews and memories of contemporaries. Future scholars will have to resort to these materials and faded images to build an accurate picture of the pieces that belong to the past” (p. 5). In fact, an actor’s glory is short-lived. Actors or musicians live in the memory of the audience as long as they are on stage. For that reason, collections featuring studies into performing arts are very

important for a theatre or art critic and “the present collection serves this purpose” (p. 5).

The structure of the collection is worth mentioning, too. As an opening statement for the collection, Anahit Bekaryan has chosen great Armenian novelist, and playwright Alexander Shirvanzadeh’s obituary on Bedros Adamian, which was published in 1891, on June 9 in Ardzagank (Tiflis) weekly, 5 days following the “stage giant’s death”. Shirvanzadeh writes “Adamian has left us. This tragic news like a hurricane should sweep through the news painning everyone who only once had a chance to see Adamian on stage” (p. 9). Shirvanzadeh was reasonably chosen as Adamian’s obituary writer, as he was the only Armenian writer to have been friends with the great artist for four years (by the time Adamian left the Caucasus). “When we were living in Tiflis and Baku, we would meet almost every day”, – Shirvanzadeh writes (p. 223).

The presented collection provides sufficiently rich material for its readers encouraging them to explore more about the life, activities, traits, ideas, creative insights and worries of the artis and have an accurate picture of the artist’s image.

The memories of Adamian’s contemporaries were written and published for the first time between 1885-1916. The collection covers memories of such writers as Alexander Shirvanzadeh, Hovhannes Toumanian, Raphael Batkanian, Arshak Chobanian, Leo, artists Gevork Bashinjaghian, Dickran Yesayan, stage producer Gevork Chmshkian, actors Siranoush, Azniv Hrachia, Armen Armenian, Amiran Mandinian, and many others.

A. Bekaryan has chosen to close the collection with an essay “Bedros H. Adamian, the incomparable tragic actor” by Yervand Toloyan, which was published in Constantinople in 1899 on December 30 in “Tsahgik” daily. The essay ends as follows: “He is alive for every Armenian. The cemetery of Shishly<sup>3</sup> has only his phantom. True, Adamian can’t breathe any more, his heart doesn’t beat, a man can leave this world but Othello, Hamlet, King Lear, Kin, Uriel d’Acosta won’t die. These are creations. An Armenian can’t forget you, Adamian. Especially for the aforementioned roles. This unforgettable memory I will share with my son, and my son will share it with his grandson. Rest in peace, you tragic actor, who nobody compares to. Rest in immortality and eternity” (p. 443).

The collection’s four appendices are worth a mention, too. The first appendix includes memories recorded from the testimonies of the witnesses. In the second appendix, A. Bekaryan presents the readers’ poems addressed to B. Adamian, among which are those by Hovhannes Toumanian and Yeghishe Charents. Appendix III (pp. 463–480) comprises the list of B. Adamian’s characters. The collection is concluded by Appendix! V (pp. 481–517) comprising original Russian texts about the actor written by the stage

<sup>3</sup> Armenian cemetery in Shishly district where Armenian artists are buried.

producer Vladimir Nemirovich-Danchenko, literary critic Alexey Veselovsky, actors Ivan Berestiani, Dmitry Garin-Vinding, Nadezhda Tiraspol'skaya and others.

In this respect, it is worth mentioning Dmitry Garin-Vinding's words about the great actor "One of Peter Ieronovich's (this is how we addressed him) remarkable sides was his treatment of supporting actors. He saw people in them who shared his feelings for the sacred art that was the passion of his life. He considered them to be his key assistants on stage" (p. 503). As for Ivan Perestiani, he believed Adamian to have been the most poetic Hamlet blessed with rich fulfillment and exceptional acting (p. 517).

The collection has retained the original style of all texts and only obvious misprints have been corrected. All the topics are presented chronologically and have been retrieved from primary sources. If an author has more than one essay, the first date of its publication has been considered. References are presented in separate sections. Those references that are repeated in the collection are united under the name "General references" (GR) and respective references are made to this section, for instance, one has to check GR-15 section if a reference is made to it.

Indeed, this precious collection, which is a significant investment in Armenian theatre studies, once again proves how highly Bedros Adamian was valued by foreign, namely by Russian critics.


ANNA ASATRYAN

*Anna Assatryan – Doctor of Sciences in Arts, Professor, RA honored Worker of Arts, Deputy Director of the NAS RA Institute of Arts, Head of the Department of Music. Scientific interests: Study of Armenian music of the new and newest periods. Author of 12 monographs and over 160 articles. instart@sci.am*

ՎԻՎՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2020, 492 էջ\*:

Բանալի բառեր՝ Կոտայքի մարզ, խոսվածք, համապատկեր, քերականություն, բառապաշար, բանահյուսական նյութեր, բարբառագիտություն, զուգաբանություններ, տարբերակայնություն:

2020 թ. լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվալյանի՝ ՀՀ-ում առկա բարբառների ու խոսվածքների նկարագրությունը և ուսումնասիրությունը վերաբերող երկրորդ գիրքը՝ նվիրված Կոտայքի մարզին: Առաջինը լույս է տեսել 2018 թ. և նվիրված էր Գեղարքունիքի մարզին<sup>1</sup>: Այս երկու աշխատություններն էլ արդյունք են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագրի շրջանակում ՀՀ ԿԳՄՄ նախարարության Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ և Վ. Կատվալյանի գլխավորությամբ ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների կողմից կատարված դաշտային աշխատանքների ու հետազոտությունների: Բավականին աշխատատար ուսումնասիրություններ են, որոնք հարստացնում են հայ բարբառագիտությունը թե՛ արդի խոսվածքների նկարագրություններով, թե՛ տեսական դիտարկումներով ապահովելով հայ բարբառագիտական մտքի շարունակականությունը:



Եթե մի կողմ թողնենք մինչև XIX դարը բարբառների վերաբերյալ եղած կցկտուր տեղեկատվությունն ու դիտարկումները, ապա կարելի է փաստել, որ հայ բարբառագիտությունը՝ իբրև առանձին գիտաճյուղ, ձևավորվում է XIX դ. կեսերին և նկատելի զարգացում ու առաջընթաց է ապրում XX դարում՝ դառնալով հայերենագիտության հիմնական ուղղություններից մեկը: Ք. Պատկանյանի, Մ. Մսերյանցի, Հր. Աճառյանի ուսումնասիրություններով սկզբնավորվում է հայոց բարբառների նկարագրության, դասակարգման գործընթացը, որում հետագայում կարևոր ներդրում ունեցան Ա. Ղարիբյանը, Հ. Մուրադյանը, Էդ. Աղայանը, Գ. Զահուկյանը և այլք: Չնայած կատարված հսկայածավալ աշխատանքին, այնուամենայնիվ, բարբառների ուսումնասիրության հիմնական եղանակը մնում էր նկարագրականությունը:

\* Ներկայացվել է 24. VIII. 2021 թ., ընդունվել է տպագրության 20. IX. 2021 թ.:  
<sup>1</sup> Ա. Վ ա ռ դ ա ն յ ա ն. Վիկտոր Կատվալյան. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ. – ՊԲՀ, 2020, № 1, էջ 249–251:

Ինչպես Վ. Համբարձումյանն է նկատում, «Հայ բարբառագիտությունն առայսօր հեռու է տեսական (ոչ նկարագրական) բարբառագիտություն լինելուց», մինչդեռ «այս խնդիրը բարբառագիտական նորագույն ուսումնասիրությունների «միջուկը» պետք է լինի...»<sup>2</sup>: Ահա, հենց այս տեսակետից պետք է գնահատել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կատարվող հետազոտությունները և մասնավորապես՝ Վ. Կատվայանի վերոհիշյալ ուսումնասիրությունները:

Դեռևս XX դարի 70-ական թվականներից սկսած՝ մշակվեց և իրագործվեց հայերենի բարբառագիտական ատլասի համար անհրաժեշտ նյութերի հավաքման ծրագիրը, որից, ըստ անհրաժեշտության, օգտվել է նաև Վ. Կատվայանը: Հավաքված բարբառային նյութի մշակումը թույլ կտար գաղափար կազմել ՀՀ-ում գործածվող բարբառների և խոսվածքների աշխարհագրական տարածվածության, փոխհարաբերությունների, քանակի, լեզվական առանձնահատկությունների մասին: Արդեն երկրորդ «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը մշակվել է 2010-ական թվականներին՝ «նպատակ ունենալով հետազոտել երկրի բոլոր բնակավայրերի լեզվական յուրահատկությունները, ձևավորել դրանց բարբառային բնութագրերը և առանձին հատորներով ներկայացնել ըստ ՀՀ մարզերի»<sup>3</sup>: Եվ, չնայած կատարված հետազոտությունների արդյունքների վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել, հոդվածներ գրվել, բայց դրանք ի մի են բերվել, ամբողջացվել և խոսվածքների լեզվական բնութագրերով Վ. Կատվայանի կողմից ներկայացվել են վերը նշված երկու ծավալուն գրքերում:

Վ. Կատվայանը Կոտայքի մարզին նվիրված գրքի «Նախաբանում» կատարում է ելակետային մի քանի դիտարկումներ, որոնցով էլ պայմանավորված են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ գրքի միատեսակ բովանդակային և կառուցվածքային յուրահատկությունները:

Այսպես, Վ. Կատվայանը կարևորում է խոսքի պարբերական գրանցումներն ու հետազոտությունը. «Լեզվում տեղի ունեցած և տեղի ունեցող գործընթացները դիտարկելու, զարգացման միտումները և ընթացքը վերլուծելու համար կարևոր է խոսքի պարբերական հետազոտությունը», – գրում է նա (էջ 8): Ճիշտ դիտարկում է հատկապես տարածքային հաղորդակցում իրականացնող խոսվածքների դեպքում, եթե նկատի ունենանք, որ բարբառի (խոսվածքի) բանավոր և «անվերահսկելի» բնույթը պայմանավորում է նրա կենդանի, բնական ու անկաշկանդ ընթացքը պետական հոգածության տակ գտնվող գրական լեզվի համեմատ: Բացի դրանից՝ խոսվածքները «զգայուն են» արտալեզվական այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են եղեռնը, տեղահանությունները, գաղթերը, որոնց ընթացքում կարող են առանց գրավելու կորստյան մատնվել՝ պայմանավորված իրենց բանավոր բնույթով: Բարբառախոսների տեղաշարժերը ստեղծում են լեզվական նոր

<sup>2</sup> Վ. Գ. Համբարձումյան. Բարբառագիտական նոր տիպի ուսումնասիրությունն ուղեկցող գրական լեզվի և ուղեկցող բարբառների առնչությամբ. – «Լեզու և լեզվաբանություն» (Երևան), 2016, № 1, էջ 85:

<sup>3</sup> Վ. Կատվայան. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ, էջ 8:

իրավիճակ: Եվ վերջապես, եթե նաև նկատի ունենանք գրական լեզվի բարբառային «ծագումը», ապա պարզ կլինի, թե ինչքան կարևոր է բարբառների (խոսվածքների) պարբերական հետազոտությունները: «Ինչպես Հայաստանի Հանրապետության այլ տարածաշրջաններում, Կոտայքի մարզում ևս կենդանի գործածական լեզուն ենթարկվում է երբեմն աննկատելի, բայց շարունակական տեղաշարժերի, փոփոխությունների» (նույն տեղում), – գրում է Վ. Կատվալյանը՝ այդպիսով փաստելով պարբերաբար գրառումներ կատարելու անհրաժեշտությունը:

Կարևոր է նաև այն՝ Վ. Կատվալյանը կատարված աշխատանքն արժևորում է նրանով, որ հայոց լեզվի տարածական տարբերակների «բոլոր դրսևորումների ուսումնասիրությամբ հնարավոր կլինի ըստ հնարավորին ամբողջացնել լեզվի մասին պատկերացումները, ձեռք բերել փաստական նոր ու բազմաբնույթ նյութ, կատարել գիտականորեն ճիշտ եզրահանգումներ»<sup>4</sup>: Այս գործընթացն իրականացնելու դեպքում որոշակիորեն կձևավորվի հայերենի տարածագործառական արդի պատկերը, կստեղծվի ՀՀ լեզվական քարտեզը, մյուս կողմից էլ նպաստ կբերի հայ բարբառագիտությունը և լեզվաբանական աշխարհագրությունը:

«Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ» աշխատության նախաբանում Վ. Կատվալյանը, ընդհանրացնելով հետազոտության արդյունքները, նշում է, որ Կոտայքի մարզի լեզվական պատկերը հետևյալ տեսքն ունի. 1. մոտ մեկուկես տասնյակ բնակավայրերում հաղորդակցվում են հայերենի խոսակցական տարբերակով, որոնք երանգավորված են խոսվածքային հատկանիշներով: Դրանք այն բնակավայրերն են, որոնք բնակչության անհամասեռ կազմ ունեն, եկել են տարբեր խոսվածքային միջավայրերից և իբրև հանրույթ ձևավորվել են տարբեր նպատակներով խորհրդային տարիներին: 2. Մոտ երկու տասնյակ բնակավայրերում հաղորդակցվում են խառը խոսվածքներով, որոնք ձևավորվել են բարբառակիր տարբեր հանրույթների՝ երկար ժամանակ համատեղ ապրելու և հաղորդակցվելու պայմաններում: 3. Բնակավայրերի մի մասում էլ հաղորդակցումն իրականացվում է Մշո, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Վանի, Մակուի, Արծափի, Արարատյան բարբառների տարբեր խոսվածքներով, որոնք պահպանում են իրենց հնչյունական և քերականական հիմնական հատկանիշները: Այս հանգամանքը, իրավացիորեն եզրակացնում է Վ. Կատվալյանը, ժխտում է որոշ լեզվաբանների այն պնդումը, թե բարբառները փոփոխությունների և գրական լեզվի ազդեցությամբ կարող են վերանայ: Հավելենք նաև, որ բարբառը՝ որպես համագրային լեզվի դրսևորում, ինքն էլ պատմական երևույթ է և իբրև այդպիսին՝ ժամանակի ընթացքում բնականոն հունով կարող է ենթարկվել փոփոխությունների, որոնք բարբառի վերացման պատճառ չեն կարող լինել:

Ահա, բարբառային հայերենի այս համապատկերով էլ պայմանավորված կառուցվածք ունի գիրքը. 1-ին մասում («Բարբառային հայերենը Կոտայքի մարզում») առանձին գլուխներով ներկայացված են վերը նշված բարբառ-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 5:

ներն ու դրանց դրսևորումները Կոտայքի մարզում: Նախապես ընդհանուր տեղեկություններ են տրվում բարբառի մասին, այնուհետև ներկայացվում են այդ բարբառների և խառը տիպի խոսվածքների լեզվական առանձնահատկությունները: 2-րդ մասում («Կոտայքի մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը և խոսվածքների բարբառային հատկանիշները») ներկայացված են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային բնութագրերով, ընդ որում լեզվական հիմնական հատկանիշների շրջանակում: 3-րդ մասում («Կոտայքի մարզի բարբառային խոսքի նմուշներ») ընդգրկված են բարբառային խոսքի նմուշներ՝ գիտական տառադարձությամբ: Գրքի վերջում զետեղված են «Բառացանկ», «Համառոտագրություններ», «Տառադարձման օգտագործված համակարգ», «Օգտագործված գրականություն» բաժինները: Նկատենք, որ խոսվածքների լեզվական առանձնահատկությունները ներկայացնելիս Վ. Կատվալյանը նկատի է ունեցել այնպիսի էական հատկանիշներ, որոնք կարող են օգտագործվել նաև հետագա բարբառագիտական ուսումնասիրություններում:

Վ. Կատվալյանի աշխատությունը սոսկ լեզվաբանական ուսումնասիրություն չէ: Ուսումնասիրության համակողմանիությունն ապահովված է նաև պատմական, ժողովրդագրական տեղեկություններով, դաշտային աշխատանքների ընթացքում գրառվել են բազմաթիվ ազգային, սովորույթային, կենցաղային բնույթի բանահյուսական նյութեր՝ հայ ժողովրդի այս կամ այն հատվածին բնորոշ: Ուստի, ինչպես հեղինակն է գրում առաջին գրքում («Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ») և հաստատում երկրորդում («Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ»), խոսվածքների նկարագրությունն ու հետազոտությունը՝ «մեծ կարևորություն ունեն ոչ միայն լեզվաբանական, այլ նաև բանահյուսական, ազգագրական, ժողովրդագրական, կրթական, պատմամշակութային և մի շարք այլ առումներով»<sup>5</sup>:

Այս 2 ուսումնասիրություններն ունեն նաև մեկ այլ կարևոր առանձնահատկություն: Դրանք հեղինակի կողմից բարբառային նյութի անմիջական գրառման, մշակման արդյունք են և կասկածի տակ չեն դնում հետազոտությունների հավաստիությունը:

Այսպիսով, Վ. Կատվալյանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ» աշխատությունը լուրջ ներդրում է հայ բարբառագիտության մեջ թեկուզև այն առումով, որ գրառվել, մշակվել և գիտական հետազոտության են ենթարկվել մարզի տարածքում գործածվող արդի խոսվածքները, ձեռք բերված տվյալների համադրմամբ տրվել են դրանց լեզվական բնութագրերը, ներկայացվել է մարզում գործածվող բարբառների և բարբառային հատկանիշների տարածման պատկերը, կատարվել են բարբառագիտական կարևոր դիտարկումներ:

Ըստ «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագրի՝ ՀՀ-ում գործածվող խոսվածքների ուսումնասիրությունը

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

*չարունակական բնույթ է կրելու, որի շնորհիվ առաջին անգամ կամբողջանա  
ՀՀ-ում առկա բարբառների և խոսվածքների համապատկերը, ուստի սպա-  
սենք հաջորդ գրքերին:*

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ

Բ. դ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ար-  
դի հայերենի բաժնի վարիչ, Գավառի պետական համալսարանի բանասի-  
րական ֆակուլտետի դեկան: Գիտական հետաքրքրությունները՝ արևմտա-  
հայերենի պատմություն, Մխիթարյան միաբանությունից հայերենագիտական  
գործունեություն, ժամանակակից հայերենի բառապաշարի և քերականական  
կառուցվածքի ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության, 2  
ուսումնական ձեռնարկի և շուրջ 30 հոդվածի: asoyan.60@mail.ru



ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ. Հայաստանի հունարեն վիմագրությունները և 18–21-րդ դարի 10-ական թվականների հունական համայնքը, Երևան, հեղ. հրատ., 2021, 584 էջ, նկ.\*:

Բանալի բառեր՝ հեյլենիզմ, հունական համայնք, վիմագրություն, տապանաքար, հունաբնակ վայրեր, հանքարդյունաբերություն, հունական եկեղեցի, գերեզմանոց:

Հայոց պատմության՝ Ք. ա. III–I դդ. ընդգրկող ժամանակաշրջանն ընդունված է կոչել բուն հեյլենիզմի (հեյլենիստական) կամ հունականության շրջափուլ, որն իր ուղղակի ազդեցությունն ունեցավ նաև հետագա՝ Ք. հ. I–III դդ. վրա, ինչով պայմանավորված՝ այդ շրջանը կոչում են ոչ միայն նախաքրիստոնեական կամ մինչքրիստոնեության ընդունման, այլև՝ հետհեյլենիստական ժամանակաշրջան: Հայ իրականության մեջ այն նշանավորվեց հատկապես արվեստի ու մշակույթի՝ ճարտարապետության, քանդակագործության, խճանկարչության, թատրոնի, գրի ու գրականության ասպարեզում նկատելի առաջընթացով:



Հեյլենիզմի ձևավորման հիմքում հույն աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացու (Ք. ա. 356–323 թթ.) դեպի Արևելք կատարած արշավանքներն էին, երբ գրավելով Աքեմենյան Պարսկաստանը, առաջխաղացում ունենալով Փոքր Ասիայում ու Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում՝ Մակեդոնացուն հաջողվում է ստեղծել մի կայսրություն, ուր արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունները միավորվում են հեյլենիստական մշակույթի ներքո: Սրան հաղորդակից դարձավ նաև Հայաստանը, որին «մեծապես նպաստեցին միավորված Հայ պետականության առաջացումն ու զարգացումը մ. թ. ա. II–I դարերում և երկրի անկախության պահպանումը I–III դարերում»<sup>1</sup>: Հեյլենիզմի առանձնահատկություններից մեկն էլ Հայաստանում հին հունարենի արամեերենի ու ասորերենի կողքին իբրև հիմնական՝ արքունական գրասենյակում և պետական-պաշտոնական կյանքում կիրառելի լեզու դառնալն էր<sup>2</sup>, իսկ այն, որ նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգում հունարենն իր պատվավոր տեղն է գբաղեցրել, վաղուց գիտականորեն ապացուցվել է<sup>3</sup>:

\* Ներկայացվել է 25. VIII. 2021 թ., ընդունվել է տպագրության 14. IX. 2021 թ.:

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 847:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 910:

<sup>3</sup> Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն. Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 111–163, հմմտ. ն ու յ ն ի՝ Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն, Երևան, 2021, էջ 231–258:

Հայաստանում չըջանառված հունարեն գրին ու հունական համայնքի պատմությունն է նվիրված պատմաբան, գրող, հրապարակախոս և, մասնավորապես, մեծ նախնիջևանագետ Արգամ Այվազյանի հերթական ուշագրավ ու ինքնատիպ մենագրությունը: Այս աշխատությունը, որը հեղինակը կնքել է «Հայաստանի հունարեն վիմագրությունները և 18–21-րդ դարի 10-ական թվականների հունական համայնքը» խորագրով, մեկ բառով կարելի է բնութագրել իբրև հայ-հունական դարավոր կապերը վավերացնող «Տանրագիտարան», որի էջերում հաջողությամբ մեկտեղվել են Հայաստանում (և ոչ միայն) մինչ այժմ հայտնի քարեղեն վկայագրերը<sup>4</sup>, ինչպես նաև XVIII–XXI դդ. ձևավորված հունական համայնքի ու հունաբնակ վայրերի պատմությունը: Այս առումով կատարված աշխատանքը կարելի է դիտարկել երկու հիմնական ուղղությամբ՝ աղբյուրագիտական, որն ընդգրկում է գրքի առաջին գլուխը և պատմական-տեղագրական, որի կազմում միավորելի են մնացած երեք գլուխները:

Մենագրության առաջին «Հայաստանի հունարեն արձանագրությունները» գլխում փորձ է արվել ամբողջացնել Հայաստանում հայտնաբերված հունարեն վիմագիր հուշարձանները, որոնք թվագրվում են Ք. ա. II–I դդ. և առանձին դեպքերում հասնում մինչև Ք. Տ. XIX դ. (չհաշված XIX–XX դդ. մեծաթիվ տապանագրերը): Ինչպես Ա. Այվազյանն է փաստում, այդ վիմագրերը քանակապես շատ չեն, «սակայն մեծ է դրանց պատմական նշանակությունը և մշակութային արժեքը» (էջ 17): Հեղինակը տեղին է նկատում, որ հայտնաբերված շուրջ երեք տասնյակ վիմագրերի աշխարհագրությունը վկայում է, որ դրանք ծագում են հիմնականում այն բնակավայրերից, որոնք հիմնվել կամ վերակառուցվել են հելլենիստական ժամանակաշրջանում (Արմավիր, Տիգրանակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, Երվանդաշատ և այլն) (էջ 17): Վիմագրերի համառոտ, բայց բովանդակալից (տեղը, հայտնաբերման տարին, առաջին և հետագա հրատարակիչները, բովանդակությունը, վիճակը) ներկայացման արդյունքում հետաքրքիր պատկեր է ձևավորվում, որի հիմամբ կարելի է վստահաբար ասել՝ Հայաստանում չըջանառված հունարեն վիմագրերը բնութիով բազմազան են. մեզ են հասել ինչպես շինարարական ու նվիրատվական բովանդակության բնագրեր (Արմավիր, Գառնի, Ապարան, Մաստարա), այնպես էլ՝ բարոյախոսություններ, պաշտոնական հրովարտական, հիշատակագրություն-տապանագրեր և այլն (Արմավիր, Վաղարշապատ, Արենի, Տիգրանակերտ, Երերուլք, Ավան): Այս տեսանկյունից աշխատանքը պիտի շահեր, եթե հեղինակը ներկայացվող վիմագրերի բովանդակային, նաև կաղապարային հենքը համադրեր հայերեն՝ մեսրոպատառ վիմագրությունից հայտնի նմանօրինակների հետ: Ավելին, հունարեն որոշ վիմագրերի դեպքում

<sup>4</sup> Վիմագրերի շարքում հեղինակն ընդգրկել է նաև ոչ վիմագիր և ոչ հայաստանյան ծագման արձանագրություններ, մասնավորապես ներկայացրել է Ռուսաստանի Մայկոպի շրջանի Դախովսկու կայարանի տարածքից 1934–1935 թթ. հայտնաբերված արձանագրության թասի հունարեն արձանագրությունը՝ Բակուր թագավորի անվան հիշատակմամբ (էջ 57), Կապադովկիայից հայտնի երկաթե դիմակի արձանագրությունը՝ ըստ ամենայնի Տիգրան Բ-ի անվամբ (էջ 71–72) և այլն:

նշվում է, որ դրանք չափածո-բանաստեղծական են (Արմավիր՝ Ք. ա. II–I դդ., Մալաթիա՝ Ք. հ. II դ.), իսկ հայերեն վիմագրերում չափածո օրինակները հայտնի են շատ ավելի ուշ՝ XIII–XIV դդ., և լայն տարածում են գտել հատկապես XVII–XIX դդ. ընդարձակ տապանագրերում<sup>5</sup>: Նկատառելով այդ՝ կարևոր ենք համարում, թեկուզ հետագայում, հատուկ ուշադրություն դարձնել վերոնշյալ խնդրին՝ հունարեն վիմագրերը դիտարկելով դրանց յուրօրինակ նախատիպ:

Ինչ վերաբերում է աշխատության մեջ ընդգրկված հունարեն վիմագրերի վերծանություններին, ապա պարզ է, որ հեղինակը հիմնականում նպատակ չի ունեցել խորամուխ լինել դրանց բովանդակային առանձնահատկությունների մեջ և բավարարվել է միայն նախընթաց հրատարակությունների տվյալներն ու հրատարակիչների տեսակետները ներկայացնելով: Չառարկելով հմուտ հետազոտողի այդ տեսակ մոտեցումը՝ կցանկանայինք ընթերցողի ուշադրությունը հրավիրել դրանցից, թերևս, ամենաուշագրավի՝ Ավանի կաթողիկե տաճարի երկկեզվյան (հայերեն-հունարեն) ծածկագիր արձանագրության բովանդակության վրա: Ներկայումս Հայաստանի պատմության թանգարանում ցուցադրվող վիմագիրն ազուցված է եղել տաճարի արևելյան պատին: Այն թվագրվում է VII դ. առաջին կեսով և բովանդակում հետևյալը. «Տ(Է)Ր ԵՁՐ ԶՌԼԿԶ (=ՀԱՅՈՑ) ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՇՄԱՐԻՏ ΔΩΛΟΣ ΤΩ ΘΕΩ (=ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ): ՍԱՄԷՂ ՇՌԱՌԼ (=ԾԱՌԱՅ) Ք(ՐԻՍՏՈՍ)» (էջ 65): Ժամանակին արձանագրությունը հրատարակել է անվանի հնագետ-վիմագրագետ Կարո Ղաֆաղարյանը՝ վիմագրում հունարենի գոյությունը պայմանավորելով եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի (630–641 թթ.) Կարինում հունադավանություն ընդունելու փաստով<sup>6</sup>: Նախ ասենք, որ նմանօրինակ վիմագրի գոյությունն Ավանի տաճարում զարմանք չպիտի հարուցի, քանի որ հայտնի է՝ այն կառուցվել է Բյուզանդիայի Մորիկ կայսեր (592–602 թթ.) հրամանով և Հովհան Բագարանցի հակաթու կաթողիկոսի (591–601 թթ.) հոգածությամբ: Այլ հարց է, թե ինչն է են ծածկագրվել նշված գույք բառերը: Կ. Ղաֆաղարյանն այն մեկնաբանում է իբրև վանահայր Սամեղի (Սամուել անվան հնչունափոխված տարբերակն է)՝ եզր կաթողիկոսին համախոհ լինելու հետևանք, որի միջոցով Սամեղը ցանկացել է խուսափել ավելորդ հալածանքներից և «արձանագրությունը գրել է ծածկագիր և կես հունարենով, որպեսզի ամեն ոք չհասկանա»<sup>7</sup>: Մեր համոզմամբ՝ այստեղ այլ զաղտնիք կա թաքնված. բանն այն է, որ ժամանակի քաղաքական հանգամանքների թելադրանքով եզր կաթողիկոսի կողմից 633 թ. Կարինում ստորագրված միակամություն դավանաթուղթը որևէ հետևանք չի ունեցել, չի առնչվել քաղկեդոնականութ-

<sup>5</sup> Գ. Գրիգորյան. Հայկական վիմագրություն, Երևան, 2000, էջ 58–60: Առավել մանրամասն տե՛ս Ս. Գևորգյան. Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII–XIX դդ.), Երևան, 1989:

<sup>6</sup> Կ. Ղաֆաղարյան. Ավանի երկկեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, հմմտ. ն ու յ ն ի՝ Երևան. Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 190–191:

<sup>7</sup> Կ. Ղաֆաղարյան. Երևան. Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 191:

յան հետ և չի հակասել հայ եկեղեցու դավանաբանությունը, ինչով պայմանավորված՝ Կարինից վերադառնալուց հետո ևս կաթողիկոսն առաջնորդվել է հայ եկեղեցու սկզբունքներով ու զբաղվել եկեղեցաշեն գործունեությունով<sup>8</sup>։ Կարելի է կռահել, որ Եզր կաթողիկոսն այդ թուղթը ստորագրել է երկիրը ցնցումներից գերծ պահելու նպատակով (չնայած, որ արժանացել է մի շարք պատմագիրների պարսավանքին), իսկ վիճաբանում «Հայոց կաթողիկոս» և «ծառայ Քրիստոսի» հատվածների առաջին բաղադրիչների ծածկագրումը փոխարինագիր եղանակով, ավելի քան ակնհայտ է դարձնում կատարված «գործարքի» էությունը, որը քաղկեդոնական եկեղեցում բաց ու պարզորոշ գրվել չէր կարող։

Դառնալով գրախոսվող աշխատություններից «Հայաստանի 18–21-րդ դարի 10-ական թվականների հունական համայնքը» գլխին՝ պետք է նշել, որ այն առաջին հերթին կարևորվում է Հայաստանում հունական համայնքի ձևավորման, ժողովրդի տեղաբաշխման, զբաղվածության, վիճակագրական տվյալների վերհանման տեսանկյունից, քանզի ինչպես Ա. Այվազյանն է փաստում՝ «հայաստանաբնակ հունական համայնքի վերաբերյալ գիտատեղեկատվական ուսումնասիրություններ գրեթե չեն իրականացվել» (էջ 82)։ Այս հանգամանքը մեծապես կարևորում է աշխատության գիտական արժեքը և նրա հեղինակի բերած ավանդը հայաստանաբնակ հույների կյանքն ու կենցաղն ըստ արժանվույն ներկայացնելու գործում։ Հետաքրքիր է, որ դեռևս Ք. ա. I դարում Տրգրան Բ թագավորը հազարավոր հույների տեղափոխել է Հայաստան, որոնք հիմնականում արհեստավորներ ու մշակութային գործիչներ էին։ Այդ տեղաշարժերը շարունակվել են մինչև XII–XIII դդ., իսկ արդեն գանգաձային բնակության երկրորդ փուլում՝ XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1920 թ., հույն բնակչության հիմնական մասն ընդգրկվում է հանքարդյունաբերությունում ոլորտի աշխատանքներում։ Այս տեսանկյունից պատահական չէ նաև նրանց բնակության վայրերի ընտրությունը՝ Ալավերդու կիրճում, Լոռվա բարձրավանդակում, Հանքավանում, Գյումրիում, Կապանում և Հայաստանի արդյունաբերական այլ կենտրոններում։

Ողջունելի է այն, որ հեղինակն օգտվել և ըստ կարգի հիշատակել է հայաստանաբնակ հույների տնտեսական կյանքին ու նյութական մշակույթին նվիրված է. Խարացիդիսի աշխատության ձեռագիր օրինակը, որը 1990 թ., իբրև թեկնածուական ատենախոսություն, պաշտպանության է ներկայացվել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդում (էջ 83)։ Այս աշխատությունը փաստացի միակ գործն է, որը քիչ թե շատ ընդհանուր պատկերացում է տալիս XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դարասկիզբը Հայաստանում ապրած հույների կենցաղավարման, ինչպես նաև հանքարդյունաբերության ու արհեստների ոլորտում նրանց ներդրած ավանդի մասին։

Ա. Այվազյանն իր աշխատության երրորդ՝ «Հայաստանի հունաբնակ բնակավայրերի 18–20-րդ դարերի նյութական ժառանգությունը» գլխում ամբողջացնում է հունաբնակ վայրերում պահպանված ազգային մշակույ-

<sup>8</sup> Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 291–292։

թի՝ պատմաճարտարապետական հուշարձանների (եկեղեցիներ, մատուռներ, կոթողներ, բնակելի տներ ու այլն) ամփոփ նկարագիրը: Նմանօրինակ մոտեցմամբ հեղինակն իր ուսումնասիրությունը հասանելի է դարձրել շատ ավելի լայն լսարանի՝ ընդգծելով կատարած աշխատանքի արժեքն ու արդիականությունը: Արդարև, հայկական բազմաթիվ հուշարձանների կողքին անմխիթար վիճակում են նաև հունական նյութական մշակույթի մի շարք կոթողներ: Սրանցից հեղինակը հատկանշում է ներկայումս Կապան քաղաքի թաղամասերից Կավարտի Ս. Կատարինե (Կատերինա) կամ Խարալամբոս փայտազամբեթ եկեղեցին, Ալավերդու այժմյան Մադան թաղամասի Այոս Գեորգիոս միանավ սրահն ու Այա Վառվառա մատուռը, որոնք եթե ոչ վերականգնման, ապա շուտափույթ ամրակայման կարիք ունեն, իսկ Կավարտի հոյակերտ եկեղեցին նման վիճակում մնալու դեպքում պարզապես ենթակա է փլուզման (էջ 188–189): Աշխատության վերջում ներկայացված 233 գունավոր լուսանկարների միջոցով (էջ 489–581) հեղինակն իր ասելիքն ավելի հիմնավոր ու հասանելի է դարձնում հնչեցնելով «ահագանգ» կորստյան վտանգի առաջ կանգնած մշակութային արժեքներն անհապաղ փրկելու համար: Անխոս, ժամանակը ցույց կտա, թե արդյո՞ք գիրքը իսթան կհանդիսանա պատկան մարմիններին ուղարկություն դարձնելու նաև ոչ պակաս արժեքավոր և քաղաքական առումով նաև առաջնային այս կոթողների վերականգնմանն ու ամրակայմանը:

Ինչ վերաբերում է Հայաստանում XVIII–XX դդ. կառուցված հունական եկեղեցիների արտաքին քանդակային հարդարանքին, ապա այն զուսպ ու պարզունակ է, ինչը չի կարելի ասել կոթողային հուշարձանների, ի մասնավորի՝ սյունաձև-բազմահարկ տապանաքարերի մասին: Մինչև 2,5 մ բարձրության այս կոթողները կազմված են վերադիր մինչև հինգ մասից՝ հարդարված բուսաներկրաչափական, խաչային, մարդադեմ, աշխատանքային գործիքների պատկերաքանդակներով, որոնց վերնամասը, սովորաբար, պակվում է առանձին կերտված թևավոր խաչով կամ եկեղեցու զմբեթով ի «պատիվ» քրիստոնյա ննջեցյալի: Տեղին է հեղինակի այն նկատառումը, թե «այսպիսի մահարձանները (մասնավորապես՝ Լոռու, Սյունիքի) հայկական տապանաքարային արվեստի հետ ևս զուգահեռներ ունեն» (էջ 195): XIX–XX դդ. հայկական օրորոցաձև տապանաքարերի կողքին հաճախադեպ են նաև սյունաձև հորինվածքով կոթողները, որոնք ևս հարդարված են համանման պատկերաքանդակներով և հիշատակագրությամբ: Կցանկանայինք ծանոթանալ քննվող ժամանակաշրջանի հունական տապանազրերի բովանդակային առանձնահատկություններին՝ հասկանալու համար հունական և հայկական հիշատակագրությունների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները, քանի որ, ննջեցյալի մասին կաղապարային տեղեկություն հաղորդելուց զատ, հայկական տապանազրերում (և, հատկապես, սյունաձև տապանաքարերի նիստերին) ամփոփվում էին նաև բանաստեղծական, աֆորիզմային ուղագրավ նմուշներ՝ ուղղված ընթերցող-հիշողներին: Օրինակ՝ ՀՀ Սյունիքի մարզի Տանձատափ գյուղի գերեզմանոցի սյունաձև տապանաքարերից մեկին ննջեցյալի անունից «ասվում է»․ «Անցո՛րդ, չպարծենաս, ես իմ սեփական տանն եմ, իսկ դու հյուր ես»: Կամ Վաղարշապատի Ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանոցի սյունաձև մահ-

արձանին կարդում ենք Հովհ. Թումանյանի հայտնի պոեմի հետևյալ տողերը. «Անց են կենում սեր ու խնդում, // գեղեցկություն, գանձ ու գահ, // մահը մերն է, մենք՝ մահինը, // մարդուս գործն է միշտ անմահ» և նման այլ օրինակներ:

Աշխատության վերջին՝ «Հայաստանի հունաբնակ բնակավայրեր» գլխում այբբենական կարգով ներկայացված են Հայաստանի այժմյան և երբեմնի հունաբնակ շուրջ երկու տասնյակ բնակավայրերը (ՀՀ Շիրակի մարզ՝ Գյումրի, Բայանդուր, Հովտուն, Լոռու մարզ՝ Ախթալա, Ալավերդի, Բենդիք, Կողես, Մաղան, Յաղղան, Շամլուղ, Ջիլիգա, Տավուշի մարզ՝ Տանձուտ, Կոտայքի մարզ՝ Հանքավան, Սյունիքի մարզ՝ Ագարակ, Կավարտ, Շիրակի մարզ՝ Արցախի Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղը, ինչպես նաև Նախիջևանն ու Երևանը): Հաղորդվող տեղեկություններն ուղեկցվում են պատմական-աղբյուրագիտական, տեղագրական, վիճակագրական, հաճախ նաև՝ ճարտարապետական ու ազգագրական նյութի զուգորդմամբ, կից սև-սպիտակ, վերջում նաև՝ գունավոր լուսանկարներով: Պարզվում է, որ, օրինակ, Ախթալայում հունական համայնքը ձևավորվել է դեռևս XVIII դ. երկրորդ կեսին, Ագարակում՝ XIX դ. կեսերին, իսկ բնակչության հիմնական զբաղմունքը հանքարդյունաբերությունն էր:

Ավելորդ չենք համարում նշել, որ ուսումնասիրությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Չնայած շարվածքում առկա տեխնիկական վրիպակներին՝ շարադրանքը սահուն ու ընկալելի է: Բուն նյութին կից են Հունաստանում Հայաստանի, Նախիջևանի հուշարձանների, հայ-հունական մշակութային կապերի վերաբերյալ 1993–2017 թթ. հեղինակի կարդացած դասախոսությունների հայտագրերը (էջ 483–485), ապա նաև՝ օգտագործված հիմնական գրականությունը (էջ 582): Նման ստվարածավալ հատորի համար պիտի կարևորվեր նաև անվանացանկերի կազմման անհրաժեշտությունը, որը, ցավոք, չի արվել:

Բարձր ենք գնահատում մնայուն այս աշխատանքի աղբյուրագիտական արժեքը, իսկ նրա հեղինակին՝ Արգամ Այվազյանին, մաղթում ուժ ու եռանդ՝ հայոց պատմության դարավոր նշխարները կյանքի կոչելու առաքելության մեջ:

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ավագ գիտաշխատող, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայկական վիճակագրություն, միջնադարյան հնագիտություն, ձեռագրագիտություն, գրչության կենտրոնների ուսումնասիրություն: Հեղինակ է 8 գրքի և 76 հոդվածի: [ars.vimagraget@gmail.com](mailto:ars.vimagraget@gmail.com)

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. Հայերենը և կելտական լեզուները, (համեմատական-տիպաբանական տարբերակայնություն), *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 272 էջ\**:

Բանալի բառեր՝ հայերեն, կելտական լեզուներ, հ.-ե. հիմք-լեզու, հնչյունական գույքանություն, բառային գույքանություն, թեմատիկ խմբեր, Գ. Ջոլտա, Է. Մակաև, բարբառային հնաբանություն, ընդհանուր կելտական նախածև:

*Կելտական լեզուները հնդեվրոպական լեզվաընտանիքի այն լեզուներից են, որոնց հետ հայերենը կարող էր ունենալ միայն ծագումնաբանական բնույթի առնչություններ, քանզի հայերն ու կելտական ժողովուրդները (իռլանդացիներ, շոտլանդացիներ, գալլեր, պիկտեր և ուրիշներ) նախահնդեվրոպական միասնության տրոհումին հաջորդող հազարամյակների ընթացքում այլևս չփոփոխվել են ունեցել կամ գոնե առայժմ գիտությունը հայտնի չէ այդպիսի չփոփոխվել մասին: Ընդ որում, այս խնդիրը սկզբունքորեն կապ չունի հ.-ե. նախահայրենիքի տեղորոշման հետ: Ուստի առաջին հայացքից կարող է տրամաբանական հարց առաջանալ. եթե քննության առարկա լեզուների առնչությունները վերաբերում են մեզանից առաջ առնվազն 6–7 հազար տարվա հեռավորությանը (մ. թ. ա. 5–4-րդ հազարամյակներ) և, ըստ ամենայնի, միջնորդավորված են հիմք-լեզվով որպես վերջինի երկու ճյուղավորումները, ուրեմն գրախոսվող աշխատությունն ի՞նչ ներդրում կարող է բերել պատմահամեմատական հայերենագիտության մեջ, որն արդեն իսկ հայտնի չէր նախորդող շրջանի ուսումնասիրություններից:*



Այդ հարցի պատասխանն ակնհայտ է Վ. Համբարձումյանի «Հայերենը և կելտական լեզուները» աշխատության հետ նույնիսկ պարզ ծանոթությունից: Այն է.

1) Այս գիրքն առաջին համակողմանի մենագրական ուսումնասիրությունն է հայերենի և կելտական լեզուների հնչյունական համակարգի ու բառապաշարի ծագումնաբանական առնչությունների մասին, և դա ինքնին կարևոր փաստ է: Մինչև օրս հայերենի և կելտական լեզուների ծագումնաբանական ընդհանրությունների մասին տվյալները տեղ են գտել առհասարակ հ.-ե. հին լեզուների հետ հայերենի չփոփոխվելի վերաբերող աշխատանքներում, հետևաբար դրանք իրողություններն արտացոլում են միայն ընդհանուր գծերով և հեռու են շատ թե քիչ ամբողջական լինելուց:

\* Ներկայացվել է 11. X. 2021 թ., ընդունվել է տպագրության 08. XI. 2021 թ.:

2) Մինչև այժմ եղած այսօրինակ ուսումնասիրությունները հիմնականում վերաբերել են հ.-ե. այն հին լեզուների հետ հայերենի առնչություններին (արիական լեզուներ, հունարեն, լատիներեն, խեթալուվիական լեզուներ, փոյուգերեն, թրակերեն և այլն), որոնց հետ իր զարգացման այս կամ այն փուլում հայերենն ունեցել է նաև տարածական (արեալային) շփումներ: Ըստ այդմ, ծագումնաբանական, այն է՝ նախալեզվից ժառանգած ընդհանրություններից բացի, եղել են նաև ուղղակի կամ միջնորդավորված փոխառություններ և փոխազդեցական տարբեր դրսևորումներ<sup>1</sup>: Հենց այն պատճառով, որ հայերենի և կելտական լեզուների անմիջական շփումների մասին տվյալներ հայտնի չեն, չնայած այն իրողությունը, որ կելտական ժողովուրդները հին ժամանակներից ունեցել են բավականին լայն սփռվածություն Եվրոպայի գրեթե ողջ տարածքում, իսկ հ.-ե. նախահայերենիքը Եվրոպան համարող վարկածների համաձայն հայերի նախնիները Փոքր Ասիա են եկել Եվրոպայից, հազիվ թե կարող է խոսք լինել հայերենի և կելտական լեզուների՝ միմյանց վրա ունեցած փոխազդեցությունների մասին: Ավելին, հայտնի չեն նաև միջնորդավորված փոխառությունների վկայություններ: Հետևաբար, այս աշխատությունն առաջին հերթին կարող էր հետապնդել հայերենի ու կելտական լեզուների ծագումնաբանական մերձավորության աստիճանը բացահայտելու նպատակ, որին էլ, ըստ էության, միտված է երկու՝ հնչյունաբանական և բառային մակարդակներում հեղինակի կատարած քննությունը:

Հայերենի և կելտական ճյուղի լեզուների ծագումնաբանական առնչությունների ուսումնասիրությունը կապված է որոշակի բարդությունների հետ այն առումով, որ միմյանց հետ պիտի զուգադրվեն, մի կողմից, մեկ լեզվով հայերենով, ներկայացված ճյուղի, մյուս կողմից՝ բազմաթիվ լեզուներով ներկայացված կելտական լեզվաճյուղի հնչյունական և բառային զուգաբանությունները: Ավելին, չնայած որ հայկական ճյուղը ներկայացված է մեկ լեզվով, բայց դեռևս նախորդ դարի 60-ական թվականներից հայերենի բարբառագիտական բանավեճերը ցույց տվեցին, որ արժանահավատ արդյունքների հասնելու համար հետազոտողը պիտի հաշվի առնի նաև հայերենի բարբառային հնաբանությունները (արխարիզմները), որոնք ոչ հազվադեպ ավելի հին են, քան գրաբարյան հայերենի համապատասխան ձևերը: Իհարկե, այդպիսի աշխատանքի իրագործումն անհամեմատ ավելի բարդ կլիներ, եթե արդեն իսկ չլինեին միմյանց հետ զուգադրելի լեզուների համեմատական քերականություններ, որոնցում համեմատական լեզվաբանության նախորդ դարի կեսերի նվաճումներին համահունչ սահմանված են ինչպես

<sup>1</sup> Հմմտ. Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940, II մաս, Երևան, 1951, Գ. Զահուկյան. Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, Մ. Աղաբեկյան. Հայ-իտալյան բառային առնչությունները. – Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1979, էջ 23–127, Ե. Խաչատուրովա. Հայ-հնդիրանական լեզվական շփումներ. – նույն տեղում, էջ 325–375, Գ. Джаукян, Л. Сараджева, Ц. Арутюнян. Очерки по сравнительной лексикологии армянского языка. Ереван, 1983.



Հ.-ե. հիմք-լեզու > դիտարկվող լեզու (տվյալ դեպքում՝ հայերեն կամ կելտական լեզուներ), այնպես էլ առանձին ցեղակիցների հետ դիտարկվող լեզվի ծագումնաբանական համապատասխանությունները: Բարեբախտաբար, արդեն իսկ ստեղծվել էին ոչ միայն այդպիսի քերականություններ, այլև համեմատվող լեզուների տարբեր խնդիրների, այդ թվում՝ հնչույթային և բառային յուրահաստություններին վերաբերող ուսումնասիրություններ, որոնց արդյունքների օգտագործումը զգալիորեն նպաստել է հեղինակի կողմից սույն մենագրությամբ առաջադրված խնդիրների լուծմանը<sup>2</sup>:

Աշխատանքի 6 գլուխներից առաջին երկուսը հայկական և կելտական լեզվաճյուղերի գրական լեզուների ու բարբառների ուսումնասիրությունների համառոտ տեսություն են, իսկ երրորդում ներկայացվում են նշված լեզուների ծագումնաբանական առնչություններն ըստ XX դարի երկրորդ կեսի պատմահամեմատական հնդեվրոպաբանության նվաճումների: Ակնհայտ է հեղինակի նախընտրությունը մասնավորապես է. Մակաևի, Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի որոշ հայեցակարգային նշանակություն ունեցող տեսակետների առնչությամբ: Հայտնի է, որ նշված հեղինակները մերժել են ավանդական հնդեվրոպաբանության մեջ բավականին խոր արմատներ ձգած այն պատկերացումը, ըստ որի՝ հայերենի հատկապես քերականությունը շատ է հեռացել ընդհանուրհնդեվրոպականից և չի կարող հուսալի միջոց ծառայել Հ.-ե. նախաձևերի վերականգնման համար: Այլ կերպ հայերենը համարվում էր Հ.-ե. լեզվարնտանիքի լուսանցքային լեզուներից մեկը, որի տվյալներին առաջնային նշանակություն չէր տրվում Հ.-ե. նախաձևերը վերականգնելիս: Այդ տեսակետի կրողներից էր նաև այնպիսի մեծավաստակ հնդեվրոպաբան և հայերենագետ, ինչպիսին է Ա. Մեյերն: է. Մակաևը, քննության առնելով Ա. Մեյերի տեսակետներն այդ առնչությամբ, ոչ միայն ցույց տվեց դրանք վերանայելու անհրաժեշտությունը, այլև առաջադրեց միտք այն մասին, որ, ընդհակառակը, հայերենին ավելի մեծ տեղ պիտի տալ հնդեվրոպական նախաձևերի վերականգնման գործում<sup>3</sup>: Ըստ Գամկրելիձե-Իվանով տանդեմի՝ հայերենը և գերմանական լեզուներն ավելի հարազատորեն են արտացոլում Հ.-ե. բաղաձայնական համակարգը, իսկ նրանցից առաջինի կարծիքով հայերենը այն լեզուներից է, որոնք պահպանել են նախալեզվի կատկային [(ГЛОТТАЛЬНЫЙ) ըստ Վ. Համբարձումյանի՝ «ձերպաձայնային», էջ 26] բաղաձայնների ռեֆլեքսներ<sup>4</sup>: Ճիշտ է, այս խնդիրը հայ-կելտական առնչությունների բուն քննությունից դուրս է, բայց որքանով այն արդի հնդեվրոպական համեմատաբանության կարևոր հարցա-

<sup>2</sup> Հմմտ. Г. Льюиси, Х. Педерсен. Краткая сравнительная грамматика кельтских языков. М., 1954; Кельты и кельтские языки. М., 1974; Германские языки. Кельтские языки. М., 2000; Э. Туманян. Структура индоевропейских имен в армянском языке. М., 1978; Г. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982 և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Э. Макаев. Значение армянского языка для реконструкции общиндоевропейского состояния. – ИФЖ, 1967, № 1, с. 75–90.

<sup>4</sup> Տե՛ս Т. Гамкрелидзе. Индоевропейская «глоттальная теория» и система древнеармянского консонантизма. – Միջազգային հայերենագիտական գիտաժողով (գեկուցումներ), Երևան, 1984, էջ 31–34:

դրուածներից է, և դրանով, ըստ էութեան, հնդեվրոպական լեզվաբանութեան մեջ սկզբնավորվեց որակական նոր փուլ, իսկ սույն ուսումնասիրութեան հեղինակն էլ, ըստ ամենայնի, հակված է այդ տեսակետին (էջ 23–28), որքան էլ որ այդ մասին գրքում ուղղակի նշում չկա, այդ հարցը շրջանցել չենք կարող: Մեր կարծիքով, ինչքան էլ արդի հայերենի որոշ բարբառներում կատկային հնչույթների տարբերակման փորձեր արվեն, առնվազն հին (= գրաբարյան) հայերենին այդպիսիք վերագրելու համար բավարար հիմքեր չկան, ինչպես որ հիմքեր չկան հին հայերենում շնչեղ ձայնեղ հպականների և հպաշփականների (հմմտ. բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛) հնչույթային կարգ տարբերակելու համար<sup>5</sup>:

Թեպետև առաջին երեք գլուխներն ունեն առավելապես բուն ուսումնասիրութեանը նախապատրաստող նշանակութիւն, բայց դրանց կարևորութիւնը չի սահմանափակվում այդքանով: Եթե հայերենագիտութեան անցած ճանապարհի և նրա ձեռքբերումների մասին ընդհանուր առմամբ տեղյակ է հայերենագիտութեամբ հետաքրքրված ընթերցողը, ապա նույնը չի կարելի ասել կելտական լեզուների դեպքում: Հետևաբար անգամ մասնագիտական շրջանակների համար երկրորդ գլուխը. գիտական նշանակութիւնից բացի, ունի ճանաչողական նշանակութիւն, առանց որի պարզապես անիմաստ կլինի աշխատանքի բուն նյութին անցնելը:

Չորրորդ՝ «Հնչյունական զուգաբանութիւններ» գլխում ըստ կիրառութեան դիրքերի (բառասկիզբ, բառամեջ ու բառավերջ) համակողմանի զուգադրական քննութեան են ենթարկվել հայերենի և կելտական լեզուների բոլոր հնչյունախմբերը (ձայնավոր, ձայնորդ, երկբարբառ, բաղաձայն)՝ նպատակ ունենալով բացահայտել Հ.Է. նախապեզու > հայերեն, Հ.Է. նախապեզու > կելտական լեզուներ հնչյունական (իմա՝ հնչույթային) անցումների համապատասխանութիւնները դիտարկվող լեզվաճյուղերում: Ինչպես նկատում է հեղինակը, եթե նախորդ ուսումնասիրողները նման դեպքերում երբեմն բավարարվել են միայն երևույթի մասին հիշատակումով, ապա սույն աշխատանքում դրսևորման բոլոր տեսակները հավաստված են համապատասխան օրինակներով: Մի հանգամանք, որը ոչ միայն դիտարկվող երևույթի արժանահավատութեան, այլև առհասարակ ուսումնասիրութեան նկատմամբ հեղինակային (գիտական) խստապահանջութեան ցուցիչ կարող է համարվել: Հեղինակային դիտարկմանն այն մասին, թե հաճախ հայերենի մեկ ձևի դիմաց կելտականում, այդ ճյուղի լեզվական բազմազանութեամբ պայմանավորված, առկա է մի քանի զուգադրելի (էջ 111), մենք կհավելեինք հետևյալը. նախընտրելի կլիներ հայերեն ձևերի զուգադրումը ոչ թե կելտական բազմաթիվ հնչյունական ձևերի, որն անհամարժեքութեան դրույթում է ստեղծում զուգադրվող լեզվական ճյուղերի միջև, այլ կելտական բազմազան ձևերի հիման վրա վերականգնված նախաձևերի հետ, որը թեականութեան որոշ բաղադրիչ կունենար այնքանով, որքանով առհասարակ ունեն վերականգնված նախաձևերը, բայց՝ կունենար այն առավելութիւնը,

Պատմագրական հանդես 2021 № 3 Историко-филологический журнал

<sup>5</sup> Այս խնդիրներին հանգամանորեն արդարաբանել ենք մեր «Հպական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը» հոդվածում (տե՛ս «ՎԷՄ», 2019, թիվ 2, էջ 107–136):

որ ավելի ակներև կդարձնեն համեմատությունները զուգադրվող ճյուղերի միջև: Սակայն դա առայժմ հնարավոր չէ, որովհետև կելտաբանությունը դեռևս չի առաջարկում կամ առնվազն բավարար չափով չի առաջարկում ընդհանուրկելտական նախաձևեր<sup>6</sup>:

Կելտական լեզուների հետ հայերենի բառային զուգաբանությունների [թվով 342 բառ, (էջ 113–124)] գերակշիռ մասը կազմում են հին իուլանդերենի ձևերի հետ զուգահեռները (թվով 256 բառ): Պատճառը, ըստ ամենայնի, մյուս լեզուների համեմատությամբ հին իուլանդերենի ավելի լավ ուսումնասիրված լինելն է: Բառային զուգաբանությունները նույնպես դիտարկված են տարբեր տեսանկյուններից. 1) ըստ կելտական առանձին լեզուների հետ հայերեն ձևերի քանակական հարաբերակցության, 2) ըստ հայերենի և այլ ցեղակիցների (արիական, գերմանական, իտալյան լեզուներ, հունարեն), ինչպես նաև՝ միաժամանակ դրանցից մի քանիսի հետ ունեցած զուգահեռների, 3) ըստ հայ-կելտական զուգաբանությունների հավաստիության տարբեր աստիճանների: Նշված դասակարգումների հիմքում հիմնականում նախորդ ուսումնասիրողների (Հ. Աճառյան, Գ. Զահուկյան, Գ. Զոլտա, է. Մակակ) աշխատությունների արդյունքներն են, երբեմն՝ դրանց վերազնահատումով և ստուգաբանական նոր առաջարկություններով: Կարծում ենք՝ այս հինգերորդ գլխի արժեքավոր մասերից պիտի համարել հայ-կելտական բառային զուգաբանությունների ցանկի ընդլայնումը Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» աշխատության մեջ տեղ գտած նոր համեմատություններով չնայած, ըստ աշխատության հեղինակի, դրանցում «չի հանդիպում հայ-կելտական որևէ բացառիկ զուգաբանություն» (էջ 161):

Աշխատության վեցերորդ՝ «Բառիմաստային (թեմատիկ) խմբերի առանձնացումը» գլխում հայ-կելտական առնչությունները ներկայացնող 342 բառերը դասակարգվում են ըստ իմաստային ընդհանրությունների: Առանձնացվում է այդպիսի 23 խումբ. 1) ֆիզիկական աշխարհ [հմտ. աստղ – միուլ. ser, կիր. sterenn (հ.-ե. < \*Hast<sup>h</sup>er-, - գետ – հիուլ. usca [ < հ.-ե. \*au(e)-, \*au-, \*ed-] և այլն), 2) մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն (հմտ. եղբայր – հիուլ. bráthir (< հ.-ե. \*bhrāter)), ... 8) հողագործություն, բուսականություն [հմտ. դաղձն – միուլ. deil (հ.-ե. < \*dhāl-, \*del-)], ... 23) դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ [հմտ. դու – հիուլ. tū (< հ.-ե. \*tu)]: Որևէ լեզվարնտանիքի կամ ցեղակից լեզուների բառապաշարի դասակարգումն ըստ թեմատիկ խմբերի լեզվաբանական աշխատանքի պրակտիկայում վաղուց կիրառվող եղանակ է, բայց

<sup>6</sup> Այդպիսի վերականգնումներ արվել են, օրինակ, սլավոնագիտության մեջ նախասլավոնական լեզու / ընդհանուրսլավոնական լեզու > սլավոնական լեզուներ (օր.՝ հին սլավոներեն) անցումների առնչությամբ (հմտ. А. Мейе. Общеславянский язык. М., 1951; А. Селищев. Старославянский язык, ч. I. М., 1951; А. Вайан. Руководство по старославянскому языку. М., 1952; С. Бернштейн. Очерк сравнительной грамматики славянских языков. М., 1961; Г. Хамбургаев. Старославянский язык. М., 1974 և այլն):

այդ մոտեցումն առաջին անգամն է կիրառվում հայ-կելտական բառապաշարի ծագումնաբանական ընդհանրությունն ունեցող բառերի նկատմամբ:

Վերոշարադրյալով հանդերձ՝ չենք կարող չասել հետևյալը. այդքան հանգամանալից քննությունից հետո տեղին կլիներ, որ հեղինակն անդրադառնար նաև հ.-ե. մյուս ցեղակիցների համեմատությամբ հնչյունական ու բառային զուգաբանությունների ոլորտներում հայերենի և կելտական լեզուների մերձավորության աստիճանի հարցին: Իհարկե, այդ «բացթողումը» կարող է բացատրվել այն իրողությամբ, որ սույն հետազոտությունը զուգադրում է միայն երկու լեզվաճյուղերի տվյալները, հետևաբար ինքնին մյուս ցեղակիցների հետ համեմատելու հնարավորություն չի ընձեռում: Մյուս կողմից, սակայն, կան հայերենի և հ.-ե. մյուս ցեղակիցների, այդ թվում՝ կելտականների միջև Գ. Ջահուկյանի կազմած հնչյունաբանական ու քերականական զուգաբանությունների աղյուսակները, որոնց տվյալների հետ առնվազն կարելի էր համեմատական անցկացնել կամ էլ, եթե ընդունելի են այդ աղյուսակների արդյունքները, նշել այդ մասին<sup>8</sup>:

Ամփոփելով արձանագրենք.

1) Վ. Համբարձումյանի «Հայերենը և կելտական լեզուները» գիրքն առաջին մենագրական ուսումնասիրությունն է նշված լեզուների ծագումնաբանական առնչությունների մասին և ինքնին ուշագրավ երևույթ է իբրև այդպիսին: Իհարկե, ինչպես արդեն տեսանք վերոշարադրյալում, գրքի արժանիքն ամենևին էլ չի սահմանափակվում միայն առաջինը լինելու հանգամանքով: Ավելին, առաջինը լինելը դեռևս չի կարող արժանիք համարվել, եթե այն քննություն չբռնի որպես գիտական արտադրանք: Իսկ որ սույն երկասիրությունը քննությունը հաղթահարել է, կարծում ենք՝ ակնհայտ է:

2) Գիրքը հայերենի և կելտական լեզուների հնչյունական և բառային ծագումնաբանական առնչությունների ոլորտում մինչև օրս կատարված ուսումնասիրությունների արդյունքների պարզ համադրում կամ ամփոփում է: Այն նշված բնագավառների ձեռքբերումները հարստացնում է նոր տվյալներով, ոչ հազվադեպ կատարում է լեզվաբանական գիտության համեմատաբար նոր նվաճումներից բխող ճշգրտումներ: Համակողմանի է հատկապես հնչյունական համակարգերի զուգադրական քննությունը:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

<sup>7</sup> Տե՛ս Գ. Ժաուկյան. Նշվ. աշխ., էջ 201–205; Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 90–97:

<sup>8</sup> Ըստ Գ. Ջահուկյանի աղյուսակների՝ հայերենի հետ հնչյունաբանական զուգաբանությունների մերձավորության առումով կելտական լեզուները միջին դիրք են զբաղեցնում հ.-ե. լեզուների միջև. ըստ հայերենի հետ «հնչյունական ընդհանուր հատկանիշների քանակի»՝ 7 (Գ. Ժաուկյան. Նշվ. աշխ., էջ 204, Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 96), իսկ ըստ կարևորագույն հնչյունաբանական զուգաբանությունների՝ 13 (Գ. Ժաուկյան. Նշվ. աշխ., էջ 204, Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 97):

ՀՏԴ 929:902/904(479.25) Մարտիրոսյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.  
ԱՆՎԱՆԻ ՀՆԱԳԵՏԻ 100-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ\*

Լրացավ հայ հնագիտության երախտավոր Հարություն Արտաշեսի Մարտիրոսյանի ծննդյան 100-ամյակը: Հ. Մարտիրոսյանը ծնվել է 1921 թ. մայիսի 1-ին Գյումրի քաղաքում: 1938–1948 թթ. սովորել է Երևանի



Հ. Մարտիրոսյանը Երկրորդ աշխարհամարտի տարիներին (րնտանեկան արխիվ):

պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ հրեթացս մասնակցելով նաև Երկրորդ աշխարհամարտին: 1948–1951 թթ. շարունակել է կրթությունը Լենինգրադի ասպիրանտուրայում, հաջողությամբ պաշտպանել թեկնածուական (1951 թ.), ապա դոկտորական (1965 թ.) ատենախոսությունները: Տարիներ շարունակ նա ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժինը (1959–1977 թթ.)՝ էապես նպաստելով հնագույն Հայաստանի մշակույթի և պատմության ուսումնասիրմանը:

Հ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ պեղված հուշարձանները զգալիորեն հարատացրել են հնագույն և հին Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության հենքը՝ դառնալով հեղինակի մենագրական ուսումնասիրությունների առարկա (1947–1958 թթ.՝ Կարմիր Բլուր, 1950 թ.՝ Գոլովինո, 1952 թ.՝ Գառնի, 1955 թ.՝ Կիրովական, 1956 թ.՝ Գեղարտ, 1957 թ.՝ Նոր Արեշ, 1962–1977 թթ.՝ Արմավիր, 1966–1971 թթ.՝ Գեղամա լեռներ և այլն): Նրա գիտական հետազոտություններն արտացոլվել են ութսունից ավել գիտական աշխատանքներում, որոնցից տասը մենագրություններ են: Թեպետ հեղինակի ուշադրությունը հիմնականում կենտրոնացած էր Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթների ուսումնասիրության վրա, սակայն այդ նա իրագործում էր կովկասյան և, ընդհանրապես, հինարևելյան հնագիտության ընդհանուր հիմնադրատի վրա: Ժամանակագրական առումով հնագետն անդրադարձել է հիմնականում մ. թ. ա. IV–I հազարամյակի առաջին կեսն ընկած ժամանակահատվածին առնչվող խնդիրներին: Թեմատիկայի տեսանկյունից կարելի է առանձնացնել հետաքրքրությունների երեք բնագավառներ՝ երկաթի դարի տեղական և ուրարտական մշակույթներ, բրոնզ-երկաթեդարյան հնագիտության պարբերացման և ժամանակագրության խնդիրներ, ժայռապատկերային արվեստ:

\* Ներկայացվել է 03. XI. 2021 թ., ընդունվել է տպագրության 12. XI. 2021 թ.:

Հ. Մարտիրոսյանի գիտական գործունեությունն սկզբնավորվում է Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. XII–VI դդ. նյութական մշակույթի հետազոտությամբ: Ուսումնասիրելով հրատարակված նյութերը (Ունակ, Լավար, Բեշտաշեն և այլն) ու շրջանառության մեջ դնելով նորերը (Գոլովինո, Կարմիր բլուր, Կիրովական, Լենինական, Ախթալա, Թաքիա) նա կարողացավ ճշտել Հայաստանի վաղ երկաթի ու երկաթի լայն տարածման շրջափուլերի դերը և նշանակությունը կովկասյան հնագիտության համատեքստում, ներկայացրեց դարաշրջանի տնտեսական ու մշակութային հարաբերությունների ընդհանուր պատկերը: Իր ուսումնասիրությունների արդյունքում առանձնացրեց զուգահեռ գոյատևող երկու հուշարձանախմբեր՝ տեղական և ուրարտական: Երկաթեդարյան հնագիտական հուշարձանների բնութագրման վրա հեղինակը կանգ է առնում «Раскопки в Головино» (1954 թ.) և «Город Тейшебаини» (1961 թ.) աշխատություններում:



Հ. Մարտիրոսյանը (աջ կողմում նստած) Կարմիր բլուրում (ընտանեկան արխիվ):

Հ. Մարտիրոսյանն որոշակի ավանդ ունի ուրարտագիտական խնդիրների լուսաբանման բնագավառում, որի համար հիմք հանդիսացավ նրա ակտիվ մասնակցությունը Կարմիր բլուրի և Արմավիրի պեղումներին: Թեյշեբաինին, Արգիշտիխինիլին, Նոր Արեշի ուրարտական կոլումբարիին և այլ հուշարձաններին նվիրված իր աշխատություններում Հ. Մարտիրոսյանն անդրադառնում է հիմնականում ուրարտական նյութական մշակույթի ու սոցիալ-տնտեսական կյանքի բնութագրմանը, փորձում վերականգնել ուրարտական քաղաքի պատկերը: Հեղինակի ուրարտագիտական աշխատությունների թագն ու պսակն է «Аргиштихинили» (1974 թ.) մենագրությունը, որը նյութի փաստագրման, ներկայացման և քննարկման տեսանկյունից հայ հնագետների ստեղծած աշխատանքների շարքում լավագույններից է: Վերոհիշյալ աշխատություններում Հ. Մարտիրոսյանն անդրադարձել է Ուրարտուի քաղաքական և հասարակական պատմության խնդիրներին, փորձել վերլուծել նյութական մշակույթին և պատմությանը վերաբերող տվյալները: Թեյշեբաինին վերաբերող աշխատանքներում նա հետազոտել է հիմնականում նախաուրարտական բնակավայրը, բնակելի թաղամասերը և վաղ

Հայկական դամբարանադաշտը: Այստեղ բուն ուրարտական նյութի քննարկումն ավելի շատ ծառայում է տեղական մշակույթի բնույթը բացահայտելուն, ի տարբերություն այլ հրապարակումների, որտեղ հիմնական շեշտը դրվում է ուրարտական (պետական) մշակույթի վրա:

Հ. Մարտիրոսյանի գիտական հետաքրքրությունների երկրորդ կարևոր բնագավառը Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան հնագիտության պարբերացումն ու ժամանակագրումն էր, որի շնորհիվ նրան առաջին անգամ Հայ հնագիտության մեջ հաջողվեց ստեղծել որոշակի ժամանակագրական սանդղակ: Հեղինակի հիմնական դիտողություններն ամփոփվել են «Армения в эпоху бронзы и раннего железа» (1964 թ.) Հայտնի աշխատության մեջ, որը հարցադրումների իր ընդգրկմամբ էական նորույթ էր Հայաստանի վաղ հնագիտության պատմության մեջ և կանխորոշեց նրա զարգացման հեռանկարները:



Հ. Մարտիրոսյանը (ձախից) և Կ. Ղաֆազարյանը Արգիշտիխինիլիում (Ս. Հարությունյանի արխիվ):

Հ. Մարտիրոսյանի հետաքրքրությունների երրորդ բնագավառը Հայաստանի ժայռապատկերների ուսումնասիրությունն էր: 1966–1971 թթ. ընթացքում նրա Գեղամա լեռներում փաստագրած ժայռապատկերները մեծ նորույթներ բերեցին լեռնաշխարհի բնիկների հոգևոր մշակույթի և տնտեսական կյանքի վերականգման գործում՝ լրացնելով Սյունիքի, Արագածի լանջերի ու հարակից շրջանների վերաբերյալ մինչ այդ կուտակված նյութերը: Այս խնդիրների ուսումնասիրությանը հեղինակը նվիրել է երեք մենագրություն և մեկ տասնյակից ավել հոդված-հաղորդագրություններ: Ընդ որում, դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ աշխատություններ, որոնցում նկարագրվում են ժայռապատկերները և փորձ է կատարվում դրանք թվագրել («Գեղամա լեռների ժայռապատկերները», 1971, 1981 թթ.) կամ վերականգնվում է դրանց իմաստաբանությունը, կրոնա-պաշտամունքային և արվեստաբանական նշանակությունը («Հայաստանի նախնադարյան նշանագրերը», 1973 թ.): Ծովի մակերևույթից մոտ 2000–3000 մ բարձրության վրա Սպիտակասար, Պայտասար, Զիարաթ և այլ հրաբխային գագաթներին պահպանված հարյուրավոր պատկերախմբերը Հ. Մարտիրոսյանի կողմից ուսումնասիրվեցին իրենց կատարման տեսնիկա-

կան ու ոճական հատկանիշների, սյուլժետային բովանդակության տեսանկյունից, դիտվեցին որպես Հայաստանի վաղ շրջանի բնակիչների պատմաբնագիտական հայացքների և նախնադարյան առասպելների ուսումնասիրության սկզբնաղբյուր: Պարզվեց, որ դրանք ներառում են մի շարք հաջորդական, իրար առնչվող ժամանակագրական խմբեր, որոնց սահմանները ճշտելու համար հիմք հանդիսացան այլ՝ ավելի հստակ թվագրություն ունեցող գուգադրվող առարկաները և դրանց պատկերագրությունը (խեցեղեն, արձանիկներ, բրոնզե գոտիներ, նետապալքներ, դամբանային սալաքարերի պատկերներ և այլն): Առանձնացվեցին ժայռապատկերների հինգ ժամանակագրական խմբեր, որոնք համընկնում են համապատասխան հնագիտական շրջափուլերին՝ թվագրվելով մ. թ. ա. VI հազարամյակից մինչև I հազարամյակի առաջին կեսն ընկած ժամանակահատվածներով:



Հարություն Մարտիրոսյանը (ձախից) և Վլադիմիր Մասոնը  
Զվարթնոցում (ընտանեկան արխիվ):

Հ. Մարտիրոսյանի գործունեության կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ փորձում էր իր գիտական ձեռքբերումները հանրամատչելի ձևով ներկայացնել ընթացող հասարակությանը: Նրա գրչին են պատկանում երկու գրքեր՝ նվիրված Հայաստանյան հնագիտությանը՝ սկսած քարի դարից մինչև ուրարտական ժամանակաշրջանը և Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնիկների հոգևոր մշակույթին («Քարե դարից Ուրարտու», 1971 թ. և «Գիտությունը սկսվում է նախնադարում», 1978 թ.), ինչպես նաև հայրենիքի ու սփյուռքի տարբեր հանրամատչելի պարբերականներում և թերթերում լույս տեսած մեկ տասնյակից ավելի հոդվածները, որոնցում հեղինակը լայն հասարակությանը մատչելի ձևով ներկայացնում է Հայաստանի տարբեր հուշարձաններում ընթացող պեղումների արդյունքները, հնագիտության զարգացման և հուշարձանների պահպանության հետ առնչվող խնդիրներն ու, ընդհանրապես, լուսաբանում Հայկական լեռնաշխարհի դերը հինարևելյան մշակույթների համատեքստում: Դրանցից մի քանիստում Հ. Մարտիրոսյանը փորձում է արդիականացնել հնագիտության խնդիրները, և այս պարագայում նա հանդես է գալիս ոչ միայն որպես գիտնական, ակտիվ քաղաքացի, այլև բացահայտում իր հրապարակախոսական տաղանդը:



Աշխատելով իր ժամանակաշրջանում ընդունված մեթոդներով, շնորհիվ իր խորաթափանցության և բազմակողմանիության՝ հնագետին հաջողվեց էապես զարգացնել վաղ հնագիտությունը մեր երկրում: Թեև Հ. Մարտիրոսյանն իր գիտական գործունեության ընթացքում հետազոտեց բազմաթիվ առանձին հուշարձաններ և խնդիրներ, սակայն հաջող կերպով կարողացավ նաև ընդհանրացնել առկա նյութը, երևույթները ներկայացնել իրենց ամբողջականության մեջ:



Հ. Մարտիրոսյանը Հրազդանի կիրճում (ընտանեկան արխիվ):

Թեև վերջին տարիներին բազմաթիվ տեղեկատվական ու մեթոդաբանական նորություններ են ի հայտ եկել համաշխարհային և, մասնավորապես, հայ հնագիտության ասպարեզում, սակայն Հ. Մարտիրոսյանի թողած գիտական հարուստ ժառանգությունը պահպանել է իր գործնական նշանակությունն ու արդիականությունը:


ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների սոցիալական և մշակութային պատմության խնդիրներ, ժամանակագրության և պարբերացման հարցեր: Հեղինակ է 3 մենագրության և ավելի քան 100 հոդվածի: pavetisyan@sci.am

ՌՈՒԲԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների բրոնզեդարյան հասարակություններին վերաբերող խնդիրներ: Հեղինակ է 2 մենագրության և ավելի քան 100 հոդվածի: r.badalyan@yahoo.com

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տնօրենի տեղակալ գիտական գծով: Գիտական հետաքրքրությունները՝ հնագույն Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի խնդիրներ: Հեղինակ է 2 մենագրության և ավելի քան 80 հոդվածի: arsenbobokhyan@yahoo.com

ՀՏԴ 929:7(479.25) Հոպիանոսիայան

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
(Ծննդյան 85-ամյակի առթիվ)\*



Հենրիկ Հովհաննիսյանի ութսունհինգամյա հոբելյանն առիթ է մեկ անգամ ևս անդրադառնալու հայ արվեստագիտության երևելիներից մեկի գործին, որ փուլ է ձևավորել այդ դաշտում:

Եվ ինչպես առիթն է պահանջում, փորձենք շրջագծել նրա կենսագրության կարևոր հանգույցները:

Ինչպես ինքն է իր մասին նշել, «ծագումով փախստական ու գաղթական» է (հակիրճ ինքնակենսագրական. մեքենագիր), ճիշտ այնպես, ինչպես շատ հայ մտավորականներ: Իր դեպքում «փախստականները» կարսեցի Եղիշե (Բարսեղ) քհն. Հովհաննիսյանն էր՝ պապը, որ ճեմարանական էր, որ դպրոց ուներ և հայրը՝ Վահան Հովհաննիսյանը,

որ հոր դպրոցում էր սովորել, ապա՝ առաջին համաշխարհայինի օրերին Ալեքսանդրապոլի ամերիկյան աղքատախնամ ընկերության դպրոցում: Ավարտելուց հետո ուսուցչություն էր արել Ղարաբաղից մինչև Լոռի, իսկ համալսարանական կրթությունից հետո՝ Թալինում:

1936-ին Լենինականում ծնված Հենրիկ Հովհաննիսյանը 1939-ից Երևանում է մեծացել: Սովորել է Գրիբոեդովի անվան դպրոցում, ապա Թատերական ինստիտուտի դերասանական բաժնում (1954–1958 թթ.): Ըստ էության, Հ. Հովհաննիսյանը դերասանական կրթությունից է բխեցնում իր թատերագիտական ընկալումները: Ավելին, բեմական փորձը համարում է անհրաժեշտություն թատերագետի համար, արվեստի այս տեսակը ներսից ճանաչելու հնարավորություն: Իր թատերագիտական կրթության հիմքն համարում է երեք ուսուցիչների՝ Տ. Շամիրխանյանի, Վ. Աճեմյանի, Ա. Գուլակյանի արվեստին հաղորդակից լինելը, հետագայում վերջին երկուսի մոտ ուսանելը:

Ինքն ասում է, թե մայրաքաղաքի մշակութային կենտրոնն այն տարիների ուրույն մթնոլորտով էականորեն ազդել է իր անձի ձևավորման վրա: Բայց առաջին հերթին, ընտանիքում համալսարանական հոր շուրջ ձևավորված գրական հայերենով ու եվրոպական մշակույթով ներծծված հոգևոր տարածքն է կանխորոշել, երևի, եվրոպական լուսավորիչների պատկերացրած «մշակութային մարդու» այն իդեալը, որ ցայսօր Հ. Հովհաննիսյանը տանում է իր հետ: Ու եթե անկեղծ լինենք, դա նրա մեծ անհատականության, թերևս, ամենաառիճնոց բնութագրերից է: Հետագայում, երբ ուղիղում աշխատելուց, Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո (1964 թ.)

\* Ներկայացվել է 27. X. 2021 թ., ընդունվել է տպագրության 03. XI. 2021 թ.:

նույն հաստատությունում աշխատանքի էր անցնում, ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ռ. Զարյանը նրան արգելեց թատերագիտական «առտնին» աշխատանքով զբաղվել. ուղարկեց Մատենադարան, որտեղ մի քանի տարի տքնաջան աշխատանքով հայ հին և միջնադարյան թատրոնը որոնելուց հետո Հ. Հովհաննիսյանը պետք է վերադառնար դարձած «եվրոպական իմաստով հայ»: Եվ այսօր թատերագետ լինելուց առաջ նա եվրոպական իմաստով այն մշակութային հայն է, ում աշխարհայացքը, մտածողությունն ու գործունեությունը եվրոպական «նոր ժամանակների» քաղաքակրթական ամենաբարձր գաղափարներով են պայմանավորված:

Չնայած, որ ՀՀ գիտություն վաստակավոր գործիչ (2003 թ.), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2006 թ.), Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանակիր (2021 թ.), արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի գործունեությունն արդեն 60 տարի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում է ծավալվում (թատրոնի բաժնի վարիչ, գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի նախագահ՝ 1995-ից), այդուհանդերձ, գործունեության դաշտեր ունի, որ ներառում են կրթության և հեռուստատեսության ոլորտները: Ուստի, խոսքի մասնավոր բնույթի անխուսափելիությամբ, հարկ համարեցինք դառնալու այն ոլորտին, որ Հ. Հովհաննիսյանի հոգևոր կեցութան հասցեն է՝ արվեստագիտություն, թատերագիտություն:

Բնավ վերապահելի չէ այն, որ երաժշտագետն է գրում թատերագիտական իրողությունների մասին, որովհետև Հ. Հովհաննիսյանի թատերագիտական վաստակը գնահատողը ես չեմ և այստեղ դա չէ իմ նպատակը: Հայ թատերագիտություն, լայն առումով արվեստագիտության մեջ նա տասնամյակներ շարունակ խորքային զարգացումներ է ապահովել, սկզբունքներ սահմանել, ամբողջական ոլորտներ բացահայտել, ձևավորված կադապարներ ջարդել և, վերջապես, թատերագիտության իր ընկալումներն ու ձևակերպած դրույթները հասցրել է մինչև արվեստի փիլիսոփայության ձևաչափ: Ուստի, այս ժառանգությունը խոսք է ասված բոլորիս, անկախ մասնագիտական թեքությունից: Հեղինակի տարեդարձը, երևի, հարմար առիթ է ճշտելու, թե հասկացա՞նք կամ ինչպե՞ս հասկացանք մեզ ասված խոսքը:

Մեկ տասնյակ և ավելի կազմող մենագրություններում Հ. Հովհաննիսյանը ձևակերպել է դրույթներ, հայեցակետեր, որ կարող են խմբավորվել մի քանի առանցքային գաղափարների շուրջ: Առհասարակ հեղինակը պատրաստակամ է մեկ-երկու էջով հստակ շարադրելու իր ողջ գիտական վաստակի հիմնատարները կամ մշակած թեզերը: Դա, թերևս, բարձր գիտական նույնության և ճշգրտության ձգտող ոչ ճշգրիտ գիտություն համար հարգանք ներշնչող չափանիշ է, որ դարձյալ սահմանում է Հ. Հովհաննիսյանը:

Որպես թատերագետ իր գործը երեք հունի մեջ է տեսնում՝ թատրոնի պատմություն, տեսություն և պակաս ակտիվությամբ՝ քննադատություն:

Ուրեմն թատրոնի պատմություն և թատերական արվեստի տեսություն. եթե մեկուսի դիտարկենք հայ թատրոնի՝ մեզ ավելի մոտ կանգնած մեծերին (օրինակ՝ Սուրեն Բոջարյանին) նվիրված հեղինակի ուսումնասիրությունները, ապա հայ թատրոնի պատմության վերաբերյալ նրա աշխատություններից ժամանակագրական որոշակիությամբ առանձնանում է «Հայ թատրոնի պատմություն. XIX դար» (վերջին խմբագրությամբ՝ Երևան, 2010) մենագրությունը: Հաջորդ շրջանը, որի ժամանակագրությունը հարաբերա-

կան ճշգրտություն ունի հայ թատրոնի իր հետազոտություններում, միջնադարն է: Հակառակ այն բանին, որ շատ էլ կողմ չէ եվրոպական գիտություն մեջ մշակված հասկացությունների փոխառությունը, այդուհանդերձ, որոշ հարաբերականություն հատկացնում է միջնադարյան Հայաստանի թատերական արվեստի ժամանակագրական երիզները («Թատրոնը միջնադարյան Հայաստանում», Երևան, 1978): Դրանից այն կողմ այս արվեստի հին և հնագույն շերտերն են, որոնք իր «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը» (Երևան, 1990), «Հնագույն դրաման Հայաստանում» (Երևան, 2010) աշխատություններում հեղինակը հրաժարվում է ժամանակագրական կարգի բերել՝ դիտարկվող խիստ կարևոր խնդիրները թողնելով հնագույն շրջանի մշուշոտ ժամանակներում ինչ-որ տեղ, առասպելական, վիպական մարմնի մեջ. այն ժամանակներում, երբ «միֆը», որպես մտածողության հիմնական ստորոգություն, դեռ չէր փոխարկվել «լոգոսով»:

Եթե այս կետից ետ դառնանք, կունենանք հայ թատրոնի պատմության ամբողջականության ձգտող փուլայնացում, որն այս գիտաճյուղի «գիտականացման» կարևորագույն հայտանիշերից է: Առհասարակ, մեզանում թատերագիտության ձևավորումն ու ինքնուրույնացումը, երևի, XX դարից է սկիզբ առնում և սկսվում է թղթակցային հրատարակումների ու հուշագրությունների բավիղներում, ապա արվեստագիտության և հայագիտության հարակից ոլորտների բանասիրության (Մ. Աբեղյան, Գ. Լևոնյան), ծիսագիտության (Վ. Հացունի), պարագիտության (Ս. Լխիցյան) և այլնի շրջանակներում կուտակում է հետազոտական նյութ և նախադրյալներ հետագա մասնագետ-թատերագետների աշխատություններում «ինքնուրույնանալու», «գիտականանալու»: Այդ գործընթացին առավել չափով նպաստած գիտնականների շարքում Հ. Հովհաննիսյանն առանձնանում է: Խոսքը սոսկ այս փուլայնացման մասին չէ: Հայ թատրոնի պատմության տարբեր ժամանակավորներն իրենց հիմնական հատկանիշներով բնութագրելուն առընթեր, նրա աշխատություններում մշակվեցին զուտ տեսական կամ ընդհանուր տեսական բնույթի հարցեր, մասնագիտական եզրերի և եզրաբանական արտահայտությունների համալիր, թատերագիտական հիմնախնդիրների որոշարկված շրջանակ, որոնք ժամանակագրական ողնաշարի վրա հավաքելիս հայ թատերագիտությունը հաղորդում են գիտաճյուղին պատշաճ ճշգրտություն և գիտականություն:

Երաժշտագիտությունը, որ թատերագիտության հետ բազում առնչակից կետեր ունի, իր տեսական հիմքի և իր տեսաբանների համար սահմանել է բարձրագույն գնահատականի չափ. երաժշտագետ-տեսաբանի մեծագույն երախտիքն առանձին տեսություն, տեսական համակարգ ձևավորելն է: Այս տեսանկյունից Հ. Հովհաննիսյանի՝ հնագույն դրամային նվիրված հետազոտությունները հատում են հայագիտության շրջանակը և հայկական մշակութային շերտերի վրա հնար ընձեռում հեղինակին՝ կառուցելու դրամայի ծագման իր տեսությունը:

Իհարկե, դրամայի ծագման վերաբերյալ տեսությունների պակաս չի եղել: Արվեստի ծննդաբանական միջավայրի մասին գոյություն ունեցող պաշտամունքային հայեցակարգի մեկնակետից դրամայի ծագման փնտրտուք իրականացվել է: Բնական է, որ հարցը քննել են, առաջին հերթին, հին հունական ողբերգության շրջագծում և նշմարել դրա դիոնիսյան պաշտամունքի հիմ-

քերը: Որոշ քննախույզ մոտեցումներով այս էլ հասցվել է մերձավորարևելյան հնագույն մշակույթի եզերքը և այդքանը, կարծեք, բավարար է համարվել:

Հ. Հովհաննիսյանն այլ կերպ է մոտենում հարցին: Նախ, եթե դիոնիսյան պաշտամունքային հիմքի հետ գործ ունենք, ապա գործ ունենք տարեշրջան խորհրդանշող մեռնող-հառնող դիցույթի հետ: Այստեղից էլ դրամայի հիմքում տարեկապի ծիսական պաշտամունքային տարրերի, անհատնում ժամանակի և ճակատագրի գաղափարները: Ու եթե հին հունական դրամայի դրամատուրգիական ողնուցը ճակատագրի դեմ ըմբոստացող անհատն ու նրա զոհաբերությունն է, ապա այդպիսի «ճակատագրի զոհը», որ կամ էսքիլոսի անունով, կամ Եվրիպիդեսի ժամանակներից հասել է, Պրոմեթևսն է հին հույների հոյակերտ արվեստով սրբագործված շղթայվածը: Սակայն նույնիսկ Պրոմեթևսի դեպքում առասպելն ու դրաման իրենց պատումային շոշափուկները երկարում են մինչև Կովկաս:

Հ. Հովհաննիսյանը, սիդերական միստերիաները մտքում ունենալով, ավելի առաջ է գնում: Հստակեցումները, որ առաջարկում է, նախ, հենվում են առասպելի հիմքում ընկած մողելի, եզրի իր թարգմանությունները՝ պայմանաձևի բազմաթիվ փոխակերպումներն իրար բերելու վրա: Արդյունքում Առաջավոր Ասիայի լայնություններում որոշակիորեն առանձնանում է Հայկական լեռնաշխարհը, որպես շղթայվածի առասպելի բնօրրաններից մեկը: Հավերժական բռնավորի այս հայրենիքը հնագույն սրբազան տարածքների աշխարհագրական կոնկրետություն ունի, որի ներսում փակյալը տառապում է կամ Մասյաց անձամբներում, կամ Վասպուրական աշխարհի Ագռավի քարում, կամ էլ Հայաստան երկրի երբեմնի հարավային գագաթ Սաբայանի կիրճերում: Ի դեպ, աշխարհի ավերման ու նորոգման հերթական լուրին սպասող Մհերը բանտված է բախտի (ճակատագրի<sup>6</sup>) անիվի հարևանությունում (Չարխի Փալաք), որ Մհերի դուհից քիչ այն կողմ է, նույն ժայռի (Ագռավի քար) սրտում: Սա էլ իր հերթին, թերևս, հավաստում է հեղինակի կողմից շղթայվածի ու ճակատագրի գաղափարական թելերից կապած հանգույցի ամրությունը:

Բայց ինչպե՞ս են պաշտամունքը, ծեսը, առասպելը, միթաբանական գաղափարը «թատերայնանում»: Հ. Հովհաննիսյանի դրամայի տեսություն կարևոր օղակներից մեկն էլ, արդեն, դասական միջնադարի ավարտին հասած հայաստանի վկայությունն է, ըստ որի՝ հնում առասպելը կենցաղավարում էր «գլխօք եւ թէատրոնօք» (հմմտ. «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը», էջ 25):

Ուրեմն, սա դրամայի ծագման մասին ուրույն տեսություն է՝ իր հնագույն պաշտամունքային-ծիսական շերտերով, թատերային կատարման ձևերի հիշատակմամբ և գրավոր աղբյուրների վկայությամբ ամբողջական ու վավերական, և անկասկած է, որ այս հարցի առնչությամբ Հ. Հովհաննիսյանի տեսությունն արդեն հայագիտության ու հայ գիտնականի ավանդն է համաշխարհային գիտության մեջ:

Երևի մեր արժանապատվությունը շոյեր այն գաղափարը, որ հազարամյակներ շարունակ անընդմեջ ապրող թատրոն ենք ունեցել, այն էլ բառի գրեթե դասական իմաստով: Հ. Հովհաննիսյանի հայ միջնադարյան թատրոնին նվիրված ուսումնասիրության տեսանկյունից դա մոլորություն է: Միջ-

նադարում դրաման իր սովոր կերպի մեջ անկում է ապրում: Աշխատությունների ճակատին արձանագրված Դավիթ Անհաղթի սթամբուլյան խոսքերը ստիպում են մտածել դիտարկվող առարկայի բնույթի մասին: Եթե առարկան թատրոնն է, ապա հայկական միջնադարում նրա բնույթը շատ տարբեր էր դասական թատրոնից և մեր պատկերացրածից: Ըստ էության, այդ բնույթի հստակեցումն է եղել հեղինակի հիմնական խնդիրը: Հստակեցումներն էլ իրացվել են միջնադարյան թատրոնի գրավոր հիմքերի, կենցաղավարման ձևերի, միջավայրի, տեսակային արտահայտությունների շրջանակը գծելով:

Հ. Հովհաննիսյանի հետազոտության մեջ մեր «թատրոնական մոլորություն» որոշ երեսակներ ուղղակի եղծվում են: Օրինակ՝ այն, որ միջնադարում եկեղեցական արարողությունը, պատարագային ծեսը թատրոն է, հիմնավորվում է գործառույթային (ֆունկցիոնալ) և գեղագիտական կողմնորոշիչների կիրառությամբ. ասենք, այսպես՝ Ս. Պատարագին մասնակից համայնականն ու թատերական ներկայացմանը ներկա հանդիսատեսը տարբեր նպատակներ են հետապնդում: Իսկ եթե հոգևոր դրաման կարող է հասկացվել որպես թատրոն՝ միջնադարում, ապա դրա հետքերը մեզանում Հ. Հովհաննիսյանը գտնում է երկու արտահայտությամբ, զարգացած միջնադարի համբավվոր հեղինակների գրավոր ժառանգության մեջ («Միջնադարյան բեմ. թատրոն – եկեղեցի հարաբերությունը և հայ հոգևոր դրաման», Երևան, 2004):

Մեզ համար, հատկապես, թանկ է միջնադարյան մի շարք եզրաբանական կարգի բազմիմաստ բառերի արվեստաբանական նշանակության որոշարկումը: Հաճախ այդ նշանակությունն այնքան բազմաշերտ է, որ բառի իմաստաբանական փեշերը փռվում են յոթ ազատ արվեստներից (որ այսօրվա արվեստները չեն)՝ մեկ-երկուսի, ապա նաև մեր գիտակցած արվեստներից մի քանիսի տիրույթներում: «Հագներգությունը», «Երգք ցցոց եւ պարուցը» այդ շարքից են: Դրանց հիմքով վերակառուցված պարերգական դրաման, փաստորեն, թատերական դրսևորում լինելով հանդերձ, հայ միջնադարյան աշխարհիկ պրոֆեսիոնալ (ժողովրդապրոֆեսիոնալ) երաժշտական արվեստի հիմնական տեսակային արտահայտություններից մեկն է նաև:

Գայթակղությունս չկանխելով՝ նկատեմ, որ արդի երաժշտագիտության մեջ հայ ավանդական երաժշտաբանաստեղծական արվեստի միջնադարյան և ներտեսակային կարևոր որոշարկումներ կարելի է անել հենց Հ. Հովհաննիսյանի այս մշակումների կիրարկմամբ: Մասնավորաբար՝ «ժողովրդականի» և «ժողովրդապրոֆեսիոնալի» սահմանազատումները, վերջինիս ներսում «գուսանականի» ու «աշուղականի» տարբերակումները մեծ չափով դյուրանում են արվեստագիտական այս մշակումներով: Իհարկե, միշտ էլ հնարավոր էր գուգահեռներ տանել գուսանական արվեստի որոշ դրսևորումների և հին հունական «ուպսոդիայի», «հիպորխեմայի» ու տեսակային այլ արտահայտությունների միջև: Սակայն Հ. Հովհաննիսյանի դիտարկումները խնդիրը դուրս են բերում ենթադրությունների, մոտավոր գուգահեռների հեղհեղուկ տիրույթից և հայկական միջնադարի վկայված եզրաբանական ձևակերպումներով առավել չափելի դարձնում:

Բարձր միջնադարից հետո ևս կարող ենք թատերային էություն որոնել հայ արվեստի ամենատարբեր դրսևորումներում, գուցե և հաջողենք, սակայն փաստ է, որ հայ թատրոնի միջնադարյան ավանդույթն իր պատմա-

կան օրինաչափ զարգացումն ու նոր ժամանակների բնական փոխակերպումը չունեցավ: Խզումը կիլիկյան արքաների պալատական մշակույթի և նոր ժամանակների հայ թատրոնի միջև պատմական բնական ընթացքի խափանումն է, որ XIX դ. թատրոնը պայմանավորում է որպես այլ բան՝ եվրոպական ընդգծված իմաստավորումով:

Դասական ընկալմամբ թատրոնի յուրացումը մեզանում XIX դ. իրողությունն է, և ինչպես հայ արվեստի մյուս տեսակների պատմության մեջ, այնպես էլ թատրոնի, եվրոպական արվեստի տեղայնացումն ու ազգայնացումն իրականացվել է որոշակի համադրումների, ապա ներհյուսումների միջոցով: Հայ թատրոնի պատմության մեջ Հ. Հովհաննիսյանն է, որ մատնացույց է անում այդ համաձուլումներից առանցքայինը: Այն եվրոպական մեղոդրամի և XIX դ. հայ մշակութային իրականության մեջ շրջանառու ազգային-ազատագրական թեմաների ու սյուժեների համակցումն է:

Մեզանում Հ. Հովհաննիսյանն այս թատրոնը բնութագրել է որպես դերասանական թատրոն, որում մյուս կարևոր գործառույթը դրամատուրգին է, այլ ոչ բեմադրիչին: Թատերական արվեստի տարբեր միտումների, բնութագրիչների ու բնութագրերի հստակեցմանն առնթվեք հեղինակն ամբողջացրել է հայ թատրոնի երևելիների հաջորդությունը XIX դ. պատմության մեջ, ըստ վաստակի կարևորության, արևմտահայ ու արևելահայ թատրոնում: Եվ այդ երևելիները, ըստ ասվածի, հիմնականում դերասաններ են (նաև դերասանապետի կամ թատերապետի կարգավիճակով), ապա հեղինակներ: Ինձ համար գայթակղիչ է այդ շարքում առանձնացնել Տիգրան Չուխաճյանին, Հակոբ Վարդույանին և Սերովբե Պենկյանին: Այս անձերով Հ. Հովհաննիսյանը չի շրջանցել նաև երաժշտաբեմական ժանրերի արմատավորումը մեզանում՝ օպերայի, օպերետի տեսակներով: Ավելին, ներկայացրել է երաժշտական և դրամատիկ թատրոնների գիրկընդխառն զարգացումը, որը, երևի, այլոց մոտ էլ այդպես էր:

«Հայ թատրոնի պատմություն. XIX դար» աշխատությունն իր ամբողջականությամբ և մշակվածությամբ կանգնում է հայ արվեստի մյուս տեսակների պատմական հիմնարար հետազոտությունների շարքում, որպես հայ թատրոնի պատմության մեջ եղած սպիտակ էջերի արժանի լրացում:

Հ. Հովհաննիսյանի գուտ տեսական ուսումնասիրությունների առանցքը կազմում են նաև «Բեմական խոսքի պոետիկան» (Երևան, 1973) և «Դերասանի արվեստի բնույթը» (Երևան, 2002) աշխատությունները:

Առաջինում քննված են թատերական արվեստի «կազմախոսությունն» առնչվող հարցեր: Արվեստի այս տեսակը, որ գոյանում է բեմական և գրական, ըստ էության, իրարից անկախ արվեստների լծակցումից, այդ շրջանակում իսկ ունի ներքին փոխհարաբերությունների ոչ պարզ գծագրեր: Դրանց հնարավոր բազմապիսիությունը տեղավորվում է «գրական թատրոն» և «թատրոնից կախյալ դրամատիկական գրականություն» բեկոնների միջակայքում: Հարաբերման տրամաբանության հիմքում «տարբեր և միասնական» սկզբունքն է՝ Հ. Հովհաննիսյանի կողմից ձևակերպված: Սակայն պոետիկական հարցերի քննարկման ետնախորքին հեղինակը հակասություն է տեսնում՝ դրանց ընդհանրության և արտահայտչայեզոնների տարբերությամբ արտահայտված: Այս հանգույցից էլ, ի վերջո, հասնում է այն գաղափարին, որ բեմական խոսքն ինքնուրույն գեղարվեստական հա-

մակարգ է: Դրա բեմական ելևէջն ու ձայնատվությունը, առողանությունն ու տրոհությունը, չափն ու ուրիշներ, թեև քերականական հիմքից են, սակայն պայմանավորվում են բեմական պոետիկայի թելադրանքով: Թատերային են, դրամատիկական են, բնութագրում են բեմական խոսքի արվեստը՝ տարբերելով այն հրապարակային խոսքից: Այս աշխատության մեջ արծարծված առանցքային գաղափարից մեկին՝ հնչող խոսքին շողկապված, արդեն երևում է դերասանի արվեստի բնույթը, որպես արվեստագիտական քննարկման հանգույց (էջ 185):

Դերասանի արվեստը, որպես գեղարվեստական համակարգ, Հ. Հովհաննիսյանն է առաջին անգամ ձևակերպում («Դերասանի արվեստի բնույթը»): Զուտ թատերագիտական եզրաբանական «գործիքները», որ հստակեցված են ու կիրառելի, ձևավորում են այս գիտության եզրաբանական աստիճանակարգության ողնուցը մեզանում: Դրանցից են բեմը, «դրությունը», գործողությունը, խաղը, ներքին ձևը, խոսքային իրադրությունը և այլն: Առանցքային ստորոգություն է դիտվում խաղային տարերքը, որպես քննարկվող հարցի շուրջ հեղինակի մոտեցումներն առավել չափով պայմանավորող ելակետ: Վերջինն ինքնուրույնաբար այնքան է ընդգծվում գիտնականի առաջարկած հայեցակարգում, որ դիտվում է որպես դերասանի արվեստի հիմնական սկզբունք, ձևային հիմք: Այս ձևաչափով խաղի՝ Հ. Հովհաննիսյանի ընկալումը մոտենում է փիլիսոփա Յ. Հայզինգայի հայացքներին: Ուրեմն զարմանալի էլ չէ, որ փիլիսոփայի «Homo Ludens» (Երևան, 2007) աշխատության հայերեն հրատարակության առաջաբանն ու եզրափակիչ հոդվածն իրենն են:

Դերասանի արվեստի իր հայեցակարգի առանձնահատկություններն են, որ ստիպում են հեղինակին վերապահորեն ընդունել Կ. Ստանիսլավսկու հանրահռչակ տեսությունը («Ստանիսլավսկու «սիստեմը» և խաղի պարադոքսը», Երևան, 2012): Խնդիրն ամենևին էլ այն հերքելը չէ: Ավելին, որոշ հանգույցներում հեղինակը նույնիսկ կարևորում է Ստանիսլավսկու առաջադրած դրույթները: Բեմում նպատակով պատճառականացված ներկայությունը դերասանի խաղի կարևոր սկզբունք է: Անհամաձայնության առիթն այլ է: Դեռևս անցյալ դարի սկզբին դերասանական արվեստը պայմանավորող հիմնական գործոններից մեկը համարվեց հոգեբանականը: Հեղինակը Կ. Ստանիսլավսկու «սիստեմը» տրամաբանական հետևանքն է համարում երկու հոգեբանական երևույթների՝ ուղևորական ավանդույթում XIX դարավերջից ներկա հոգեբանական ուսուցիչի և XX դարասկզբից բիհեյվիորիստական ընկալումների: Թեև Ստանիսլավսկու տեսության և վերջինի միջև հակասություններ էլ կան: Հ. Հովհաննիսյանի պնդմամբ, Կ. Ստանիսլավսկու համար առավել նշանակալի էին կիրառական հոգեբանությունը և Ի. Պավլովի կազմախոսական հետազոտություններով պայմանավորված «արտաքին իմպուլսների հանդեպ արտաբերական հակազդման տեսությունը»:

Այստեղ նշենք, որ գեղարվեստական երկի հոգեբանականացումն այս փուլում հատուկ է ոչ միայն «դերասանությունը», այլև գրականությունն ու երաժշտությունը (նաև երաժշտական թատրոնին) առնվազն: Ուստի Հ. Հովհաննիսյանի դատողություններն այս հիմքով արդեն իսկ ստույգ և հավաստի են:



Սակայն «սխտեմում» հոգեբանականը գերաճում է գեղարվեստականի համեմատ: Դերասանի խաղում հոգեբանական գործոնի գերարժեքումը կտրուկ է կապն այդ խաղի և խոսքի միջև, ենթադասում է խաղային տարրերը, էսթետիկական համատեքստը. հեղինակը հիշում է, որ արդեն վաղուց ասված է, թե կիրառական հոգեբանությունը դերասանի արվեստ է:

Հետաքրքիր է, որ Հ. Հովհաննիսյանը հակասություններ է տեսնում «սխտեմի» և հենց Կ. Ստանիսլավսկու արվեստի միջև: Դրանցից մեկը դերասանի խաղում «արտաքին կերպաձևերի», «արտաքին ձևային տարրերի» միջոցով ներքին վիճակի հանգելու եղանակն է, որ Հ. Հովհաննիսյանի պնդմամբ կիրառելի է եղել Կ. Ստանիսլավսկու դերասանական փորձում, սակայն մերժելի՝ նրա տեսության մեջ:

Ստանիսլավսկու «սխտեմին» էլի անդրադարձ ունի. «Դերասանի ինքնաճանաչումը» գրքի (2020 թ.) երեք գլուխներից մեկն է: Թեև գրքի երեք առանցքը, իրականում, Վ. Աճեմյանի, Ա. Գուլակյանի ու Կ. Ստանիսլավսկու մեթոդներն են, այդուհանդերձ, այն կխմբավորելի Հ. Հովհաննիսյանի գրական ժառանգության մեջ: Մենագրությունը, որ երեք էսսեներից, թե պատումներից է բաղկացած, գեղարվեստական պերճ լեզվով, շարադրանքի ոճով ու ճկունությամբ, դիպուկ շտրիխավորված, տեղ-տեղ ռեյտեֆային մշակվածության հասնող կերպարներով կարող է մաս կազմել «Անդարձություն» (բանաստեղծություններ և թարգմանություններ, Երևան, 2014), «Լուովա բանահյուսության աիերին» (Երևան, 2014), «Ակեսիս» («Քառյակներ», Երևան, 2018) շարքին:

Ինչևէ, գիտնականի ողջ ժառանգության վերլուծության հավակնությունը չունենալով այս էլ բավարար է ասելու, որ Հ. Հովհաննիսյանը տվել է հայ թատրոնի պատմական պարբերացման առանցքները, հստակեցրել փուլային բնութագրերը, տեսակային հարստությունը, ազգային առանձնահատկություններն ու ընդհանրություններն համաշխարհային հետ. ստեղծել է դրամայի և դերասանական արվեստի իր տեսությունը՝ եզրաբանությամբ, կիրառելի հասկացությունների և, մանավանդ, թատերագիտական հիմնախնդիրների շրջանակով հանդերձ, ու որոշարկել նրա ինչպիսին լինելն արևմտյան թատերագիտական կողմնորոշիչների համեմատ:

Այս թանկ վաստակը, իր ունեցած գիտական մաքուր արժեքից զատ, մեզանում եվրոպական իմաստով մշակութային հայի ներկայություն փաստն է:

Մ Հ Ե Բ Ն Ա Վ Ո Յ Ա Ն

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ երաժշտության պատմության և տեսության հարցեր, հայ երաժշտական միջնադարագիտություն: Հեղինակ է 3 մենագրության և շուրջ 70 հոդվածի: mhernavoyan@gmail.com

ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)\*



Լրացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչական-արտադրական պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ Վաչե Խաչիկի Հովակիմյանի 70-ամյակը: Նրա շուրջ կեսդարյա գործունեությունը կապված է Գիտությունների ազգային ակադեմիայի հետ:

Վ. Հովակիմյանը ծնվել է 1951 թ. նոյեմբերի 7-ին Երևանում, պատմաբանների ընտանիքում: Հայրը՝ Խաչիկ Հովակիմյանը, ով մեծապես նպաստել է ապագա պատմաբանի և գրահրատարակչի մասնագիտական կողմնորոշմանն ու կայացմանը, հանրապետության քաղաքական և հասարակական անվանի գործիչներից էր, վարել է «Խորհրդային Հայաստան» թերթի գլխավոր խմբագրի, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահի պաշտոնները:

1973 թ. Վ. Հովակիմյանը գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Նույն տարում ընդունվել է Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրա՝ «Հայաստանի նոր դարի պատմություն» մասնագիտության գծով (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Գ. Գալոյան):

1979 թ. նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1984 թ.՝ ավագ գիտաշխատողի գիտական կոչում:

Իր գիտական գործունեությունը Վ. Հովակիմյանը սկսել է Պատմության ինստիտուտում: 1976–1981 թթ. աշխատել է սկզբում որպես գիտաշխատող, ապա 1981 թ. ինստիտուտի գիտական քարտուղար: 1981–1987 թթ. միաժամանակ եղել է նույն ինստիտուտին առընթեր գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդի գիտական քարտուղարը:

Վ. Հովակիմյանի ուսումնասիրությունների ոլորտը XIX դարավերջի Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և գյուղացիության պատմության հարցերն են: ԽՍՀՄ տարբեր արխիվներից հայտնաբերած և գիտական շրջանառության մեջ դրած մեծաքանակ փաստաթղթերի հենքի վրա նա խնդրո առարկա է դարձրել XIX դ. վերջին քառորդի արևելահայ գյուղացիական շարժումների պատմությունը, նաև առաջին անգամ հայ

\* Ներկայացվել է 10. XI. 2021 թ., ընդունվել է սպագրություն 15. XI. 2021 թ.:

պատմագրություն մեջ անդրադարձ է կատարել բանվորական շարժումների սկզբնավորման հարցին:

Վ. Հովակիմյանը երեսուներից ավելի գիտական աշխատությունների, XIX դ. արևելահայ գյուղացիության պատմությունը նվիրված մենագրության հեղինակ է և մի շարք գրքերի համահեղինակ:

1985 թ. նշանակվել է Գիտությունների ակադեմիայի հրատարակչության գլխավոր խմբագիր, 1991 թ.՝ տնօրեն: 2000 թվականից առ այսօր ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչական-արտատրական պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենն է: 2002–2005 թթ. համատեղության կարգով ղեկավարել է նաև Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հրատարակչությունը:

Ծանրակշիռ է Վ. Հովակիմյանի վաստակն ակադեմիական գրահրատարակչական ոլորտի զարգացման գործում: Ավելի քան երեսուն տարի ղեկավարելով համակարգի կարևոր օղակներից մեկը՝ անցումային տարիներին նա կարողացավ պահպանել հրատարակչության բնականոն աշխատանքները: Ակադեմիական մակնիշով լույս տեսած հազարավոր գիտական աշխատությունները և հանդեսները լուրջ ներդրում են գիտության մեջ: Դրանցից լավագույններն արժանացել են ՀՀ նախագահի, ՀՀ մշակույթի նախարարության, ԱՊՀ երկրների գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի մրցանակներին ու դիպլոմներին:

Գնահատելի է նաև Վ. Հովակիմյանի ավանդը հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակչության ուղղությամբ: Նրա գործուն մասնակցությամբ ընթերցողի սեղանին են գրվել Հովհ. Թումանյանի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ս. Շահազիզի, Լ. Շանթի, Ավ. Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակչությունները:

2008 թ. ԳԱԱ նախագահության որոշմամբ համակարգի գրահրատարակչության ոլորտում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ: Տարանջատ գործող հրատարակչությունը, ԳԱԱ գիտական հանդեսների և «Գիտություն» թերթի խմբագրությունները, տպարանը վերամիավորվեցին մեկ կառույցում: Հաշվի առնելով Վ. Հովակիմյանի մասնագիտական հմտություններն ու աշխատանքային հարուստ փորձը՝ նրան վստահվեց այս ոլորտի ընդհանուր ղեկավարումը:

Անվանի գրահրատարակիչն ԱՊՀ երկրների գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի գրահրատարակչական խորհրդի, «Научная книга» հանդեսի միջազգային խմբագրական կոլեգիայի, Դ. Ս. Լիխաչովի անվան ամենամյա մրցանակներ շնորհող փորձագիտական հանձնաժողովի (Մոսկվա), «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության» հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է:

Հայ գրատպության 500-ամյա հոբելյանի կապակցությամբ և գրահրատարակչության զարգացման գործում ներդրած ավանդի համար Վ. Հովակիմյանը ՀՀ նախագահի հրամանագրով 2012 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով: Ակադեմիական համակարգում արդյունավետ աշխատանքի և ծանրակշիռ վաստակի համար պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Վաստակագրերով»:

Վ. Հովակիմյանին բնորոշ են կազմակերպչական եռանդը, սկզբունքայնությունը և համեստությունը: Նա հիրավի վայելում է կոլեկտիվի անկեղծ սերն ու հարգանքը, որոնք նրա՝ որպես ղեկավարի երկարակեցության գրավականն են:

Մեր գործընկերոջը մաղթում ենք քաջառողջություն, երկար ու երջանիկ կյանք և աշխատանքային հաջողություններ գրահրատարակչական գործունեության ասպարեզում:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ – բ. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարակգբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, ավելի քան 230 հոդվածների ու հրատարակումների: patmhandes@rambler.ru

ՎԱՀԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ – Հրատարակիչների ազգային ասոցիացիայի հիմնադիր-գործադիր տնօրեն, «Հայաստանի գրքերը տպագրության մեջ», «Հեղինակային իրավունք» հանդեսների համահիմնադիր-խմբագիր, գրքի և գրահրատարակության ու պատմությանը նվիրված տասնյակ հրատարակությունների և ուսումնասիրությունների հեղինակ, խմբագիր: armnpa@gmail.com

ՀՏԴ 008(-11)

## ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ 50 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը (ՀՀ ԳԱԱ ԱԻ) հիմնվել է 1971 թ., դեռևս, 1958 թ. ստեղծված արևելագիտական սեկտորի հիմքի վրա: Հայաստանում արևելագիտական կենտրոնի ստեղծման գործում մեծ են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի, պ. գ. դ. Ն. Գ. Ինճիկյանի (սեկտորի ղեկավար 1958–1971 թթ.), ինստիտուտի առաջին տնօրեն (1971–1994 թթ.) ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանի, 1995–2006 թթ. տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ն. Հ. Հովհաննիսյանի ծառայությունները: 2006–2020 թթ. ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի տնօրենն էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Ա. Սաֆրասյանը, իսկ 2020 թ. դեկտեմբերից՝ պ. գ. թ. Ռ. Պ. Ղազարյանը:

Հունիսի 24-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացավ ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի հիմնադրման 50-ամյակին նվիրված «Արևելագիտության արդի հիմնախնդիրներ» խորագրով հոբելյանական միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ ԱԻ-ն:

Գիտաժողովին ներկա էին ՀՀ գիտական, ուսումնական, գիտահետազոտական, վերլուծական տարբեր կենտրոնների և հաստատությունների առաջատար հետազոտողներ, ինչպիսիք են Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի նախկին ղեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Հարություն Մարությանը, Մատենադարանի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, Թունիսում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանը, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Չինաստանի ժողովրդական Հանրապետության դեսպանատների ներկայացուցիչները, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյյեդ Հոսեյն Թաբաթաբաին և ուրիշները:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: Ողջունի խոսք հղեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի տնօրեն պ. գ. թ. Ռոբերտ Ղազարյանը:

Իր խոսքում ԱԻ-ի տնօրեն Ռ. Ղազարյանը շեշտեց, որ Հայաստանը Արևելքի մաս է կազմում՝ հավելելով. «Մենք Արևելքի ժողովուրդ ենք և պարտավոր ենք լավ ուսումնասիրել Արևելքը և Արևելքի ժողովուրդներին»: Նա ընդգծեց նաև միջազգային գիտական կառույցների հետ կապեր հաստատելու կարևորությունն ու անհրաժեշտությունը արևելագիտության նկատմամբ հայագիտական մոտեցումներն արտահանելու և տարածելու տեսանկյունից:

Ելույթով հանդես եկան նաև ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի նախկին տնօրեններ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրասյանը:

Ողջունի խոսքով հանդես եկան և ինստիտուտի 50-ամյակը շնորհավորեցին նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Հարություն Մարությանը, Մատենադարանի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, ՌԴ ԳԱ Հեռավոր Արևելքի ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Ալեքսեյ Մալովը, ՌԴ ԳԱ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ. Ալեքսանդր Սկալովը, Վրաստանի Հանրապետության Կորնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի տնօրեն, պ. գ. դ. Զապ Աբաշիձեն, ՌԴ Կուբանի համալսարանի ռեկտորի առաջին տեղակալ, սոց. գ. դ. Թեմիր Խազուրովը և ուրիշներ:

Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ վաստակագրերի, պատվոգրերի և ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի շնորհակալագրերի հանձնում:

Այնուհետև գեկուցումով հանդես եկավ ՌԴ ԳԱ Հեռավոր Արևելքի ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Ալեքսեյ Մալովը «Քննարկումներ արևելագիտության զարգացման ուղիների մասին, դասականի և նորարարությունների միջև» թեմայով:

Զեկուցումներով հանդես եկան նաև ՌԴ ԳԱ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ. Ալեքսանդր Սկալովը («Ռուսաստանյան հնագիտությունը Կովկասում 21-րդ դարի սկզբին»), Վրաստանի Հանրապետության Կորնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի ավագ գիտաշխատող, պ. գ. դ. Խաթունա Գաբրիելաշվիլին («Հայամավուրքի կառուցվածքը և առանձնահատկությունները») ՌԴ Կուբանի համալսարանի ռեկտորի առաջին տեղակալ, սոց. գ. դ. Թեմիր Խազուրովը («Երիտասարդությունը համաշխարհային և տեղական բազմէթնիկ հանրույթում. Սոցիալական լարվածության նոր դիտանկյուններ»), ՌԴ ԳԱ Հեռավոր Արևելքի ինստիտուտի գիտաշխատող Մաքսիմ Ցելույկոն («Արքայատոհմերի պատմությունները» որպես արևելագիտական հիմնախնդիր»), ՀՀ ԳԱԱ ԱԻ արևելյան աղբյուրագիտության պատմագրության բաժնի վարիչ, պ. գ. դ. Ազատ Բոզոյանը («Հայոց եկեղեցին Տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում և այբուբենի ստեղծման նշանակությունը»):

Զեկուցումներով հանդես եկան նաև ՀՀ ԳԱԱ ԱԻ Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ, պ. գ. դ. Ալեքսան Հակոբյանը [(«Կովկասյան Աղվանքի թագավորությունում քրիստոնեության պաշտոնական ընդունման թվագրման մասին (313–315 թթ.)»)], ՀՀ ԳԱԱ ԱԻ Իրանի բաժնի վարիչ, պ. գ. թ. Գոհար Իսկանդարյանը («Իրանում ԱՄՆ-ի ռազմավարության գործիքակազմը 1950–1960-ական թվականներին»), Չինաստան–Եվրասիա քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհրդի տնօրեն, ք. գ. թ. Մհեր Սահակյանը («Չինաստանը և Թուրքիան փոփոխվող աշխարհակարգում»), ՀՀ ԳԱԱ ԱԻ Թուրքիայի բաժնի վարիչ, պ. գ. թ. Քրիստինե Մելքոնյանը [(«Նորհրդա-թուրքական հարաբերությունները 1941 թ. (ըստ ՌԴ

ԱԳՆ արխիվային փաստաթղթերի»): Գիտաժողովը եզրափակեց ՀՀ ԳԱԱ ԱԻ միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, պ. գ. թ. Եվա Հարությունյանի ելույթը («Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականությունը 2015 թ. անվտանգության օրինագծի ընդունումից հետո»):

Գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԱԻ-ն համագործակցության հուշագրեր ստորագրեց Վրաստանի Հանրապետության Կորնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի, ՌԴ Կուբանի պետական համալսարանի և ՌԴ Գիտությունների ակադեմիայի Հեռավոր Արևելքի ինստիտուտի հետ:

ՌՈՒԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ  
ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ  
ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆԿԻՐՎԱԾ ԱՐՑԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԵՐՐՈՐԴ)  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՃԻՆ

2021 թ. սեպտեմբերի 19–21-ն Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում և սեպտեմբերի 23-ին Երևանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով նվիրված Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին: Այն կազմակերպել էին ԱՀ Ազգային ժողովն (ԱԺ) ու Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարությունը՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) հետ: Գիտաժողովին մասնակցում էին հայ և այլազգի շուրջ չորս տասնյակ գիտնականներ ՀՀ-ից, ԱՀ-ից, Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ), Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից: Հայաստանյան գիտնականների թվում ներկայացուցչական էր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի (ՊԻ) ութ գիտաշխատողների մասնակցությունը:

Ստեփանակերտ հասնելուն պես գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիր և ծաղիկներ խոնարհեցին Հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարում զոհված մարտիկների շիրիմներին՝ ի նշան նրանց անմահ հիշատակի:

Սեպտեմբերի 20-ին միջազգային գիտաժողովը հանդիսավորապես բացվեց ԱՀ ԱԺ նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարաբանյանը: Կարևորելով նման ներկայացուցչական կազմով միջոցառման կազմակերպումը՝ նա համոզմունք հայտնեց, որ գիտաժողովը լույս կախի վերելքներով ու ղեկավարություններով լի ճանապարհ անցած 30-ամյա հայկական երկու հանրապետությունների պատմության վրա: Գիտաժողովի մասնակիցներին ուղղված ԱՀ նախագահ Արայիկ Հաբությունյանի ուղերձը ներկայացրեց նրա մամուլի քարտուղար Լուսինե Հովհաննիսյանը: Ուղերձում, մասնավորապես, նշված էր. «Գիտաժողովի ծրագրում ընդգրկված թեմաների բազմակողմանի արծարծումը, հուսով եմ, այս բարդ ու կարգապահական պայմաններում օգնելու է մեզ իրավիճակը խորությամբ հասկանալու և արդյունավետ որոշումներ կայացնելու հարցում»: Նիստում ողջունի խոսքով հանդես եկավ ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը: Նա անդրադարձավ ՀՀ և ԱՀ անկախության հռչակագրերի պատմական նշանակությանը: «Մեր կյանքով ու կենսակերպով պետք է ամրագրենք ու սրբազրենք հայկական երկու հանրապետությունների անկախության հռչակագրերը: Արցախի Հանրապետությունը, նրա ժողովուրդն ու համայն հայությունն ամեն օր պետք է բացեն անկախության հռչակագրի կենսահաստատման նոր էջ: 30-ամյա անկախ պետականության դասերի եզրահանգումը մեկն է՝ նոր իրողությունների պրիզմայի տակ Արցախ–Հայաստան–Սփյուռք միասնականության, ունեցած մարդկային ու նյութական ռեսուրսների մեկտեղում», – իր խոսքն ամփոփեց Ա. Թովմասյանը: Ներկաներին հայ ժողովուրդին հիշարժան իրադարձությունների



առիթով հայրապետական իր օրհնանքն ու մաղթանքը հղեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:

Գիտաժողովի լիազուգար նիստում «Արցախը Հայոց պետականության հողովույթում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Նա ներկայացրեց Արցախի տեղն ու դերը Հայոց պետականության պատմության տարբեր պատմափուլերում՝ բնութագրելով դրանց առանձնահատկությունները: ԱՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, պ. գ. դ., պրոֆ. Վահրամ Բալայանի «Արցախի Հանրապետություն (1991–2021 թթ.)» թեմայով զեկուցումը նվիրված էր 30-ամյա ԱՀ-ի ձեռքբերումներին, ինչպես նաև պատերազմների հետևանքով ունեցած անդառնալի կորուստներին: ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ Ռուբեն Գալչյանը (Լոնդոն) «Հայ-ադրբեջանական սահմանային խնդիրը 1918–2021 թթ.» թեմայով զեկուցման մեջ արխիվային քարտեզների հիման վրա ներկայացրեց հայ-ադրբեջանական տարածքային-սահմանային խնդիրներն առաջացումից՝ 1918 թվականից մինչև 2021 թվականին դրանց քննարկումները: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի (ԱԻ) ավագ գիտաշխատող, պ. գ. դ., պրոֆ. Ալեքսան Հակոբյանը «Պատմական Արցախ և Ուտիք նահանգների սահմանաբաժան գծի խնդիրը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԱՀ) վարչական նոր սահմանները» թեմայով զեկուցման մեջ սկզբնաղբյուրների հիման վրա վերհանեց ադրբեջանական կողմի սադրիչ, հեռուն գնացող նպատակները: Սահմանադրական և միջազգային իրավունքի մասնագետ, պրոֆ. Օստո Լուխտերհանդտի (Գերմանիա) զեկուցման թեման էր՝ «Որոշ առաջնակարգ ռազմավարական առաջադրանքներ Արցախի Հանրապետության կարգավիճակի ապահովման վերաբերյալ»: Նա ներկա էր գիտաժողովին և զեկուցումն ընթերցեց ՀՀ ԳԱԱ ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոց. Լիլիթ Հովհաննիսյանը: Զեկուցման մեջ հանգամանորեն ներկայացված էր վեց հիմնադրույթ, որոնց վրա պետք է հիմնվի Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման միջազգային-իրավական գործընթացը: Այն մեծ հետաքրքրություն առաջացրեց, քանի որ ներկայացված հիմնադրույթներն անուղղակիորեն բացահայտում էին Մինսկի համաձայնագրի պետությունների և միջազգային հանրության հետ աշխատանքում հայկական դիվանագիտության թերացումներն ու բացթողումները: «Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը Նյուրնբերգյան իրավունքի լույսի ներքո» թեմայով ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, փ. գ. դ., պրոֆ. Ալեքսանդր Մանասյանը:

Լիազուգար նիստից հետո գիտաժողովի աշխատանքը շարունակվեց երեք՝ Ա, Բ և Գ մասնախմբային նիստերում, որոնք ընթացան իրար զուգահեռ՝ ԱՀ ԱԺ նիստերի դահլիճում, Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) վարչական մասնաշենքում ու ԱԺ փոքր դահլիճում, երեք աշխատանքային լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Ա մասնախումբն աշխատում էր «Պատմություն» խորագրի ներքո [նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ՊԻ), պ. գ. դ., պրոֆ. Վահրամ Բալայան (ԱՀ ԱԺ), Ալեքսան Հակոբյան (ՀՀ ԳԱԱ ԱԻ), Գևորգ Ստեփանյան (ՀՀ ԳԱԱ ՊԻ)]: Զեկուցումներով հանդես եկան «Մա-

տենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը («Գանձասարի Մատենադարանի նոր առաքելությունը»), ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ. Էդիկ Մինասյանը («ԼՂՀ և ՀՀ հռչակման գործընթացը»), ԱՀ պետնախարարի խորհրդական, պ. գ. թ., դոց. Տարոն Հակոբյանը [«Լեոնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ձևավորումը որպես Արցախյան շարժման նոր փուլի մեկնակետ»], Բեռլինի ցեղասպանության ճանաչման աշխատանքային խմբի անդամ, դոկ. Ժիրայր Քոչարյանը (Գերմանիա, «Արցախի Հանրապետությունը 30 տարեկան է՝ հաշվեկշիռ»), Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Հարություն Մարությանը («Սահմանադրության թեման Ղարաբաղյան շարժման պատկերագրության մեջ»), ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պ. գ. թ., դոց. Արմինե Խաչատրյանը («Փաստարկներ Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ. հակադարձումներ աղբյուրական պատմագրության խեղաթյուրումներին»), «Կաճառ» գիտական կենտրոնի դեկավար, պ. գ. թ., դոց. Մհեր Հարությունյանը («Արցախի Հանրապետության պաշտպանական-անվտանգային հիմնախնդիրների մասին»), ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. թ., դոց. Նունե Սարումյանը («Արցախի Հանրապետության վարչաքաղաքական դրությունը 1991–2021 թթ.»), ՀՀ ԳԱԱ ՊԻ հայկական գաղթօջախների և Սիլյուսթի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանը (««Մեծ Աղբյուրան»-ի համաթյուրքական հայեցակարգը, պատմություն և արդիականություն»), նույն ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Գայանե Մախմուրյանը («Արցախի անկախության հռչակման ներքին և արտաքին նախադրյալները») ու Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոց. Լիլիթ Հովհաննիսյանը [«Արցախի պետականության պատմության լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2020 թթ.)»]:

Բ մասնախմբի խորագիրն էր «Պատմություն և մշակույթ» [նախագահողներ՝ պ. գ. դ., պրոֆ. Համլետ Պետրոսյան (ԵՊՀ), Լեոնիկ Հովհաննիսյան (ԱրՊՀ), բ. գ. դ., պրոֆ. Դավիթ Գասպարյան (ՀՀ ԳԱԱ ՊԻ), պ. գ. թ., դոց. Վարդգես Սաֆարյան (ԱրՊՀ)]: Զեկուցումներով հանդես եկան՝ ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Համլետ Պետրոսյանը («Արցախի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքներն անկախության տարիներին և ներկա մարտահրավերները»), ՀՀ ԳԱԱ ՊԻ նորագույն պատմության բաժնի գիտաշխատող, բ. գ. դ., պրոֆ. Դավիթ Գասպարյանը («Գրական կյանքը Արցախում անկախության տարիներին. 1991–2021 թթ.»), Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչ Վահան Բաբախանյանը (ՌԴ, «Հայաստանի և Արցախի հանրապետությունների իմիջի առաջխաղացման մասին»), ՀՀ ԳԱԱ ՊԻ նորագույն պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Համիկ Ամիրջանյանը [«Հայ եկեղեցու Ղարաբաղի թեմի կրթական կյանքի արտացոլումը «Արարատ» ամսագրում (1905–1920 թթ.)»], ԱրՊՀ դասախոս Լեոնիկ Հովհաննիսյանը («Արցախահայ գաղթականությունը Լոռիում և Տավուշում 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին»), պատմաբան-հուշարձանագետ, ԱՀ մշակույթի

վաստակավոր գործիչ Սլավա Սարգսյանը («Շուշի. պատմական իրողություններ»), ԱրՊՀ և «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի (ՄՄՀ) դասախոս, պ. գ. թ., դոց. Իսկուհի Ավանեսյանը («Ինքնապաշտպանական ուժերի ձևավորումը և կանանց կամավորագրումը ջոկատներին 1988–1991 թթ.»), ԱրՊՀ դասախոս, պ. գ. թ., դոց. Վարդգես Սաֆարյանը («Սոս գյուղի վաղ քրիստոնեական համալիրի պեղումները»), ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական, պ. գ. թ., դոց. Մելանյա Բալայանը («Աղվանից եկեղեցու էթնիկ պատկանելիության հիմնահարցը և քաղաքական շահարկումները»), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, բ. գ. թ., դոց. Կարեն Խանյանը («Արցախի գեղարվեստական պատկերը Ս. Կապուտիկյանի պոեզիայում»), ԱրՊՀ դասախոս, փախստականների հարցերով փորձագետ Էլինա Մխիթարյանը («Փախստականների և ներքին տեղահանված անձանց աղբյուրական քաղաքականությունը հակընդդեմ հայրենադարձություն հայկական քաղաքականություն»):

Գ մասնախումբը կրում էր «Քաղաքագիտություն» խորագիրը [նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ. գ. դ., պրոֆ. Ալեքսանդր Մանասյան (ՀՀ ԳԱԱ փրիստոփայություն և իրավունքի ինստիտուտ, ԵՊՀ), պ. գ. դ., պրոֆ. Արմեն Մարուքյան (ՀՀ ԳԱԱ ՊԻ), Գագիկ Մելիքյան («Վան» հ/կ), պ. գ. դ., պրոֆ. Վալերի Ավանեսյան (ԱրՊՀ)]: Զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ՊԻ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանություն պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Արմեն Մարուքյանը («2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության իրավաքաղաքական գնահատականը»), Ղրիմի Վ. Մ. Վերնանդսկու անվան Ֆեդերալ համալսարանի փրիստոփայության ֆակուլտետի ղեկան, փ. գ. դ., պրոֆ. Օլեգ Գաբրիելյանը [ՌԴ, «Հայաստանը և Արցախը. նոր ռազմավարության հայեցակարգ (հայացք ռուսական սիյուլոքից)»], «Վան» հ/կ նախագահ Գագիկ Մելիքյանը («Արցախյան խնդրի լուծման հարցի շուրջ»), ԱրՊՀ գիտություն և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր, պ. գ. դ., պրոֆ. Վալերի Ավանեսյանը («Փրանսիայի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ»), ՀՀ ԳԱԱ ՊԻ հայկական գաղթօջախների և Սիյուլոքի պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանը («Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը Իրանի արտաքին քաղաքականության համատեքստում»), Ստեփանակերտի ՄՄՀ կովկասագիտության կենտրոնի ղեկավար Հովիկ Ավանեսովը [«Հայաստանյայցության դրսևորումները Թուրքիայում և Ադրբեջանում 44 օրյա պատերազմից հետո և դրանից բխող մարտահրավերները Հայոց պետականության համար» (համահեղինակ՝ ՄՄՀ հումանիտար ֆակուլտետի ղեկան Արինա Գրիգորյան)] և «Թուրքիայի և Ադրբեջանի ռազմական հանցագործությունները հայոց պետականության դեմ 44 օրյա պատերազմի ընթացքում և պատերազմի ավարտից հետո» (համահեղինակ՝ ՄՄՀ տնտեսաիրավաբանական ֆակուլտետի ղեկան Յանա Դավթյան), հեռուստայրագրող Նաիրի Հովիկյանը («Պետականության պահպանման մարտահրավերները Արցախում. ապագայի տեսլական»), Թալլին Տեր-Մինասյանը [Փրանսիա, «Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայաստանի Հանրապետությունը» (Հայ հեղափոխականի հիշատակները, հ. 7) 2020-ի պատերազմի համատեքստում»], ԱրՊՀ և ՄՄՀ դասախոս, քաղ. գ. թ., դոց. Հրայր Փաշայանը

(«Ղարաբաղյան հակամարտություն. պրահայան գործընթացի մեկնարկը և հիմնական շեշտադրումները, ըստ 2004 թ. ԵԱՀԿ Մին գեկույցի»), Էլեոնորա Ավանեսյանը («Հայաստանի և Արցախի ջրային ռեսուրսները որպես տարածաշրջանում քաղաքական ազդեցություն լծակ»), ԱՀ ԱԺ աշխատակազմի բյուջետային հարցերով գլխավոր մասնագետ, տնտ. գ. թ., դոց. Տիգրան Հակոբյանը («Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի եկամտային մասի վերլուծությունը»):

Գիտաժողովի նիստերին մասնակցում էին ԱՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ: Զեկուցողները բարձրացրին ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում Ղարաբաղյան հիմնախնդրի համապարփակ կարգավորման, Արցախի իրավական կարգավիճակի վերջնական որոշման՝ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացման և ԱՀ անկախության ճանաչման հարցերը:

Մասնախմբերի աշխատանքներն ամփոփվեցին եզրափակիչ լիազուստար նիստում, որում կենտրոնականն ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի հանգամանալից ելույթն էր՝ նվիրված ԱՀ արտաքին քաղաքականության գերակա խնդիրներին: Դրան հաջորդեցին մասնախմբերի նախագահների հաղորդումները գիտական զեկուցումների արդյունքների վերաբերյալ: Այնուհետև ԱՀ արդի մարտահրավերների վերաբերյալ գիտնականների քննարկումների հիման վրա ընդունվեց ԱՀ-ի և ՀՀ-ի հոչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի բանաձևն ու հրապարակվեց համապատասխան հայտարարություն, որն ԱՀ ԱԺ ամբիոնից ընթերցեց Լիլիթ Հովհաննիսյանը:

Սեպտեմբերի 21-ին գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Գանձասար, մասնակցեցին «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)» (Երևան, «Էդիթ պրինտ», «Կաճառ» գիտական կենտրոն, 2021) վերնագրով ժողովածուի շնորհանդեսին, որում ամփոփված են 2020 թ. հուլիսին տեղի ունեցած Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովի զեկուցումները:

Գիտաժողովն իր աշխատանքը շարունակեց սեպտեմբերի 23-ին Երևանում: ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ Կոր սեղան՝ նվիրված ՀՀ-ի հոչակման 30-ամյակին: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս, գիտաժողովի կազմկոմիտեի համանախագահ Յուրի Սուվարյանը: Ելույթներով հանդես եկան ԳԱԱ ակադեմիկոսներ Ռուբեն Սաֆրաստյանը, Լենասեր Աղալովյանը, Աշոտ Մելքոնյանը, թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը, պրոֆեսորներ Էդիկ Մինասյանն ու Գևորգ Ստեփանյանը, քաղաքագետ Միհրան Շահգաղեյանը:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ».  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Արդեն երկրորդ տարին է, ինչ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժինը կազմակերպում է «Օտար աղբյուրները Հայկական գաղթավայրերի մասին» խորագրով միջազգային գիտաժողով: Առաջինն անց էր կացվել 2020 թ. սեպտեմբերի 15–16-ին և նվիրված էր հայ մեծանուն բանասեր, պատմաբան, հնագետ, աշխարհագրագետ, բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ, խմբագիր, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին:

Իսկ արդեն 2021 թ. նոյեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համանուն խորագրով միջազգային երկրորդ գիտաժողովը (առկա և առցանց), որը նվիրված էր Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակին (1821–2021 թթ.):

Գիտաժողովի բացմանը Պատմության ինստիտուտի Հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանը ներկայացրեց առաջին գիտաժողովի արդյունքներն ամփոփող «Օտար աղբյուրները Հայկական գաղթավայրերի մասին» նյութերի ժողովածուն: Նա նշեց, որ դրանով հիմք է դրվում նոր մատենաշարի, որով «փորձում ենք վերհանել մեր գաղթաշխարհի պատմությունը, հատկապես այն առանձնահատուկ հատվածը, որը վերաբերում է օտար հեղինակների ու ճանապարհորդների՝ Հայկական գաղթավայրերի մասին անդրադարձերին: Այս առումով կա հսկայածավալ նյութ, և կան աղբյուրներ, որոնք պետք է մշակվեն և այսպիսի ժողովածուների տեսքով լույս տեսնեն»: Համանուն մատենաշարի Ա պրակը հանդիսացող հատորը ներառում է 24 հոդված, որոնք վերաբերում են հնագույն շրջանի հայ գաղթավայրերի, Անդրկովկասի, Միջին Ասիայի, ԱՄՆ-ի և Եվրոպայի հայ գաղութների, սփյուռքի մասին օտար աղբյուրների վկայություններին, ինչպես նաև՝ Հայր Ղևոնդ Ալիշանին:

Գիտաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նա կարևորեց սույն մատենաշարի առաջին հատորի լույսընծայումը. «Այս ժողովածուն լուրջ հաջողություն է պատմագիտության ոլորտում: Բավականաչափ արժեքավել է ոչ միայն Ղևոնդ Ալիշանի գրական ժառանգությունը, այլ նաև այսօրվա ինդիվիդուների տեսակետից դիտարկվել են շատ հարցադրումներ, հատկապես նրա աշխատությունը՝ նվիրված աշխարհագրական ինդիվիդուներին, Հայաստանի սահմաններին, և այս ամենը ստացել են ժամանակակից հնչեղություն: Մաղթում եմ հաջող և արդյունավետ աշխատանք այս կարևոր միջոցառման բոլոր մասնակիցներին»:

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, գնահատելով կատարված աշխատանքը (առցանց), նշեց. «Պատմագիտության մեջ մենք մի նոր բնագավառի ակոս ենք բացել: Հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժինը կարողացավ այս գիտաժողովների ու մատենաչարի ստեղծման շնորհիվ միավորել մեր սփյուռքի մասնագետներին: Ես հաջողություն եմ մաղթում գիտաժողովին և միաժամանակ համոզվածություն եմ հայտնում, որ այս շարքը կշարունակվի»:

Իր խոսքում Պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանն առանձնապես կարևորեց Հայ գաղթօջախների մասին օտար աղբյուրների ուսումնասիրումը, ինչը, ցավոք, նվազ է ուսումնասիրվել: Ճանաչողական և պատմագիտական բացառիկ կարևորություն ներկայացնող այդ ասպարեզում առկա բացը կրթացնի «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» մատենաչարը՝ Հայաստանի, ինչպես նաև արտերկրի գիտնականների արժեքավոր հետազոտություններով. «Այն լայն տեսակետների հավաքածու է հայկական գաղթօջախների մասին և ունի բացառիկ կարևորություն մեր պատմագիտության ոլորտում: Սա շատ հեռուն գնացող ճանապարհի սկիզբն է, որը վերհանում է հայության կենցաղի, պատմության, մշակույթի այն հետաքրքիր դրվագները, որոնք աչքի են զարնել օտար ճանապարհորդների մոտ»:

Այդ թեմայով գիտաժողովի մտահղացումը Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Արծվի Բախչինյանինն է: Իր ելույթում նա նշեց, որ արտերկրի տարբեր արխիվներում և գրադարաններում պահվող բազմաթիվ հիշատակություններում օտար ճանապարհորդները, միսիոներները, նաև գրողները պարբերաբար հիշատակում են հայերի մասին, որոնց նրանք հանդիպել են աշխարհի տարբեր երկրներում: Այդ նյութերը հայտնաբերվելու, թարգմանվելու և ուսումնասիրվելու կարիք ունեն: Ուստի կարևոր է, որպեսզի տարբեր լեզուների կրող աշխարհասփյուռ մեր հայրենակից-մասնագետների նպատակներից և գործունեության ուղղություններից մեկը լինի նաև դա. «Այդ նյութերը կարիք ունեն թարգմանության և ներկայացման: Տարբեր լեզուներ կրող մեր մասնագետները պետք է բացահայտեն տվյալ լեզուներով այն աղբյուրները, որոնցում կան վկայություններ հայության ու հայ ժողովրդի մասին»:

Ընդգրկուն թեմա ունեցող սույն գիտաժողովին մասնակցության հայտ էր ներկայացրել շուրջ երկու տասնյակ հետազոտող Հայաստանի Հանրապետությունից և աշխարհի տարբեր երկրներից (Հունաստան, Հորդանան, Հունգարիա—Գերմանիա, Ռումինիա, Լիբանան): Իրենց գեկուցումներում նրանք լուսաբանեցին Հայ գաղթօջախների ու համայնքների, ինչպես նաև հայության պատմության մասին տարբեր ժամանակաշրջանների (հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր) և աշխարհաքաղաքական տարբեր տարածքների (Մերձավոր ու Միջին Արևելք, Եվրոպա, Օսմանյան կայսրություն, Հնդկաստան, Ռուսաստան, Արևելյան Անդրկովկաս, Վրաստան, ԱՄՆ և այլն) վերաբերյալ առկա աղբյուրագիտական հարուստ ժառանգությունը:

Գիտաժողովի «Արևելքի երկրներ» վերտառությամբ առաջին նիստում (նախագահող՝ Արծվի Բախչինյան) լսվեցին պ. գ. դ. Քրիստինե Կոստիկյանի (ՀՀ) և ասպիրանտ Անահիտ Թովմասյանի (ՀՀ) «Հայ վաճառականության խնդիրները Արևելքի երկրներում ԺԷ–ԺԸ դարերում ըստ պարսկերեն և օսմաներեն աղբյուրների», դոկտոր Գևորգ Ղազարյանի (Հունաստան) «Իգմիթի նահանգի հայ հոռոմները», պ. գ. թ. Կարեն Մկրտչյանի (ՀՀ) «Իրանական պաշտոնական դիրքորոշումը հայ համայնքի իրավական կարգավիճակի հարցում (ըստ իրանական աղբյուրների)», պ. գ. թ. Սեղա Օհանեսյանի (ՀՀ) «Իրաքի հայ համայնքը ըստ իրաքեան աղբյուրների», Մարալ Ներսեսեանի (Հորդանան) «Օտար աղբյուրներ՝ Յորդանան գետի շրջակայքի հայկական ներկայություն մասին», բ. գ. թ. Արծվի Բախչինյանի (ՀՀ) «Դանիել Դեֆոն հայերի մասին», գիտաշխատող Էլիզաբեթ Թաթևրյանի (ՀՀ) «Հնդկահայ գաղութը հայ պատմագրության մեջ», պ. գ. թ. Վահե Սարգսյանի (ՀՀ) «ՀԱԵ Վերահայոց թեմի իրավական կարգավիճակի, սեփականության իրավունքի և եկեղեցիների պատկանելության խնդրի քննարկումը վրացական մամուլում» գեկուցումները, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանի (ՀՀ) «Պրոֆ. Իյյա Բերյոզինի «Ճանապարհորդություն Դաղստանում և Այսրկովկասում» աշխատությունը որպես Արևելյան Այսրկովկասի հայության պատմության սկզբնաղբյուր»:

«Եվրոպա և ԱՄՆ» խորագրով երկրորդ նիստում (նախագահող՝ Անի Տիչենկևեան) լսվեցին պ. գ. դ. Բալինտ Կովաչի (Հունգարիա–Գերմանիա) «Աղբյուրագիտական կարևոր տեղեկություն Հունգարիայում հայերի մասին 2-րդ աշխարհամարտից հետո», պ. գ. թ. Քնարիկ Ավազյանի (ՀՀ) «ԱՄՆ-ի դիվանագիտական և միսիոներական ներկայացուցչությունները Հայոց ցեղասպանության մասին և ամերիկահայությունը (ըստ ժամանակի ամերիկյան մամուլի)», պ. գ. թ. Գոհար Մխիթարյանի (ՀՀ) «XVIII դարի ռուսական աղբյուրները որպես Արևելյան Այսրկովկասի հայության պատմության սկզբնաղբյուր», հայցորդ Գայանե Շախկյանի (ՀՀ) «Առգուստ Փռայհեր ֆոն Հաքստ–Հաուզենի հիշատակությունը Հայաստանի վերաբերյալ», պ. գ. թ. Քրիստինե Մելքոնյանի (ՀՀ) և պ. գ. թ. Էդուարդ Զոհրաբյանի (ՀՀ) «Հայերի առևտրա-տնտեսական գործունեությունը Կրասնոդարի երկրամասում (19-րդ դ.)», պ. գ. թ. Վահրամ Ղարաբանյանի (ՀՀ) «Հայերը բրիտանական հետախուզական ծառայություններում Առաջին աշխարհամարտի տարիներին (ըստ բրիտանական փաստաթղթերի)», Սիլվա Գաբարյանեանի (Լիբանան) «Հայ գաղթավայրերու դերն ու կարևորությունը» գեկուցումները:

Յուրաքանչյուր նիստի ավարտին գեկուցողները պատասխանեցին մասնակիցների տված հարցերին, նաև տեղի ունեցան քննարկումներ:

Վերջում գիտաժողովի արդյունքներն ամփոփող ելույթներով հանդես եկան Հակոբ Մուրադյանը, Արծվի Բախչինյանը, Արմեն Մարուքյանը, Աշոտ Մելքոնյանը, Գևորգ Ստեփանյանը:

Գիտաժողովում կարդացված գեկուցումները կհրատարակվեն «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» մատենաշարի երկրորդ պրակում:

---

«ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 140-ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐԿԱԾ  
ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ  
«ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ»

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժինը նույնաբերի 16-ին կազմակերպել էր հիբրիդային միջազգային գիտաժողով «Բարեգործությունը հայոց մեջ» խորագրով, որը նվիրված էր «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հիմնադրման 140-ամյակին:

Մասնակցությունը հայտ էին ներկայացրել շուրջ երկու տասնյակ հետազոտողներ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունից, այլև՝ Ռուսաստանի Դաշնությունից: Գիտաժողովին ներգրավված էին մասնակիցներ ԳԱԱ պատմության ինստիտուտից, Ն. Գ. Չերնիշևսկու անվ. Սարատովի ազգային հետազոտական պետական համալսարանից (ՌԴ), Պյատիգորսկի պետական համալսարանից (ՌԴ), ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտից, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամից, ԵՊՀ պատմության ֆակուլտետից, Շիրակի հայագիտական հետազոտությունների ինստիտուտից և ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. ինստիտուտից:

Գիտաժողովի մասնակիցներին բացման և ողջունի խոսքեր հղեցին ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը և Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը: Իրենց ելույթներում նրանք նշեցին նմանատիպ գիտաժողովի կարևորությունն ու արդիականությունը, որը նվիրված էր բարեգործությանը: Նշվեց նաև, որ նման խորագրով գիտաժողով առաջին անգամ է կազմակերպվում և դարեր շարունակ բարեգործությունը մեր իրականության անբաժանելի մասն է կազմել:

Գիտաժողովը բաղկացած էր երեք նիստերից: Առաջին նիստի (նախագահող՝ Աշոտ Մելքոնյան) ընթացքում լսվեցին Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., դոցենտ Հայկանուշ Մեսրոպյանի «Բարեգործություն» հասկացության անվանումները հայերենի տարածքային տարբերակներում, Ն. Գ. Չերնիշևսկու անվ. Սարատովի ազգային հետազոտական պետական համալսարան (ՌԴ), պ. գ. դ., պրոֆեսոր Վաչագան Զուլախյանի «Սարատովահայերի բարեգործական գործունեության հոգևոր և բարոյական հիմունքները» (ոուսերեն), Պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, թղթակից անդամ, պ. գ. դ. Ալբերտ Խառատյանի «Զմյուռնահայ կրթական և բարեսիրական ընկերությունը XIX դարի 40-ական թթ.», Պյատիգորսկի պետական համալսարանի (ՌԴ), պ. գ. թ., դոցենտ Վիկտոր Հակոբյանի «Ասորի փախստականները Հյուսիսային Կովկասում և նրանց հողային համակարգը» (ոուսերեն), Մ. Աբեղյանի անվ. գրականությ-



յան ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանի «Հովհաննես Թումանյանը և բարեգործությունը» գեկուցումները:

Երկրորդ նիստում (նախագահող՝ Պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Ռուբեն Սահակյան) հանդես եկան՝ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Համիկ Ամիրջանյանը՝ «Հոգևոր նվիրատվությունները որպես բարեգործության յուրօրինակ դրսևորում (Լուկաս Կարնեցու կաթողիկոսության ժամանակաշրջանի օրինակով, XVIII դ.)», Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Գևորգ Ստեփանյանը՝ «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության պատմությունից (XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ)», Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Նաիրա Համբարձումյանը՝ «Հայոց ազգային, խնամակալական-հումանիտար ընկերությունների և վարժարանների դերակատարությունը հայ կանանց էմանսիպացիայի գործընթացներում XIX դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում», «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի (ՀՅԹԻ) Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող, բ. գ. թ. Էլինա Միրզոյանը՝ «Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերություն հանուն Սբ. Գրիգոր Լուսավորչի»-ն՝ պատմության մեջ», Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հայցորդ Քրիստինա Աբրահամյանը՝ «Բարեգործությունը Հովհաննես Հովհաննիսյանի կյանքում», ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի հայցորդ Սուսաննա Առաքելյանը՝ «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության գործունեությունը կրթական ոլորտում 1864–1900 թթ.», Պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Լիլիթ Քոսյանը՝ «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը և արևմտահայ գաղթականությունը (1895–1899 թթ.)», Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Արմեն Հայրապետյանը՝ ««Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին» և Պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Նինետա Աղամյանը՝ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության որբախնամ գործունեության պատմությունից Առաջին աշխարհամարտի տարիներին» գեկուցումներով:

Երրորդ նիստի (նախագահող՝ Համիկ Ամիրջանյան) ընթացքում լսեցին Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Վահան Մելիքյանի «Քաղաքների համառուսաստանյան միության Կովկասյան բաժանմունքի գործունեությունը (1915–1918 թթ.)», Ռուբեն Սահակյանի «Կովկասի հայոց բարեգործական ընկերության գործունեությունը Էրզրումում (1916 թ.)», ՀՅԹԻ-ի հիմնադրամի գլխավոր ֆոնդապահ-բաժնի վարիչ Գոհար Խանումյանի «Մեկ հայ՝ մեկ ոսկի-փրկության առաքելություն», Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Մարիամ Հովսեփյանի ««Հայրենիքի տուրքը» պոլսահայ մամուլի էջերում 1919–1920 թթ.», Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Անի Ֆիչենկճեանի «Բարեգործությունը՝ Սուրբիոյ հիւսիս-արեւելեան շրջանները գաղթած բջերիկցի (քրտախօս) հայերում», ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտից՝ Լեդինե Հովհաննիսյանի «Ռուբեն Հերյանը որպես Հայ Բարե-

գործական ընդհանուր միության անդամ ըստ Հայաստանի ազգային արխիվում պահպանվող փաստաթղթերի», Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի արևմտահայերեն բաժնի աշխատակից Պէթթի Քիլերճեան «Հաուլըտ Գարակէօզեան Հաստատութեան Գործունէութիւնը Սուրբոյ Մէջ» և Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանի «Իրանահայ բարեգործ Արսեն Մինասյան» զեկուցումները:

Յուրաքանչյուր նիստի վերջում զեկուցողները պատասխանեցին մասնակիցների հարցերին, տեղի ունեցան քննարկումներ: Գիտաժողովի արդյունքներն իր ելույթով ամփոփեց Ռ. Սահակյանը:

Ն Ի Ն Ե Տ Ա Ա Դ Ա Մ Յ Ա Ն

---

---

## ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Պատմաբանասիրական հանդես»-ի էջերում լուսաբանվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի ու մշակույթի, փիլիսոփայության հարցերը, պատմագրության, ընդհանուր բանասիրության և հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ:

Հանդեսն ունի հոդվածների, հաղորդումների, քննարկման ու բանավեճի, հրապարակումների, գրախոսության, մեր երախտավորները, մեր հորեկարները, գիտական կյանք, լրատու բաժիններ: Հոդվածները տպագրվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ համապատասխան ամփոփումներով, անվճար:

Պարբերականը լույս է տեսնում 4 ամիսը մեկ անգամ, տարեկան 3 համար, յուրաքանչյուր համարի ծավալը 20 տպ. մամուլ (320 էջ):

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/hy> պատմաբանասիրական-հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru),  
[patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

ՀՈՂՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Հոդվածի ծավալը պետք է լինի մինչև 15 էջ (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ), տեքստի լայնությունը՝ 12.5 սմ, երկարությունը՝ 21 սմ, միջտողային տարածությունը At least՝ 13:

2. Հայերեն տեքստը «Grqee Nor-U» տառատեսակով՝ շեղ (*italic*), ընդգծված տեքստը (բառը)՝ ուղիղ, 12 տառաչափով, ռուսերենը՝ «Times New Roman»՝ 11.5:

3. Հոդվածի վերնագիրը պետք է լինի «Arial Unicode» տառատեսակով, ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (հայերենի չափը 12, ռուսերենինը՝ 11), դրվում է կենտրոնում, իսկ դրա ներքևում՝ հեղինակի անուն-ազգանունը՝ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (հայերենը՝ «Grqee Nor-U» տառատեսակով, չափը՝ 11, ռուսերենը՝ «Times New Roman»-ով, չափը՝ 10):

4. Հաջորդ տողում գրվում են «Բանալի բառեր»-ը՝ առնվազն 10 բառ կամ բառակապակցություններ (ուղիղ):

5. Հոդվածի վերջում տրվող ամփոփումները պետք է ունենան տեքստի սեղմ բովանդակությունը (կես էջի չափով կամ 6–7 նախադասություն): Եթե հոդվածը հայերեն է, ապա ամփոփումները պետք է լինեն ռուսերեն ու անգլերեն, իսկ եթե ռուսերեն է՝ հայերեն և անգլերեն: Հայերենի ու անգլերենի տառաչափը 11.5, ռուսերենինը՝ 11:

6. Ամփոփումների տեքստից առաջ պետք է ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ գրել հոդվածի վերնագիրը (տառաչափը՝ 11), ներքևում հեղինակի անուն-ազգանունը (կենտրոնում) և ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (տառաչափը՝ 10): Հաջորդ տողում՝ կենտրոնում, գրվում են համապատասխանաբար՝ «Ամփոփում», «Резюме», «Summary» բառերը ցրիվ, տառաչափը՝ 10: Յուրաքանչյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով «Բանալի բառեր»-ը, իսկ տառաչափը՝ ամփոփման տեքստի տառաչափով: Բոլոր լեզուներով տրվող «Բանալի բառեր»-ը պետք է լինեն նույնական:

7. Հոդվածի տեքստի վերջում գրվում են հեղինակի (հեղինակներին) մասին հակիրճ տեղեկություններ՝ գիտական աստիճանը, աշխատավայրը, գիտական հետաքրքրությունների ոլորտը, հրատարակված աշխատանքների քանակը: Որից հետո գրվում է հոդվածի օգտագործված գրականության ցանկը՝ լատինատառ տառադարձմամբ (այբբենական կարգով):

8. Ռուսերեն ամփոփումից հետո ռուսերենով գրվում է հեղինակի մասին տեղեկությունը, իսկ անգլերենից հետո՝ անգլերենով:

#### ՀՂՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ա) Հղումների տառաչափը. Հայերենը՝ 11, ռուսերենը՝ 10.5, այլ լեզուներով՝ 11:

բ) Գրքի վրա հղման դեպքում գրվում է հեղինակի անվան սկզբնատառը, ազգանունը՝ ամբողջությամբ և ցրիվ, որից հետո գրվում է միջակետ, այնուհետև՝ մեծատառով գրքի վերնագիրն առանց չափերտների, ստորակետով՝ հրատարակության վայրը, թիվը, էջը:

գ) Ժողովածուների դեպքում նախ նշվում է օգտագործված հոդվածի վերնագիրը, գրվում է միջակետ ու անջատման գիծ, ապա գրվում է ժողովածուի վերնագիրը, խմբագրի կամ կազմողի տվյալները, հրատարակության վայրը, թիվը, էջը:

դ) Հղված ամսագրերի դեպքում տրվում է հոդվածի հեղինակի անուն-ազգանունը, վերնագիրը, այնուհետև գրվում է միջակետ ու անջատման գիծ, չափերտների մեջ նշվում է ամսագրի անվանումը, հրատարակության վայրը, թիվը, համարը, էջը: Թերթերի դեպքում չափերտների մեջ նշվում է թերթի անունը, այնուհետև՝ փակագծում հրատարակության վայրը, որից հետո՝ ամսաթիվը (օրինակ՝ Օ1. II. 1998): Վերը նշվածը վերաբերում է նաև ռուսերեն ու այլ լեզուներով հղումներին:

դ) Կայքերին տրվող հղումների դեպքում գրվում է հոդվածի կամ հոդվածի հեղինակի տվյալները և վերնագիրը, ապա գրվում է միջակետ ու անջատման գիծ, նշվում՝ կայքի հասցեն:

Հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում:

---

---

## РУКОВОДСТВО ДЛЯ АВТОРОВ

На страницах «Историко-филологического журнала» освещаются вопросы истории, литературы, языка, искусства и культуры, философии армянского народа, общетеоретические вопросы историографии, общей филологии и арменистики, политические, экономические и культурные связи армянского народа с другими народами.

Журнал имеет разделы статей, сообщений, обсуждений и дискуссий, публикаций, рецензий, наши заслуженные деятели, наши юбиляры, научная жизнь, хроника. Статьи печатаются на армянском, русском и английском языках с соответствующими резюме, бесплатно.

Журнал выходит раз в 4 месяца, 3 номера в год, объем каждого номера – 20 печ. листов (320 с.).

Официальный сайт журнала: <http://academhistory.am/hy/սլոնմարմնիսիրական-հանդես.html>

Электронная почта журнала: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru),  
[patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

### СТРУКТУРА И ТЕХНИЧЕСКОЕ ОФОРМЛЕНИЕ СТАТЬИ

1. Объем статьи должен быть до 15 страниц (бóльший объем – по решению редакции), ширина текста – 12,5 см, длина – 21 см, интервал At least – 13.

2. Армянский текст – шрифт «Grqee Nor-U», курсив (*italic*), выделенный текст (слово) – прямо, размер шрифта 12; русский текст – «Times New Roman» – 11,5.

3. Заглавие статьи – шрифт «Arial Unicode», прописными буквами (на армянском языке размер 12, на русском – 11), помещается в центре, под ним пишется имя и фамилия автора прописными буквами (на армянском языке шрифтом «Grqee Nor-U», размер 11, на русском – «Times New Roman», размер 10).

4. На следующей строке пишутся «Ключевые слова» – минимум 10 слов или словосочетаний (курсивом).

5. Резюме, прилагаемые к статье, должны заключать в себе ее краткое содержание (полстраницы или 6–7 предложений). Если текст статьи на армянском языке, то резюме должны быть на русском и английском языках, если текст статьи на русском, резюме – на армянском и английском. На армянском и английском языках размер шрифта 11,5, на русском – 11.

6. Перед текстом резюме пишется прописными буквами заглавие статьи (размер 11), ниже, в центре – имя и фамилия автора прописными

буквами (размер 10). На следующей строке, в центре пишется соответственно «Անժնվանում», «Резюме», «Summary» вразбивку, размер 10. Перед текстом каждого резюме даются «Ключевые слова» на соответствующем языке, размер шрифта такой же, как в тексте резюме. «Ключевые слова» на всех языках должны быть одинаковыми.

7. После текста статьи пишутся краткие сведения об авторе (авторах): ученая степень, место работы, сфера научных интересов, количество опубликованных работ. Затем помещается библиография статьи в латинской транслитерации (в алфавитном порядке).

8. После резюме на русском языке помещаются краткие сведения об авторе на русском языке, а после резюме на английском языке – на английском.

#### ОФОРМЛЕНИЕ СНОСОК

а) Размер шрифта: на армянском языке – 11, на русском – 10,5, на других языках – 11.

б) При ссылке на книгу, пишутся инициал имени автора, фамилия полностью, вразбивку, после чего ставится точка, затем без кавычек, с прописной буквы пишется заглавие книги, после запятой – место, год издания, страница.

в) При ссылке на сборник пишутся имя и фамилия автора, заглавие использованной статьи, ставятся точка и тире, затем пишется заглавие сборника, данные редактора или составителя, место, год издания, страница.

г) При ссылке на журналы пишутся имя и фамилия автора, заглавие статьи, затем ставятся точка и тире, пишется название журнала в кавычках, место, год издания, номер, страница. При ссылке на газеты пишется в кавычках название газеты, затем в скобках место издания, после чего указывается дата (например, 01. II. 1998). Вышеуказанное относится также к сноскам на русском и других языках.

д) При ссылке на сайт пишутся данные статьи или автора статьи, затем ставятся точка, тире, указывается адрес сайта.

Статьи рецензируются, в случае отказа не возвращаются.

---

---

## A GUIDELINE FOR THE AUTHORS

In the pages of “Historical-Philological Journal” issues of the history, literature, language, art and culture, philosophy of Armenian people, theoretical questions of historiography, general philology and armenology, the political, economic and cultural ties of Armenian people with other nations are elucidated.

The journal has segments for articles, reports, discussions and debates, publications, reviews, our honoured workers, our jubilees, scientific life and news. Articles are published in Armenian, Russian and English in the journal with appropriate summaries and free of charge.

The periodical is published once for 4 months, 3 issues a year, the volume for each issue is 20 printing press (320 pages).

The official webpage of the Journal: <http://academhistory.am/hy>

Historical-Philological Journal: [պատմաբանասիրական-հանդես.html](http://պատմաբանասիրական-հանդես.html)

The email of the Journal: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru),  
[patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

### THE STRUCTURE OF THE ARTICLE AND TECHNICAL DESIGN

1. The volume of the article should be up to 15 pages (in case of larger volume with the decision of the Editorial), the width of the text – 12.5 cm, length – 21 cm, line spacing - at least 1.3 cm.
2. The Armenian text should be in “Grqee Nor-U” font type, italic, the highlighted text (word) should be straight, with 12 font size, the Russian text should be in “Times New Roman” with 11.5 font size.
3. The title of the article should be in “Arial Unicode” font type, with CAPITAL LETTERS (the font size of Armenian text – 12, Russian text – 11), is put in the centre, and below it – the name and surname of the author in CAPITAL LETTERS (Armenian with “Grqee Nor-U” font type, the sizes – 11, Russian – “Times New Roman”, font size – 10).
4. In the next line the “Key words” – at least 10 words or word combinations (straight).
5. The summaries placed at the end of the article should have a brief content of the text (half of a page or 6-7 sentences). If the article is in Armenian then the summaries should be both in Russian and English. The font size for Armenian and English – 11.5, for Russian – 11.
6. Before the text of the summaries the title of the article should be written with CAPITAL LETTERS (font size: 11), below – the name and surname of the author (in the centre) with CAPITAL LETTERS. In the

centre of the next line, accordingly the words of «Ամփոփում», «Резюме», “Summary” are written in separate letters, with the font size of 10. Before each text of summary, the “Key words” are accordingly written in the given language, and the font size should be the same as the text of summary. The “Key words” should be identical in all languages.

7. At the end of the text of the article, brief information about the author (authors) are written – the scientific degree, workplace, the scope of scientific interests, the quantity of the published works, after which the list of the used literature is placed in Latin transliteration (in alphabetical order).
8. After the summary in Russian, the information about the author is placed in Russian, and accordingly, after the summary in English – the English one.

#### THE DESIGN OF REFERENCES

- a) The font size for footnotes; Armenian – 11, Russian – 10.5, other languages – 11.
- b) In case of a reference to a book, the initial letter of the author’s name and his/her surname in separate letters are written, after which a semicolon is put, then there come the title of the book without quotation marks, and with separated commas, the place, date and page of the publication.
- c) In case of collections of articles, firstly the title of the used article is mentioned, a semicolon and a dash are put, then the title of the collection of articles, the data of the editor or the compiler, the place, date and page of the publication are written.
- d) In case of referred journals, the name and surname of the article’s author, title are given, then a semicolon and a dash are put, the name of the journal, the place, date, issue and page of the publication are mentioned in quotation marks.
- e) In case of newspapers, the name of the paper, then the place and date are mentioned in brackets (for example 01. 02. 1998). The aforementioned points concern the references also in Russian and other languages.
- f) In case of references made to websites, the data of the article or the author of the article as well as the title are mentioned, then a semicolon and a dash are put, subsequently the website address is mentioned.

The articles are reviewed and in case of refusal they are not returned.



---

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

#### I

ՀԱՅԻ ՂԵՎՈՆԴ ԱՒԻՇԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Վարդան Ղևրիկյան** – Հայր Ղևոնդ Ալիշանի գիտական և գրական  
ժառանգությունը .....3

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 170-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Դավիթ Գասպարյան** – Պետրոս Դուրյանի գեղարվեստական աշխարհը .....32

ԶԱՍԼ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Աշոտ Մելքոնյան** – Զալալ Տեր-Գրիգորյան (Սալյունյան). Զավախքի արցախցի  
գավակը .....60

---

**Վահե Սարգսյան** – Հայկական եկեղեցիների պատկանելության խնդիրը վրացական  
մամուլում (XXI դարի առաջին տասնամյակ) .....72

**Ռուբեն Սահակյան** – Ալեքսանդրապոլի և գավառի թուրքական բռնազավթման մա-  
սին («Կոմունիստ» թերթի 1920–1921 թթ. հաղորդագրություններում) .....103

#### II

**Լուսինե Սահակյան** – Դիտարկումներ Կոմիտաս Վարդապետ և Հայ Առաքելական  
եկեղեցի առնչությունների շուրջ .....121

**Արմենուհի Ղամբարյան** – Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքացիական  
առաքելությունն ԱՄՆ (1919 թ. վերջ – 1920 թ. սկիզբ) .....134

**Ռաֆիկ Նահապետյան** – Հայկական ժողովրդական ավանդական բնակարանային  
համալիրների որոշ առանձնահատկությունների շուրջ  
(XIX դար – XX դարասկիզբ) .....149

**Սիլվա Մինասյան** (Արցախ) – Հատուկ անուններից կերտված նորակազմությունների կաղապարները Հովհաննես Շիրազի ստեղծագործություններում .....173

**Աշոտ Մանուչարյան** – Արշարունյաց եպիսկոպոսական թեմը (IV–XI դդ.).....187

**ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**Երվանդ Գրեկյան** – Հացահատիկի պաշարների կուտակումն ու վերաբաշխումը Ուրարտական թագավորությունում .....203

**Վարդան Պետրոսյան** – Հին հայերենի շչական բաղաձայնները (ապաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետեր) .....228

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

ԻՐԱԶԵԿԻ ԾՆՆԴՅԱՆ  
140-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Անուշավան Զաքարյան** – Իրազեկի (Հ. Տեր-Հակոբյան) հոդվածաշարը Գողթան գավառի կարևոր նշանակության մասին .....242

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Աելիտա Ղուլիսանյան** – Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները (խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրության գանձարաններում) .....258

**Աննա Ասատրյան** – Պետրոս Աղամյանը ժամանակակիցների հուշերում (անգլ.) .....262

**Թաթուլ Ասոյան** – Վիկտոր Կատվայան. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ .....267

**Արսեն Հարությունյան** – Արգամ Այվազյան. Հայաստանի հունարեն վիմագրությունները և 18–21-րդ դարի 10-ական թվականների հունական համայնքը .....272

**Վարդան Պետրոսյան** – Վազգեն Համբարձումյան. Հայերենը և կելտական լեզուները (համեմատական-տիպաբանական տարբերակայնություն) .....278

**ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ**

**Պավել Ավետիսյան, Ռուբեն Բադալյան, Արսեն Բորոխյան** – Հարություն Մարտիրոսյան. անվանի հնագետի 100-ամյակի կապակցությամբ .....284

**ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ**

**Մհեր Նավոյան** – Հենրիկ Հովհաննիսյան (ծննդյան 85-ամյակի առթիվ) .....289

**Անուշավան Զաքարյան, Վահան Խաչատրյան** – Վաչե Հովակիմյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) .....297

## ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

<b>Ռոբերտ Ղազարյան, Գոռ Մարգարյան, Ռուսլան Ցականյան</b> – Արևելագիտության ինստիտուտը 50 տարեկան է .....	300
<b>Լիլիթ Հովհաննիսյան</b> – Միջազգային գիտաժողով՝ նվիրված Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին .....	303
<b>Քնարիկ Ավագյան</b> – «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին». միջազգային երկրորդ գիտաժողովը .....	308
<b>Նինետա Աղամյան</b> – «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հիմնադր- ման 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով՝ «Բարեգործու- թյունը հայոց մեջ» .....	311
Ուղեցույց հեղինակների համար .....	314
Ուղեցույց հեղինակների համար (ռուս.) .....	316
Ուղեցույց հեղինակների համար (անգլ.) .....	318

## СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ, СООБЩЕНИЯ

## I

К 200-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ  
ОТЦА ГЕВОНДА АЛИШАНА

<b>Վարդան Դևրիկյան</b> – Научное и литературное наследие отца Гевонда Алишана .....	3
--	---

К 170-ЛЕТИЮ СО ДНЯ  
РОЖДЕНИЯ ПЕТРОСА ДУРЯНА

<b>Դավիդ Գասպարյան</b> – Художественный мир Петроса Дуряна .....	32
--	----

К 155-ЛЕТИЮ СО ДНЯ  
РОЖДЕНИЯ ДЖАЛАЛА ТЕР-ГРИГОРЯНА

<b>Ասոտ Մելկոնյան</b> –Джалал Тер-Григорян (Саллюмян): арцахский сын Джавахка .....	60
---	----

<b>Վառ Տարկիսյան</b> – Вопрос принадлежности армянских церквей в грузинской прессе (первое десятилетие XXI века) .....	72
---	----

<b>Рубен Саакян</b> – О турецкой оккупации Александрополя и губернии (в сообщениях газеты «Коммунист» 1920–1921 гг.) .....	103
---	-----

## II

<b>Лусине Саакян</b> – Наблюдения о взаимоотношениях Комитаса Вардапета и Армянской Апостольской церкви .....	121
<b>Арменуи Гамбарян</b> – Гражданская миссия первой Республики Армения в США (конец 1919 г. – начало 1920 г.) .....	134
<b>Рафик Наапетян</b> – О некоторых особенностях армянских народных традиционных жилищных комплексов (XIX век – начало XX века) .....	149
<b>Сильва Минасян</b> (Арцах) – Структуры неологизмов, образованных от собственных имен в произведениях Ованеса Шираза .....	173
<b>Ашот Манучарян</b> – Епископальная епархия Аршаруника (IV–XI вв.) .....	187

## ОБСУЖДЕНИЯ

<b>Ерванд Грекян</b> – Хранение и перераспределение зерновых запасов в Урартском царстве .....	203
<b>Вардан Петросян</b> – Шипящие согласные древнеармянского языка (диахронический и ахронический аспекты) .....	228

## ПУБЛИКАЦИИ

К 140-ЛЕТИЮ СО ДНЯ  
РОЖДЕНИЯ ИРАЗЕКА

<b>Анушаван Закарян</b> – Цикл статей Иразека (А. Тер-Акопян) о важном значении провинции Гохтан .....	242
---	-----

## РЕЦЕНЗИИ

<b>Аэлига Долуханян</b> – Сокровищнические каноны, посвященные святым праздникам (в сокровищницах хлатецийской и постхлатецийской редакций) .....	258
<b>Анна Асагрян</b> – Петрос Адамян в воспоминаниях современников (на англ. яз.) .....	262
<b>Татул Асоян</b> – Виктор Катвалян. Диалектная панорама Республики Армении. Книга 2: Котайкская область .....	267
<b>Арсен Арутюнян</b> – Аргам Айвазян. Греческие эпиграфические надписи Армении и греческая община 10-х годов 18–21 вв. ....	272
<b>Вардан Петросян</b> – Вазген Амбарцумян. Армянский язык и кельтские языки (сравнительно-типологическое дифференцирование) .....	278

## НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

<b>Павел Аветисян, Рубен Бадалян, Арсен Бобохян – Арутюн Мартиросян:</b> к 100-летию выдающегося археолога .....	284
---	-----

## НАШИ ЮБИЛЯРЫ

<b>Мгер Навоян – Генрик Оганисян</b> (к 85-летию со дня рождения) .....	289
<b>Анушаван Закарян, Ваан Хачатрян – Ваче Овакимян</b> (к 70-летию со дня рождения) .....	297

## НАУЧНАЯ ЖИЗНЬ

<b>Роберт Казарян, Гор Маргарян, Руслан Цаканян – Институту востоковедения</b> 50 лет .....	300
<b>Лилит Оганисян – Международная научная конференция, посвященная 30-летию</b> провозглашения независимости Республики Арцах и Республики (третьей) Армении .....	303
<b>Кнарлик Авагян – Вторая международная научная конференция «Иностраные</b> источники об армянских колониях» .....	308
<b>Нинетта Адамян – Международная научная конференция «Благотворительность</b> среди армян», посвященная 140-летию основания «Кавказского армянского благотворительного общества» .....	311
Руководство для авторов .....	314
Руководство для авторов (на русск. яз.) .....	316
Руководство для авторов (на англ. яз.) .....	318

## CONTENTS

## ARTICLES, REPORTS

## I

THE 200TH BIRTHDAY ANNIVERSARY  
FATHER GHEVOND ALISHAN

<b>Vardan Devrikyan – The scientific and literary heritage of</b> Father Ghevond Alishan .....	3
---	---

TO THE 170TH BIRTH ANNIVERSARY  
OF PETROS DURYAN

**David Gasparyan** – Petros Duryan’s artistic world .....32

TO THE 155TH BIRTH ANNIVERSARY  
OF JALAL TER-GRIGORYAN

**Ashot Melkonyan** – Jalal Ter-Grigoryan: Javakhk’s son of Artsakh .....60

**Vahe Sargsyan** – The issue of the affiliation of Armenian churches in the Georgian press  
(the 1st decade of the 21st century) .....72

**Ruben Sahakyan** – On the Turkish occupation of Alexandropol and its province  
(According to the 1920–1921 reports of the newspaper “Communist”) .....103

II

**Lusine Sahakyan** – Some observations on the relationship of Komitas Vardapet with  
the Armenian Apostolic Church .....121

**Armenuhi Ghambaryan** – Civil mission of the first Republic of Armenia in the USA  
(late 1919 – early 1920) .....134

**Rafik Nahapetyan** – On some features of the Armenian people’s housing complexes  
(the 19th century – the early 20th century) .....149

**Silva Minasyan** (Artsakh) – Structures of neologisms formed by proper names  
in the works of Hovhannes Shiraz .....173

**Ashot Manucharyan** – Episcopal Diocese of Arsharunik (the 4th–the 9th cc.) .....187

DISCUSSIONS

**Yervand Grekyan** – Storage and redistribution of grain reserves in the kingdom  
of Urartu .....203

**Vardan Petrosyan** – Hushing sounds of the Old Armenian (Diachronic and a  
chronic aspects) .....228

PUBLICATIONS

TO THE 140TH BIRTH  
ANNIVERSARY OF IRAZEK

**Anushavan Zakaryan** – A series of articles by Irazek (A. Ter-Hakobyan) on the  
significance of Goghtan canton .....242

## REVIEWS

<b>Aelita Dolukhanyan</b> – Treasury canons dedicated to holy holidays (in the treasuries of the Chlatetian and post-Chlatetian editions).....	258
<b>Anna Asatryan</b> – Memories of the contemporaries about Bedros Adamian (in Eng.) .....	262
<b>Tatul Asoyan</b> – Victor Katvalyan: Dialectal panorama of the Republic of Armenia: Book 2: Kotayk marz.....	267
<b>Arsen Harutyunyan</b> – Argam Ayvazyan: The Greek Epigraphs of Armenia and the Greek Community in the 10s of the 18th–21st centuries .....	272
<b>Vardan Petrosyan</b> – Vazgen Hambarzumyan: Armenian and Celtic languages (comparative typological differentiation) .....	278

## OUR HONOURED SCHOLARS

<b>Pavel Avetisyan, Ruben Badalyan, Arsen Bobokhyan</b> – Harutyun Martirosyan: to the 100th anniversary of the outstanding archaeologist .....	284
---	-----

## OUR JUBILEES

<b>Mher Navoyan</b> – Henrik Hovhannisyan (on the occasion of his 85th birth anniversary) ..	289
<b>Anushavan Zakaryan, Vahan Khachatryan</b> – Vache Hovakimyan (on the occasion of his 70th birth anniversary) .....	297

## SCIENTIFIC LIFE

<b>Robert Ghazaryan, Gor Margaryan, Ruslan Tsakanyan</b> – Institute of Oriental Studies – 50 years .....	300
<b>Lilit Hovhannisyan</b> – International Scientific Conference dedicated to the 30th anniversary of the Proclamation of Independence of the (Third) Republic of Armenia and the Republic of Artsakh .....	303
<b>Knarik Avagyan</b> – The Second International Scientific Conference “Foreign sources about the Armenian colonies” .....	308
<b>Nineta Adamyan</b> – International Conference “Charity among Armenians” dedicated to the 140th anniversary of the foundation of the “Caucasus Armenian Benevolent Society” .....	311
A guidance for the authors .....	314
A guidance for the authors (Russ.) .....	316
A guidance for the authors (Eng.) .....	318

Հայերեն բաժնի խմբագիրներ

Ուսերեն բաժնի խմբագիր  
Հայերենի սրբագրիչ  
Անգլերենի խմբագիր  
Համակարգչային ձևավորում և էջադրում

Редакторы армянского отдела

Редактор русского отдела  
Корректор армянского отдела  
Редактор английского отдела  
Компьютерный дизайн и пагинация

Editors of Armenian segment

Editor of Russian segment  
Proofreader of Armenian segment  
Editor of English segment  
Computer design and pagination

Թամար Ջաքարյան  
Լիանա Օհանյան  
Կարինե Ալեքսանյան  
Աղավնի Շահինյան  
Հարություն Խուդանյան  
Գոհար Հովհաննիսյան

Тамар Закарян  
Лиана Оганян  
Карине Алексанян  
Агавни Шагинян  
Арутюн Худанян  
Гоар Оганнисян

Tamar Zakaryan  
Liana Ohanyan  
Karine Aleksanyan  
Aghavni Shahinyan  
Harutyun Khudanyan  
Gohar Hovhannisyanyan



Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872  
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872  
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>  
Официальный сайт журнала: <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>  
Official site of the journal: <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru), [patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)  
Электронная почта журнала: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru), [patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)  
E-mail of the journal: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru), [patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

---

*Հրատ. պատվեր № 1139:  
Ստորագրված է տպագրության 07.12.2021 թ.:  
Տպագրական 20,5 մամուլ: Թուղթ № 1, 70x100:  
Տպաքանակը՝ 250:*

---

*ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:*

---

Изд. заказ № 1139.  
Подписано к печати 07.12.2021 г.  
Печ. 20,5 л. Бумага № 1, 70x100.  
Тираж –250.

---

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.